

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆՇԱՆԱԿՈՐ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԺԲ ԴԱՐԻՑ – ԺԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ – 2023

**HAYRAPET MARGARYAN**

**THE NOBLE PRINCE FAMILIES IN ARMENIA  
IN 12<sup>TH</sup> – FIRST HALF OF 14<sup>TH</sup> CENTURY**

**АЙРАПЕТ МАРГАРЯН**

**ЗНАТНЫЕ КНЯЖЕСКИЕ РОДЫ В АРМЕНИИ  
С XII ДО ПЕРВОЙ ПОЛОВИНЫ XIV ВЕКА**

YEREVAN – ЕРЕВАН

2023

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)  
Մ 350

*Մենագրությունը հրատարակության են երաշխավորել  
Երեւանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական  
խորհուրդը եւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը*

*Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Բաբկեն Հարությունյան (1941-2013)*

Մ 350 ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսին / Հ. Մարգարյան; Խմբագիր՝ Բ. Հարությունյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2023 թ.- 280 էջ:

Աշխատությունում լուսաբանված են միջնադարյան Հայաստանի պատմության մեջ հայտնի ու նշանավոր իշխանական տներից Զաքարյանների, Մահկանաբերդցիների (Սաղունյանների), Վաչուտյանների եւ Խաղբակյանների ծագման, ծավալած գործունեության, տիրույթների տեղադրության ու տարածքային կապերի, քաղաքական եւ մշակութային ակտիվության, դավանական կողմնորոշման ու էթնո-մշակութային դիմապատկերի հարցերը: Հայ ավատատիրական ավագանու պատմությունը վերհանված է արտաքին աշխարհի հետ բարդ փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների լայն՝ ամբողջ մերձավորարեւելյան տարածաշրջանն ընդգրկող հետնախորքի վրա: Հատվածների վերջում ներկայացվում են քննարկված իշխանատոհմների ճյուղագրական աղյուսակները: Բնագրին հաւելում է նաեւ աշխատության խմբագիր Բաբկեն Հարությունյանի՝ «Զաքարյանների իշխանությունը (XIII դ. – XIV դ. սկզբին)» քարտեզը՝ «Հայաստանի ազգային առլաս»-ի Բ հատրոից (Եր., 2008):

Գիրքը նախատեսված է հայագետ եւ միջնադարագետ պատմաբանների, ինչպես նաեւ հայոց պատմությամբ հետաքրքրվող լայն հանրության համար:

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1527-2

© Հայրապետ Մարգարյանի ընտանիք, 2023

## Հրատարակիչների կողմից (ընկերոջ հիշատակին)

Այս մենագրության վրա հեղինակն աշխատեց մոտ երեք տասնամյակ եւ դեռ շարունակում էր աշխատել մինչեւ իր կյանքի վերջին օրերը՝ իբրեւ ճշմարիտ գիտնական հանգամանակից ու անշտապ հղկելով ֆենվոլ խնդիրների լուծումները եւ հարստացնելով նորահայտ աղբյուրներով ու մասնագիտական գրականության մշակումներով: Բայց անողոք հիվանդությունը ստիպեց նրան թողնել, որպեսզի տարիների այս աշխատանքը տպագրության պատրաստեն իր ընկերները՝ դուստրերի աջակցությամբ:

1996 թ. դեռ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Կովկասագիտության եւ բյուզանդագիտության բաժնի (հետագայում՝ Քրիստոնյա Արեւելի) 36-ամյա ավագ գիտաշխատող Հայրապետ Գետրգի Մարգարյանը նույն ինստիտուտի գիտական խորհրդում մեծ հաջողությամբ պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը՝ «Ռազմա-ֆառագիտական տեղաշարժերը Մերձավոր Արեւելքում եւ հայ ավատատիրական ավագանին ժԲ դարում – ժԴ դարի առաջին կեսում» թեմայով (ընդդիմախոսներն էին ՀՀ ԳԱ, ակադեմիկոսներ Վադիմիր Բարխուդարյանը, Մանվել Զուկայանը եւ պ. գ. դ. Վրեժ Վարդանյանը): Ատենախոսության ծավալուն բնագիրն այդ տարիներին միանգամից հրատարակել չհաջողվեց, եւ մասնագետները, այդ թվում՝ հեղինակի ընկերները, ստիպված էին բավարարվել հղումներ տալով նրա՝ բարեբախտաբար բավականին հանգամանակից շարադրված 34-էջանոց Սեղմագրի վրա: Բայց ուշացումը պատճառ դարձավ, որպեսզի նա շարունակի հարստացնել իր աշխատանքը նոր հարցադրումների հավելումով եւ նոր գրականության ընդգրկումով:

Ահա այդպես էլ առաջացավ այս սովոր հատորը՝ ստանալով նաեւ մի նոր անվանում. «Նշանավոր իշխանական տները Հայաստանում ժԲ դարից – ժԴ դարի առաջին կեսին»: Տալը տարի առաջ՝ ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտխորհրդի կողմից հրատարակության երաշխավորվելու առիթով գիրքը խմբագրեց ՀՀ ԳԱԱ, թղթակից-անդամ Բաբկեն Հարությունյանը (1941-2013)՝ այն շատագուց ընկերներից մեկը, ովքեր շանում էին գործը օր առաջ տպագրված տեսնել: Բայց վերջինիս ցավալի մահվանից հետո հեղինակը կրկին լծվեց իր այնքան օգտակար գիրքը էլ ավելի օգտաշահ դարձնելուն՝ ընկերներին էլ անընդհատ հանգստացնելով ու խոստանալով, որ նրա վրա աշխատելը փաստորեն ավարտել է: Ըմբռնվելով ներկա հատորը՝ ընթերցողը, անկասկած, կհամոզվի, որ դա իրոք այդպես է:

Վերջին անգամ սրբագրելով ու ձեւավորելով մեր ավագ ընկերոջ՝ տասնամյակների աշխատանքի արդյունքը՝ մեզ մնում էր պարզապես գերծ մնալ ինչ-ինչ միջամտություններով, ծանոթագրումներով կամ նոր գրականության ծավալուն հավելումով շարադրանքը ծանրացնելու զայրակողությունից: Փոխարենը՝ խնամքով կազմվեցին պակասող ցանկերը՝ անձնանունների ու տոհմանունների եւ տեղանունների ու ցեղանունների: Ամենը՝ մեծ հույսով, որ մեր օրերի անվանի պատմաբաններից մեկի՝ պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանի (1950-2021) հերթական մենագրությունն անթերի տպագրված տեսնելու սիրտնամբ<sup>1</sup> նաեւ մեզ է օգնելու հաղթահարել սիրելի գործընկերոջ վաղաժամ կորստի դեռ չսպիացած ցավը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի՛...

Ա. Յ., Մ. Կ.

---

1 Այժմ տե՛ս նաեւ «Կովկասյան տարածաշրջան. պատմություն, քաղաքականություն եւ մշակույթ», Անվանի հայագետ-կովկասագետ, պ. գ. դ., պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանի 71-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողովի (25-26 նոյեմբերի 2021 թ.) հողվածների եւ զեկուցումների ժողովածու, Կազմող՝ Հ. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 2022:

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից միջնադարագիտության մեջ սոցիալական կառույցների եւ դրանց զարգացման օրինաչափությունների, սոցիալական պրակտիկայի ու արտաքին քաղաքական գործոնների փոխազդեցությունների հետազոտությանն առանձնահատուկ նշանակություն է տրվում: Այս հայեցակետից Հայաստանի ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսի տիրապետող դասակարգի եւ նրա առանձին շերտերի կազմի, քաղաքական կազմակերպության, զարգացման միտումների ուսումնասիրությունն առաջնահերթ գիտական կարեւորություն է ներկայացնում: Այն որոշակի նպաստ կարող է բերել Հայաստանում ավատատիրական հասարակարգի ընդհանուր օրինաչափությունների եւ տեղական առանձնահատկությունների պարզաբանմանը, ավատատիրական հարաբերությունների համակարգում տեղի ունեցած տրպաբանական տեղաշարժերի բացահայտմանը: Ակնհերե է նաեւ այն բացառիկ նշանակությունը, որն ունի ավատատերերի դասակարգի հետազոտությունը դարաշրջանի սոցիալ-քաղաքական զարգացման միտումների ուղղվածությունը եւ հայոց պետականության ճակատագիրը ճիշտ ըմբռնելու տեսանկյունից: Ավելին, հայ տիրապետող դասակարգի ու նրա վերնախավի՝ խոշոր իշխանական տների ուսումնասիրությունն անհամեմատ կարեւոր եւ ընդգրկուն գիտական խնդրի՝ հայոց պետականության պատմության ու ազգապահպանիչ կառուցակարգերի լուսաբանման բաղկացուցիչ մասն է կազմում: Հետեւաբար, ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսի հայ խոշոր իշխանական տների կազմավորման պայմանների եւ ընթացքի, գերակա-ստորակայական (վասալ-սուզերենային) փոխհարաբերությունների, օտար տերությունների հետ փոխադարձ առնչությունների հետազոտությունը՝ արդի միջնադարագիտության առջեւ ծառայած առաջնահերթ խնդիրներից է:

Հետազոտվող հարյուրամյակների ընթացքում ավելի ուժեղացավ Մերձավոր Արեւելքում ծավալված ռազմա-քաղաքական իրադարձությունների՝ հայոց պատմության վրա թողած ազդեցությունը: Արտաքին քաղաքական գործոնները հատկապես կարեւոր դեր խաղացին հայ տիրապետող դասակարգի ճակատագրում՝ մեծապես պայմանավորելով նրա կյանքում դիտվող մակընթացություններն ու տեղատվությունները: Հայ իշխանական տների ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսի պատմության հետազոտությունն անհնար է պատկերացնել՝ առանց «Մեծ սելջուկների», Իրաքի եւ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունների, Խորեզմշահերի պետության, Իրանում առաջացած մոնղոլական իլխանության, Վրացական թագավորության արտաքին ու նույնիսկ ներքին քաղաքականության առանցքային խնդիրների լուսաբանության: Ուսումնասիրվող դարաշրջանում Հայաստանում գործող ավատատիրական ընտանիքներն անընդհատ բախվում էին հարափոփոխ աշխարհաքաղաքական իրադրության հետ, որի մեջ կատարվող տեղաշարժերը թելադրվում էին գերազանցապես ռազմա-քաղաքական անցուղարձեռով:

Արդի հետազոտողների առաջնահերթ խնդիրներից է՝ կղզիացած եւ մեկուսի չներկայացնել հայ իշխանական տների հարուստ պատմությունը, այլ այն իրապես վերհանել արտաքին աշխարհի հետ բարդ ու հաճախ հակասական փոխհարաբերությունների եւ փոխազդեցությունների լայն, ամբողջ մերձավորարեւելյան տարածաշրջանն ընդգրկող հետնախորքի վրա: Թերեւս, հայ տիրապետող դասակարգի կենսագործունեության արտաքին քաղաքական միջավայրի ուսումնասիրությունը ոչ

պակաս կարեւորութիւն ունի, քան հայ ավատատերերի քաղաքական կազմակերպութեան, գաղափարախոսութեան եւ զանազան շերտերի առանձնահատկութիւններէ հետազոտութիւնը:

Արտաքին քաղաքական գործոնների դերը ծանրակշիռ է եղել հատկապէս հայ տիրապետող դասակարգի վերնախավի՝ ավատատիրական ավագանին ներկայացնող խոշոր իշխանական տների ճակատագրում: Պատմութեան շրջադարձային պահերին հայ ավատատերերի այդ շերտն է առաջին հերթին կողմնորոշվել եւ մշակել (ազգային եկեղեցու մասնակցութեամբ) հայոց քաղաքական ուղեգիծը: Ավատատիրական ավագանու վարքագծի ու կողմնորոշումների մէջ իրենց արտացոլումն են գտել նաեւ ավատատերերի զանազան շերտերի համար առավել ընդհանուր երեւոյթները եւ զարգացման միտումները: Ուստի՝ այդ վերնախավային շերտի հետազոտութիւնն անխուսափելի եւ անհրաժեշտ քայլ է՝ ավատատերերի դասակարգի ավելի ընդգրկուն եւ համակողմանի ուսումնասիրութեան ճանապարհին: Խոշոր իշխանական տների պատմութեան պարզաբանումը կարող է բանալի ծառայել հայ ավատատերերի մնացած խմբերի (միջին հողատերերի շերտ, մանր ազնվականներ, մինիստերիալիտետ) դրութիւնը, կարգավիճակը, համալրման ուղիները բացահայտելու եւ լուսաբանելու համար: Հայտնի է, որ ավագանու քաղաքական եւ մշակութային կողմնորոշումները էտալոնային բնույթ են ստացել ավատատերերի այլեւայլ շերտերի համար: Արիստոկրատական յուրաքանչյուր ընտանիքի պատմութիւնն յուրօրինակ առանցք է այդ տոհմի շուրջը համախմբված ստորականների բազմամարդ խմբի տիրույթների տեղորոշման, գործունեութեան փուլերի, քաղաքական, տնտեսական եւ մշակութային ակտիվութեան դրսեւորումների ու շատ այլ հարցերի հետազոտութեան համար: Ուստի՝ տրամադրութեան տակ ունենալով ավատատիրական առավել ազդեցիկ ընտանիքների տոհմագրութիւնը, պատմութեան ժամանակագրական ուղենիշները, քաղաքական եւ մշակութային դիրքորոշումների համայնապատկերը՝ համեմատաբար դյուրին կդառնա ողջ ավատատիրական դասակարգի համակարգված ուսումնասիրութիւնը:

ԺԻ դարից – ԺԴ դարի առաջին կեսի հայ նշանավոր իշխանական տների պատմութեան հանգուցային հարցերի հետազոտութիւնը կատարվել է մերձավորարեւելյան տարածաշրջանի ռազմա-քաղաքական կացութեան հետ սերտ առնչութիւնների եւ փոխկապակցվածութեան մէջ: Նպատակ է դրվել՝ խորամուխ լինել սոցիալական պատմութեան խնդիրների մէջ՝ նախապէս վերհանելով սոցիալական կառուցների կենսագործունեութեան արտաքին քաղաքական միջավայրը: Նկատի առնելով ռազմա-քաղաքական ու սոցիալական բնույթի երեւոյթների եւ իրողութիւնների շաղկապվածութիւնն ու համատեղ ուսումնասիրման նպատակահարմարութիւնը՝ անհրաժեշտ է համարվել արժարժել հարցերի որոշակի շրջանակ:

Մեր աշխատութեան գլխավոր խնդիրներից են եղել.

– Բացահայտել տարածաշրջանի ռազմա-քաղաքական կացութեան մէջ կատարվող այն տեղաշարժերը, որոնք ուղղակի կամ միջնորդավորված ձեւերով ազդում էին Հայաստանի արտաքին եւ ներքին դրութեան վրա:

– Պարզաբանել հայ ավատատերերի գործունեութիւնը, նրանց շահագրգռութիւններն ու ձգտումները Հայաստանում եւ նրանից դուրս: Մասնավորապէս՝ բացորոշել հայ խոշոր իշխանական տների դերն ու կշիռը վրացական թագավորութիւնում եւ Իլխանութիւնում, ցույց տալ նրանց նկատելի մասնակցութիւնն այդ պետութիւններում ընթացող ներքաղաքական պայքարին եւ սոցիալական գործընթացներին:

- Լուսաբանել հայ ավատատերերի ռազմական վաստակը, վերհանել նրանց մասնակցությունը Մերձավոր Արեւելքում ծավալված քաղաքական անցուդարձերին:

- Ծրագրավորված համակողմանի հետազոտության ենթարկել ավատատիրական ավագանին կազմող խոշոր իշխանական տոհմերը, յուրաքանչյուր ընտանիքի անդրադառնալով պրոսոպոգրաֆիկ բնույթի առանձին հետազոտություններով:

Հայ ավատատիրական ավագանու գործունեության արտաքին պայմանների ուսումնասիրությունը զուգակցվել է նրա սոցիալական պատմության հետազոտության հետ: Ուստի աշխատության առաջին բաժնում հայ ավատատերերի գործունեության արտաքին միջավայրը ներկայացնելուց հետո՝ երկրորդ բաժնում ուշադրությունը սեւեռվել է սոցիալական խնդիրների վրա: Երկրորդ բաժնում ուսումնասիրությունը մտահղացվել է իրականացվել է հետեւյալ հիմնական սկզբունքներով.

Առաջին. առանձին տոհմերի մասին գլուխները շարադրվել են հստակ եւ միասնական ծրագրով, որը եւ հնարավորություն է ընձեռում զանգվածային ու համեմատելի նյութ ստանալ ընդհանրացումների եւ հետագա խորագնա հետազոտությունների համար: Այսպես, հաջորդաբար լուսաբանվել են ուսումնասիրվող տոհմի անվանման ու ծագման, պատմության պարբերացման եւ գործունեության հակիրճ բնութագրման, տիրույթների տեղադրության ու տարածվային կապերի, ֆաղափական եւ մշակութային ակտիվության, դավանական կողմնորոշման ու էթնո-մշակութային դիմապատկերի հարցերը:

Երկրորդ. յուրաքանչյուր ընտանիքին նվիրված հետազոտության շրջանակներում կանգ ենք առել նաեւ տոհմի՝ առանց բացառության, ամեն մի անդամի վրա, վերհանել նրա կյանքի եւ գործունեության գլխավոր ուղենիշները: Ընդ որում, դարձյալ ձգտել ենք պատասխան տալ այն նույն հետազոտական խնդիրներին, որոնք առաջադրվել են տոհմերի ուսումնասիրման կապակցությամբ: Բայց թե՛ տոհմերի եւ թե՛ նրանց ներկայացուցիչների պարագայում, աշխատել ենք որքան հնարավոր է լրացուցիչ փաստեր ու տվյալներ ընդգրկել՝ քաղելով դրանք նախապես կազմված տոհմային եւ անհատական հարցաթերթիկ-անկետաներից: Հավաքված նյութերը օգնում են ամբողջական պատկերացում կազմել խոշոր ավատատիրական տոհմերի ու նրանց ականավոր անդամների ռազմա-քաղաքական գործունեության, դավանական կողմնորոշման, մշակութային դիմապատկերի եւ նույնիսկ առանձին անհատների անձնական հատկանիշների վերաբերյալ:

Երրորդ. առանձին տոհմերին հատկացված գլուխների տոհմագրական բնույթի դիտարկումների արդյունքները ներկայացրել ենք համապատասխան ենթաբաժինների վերջում՝ տոհմածառի տեսքով: Պարտադիր պայման ենք համարել տոհմածառում պատկերել ընտանիքների միայն այն անդամներին, որոնց մասին պահպանված տվյալները նախապես քննարկվել են աշխատության էջերում: Այդ պիսով, ձգտել ենք դյուրությամբ վերահսկելի եւ ստուգելի դարձնել կատարված եզրակացությունների փաստական հիմքերը:

Հայ ավատատիրական ավագանու շարքում հետազոտության է ենթարկվել Զաքարյանների, Մահկանաբերդցիների (Սաղունյանների), Վաչուտյանների եւ Խաղբակյանների (Պոռչյանների) իշխանական տների պատմությունը: Այդ ավատատիրական ընտանիքները ծանրակշիռ դեր էին կատարում երկրի կյանքում ուսումնասիրվող ողջ ժամանակաշրջանի ընթացքում: Ընդ որում, այդ տոհմերի պատմությունը բնութագրական է՝ արտաքին քաղաքական եւ ներքին սոցիալա-

կան զարգացումների փոխադարձ առնչություններն ըմբռնելու տեսանկյունից: Այդ տոհմերը հնարավոր է միավորել նաև «նոր ավագանի» բնորոշումով, քանի որ բոլորն էլ պատմական ասպարեզ են իջել սելջուկ-թյուրքական արշավանքներին հաջորդող ժամանակաշրջանում եւ առավել բարձր դիրքի հասել ԺԲ-ԺԳ դարերում: ԺԴ դարի առաջին կեսին այդ ընտանիքներն աստիճանաբար զիջեցին իրենց դիրքերը եւ թողեցին ասպարեզը մինչեւ լենկթեմուրյան արշավանքներն ընկած շրջանում:

Դեռեւս Ժ-ԺԱ դարերում ավատատիրական ավագանին ներկայացնող Սյունյաց թագավորներն ու Տաշիր-Ձորագետի կյուրիկյանները ԺԲ դարում միայն անվանապես էին մտնում ավատատիրական վերնախավի մեջ եւ փաստական հզորությունը զիջում էին նորահայտ տոհմերին: Ուստի՝ աշխատությունում առանձին գլուխներով չենք ներկայացրել այդ թագավորական տոհմերը, թեեւ նրանց վերաբերող նյութերը նկատի են առնված հետազոտության ընթացքում, իսկ Սյունիքի եւ Տաշիր-Ձորագետի թագավորությունների ԺԲ դարի քաղաքական պատմությունը հակիրճ շարադրված է աշխատության առաջին բաժնում: Հատուկ չենք անդրադարձել նաև Սյունիքի Օրբեյանների եւ Արցախի Դոփյանների ու Հասան-Ջալալյանների պատմությանը, թեեւ այդ տոհմերը եւս պատկանում էին ԺԲ-ԺԴ դարերի ավատատիրական ավագանուն: Հարցն այն է, որ Օրբեյանները, Դոփյանները եւ Հասան-Ջալալյանները կազմում են հայ ավատատիրական ավագանու այն բարեբախտ հատվածը, որը դիմագրավեց բոլոր փորձություններին ու գոյատևեց նաև հաջորդ հարյուրամյակների ընթացքում: Ուստի՝ նպատակահարմար է այդ իշխանական տների պատմությունը հանգամանորեն լուսաբանել առանձին աշխատությամբ:

Այսպիսով, մեր աշխատանքում հետազոտության ենթարկված հարցերը նպատակաուղղված են եղել հայոց պատմության շրջադարձային փուլերից մեկի արտաքին ու ներքին զարգացման ուղենիշների եւ յուրօրինակ տրամաբանության պարզաբանմանը: Աշխատության մտահղացումը եւ նպատակադրումը թելադրել են սեւեռուն ուղադրություն դարձնել այն հիմնախնդիրներին, որոնք հնարավորություն են ընձեռում լուսաբանել արտաքին քաղաքական ու ներքին սոցիալական պատմության փոխադարձ առնչությունները եւ, հետեւաբար, զուգադիր հետազոտության կարիք են զգում:



ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատությունում քննության առնված բոլոր էական խնդիրների տեսանկյունից վիթխարի է ԺԲ-ԺԳ դարերի հայ պատմագրության նշանակությունը: Մասնավորապես, դարաշրջանի սոցիալ-քաղաքական պատմության հետազոտության առումով մեծապես գնահատելի են Մատթեոս Ուռհայեցու (Գրիգոր Երեցին պատկանող մասով հանդերձ)<sup>1</sup> եւ Սամուէլ Անեցու<sup>2</sup> ընդարձակ ժամանակագրությունները: Հատուկ ուշադրության են արժանի նաեւ Մխիթար Գոշի «Աղուանից աշխարհի ժամանակագրութիւնը»<sup>3</sup> եւ Ստեփանոս Օրբելյանին վերագրվող նույնատիպ երկը<sup>4</sup>: Բազմաթիվ առանցքային հարցերի լուծմանն անգնահատելի նպաստ են բերում Կիրակոս Գանձակեցու<sup>5</sup>, Վարդան Արեւելցու<sup>6</sup>, Ստեփանոս Օրբելյանի<sup>7</sup>, Մխիթար Այրիվանեցու<sup>8</sup> պատմական աշխատությունները, «Պատմութիւն վասն ազգին նետողաց» կամ «Պատմութիւն թաթարաց» արժեքավոր երկը<sup>9</sup>:

Պատմողական երկերի խումբը լրացնում են հայկական մանր ժամանակագրությունները<sup>10</sup>, «Պատմութիւն քաղաքին Յանույ» քաղազիր ստեղծագործությունը<sup>11</sup>, Մխիթայել Ասորու «Ժամանակագրության» հին հայերեն թարգմանությանը կից նույնաբնույթ հայկական աշխատությունը<sup>12</sup>: Տարածաշրջանի ռազմա-քաղաքական պատմությունը լուսաբանելիս, ինչպես նաեւ Զաքարյանների եւ Մահկանաբերդցիների իշխանական տների պատմության կապակցությամբ, հարուստ

- 
- 1 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, [Պատրաստեցին՝ Մ. վրդ. Մելիք-Աղամեան, Ն. սրկ. Տէր Միքայէլեան], Վաղարշապատ, 1898:
  - 2 Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Յառաջաբանով, համեմատութեամբ, լատինաձեռքով եւ ծանօթութիւններով՝ Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893:
  - 3 Տէն Հ. Ղ. Այիշան, *Հայնպատում*, հտ. Բ, Վենետիկ, 1901, էջ 361-362, 384-391: Երկի վերախորագրումն առաջարկել է տողերիս հեղինակը, տե՛ս Ա. Գ. Маргарян, “Хроника страны Алуанк” *Мхитаря Гоша (состояние изученности памятника)*, – “К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении”, т. I, Ер., 1991, с. 214-224.
  - 4 *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի*, Հրատարակութեան պատրաստեց... Ա. Արախամեանը, Եր., 1942:
  - 5 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:
  - 6 Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցույ, *Պատմութիւն տիեզերական*, Ի լոյս ընծայեաց՝ Մ. Էմին, Մոսկվա, 1861 (պստոմետ՝ Վարդան Արեւելցի): Ներկա աշխատանքում հիմնականում օգտագործված է այս հրատարակությունը: Մյուսին (Վարդան վարդապետ, *Հաւաքումն Պատմութեան /Հրատարակիչ՝ Հ. Ղեւոնդ Այիշան/*, Վենետիկ, 1862) դիմելու դեպքերը հատուկ նշվում են:
  - 7 Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Սիւսկան*, Ի լոյս ընծայեաց՝ Մ. Էմին, Մոսկվա, 1861 (հետպստ՝ Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն*):
  - 8 Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց*, Ի լոյս ընծայեաց՝ Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:
  - 9 Տէն Գրիգոր վարդապետ, *Պատմութիւն թաթարաց* (Հրատարակիչ՝ Ն. Պողարեան), Երուսաղէմ, 1974:
  - 10 *Մանր ժամանակագրություններ*, Կազմեց՝ Վ. Հակոբյան, հտ. I, Եր., 1951, հտ. II, Եր., 1956:
  - 11 Տէն Մխիթար Անեցի, *Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց*, Աշխատասիրությամբ՝ Հ. Մարգարյանի, Եր., 1983, Հավելված, էջ 107-124:
  - 12 Տէն Մխիթայել Ասորի, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1870, էջ 515-532:

նյութ են մատակարարում նաեւ վրացական պատմողական սկզբնաղբյուրները: Դրանք ամփոփված են Վրաստանի պատմության ձեռնարկ-ժողովածուի՝ «Քարթլիս ցխովրեբայի» կազմում<sup>1</sup>: Բազմազան, ընդ որում նաեւ Հայաստանի եւ Վրացական թագավորության ներքին կյանքին վերաբերող, հաղորդումներ են պարունակում ասորական<sup>2</sup>, արաբական<sup>3</sup>, պարսկական<sup>4</sup> պատմական երկերը:

Այնուամենայնիվ, ամենից ավելի լիարժեք եւ անխաթար նյութը պարունակում են վիմական արձանագրությունները: Դրանք գնահատելի են նաեւ այն առումով, որ անպայմանորեն կապ են արտացոլում արձանագրման վայրի եւ վանքին միաբանողի, նվիրատուի միջեւ: Սովորաբար, արձանագրման վայրը տոհմական հանգստարանն է: Նվիրատուն խնամիական կապեր ունի վանքի հովանավորի հետ, անձնական մտերմություն է պահպանել («անուցած»-«անուցող») վանքի պատրոնի հետ: Անգամ հիշատակարանային վկայությունները չեն կարող համեմատվել իրավական փաստաթղթի արժեք ունեցող արձանագրությունների հետ<sup>5</sup>:

1 յերտղոս Յեռցրեյծ, I, տծ., 1955, II, տծ., 1959; Լ. Մելիքսեթ-Ֆել, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, Խո. Ա.-Գ, Եր., 1934-1955; Վրաց ժամանակագրություն, Թարգմանությունը Ռին վրացերենից, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Պ. Մորադյանի, Եր., 1971: Վրացական աղբյուրների բնութագրումը մասնավորապես տե՛ս Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Եր., 1980, էջ 21-31:

2 Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, Թարգմանություն..., առաջաբան եւ ծանոթագրություններ՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982; Michel le Syrien, *Chronique*, Éditée... et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905; Gregory Abul Faraj, *The Chronography of Bar Hebraeus*, London, 1976.

3 Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին (Յակուտ ալ-Համալի, Աբու-լ-Ֆեռաս, Իբն Շադդադ), Կազմեց՝ Հ. Նայբանդյան, Եր., 1965; Իբն ալ-Ասիր, Թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ա. Տեր-Ղեռնդյանի, Եր., 1981; Ա. Տեր-Ղեռնդյան, *Ճարհկիի «Նիրկերտի պատմությունը» (ԺԲ դար) Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին*, – «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Խո. VI, Եր., 1974, էջ 195-211; Садр ад-Дин Али ал-Хусайни, *Ахбар ад-даулат ас-Селджукийя*, Москва, 1980; Мухаммад ан-Насави, *Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны*, Пер. с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Бунятова, Баку, 1973.

4 Տե՛ս Рашид ад-Дин, *Сборник летописей*, т. I, кн. II, Москва-Ленинград, 1952, т. II, 1960, т. III, 1946; Juvaini Ata Malik, *The History of the World-Conqueror*, Vol. I-II, Manchester, 1958; Ճլշցեոս Յեռցրեյծ Նախրտვეլոս Մընսեյծ, ՆՅՆՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ, յերտղոս տարցման եւ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ ՄեյթՏԵՍ, տծ., 1974:

5 Օգտագործված են հայերեն վիմագիր արձանագրությունների հետեւյալ հրատարակությունները եւ մասնագիտական քննությունները. Հ. Ղ. Ալիշան, *Ըիրակ*, Վենետիկ, 1881; Առուսի՝ Այրարատ, Վենետիկ, 1890; Առուսի՝ Միսական, Վենետիկ, 1893; Վիմական տարեգիր, Կազմեց՝ Կ. Կոստանցանց, Ա. Պետերբուրգ, 1913; Դիվան հայ վիմագրության, ար. I, Կազմեց՝ Հ. Օրբելի, Եր., 1966; Դիվան հայ վիմագրության, ար. II, Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1960; Դիվան հայ վիմագրության, ար. III, Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1967; Դիվան հայ վիմագրության, ար. IV, Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1973; Դիվան հայ վիմագրության, ար. V, Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1982; Դիվան հայ վիմագրության, ար. VI, Կազմեցին՝ Ս. Ա. Ավագյան եւ Հ. Մ. Ջանփոլարյան, Եր., 1977; Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ Արա արձանագրությունները*, Եր., 1948; Առուսի՝ Մանհնի վանքը եւ Արա արձանագրությունները, Եր., 1957; Առուսի՝ Հաղբատ, Եր., 1963; Առուսի՝ Երեւան. Միջնադարյան հուշարձանները եւ վիմական արձանագրությունները, Եր., 1975; Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառարանություն*, Եր., 1978: Հայկական վիմագիր գյուրերը լրացվում են վրացերեն, արաբերեն, պարսկերեն արձանագրություններով. տե՛ս Պ. Մ. Մորադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Աղբյուրագիտական քննություն*, Եր., 1977; А. А. Хачатрян, *Корпус арабских надпи-*

Աշխատանքում արծարծված խնդիրների պարզաբանման տեսանկյունից խիստ մեծարժեք են հայերեն ձեռագրերի հիշատակարանները<sup>1</sup>: Հիշատակագիրները, լինելով ականատես եւ ականջալուր մարդիկ, տեղեկություններ են հաղորդում պատմական կարճատես ժամանակահատվածի վերաբերյալ, եւ նրանց գրառումներն ուշագրավ պատմական սկզբնաղբյուր են: Հիշատակարանների հաղորդումները լրակատար են արտացոլում ավատատիրական ընտանիքների կազմը, ներտոհմային եւ միջտոհմային առնչությունները, սակայն, նախատեսված լինելով ընթերցողների նեղ միջավայրի համար, դրանք արտահայտում են հեղինակների ենթակայական գնահատականները: Այս առումով խոցելի են նաեւ վիմագիր արձանագրությունները, ուստի առավել արդյունավետ ուղին բոլոր սկզբնաղբյուրների համագիր քննությունն է:

\* \* \*

ԺԲ դարից – ԺԳ դարի առաջին կեսի տարածաշրջանի քաղաքական պատմության համատեքստում հայ ավատատիրական տների կազմավորման ու գործունեության պատմության լուսաբանումը շուրջ երկդարյա ավանդույթ ունի: Այդ ասպարեզում առաջին քայլը կատարել է Միքայել Չամչանցը, ով իր եռահատոր «Պատմութիւն Հայոց» աշխատության եզրափակիչ հատորում ուրվագծել է դարաշրջանի պատմության ընդհանուր պատկերը<sup>2</sup>: Ականավոր պատմաբանի հսկայածավալ աշխատությունը շարադրվել է հայ պատմագրության այն փուլում, երբ նոր էր սկսվել սկզբնաղբյուրների վերհանումը եւ հետազոտությունը, ուստի այն զերծ չէ թերություններից: Մասնավորապես, աշխատանքը գրված է գերազանցապես պատմողական աղբյուրների հիման վրա, որոնց նյութերն անխոնջ գիտնականը ի մի է բերել անմիջականորեն քաղելով ձեռագրերից: Ուստի՝ հայ իշխանական տների պատմությունը, որի բացահայտումը էապես կախված է վիմագիր արձանագրությունների եւ ձեռագրերի հիշատակարանների քննությունից, հեռու է լրակատարությունից:

Մերձավոր Արեւելքի երկրների շարքում Հայաստանի եւ Վրաստանի պատմության ու մշակույթի հանդեպ ԺԹ դարի սկզբից որոշակի հետաքրքրություն է դիտվում Արեւմտյան Եւրոպայում: 1819 թվականին Ֆրանսիացի հայագետ Ժան Սեն-Մարտենը գուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի Պատմության հայտնի՝ Օրբելյան տոհմի ծագմանը եւ գործունեությանը նվիրված գլուխը՝ ծանոթագրություններում անդրադառնալով տարածաշրջանի ԺԱ-ԺԳ դարերի պատմության բազում հարցերի<sup>3</sup>: Արեւելագետ-կովկասագետի բերած ականառու նորույթն այն է, որ նա հայ պատմիչի հաղորդումները համադրել է արեւելյան ու վրացական սկզբնաղբյուրների վկայությունների հետ եւ շատ դեպքերում այսօր էլ ընդունելի եզրակացությունների հանգել:

Բազմավաստակ հայագետ-վրացագետ եւ արեւելագետ Մարի-Ֆելիսիտե Բրոսեի մեծաթիվ աշխատությունները վճռական նպաստ բերեցին Եւրոպայում ու Ռուսաս-

---

сей Армении, вып. I, Ер., 1987; Л. Т. Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шеддадида в Ани, – В кн.: АН СССР академику Н. Я. Марру, Москва-Ленинград, 1935, с. 629-641.

1 **Գարեգին Ա կթղ. [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց**, Բու. Ա., Անթրիիսս, 1951; **ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, Կազմեց՝ **Լ. Ս. Խաչիկյան**, Եր., 1950; **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.**, Աշխատասիրությամբ՝ **Ա. Ս. Մաթեոսյանի**, Եր., 1988; **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար**, Կազմեց՝ **Ա. Ս. Մաթեոսյան**, Եր., 1984:

2 **Հ. Մ. Չամչանց, Պատմութիւն Հայոց**, Բու. Գ., Վենետիկ, 1786:

3 **J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie**, t. II, Paris, 1819.

տանում տարածաշրջանի պատմության հանդեպ հետաքրքրության հետագա խորացմանը<sup>1</sup>: Նա եռանդուն ջանքեր է թափել նոր սկզբնաղբյուրներ (գլխավորապես հայկական եւ վրացական) գիտական շրջանառության մեջ դնելու համար, բայց առանձնակի հոգածություն է ցուցաբերել վիմագիր հուշարձանների հայտնաբերման եւ հրապարակման ուղղությամբ: 1851 թ. լույս տեսած «Վրաստանի պատմության լրացումներ եւ բացատրություններ» աշխատության համապատասխան մասերում Մ.-Ֆ. Բրոսեն փաստորեն ի մի է բերել այդ հարցերի շուրջ գոյություն ունեցող գրեթե բոլոր աղբյուրները, հանգամանալից մեկնաբանություններ տվել այդ հուշարձաններում վկայված իրողություններին<sup>2</sup>: Վիմագրական նյութի լայն ընդգրկման շնորհիվ գիտնականին հաջողվել է հիմնավոր քայլեր անել ԺԲ-ԺԴ դարերի հայկական ու վրացական իշխանական տների տոհմագրության եւ քաղաքական ու մշակութային գործունեության հետազոտության բնագավառում: Հեղինակի եզրակացությունները երկար ժամանակ լիովին համոզիչ են թվացել հայ եւ վրացի գիտնականներին, որոնք վստահել են մեծանուն մասնագետին: Ի դեպ, եթե նրա տեսակետները նոր նյութերի հիման վրա հաճախ վերանայվում են արդի կովկասագետների կողմից, ապա միայն եւրոպական լեզուներից օգտվող ուսումնասիրողներն այսօր էլ, որպես սրբազան ճշմարտություն, շարունակում են վկայակոչել Մ.-Ֆ. Բրոսեի նաեւ հնացած կարծիքները:

Հայերեն եւ այլ լեզուներով պահպանված վիմական արձանագրությունների հավաքումն ու հրապարակումը կարեւորագույն նշանակության խնդիր էր վաստակաշատ հայագետ Ղեւոնդ Ալիշանի համար: Հայոց տարբեր նահանգներին նվիրված տեղագրական աշխատությունները շարադրելիս նա առատորեն օգտվել է տարաբնույթ այլեւայլ սկզբնաղբյուրներից, մասնավորապես ուղեգրական երկերից եւ ձեռագրերի հիշատակարաններից: Տոհմագրական բնույթի բազմաթիվ դիտարկումներ սփռված են գիտնականի բոլոր աշխատություններում, իսկ Զաքարյանների եւ Վաչուտյանների պատմության վերաբերյալ իր տեսակետները նա ամփոփել է տոհմաձառի տեսքով<sup>3</sup>: Հայագիտության մեջ առաջին անգամ Ալիշանը ԺԲ-ԺԴ դարերի հայ իշխանական տների պատմությունը շարադրում է՝ նրանց շինարարական գործունեությունը, տոհմակցական կապերը, գործունեության աշխարհագրական միջավայրը շաղկապելով տարածաշրջանի սոցիալ-քաղաքական զարգացման ընթացքի հետ:

Ինչպես հայտնի է, քսաներորդ դարի սկզբին պատմա-համեմատական դարոցի ներկայացուցիչները հիմք դրեցին ավատատիրության գիտական հետազոտությանը՝ ապացուցելով այդ հասարակարգի ունիվերսալությունը եւ տեղական նյութերի հիման վրա վերհանելով նրա առանձնահատկությունները զանազան երկրներում: Նրանցից Նիկողայոս Ադոնցն առաջիններից էր, որ պատշաճ ուշադրություն դարձրեց հայ տիրապետող դասակարգի ծագման, քաղաքական կազմակերպության եւ դասային եզրութաբանության խնդիրներին<sup>4</sup>: Հաջորդ երեք տասնամ-

1 **M. Brosset**, *Quelques inscriptions musulmanes d'Ani et des environs de Bakou: extrait d' une lettre de M. Khanykoff*, – “Mélanges Asiatiques”, t. I, I-re livr., Saint-Petersbourg, 1849; **Idem**: *Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie*, t. III, Saint-Petersbourg, 1849.

2 **M. Brosset**, *Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie*, Saint-Petersbourg, 1851.

3 **Հ. Ղ. Ալիշան**, *Այրարատ*, էջ 254; **Աուլնի**՝ *Հալապատում*, հտ. Բ, էջ 447:

4 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя*, С. Петербург, 1908 (հմմ. **Ն. Ադոնց**, *Հալապատումը Հուստինիանոսի դարաշրջանում*, Եր., 1987); **Աուլնի**՝ *Բազրատումից փառքը*, – «Երկեր», հտ. Ա, Եր., 2006, էջ 439-534:

յակների ընթացքում հայ իշխանական տների պատմության հետազոտությունը շարունակվեց, ընդ որում գերազանցապես առանձին ընտանիքների տոհմագրությունը եւ գործունեության որոշ փուլերը լուսաբանելու ուղիով: Այսպես, Զաքարյանների վաղ պատմության վերաբերյալ իր դիտարկումները հրապարակեց Ասլան Շահնազարյանը<sup>1</sup>: Գերազանցապես հայկական եւ վրացական պատմական երկերի ու վիմագիր արձանագրությունների վրա հիմնված նրա հետազոտության արդյունքները հետագայում թեեւ լայն ընդունելություն չեն գտել կովկասագիտական գրականության մեջ, այնուամենայնիվ առաջընթաց քայլ են առանձին տոհմերի պատմությունը հատուկ քննության նյութ դարձնելու առումով: Դոփյանների պատմության ուսումնասիրության կապակցությամբ դարաշրջանի նաեւ մյուս տոհմերին հակիրճ անդրադարձավ Կարապետ Տեր-Մկրտչյանը<sup>2</sup>: Նրա երկն աչքի է ընկնում նոր նյութերի, հատկապես ձեռագրերի հիշատակարանների տվյալների լայն ընդգրկումով: ԺԱ-ԺԳ դարերի Կյուրիկյանների տոհմագրությունը հետազոտեց Ղեւոնդ Մովսեսյանը<sup>3</sup>, ով հանգամանորեն անդրադարձավ նաեւ Տաշիր-Ձորագետի թագավորության պատմության առանցքային խնդիրներին:

Հայ իշխանական տների հետազոտության ասպարեզում հիրավի նոր փուլի սկիզբ դրեց վաստակաշատ հայագետ Գարեգին Հովսեփյանը, ում «Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ» կոթողային աշխատությունն աչքի է ընկնում մտահղացման հստակությամբ եւ խնդիրների համակողմանի ընդգրկմամբ<sup>4</sup>: Նա իր առջեւ խնդիր է դրել Խաղբակյանների տոհմի ռազմական վաստակը եւ մշակութային ներդրումը վերհանել պատմական համատեքստում, ուստի հետազոտել է նաեւ ԺԲ-ԺԴ դարերի իրավա-քաղաքական հարաբերությունները եւ սոցիալական կառույցների համակարգը, անդրադարձել ռազմա-քաղաքական անցուղարձեւերին: Բազմերախտ հետազոտողը ծրագրել էր առանձին հատորներով լուսաբանել դարաշրջանի մյուս ազդեցիկ տոհմերի պատմությունը եւս, բայց մասամբ միայն հասցրեց իրականացնել այդ մտահղացումը<sup>5</sup>: Հայ իշխանական տների պատմությանը քաջատեղյակ արվեստաբան-ձեռագրագետն իր տոհմագրական, ժամանակագրական եւ բազմաբնույթ այլ դիտարկումները մասնագետների դատին է հանձնել նաեւ հայ մշակույթի հետազոտությանը նվիրված երկերում<sup>6</sup>:

---

1 Ա. Շահնազարեանց, *Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Ձորագետ եւ նախորդները*, – «Օրդակաթ», Վաղարշապատ, 1913:

2 Կարապետ եպ. [Տեր-Մկրտչեան], *Նիւթեր հայ մելիքութեան մասին*, պր. Բ, *Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք*, Վաղարշապատ, 1914:

3 Հ. Ղ. Մովսէսեան, *Լօռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը*, Վիեննա, 1923:

4 Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969:

5 Գ. կթղ. Յովսէփեան, *Ազիզբէկեանք եւ նրանց շինարարական գործը* (տե՛ս վերոհիշյալ 1969 թ. աշխատության «Նոր յաւելում»-ում, էջ 405-429); *նույնի՝ Տարսայիճ Օրբէլեանի եւ Միմա Խաթունի սերունդը* (նույն տեղում, էջ 431-452):

6 Տե՛ս Գ. Հովսէփյան, *Վախտանգ որդի Ոմեկայ եւ նորս տոհմը*, – «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հտ. Ա, Եր., 1983, էջ 217-233; *նույնի՝ Իգնատիոս մանրանկարիչ եւ Օրոտկանց տոհմը*, նույն տեղում, էջ 234-253; *նույնի՝ Հավուց Թատի Ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ*, – «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հտ. Բ, էջ 5-107; *նույնի՝ Համառոտ գեղարվեստի հայ մանրանկարչության նվիրված սեր աշխատանքի մասին*, նույն տեղում, էջ 238-246:

Քննվող դարաշրջանի տարածաշրջանի եւ Հայաստանի պատմությունը հանգամանալից ուսումնասիրության է ենթարկել մեծանուն ակադ. Հակոբ Մանանդյանը, ով ԺԲ-ԺԴ դարերի հայոց պատմության անցուդարձերը ներկայացրել է Մերձավոր Արեւելքում ծավալված իրադարձությունների համապատկերի վրա՝ սերտորեն կապակցված հարեւան երկրների պատմական ճակատագրերի հետ<sup>1</sup>: Թեեւ նա իր առջեւ նպատակ չի դրել բազմակողմանի վերլուծության ենթարկել Հայաստանի ներքին կյանքը, բայց պարբերաբար անդրադարձել է դարաշրջանի իշխանատոհմերի բարձրացման ու անկման փուլերին, տոհմագրության եւ ծագման հարցերին: Շնորհիվ գիտնականի հետազոտությունների մեծ ընդգրկման, աղբյուրների բոլոր վկայությունները ներգրավելու եւ ուշադիր ուսումնասիրելու եղանակի՝ Մանանդյանի աշխատությունը հայերեն լեզվով գրված առավել լիակատար հետազոտությունն է ուսումնասիրվող ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական պատմության վերաբերյալ:

Տասնամյակներ անց միայն դարաշրջանի պատմության առանցքային հարցերը, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական եւ մշակութային խնդիրները, իրենց պատշաճ լուսաբանությունն են գտել նաեւ «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության էջերում<sup>2</sup>: Հայաստանի եւ տարածաշրջանի ԺԲ-ԺԴ դարերի սոցիալ-քաղաքական պատմությունը կարելուր տեղ է գրավում ակադ. Սուրեն Երեմյանի հետազոտություններում<sup>3</sup>: Մասնավորապես՝ նա ուշագրավ տեսակետներ է հայտնում Ջաքարյանների եւ Մահկանաբերդցիների վաղ պատմության վերաբերյալ:

Քսաներորդ դարի կեսերի կարճատեւ դադարից հետո ԺԲ-ԺԴ դարերի ավատատիրական տների հետազոտությունը նոր թափով շարունակվեց 60-70-ական թթ.: ԺԳ-ԺԴ դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմության հանգուցային խնդիրները հետազոտելիս խոշոր ավատատիրական տոհմերին բազմիցս է անդրադարձել Լեւոն Բաբայանը<sup>4</sup>: Իրենց ուսումնասիրությունների նյութը կազմող հիմնախնդիրների կապակցությամբ տիրապետող դասակարգի զանազան խմբերի տնտեսական ու քաղաքական դերի եւ մշակութային ու գաղափարախոսական կողմնորոշումների հարցերը շահեկանորեն արծարծել են Աշոտ Հովհաննիսյանը<sup>5</sup> եւ Բաբկեն Առաքելյանը<sup>6</sup>: Դարաշրջանի էթնո-մշակութային եւ պատմա-քաղաքական նկարագիրը, ինչպես նաեւ հայ իշխանատոհմերի դավանական քաղաքականության խնդիրները լուսաբանվել են Պարույր Մուրադյանի հետազոտություններում<sup>7</sup>:

- 
- 1 **Հ. Մանանդյան**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, Բն. Գ, – «Երկեր», Բն. Գ, Եր., 1977:
  - 2 *Հայ ժողովրդի պատմություն*, Բն. III (ՀՀ ԳԱԱ հրատ.), Եր., 1976:
  - 3 **Ս. Երեմյան**, *Ամիրապատար Ջաքարիա Երկայնաբազուկ*, Եր., 1944; **Արմինի**՝ «*Ջաքարյաններ*» բառահոդված, – «Հայկական Սովետական հանրագիտարան», Բն. 3, Եր., 1977, էջ 676; **С. Т. Еремян**, *Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках*, – “Научные труды ЕГУ”, т. XXIII, Ер., 1946, с. 389-421; **его же**: *Агарцинская надпись 1184 г.*, – “Исследования в честь академика И. А. Орбели”, Москва-Ленинград, 1960, с. 78-87.
  - 4 **Լ. Հ. Բաբայան**, *Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում*, Եր., 1964:
  - 5 **Ա. Հովհաննիսյան**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք Ա, Եր., 1957:
  - 6 **Բ. Ն. Առաքելյան**, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, Բն. 2, Եր., 1964:
  - 7 **П. М. Мурадян**, *К хронологии некоторых событий в Грузии и Армении в XII веке*, – “Вестник Матенадарана”, 9, Ер., 1969, с. 125-136; **его же**, *Культурная деятельность армян-халкедонитов в XI-XIII веках*. – “II Международный симпозиум по армянскому искусству”, Ер., 1978 (отдель-

Քսաներորդ դարի 70-ական թթ. կեսերից հայ ավատատիրական ընտանիքների պատմությունն ուսումնասիրվում է մենագրական մակարդակով, ընդ որում ուշագրությունից դուրս չեն մնում այդ տոհմերի մշակութային վաստակը, նրանց հայրենի երկրամասի պատմական աշխարհագրության հիմնահարցերը, սոցիալ-տնտեսական պատմության խնդիրները: Այս առումով օրինակելի կարող են դիտվել Բագրատ Ուլուբաբյանի<sup>1</sup>, Գրիգոր Գրիգորյանի<sup>2</sup>, Արտաշես Շահնազարյանի<sup>3</sup> աշխատությունները: Վերջին տարիներին ընթերցողի սեղանին դրվեցին նաև Վաչուտյանների եւ Կյուրիկյանների պատմությունն ամբողջացնող՝ Վիկտոր Պետրոսյանցի<sup>4</sup> եւ Ռաֆայել Մաթեոսյանի<sup>5</sup> հետազոտությունները, ավագ Զաքարյանների դարաշրջանի խնդիրները հաճախ վիճարկելի ձևով ներկայացնող՝ Նոսրուվ Թորոսյանի աշխատանքը<sup>6</sup>:

Աշխատության մեջ արժարժված բազմաթիվ հարցեր լուսաբանության են արժանացել նաև վրացագիտական գրականության մեջ: Մասնավորապես՝ քննված հարցերի խորությամբ եւ ներգրավված սկզբնաղբյուրների ընդգրկումով առանձնանում են վրաց պատմագրության դասականներ Իվանե Զավախիշվիլի<sup>7</sup> եւ Նիկո Բերձենիշվիլի<sup>8</sup> աշխատանքները: Տարածաշրջանի եւ Վրաստանի ԺԲ-ԺԳ դարերի ռազմա-քաղաքական պատմության խաչաձեւումներն արժարժվել են Գոչա Զափարիձեի<sup>9</sup> եւ Ռեւազ Կիկնաձեի<sup>10</sup> մենագրություններում, «Վրաստանի պատմության ակնարկներ» ակադեմիական հրատարակությունում<sup>11</sup>: ԺԲ-ԺԳ դարերի Զաքարյանների պատմությունն առանցքային տեղ է գրավում Շոթա Մեսխիայի աշխատությունում<sup>12</sup>: Բազմաթիվ մասնավոր հարցերի անդրադարձել են նաև այլ վրացի հետազոտողներ:

ԺԲ-ԺԳ դարերի Մերձավոր Արեւելքի եւ Հայաստանի պատմությունը հանգամանորեն հետազոտվել է ժամանակակից արեւելագիտական-միջնադարագիտա-

---

ный оттиск доклада); его же, Новое в “Кавказском культурном мире” в XI-XIII веках, – “Кавказ и Византия”, вып. 4, Ер., 1984, с. 142-156; его же, Проблема конфессиональной ориентации церкви Онецца, – “Кавказ и Византия”, вып. 5, Ер., 1987, с. 36-66 (վերահրատ.՝ Ս. Մ. Мурадян, “Кавказский культурный мир и Армения”, вып. II, Ер., 2012, с. 21-37, 38-47, 163-173).

- 1 Բ. Ա. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում*, Եր., 1975:
- 2 Գ. Մ. Գրիգորյան, *Սյունիքը Օրբելեանների օրոք (XIII-XV դարեր)*, Եր., 1981:
- 3 Ա. Ի. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը*, Եր., 1990:
- 4 Վ. Պետրոսյանց, *Վաչուտյան իշխանական տան տոհմաճառը*, – «Բանբեր Երեսանի համալսարանի», 1981, № 3, էջ 139-147:
- 5 Ռ. Ի. Մաթեոսյան, *Տաշիր-Ձորագետ (X դար – XII դարի սկիզբ)*, Եր., 1982:
- 6 Խ. Ա. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Եր., 1992:
- 7 Տե՛ս օ. Ջաջաբեցի, *Ճարտեղի յերս օստորո*, II, տծ., 1965, III, տծ., 1966:
- 8 Տե՛ս Բ. Զերմենցի, *Եթիօլդի ցեղալուր սազարեղլուտա սամթլուլո Բրժուլոլդան XIII սալլլլնի սաթարտեղլուլո*, “Տաթարտեղլուլ օստորի օսալոտեղլո”, III, տծ., 1966, ցջ. 74-112;
- 9 Տե՛ս Գ. Ջաջարիձե, *Տաթարտեղլուլ Եւ մախլողլուլ Եւ մոսազեղլուլ սամյարո XII-XIII ս-օս քօրլլլլլ մեխլլլլլ*, տծ., 1995:
- 10 Տե՛ս Բ. Կիկնաձե, *Տաթարտեղլուլ օստորի օս ցարոտմցլոճեղլո օսալոտեղլո*, I, տծ., 1982:
- 11 Տե՛ս Տաթարտեղլուլ օստորի օս նարկեղլոլ, III, տծ., 1979:
- 12 Տե՛ս Յ. Մեխիօ, *Տամիլո քոլլոտլոկլլլլ յօտարեղլա Եւ սամողլուլ ցլլլոլա XII սալլլլնի սաթարտեղլուլ*, տծ., 1979:

կան գրականության մեջ: Այս առումով ամենից առաջ նշելի է Վլադիմիր Մինորսկու աշխատությունը, որը լույս է սփռում Իրանի եւ Կովկասի միջնադարյան պատմության բազմաթիվ մուլթ էջերի վրա<sup>1</sup>: Չափազանց շահեկան են նաեւ արեւելեագետ պատմաբաններ Ջ. Բոյլի<sup>2</sup>, Ք. Բոսվորթի<sup>3</sup>, Ռ. Գրուսեի<sup>4</sup>, Ա. Լամբտոնի<sup>5</sup>, Ք. Կահենի<sup>6</sup>, Բ. Շպուլերի<sup>7</sup>, Ժ. Ռիչարդի<sup>8</sup> հիմնարար հետազոտությունները:

Ուշագրավ է, որ հայ եւ առհասարակ կովկասյան ավատատիրական ընտանիքների պատմության հետազոտությունը նկատելի երեւույթ է դառնում նաեւ արտերկրի արդի գիտական գրականության մեջ: Առանձնապես հիշատակելի է Բեռնհարդ Լիմպերի ուսումնասիրությունը<sup>9</sup>, որտեղ նկատի են առնված նաեւ տարածաշրջանի իրադրությունը եւ առհասարակ լիարժեք է պատմական համայնապատկերը: Հեղինակը բավարար ուշադրություն է դարձրել հայ իշխանական տների պատմությանը, բայց նրա տոհմագրական դիտարկումները հաճախ հիմնված են հնացած հրատարակությունների վրա եւ սխալներ են պարունակում:

Հսկայական նյութ է ժողովված Կիրիլ Թումանովի հետազոտություններում<sup>10</sup>, սակայն նա հաճախ եզրակացություններ է կատարում առանց վկայակոչելու իր օգտագործած աղբյուրները, նույն ընտանիքի մեջ ընդգրկում ժամանակագրական հսկայական ընդհատումներից հետո իրենց տոհմային ծագումը կամայականորեն հռչակող նորանոր, միմյանց հետ կասկածելի կապ ունեցող ընտանիքներ: Այս առումով ավելի շահեկան են բազմաթիվ ճշգրտումներ կատարելուն միտված՝ Ռոբերտ Հյուսլանի աշխատանքները<sup>11</sup>:

Վերջին տարիներս հայ իշխանական տների տոհմագրությանը եւ մշակութային գործունեությանն անդրադարձել են նաեւ մեր հայրենակիցներ, պրոֆեսորներ Ավետիս Սանճյանը<sup>12</sup> եւ Արմէն-Քլոդ Մովսիսյանը<sup>13</sup>:

- 
- 1 **V. Minorsky**, *Studies in Caucasian History*, London, 1953.
  - 2 **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-Khans*, – In: *The Cambridge History of Iran*, Vol. 5, Cambridge, 1968; **Idem**: *The Mongol World Empire* (Variorum reprints), London, 1977.
  - 3 **C. Bosworth**, *The Political and Dynastic History of the Iranian World (A.D. 1000-1217)*, – In: *The Cambridge History of Iran*, Vol. 5; **К. Босворт**, *Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии, Пер. с английского и примечания П. А. Грязневича*, Москва, 1971.
  - 4 **R. Grousset**, *L'Empire des steppes*, Paris, 1948.
  - 5 **A. Lambton**, *Continuity and Change in Medieval Persia. Aspects of Administrative, Economic and Social History. 11th-14th Century*, London, 1988.
  - 6 **C. Cahen**, *Pre-Ottoman Turkey*, London, 1968.
  - 7 **B. Spuler**, *The Mongol Period*, Leiden, 1969.
  - 8 **J. Richard**, *Orient et Occident au Moyen Age: contacts et relations*, London, 1976.
  - 9 **B. Limper**, *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus*, Köln, 1980.
  - 10 **C. Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, 1963; **Idem**: *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic Chrétienne (Arménie-Géorgie-Albanie)*, Roma, 1976.
  - 11 **R. Hewsen**, *The Meliks of Eastern Armenia. A Preliminary Study*, – “Revue des Études Arméniennes”, t. IX, Paris, 1972, p. 285-329; t. X, Paris, 1973-1974, p. 281-303; t. XI, Paris, 1975-1976, p. 219-243.
  - 12 **A. Sanjian**, *The Orbelians and Proshians of Siwnik: Patrons of Religious Institutions*, – «Համդէս ամսօրեայ», 1987, սճ. 911-924:
  - 13 **Cl. Mutafian**, *L'Arménie du Levant (XI<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècle)*, t. I-II, Paris, 2012.



Բարձր գնահատելով հետազոտողների բազում սերունդների ակնառու վաստակը, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ եկել է նոր հարցադրումներ կատարելու եւ կուտակված հսկայական նյութն ընդհանրացնելու ժամանակը: Պետք է հուսալ, որ հայ ավատատիրական ավագանու մասին սույն մենագրական ուսումնասիրությունը համաբնույթ խնդիրների իր նպատակադիր ընդգրկումով է, որ պատասխան կտա որոշակի հարցերի եւ բացորոշ կդարձնի այն անելիքները, որոնց ձեռնամուխ կլինեն ապագա ուսումնասիրողները:

## Բ Ա Ժ Ի Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

# ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵԻԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԺԲ ԴԱՐԻՑ - ԺԴ ԴԱՐԻ ԱՌԱԶԻՆ ԿԵՍԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԺԱ-ԺԴ դարերն առանձնահատուկ դարաշրջան են կազմում տարածաշրջանի եւ ողջ Արեւելքի երկրների պատմության մեջ: Միջնադարյան իրականության մեջ առաջին անգամ, Կենտրոնական ու Միջին Ասիայից տեղաշարժվող քոչվորական ժողովուրդները սկսեցին դեպի արեւմուտք ընթանալ Իրանի եւ Այսրկովկասի վրայով՝ տեղական քաղաքակրթություններին պատճառելով անվերականգնելի կորուստներ: Շրջադարձն ակնհերե էր. «Ժողովուրդների մեծ գաղթի» սկզբից (Դ դարի 70-ական թվականներ) ի վեր (եւ ավելի վաղ ժամանակներում) քոչվորները դեպի արեւմուտք էին արշավում հիմնականում Կասպից ծովից հյուսիս ընկած «Ժողովուրդների մեծ դարպասով»՝ հետագայում անցնելով Հյուսիսային Կովկասով եւ Սեւ ու Ազովի ծովերից հյուսիս ընկած տափաստաններով: Համապատասխանաբար, այդ մշտական ներխուժումների, տեղաշարժերի, ասպատակությունների ողջ ծանրությունը կրում էին եւրոպական երկրները: Սելջուկ-թյուրքերը եւ նրանց մոտիկ ու հեռավոր ազգակիցներն ընտրեցին զանգվածային տեղաշարժերի հարավային ուղին, աննախադեպ ազետ պատճառելով Մերձավոր ու Միջին Արեւելքի երկրներին:

Սելջուկ-թյուրքերի, մոնղոլ-թաթարների եւ ապա Լենկթեմուրի առաջնորդած թյուրքական զանգվածի առաջընթացը դեպի արեւմուտք փաստորեն չընդմիջվող, հետզհետե ուժեղացող եւ անվերջանալի գործընթաց էր: Եթե արաբների զանգվածային տեղաշարժերի պարագայում՝ որոշակի աշխարհագրական ու էթնիկական ընդգրկման թելադրանքով, եկվորների ներհուսքը սահմանափակ էր, ապա ժԱ դարում սկիզբ առած քոչվորական հեղեղը գործնականում անսպառ էր՝ ցեղերի հոծ զանգվածի առումով: Ուստի՝ մերձավորարեւելյան քաղաքակրթության ոլորտի մեջ եկվորների ներառումը հանդիպում էր աստիճանաբար սաստկացող դժվարությունների, քանի որ հետզհետե սպառվում էր իրանական, կովկասյան, բյուզանդական քաղաքական-մշակութային աշխարհների ներուժը: Հատկապես ծանր հետեւանքներ ունեցավ հզոր ու միասնական իրանական պետության բացակայությունը, որը պիտի պատնեշի դեր ստանձներ Միջին Ասիայից դեպի Կովկաս ու Փոքր Ասիա տանող ճանապարհին:

Ի տարբերություն Արեւմտյան Եւրոպայի, որի ներդաշնակ ու դինամիկ զարգացումը ժԱ դարից հետո այլեւս չընդհատվեց արտաքին ուժերի միջամտությամբ, առաջավորասիական քաղաքակրթությունների դժբախտությունն այն էր, որ քոչվորների ամեն մի նոր ներխուժում տեղի էր ունենում ավելի սեղմ ժամկետում եւ համեմատաբար նվազ դժվարություններով: Օրինակ՝ մոնղոլ-թաթարներն անհամեմատ ավելի արագ կտրեցին Կենտրոնական Ասիա - Փոքր Ասիա ուղին, քան դա հաջողվել էր սելջուկ-թյուրքերին: Հետեւաբար, ամբողջ տարածաշրջանում եւ մասնավորապես Հայաստանում գնալով սակավանում էին հարաբերական կայունության ժամանակաշրջանները, նվազում էր դրանց տեւողությունը:

Ուշադրություն է գրավում քոչվորների արշավանքների եւ տարաբնակեցման ուղղությունների վերլուծությունը: Առաջին անգամ 1064 թվականին էր, որ նվաճողները դեպի Հայաստանի կենտրոնական շրջաններ շարժվեցին՝ նախապես Երասխա ու Կուր գետերի ավազան ներխուժելուց հետո: Հետագայում Ատրպատականով, Մուղանի դաշտով եւ Կուրի հովտով իրականացվող արշավանքներն ու թյուրքական ցեղերի ներթափանցումը դարձավ սովորական երեւույթ: Ավելին, նրանք հիմնավորապես հաստատվեցին Կովկասում եւ տեղական պայմաններին հարմարեցրին իրենց տնտեսաձեւը: Կուրի միջին եւ ստորին, Երասխի ներքին հոսանքների գոտին դարձավ նրանց ձմեռային արոտավայրերի հիմնական շրջանը, իսկ Հայաստանի լեռնային մարգագետինները ծառայում էին որպես ամառային արոտավայրեր: Աստիճանաբար ստեղծվեց այնպիսի իրավիճակ, երբ թյուրքական տարրերը մխրճվեցին Իրանի եւ Հայաստանի միջեւ, իրարից հեռացնելով դարավոր հարեւաններին: Հարավ-արեւելյան՝ հայ-իրանական սահմանային գոտին վերածվեց մշտապես բաց դարպասի, որտեղից թյուրքական զանգվածի ներհոսքն այլեւս կանգ չառավ: Մյուս կողմից, թյուրքերի առաջննթացը չդադարեց հայ-վրացական վաղեմի սահմանագծում: Առանձին դեպքերում թյուրքերը սեպի նման խրվեցին Կուրից հարավ ընկած հայկական երկրամասերի մեջ: Նրանց առաջխաղացումը շարունակվեց նաեւ հյուսիս-արեւմտյան, ինչպես նաեւ հյուսիս-արեւելյան ուղղություններով: Թյուրքերը հաստատվեցին նաեւ Կուրի միջին հոսանքի եւ նրա աջակողմյան վտակների շրջանում: Այսպիսով, մշտական սպառնալիք առաջացավ Հայաստանի հարավ-արեւելյան, հյուսիս-արեւելյան եւ նույնիսկ հյուսիսային սահմաններում:

Եկվորների հաջորդ ալիքը, որոնց մեջ կարելու էր քրդական էթնոսի կշիռը, բախվելով Հարավային Հայաստանի միջուկը կազմող Վասպուրականի եւ Տարոնի հակահարվածին, հարկադրված էր տարածվել ավելի հարավ ընկած գավառներում, մասամբ հարավ-արեւմուտքում: Նկատի առնենք, որ Հայաստանի արեւմտյան մասին արդեն տիրացել էին սելջուկ-թյուրքերը, եւ այդպես պարզ կդառնա կատարվածի ողջ աշխարհաքաղաքական նշանակությունը: Հայաստանը փաստորեն վերածվել էր կղզու, որը շրջապատված էր այնպիսի օտար էթնիկական խմբերով, որոնք հակադրվում էին տեղացիներին իրենց տնտեսությամբ, մշակույթով եւ կրոնով:

Հայաստանի համար հիրավի աննախանձելի այս իրավիճակը, որն ավելի սպառնալից դարձավ հետագայում եւ հարատեւում է մինչեւ օրս, առաջացավ բազմադարյան զարգացման հետեւանքով եւ զանազան պատճառներով էր պայմանավորված: Այնուամենայնիվ, արժեք անդրադառնալ մի առանցքային հարցի. աշխարհաքաղաքական նոր իրադրության ձեւավորման գործընթացում ի՞նչ դեր խաղացին Հայաստան – կայսրությունների փոխհարաբերությունները, որոնց հետեւանքով վատթարացան հայ ավատատերերի կենսագործունեության պայմանները: Այն տպավորությունն է ստեղծվում, որ երկրի աշխարհաքաղաքական վիճակը զգալի չափով պայմանավորված էր հենց շրջակա կայսրությունների հետ առնչությունների բնույթով եւ, որ բնորոշ է ավելի ընդգրկուն ժամանակաշրջանների համար՝ կայսրությունների կազմում Հայաստանի դերի ու ներքին զարգացման յուրահատկություններով: Հայաստանի պատմության նախորդ ողջ ընթացքը վկայում է, որ երկիրը (հաճախ նաեւ հարեւան Վրաստանը) գրեթե մշտապես գտնվել է երկու կայսրությունների հակամարտությունների ոլորտում: Դա իրողություն էր, որը զգալի չափով բացատրվում է Կովկասի՝ Ասիան ու Եւրոպան միմյանց կապող օղակ լինելու, Հայաստանի՝ Առաջավոր Ասիայի խիստ կարելու գոտում գտնվելու հանգամանքով:

Նման աշխարհաքաղաքական դիրքն ունենալն խոշոր բացասական կողմը, որ մրցակից տերութունները, վճռական առավելության չհասնելով միմյանց նկատմամբ, գերադասում էին ազդեցության ոլորտների բաժանել Հայաստանն ու Կովկասը:

Պետք է խոստովանել, սակայն, որ Հայաստանի այդպիսի աշխարհաքաղաքական դիրքը նաև թշնամական տերութունների միջև խուսանավելու հնարավորություն էր ընձեռում: Հակադիր բեկեռների միջև գտնվող երկիրը հատկապես կարողանում էր նպատակասլաց ձևով օգտագործել կայսրութուններից մեկնումեկի թուլացումը եւ ամրապնդում էր ապագա անկախության սաղմերը՝ որոշ ժամանակ համագործակցելով հակառակորդ տերության հետ: Այդպիսի ջանքերը հաջողությամբ պսակվելու առավել մեծ հավանականություն էին ձեռք բերում, երբ հակամարտող կայսրութուններից որեւէ մեկը պատմա-մշակութային կամ կրոնական հարազատություն էր ունենում Հայաստանի հետ: Երկրի համար հատկապես բնութագրական երկբեւեռ աշխարհաքաղաքական միջավայրն օգնել էր մշակելու՝ իրադրությանը հարմարվելու, ներքին ինքնավարությունը պահպանելու եւ հարմար պահերին ընդարձակելու կառուցակարգեր: Սկզբունքորեն այլ իրավիճակ էր ստեղծում, երբ Հայաստանը բռնությամբ մտցվում էր ժամանակաշրջանի միակ աշխարհակալության կազմի մեջ: Նախ՝ երկիրն այլևս չէր դիտվում որպես ռազմավարական նշանակություն ունեցող տարածք: Հայ բնակչությանը սիրաշահելու քաղաքականությունը փոխարինվում էր կայսրության մեջ տարալուծելու եւ նրան մեկընդմիջտ կլանելու ձգտումով: Այդպիսի միտումները խորթ չէին նաև երկբեւեռ աշխարհաքաղաքական իրադրությանը, բայց ԺԱ-ԺԳ դարերում ավելի ցցուն էին դրսևորվում: Երկրորդ՝ կտրուկ նվազում էին սեփական ուժերով, առանց դրա օգնության, թեկուզեւ բարոյաքաղաքական աջակցության՝ հաջողության հասնելու հնարավորությունները:

Պակաս կարեւոր չէր այն, որ Հայաստանն անընդհատ էր գտնվում միաբեւեռ աշխարհաքաղաքական միջավայրում: Բյուզանդական կայսրությունն ի վիճակի չեղավ երկարատեւ ռազմական դիմակայության մեջ մտնելու «Մեծ սելջուկների» սուլթանության դեմ եւ, Հայաստանից անջրպետվելով Իկոնիայի սուլթանությամբ, ընդմիջտ կորցրեց կովկասյան տարածաշրջանի իրադարձություններին միջամտելու հնարավորությունը: Հին եւ նոր աշխարհակալությունների բախումը չափազանց կարճ տեւեց նաև հետագայում, երբ Հայաստանին ու հարակից երկրներին տիրացան մոնղոլները եւ ապա՝ Լենկթեմուրի զորքերը:

Պատմաշրջանի աշխարհաքաղաքական կացության երկրորդ բնութագրական գիծն այն էր, որ Հայաստանը գերազանցապես բախվում էր քոչվորական ժողովուրդների ստեղծած կայսրությունների հետ: Ակներեւ է, որ Բյուզանդիան եւ մյուս կողմից՝ «Մեծ սելջուկների» սուլթանությունը, մոնղոլական աշխարհակալությունը, Լենկթեմուրի տերությունը կայսրությունների տարբեր տիպեր էին ներկայացնում: Եթե Բյուզանդիան շարունակում էր բոլոր ժամանակների դասական կայսրության՝ Հռոմի պետական-քաղաքական դարավոր ավանդույթները, ապա քոչվորական ժողովուրդների կայսրությունները երիտասարդ տերություններ էին, որոնք ստեղծվել էին կայծակնային արագությամբ, տարացեղ զանգվածների բուռն տեղաշարժերի ու ներթափանցումների հետեւանքով: Կենտրոնական իշխանության դիրքերն այդ պետություններում խախտւտ էին եւ փուլ էին գալիս նույնիսկ ներքաղաքական ցնցումների ու գահակալական կռիվների հետեւանքով: Հայաստանի համար առավել մեծ վտանգ էին ներկայացնում ոչ թե քոչվորների ստեղծած միասնական տերու-

թյունները, որոնց գոյատեւումը կարող էր միայն դանդաղեցնել, բայց ոչ բացառել երկրի հետագա տնտեսական զարգացումը, այլ նորաստեղծ կայսրությունների փլուզումն ու դրան հաջորդած քաղաքական քաոսը: «Մեծ սելջուկների» սուլթանության եւ իլխանության տրոհումից հետո Հայաստանում եւ հարակից շրջաններում առաջացած պետական կազմավորումների միջեւ ծավալված պայքարն էր, որ մեծապես վնասեց հայ պետականության վերածնման գործին: Այդ կազմավորումներում տիրապետող դիրք ունեւր ուզմական ավագանին, որն ամեն ինչ անում էր ավար ստանալու, սահմաններն ընդարձակելու նպատակով: ԺԲ-ԺԴ դարերում օտար պետական կազմավորումների գիշատիչ բնույթն ավելի ընդգծված էր հանդես գալիս, ամիրայությունները երկրի հարավից բացի ընդգրկեցին նաեւ կենտրոնական ու հյուսիսային գավառները, նվազեցին նստակյաց եւ քոչվորական բնակչության դրական փոխազդեցության հնարավորությունները:

Աշխարհաքաղաքական դժնդակ կացությունը, այնուամենայնիվ, լիովին չի պարզաբանում հայ պետականության ճակատագիրը, ի վիճակի չէ բացատրելու բազմադարյան քաղաքական ավանդույթների՝ ԺԴ դ. երկրորդ կեսին վրա հասած դարավոր ընդհատումը: Երեւոյթը քննության է արժանի նաեւ Հայաստանի ներքին զարգացման տեսանկյունից: Այս կապակցութեամբ սեւեռուն ուշադրության է արժանի այն փաստը, որ Բագրատունյաց միասնական պետության տրոհումը տեղի ունեցավ, բացառութեամբ Վասպուրականի թագավորության առանձնացման հետ կապված դեպքերի, առանց արտաքին ուժերի մասնակցության, խաղաղ ու հանդարտ, յուրօրինակ առօրեականության մթնոլորտում: Երկրի բաժանումը սեփական քաղաքային կենտրոններով օժտված առանձին, տնտեսապես ինքնուրույն շրջանների, թերեւս, համապատասխանում էր բոլոր հասարակական ուժերի շահերին: Հայաստանի այդպիսի պետական զարգացումը բնականոն կարող է դիտվել, եթե վերացարկվենք տարածաշրջանի քաղաքական անցուդարձերից եւ համադրենք արեւմտաեւրոպական երկրների անցած ուղու հետ: Հայաստանում միասնական եւ կենտրոնացված պետության կազմավորման համար նախադրյալներ կարող էին հասունանալ զարգացած ավատատիրական հարաբերությունների եզրափակիչ փուլում, թագավորական իշխանության եւ միջին ու մանր ավատատերերի, քաղաքային բնակչության եւ հոգեւորականության դաշինքի պայմաններում: Հայաստանի ոչ ներքին քաղաքական եւ ոչ էլ տնտեսական զարգացումը, սակայն, այդ ուղիով չընթացավ, ընդ որում դրա նախանշանները նկատելի էին մինչեւ քոչվորների հայտնվելը:

Տարածաշրջանում աստիճանաբար ուզմա-քաղաքական տիրապետող դիրք ձեռք բերեցին այնպիսի պետություններ, որոնց պետական ու ներքաղաքական զարգացման ուղին սկզբունքորէն տարբերվում էր հայկականից: Նախ՝ հարեւան Վրաստանում ավարտին հասավ տեղական իշխանությունների միավորումը եւ համավրացական թագավորության ստեղծումը: Ուշագրավն այն է, որ պետական համախմբումն իրականացրեց ոչ թե տնտեսապես ավելի զարգացած Արեւելյան Վրաստանը, այլ երկրի՝ ուզմական տեսանկյունից առավելութուն ունեցող արեւմտյան հատվածը: Վրաստանի միավորումը տեղի ունեցավ վաղ ավատատիրական հարաբերությունների հիմքի վրա եւ երեք դար շարունակ ապահովեց երկրի կայուն վերելքը ուզմա-քաղաքական առաջընթացի ուղիով: Հայաստանում Ժ-ԺԱ դարերում կատարվածին համանման երեւոյթներն այստեղ ավելի ուշ էին դիտվելու (ԺԳ դ. վերջին քառորդ - ԺԴ դար): Պատմական զարգացման տեմպերի անհա-

մաշափությունը, ինչպես նաև ավելի բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքը, թույլ տվեցին Վրաստանին՝ աստիճանաբար տիրանալու առաջնությանը կովկասյան քաղաքական ու մշակութային աշխարհում:

Արեւմուտքից Հայաստանին սպառնացող Բյուզանդական կայսրությունը, հիմնված լինելով անտիկ ժամանակաշրջանից ժառանգած կառույցների վրա, ենթակա չէր ավատատիրական աշխարհի օրինաչափություններին: Մասնավորապես՝ հզոր ու միասնական պետության առկայությունը Բյուզանդիայի թիվ մեկ տիպաբանական առանձնահատկություններից էր: Հետեւաբար, Հայաստանի աշխարհաքաղաքական վիճակը բարդացել էր դեռևս սելջուկյան արշավանքներին նախորդող ժամանակաշրջանում: Երբ Վրաստանն ու Բյուզանդիան ԺԱ դ. առաջին քառորդում ընթանում էին քաղաքական համախմբման եւ տարածքային ընդարձակման ուղիով, Հայաստանում բարձրակետին էր հասել հակառակ գործընթացը: Խոշոր պետական կազմավորման ստեղծման միտում չդրսելորվեց նաև ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. առաջին երեք տասնամյակների ընթացքում, երբ Զաքարյան տոհմի անդամների գլխավորությամբ ազատագրվեցին Շիրակի Բագրատունիների, Այուսիքի, Տաշիր-Ձորագետի նախկին թագավորությունները, Վանանդի թագավորության մի մասը, մի շարք իշխանություններ: Երկիրը շարունակում էր ընթանալ նորանոր իշխանությունների բաժանվելու ուղիով նաև հետագայում՝ ԺԳ-ԺԴ դարերում, մանավանդ որ զարգացման այդ ուղղությունը հետեւողականորեն խրախուսվում էր մոնղոլների կողմից: Ուստի անգամ այն պարագան, որ, ի տարբերություն սելջուկ-թյուրքերի տիրապետության ժամանակաշրջանի, հայ իշխանները պահպանել էին իրենց զինական ուժը եւ անգամ մասնակցում էին իլխանության ներսում ծավալված ներքաղաքական բախումներին, էական դեր չկատարեց հետագա իրադարձությունների ժամանակ: Բացի այդ, իլխանության փլուզման փուլում ծավալված երկարատեւ ու վայրագ պայքարի հետեւանքները Հայաստանի համար ավելի կործանարար էին, քան «Մեծ սելջուկների» սուլթանության տրոհման ժամանակ տեղի ունեցած ցնցումները: Չպետք է անտեսել նաև տնտեսական գործոնի դերը: Քոչվոր զանգվածի ամեն մի նոր ներխուժում եւ տիրապետություն ավելի էր սահմանափակում Հայաստանի տնտեսական ու քաղաքական վերածննդի հնարավորությունները: Աշխարհաքաղաքական կացության շարունակական վատթարացումը եւ Հայաստանի ներքին զարգացման ընթացքն էլ, զարհուրելիորեն զուգակցվելով, հանգեցրին հիրավի ողբերգական հետեւանքների:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ – 80-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

ԺԲ դ. սկզբին Մերձավոր Արեւելքում հաստատված քաղաքական կացութիւնը մեծապես պայմանավորված էր նախորդ դարի վերջին քառորդում ծավալված եւ տարածաշրջանի համար շրջադարձային նշանակութեան ունեցած անցուղարձերով:

Սելջուկ-թյուրքերի հիմնած աշխարհակալութիւնը Մելիքշահ սուլթանի (1072-1092) մահից հետո վերջնականապես բռնեց անկման ու քայքայման ուղին: Մինչ այդ էլ «Մեծ սելջուկներ» տերութիւնից անջատվել, առանձին սուլթանութիւններ էին դարձել Քիրմանը եւ Սիրիան, Փոքր Ասիայում նոր պետութեան (Իկոնիայի կամ Ռումի սուլթանութիւն) հիմք էին դրել Սուլեյման իբն Գթլմուշը եւ նրա ժառանգները: Անվերջ պատերազմներից ու ներքին պայքարից թուլացած սելջուկյան աշխարհակալութեան տրոհումը շարունակվեց նաեւ հաջորդ դարի սկզբին: Մելիքշահի որդի Բարքիարուսը (1094-1105) իր գրեթե ողջ գահակալութեան ընթացքում ստիպված էր պայքարել եղբոր՝ Մուհամեդ Տափարի դեմ, եւ պետութիւնը փաստորեն բաժանվել էր նրանց միջեւ: Մուհամեդը (1105-1118), որի նստավայրն էր Գանձակ Շահաստանը, իշխանութիւն էր ձեռք բերել Ատրպատականի, Հայաստանի, Կուրի ու Երասխի միջեւ ընկած շրջանների եւ այլ տարածքների նկատմամբ: Դրութիւնն ավելի վատացավ սուլթան Մուհամեդ Տափարի մահից հետո, երբ Համադանում իշխող նրա հաջորդներն իրական վերահսկողութիւն էին պահպանում միայն Իրաքի, Արեւմտյան Իրանի եւ Ատրպատականի նկատմամբ (Իրաքի սելջուկյան սուլթանութիւն)<sup>1</sup>:

Երկրորդ սելջուկյան տերութիւնն առաջացել էր Խորասանում, որի տիրակալ Սանջարը (1118-1157) համարվում էր բոլոր սելջուկ իշխողների ազգապետ: Այդ պետութիւնը, որը 1153-1157 թվականներին կործանվեց հենց օղուզական ցեղերի ապստամբութեան հետեւանքով, ի զորու չէր՝ իրական մասնակցութիւն բերելու Այսրկովկասում եւ Հայաստանում ծավալվող իրադարձութիւններին: Հայկական քաղաքական կազմավորումների պատմութիւնը ԺԲ դարում կապված էր Իրաքի սելջուկյան սուլթանութեան եւ, ավելի մեծ չափով, Հայաստանում ու հարակից տարածքներում առաջացած մահմեդական ամիրայութիւնների պատմութեան հետ: Սելջուկյան երրորդ՝ Իկոնիայի սուլթանութիւնը եւս խնդրո առարկա ժամանակաշրջանում չէր միջամտում այսրկովկասյան անցուղարձերին եւ ավելի շատ զբաղված էր Բյուզանդական կայսրութեան ու Կիլիկիայի հայոց պետութեան հետ մշտական հակամարտութիւններով: Այդ պետութիւնն ուժեղացրեց ճնշումը Հայաստանի արեւմտյան եւ հարավային նահանգների ուղղութեամբ միայն հարյուրամյակի վերջում:

Ձանազան պետական կազմավորումների միջեւ Մերձավոր Արեւելքում ընթացող պայքարի հետագա ընթացքը զգալի չափով պայմանավորված էր ՓՍ դ. վերջին սկզբնավորված խաչակրաց շարժումով եւ Լեւանտում խաչակրաց պետութիւնների առաջացումով: Խաչակրաց շարժման դեմ պայքարը նշանակալի ուժեր էր խլում

1 Տե՛ս C. Bosworth, *Աշխ.*, էջ 108-111; Ս. Վ. Բոռնազյան, *Հայաստանը եւ սելջուկները XI-XII դդ.*, Եր., 1980, էջ 218-220:

մահմեդական աշխարհից ու, առաջին հերթին, սելջուկ-թյուրքերից, դյուրացնելով Արեւելքի քրիստոնեական պետությունների խնդիրը: Լատինական Արեւելքի խաչակրաց պետությունների վիճակը ծանրացավ ԺԲ դ. 80-ական թվականների երկրորդ կեսին, երբ մահմեդականները գրավեցին Երուսաղեմը, իսկ խաչակրաց երրորդ արշավանքը (1189-1192) ի գորու չեղավ՝ ամրապնդելու խաչակիրների դիրքերն Արեւելքում:

Բյուզանդիայի աղետալի պարտությունը 1071 թվականին Մանազկերտի ճակատամարտում ծայրաստիճան լարված վիճակ առաջ բերեց Հարավային Հայաստանում, որտեղ նախկինում առանձնապես ամուր էին կայսրության դիրքերը: Փաստ է, որ այստեղից էր սկսվել հայկական երկրամասերի միացումը Բյուզանդական կայսրությանը: ԺԲ դարում կայսրությունը, իհարկե, այլևս ի գորու չէր օգնություն ցույց տալու իր երբեմնի ստորականներին, որոնք ավանդույթի համաձայն պաշտպանում էին Բյուզանդիայի արեւելյան սահմանները: ԺԲ դարում, որպես Բյուզանդիայի հետ դեռևս առկայծող կապի վկայություն, մնում էին միայն Հարավային Հայաստանի տիրակալների բյուզանդական տիրոջոսները:

Սելջուկյան արշավանքներից հետո Հարավային Հայաստանում դեռևս գոյատևող քաղաքական կազմավորումներից առաջինը պատմական ասպարեզից հեռացավ Տարոնի Մամիկոնյանների իշխանությունը: Նրա տիրակալներից Տաճատի որդի Չորտվանելը («մեծի տէրութեան իշխանի Տարօնոյ եւ ամենայն Հայոց Չորտուանելի՝ որդոյ Տաճատայ քաջի Մամիկոնոյ»)<sup>1</sup> թեև 1079 թվականին հպարտությամբ էր գրում սելջուկ-թյուրքերի դեմ մղած իր մարտերի մասին («հրամանաւ ինքնակալացն Յունաց՝ ոչ զանգիտեցի ի սպառնալեաց եւ յարշաւանաց ազգին Իսմայելացոց»<sup>2</sup>, հետմանազկերտյան տարիներին, հավանաբար, դադարել էր Բյուզանդիայի ստորական լինելուց: Նրա որդի Ապլասաթի («էր այր քաջ եւ պատերազմող ընտիր»<sup>3</sup>), ռազմական գործունեությունն արդեն ԺԲ դ. սկզբին ծավալվում էր Տարոնից հեռու: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ նա նախ ծառայում էր Գող Վասիլի գորքերում, ապա հարել էր խաչակիրների առաջնորդներից Բալդուին Ֆլանդրիացուն եւ Ջոսլինին, բայց հետո նորից վերադարձել էր Գող Վասիլի մոտ: 1112 թվականին Ապլասաթը գոհվեց սելջուկ-թյուրքերի դեմ մարտերից մեկում, Լեւոն Ա Ռուբինյանի իշխանության տարածքում<sup>4</sup>:

Հայ իշխանական տները մեծ դժվարությամբ էին դիմագրավում սելջուկյան արհավիրքներին անգամ երկրի հարավ-արեւմտյան այն գավառներում, որոնք ամրացվել էին դեռևս արաբ-բյուզանդական հակամարտության ժամանակաշրջանում: Մասնավորապես, Չորրորդ Հաջրի գավառներից Ծոփք Շահունյացը, Դեգիքը, Գավրեքը եւ Հանձիտը մտնում էին արաբ-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու (սուղուր) մեջ<sup>5</sup> եւ թշնամիներին հակահարված հասցնելու ավանդույթներ ունեին: Այդ գավառները նաեւ մտնում էին հայ-քաղկեդոնականների՝ ծա-

1 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Հայաստանում*, հտ. Բ, էջ 396:

2 Նույն տեղում:

3 Մատթեոս Ուռհայեցի, էջ 310:

4 Նույն տեղում, էջ 310-311, 325:

5 Տե՛ս Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան, *Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր)*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 134-148:



Թերի հոծ բնակության գոտու մեջ, որը բյուզանդացիները հետեւողական քաղաքականության մեջ ջանում էին դարձնել իրենց արեւելյան պատվարը<sup>1</sup>: Այստեղ էին գտնվում բյուզանդական Մեսոպոտամիա (Միջագետք), Ամոսատ (Արշամաշատ) եւ Խոզան բանակաթեմերը: Ինչպես պարզվում է Սամուէլ Անեցու մի վկայությունից, Դեգիբ գավառը, որտեղ ԺԲ դարում իշխում էր Կամեն/ասյանների կամ Կեկավմենոսների ընտանիքը, գրավել էր Թեոփիլոս կայսրը (829-842)<sup>2</sup>: Կամենասյանների (Կամենյանների) ընտանիքի ներկայացուցիչներից, որոնք զգալի դեր են խաղացել Բյուզանդիայի եւ Հայաստանի ԺԱ դարի պատմության մեջ, հատկապես նշանավոր է «Ժորհուրդներ ու պատմություններ» աշխատության հեղինակ Կեկավմենոսը<sup>3</sup>: Նրա պապը տոպարքոս (կիսանկախ կառավարիչ) էր «Տորբոն» գավառում<sup>4</sup>, որի անվանումը, Հրաչ Բարթիկյանի կոահմամբ, սրբագրելի է «Տեկես», այսինքն՝ Դեգիբ-Դեգիբ<sup>5</sup>: Այն Կամենասյանների ընտանիքին էր անցել, թերեւս, Ժ դ. երրորդ քառորդում<sup>6</sup>, եւ տոհմը պահպանել էր վերահսկողությունն այդ գավառի մի մասի նկատմամբ, Սղուկ կենտրոնով<sup>7</sup>, ընդհուպ միջեւ ԺԲ դ. 80-ական թվականները: Կամենասյանները, որոնք ինամիական կապեր էին հաստատել Հարավային Հայաստանի տիրակալներից Սասունի Թոռնիկյանների հետ<sup>8</sup>, հաջողությամբ էին դիմագրավում փորձությունները, բայց ԺԲ դ. վերջին, երբ նույնիսկ մահմեդական իշխանությունները կուզեցին Այուբյաններին ու Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, Կամենասյանների հետագա գոյատեւումը, թերեւս, անհնարին էր դարձել: Մահմեդական միջավայրի ուժեղացող ազդեցությունն ընդգծված է երեւում, եթե Կամենասյանների մինչ այդ ակնհայտ հունաշունչ անվանումները (Կամեն, Կադակալոս) համադրում ենք ԺԲ դ. կեսերի եւ դարավերջի ներկայացուցիչների՝ նախ «չեզոք» (Գրիգոր), ապա բացահայտ արեւելյան (Շահնշահ, Շահմեխիբ) անձնանունների հետ<sup>9</sup>:

Հայ-քաղկեդոնականներով էին բնակեցված նաեւ Եփրատ գետի միջին հոսանքում գտնվող այն տարածքները, որոնք անգամ ԺԳ-ԺԴ դարերում շարունակում էին

- 
- 1 Տե՛ս **Р. М. Бартикян**, *О византийской аристократической семье Гаврас, II*, – “Историко-филологический журнал”, 1987, № 4, с. 184-193.
  - 2 **Սամուէլ Անեցի**, էջ 92: Ա. Տեր-Միքելյանի հրատարակության *Դեղնիս* սխալ ընթերցումը սրբագրելի է որոշ ձեռագրերում սուկա *Դեգիս*-ով (տե՛ս **Թեոփանեսի Ժարոմակոս**, Թարգմանություն քննարկից, առաջաբան եւ ծանոթագրություններ **Հ. Բարթիկյանի**, Եր., 1990, էջ 318, ծմթ. 92):
  - 3 *Советы и рассказы Кекавмена. Сочинение византийского полководца XI века*, Подготовка текста, введение, перевод и комментарий **Г. Г. Литаврина**, Москва, 1972.
  - 4 Տե՛ս նույն տեղում, էջ 171:
  - 5 Տե՛ս **Н. Bartikian**, *La généalogie du Magistros Bagarat, Catépan de l' Orient, et des Kékauménos*, – “Revue des Études Arméniennes”, t. II, Paris, 1965, p. 268-272.
  - 6 Տե՛ս *Советы и рассказы Кекавмена*, с. 421, прим. 400.
  - 7 Սասունի Թոռնիկյանների 1169 թվականի հիշատակարանի, որը միակ աղբյուրն է ԺԲ դարի Կամեն(ասյանների տոհմի մասին, վերջին հրատարակությունում (տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 196) այս բերդանունը տրված է «Ուղուկ» ձեւով: Քանի որ «Աշխարհացոյց»-ի համաձայն՝ Դեգիբի գլխավոր բերդերից էր Սուկը, իսկ Սուկ-Սղուկ առնչությունն ակնհայտ է (տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա)*, Եր., 1963, էջ 107), ապա ավելի ճիշտ է թվում վերականգնել «Սաղուկ» ընթերցումը (հմմ. **Հ. Ղ. Ալիշան**, *Հայաստանում*, հտ. Բ, էջ 394):
  - 8 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 196:
  - 9 Նույն տեղում:

պատկանել Խավոսաների (այլ տարբերակով՝ Ղավրասների) հայկական ազնվականական ընտանիքին<sup>1</sup>:

Այսպիսով, Հայաստանի հարավային ու հարավ-արեւմտյան գավառներում երկրի բնիկ տերերի քաղաքական իշխանությունը ԺԲ դարում որպես բացառիկ երեւույթ էր հանդես գալիս: Ընդ որում, այդ տխուր վիճակը մեծապես պայմանավորված էր նախորդ դարերի ընթացքում Բյուզանդական կայսրության իրականացրած նպատակասլաց քաղաքականությամբ, որի նպատակը գավառները հայկական իրականությունից կտրելն ու հեռացնելն էր: Այս առումով բնութագրական փաստ է, որ Բյուզանդացիները շարունակում էին կառչած մնալ այդ գերխնդրին անգամ ԺԱ դ. վերջին – ԺԲ դ. սկզբին<sup>2</sup>, երբ Բյուզանդական ծրագրերի լիակատար ձախողումը բացահայտ էր դարձել:

Կացությունը նույնքան ծանր էր Վասպուրականում ու Սասունում, որտեղ եւս հայ ավատատերերը մահու եւ կենաց պայքար էին մղում իրենց դիրքերը պահպանելու համար:

Նախկին Վասպուրականի թագավորության մի մասում՝ Ամյուկ ամրոցի շրջակայքում եւ Աղթամար կղզում, ԺԱ դարում իշխում էին Խեղենեկյանները, որոնք, հավանաբար, Վասպուրականում մնացած Արծրունիներից էին սերում: ԺԱ դ. վերջին – ԺԲ դ. սկզբին տոհմի գլխավոր Աբդուլմսեհը զգալիորեն ամրապնդեց իր բազմադամ ընտանիքի դիրքերը<sup>3</sup>: Նրա որդիներից Դավիթը 1113 թվականին հռչակվեց հայոց կաթողիկոս, թեեւ այդ նոր հոգեւոր կենտրոնի իշխանությունը Վասպուրականից դուրս չէր տարածվում: Փաստորեն աշխարհիկ ու հոգեւոր իշխանության զուգակցումն ու կենտրոնացումը միեւնույն ընտանիքի ներսում՝ պարոնտերությունը, որը բնութագրական երեւույթ էր դառնալու ամբողջ Հայաստանում հետագա դարերում, առավել վաղ տարածում ձեռք բերեց հենց Վասպուրականում: Աբդուլմսեհի գլխավոր ժառանգորդը Ստեփանոս-Ալուզ «պրտոկուրապաղատ» («պրտոկուրապաղատ»)-ն էր<sup>4</sup>, որը բազմակողմանի գործունեություն էր ծավալել 1121 թվականից հետո<sup>5</sup>: Այնուամենայնիվ Խեղենեկյանների իշխանությունն ի վիճակի չեղավ՝ խուսափելու շրջակա հայ ու օտար այն քաղաքական կազմավորումների ճակատագրից, որոնք ԺԲ դ. երկրորդ կեսին ենթարկվում էին Շահ-Արմենների հզոր ամիրայության ճնշմանը: Ինչպես վկայում է Վարդան Արեւելցին, Շահ-Արմեն Սուլքման Բ-ն (1128-1185) «էառ զԱմուկ ի Հետենկայ»<sup>6</sup>, այսինքն՝ Խեղենեկյանների իշխանության տա-

1 Տե՛ս Ք. Մ. Бартикян, *О византийской аристократической семье Гаврас*, III, – “Историко-филологический журнал”, 1988, № 1, с. 163-169.

2 Տե՛ս Պօղոս Տարոնացի, *Թուղթ ընդ դէմ Թէոփիստէայ հոռոմ փիլիսոփայի*, Կ. Պոլիս, 1752:

3 Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տաճն Արծրունեաց*, Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Մ. Գարբիւնյան-Մելիքյանի, Եր., 2006, էջ 339-341: Վասպուրականում նրան նախորդել են Խեղենեկ Ա-ն, Խեղենեկ Ա-ի որդի Թոռնիկը եւ թոռ Թադէոսը:

4 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 183: Հիմնվելով 1118-1180 թվականների բյուզանդական տիտղոսների յուրաքանչյուր սամրակի վրա (տե՛ս **Ա. Ս. Каждан**, *Социальный состав господствующего класса Византии XI-XII вв.*, Москва, 1974, с. 112-113), Ստեփանոս-Ալուզ պրոտոկուրապաղատին պայմանականորեն կարելի է ընդգրկել Բյուզանդական կայսրության ավագանու նախավերջին՝ չորրորդ խմբի մեջ: Հնարավոր է, որ պրոտոկուրապաղատ է եղել դեռեւս նրա հայրը, երբ Բյուզանդիայի ճետ կապերն ավելի սերտ էին:

5 Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 345-348:

6 Վարդան Արեւելցի, էջ 162:

րածքային կորուստը պատահել է Ստեփանոս-Ալուզի որդի Խեղենեկ Բ-ի օրոք: Այս անցքի արձանագրմանը հետևում է Սասունի առման մասին վկայությունը, հետևաբար կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է միեւնույն ժամանակ տեղի ունեցած դեպքերին: Եթե այս կուսույնը համապատասխանում է իրականությանը, ապա Խեղենեկյանների իշխանության տարածքի խիստ սահմանափակումը տեղի է ունեցել ԺԲ դ. 70-ական թվականներին<sup>1</sup>:

Խեղենեկ Բ-ի դուստր Մարիամը, որը ժառանգել էր Խեղենեկյանների պատվար Աղթամարը, ամուսնացել էր Արծրունիների կրտսեր տոհմաճյուղերից մեկի ներկայացուցիչ Սեֆեդինի հետ, եւ նրանց ժառանգները՝ Խեղենեկյան-Սեֆեդինյանները պահպանեցին իրենց իշխանությունն Աղթամարի եւ այդտեղ հաստատված կաթողիկոսական աթոռի նկատմամբ նաեւ հաջորդ դարերի ընթացքում<sup>2</sup>:

Հարավային Հայաստանի պետական կազմավորումների կյանքում ամենակարեւորը Սասունի Թոռնիկյանների<sup>3</sup> իշխանությունում ու նրա մատուցներում ծավալ-

- 
- 1 Անհավանական է թվում, թե Ամյուկի գրավումը պատահել է 1130 թվականին (տե՛ս Վ. Վարդանյան, *Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը*, Եր., 1969, էջ 254), քանի որ այդ տարում Շահ-Արմեն Սուքման Բ-ն դեռ ութամյա երեխա էր (տե՛ս *Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, էջ 219): Ամյուկի գրավումը ԺԲ դ. կեսերին է դնում Աշ. Հովհաննիսյանը, բայց այդ գործողությունը բացահայտ վրիպումով վերագրում է Ելտկուզ աթաբեկին (Ա. Հովհաննիսյան, *Աշվ. աշխ.*, էջ 51): Հետագոտողն իրադարձությունները եւ դրանց ժամանակագրությունը ներկայացնելիս հիմնվում է Մխիթար Այրիվանեցու հետեւյալ վկայությունների վրա. «Էլտկուզ աթաբեկն էառ զԱմուկ ի Խալտեակայ եւ զՍասունք ի Վիրգեանայ» (Մխիթար Այրիվանեցի, էջ 63): Աղբյուրագիտական վերլուծությունից, սակայն, ակներե է դառնում, որ պատմիչի սխալներն առաջացել են Վարդան Արեւելցու՝ Սասունի ու Վասպուրականի իշխանությունների մասին տեղեկությունները համառոտելիս: Հետեւաբար՝ վստահություն չի ներշնչում նաեւ Մխիթար Այրիվանեցու հրամանագրությունը:
  - 2 Տե՛ս Հ. Ն. Ակիմեան, *Գառազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920:
  - 3 Տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչ Թոռնիկ Ա-ին ուղղված չորս անակներում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին նրան Մամիկոնյան է անվանում (Գրիգոր Մագիստրոս, *Թղթեր*, Բնագիրն յառաջաբանով եւ ծանոթություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 213-225): Սասունի իշխաններին, «տան Մամիկոնեից» գիտի նաեւ Վարդան պատմիչը (Վարդան Արեւելցի, էջ 147): Այդ պատճառով էլ ժամանակակից պատմագիտության մեջ տոհմը հաճախ կոչվում է «Սասունի Մամիկոնյան» կամ «Մամիկոնյան-Թոռնիկյան» (տե՛ս Է. Լ. Գանիելյան, *Տարոնի եւ Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյանները*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 137-153; Հ. Մանուչարյան, *Պողոս Տարոնացի*, Եր., 1982, էջ 17-34): Մինչդեռ Մատթեոս Ուոհալեցին եւ նրա հետետողները բավարարվում են Սասունի տիրակալի հայրանվան նշումով՝ «Որդի Մուշեղայ Թոռնիկ», եւ չեն շոշովում տոհմային պատկանելության խնդիրը (Մատթեոս Ուոհալեցի, էջ 130, 206-210, Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, Վենետիկ, 1956, էջ 55, 79-81, Սամուել Անցի, էջ 111): Պողոս Տարոնացին Թոռնիկ Ա-ի որդի Չորսվանել Ա-ին համարձակորեն կապում է երկու այլ նշանավոր տոհմերի հետ: Ըստ նրա՝ Չորսվանելը միաժամանակ ե՛ր «լազզե եւ ի շառաիղէ Սեւեքերիմայ եւ յասորոց թագաւորացն», այսինքն՝ Արծրունի է, ե՛ր «լազզե Աբրահամո Քետուրական Արշակունի» ի շառաիղէ սրբոյն Գրիգորի Լուսավորչի» (Պողոս Տարոնացի, էջ 274): Ինչպես երևում է, Պողոս Տարոնացին այս ազգաբանությունը հյուսել է Մովսէս Խորենացու Պատմության զանազան հատվածների հիման վրա ու նրա անվանակոչումները հնարավոր է հասկանալ եւ մեկնաբանել: Մասնավորապես, Արշակունիների եւ Գրիգոր Լուսավորչի հետ Չորսվանել Ա-ի ազգակցությունը կարելի է բացատրել իշխանի «մայրենեօք բնութեամբ» (նրա մայրն իրեն Արշակունի եւ Լուսավորչի ժառանգ հռչակող Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրն էր): Արծրունիների հետ տոհմակցությունը, թերեւս, պայմանավորված է Հայկական Տարոնի ամենանշանավոր տերերի՝ Արծրունիների քաղաքական ժառանգորդ հանդես գալու հավակնություններով: Այս-

ված անցուղարձեքն էին: Սասունցիները Թոռնիկ Ա-ի գլխավորությամբ<sup>1</sup> ժԱ դ. կեսերին հաջող հակահարված հասցրեցին սելջուկ-թյուրքերին, իսկ 70-ական թվականներին պայքարի մեջ մտան հայ իշխան Փիլարտոսի ու Մրվանյանների ամիրայության դեմ: Փիլարտոսի եւ Թոռնիկ Ա-ի բախումը փաստորեն հետմանազկերտյան ժամանակատվածում բյուզանդական ժառանգության համար ծավալված պայքարի դրվագներից մեկն է: Հակառակորդների միջեւ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Սասունից զգալիորեն արեւմուտք, Հանձիտ գավառի Ալելուա դաշտում եւ ավարտվեց սասունցիների հաղթանակով<sup>2</sup>: Պատահական չէ, որ պարտված Փիլարտոսը հաջորդ տարիներին, անկախ իշխանություն ստեղծելու նպատակով գործունեություն ծավալեց Կիրիկիային հարակից շրջաններում՝ կենտրոն ունենալով Մարաշը:

Շուրջ 1073 թ., երբ Թոռնիկ Ա-ն զոհ գնաց Փիլարտոսի ու Մրվանյանների կազմակերպած դավադրությանը, նրա տիրույթները ժառանգեցին անչափահաս որդիները՝ Չորտվանելն ու Վասակը<sup>3</sup>: Այդ շրջանում Սասունի իշխանության եւ Կայսրության միջեւ հաստատված հարաբերությունները, որոնք, հավանաբար, ավելի վաղ ժամանակներից էին գալիս, առհասարակ բնութագրական էին կայսրության ու տարածաշրջանի հայ եւ օտար պետական կազմավորումների համար: Հնարավորություն չունենալով անմիջականորեն ազդել իրադարձությունների ընթացքի վրա, բյուզանդական տիրակալներն առայժմ բավարարվում էին իրենց հնարավոր դաշնակիցներին տիտղոսներ շնորհելով ու նախկին կապերը պահպանելով: 1101 թվականին Բյուզանդիայից անկախ Չորտվանելը նովելիսիմոսի<sup>4</sup> տիտղոս էր կրում, որը բավականին բարձր աստիճան էր դիտվում Բյուզանդիայում<sup>5</sup>: Այն հաճախ շնորհվում էր նաեւ «բյուզանդական աշխարհի» մեջ մտնող հարեւան երկրների իշխողներին: Օր.՝ նովելիսիմոս էր Վրաստանի թագավոր Բագրատ Դ-ն (1027-1072), այդ տիտղոսն էր որոշ ժամանակ կրում նաեւ նրա որդի Գեորգի Բ-ն (1072-1089)<sup>6</sup>: Դատելով բյուզանդական տիտղոսներից, ԺԲ դ. երկրորդ կեսին Սասունի իշխանության քաղաքական կշիռը նույնիսկ կարելի է ամենաբարձրը համարել հայ տիրակալների շարքում: Համեմատության համար հիշենք, որ Վասպուրականի Խեղենեկյանների ստացած ամենաբարձր տիտղոսը պրոտոկլորապաղատն էր, իսկ Տաշիր-Չորագետի արքա Կյուրիկեն (մոտ՝ 1049-1089) ընդամենը կլորապաղատ էր<sup>7</sup>:

Միջազգային հարաբերություններում Սասունի իշխանության դերի նշանակալիությունը պատկերավոր է արտահայտել ժամանակի ականավոր մատենագիր Պո-

պիսով, Թոռնիկյանների իրական ծագումը վերջնականապես պարզաբանված չէ, Մամիկոնյանների կամ Արծրունիների հետ արյունակցական կապերը փաստարկված չեն: Նման պարագայում գերադասելի է տոհմը կոչել «Թոռնիկյան» (տե՛ս Հ. Ն. Ակիմյան, *Թոռնիկեանք ի Սասուն*, «Մատենագրական հետազոտություններ», հտ. Դ, Վիեննա, 1938, էջ 76-88) դեռեւս ձեռնպահ մնալով լրացուցիչ անվանումներից:

- 1 Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, էջ 130-131; Սմբատ Սպարապետ, էջ 55; Սամուել Անցեցի, էջ 111:
- 2 Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, էջ 206-208, Սմբատ Սպարապետ, էջ 79-80:
- 3 Տե՛ս նույն տեղերում:
- 4 Տե՛ս Պողոս Տարոնացի, էջ 274: Էջ 13-ում նույն տիտղոսը տրված է «նովերսիմոս» ձեռով:
- 5 Տե՛ս А. П. Каждан, *Социальный состав господствующего класса Византии*, с. 109-110.
- 6 Տե՛ս Ջ. Եժեցեան, *XI-XII საუკუნეების საქართველოს მეფეთა ტიტულების გავებისათვის*, “ძიებანი საქართველოსა და კავკასიის ისტორიიდან”, თბ., 1976, გვ. 156-165.
- 7 Տե՛ս Բ. Ի. Մաթեոսյան, *նշվ. աշխ.*, էջ 95-97:

ղոս Տարոնացին: Ըստ նրա՝ Չորտվանել Ա-ն էր «պատուեալ մեծաւ պատուով ի կայսերացդ հոռոմոց: Դարձեալ եւ ի պարսից թագաւորացն յամիրական ընկալեալ զիշխանութիւնս»<sup>1</sup>: Նման պայմաններում Սասունի տիրակալները պետք է ունենային ինչպես ռազմական հզորություն, այնպես էլ բավականաչափ դիվանագիտական հմտություն՝ պատվով դուրս գալու համար փորձություններից:

ԺԱ դ. 80-ական թվականներին, երբ տեղաշարժեր արձանագրվեցին սելջուկյան սուլթանների քաղաքականության մեջ եւ մինչ այդ Այսրկովկասում նրանց հավատարիմ դաշնակից համարվող մահմեդական ամիրայություններն անմիջականորեն ենթարկվեցին կենտրոնական իշխանությանը, Սասունի արտաքին քաղաքական կացությունը, կարելի է ենթադրել, նույնիսկ ժամանակավորապես բարելավվեց, քանի որ Թոռնիկյանների վաղեմի հակառակորդ Դիարբեքի Մրվանյանների տիրույթների մեծ մասը 1086 թվականին միացվեցին «Մեծ սելջուկների» սուլթանությանը<sup>2</sup>: 1096 թ. մահացավ Մրվանյան վերջին ամիրան, եւ Սասունի տիրակալը (անշուշտ, Չորտվանել Ա-ն) ձեռք բերեց նրա վերահսկած տարածքի մի մասը՝ երեսուն գյուղ շրջակա ընկուզենու անտառներով<sup>3</sup>: Մրվանյանների ամիրայության վերացումը, սակայն, խթան դարձավ ավելի հզոր թշնամու՝ Շահ-Արմենների պետության բուռն վերելքի համար: Սուբման Բ-ի օրոք այդ ամիրայությունը դարձավ Սասունի գլխավոր հակառակորդը: Այդ ժամանակաշրջանում<sup>4</sup> Սասունում իշխում էր պրոտոնովելիսիմոս<sup>5</sup> Վիգենը, Չորտվանել Ա-ի որդին, որը սերտ կապեր էր հաստատել Հարավային Հայաստանի իշխանական տների վերջին ժառանգների հետ: Նա ամուսնացել էր Մոկաց մեծ իշխան Հմայակի դստեր՝ Մելեքսիթի (Մելեքսիթի)<sup>6</sup> հետ, իսկ

1 Պողոս Տարոնացի, էջ 274:

2 К. Босворт, ԳՂՎ. աշխ., էջ 88:

3 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 485-486:

4 Վիգենի կառավարման սկիզբը ստույգ հայտնի չէ: Վ. Պետոյանի առաջարկած 1127 թվականը (Վ. Պետոյան, Սասունի Թոռնիկյան իշխանությունը, – ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր»/հաս. գիտ./, 1955, № 2, էջ 87-88) Ծահ-Արմենների ժամանակագրության ակնհայտ զուգահեռն է՝ գուրկ փաստական հիմքից: Այնուամենայնիվ, դժվար է կասկածել, որ ԺԲ դ. 30-ական թվականներին, երբ մարտեր ծավալվեցին Սուբման Բ-ի եւ Սասունի տիրակալի միջեւ, Վիգենն իրոք փոխարինել էր հորը: Հիրավի, 1073 թվականին դեռեւս անչափախառ Չորտվանել Ա-ն՝ 1133/34 թվականին ինքնուրույն տիրակալ դարձած Սուբման Բ-ի (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 487) կառավարման սկզբում պիտի ծերացած լիներ եւ գոնե ռազմական գործերը՝ տված Վիգենին:

5 ԺԲ դարի Սասունի իշխանության մասին գլխավոր աղբյուր 1169 թվականի հիշատակարանի որոշ հրատարակություններում (տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Հայաստան, հտ. Բ, էջ 391) բյուզանդական տիտղոսը հանդիպում է «պատուելիսիմոս» ձեռով: Հենց այդպես էլ անվանվում է Վիգենը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակությունում (հտ. III, էջ 486), հավանաբար, հայերեն «պատուելի» բառի հետ ինչ-որ ստազուգորդումով: Տիտղոսի բյուզանդական հիմքը չի վրիպել Ղեռնդ Ալիշանի ուշադրությունից (Հայաստան, հտ. Բ, էջ 391, ծմթ. 6), իսկ վերջնական ճշտում-բացատրությունը տվել է Հր. Բարթիկյանը (H. Bartikian, ԳՂՎ. աշխ., էջ 270, ծմթ. 48):

6 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 194: Ուշագրավ է, որ հիշատակարանում Մելեքսիթի ծննդաբանությունն այնպես է կառուցված, որ նա եւս համարվում է երկու նշանավոր տոհմերի ժառանգ. «յագգէ Արծրունի եւ ի շառաւելէ սրբոյն Վարդանայ», այսինքն՝ միաժամանակ ե՛ւ Արծրունի, ե՛ւ թէ Մամիկոնյան: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ հոր կողմից նա Արծրունիների որեւէ տոհմաճյուղից էր (հմմ. Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 483, 486), իսկ մոր կողմից սերում էր Մամիկոնյանների ընտանիքի սնացորդներից: Ժամանակաշրջանի յուրահատուկ արձագանքն է Մելեքսիթի տիպիկ արեւելյան անձնանունը, որի բառացի

դատերը՝ Կատային, կնուծյան էր տվել Կամենասյանների տոհմից Շահնշահին<sup>1</sup>: Նրա ազգակցական կապերը դուրս էին գալիս անգամ Հարավային Հայաստանի սահմաններից, քանի որ որդին՝ Չորտվանել Բ-ն, ամուսնացել էր հայոց կաթողիկոս Գրիգոր Գ-ի (1113-1166) եղբոր դուստր Վանինեի հետ<sup>2</sup>: Ամուսնական այդ կապն էլ, թերեւս, հետագայում բախտորոշ դեր խաղաց՝ պայմանավորելով Սասունի տերերի սերունդների անցումը դեպի Կիլիկիա:

Սասունի իշխանության եւ Շահ-Արմենների միջեւ ընթացող հարատեւ մարտերի մասին միայն մեկ դրվագ (ընդ որում՝ ակնհայտորեն վերցված ժողովրդական վեպից)<sup>3</sup> պահպանվել է Վարդան Արեւելցու երկում: Պատմիչը, հաղորդելով Վիգենի հաղթանակի ու հակառակորդների միջեւ հաշտության կնքման մասին («կալեալ տանի զնա յամուրն իւր եւ զկնի աւուրց արծակէ ուխտիւ եւ երդմամբ սիրոյ»)՝ հաջորդ իսկ վկայութեամբ հակասական տեղեկութիւնն է հաղորդում. Շահ-Արմենը խլում է Վիգենից Սասունը եւ «ամենայն վանօրէիւքն պահէր ի խոր խաղաղութեան գամս վաթսուն»<sup>4</sup>: Այս վերջին հաղորդումը ճիշտ լինել չի կարող, քանի որ նախ՝ Սուքման Բ-ն այդքան տարի չի էլ իշխել: Ապա՝ հիմնվելով այլ, այդ թվում նաեւ՝ ոչ հայկական սկզբնաղբյուրների վրա, համոզված կարելի է պնդել, որ Վիգենը Շահ-Արմենի հետ կնքված պայմանագրով («ուխտիւ եւ երդմամբ սիրոյ») պահպանել էր վերահսկողութիւնը գոնե Սասունի մի մասի նկատմամբ: Պայքարն օրհասական բնույթ է ընդունել Վիգենի իշխանության վերջին տարիներին, այն աստիճան անգամ, որ Վիգենը հարկադրված է եղել մահմեդականութիւն ընդունել<sup>5</sup>: 1176 թվականին, Վիգենի մահից հետո<sup>6</sup>, նրա թոռներից Շահնշահը (վերջինիս հայրը՝ Չորտվանել Բ-ն տարածամ մահացել էր 1165 թ.)<sup>7</sup>, հավանաբար, կախվածութեան մեջ էր գտնվում Շահ-Արմենից եւ կառավարում էր Սասունը որպէս կիսանկախ տիրակալ: Այդ տպավորութիւնն է ստեղծվում Վարդան Արեւելցու տեղեկութիւններից: Հաղորդելով Սուքման Բ-ի մահվան մասին, պատմիչն ավելացնում է. «եւ զի թոռն՝ Վիգենայ Շահնշահ, քեռորդի տեառն Գրիգոր կաթողիկոսի առընթեր կայր մահուան Շահին՝ առեալ զիրան՝ գան անկանին ի Սասունք»<sup>8</sup>: Ստացվում է, որ Շահնշահը գտնվել է Շահ-Արմենի արքունիքում (ընդ որում պարզ է, որ դա յուրօրինակ կար-

---

Աշխատությունն է՝ «հրեշտակ» + «տիկիմ» (տե՛ս Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Եր., 1946, էջ 298):

1 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 196:  
2 Նույն տեղում, էջ 195-196:  
3 «Սասնա ծոերի» զանազան պատումներում առատ նյութեր կան ԺԲ-ԺԳ դարերում Հայաստանի տարբեր մասերում հաստատված մահմեդական ամիրայությունների դեմ Հարավային Հայաստանի իշխանությունների մղած հերոսական մարտերի մասին: Այդ պատմական իրադարձությունների արձագանքների վերհանումը հատուկ հետազոտություն է պահանջում:  
4 Վարդան Արեւելցի, էջ 162:  
5 Նույն տեղում, էջ 162-163:  
6 Անանուն Եղեասցի, էջ 132-133: Վիգենի ուրացությունը, որի մասին լուր էն հայ հեղինակները, անշուշտ, պատահել է 1169 թ. հետո, քանի որ 1169 թվականի հիշատակարանի հեղինակը դեռևս պարծառքով է հիշատակում իշխանի եկեղեցաշինական գործունեության ու բարեպաշտության մասին:  
7 Տե՛ս Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի, էջ 19:  
8 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 196-197:  
9 Վարդան Արեւելցի, էջ 174:

գավիճակի արտացոլում պետք է լիներ) եւ յուրաչինների (հավանաբար՝ սասունցիներից կազմված ռազմիկների) շոկատով անմիջապես մեկնել է Սասուն: Այստեղ նրան հաջողվել է ձերբակալել Շահ-Արմենների ամիրայության փաստական ժառանգորդ Բեկթամուրին, որն ազատություն է ստացել Շահնշահին զիջելով Թառձյան բերդը: Բեկթամուրը, սակայն, Շահ-Արմենների գահին ամրապնդվելուց հետո Շահնշահից ոչ միայն ետ է խլել Թառձյանը, այլեւ «զամենայն Սասունք Եհան ի նման է եւ արկ ընդ հարկաւ զեկեղեցիս եւ գուխտս»<sup>1</sup>: Հետեւաբար, Վարդան Արեւելցու վկայությունների ամբողջությունից եւս բխում է, որ Սասունի վերջնական անկումը տեղի է ունեցել Սուբման Բ-ի մահից հետո, իսկ մինչ այդ Թոռնիկյանները որոշակի իրավունքներ են պահպանել Սասունի նկատմամբ: Այսպես, արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ «սասունցիք (Սանասինա), որոնք նույնպես հայեր են, սակայն անառիկ բերդեր ունեն իւրաքանչիւր մոտ եւ դաշինք ունեն իւրաքանչիւր տիրոջ հետ: Այդ բերդերը ըստ պայմանագրի իրենց ձեռքում պահեցին ինքուրույն կերպով, մինչեւ հինգ հարյուր ութսուն թվականը (1184-1185), երբ մահմեդականները գրավեցին այդ բերդերը եւ նրանց դուրս քշեցին այնտեղից, ինչպես հիշելու ենք կամոքն ալլահի»<sup>2</sup>: Թեեւ հեղինակը չի կատարել իր խոստումը եւ հիշրեի 580 թվականին (14 ապրիլի 1184 – 3 ապրիլի 1185) հատկացված բաժնում Սասունի գրավման մասին որեւէ տեղեկություն չի հաղորդել<sup>3</sup>, բայց պարզ է, որ այդ վրիպումը պատահական չէ եւ մինչեւ 1185 հունիսը՝ Սուբման Բ-ի մահը, այդ իրադարձությունը տեղի ունենալ չէր կարող: Մյուս կողմից՝ հայտնի է, որ Բեկթամուրը բավականին արագ տիրեց նախաձեռնությանն ու վերականգնեց Շահ-Արմենների պետության վերահսկողությունը ամիրայության ողջ տարածքում<sup>4</sup>, հետեւաբար արաբ պատմիչի ժամանակագրական մեղանշումն աննշան պետք է լինի: Սասունի Թոռնիկյանների եւ Շահ-Արմենի միջեւ որոշակի համաձայնության գոյություն մասին են վկայում նաեւ ասորական աղբյուրները, թեեւ նրանք այլ կերպ են ներկայացնում կողմերի միջեւ պայմանավորվածության շարժառիթները: Ըստ Անանուն Եղեսացու՝ «հայերը հինգ տարուց ի վեր բախման մեջ էին Նփրկերտի եւ Մարդինի թուրքերի»<sup>5</sup>, ասել է թե՛ այդ քաղաքներին տիրող Արտուխյան ամիրաների հետ: Հակառակորդի ճնշմանը եւ սովին չզիմանալով է, որ Սասունի տերերը իրենց բերդերը հանձնել են Շահ-Արմենին<sup>6</sup>: Նփրկերտի ամիրայի հարձակումներով է Սասունի հայերի կատարած զիջումը բացատրում նաեւ Միխայել Ասորին եւ նախորդի պես ավանդում իրադարձությունների տարեթիվը՝ 1174 թվականը<sup>7</sup>:

- 
- 1 Նույն տեղում: Բեկթամուրի գերի ընկնելը եւ երդմամբ ու խոստումներով ազատվելը ճշում է նաեւ Միխայել Ասորին (**Michel le Syrien**, էջ 396):
  - 2 Իբն ալ-Ասիր, էջ 212 (ընդգծումն իմն է): Պատմիչը, անշուշտ, նկատի ունի Վարդան Արեւելցու վերոհիշյալ «ուխտն եւ երդումն սիրոյ»:
  - 3 Իբն ալ-Ասիր, էջ 391, ծմթ. 231:
  - 4 Տե՛ս **Հ. Գ. Մարգարյան, Քաղաքական կացությունը Մերձավոր Արեւելքում եւ Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.)**, – «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 1, էջ 36-37:
  - 5 **Անանուն Եղեսացի**, էջ 133:
  - 6 Նույն տեղում: Անանուն հեղինակը, Սասունի դեպքերի մասին ավանդելուց հետո, խոսում է միեւնույն տարում վրացական զորքերի կողմից Անի գրավելու մասին: Քանի որ խոսքը վերաբերում է 1174 թվականին Անի գրավմանը, ապա Սասունի եւ Խլաթի տերերի միջեւ համաձայնությունը եւս թվագրվում է 1174 թվականով:
  - 7 **Միխայել Ասորի**, էջ 476:

Ուշագրավ է, որ Անանուն Եդեսացին եւս անուղղակիորեն խոսում է Շահ-Արմենի ուխտադրութեան մասին: Հստ նրա՝ Վիգենին, որը Սասունի լեռան եւ բերդերի տերն էր, ապրուստի համար տրվել է ընդամենը մի քանի գլուղ: Անգամ Վիգենի հուսահատ փորձը՝ մահմեդականութիւնն ընդունելու միջոցով որեւէ բերդ ստանալու ուղղութեամբ, հաջողութիւն չի ունեցել<sup>1</sup>:

Ասորի հեղինակների վկայութիւններից մակաբերվող ժամանակագրութիւնը (1169 թ.՝ մարտերի սկիզբ, 1174 թ.՝ Վիգենի եւ Շահ-Արմեն Սուլեյման Բ-ի միջեւ համաձայնութեան տարեթիւ) իրականութեանը միանգամայն մոտ է թվում, բայց կասկած է հարուցում Սասունի իշխանութեան ինքնուրույնութեան եւ հզորութեան բացարձակ անհետացման այն վիճակը, որ պատկերում են նրանք: Համենայն դեպս, ավելի արժանահավատ են թվում Իբն ալ-Ասիրի հանգամանալից հաղորդումները:

Այսպիսով, 1185/86 թվականը շրջադարձային էր Հարավային Հայաստանի պատմութեան մեջ այն առումով, որ ավարտին հասավ այդ հինավուրց հայկական տարածքում բնիկ տիրողների հիմնական մասին իշխանագրկելու գործընթացը:

Հյուսիս-արեւելեան Հայաստանում միայն Սյունիքի ու Տաշիր-Ձորագետի թագավորութիւններին հաջողվեց դիմագրավել սելջուկյան արշավանքներին ու գոյատեւել նաեւ ԺԲ դարի որոշակի ժամանակահատվածում:

Սյունիքի թագավորութիւնը, օգտվելով Բագրատունիների կենտրոնական թագավորութեան թուլացումից, առանձնացել էր, հավանաբար, 987 թվականին<sup>2</sup>: Սակայն նրա քաղաքական կշիռը թե՛ մինչեւ Անիի Բագրատունյաց թագավորութեան վերացումը (1045 թ.), թե՛ հետագայում առանձնապէս մեծ չէր: Սյունիքը, բարեբախտաբար, պակաս չափով տուժեց սելջուկ-թյուրքերի արշավանքներից, իսկ Մելիքշահի սուլթանի օրոք կարողացավ ապահովել իր կիսանկախ դիրքը սելջուկյան պետութիւնից եւ վերադարձնել կորցված գավառների մի մասը: Ստեփանոս Օրբելյանի վկայութեամբ՝ Սյունիքի Սենեքերիմ թագավորը, անձամբ մեկնելով Մելիքշահի սուլթանի մոտ, արժանացել էր վերջինիս ընդունելութեանը եւ հովանավորութեանը<sup>3</sup>: Սենեքերիմը, ինչպէս որ այդ ժամանակահատվածում Ապահան այցելած մյուս հայ եւ վրացի տիրակալները, կամովին ընդունել էր սելջուկների գերիշխանութիւնը եւ պարտավորվել հարկ վճարել: Սյունիքը, ինչպէս Հարավային Հայաստանում Սասունը, կարողացավ նաեւ իր շահերին ծառայեցնել մահմեդական ամիրայութիւնների նկատմամբ սելջուկյան սուլթանութեան կենտրոնական իշխանութիւնների քաղաքականութեան փոփոխութիւնը: Օգտվելով Գանձակի Շահադադյանների թուլացումից՝ Սյունիքի տիրակալները թշնամուց ազատագրեցին թագավորութեան որոշ տարածքներ<sup>4</sup>: Շահադադյանների ամիրայութեան վերացումից հետո, երբ ստեղծվեց Գանձակի սելջուկյան կուսակալութիւնը, Սյունիքի արտաքին քաղաքական դրութիւնը նկատելիորեն բարդացավ: Այն սպառնալից դարձավ Մելիքշահի մահին հաջորդած անկայունութեան պայմաններում: 1094 թվականին Սենեքերիմի դեմ դուրս եկավ Գանձակի սելջուկյան կուսակալը, որին միացել էին Շիրակի իշխան Գրիգոր

1 Անանուն Եդեսացի, էջ 133:

2 Տե՛ս Բ. Հարությունյան, *Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիւ*, – «Բանբեր Երեւանի համալսարանի», 1969, № 1, էջ 145-153: Անշուշտ, կամ նաեւ այլ թուագրումներ:

3 Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, էջ 234:

4 Նույն տեղում, էջ 239-240:



Ապիրատյանի գորքերը: Մյունչյաց թագավորը՝ Գրիգոր Ապիրատյանի դավադիր միջնորդությունը, դուրս բերվեց ամբողջից եւ սպանվեց, որից հետո Բաղքի թագավորությունը խիստ թուլացավ<sup>1</sup>: Սենեքերիմին հաջորդեց նրա որդի Գրիգոր Բ-ն (1094-1166<sup>2</sup>): Բարքիարուխի կառավարման վերջում, երբ ավելի էր խորացել քաղաքական քառուր սուլթանությունում, թյուրքերը ասպատակեցին ու կողոպտեցին Կապան մայրաքաղաքը (1103 թվական), իսկ այնուհետեւ գրավեցին Որոտն (1104 թ.) եւ Բղեն (1105 թ.) բերդերը<sup>3</sup>: Մյունչյաց թագավորության դեմ թյուրքերի հետագա արշավանքները Անիի համար ընթացող պայքարի արձագանքներն էին: Օրինակ՝ 1126 թվականին, երբ ձախողվեց Անին ազատագրելու առաջին փորձը, ասպատակությունների ենթարկվեցին Մյունիքի Կապան եւ Արեւիք գավառները<sup>4</sup>:

Մյունիքի թագավորության վիճակը վատթարացավ Գանձակում Ելտկուզ աթաբեկի հաստատվելուց հետո, որը վերսկսեց հարձակումը Մյունիքի վրա: 1152-1169 թթ. նվաճվեցին Շիրուտը, Մեղրին, Կաքավաբերդը, Գեղին, Կարճեւանը, իսկ 1170-ին Ելտկուզի գորքերը գրավեցին եւ ավերեցին Բաղաբերդը<sup>5</sup>: Մյունիքը բուն Հայաստանի միակ անկյունն էր, ուր մինչեւ ԺԲ դ. գուցե 70-ական թվականները, թեկուզեւ աննշան տարածքում, պահպանվել էր հայկական թագավորական իշխանությունը:

ԺԲ դ. սկզբին չափազանց ծանր պայմաններում հայտնվեց Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը: Նրա տիրակալ Կյուրիկեին (մոտ 1049-1089) հաջողվել էր նույնպիսի համաձայնության հասնել Մելիքշահի հետ<sup>6</sup>, որպիսին կնքել էին Մյունչյաց տիրակալները, այսինքն՝ դառնալ սելջուկների ստորական եւ տուրք վճարելու պարտավորություն ստանձնել: Բայց ԺԱ դ. վերջերին – ԺԲ դ. սկզբներին իրադրությունը փոխվեց: Կյուրիկեի որդիներ Դավիթն ու Աբասը ստիպված էին ետ մղել նաեւ Վրաց թագավոր Դավիթ Դ-ի (1089-1125) օրավուր ուժեղացող հարձակումները<sup>7</sup>: Այնուամենայնիվ, դժվար է ասել՝ արդյոք Կյուրիկյանների թագավորությունը գոյատեւում էր մինչեւ 1118-1124 թվականները, երբ Դավիթ Դ-ն գրավեց նրանց հիմնական տիրույթները, թե՞ սելջուկ-թյուրքերը մինչ այդ արդեն նվաճել էին այն, հավանաբար, 1111 կամ 1113 թվականին: Պարզ է միայն, որ ԺԲ դ. երկրորդ քառորդում Կյուրիկյանները կորցրել էին թագավորությունը, եւ նրանց սերունդ-

1 Նույն տեղում, էջ 234-235; Վարդան Արեւելցի, էջ 137; Մխիթար Այրիվանցի, էջ 60:

2 Նշենք, որ արցախյան վիմագրերի տվյալների հիման վրա այս վերջին թվականը սրբագրելի է համարում Ալեքսան Լակոբյանը, որը գրում է. «...Ակատելի է, որ Բաղաց պետության անկման պահի մասին սինեցի պատմիչի տուեալները որեւէ այլ աղբիւրագիտական հաստատում չունեն եւ կարող են դիտուել իբրեւ՝ իրականից մինչեւ 1,5 տասնամեակով շեղուող: Դժուար է, օր.՝ առանց վերապահման ընդունել նրա մատուցած պատկերը, ըստ որի՝ Գրիգոր Բ-ի «նուազ եւ ընդադոս» թագաորութիւնը տեւել է ավելի քան 70 տարի՝ 1094/1096-1166 թթ.: Վահանավանքի վերջին տարիների պեղումներից գտնուած տապանագրերը ցոյց են տալիս, որ իրական ժամանակագրութեան հետ Օրբելեանի պատկերացումները մեծ շեղումներ ունեն նաեւ նախորդ արքաների ժամանակի դէպքում» (Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար / Պատմա-աղբիւրագիտական քննութիւն/, Եր., 2020, էջ 315-316):

3 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 244-245:

4 Նույն տեղում, էջ 245-246:

5 Նույն տեղում, էջ 246-247:

6 Տե՛ս Սամուէլ Անցի, էջ 118: Հմմ. Վարդան Արեւելցի, էջ 141; Մխիթար Այրիվանցի, էջ 60:

7 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 151-152; Վարդան Արեւելցի, էջ 142:

ներն իշխում էին Տավուշ (մինչև 1145 թվականը), Մաժնաբերդ եւ Նոր-բերդ ամրոցներում ու հարակից տարածքներում, հարատեւելով մինչև ԺԳ դ. կեսերը<sup>1</sup>:

Գոյատեւման համար ԺԲ դարում ծանր պայքար էին մղում Արցախի հայկական իշխանությունները: Նրանք եւս մեծապես տուժեցին սելջուկյան սուլթանությունում ծավալված գահակալական կռիվների ընթացքում, որոնց ԺԲ դ. առաջին կեսին գումարվեցին Գանձակի մահմեդական կառավարիչների անվերջանալի ասպատակությունները: Արցախի ազատասեր իշխանները տասնամյակներ շարունակ համառորեն պահպանեցին իրենց անկախությունը, բայց ակնհայտ էր նաեւ, որ նրանց գործողություններում հաճախ բացակայում էր համախմբվածությունը<sup>2</sup>: Խաչենի իշխանությունը ԺԲ դ. վերջերին բաժանված էր երեք ճյուղի, որոնց կենտրոններն էին Խոխանաբերդը, Հաթերքը եւ Ծարը<sup>3</sup>:

Տարածաշրջանի քաղաքական կյանքում ամբողջ ԺԲ դարի ընթացքում նկատելի դեր էին խաղում Հայաստանում եւ հարակից շրջաններում ստեղծված մահմեդական ամիրայությունները: Այդ պետական կազմավորումներն առաջացել էին «Մեծ սելջուկների» սուլթանության փլուզումից հետո, գլխավորապես այն ամիրաների ջանքերով, որոնք բարձր դիրքի էին հասել կենտրոնական իշխանության թուլացման ժամանակաշրջանում: Այսպես, արքայազների խնամակալները՝ աթաբեկները, աստիճանաբար անկախանալով, իրենք էին նպաստում պետության քայքայմանը: Այս տեսակետից բնութագրական է Գանձակի աթաբեկության օրինակը, որը Հայաստանի ազատագրման գլխավոր հակառակորդը դարձավ ԺԲ դ. կեսերին:

Գանձակում մինչև 1075 թվականը իշխում էին քուրդ Շադդադյանները, որոնք օժանդակել էին սելջուկ-թյուրքերին Այսրկովկասը նվաճելիս եւ, որպես փոխհատուցում, ընդարձակել էին իրենց տիրույթները: Սակայն Մանազկերտի հաղթանակից հետո, սելջուկների քաղաքական ուղեգիծը կտրուկ կերպով փոխվեց, եւ Մելիքշահի զորավար Սաու-Թեգինը 1075 թվականին գրավեց ռազմավարական կարեւոր դիրք ունեցող Գանձակը<sup>4</sup>: Փատլուն Գ-ի փորձը՝ Գանձակում Շադդադյանների իշխանությունը վերահաստատելու ուղղությամբ, 1085 թվականին կարճատեւ հաջողություն ունեցավ: 1085 թվականին սելջուկյան զորավար Բուզանը խլեց քաղաքը Փատլունից եւ վերջ տվեց Շադդադյանների իշխանությանը Գանձակում<sup>5</sup>: Սովորաբար, այս քաղաքի կառավարիչ էին նշանակվում սուլթանական ընտանիքի անդամները, բայց Գանձակում եւ հարակից շրջաններում փաստորեն իշխում էին նրանց խնամակալ նշանակված ամիրաները: Սրանք էլ անընդմեջ կռիվներ էին մղում, եւ քաղաքը շարունակ ձեռքից ձեռք էր անցնում մինչև 1148/1149 թվականը: Այդ տարում Գանձակին տիրեց եւ իր տոհմի իշխանության հիմքերը դրեց ծագումով ղվիշաղ Շամս ադ-Դին Ելտկուզը: Այս նշանավոր ռազմա-քաղաքական գործիչը նախկինում ստրուկ էր եղել եւ աչքի էր ընկել իր հավատարիմ ծառայություններով: Սուլթան Մասուդը (1134-1152) Ելտկուզին ամուսնացրել էր Տուղրիլ Բ սուլթանի (1132-1134) այրու հետ, ընդ

1 Տե՛ս Հ. Ղ. Մովսէսեան, ԳՁվ. աշխ., էջ 71-82; Ռ. Ի. Մաթեւոսյան, ԳՁվ. աշխ., էջ 105-109:

2 Հմմ. Հ. Ղ. Ալիշան, Հայաստանում, հտ. Բ, էջ 384-391:

3 Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 114-123; Ա. Յակոբեան, Արքայատոհմներն ու իշխանատոհմերը..., էջ 306-318:

4 Տե՛ս С. Bosworth, ԳՁվ. աշխ., էջ 95; V. Minorsky, ԳՁվ. աշխ., էջ 68:

5 Տե՛ս նույն տեղերում:

որում դառնալով Տուզրիլի որդու՝ Արսլանի աթաբեկը, Ելտկուզը հետևողական պայքար սկսեց իր հովանավորյալին սուլթան հաստատելու նպատակով: 1161 թվականին սուլթան հռչակելով Արսլանին, նա իր գերիշխանությունը ենթարկեց նրան, եւ ընդունելով Աթաբեկ ալ-Ազամ (գերագույն կամ մեծ աթաբեկ) տիտղոսը՝ մինչեւ իր մահը (1175/1176 թվական) փաստորեն ինքն էր կառավարում Իրաքի սելջուկյան սուլթանությունը<sup>1</sup>: Ելտկուզը եռանդուն կերպով մասնակցում էր Վրացական թագավորության ու ամիրայությունների միջեւ տեղի ունեցող կռիվներին, եւ նրա միջամտությունը շատ դեպքերում վճռական նշանակություն էր ունենում: Միաժամանակ, Ելտկուզը հաճախ երկպառակություն էր սերմանում հակառակորդի ճամբարում՝ օժանդակելով անհնազանդ իշխաններին:

Երկրորդ ամենահզոր մահմեդական իշխանությունը, թերեւս, Շահ-Արմենների ամիրայությունն էր, որի կենտրոնը Խլաթ քաղաքն էր: Այն 1110 թվականին Մրվանյաններից խլել էր Շահ-Արմենների հարստության հիմնադիր, թյուրք ղուլամ (ստրուկ) Սուքման ալ-Կուտբին<sup>2</sup>: Շահ-Արմեններից ամենանշանավորը՝ Սուքման Բ-ն (1128-1185), որին հայ պատմիչներն անվանում են նաեւ Միրիան, կարողացավ ընդարձակ իշխանություն ստեղծել: Գրիգոր Երեցի վկայությամբ՝ Սուքմանը «էր տէր բազում քաղաքաց եւ գաւառաց Խլաթայ, Արճիշոյ, Մշոյ, Տօղատափայ եւ Մանձկերտու»<sup>3</sup>: Արդեն ասվեց, որ Շահ-Արմեններին էր անցել նաեւ Սասունը: Տարածելով իր ազդեցությունը դեպի արեւմուտք՝ Սուքման Բ-ն վերահսկողություն էր հաստատել նաեւ Արտուխյաններին պատկանող Դիարբեքիի նկատմամբ<sup>4</sup>: Ամենայն հավանականությամբ, Շահ-Արմենների պետության սահմանների մեջ էր մտնում նաեւ Ուղտիսը (Օլթի)<sup>5</sup>: Սուքմանը հարձակողական արտաքին քաղաքականություն էր վարում եւ Հայաստանի ազատագրման ամենաանհաշտ թշնամիներից մեկն էր:

Տարածաշրջանի իրադարձություններին հաճախակի միջամտում էին նաեւ այլ մահմեդական իշխանություններ եւ հատկապես՝ Արտուխյան ամիրայությունները, որոնք ստեղծվել էին Հյուսիսային Միջագետքում եւ պատմական Հայաստանի Աղձնիք նահանգում: Արտուխյան Իլ-Ղազին հայտնվել էր Հայաստանում դեռեւս շուրջ 1092 թվականին, երբ Մելիքշահի մահից հետո ստեղծված խառնաշփոթ իրադրության պայմաններում նա արշավել էր Շիրակ: Սակայն Անիի Մանուչե ամիրան, Գրիգոր իշխանի օգնությամբ, ջախջախեց եւ ետ շարտեց նրան<sup>6</sup>: Իլ-Ղազիի հիմնադրած ամիրայության կենտրոններն էին Մարդինը եւ Նփրկերտը (Մայաֆարկին): Նրա եղբայր Սուքմանի ժառանգները տիրում էին Հիսն-Քայֆային եւ Ամիդին, իսկ Արտուխյանների երրորդ տոհմաճյուղը իշխում էր Խարբեքում<sup>7</sup>: Արտուխյանների բաժին-բաժին եղած իշխանություններն իրենցից մեծ ուժ չէին ներկայացնում, սակայն ավարի ակնկալիքով հաճախ մասնակցում էին Վրաց թագավորության դեմ ուղղված

---

1 Տե՛ս **C. Bosworth**, *Աշվ. աշխ.*, էջ 169-170, 176-177:  
2 Տե՛ս **С. Лэн-Пуль**, *Мусульманские династии*, СПб, 1889, с. 143; *Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, էջ 218; **Միխայել Ասորի**, էջ 400:  
3 **Մատթէոս Ուոհայեցի**, էջ 476:  
4 Տե՛ս **C. Bosworth**, *Աշվ. աշխ.*, էջ 171:  
5 Տե՛ս **Հ. Գ. Մարգարյան**, *Քաղաքական կացությունը Մերձավոր Արեւելքում*, էջ 37:  
6 Տե՛ս **Վարդան Արեւելցի**, էջ 145: Հմմ. **V. Minorsky**, *Աշվ. աշխ.*, էջ 82:  
7 Տե՛ս **К. Босворт**, *Աշվ. աշխ.*, էջ 166-167:

արշավանքներին: Մարդինի Արտուկյանները, օրինակ, ժԲ դ. 60-70-ական թվականներին մշտապես հարում էին Ելտկուզ աթաբեկին եւ Շահ-Արմեն Սուքման Բ-ին:

ԺԱ-ԺԲ դարերում մահմեդական փոքր իշխանություններ էին ստեղծվել նաև Հայաստանի մի քանի քաղաքներում՝ Անիում, Դվինում, Սուրմարիում, Կարսում, Կարինում ու նրանց հարող գավառներում<sup>1</sup>: Դրանք եւս, չնայած իրենց համեստ հնարավորություններին, զգալիորեն խոչընդոտում էին Հայաստանի ազատագրմանը:

Այսպիսով, ժԲ դարում հայկական թագավորությունները եւ իշխանությունները դադարել էին քաղաքական դեր խաղալուց, իսկ մահմեդական ամիրայություններն իրենց ծանր լուծն էին հաստատել գրեթե ամբողջ Հայաստանում: «Այս իշխանությունները հաճախ ընդհարվում էին իրար հետ, չէին միացված մի ուժեղ ձեռքի տակ, եւ այս հանգամանքը մեծապես նպաստավոր եղավ Վրաց եւ Հայոց հյուսիսային իշխանությունների համար, որոնք պատմական դառն փորձերից խրատված՝ գործում էին այժմ ավելի համերաշխ ու միաբան, քան բյուզանդական բռնությունների եւ սելջուկյան արհավիրքների ժամանակ: Վրաստանն էր այն գորեղ ուժը, որը հրապարակ ելավ այդ ամիրայությունների դեմ, միացնելով իր շուրջը հայերին, Աղվանքի ժողովրդին եւ Հյուսիսային Կովկասի լեռնականներին», – գրում է ակադ. Հակոբ Մանանդյանը<sup>2</sup>:

Սելջուկ-թյուրքերի արշավանքները մեծ վնաս էին հասցրել երկրի տնտեսությանը եւ ծանր դրույթուն ստեղծել նաև Վրաստանում: Գեորգի Բ թագավորը (1072-1089) հարկադրված էր ընդունել սելջուկյան սուլթանների գերիշխանությունը եւ ամենամյա հարկ վճարելու պարտավորություն ստանձնել: Բացի արտաքին թշնամու հարձակումներից՝ թագավորին անելանելի դրույթյան մեջ էին դնում նաև ազդեցիկ իշխանները, որոնք նորանոր պահանջներ էին ներկայացնում նրան: Այսպիսին էր իրադրությունը Վրաստանում, երբ 1089 թվականին Գեորգի Բ-ն հեռացվեց իշխանությունից եւ գահը հանձնվեց նրա 16-ամյա որդուն՝ Դավիթ Դ Շինողին (1089-1125): Նոր գահակալը նախ լուծեց ներքին կյանքի անհետաձգելի խնդիրները, համախմբեց երկիրը եւ ապա ձեռնամուխ եղավ երկրի անկախության վերականգնմանը: Նա վճռականորեն ճնշեց խոշոր ավատատերերի ելույթները, ներքին միասնություն հաստատեց Վրաստանում եւ 1099 թվականին դադարեցրեց ամենամյա գումարի վճարումը սելջուկներին: Ավելի ուշ նա բացահայտ պայքարի դուրս եկավ թյուրք նվաճողների դեմ եւ 1110 թվականին ազատագրեց Սամշվիլը, իսկ հինգ տարի անց՝ Ռուսթավը: Սակայն ամբողջ Քարթլիի եւ Տփղիսի գրավումը հետաձգվեց եւ ավարտվեց լոկ 1122 թվականին<sup>3</sup>:

Արեւելքում ժԲ դ. սկզբին գրավվեցին Կախեթը, Հերեթը, իսկ 1117 թվականից արշավանքներ ձեռնարկվեցին դեպի Շիրվան: Անգամ Մահմուդ սուլթանի (1118-1131) 1123 թվականի արշավանքն ի վիճակի չեղավ կանխել Շիրվանի ընդգրկումը Վրացական թագավորության կազմի մեջ<sup>4</sup>:

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 469-471, 478-482, 490-492:

2 Լ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 93:

3 Տե՛ս յարտոլոս Եւրոպեա, II, ցց. 331-333; օ. Խաչատրյան, յարտոլոս Եւրոպեա, II, ցց. 195-196; Տե՛ս յարտոլոս Եւրոպեա, III, ցց. 212-241.

4 Տե՛ս յարտոլոս Եւրոպեա, III, ցց. 242-244.

ԺԲ դ. առաջին քառորդում զգալիորեն ընդարձակվեցին Վրաստանի սահմանները նաեւ արեւմուտքում եւ հյուսիսում: Դավիթ Շինողը Սեւ ծովի ափին գրավեց Ջիբեթը, իսկ հյուսիսում հնազանդեցրեց Կովկասի լեռնականներից դվալներին<sup>1</sup>:

Եւ վերջապես, շարունակվեց հարձակողական քաղաքականությունը Հայաստանում: Լոռեն եւ Ագարակը 1118 թվականին գրավելուց հետո, 1124 թվականին վրացական զորքերը հաստատվեցին Գագ, Տերունական, Տավուշ, Կայան, Կայծոն, Նոր-բերդ, Մահկանաբերդ, Մանասագոմ եւ այլ բերդերում<sup>2</sup>: Նույն թվականին վրացական բանակն առաջին անգամ հայերի օգնությամբ գրավեց Անին:

Այսպիսով, ԺԲ դ. առաջին քառորդում Վրացական թագավորությունը դարձավ Մերձավոր Արեւելքի ամենահզոր պետություններից մեկը՝ իր սահմանների մեջ ընդգրկելով գրեթե ողջ Այսրկովկասը:

Հայաստանում հաստատված մահմեդական ամիրայությունների դեմ հարատեւ պայքարը շարունակվեց Դեմետրե Ա-ի օրոք (1125-1155/1156), բայց առանց էական հաջողությունների: Հետագա առաջխաղացման կասեցումը Հայաստանում պայմանավորված էր ոչ միայն ամիրայությունների համառ դիմադրությամբ, այլեւ Վրացական թագավորությունում մշտապես բորբոքվող ներդասակարգային պայքարով: Վրաստանի ներքին պատմության տեսանկյունից ԺԲ դ. երկրորդ եւ երրորդ քառորդները կարելի է համարել հանուն թագավորական իշխանության դիրքերի պահպանման մղվող պայքարի ժամանակաշրջան<sup>3</sup>: Վճռորոշ պահին՝ 1176-1177 թվականներին, թագավորական իշխանությունն այնուամենայնիվ ուժերի մեծ լարումով ճնշեց Օրբելի իշխանների գլխավորած ավատատիրական խոշոր ապստամբությունը: Հաջորդ տարիների ընթացքում Գեորգի Գ-ն (1156-1184) զստեց պետական ապարատն անբարեհույս տարրերից եւ բարձրացման հնարավորություն ընձեռեց կենտրոնական իշխանության շուրջ համախմբված նոր տոհմերին: Սակայն Թամար թագուհու գահակալության (1184-1207) առաջին իսկ տարվա իրադարձությունները պարզորոշ ցույց տվեցին, որ Գեորգիին չէր հաջողվել սասանել ավատատիրական ավագանու դիրքերը: Խոստով է թեկուզ այն փաստը, որ Թամարը թագուհի ճանաչվեց միայն երկրորդ անգամ թագադրվելուց հետո, ընդ որում այդ արարողության ժամանակ ընդգծվեց այն հանգամանքը, որ Թամարը իշխանությունը ստանում է վրաց խոշոր ավատատերերից: Ծիշտ է, 1184-1185 թթ. թագուհին արքունի պաշտոնները հանձնեց հիմնականում վստահելի մարդկանց՝ նոր բարձրացող իշխանական տների ներկայացուցիչներին, բայց թագավորական իշխանությունը թույլ էր մեծատոհմիկ ավատատերերին վճռական պարտության մատնելու համար: Վերջիններիս պնդմամբ՝ Թամարը 1185 թվականին ամուսնացավ նրանց համար ցանկալի փեսացուի՝ ռուս իշխան Յուրի Բոգոլյուբսկու հետ<sup>4</sup>: Թագուհին նույնիսկ ստիպված էր թուլլատրել, որպեսզի Վրաստան վերադառնան Օրբելիները եւ մյուս ապստամբ իշխանները:

---

1 Տե՛ս Վարդան վարդապետ, *Հաւաքումն Պատմութեան*, էջ 119: Հմմ. Հ. Գ. Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, էջ 54-55:  
2 Տե՛ս *ქროლოის ცხოვრება*, II, ՅՅ. 344; Սամուել Անցի, էջ 115; Վարդան Արեւելցի, էջ 156:  
3 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, էջ 174-247:  
4 Տե՛ս Ս. Մ. Мурадян, *К хронологии некоторых событий в Грузии и Армении в XII веке*, с. 133-134.

Վրացական թագավորությունում ներքաղաքական ճգնաժամն ավարտվեց 1190-1191 թթ., երբ պարտություն պատճառով Յուրի Բոգոլյուբսկու (Գեորգի Ռուսի) իրավունքների պաշտպանության հանդես եկող ավատատիրական խմբավորման ելույթը: Չնայած կրած անհաջողությանը՝ խոշոր ավատատերերը հասան իրենց իրավունքների ճանաչմանը: Մշակվեց Դավիթ Շինողի քաղաքականությունից տարբերվող նոր քաղաքական ուղեգիծ, որն արտահայտում էր փաստորեն իր կամքը թելադրող ավատատիրական ավագանու շահերը: «Ինքնակալ» Դավիթի փոխարինեց մեծատոհմիկների «համաձայնությանը եւ կամակցությանը» կառավարող Թամարը: Գրաված տարածքները հարքունիս հայտարարելուն հաջորդելու եկավ նոր նվաճած հողերը խոշոր ավատատերերին «ի հայրենիք» հանձնելու թամարյան սկզբունքը<sup>1</sup>:

Հայկական երկրամասերի հետագա ճակատագրի առումով կարեւոր հանգամանք էր նաեւ Արեւելյան Վրաստանի (Քարթլի, Կախեթ, Հերեթ) ու Հյուսիսային Հայաստանի իշխանների քաղաքական դերի աճը Վրացական թագավորության ներքին կյանքում: Այդ միտումը, որն իրեն զգացնել էր տալիս Դավիթ Շինողի ժամանակներից ի վեր<sup>2</sup>, ակներե դարձավ ԺԲ դ. վերջին եւ ավելի ուժեղացավ հաջորդ տասնամյակների ընթացքում:

Այսպիսով, ԺԲ դ. սկզբից – 80-ական թվականների առաջին կեսին Մերձավոր Արեւելքում ծավալված ռազմա-քաղաքական անցուդարձերը վերընթաց զարգացման որոշակի հնարավորություն ընձեռեցին միայն Հյուսիսային Հայաստանի առանձին շրջաններին: Միաժամանակ, Վրացական թագավորության մեջ ընդգրկված հայկական տարածքներում հանդես եկան նոր ուժեր՝ ի դեմս Զաքարյանների եւ Մահկանաբերդցիների (Սաղունյանների) եւ նրանց շուրջ համախմբված հայ իշխանական տների: Հենց այդ նոր ուժերին էլ վիճակված էր ուղղություն տալ հայկական տարածքների պատմական զարգացման հետագա ընթացքին՝ հաջորդ մեկուկես հարյուրամյակի ընթացքում:

---

1 Տե՛ս Ե. Զերմենիշվիլի, *Վրացական և Մոնղոլական Բրժոնյան Գաղութացումը և Վրացական Սահմանադրությունը Երկրորդ Երկրամասում*, “Վրացական Իստորիոսի Երկրամաս”, II, տժ., 1965, թ. 39-43.

2 Տե՛ս Ե. Զերմենիշվիլի, *Վրացական Իստորիոսի Երկրամաս*, VII, թ. 165-169, 173.

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԺԲ ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ - ԺԳ ԴԱՐԻ ՍԿՂԲԻՆ (1186-1225 ԹԹ.) ԵՒ ՀԱՅ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մերձավոր Արեւելքում ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին տեղի ունեցած նշանակալի ռազմա-քաղաքական տեղաշարժերը, ինչպես նաև Վրացական թագավորությունում իրականացված ներքաղաքական փոփոխությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայկական երկրամասերի ազատագրման եւ հայ ավատատերերի դիրքերի ամրապնդման համար: Մահմեդական քաղաքական կազմավորումների մի մասի թուլացումը եւ ազատագրված տարածքները ժառանգական տիրակալություն իրավունքով ստանալու հեռանկարը՝ բավարար նախադրյալներ էին Ժ դ. վերջի – ԺԱ դ. սկզբի գրեթե բոլոր հայկական թագավորությունների տարածքը Զաքարյանների իշխանության ներքո կենտրոնացնելու, իսկ հետագայում նաև միավորելու եւ Հայաստանի անկախությունը վերականգնելու համար: Այդ կարեւորագույն խնդիրը մինչեւ մոնղոլական արշավանքները չլուծվեց, իսկ այնուհետև ընդհանրապես դարձավ անհնարին: Ուստի սեւեռուն ուշադրության են արժանի այն արտաքին քաղաքական հանգամանքները եւ ներքին գործոնները, որոնց պայմաններում տեղի ունեցավ հայկական երկրամասերի ազատագրումը: Անհրաժեշտ է ճշգրիտ ու հստակ գնահատական տալ այլեւայլ տարածքների ազատագրման ընթացքին ու հեռանկարներին, որը եւ հնարավորություն կընձեռի հիմնավոր եզրակացությունների հանգել Զաքարյան հայ իշխանների ու նրանց ստորականների գործունեության տարբեր փուլերի վերաբերյալ:

ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի համակողմանի պարզաբանման տեսանկյունից առաջնահերթ կարեւորություն է ներկայացնում խնդրի ռազմա-քաղաքական կողմի լուսաբանումը: Զաքարյանների ղեկավարած ազատագրական պայքարը ժամանակագրական եւ տարածքային առումներով հետազոտելիս մշտապես պետք է նկատի ունենալ նաև մահմեդական քաղաքական կազմավորումների ուժերի հարաբերակցության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը, այդ ամիրայությունների ներսում ընթացող ուշագրավ սոցիալ-քաղաքական անցուղարձերը: Բանն այն է, որ պատմական երկերի հեղինակները (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արեւելցի, Ստեփանոս Օրբելյան, Թամար թագուհու պատմիչներ) ամփոփ ներկայացնելով Զաքարյանների վարած մարտերի արդյունքները, անհամեմատ սակավ չափով են լուսաբանում պայքարի տարբեր փուլերում հարձակման հիմնական ուղղությունների, գլխավոր հարվածի նպատակակետի փոփոխության հետ կապված հարցերը: Ուշադիր հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ հարցերին կարելի է պատասխան տալ՝ մահմեդական կազմավորումների ներքին եւ արտաքին պատմության անցուղարձերը համադրելով հայ-վրացական զորքերի մղած մարտերի տարեգրության հետ:

Ներքաղաքական փոփոխությունները, սոցիալական տեղաշարժերն իրենց ցայտունորեն զգացնել տվեցին Ելտկուզյանների եւ Շահ-Արմենների տիրապետությանը ենթակա երկրամասերում: Թե՛ Ելտկուզյանները եւ թե՛ Շահ-Արմենները մե-

ծապես հենվում էին զինվորական ավագանու վրա, զինվորական ծառայության դիմաց զորահրամանատարներին շնորհելով ընդարձակ տիրույթներ: Որոշակի ծավալ էլ խորություն ձեռք բերած ավատատիրականացման գործընթացի հետեւանքով, նախկին «ղուլամները» («ստրուկներ») դառնում էին խոշոր հողատերեր եւ սկսում հակադրվել իրենց գերականներին: Զգալի չափով ներքին զարգացման հետեւանքն էր նաեւ Գանձակի Ելտկուզյան աթաբեկության թուլացումը: Հայկական աղբյուրների վկայությամբ, մինչեւ իր մահը Ելտկուզ աթաբեկը «բաժանեալ էր զաշխարհն իւր երկու որդւոցն. եւ տուեալ էր զԽորասան եւ զԱրաղ եւ զներքին բաժինն Պարսից իզլ Ասլանին, որ թարգմանի կարմիր առիւծ, եւ զվերին կողմն Պարսից եւ զԱտրպատական եւ զԱռան եւ զՆախջաւան ՝ Փահլաւանին»<sup>1</sup>: Մուհամեդ Փահլավանի (1176-1186) եւ իջիլ Արսլանի (1186-1191) օրոք թեեւ Գանձակի աթաբեկությունը դեռեւս պահպանում էր հզորությունը, այնուամենայնիվ դրվել էին հետագա թուլացման հիմքերը: Ներքին բաժանմանը հաջորդեց բացահայտ պայքարը աթաբեկության ժառանգորդների միջեւ: Իջիլ Արսլանը 1191 թվականին, հաղթելով սելջուկյան սուլթան Ռուքն ադ-Դին Տուղրիլ Գ-ին (1176-1194), իրեն սուլթան հռչակեց, բայց քիչ անց սպանվեց, եւ սկսվեց նրա պետության սրընթաց անկումը: Անժառանգ իջիլ Արսլանի մահից հետո Մուհամեդ Փահլավանի չորս որդիների միջեւ բռնկված երկարատեւ կռիվները նվազեցրին այն դերը, որ խաղում էին Ելտկուզյանները Մերձավոր Արեւելքի քաղաքական կյանքում եւ զգալիորեն դյուրացրեցին Հայաստանի կենտրոնական շրջանների, Սյունիքի, Ուտիքի մի մասի եւ Արցախի ազատագրման գործը: Շամքորի ճակատամարտում պարտություն կրելուց հետո Ելտկուզյան Նուսրաթ ադ-Դին Աբու Բաբրը (1195-1210) հարկադրված էր պաշտպանական քաղաքականություն վարել: Նրա եղբայր Ուզբեկի (1210-1225) օրոք Ելտկուզյան աթաբեկությունը ստիպված էր դիմել հզոր խորեզմշահների պաշտպանությանն ու հովանավորությանը<sup>2</sup>: Աթաբեկությունը չկարողացավ հարատեւել մինչեւ մոնղոլական տիրապետության հաստատումն Այսրկովկասում, եւ արդեն 1225 թվականին նրա տարածքը գրավեց խորեզմշահ Զալալ ադ-Դինը<sup>3</sup>:

ԺԲ դ. 80-ական թթ. կեսերին կարեւոր իրադարձություններ ծավալվեցին նաեւ Շահ-Արմենների ամիրայությունում: Երկար տարիներ իշխելուց հետո, «Ի ՈւՂ թվին [=1185 թ.] մեռանի Շահիարմեն սուլտանն իլաթայ [տայ.՝ Իզաթայ] ի գեօղն, որ կոչի Սարթհան», – գրում է Սամուէլ Անեցու երկը շարունակողներից մեկը<sup>4</sup>: Ըստ Աբու-լ Ֆեդայի՝ Նասիր ադ-Դին Սուլթան Բ-ի «մահվան լուրն առավ իր մամլուք Բեկթիմուրը, որը գտնվում էր Մուֆարդիում, շուտով ճամփա ելավ եւ հասավ իլաթ, որի բնակիչների մեծ մասը փափագում էին, որ նա լինի իշխան, եւ Շահրիմանի մամլուքներն էլ համաձայնել էին նրա հետ, ուստի հազիվ հասած, նրան թագավոր կարգեցին իլաթի վրա եւ նստեցրին Շահրիմանի գահին»<sup>5</sup>: Հայկական սկզբնաղբյուրի հանգամա-

1 Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 288: Հմմ. Վարդան Արեւելցի, էջ 171:

2 Ст'н Мухаммад ан-Насави, с. 45-46, 61.

3 Ելտկուզյանների աթաբեկության ժԲ դ. վերջի – ԺԳ դ. սկզբի պատմության մասին տե՛ս С. Bosworth, *Աշվ. աշխ.*, էջ 179, 181-182: З. М. Бунятов, *Государство атабеков Азербайджана*, Баку, 1978, с. 88-128.

4 Սամուէլ Անեցի, էջ 140:

5 *Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, էջ 223: Աբու-լ Ֆեդան Սուլթան Բ-ի մահը դնում է հիջրեի 579 թվականի (1183 թ. ապրիլի 26 – 1184 թ. ապրիլի 13) վեր-



նալից տեղեկություններից երեւում է, սակայն, որ Բեկթամուրի իշխանութեան հաստատումն ամենեւին էլ անարգել եւ անցնցում չի եղել. «ոչ էր հաստատեալ աթ[ոռ] բռնակալութեան աշխարհին, զի ոչ ու[նէր] ժառանգ թագաւորութեան իւրոյ Շահարմէնն, վասն որոյ իւրաքանչիւր ոք աւազակաբար բազում սպանութիւնս գործէր»<sup>1</sup>: «Մեռա Շահի Արմէնն անորդի, եւ աւեր եւ սուր եւ գերութիւն բազմացաւ աշխարհաց նորա ի շրջակայ ազգացն», – լրացնում է Վարդան Արեւելցին<sup>2</sup>:

Առանձնապէս սուր պայքար բորբոքվեց Բեկթամուրի եւ Կարինի Սալդուխանների միջեւ հանուն Ուղտիսի (Օլթի): Ինչպէս վկայում է Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրութիւնը, «...ի նմին ամին թշուառութեան, բռնակալն Կարնոյ քաղաքի յարուցեալ ի վերայ անառիկ բերդին Աւղթիքն անուանեալ, եւ առ զնա յաւուրս տաւնի Աստուածածնին. իսկ ի գալ աշնանային աւուրց, յաւուրս տաւնի խաչգիւտին, Բէկթամուրն [տպ.՝ բէկ թամուրն], որ եւ եղեւ աթոռակալ Շահի Արմէնին, որ էր զարապետ զարաց նորա, յարուցեալ բազում զարաւք եկն ի դուռն Կարնոյ քաղաքին, դարձուցանել զՈւլթիքն ի յառաջին տէրն իւր, եւ իբրեւ ոչ լուաւ, առ զերկիրն ամենայն յաւարի: Եւ մասն մի ի քաղաքէն հրով այրեաց եւ զԲասեանսն զերկոսեանսն ի գերութիւն վարեաց, որ եւ զհամար գերութեան ԸՌ ասացին, զորս գտին եւ զնեցին, թող զկորուսեալսն»<sup>3</sup>: Ավելին, «...ի նոյն ամի էառ Բէկթամուրն զՎան եւ զՈստան եւ զԲաղէշ: Զերկիրն այրեաց մինչեւ հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբ»<sup>4</sup>: Հետեւաբար, ԺԲ դ. 80-ական թվականներին Շահ-Արմենների պետութիւնն ընդարձակվեց՝ ընդգրկելով Վանա լճից հարավ եւ արեւելք ընկած երկրամասերը, Բաղեշից մինչեւ Վան եւ Ամյուկ<sup>5</sup>: Հասկանալի է, որ Շահ-Արմենների երկու հզոր հարեւանները՝ Ելտկուզյան Մուհամեդ Փահլավանը եւ Այուբյան Սալահ ադ-Դինը (1169-1193), որոնք պայքարի մեջ մտան Սուլթան Բ-ի ժառանգութեանը տիրելու նպատակով<sup>6</sup>, էական հաջողութեան հասնել չէին կարող Շահ-Արմենների դեռեւս կայուն պետութեան դեմ:

Բեկթամուրն իշխեց իլլաթում մինչեւ 1193 թվականը, երբ այդ տարվա մայիսին սպանվեց իր իսկ փեսայի՝ Բադր ադ-Դին Ակ-Սոնկուր Հազարդինարիի կողմից, որը եւ դարձավ նրա հաջորդը Շահ-Արմենների գահի վրա<sup>7</sup>: Հատկանշական է, որ Բեկթամուրից սկսած Շահ-Արմենների պետութեան գլուխ էին կանգնում հիմնականում նրանց նախկին մամուլները: Հիշքերի 524 թվականին (1197 թ. նոյեմբերի 13 – 1198 թ. նոյեմբերի 2) Հազարդինարիի մահից հետո Շահ-Արմենների պետութիւնը գլխա-

---

ջին: Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրութեան մեջ ճիշդում է Ու (1181/1182) թվականը (*ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 19). երեսում է, որ գրիչը բաց է թողել վերջին տառը, որը, հավանաբար, եղել է «Դ»: Իբն ալ-Ասիրը Սուլթան Բ-ի մահը թվագրում է 1185 թ. հունիսով (Իբն ալ-Ասիր, էջ 269), որը հաստատվում է Օրբելյանի տվյալներով՝ «զի ժամ էր հնձոց» (*ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 20):

1 Նույն տեղում:  
2 Վարդան Արեւելցի, էջ 174:  
3 *ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 20:  
4 Նույն տեղում: Բեկթամուրը Բաղեշը գրավեց Արզնի եւ Բաղեշի տեր Ահոբաբյաններից (տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 342):  
5 Ամյուկը գրավել էր դեռեւս Սուլթան Բ-ն (տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 16), իսկ հետեւաբար Բեկթամուրն ամբողջացրել էր Վանա լճի ափի տիրույթները:  
6 Տե՛ս C. Bosworth, *Ազվ. աշխ.*, էջ 171:  
7 Տե՛ս Իբն-ալ-Ասիր, էջ 279; *Արաբական աղբյուրներ...*, էջ 226:

պտույտ արագութեամբ ի կործանում գնաց: Հազարդինարիին յոթ օրով հաջորդեց հայագրի մամուլը Խեչտաշահ Կուժլուղը<sup>1</sup>, որի սպանութունից հետո մինչև հիշրեի 602 թիվը (1205 թ. օգոստոսի 18 – 1206 թ. օգոստոսի 7), վերանվանվելով Մալիք Մանսուր, իշխեց Բեկթամուրի որդի Մահմադը<sup>2</sup>: Այս վերջինը եւս սպանվեց մամուլը Իզ ադ-Դին Բալբանի կողմից, որն էլ, իր հերթին, մեկ տարի իշխելուց հետո<sup>3</sup>, դարձյալ մահացավ բռնի մահով: Շահ-Արմենների ժառանգութեան շուրջ բռնկված պայքարում, Ելտուզյանների թուլացումից օգտվելով, հաղթող դուրս եկան Այուբյանները, որոնք ԺԲ դ. 90-ական թվականներից սկսած փորձում էին զենքի ուժով տիրանալ Խլաթի իշխողներին պատկանող երկրամասերին: Այսպես, 1191 թվականին Խլաթը եւ Մանազկերտը պաշարեց Սալահ ադ-Դինի եղբորորդի Մալիք Մուզաֆար Թակի ադ-Դին Օմարը, սակայն նրա հանկարծակի մահվան պատճառով այդ արշավանքը անհաջողութեամբ ավարտվեց<sup>4</sup>: Ապարդյուն էր նաեւ Սալահ ադ-Դինի եղբայր Մալիք Ադիլի 1194 թ. արշավանքը, որի մասին ուշագրավ վկայութուն է պահպանվել հայկական աղբյուրներում. «ՌՃՂԶ: ՈՆԳ – Մէլիք էդիլն եկն ի Խլաթ պաշարեաց եւ չկարաց առնուլ»<sup>5</sup>: 1207 թվականին<sup>6</sup> Խլաթի վրա հարձակվեց Այուբյան Մալիք Ադիլի որդի Մալիք ալ-Աուհադը, բայց պարտութուն կրեց Բալբանի եւ Կարինի տիրակալ Տուղրիլ-շահի միացյալ զորքերից: Հաղթանակից հետո Տուղրիլ-շահը սպանեց Բալբանին, սակայն Խլաթին տիրելու նրա եռանդուն ջանքերն արդյունք չտվեցին: Խլաթի եւ Մանազկերտի ապարդյուն պաշարումից հետո Տուղրիլ-շահը ձեռնունայն վերադարձավ Կարին, իսկ Խլաթի բնակիչները, բանակցութուններից հետո, քաղաքը հանձնեցին Մալիք Աուհադին<sup>7</sup>:

1207 թ. իրադարձությունների առիթով Իբն ալ-Ասիրը պատմում է մի միջադեպի մասին, որը թույլ է տալիս ավելի ընդգրկուն պատկերացում կազմել նաեւ նախորդ տարիներին Խլաթում ծավալված դեպքերի մասին: Ըստ պատմիչի՝ «...երբ ալ-Մալիք ալ-Աուհադ Նաջմ ադ-Դին ալ-Ադիլը գրավեց Խլաթն ու նրա գավառները, այնտեղից գնաց Մանազկերտ, որպեսզի այնտեղ եւս կարգուկանոն հաստատի եւ անի

---

1 Տե՛ս Արաբական աղբյուրներ..., էջ 226: Հ. Նալբանդյանն առաջարկում է Խեչտաշահին նույնանմանացնել Սասունի Թոռնիկյաններից Վիզեմի թոռ Շահնազաֆի հետ, քանի որ, ըստ Աբու-լ-Ֆեդայի, Խեչտաշահ Կուժլուղը ծագումով Սասունից էր (նույն տեղում, էջ 265, ծմթ. 60):

2 Իբն-ալ-Ասիր, էջ 289-290; Արաբական աղբյուրներ..., էջ 226:

3 Իբն-ալ-Ասիր, էջ 291-292; Արաբական աղբյուրներ..., էջ 226:

4 Իբն-ալ-Ասիր, էջ 291-292; Արաբական աղբյուրներ..., էջ 226:

5 Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի, էջ 22; Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 36:

6 Մալիք ալ-Աուհադի հարձակումը եւ ապա քաղաքին տիրանալը Իբն ալ-Ասիրը եւ Աբու-լ-Ֆեդան նշում են հիշրեի 604 թվականին (1207 թ. հուլիսի 28 – 1208 թ. հուլիսի 15), սակայն վերջինիս տվյալները թույլ են տալիս Այուբյանների հաստատումը Խլաթում ճշգրիտ թվագրել 1207 թվականով: Բանն այն է, որ Բալբանի՝ իշխանության գլուխ անցնելը պատմիչը դնում է հիշրեի 602 թվականին (1205 թ. օգոստոսի 18 – 1206 թ. օգոստոսի 7), իսկ տիրապետության տեւողությունը սահմանափակում է «շուրջ մի տարի»-ով: Հետեւաբար, եթե Բալբանը հաստատվել է Շահ-Արմենների գահին հիշրեի 602 թվականի անգամ երկրորդ կեսին՝ 1206 թվականին, ապա նրա գահակալությունն ընդհատվել է արդեն 1207-ին: Իբն ալ-Ասիրը Բալբանի տիրանալը Խլաթին նշում է մեկ տարով ուշ՝ հիշրեի 603 թվականին (1206 թ. օգոստոսի 8 – 1207 թ. հուլիսի 27), բայց եթե Բալբանի իշխանության սկզբի համար ելակետային ընդունենք 1206 թվականը, ապա երկու պատմիչների թվագրումների միջեւ հակասությունն ինքնըստինքյան կվերանա:

7 Իբն ալ-Ասիր, էջ 291-293; Արաբական աղբյուրներ..., էջ 226-228:

ինչ որ անհրաժեշտ էր: Երբ նա իլաթից դուրս եկավ, բնակիչներն ըմբոստացան տեղի գորբի դեմ եւ դուրս քշեցին: Նրանք ապստամբեցին, պաշարեցին ամրոցը, որտեղ ալ-Աուհադի մերձավորներն էին եւ Շահ Արմանի նշանաբանով կոչ արեցին, թեպետեւ նա վաղուց մեռած էր: Սրանով ուզում էին ասել, թե պետք է իշխանությունը վերադարձնել [նախկին] տերերին ու նրանց մամլուքներին:

Կուրը հասավ ալ-Մալիք ալ-Աուհադին, որը վերադարձավ նրանց մոտ: Մինչ այդ նա գործ էր ստացել Զազիրայից, որի շնորհիվ ուժեղացավ ու պաշարեց իլաթը: Բնակիչների մեջ տարածվեցին կար՝ մի մասը հակվեց նրա կողմը՝ ի հեճուկս ուրիշների: Նա տիրեց [իլաթին] եւ բնակիչներից մեծ բազմություն կոտորեց, մեծամեծերի մի խումբ գերեց ու տարավ Նփրկերտ, ընդ որում ամեն օր մարդ էր ուղարկում ու մի մասին սպանել տալիս եւ միայն քչերը փրկվեցին: Այս դեպքից հետո իլաթի բնակչությունը ստորացած վիճակում էր, իսկ երիտասարդների մեջ տարակարծություն կար: [Նախապես] նրանց ձեռքում էր իշխանությունը եւ [այժմ] մարդիկ ազատվեցին նրանց շարագործությունից, քանզի մեկին թագավոր էին նշանակում, մյուսին՝ սպանում, իսկ պետությունը հեղինակություն չունեւ, որովհետեւ ամբողջ իշխանությունը նրանց ձեռքում էր<sup>1</sup>: Մեջբերված ընդարձակ հատվածում առավել ուշագրավն այն տողերն են, որ պատմում են «երիտասարդների» կառավարման եւ նրանց «շարագործությունների» մասին: Պատմիչը կարծես ակամա է թույլ տալիս այդ փոքրիկ զեղումը. ակնհայտ է, որ նա չի ցանկանում ավելին հաղորդել իր համար ատելի դեպքերի մասին: Իբն ալ-Ասիրի պատմելաոճը եւ հատկապես «երիտասարդ» բնորոշ եզրույթն այնուամենայնիվ բավական են որոշակի գաղափար տալու համար իլաթում ստեղծված դրամատիկ իրադրության եւ ազդեցիկ սոցիալական շարժման մասին: Արաբական ու պարսկական աղբյուրներում «շաբաբ» (ինչպես նաեւ որպես հոմանիշներ գործածվող «ջեւանմարդ», «կուդեկան», «ֆիթիան») եզրույթներով նշվում են քաղաքային բնակչության որոշակի խավերը, որոնք միավորված էին հայկական «եղբայրություններին» համանման կազմակերպություններում՝ «ախինե-րում»<sup>2</sup>: Մերձավորարեւելյան քաղաքներում «երիտասարդների» գործողությունները երբեմն այնպիսի չափեր էին ընդունում, որ նրանք, գլխավորելով քաղաքային ստորին խավերի պայքարը, կամ հանձնում էին քաղաքը իրենց համար ցանկալի թեկնածուին, կամ էլ իրենք էին վերցնում իշխանությունը: Ժ-ԺԱ դարերի իրադարձությունները ճիշտ նման ընթացք ստացան այսրկովկասյան քաղաքներից Բայլականում եւ Գանձակում<sup>3</sup>, բայց առավել ցցուն է Տփղիսի օրինակը, որտեղ 40 տարի (1082-1122 թթ.) կառավարումն իրականացնում էին «շաբաբները»<sup>4</sup>: իլաթի մասին Իբն ալ-Ասի-

1 Իբն ալ-Ասիր, էջ 293:

2 Տե՛ս **D. Kouymjian**, *The Canons Dated 1280 of the Armenian Akhi Type Brotherhood of Erzinjan*, – “Études arabes et islamiques”, I: Histoire et civilisation. vol. 2, Paris, 1975, p. 107-108; **М. В. Габашвили**, *Из истории социальных движений в Грузии XII века*, – “Кавказ и Византия”, вып. 4, Ер., 1984, с. 21-25.

3 Տե՛ս **В. М. Бейлис**, *Мас’уд ибн Намдар и городское население Байлакана*, – “Известия” АН Азерб. ССР (серия истории, философии и права), 1966, № 3, с. 50-63; **Ա. Ա. Խաչատրյան**, *Ֆիթիանների միությունները եւ նրանց պայքարը քաղաքային ինքնավարության համար Հայաստանում (Ժ-ԺԳ դդ.)*, – Երիտասարդ արեւելագետների X գիտական նստաշրջան (Զեկուցումների թեզեր), Եր., 1984, էջ 8-9:

4 Տե՛ս **Յ. Թեյնոս**, *საქალაქო კომუნა შუა საუკუნეების თბილისში*, თბ., 1962; **მ. გაბაშვილი**, *საქართველოს ქალაქები XI-XII საუკუნეებში*, თბ., 1981, გვ. 63-82.

րի վկայությունները, բավական ընդարձակ լինելով, թույլ են տալիս ուրվագծել քաղաքային բնակչության տարբեր խավերի դիրքորոշումն այդ ժամանակահատվածի ճակատագրական դեպքերի ժամանակ եւ հետեւել «հասարակ բնակչության» ու նրա առաջնորդ «երիտասարդների» դերի աճին մեկուկես տասնամյակի ընթացքում:

1185 թվականին Սալահ ադ-Դինի կողմից իլաթը գրավելու փորձի մասին պատմելիս հեղինակն ընդգծում է իլաթցիների վերնախավի ցուցաբերած նախաձեռնությունը. «Իսկ (Սալահ ադ-Դինը) տատանվում էր եւ ահա այնպես պատահեց, որ իլաթի (սիլաթ) մի քանի երեւելի բնակիչներից ու ամիրաներից նամակներ եկան, հրավիրելով նրան ֆաղաֆը գրավելու»<sup>1</sup>: Իրականում, սակայն, իլաթցի մեծամեծերը գործել են նախապես մշակված ծրագրով՝ օգտագործելով Սալահ ադ-Դինի եւ Մուհամեդ Փահլավանի հակասությունները՝ քաղաքի անկախությունը պահպանելու նպատակով: Բանն այն է, որ Ելտկուզյան աթաբեկը «իր աղջկան ամուսնացրել էր Շահ Արմանի հետ, թեկուզ վերջինս մեծահասակ էր, որպեսզի այդ ճանապարհով տիրի իլաթին (սիլաթ) ու նրա գավառներին: Երբ [իլաթում] լսեցին նրա մերձենալու մասին, գրեցին Սալահ ադ-Դինին, հրավիրելով, որ ստանձնի երկրի իշխանությունը, որպեսզի նրա միջոցով հաղթեն Բահլավանին, իսկ նրան էլ ետ մղեն Բահլավանի միջոցով, եւ երկիրը իրենց կմնար»<sup>2</sup>: 1185 թվականին իլաթցիների վերնախավին լիովին հաջողվել է իր ազդեցության ներքո պահել քաղաքային բնակչությանը, որն ինքնուրույնաբար, սեփական ծրագրով հանդես չի եկել: «Երեւելի բնակիչները եւ ամիրաները», առանց ներքին դժվարությունների հանդիպելու, իրականացրել են իրենց մտահղացումը. «Բահլավանը գնաց իլաթ (սիլաթ) եւ գնում էին սուրհանդակները իլաթի բնակչության ու նրա, ինչպես նաեւ (սիլաթի) ու Սալահ ադ-Դինի միջեւ: Վերջապես նրանք (սիլաթի ժողովուրդը) իրենց գործերը կարգավորեցին Բահլավանի հետ եւ դարձան նրան կողմնակից ու հպատակության խուժբա տվեցին»<sup>3</sup>: Պատմիչի խոսքերից դժվար է ենթադրել, թե 1185 թվականին իլաթում սոցիալական նշանակալի շարժում է տեղի ունեցել, որի ընթացքում առանձնացել են բնակչության ստորին շերտերը: Այս եզրահանգման օգտին են վկայում մինչեւ 1193 թվականը ծավալված անցուդարձերը, երբ իլաթի ամիրայությունը, ինչպես տեսանք, պահպանում էր ռազմական հզորությունը եւ նույնիսկ ընդարձակել էր սահմանները: Իլաթում անկայուն դրության առաջացման մասին Իբն ալ-Ասիրը խոսում է նաեւ 1193 թվականի դեպքերի առիթով, երբ պատմում է Սալահ ադ-Դինի մահվանը հաջորդող երկու ամսվա ընթացքում իլաթի տիրակալ Բեկթամուրի ձեռնարկումների մասին: Յնծությունները ընդունելով հզոր Այուբյանի մահվան լուրը, նա երագում էր նոր հաջողությունների մասին, բայց «նրա մոտ խանգարում եւ շփոթություն առաջացավ եւ պատրաստվեց գնալ արշավանքի Նփրկերտ (Մալաֆարիկին), այն պաշարելու նպատակով, սակայն մահը վրա հասավ»<sup>4</sup>: Թեեւ պատմիչը չի ծավալվում «խանգարման եւ շփոթության» էություն ու հանգամանքների շուրջ, այնուամենայնիվ, թվում է, տեղի է ունեցել սովորական պալատական հեղաշրջում. «Ձահիր ալ-Դին Շահ Արմանի մամուլներից մեկը՝ Հազարդինարին, ուժեղացել էր, շատ կողմնակիցներ ուներ եւ ամուսնացել էր Բաքտամուրի աղջկա հետ: Եւ ահա նա ցանկացավ իշխանու-

1 Իբն ալ-Ասիր, էջ 269 (ընդգծումն իսն է):

2 Նույն տեղում, էջ 270:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 279:

թշանը տիրանալ եւ մարդ ուղարկելով սպանել տվեց նրան»<sup>1</sup>: Հազարգինարիի կառավարման ժամանակաշրջանի մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել աղբյուրներում, ուստի հարկադրված ենք բավարարվել ԺԳ դ. առաջին տարիների մասին իբն ալ-Ասիրի հաղորդած տվյալներով: Արաբ հեղինակը նշում է հիշքեի 601 (1204 թ. օգոստոսի 29 – 1205 թ. օգոստոսի 17) եւ 602 (1205 թ. օգոստոսի 18 – 1206 թ. օգոստոսի 7) թվականներին «քուրջերի»<sup>2</sup> երեք արշավանքների մասին դեպի իլաթի ամիրայություն՝ հետեւյալ կերպ բացատրելով այդ իրադարձությունների հետ կապված իրավիճակը. «Քանզի նրա տերը մանուկ էր, իսկ իրական կառավարողը իշխանություն չունեի զորքի վրա»<sup>3</sup>: Այսպիսով, իբն ալ-Ասիրն առաջին անգամ որպես իլաթում ծավալվող դեպքերի կարեւոր մասնակից, հիշատակում է զորքը, որը, միանգամայն օրինաչափորեն, իր վճռական խոսքը պետք է ասեր զգալի չափով ռազմական ուժի վրա հենվող ամիրայությունում: Բանակի դերը որոշիչ էր 1206 թվականին սկսված դեպքերի ժամանակ, երբ «իլաթի (սիլաթ) զորքը ձերբակալեց իր տիրոջը՝ Բաքտամուրի որդուն, եւ տեր դարձավ Բալբանը (Բալբան)՝ Շահ Արման իբն Սուլեյմանի մամուլը»<sup>4</sup>: Իբն ալ-Ասիրի երկի հաջորդ տողերից, սակայն, երեւում է, որ ներքաղաքական կացությունը իլաթի ամիրայությունում ավելի բարդ է եղել եւ զորքի ելույթը ազդանշան է ծառայել ուշագրավ սոցիալական շարժման համար: Պատահական չէ, որ իրադարձությունների այս փուլում արդեն հիշատակվում է «հասարակ ժողովուրդը», զորքի հետագա գործողություններն այլեւս միասնական ձեռնարկումներ չեն դիտվում պատմիչի կողմից: Դժգոհությունը Բեկթամուրի որդու կառավարումից, մինչեւ նրա ձերբակալումը, համընդհանուր երեւույթ է ներկայացվում. «Բաքտամուրի որդին դեռ տղա էր ու անփորձ: Նա ձերբակալել էր Շահ Արմանի մամուլըներից ամիր Շուշա ալ-Դին Կուտուլդին, որը նրա աթաբեկն էր ու երկրի կառավարիչը եւ լավ վերաբերմունք ուներ զինվորների ու հասարակ ժողովրդի նկատմամբ: Երբ սրան սպանեց, զինվորները եւ հասարակ ժողովուրդը դժգոհեցին, իսկ ինքը (Բաքտամուրի որդին) զբաղված էր հաճույքներով, խաղամոլությամբ, հարբեցողությամբ: Եւ ահա իլաթի ժողովրդից ու զինվորներից մի խումբ գրեց Մարդինի տիրոջը՝ Նասիր ալ-Դինին, հրավիրելով իրենց մոտ... Սակայն Շահ Արմանի մամուլըներից մեկը, որի անունն էր Բալբան, Բաքտամուրի տղայի նկատմամբ թշնամական դիրք բռնեց եւ, ըմբոստանալով նրա դեմ, իլաթից հեռացավ Մանազկերտի երկիրը, տիրացավ նրան, զորք հավաքեց մեծ բազմությամբ ու գնալով իլաթի դեմ, ուզեց գրավել այն»<sup>5</sup>: Հետեւաբար, ինչպես եւ 1185 թվականին, իլաթի նկատմամբ հավակնություններով հանդես եկան երկու հակառակորդ ուժեր՝ Մարդինի Արտուխյան տիրակալ Նասիր ալ-Դին Արտուխ-Արալանը (մոտավորապես՝ 1201-1239)<sup>6</sup> եւ Բալբանը: Բայց այս անգամ դրությունը բարդացնում էր այն հանգամանքը, որ երկուսն էլ

1 Նույն տեղում:

2 Արամ Տեր-Ղեռնոյանի բացատրությամբ՝ «քուրջ են կոչվում ոչ միայն վրաստանը, նրա ժողովուրդը եւ թագավորները, այլեւ Հյուսիսային Հայաստանը, նրա հայ ազգաբնակչությունը եւ Զաքարյան իշխանապետության բոլոր հայ զորավարներն ու ռազմիկները» (տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 398, ծնթ. 280):

3 **Իբն ալ-Ասիր**, էջ 286:

4 Նույն տեղում, էջ 289:

5 Նույն տեղում (ընդգծումն իմն է):

6 Տե՛ս **К. Босворт**, Գշվ. աշխ., էջ 166:

կողմնակիցներ ունեին քաղաքի ներսում: Պատմիչի «ժողովրդից ու զինվորներից մի խումբ» արտահայտությունը պատահական համարել չի կարելի այն առումով, որ գործի մի մասը ոչ միայն պաշտպանում էր Բալբանին, այլև միայն նրա օգնությամբ Բալբանը կարող էր գրավել «Մանազկերտի երկիրը»: Ավելին, Մարդինի տիրակալին փորձեց խանգարել իսառանի եւ Զազիրայի կառավարիչ Այուբյան ալ-Մալիք ալ-Աշ-րաֆը, բայց հաջողության չհասավ<sup>1</sup>: Իրենց հերթին, խաթեյիները շտապեցին քաղաքը հանձնել Մարդինի տիրոջը, որը «կանգնեց իրազեկ մտքով մի քանի օր»<sup>2</sup>, ուստի Բալբանը նախ խորամանկությամբ իրազեկեց հեռացրեց անհաջողակ Արտուխյանի բանակը, ապա, ահաբեկելով նրան, ստիպեց վերադառնալ Մարդին<sup>3</sup>: Իբն ալ-Ասիրի ամբողջ պատումից այն եզրակացություն կարելի է հանգել, որ Բեկթամուրի որդու գահ բարձրանալուց հետո (1197-1198 թվականներ) իրազեկում փաստական իշխանությունը պատկանել է «գործին եւ հասարակ ժողովրդին», որոնց նախաձեռնությամբ ու թելադրանքով էլ տեղի են ունեցել բոլոր կարեւոր իրադարձությունները: Այս հետեւություն օգտին են խոսում իրազեկ գրավելու ուղղությամբ Բալբանի ձեռնարկած երկու փորձերի նկարագրությունները: Առաջին դրվագը հաստատում է այն միտքը, որ գործի մի մասը լքել էր իրազեկ եւ միացել Բալբանին, ինչպես նաեւ վկայում է «հասարակ ժողովրդի» ուշագրավ վարքագծի մասին: Պարզվում է, որ քաղաքային հասարակության այդ խավը փոփոխված իրազեկության պայմաններում հանդես է եկել Բեկթամուրի որդու օգտին: «Բալբանը գործ հավաքեց ու պաշարեց իրազեկ, նեղեց բնակիչներին: Այնտեղ էր Բաքտամուրի տղան, որը քաղաքում եղած զինվորներին ու հասարակ ժողովրդին հավաքելով դուրս եկավ նրա դեմ: Նրանք ընդհարվեցին եւ Բալբանը իր հետ եղածներով միասին փախուստի մատնվեց եւ վերադարձավ այն վայրերը, որոնք արդեն իր ձեռքում էին, այսինքն՝ Մանազկերտ, Արճեշ եւ այլ բերդեր»<sup>4</sup>: Նույնիսկ իրազեկ տեր դառնալիս Բալբանը չէր կարող իր կամքը թելադրել խաթեյիներին եւ ստիպված էր համաձայնել քաղաքացիների առաջադրած պահանջների հետ: Երբ Բալբանը երկրորդ անգամ պաշարեց իրազեկ, քաղաքացիները «լուր ուղարկեցին Բալբանին, երդվել տալով իրենց պայմանները ընդունել եւ համաձայնեցին քաղաքն ու Բաքտամուրի որդուն (հանձնել նրան): Սա տիրացավ իրազեկ բոլոր գավառներին, բանտարկեց Բաքտամուրի որդուն այնտեղի մի բերդում, եւ ամրապնդվեց նրա իշխանությունը»<sup>5</sup>: Պատմիչի վերջին պնդումը ճշմարտությունից հեռու է թվում իր իսկ մյուս տեղեկությունների լույսի ներքո: Այսպես, երբ ալ-Մալիք ալ-Աուհադը պաշարեց եւ գրավեց Մուշը, իբն ալ-Ասիրի խոստովանությամբ «Բալբանի դիրքը չէր ամրացել, որ կարողանար նրան դիմադրել»<sup>6</sup>: Նույնիսկ ալ-Աուհադին մեկ անգամ պարտության մատնելուց հետո էլ, Բալբանը բավականաչափ ուժեր չունեին եւ հարկադրված էր օգնության կանչել Կարինի տիրակալին, որը եւ Բալբանի հետ միասին հաղթելով ալ-Աուհադին, դավաճանաբար սպանեց իրազեկ տիրակալին<sup>7</sup>: Հատկանշական է այն փաստը, որ ո՛չ -

1 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 290:

2 Նույն տեղում, էջ 289:

3 Նույն տեղում, էջ 289-290:

4 Նույն տեղում, էջ 290:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 292:

7 Նույն տեղում:

Բալբանը, ոչ՝ Կարինի կառավարիչ Տուրրիլ-շահը, ո՛չ էլ իսլաթին վերջնականապես տիրացած ալ-Աուհադը գենքի ուժով չկարողացան տիրել իսլաթին: Քաղաքի փաստական տերերը «երիտասարդներն» էին, որոնք «մեկին թագավոր էին նշանակում, մյուսին՝ սպանում»: Քաղաքային շարժման ճնշումը եւ Այուբյանների իշխանության հաստատումը իսլաթում տեղի ունեցավ համառ մարտերի պայմաններում: Նույնիսկ այն ժամանակ, երբ իսլաթի բնակիչները լուր ուղարկեցին ալ-Աուհադին եւ «նա եկավ ու տիրեց իսլաթին ու նրա գավառներին, բացի մի փոքր մասից»<sup>1</sup>, իսկական պայքարը նոր միայն սկսվում էր: Այուբյանների նկատմամբ ակնհայտորեն թշնամաբար էին տրամադրված շրջակա երկրների տիրակալները, իսկ «քուրջերի» հարձակումները շարունակվում էին: Ալ-Աուհադը դատապարտված էր շրջափակված մնալու իսլաթում, քանի որ երկյուղում էր քաղաքը կորցնել: Բանն այն է, որ «իսլաթի զորքերից մի մասը հեռացավ ու գրավեց Վան ամրոցը, որը մեծագույն եւ ամենից անառիկ բերդերից էր: Նրանք (անշատված զորքերը) ըմբոստացան Նաջմ ալ-Դինի դեմ: Նրանց շուրջը զորք հավաքվեց եւ նրանք գրավեցին Արճեշ (Արջիշ) քաղաքը»<sup>2</sup>: Այսպիսով, ստեղծվեց այնպիսի իրադրություն, երբ ալ-Աուհադը անկարող էր սոսկ սեփական ուժերով տիրանալ Շահ-Արմենների ժառանգությանը: Նա ռազմական օգնություն խնդրեց եւ ստացավ հորից՝ ալ-Ադիլից, Վանը պաշարելու համար ժամանեց նաեւ եղբայրը՝ ալ-Աշրաֆը: Բայց բավական էր, որ Վանը գրավելուց հետո ալ-Աշրաֆը վերադառնար, որպեսզի ալ-Աուհադի դրությունը իսլաթի ամիրայությունում կրկին անկայուն դառնար: Երբ նա մեկնեց Մանազկերտը գրավելու եւ իրեն ենթարկելու նպատակով, քաղաքային ապստամբությունը ընդգրկեց իսլաթը<sup>3</sup>: Սոցիալական շարժումը իսլաթում, որն ավարտվեց 1207 թվականի հզոր քաղաքային ապստամբությամբ, կարճատեւ ժամանակով միայն իշխանությունը լիովին հանձնեց քաղաքային բնակչությանը: Նոր օգնություն ստանալով Զազիրայից եւ օգտվելով քաղաքում ծագած ներքին տարաձայնություններից, ալ-Աուհադը շուտով գրավեց իսլաթը եւ դաժան դատաստան տեսավ ապստամբների հետ<sup>4</sup>: Քաղաքային բնակչությունը իսլաթում 1207 թվականին, այնուամենայնիվ, լիովին ջախջախված չէր, եւ նոր ապստամբության սպառնալիքը այնքան իրական էր, որ երբ հիջրեի 605 թվականին (1208 թ. հուլիսի 16 – 1209 թ. հուլիսի 7) «քուրջերը» գրավեցին եւ ավերեցին Արճեշը, ալ-Աուհադը չհամարձակվեց դիմադրություն ցույց տալ ոչ միայն վերջիններիս բազմության, այլեւ իսլաթի բնակիչներից սպառնացող վտանգի պատճառով, «որոնց նա շատ կոտորել ու վնաս էր պատճառել: Նա վախենում էր, որ եթե դուրս գա (քաղաքից), այլեւ չի կարող վերադառնալ»<sup>5</sup>: Այդ անկայուն դրությունը, հավանաբար, պահպանվեց մինչեւ «քուրջերի» հերթական հարձակման եւ Իվանե Զաբարյանի գերի ընկնելու հետ կապված իրադարձությունների ժամանակները, այսինքն՝ շուրջ 2-3 տարի: Այնուհետեւ Շահ-Արմենների պետությունը մտավ Այուբյանների տիրույթների կազմի մեջ:

Իսլաթում ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին ծավալված քաղաքային շարժումը, որն առայժմ չի արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը, միջնադարյան հայ-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 293:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 294:

կական քաղաքների պատմության առավել ուշագրավ դրվագներից է: Շուրջ մեկ տասնամյակի ընթացքում փաստական իշխանությունը քաղաքում պատկանում էր «ժողովրդին»՝ այսինքն՝ արհեստավորներին, մանր առևտրականներին, քաղաքային չքավորությանը<sup>1</sup>: Նման իրավիճակը նորություն չէր այսրկովկասյան քաղաքների պատմության մեջ, բայց խլաթյան օրինակը ժամանակագրական առումով զգալիորեն ավելի ուշ փուլով է թվագրվում (տփղիսյան դեպքերի ավարտից ավելի քան յոթ տասնամյակ հետո) եւ նշանավորում է վերջին դրվագը տարածաշրջանի քաղաքային շարժումների պատմության մեջ: Մոնղոլական արշավանքներից հետո քաղաքային կյանքի հետագա անկման պայմաններում այդօրինակ շարժումների մասին այլևս խոսք չի ել չէր կարող:

Այուբյանների հսկայածավալ տիրույթների մեջ մտնող իլաթը եւ շրջակա գավառները սկսեցին կառավարվել Մալիք Ադիլի ժառանգների կողմից, «որ կոչին եդլեանք»<sup>2</sup>: 1210/11 թվականին Մալիք Աուհադի մահից հետո իլաթի ամիրայության տարածքն անցավ նրա եղբայր Մալիք Աշրաֆին<sup>3</sup>, որը մեկ տասնամյակ իշխելուց հետո իլաթը եւ նփրկերտը 1221 թ.<sup>4</sup> հանձնեց իր եղբայր Մալիք Մուզաֆֆար ալ-Ղազինին՝ փոխարենը ստանալով Ուռհան եւ Սրուճը<sup>5</sup>: 1224 թ. եղբոր դեմ ապստամբելու պատճառով Մալիք Ղազին կորցրեց իլաթը եւ ստիպված էր բավարարվել միայն նփրկերտով. իլաթի ամիրայությունում կրկին իշխեց Մալիք Աշրաֆը<sup>6</sup>:

- 
- 1 Տե՛ս **Л. В. Строева**, *К вопросу о социальной природе исмаилитского движения в Иране в XI-XIII вв.*, – “Вестник ЛГУ”, 1963, № 20, с. 45-46.
  - 2 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 151: Մալիք ալ-Աուհադին Մյսիթար Այրիվանեցին կոչում է «Աւաթ» (**Մյսիթար Այրիվանեցի**, էջ 65), իսկ Կիրակոս Գանձակեցին հիշատակում է նրա մականունը՝ «Կուզ»: Աուհադ – Կուզ նույնաձմությունն ակնարեւ է Կիրակոս Գանձակեցու երկի այն հատվածից, ուր պատմվում է Խլաթի մոտ Իվանեի գերի ընկնելու եւ դատերը Խլաթի տիրոջը կնության տալու մասին. «Եւ նորա [Իվանեի – Հ. Մ.] երթեալ ի տուն իւր, աւաքեաց գրուստրն իւր, որ եղեւ կին Կոլո, եւ յետ նորա Աշրաֆին» (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 165): Հայ պատմիչի տեղեկանու ստույգությունը հաստատում է Աբու-լ-Ֆեդան՝ ճշելով, որ «վրացիների թագավորի», այսինքն՝ Իվանեի դուստրն ամուսնացել էր Աուհադի հետ (*Արաբական աղբյուրները...*, էջ 228): Հետեւաբար, սխալվում է Վարդան Արեւելցին, երբ գրում է, որ Իվանեի գերի ընկնելիս վերջինին դուստրն ամուսնացել էր Մալիք Աշրաֆի հետ (**Վարդան Արեւելցի**, էջ 182):
  - 3 Տե՛ս *Արաբական աղբյուրները...*, էջ 228: Թե՛ ժամանակագրության եւ թե՛ տիրակալների հաջորդականության հարցում սխալվում է Ստեփանոս Օրբելյանը. «Ի ՈՎԱ թվին [=1212 թ.] Մելիք Աշրաֆն մեռաւ եւ Մելիք Ավհադինն նստաւ» (*Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 24; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 38): Այս վկայությունն անխաթար տեսքով պահպանվել է Սամուէլ Անեցու երկը շարունակողներից մեկի մոտ. «Ի թվին ՈՎԱ. Մելիք Ահադն [տպ.՝ Ահմադն] մեռաւ: Աշրաֆն նստաւ» (**Սամուէլ Անեցի**, էջ 147, տողատակ):
  - 4 Տե՛ս *Արաբական աղբյուրները...*, էջ 229: Աբու-լ-Ֆեդայի հաղորդած հիշրեի 617 թվականը (1220 թ. մարտի 8 – 1221 թ. փետրվարի 14) հաստատում են Ստեփանոս Օրբելյանը՝ «ԻՄԻԳ: ՈՂ (1221) – Մելիք Խազինն ի Խլաթ երեկ» (*Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 23; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 39), եւ ՈՎԹ թվականը (1220) ճշող հայ ժամանակագիրներից մեկը (**Սամուէլ Անեցի**, էջ 147, տողատակ): Հարցի վերջնական լուծմանը նպաստում է Իբն ալ-Ասիրը, որը ալ-Ղազինի գալուստը Խլաթ ճշգրտորեն թվագրում է հիշրեի 618 թ. սկզբով, այսինքն՝ 1221 թվականով (**Իբն ալ-Ասիր**, էջ 306):
  - 5 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 314-315; *Արաբական աղբյուրները...*, էջ 230; *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 34; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 39:
  - 6 Ինչպես երեւում է, կառավարվելով հանդերձ Մալիք Ադիլի որդիների կողմից, Խլաթը համարվում էր Մալիք Ադիլի տիրույթը: Հովհաննես Գրիչը, օրինակ, 1214 թվականին ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրում է. «Ի սուլտանութեան Մելեքըլետերն, որ տիրէր Եգիպտոսի»



ԺԳ դ. սկզբին նշանակալիորեն բարդացավ Հայաստանի ոչ միայն հարավային, այլև հյուսիս-արեւմտյան շրջանների՝ օտար լուծը թոթափելու գործը: Եթե Հարավային Հայաստանում ամրապնդվեցին Այուբյանները, ապա հյուսիս-արեւմուտքում ծավալապաշտական հավակնություններով հանդես եկան Իկոնիայի սուլթանները: Բասենի ճակատամարտում 1202 թվականին կրած պարտությունը, ճիշտ է, հարկադրեց սելջուկներին դադարեցնել առաջխաղացումը, բայց նրանց պետությունը շարունակում էր մնալ Վրաստանի ամենահզոր ախոյանը Փոքր Ասիայում: 1214 թվականին Իկոնիայի սուլթան Իզ ադ-Դին Քեյ-Քավուս Ա-ը (1210-1219) «տիրէր Հոռոմոց, Կեսարիոյ, Սեբաստոյ եւ Կանին եւ այլ բազում մայրաքաղ[աք]աց, եւ Սինոպին, մինչեւ ի ծովն Լիբէացոց»<sup>1</sup>: Իկոնիայի սուլթանությունը առանձնակի հզորության հասավ Ալա ադ-Դին Քեյ-Կուբադ Ա-ի (1219-1237) օրոք, որի նախաձեռնությամբ վերսկսվեց սելջուկների առաջխաղացումը դեպի Հյուսիս-արեւմտյան Հայաստան:

ԺԶ դ. վերջի – ԺԳ դ. սկզբի Մերձավոր Արեւելքի քաղաքական կյանքի ուշագրավ կողմերից մեկը մահմեդական փոքր ամիրայությունների կողմնակից էր անհամեմատ խոշոր եւ ռազմական առումով ուժեղ պետական կազմավորումներին: Այդ գործընթացը բացասաբար ազդեց հայկական երկրամասերի ազատագրման ընթացքի վրա, հայ-վրացական գործերին դուրս բերելով այնպիսի հզոր ուժերի դեմ, ինչպիսիք էին Այուբյանների պետությունը եւ Իկոնիայի սուլթանությունը:

Այսպես, սկսած ԺԶ դ. կեսերից, իրենց դիրքերը խիստ զիջեցին Արտուխյանները, որոնք հարկադրված էին ընդունել շրջակա ավելի հզոր քաղաքական կազմավորումների գերակայությունը: Արդեն ԺԶ դ. վերջին նրանք այլեւս չէին կարողանում մասնակցել քրիստոնյաների դեմ ուղղված մահմեդական ամիրայությունների ռազմական ձեռնարկումներին:

Արտուխյանների ճակատագիրը կիսեցին Բաղեշի եւ Արզնի տիրակալ Թուղան Արսլան ալ-Ահաբի ժառանգները՝ Ահաբյանները: Ինչպես ասվեց, ԺԶ դ. վերջին Բաղեշը նրանցից խլեցին Շահ-Արմենների ամիրայության տիրակալները, իսկ վերջին հենակետը՝ Արզնը, 1230/31 թվականին գրավեցին Այուբյանները<sup>2</sup>:

ԺԶ դ. վերջին նաեւ Կարինի Սալղուխյաններն էին ծանր օրեր ապրում՝ ենթարկվելով ինչպե՛ս Վրաստանի, այնպե՛ս էլ Իկոնիայի սուլթանության ճնշմանը: Տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչ Իզ ադ-Դին Սալղուխի մահից հետո նրա ժառանգները կորցրել էին նախկին հզորությանը: 1201 թվականին Իկոնիայի սուլթան Ռուքն ադ-Դինը (1196-1204) Սալղուխյաններից գրավեց Կարինը եւ հանձնեց եղբորը՝ Մուղիս ադ-Դին Տուղրիլ-շահին, սակայն Սալղուխյանները մինչեւ ԺԳ դարի 30-ական թվականները պահպանում էին նախկին տիրույթների մի մասը՝ Մժնկերտ ամրոցն իր շրջակայքով<sup>3</sup>:

---

տոսի, եւ սուրբ տեղեացն՝ մայրաքաղաքին ամենայն տիեզերաց Երուսաղէմի, եւ Դամասկոսի, եւ Եղեւսեա, եւ Մոփսաց երկրին, Ղլաթա մինչեւ ի սինաւոն Վրաց» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 85):

1 Նույն տեղում:

2 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 340-341, Արաբական աղբյուրներ..., էջ 233:

3 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 490: А. А. Хачатурян, Корпус арабских надписей Армении, с. 63-64; Ա. Խաչատրյան, Կարնո Սալղուխյանների ժամանակագրությունը եւ սոսմաբանությունը ըստ արաբական վիմագիր աղբյուրների, – «Արեւելյան աղբյուրագիտություն», 1, Եր., 1988, էջ 99-133:

Ուշագրավ է, որ ԺԳ դ. սկզբին հնարավոր եղավ ազատագրել այն փոքր ամիրայությունները, որոնք ամփոփված էին հիմնականում քաղաքների շրջանակներում եւ ընդունում էին իրենց հզոր հարեւանների գերակայությունը՝ խուսափելով այդ պետությունների մի մասը դառնալու սպառնալիքից: Այսպես, Կարսի ամիրաները ԺԲ դ. կեսերին ընդունում էին Կարինի Սալգուխյանների, իսկ հետագայում՝ Շահ-Արմենների գերակայությունը<sup>1</sup>: Սուրմարիի տերը ԺԳ դ. 20-ական թվականներին հպատակվում էր իլաթի Այուբյաններին<sup>2</sup>, իսկ 1225 թվականին Գառնիի ճակատամարտում խորեզմշահ Ջալալ ադ-Դինի՝ հայ-վրացական բանակի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո քաղաքի ամիրաները հնազանդվեցին Ջալալ ադ-Դինին եւ ծառայության անցան նրա մոտ: Հինգ տարի անց, Յասսի Զիմանի ճակատամարտում Իկոնիայի սուլթանության եւ Այուբյանների միացյալ բանակից խորեզմցիների կրած պարտությունից հետո, Ջալալ ադ-Դինը Սուրմարին վերադարձրեց Այուբյաններին<sup>3</sup>:

ԺԲ դ. վերջին սպառվեցին Վրաստանի անմիջական հարեւան Անիի Շահդադյանների պաշտպանական հնարավորությունները: Անիի համար մղվող պայքարը, տեւելով շուրջ մեկ հարյուրամյակ, ի վերջո ավարտվեց Շահդադյանների պարտությամբ: Քաղաքը, չորրորդ անգամ գրավվելուց հետո, անցավ Ջաքարե ամիրսպասալարին եւ նրա սերունդներին: Վերջին Շահդադյանների օրոք հանուն քաղաքային ազատությունների եւ ինքնավարության մղվող պայքարում անեցիները հասել էին զգալի հաջողությունների: Անիի հայերն այդ տարիներին իրենց այնքան հզոր էին զգում, որ 1186 թվականին, առանց երկնչելու շրջակա ամիրայությունների վրեժխնդրությունից՝ հարձակվեցին ու գրավեցին Բարսեղ արքեպիսկոպոսի եւ նրա եղբայրների «հայրենիք» Ծառաքար ամրոցը, որն այդ ժամանակ պատկանում էր իզիլ Արսլան Ելտկուզյանին<sup>4</sup>:

Առայժմ ընդհանուր տեսակետ գոյություն չունի Անիի վերջին Շահդադյան ամիրայի ինքնության եւ իշխանության տարիների շուրջ, թեեւ վիմագրական նյութը հնարավորություն է ընձեռում պատասխանել այդ հարցերին: Չնայած արդեն 1849 թվականին Անիի 1198/1199 թվականի պարսկերեն արձանագրության հրատարակիչ Ն. Խանիկովը Շահդադյանների տոհմաձառի մեջ էր մտցրել այդ արձանագրությունում հիշատակվող Քեյ-Սուլթանին<sup>5</sup>, նորագույն աշխատություններում վերջինիս գոյությունը ժխտվում է: Վլ. Մինորսկու կարծիքով, արձանագրությունում պարզապես պարսկերենից արաբերեն է թարգմանված Շահնշահ ամիրայի անունը, ուստի նա, թեեւ որոշ կասկածով, երկուսին նույնանձնացրել է<sup>6</sup>: Սակայն Սուլթանը «սպասալար» տիտղոսով հիշատակվում է նաեւ Թալինի 1174 թվականի արաբերեն արձանագրությունում, ուստի այդ վիմագրի վերջին հրատարակիչ Ալեքսան Խաչատրյանն իրավացիորեն մերժում է Վլ. Մինորսկու տեսակետը «Շահնշահ» անվան թարգմանության վերաբերյալ, բայց այնուամենայնիվ ընդունում է

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 492:

2 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 312:

3 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 159, 259.

4 Տե՛ս Վարդան Արեւելի, էջ 174-175; Մխիթար Անեցի, էջ 109-110:

5 Տե՛ս M. Brosset, *Quelques inscriptions musulmanes d'Ani et environs de Bakou: extrait d'une lettre de M. Khanykoff*; Л. Т. Гюзальян, *Персидская надпись Кей-Султана Шеддадида в Ани*, с. 629-641.

6 V. Minorsky, Գշվ. աշխ., էջ 101, 106:

«Շահնշահ-Սուլթան» նույնանձնացումը<sup>1</sup>: Սակայն Վարդանի Պատմությունից գիտենք, որ Շահնշահը 1174 թվականին Վրաստան գերի տարվելուց հետո այլևս չվերագրվեց Անի<sup>2</sup>, հետեւաբար, ինչպես վկայում է Թալինի արաբերեն արձանագրությունը, նույն թվականի սեպտեմբերին նրան հասցրել էր հաջորդել եղբայրը՝ Սուլթանը: Վերջինիս անունը գիտական գրականության մեջ տարածված է նաև Քեյ-Սուլթան կամ Քայ-Սուլթան թյուր ձևերով, որի պատճառը, Վլ. Մինորսկու համոզիչ պարզաբանմամբ, «Քեյ» հարաբերական դերանունն անձնանվան մաս համարելն է եղել<sup>3</sup>: Այսքանից հետո պարզ է, որ Անիի վերջին Շահնշահյան Սուլթանն է հիշատակվում Անիի 1193 թվականի հայերեն արձանագրությունում<sup>4</sup> եւ ժԲ դ. վերջերին վերագրելի Շիրակավանի անթվական վիճագրերից մեկում. «Միջնորդութեամբ տեառն Բարսղի եպիսկոպոսի եւ յաւագութեանս Անոյ Սուլթանին»<sup>5</sup>: Այսպիսով, Շահնշահյանների տոհմածառը հարկ է լրացնել եւ վերջին Շահնշահյանի կառավարման ժամանակահատված համարել 1174-1199 թվականները:

Ընդհանուր առմամբ, գնահատելով քաղաքական իրադրությունը Մերձավոր Արեւելքում ժԲ դ. 80-ական թվականներից մինչեւ ժԳ դ. 20-ական թվականների երկրորդ կեսն ընկած տասնամյակներում, կարելի է ասել, որ դա խիստ բարդ եւ հարափոփոխ ժամանակաշրջան էր: «Մեծ սելջուկների» տերության փլատակների վրա գոյացած ամենատարբեր չափերի եւ հզորության քաղաքական կազմավորումներն ապրում էին մի կողմից՝ ներքին խմորումների ու դժվարությունների, մյուս կողմից էլ՝ վերախմբավորման ու ավելի խոշոր պետական միավորումների մեջ համախմբվելու ժամանակաշրջան: Քանի դեռ այդ գործընթացները չէին ավարտվել, Վրաստանի եւ Հյուսիս-արեւելյան Հայաստանի համար արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր եւ ավելի շատ հարձակողական, քան պաշտպանական քաղաքականություն վարելու հնարավորություն էր ընձեռում: Այսպես, ժԲ դ. 90-ական թվականներին Անիի Շահնշահյանների թուլացումը, միաժամանակ՝ Ելտկուզյանների ու Շահ-Արմենների արտաքին քաղաքական դժվարությունները եւ ներքին պայքարը, նախադրյալներ ստեղծեցին Բագրատունյաց մայրաքաղաքի եւ Արագածոտնի ազատագրման համար: ԺԳ դ. սկզբին, մինչեւ Ելտկուզյանների աթաբեկության վերացումն ընկած ժամանակահատվածում, Զաքարյանները հաստատվեցին Հայաստանի կենտրոնական եւ հյուսիս-արեւելյան շրջաններում՝ Դվինում, Սյունիքում, Արցախում: Փոխարենը՝ իրախում Այուբյանների հաստատվելուց հետո Զաքարյաններին չհաջողվեց հիմնավորվել Հայկական

1 Տե՛ս **А. А. Хачатрян**, *Нижнеталинская арабская надпись 570/1174 года*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 195, ծանոթ. 40; **его же**: *Корпус арабских надписей Армении*, с. 46.

2 Տե՛ս **Վարդան Արեւելցի**, էջ 169: Տարօրինակ տրամաբանությամբ է առաջնորդվում Զ. Բունիատյանը, որի կարծիքով Թամար թագուհու առաջին պատմիչի տեղեկությունը՝ Անի «նախկին տերերի ազգականին» հանձնելու վերաբերյալ (*Յճճճճճճ*, II, թ. 15) հետքում է Օսման-շահի ճակատագրի մասին Վարդանի վկայությունը (**З. М. Бунятов**, նշվ. աշխ., էջ 60): Մի՞թե Սուլթանը նույնչափ իրավունք չուներ համարվելու «նախկին տերերի ազգական», որչափ նրա եղբայր Օսմանահը:

3 **V. Minorsky**, նշվ. աշխ., էջ 100: Հմմ. **А. А. Хачатрян**, *Нижнеталинская арабская надпись 570/1174 года*, с. 197, прим. 58. «Մոռանալով» հիշատակել բուն հեղինակին՝ Վլ. Մինորսկու բացատրությունը կրկնել է Զ. Բունիատյանը (**З. М. Бунятов**, նշվ. աշխ., էջ 60, ծանոթ. 70):

4 Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Ծիրակ, էջ 85; *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 47:

5 **Հ. Ղ. Ալիշան**, *Ծիրակ*, էջ 10:

*պարից եւ Երասխից հարավ ընկած հայկական գավառներում: ԺԳ դ. սկզբին՝ Կարսի գրավումից հետո, երբ տեղի ունեցավ Իկոնիայի սուլթանութեան նոր վերելքը, կայուն սահմանագիծ առաջացավ նաեւ Հայաստանի հյուսիս-արեւմուտքում: Հետեւաբար, ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին Զաքարյաններն իրական հնարավորութիւններ ունեին Հայաստանի միայն հյուսիսային, կենտրոնական եւ հյուսիս-արեւելյան շրջանների ազատագրման համար:*

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԽՈՐԵԶՄԸԱՐ ԶԱԼԱԼ ԱԴ-ԴԻՆԻ ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Վերջին խորեզմշահ Ջալալ ադ-Դինի (1220-1231) յոթնամյա պատերազմական գործողություններն Այսրկովկասում 1225-1231 թվականներին տեղական զարգացած ավատատիրական հասարակությունների վրա քոչվոր ժողովուրդների երկարատեւ քաղաքական տիրապետության հաստատման նախադուռ դարձան՝ պայմանավորելով այսրկովկասյան ժողովուրդների սոցիալական, տնտեսական եւ մշակութային կյանքի առաջընթացի ընդհատումն ու աստիճանական հետադիմությունը հետագա դարերում: Ջալալ ադ-Դինի ասպատակությունները կանխորոշեցին այն աղետները, որ շատ շուտով պատճառելու էին մոնղոլների ներխուժումները:

Կովկասագիտական գրականության մեջ խորեզմշահի գործունեությունը Այսրկովկասում մեկ անգամ չէ, որ գրավել է հետազոտողների ուշադրությունը: Սակայն նշելի է, որ ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում տեղական՝ հայկական եւ վրացական աղբյուրների հիման վրա եւ այդ պատճառով էլ հարցերի որոշակի՝ սկզբնաղբյուրների ընձեռած նյութով սահմանափակված շրջանակ է ընդգրկել: Մյուս կողմից՝ գլխավոր հայկական ու վրացական աղբյուրները, ստեղծված լինելով ուսումնասիրվող դեպքերից առնվազն մի քանի տասնամյակ անց, ոչ միշտ են ստույգ տվյալներ ընձեռում առանցքային իրադարձությունների ընթացքն ու ժամանակագրությունը պարզելու համար: Ջալալ ադ-Դինի ռազմական գործողություններն անհամեմատ ավելի լիակատար եւ համակողմանի արտացոլում են գտել մասնավորապես արաբական ու պարսկական՝ քննվող դեպքերին ժամանակակից աղբյուրներում. Իբն ալ-Ասիրի բազմահատոր Պատմությունում, Ջալալ ադ-Դինի քարտուղար, իրադարձությունների ականատես ու անմիջական մասնակից ան-Նասավիի երկում, Աբդ ալ-Լաթիֆ ալ-Բաղդադիի՝ ականատեսներից քաղած գրառումներում<sup>1</sup>: Այս սկզբնաղբյուրները ոչ միայն աչքի են ընկնում համեմատաբար ճշգրիտ ժամանակագրությամբ, հանգամանորեն են պատկերում ռազմական գործողությունների ընթացքը, գործերի տեղաշարժերի երթուղիները, այլեւ արտացոլում են ժամանակաշրջանի արտակարգ բարդ միջպետական հարաբերությունները, Ջալալ ադ-Դինի արտաքին ու ներքին քաղաքականությունը, նշանակալիորեն նպաստում են նաեւ Հայաստանում եւ Վրաստանում գոյություն ունեցող ներքին իրադրությունը ճիշտ ըմբռնելուն, տեղեկություններ են հաղորդում հայկական որոշ երկրամասերի ճակատագրի շուրջ ու հաճախ ավելի հանգամանորեն են լուսաբանում խորեզմյիների դեմ Այսրկովկասում ծավալված պայքարը: Ջալալ ադ-Դինի ասպատակությունների պատմությանն անդրադառնալն անհրաժեշտ է պարզաբանելու համար ներքին կացությունը Հայաս-

1 Այս վերջին արժեքավոր աղբյուրի վրա ուշադրություն է հրավիրել Ք. Կահենը՝ թարգմանաբար հրատարակելով որոշ հատվածներ. տե՛ս **C. Cahen, Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens.** – In: *Iran and Islam: In memory of the late Vladimir Minorsky*, Edinburgh University Press, 1971, p. 149-166: Ալ-Բաղդադի (1162/1163-1231/1232) մոտ է գտնվել իրադարձությունների ծավալման վայրերից. 1228-1229 թթ. նա ճանապարհորդել է Երզնկայից Հալեպ եւ ճանապարհին այցելել է Կամախ, Տերիկ եւ Մալաթիա:

տանում եւ Վրաստանում՝ մոնղոլական վերահաս աղետի նախօրյակին: Լուսաբանելով այն պատճառները, որ հնարավորութիւն տվեցին խորեզմշահի անհամեմատ փոքրաթիվ, պարենավորման ու համալրման առումով անհավասար պայմաններում գտնվող գորքերին հաղթող դուրս գալ վճռական ճակատամարտերում, տարիներ շարունակ գրեթե անպատիժ ավերել եւ կողոպտել ամենահեռավոր շրջանները՝ կարելի է բացահայտել նաեւ մոնղոլական նվաճումների նախահիմքերը:

Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների ծանրութիւնն առաջիններից մեկը կրեց խորեզմշահների պետութիւնը: Մինչ այդ ողջ Առաջավոր Ասիայում ամենահզոր իշխանավորներից մեկը համարվող խորեզմշահ Մուհամեդը (1200-1220) անկարող եղավ կազմակերպված դիմադրութիւն ցույց տալ թշնամուն, դիմեց փախուստի եւ մահացավ Կասպից ծովի կղզիներից մեկում: Նրա բազմաթիվ որդիներից միայն Զալալ ադ-Դինը ընդունակ գտնվեց՝ դիմադրավելու մոնղոլներին, սակայն նա էլ չկարողացավ կասեցնել թշնամու հարձակումը եւ հարկադրված փախավ Հնդկաստան: Այստեղ նա կարճ ժամանակամիջոցում իր դեմ հանեց տեղական իշխողներին եւ ստիպված էր իր հետագա հույսերը կապել Իրանի, Պարսկական Իրաքի եւ Այսրկովկասի հետ: Այդ տարածքները դեռեւս միայն թեթեւակիորեն էին ենթարկվել մոնղոլական ավերածութիւններին, հարուստ էին եւ բարեբեր, ունեին ռազմական կարողութիւն, սակայն միավորված չլինելով՝ ի վիճակի չէին լրջորեն դիմադրել խորեզմշահին: Զալալ ադ-Դինը հույս ուներ իր կողմը գրավել որոշ երկրամասերի մահմեդական բնակչութիւնը՝ ներկայացնելով իրեն իբրեւ իսլամի զինվոր ու մահմեդականների պաշտպան ընդդեմ քրիստոնյաների եւ մոնղոլների: Միայն նոր տարածքների գրավումը եւ մի գրոշի ներքո համախմբումը, մոնղոլների դեմ հզոր միավորման ստեղծումը կարող էին հույսեր ներշնչել խորեզմշահին, որ նա ուժ կունենա հաղթելու թշնամուն ու վերագարձնելու իր կորցրած թագավորութիւնը:

Այսրկովկասում իր ծրագրերի իրականացումը խորեզմշահը սկսեց դիվանագիտական քայլերով: 1225 թվականին հեշտութեամբ գրավելով Ատրպատականը եւ վերջ տալով այնտեղ Ելտկուզյանների վերջին ներկայացուցիչ Ուզբեկի (1210-1225) իշխանութեանը, Զալալ ադ-Դինը հուլիս ամսին Մարաղայից ուղերձներով դիմեց Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դին Քեյ-Կուբադին (1219-1237), Հյուսիսային Միջագետքի եւ Հարավային Հայաստանի որոշ մասերի տիրակալ ալ-Աշրաֆ Մուզաֆար ադ-Դին Մուսեին (1210-1237), Դամասկոսի տեր ալ-Մուզաֆա Շարաֆ ադ-Դին Իսեին (1218-1227) եւ Եգիպտոսի իշխող ալ-Քամիլ Մուհամադին (1218-1238): Ծանուցելով իր նվաճումների մասին եւ հայտարարելով իրեն մահմեդականների պաշտպան՝ խորեզմշահը հավաստում էր իր բարեկամական մտադրութիւնները<sup>1</sup>: Շատ շուտով, սակայն, ակնհայտ դարձավ, որ նա դիվանագիտական հարաբերութիւններ հաստատելու իր փորձերով ցանկանում էր ժամանակ շահել եւ ազատել ձեռքերը Հայաստան ու Վրաստան արշավելու նպատակով:

Վրաստանի վրա հարձակվելու գաղափարը նոր չէր խորեզմշահների համար: Ըստ ան-Նասավիի՝ 1217 թվականին, երբ Ելտկուզյան աթաբեկ Ուզբեկն ընդունեց խորեզմշահ Մուհամեդի գերակայութիւնը, վերջինս 50 հազարանոց զորք էր նախապատրաստում Վրաստան արշավելու մտադրութեամբ: Ծիշտ է, այդ ձեռնարկումն ի կատար չածվեց, քանզի մինչ այդ Բաղդադի վրա շարժվելիս խորեզմցիների զորքը

1 St'u Мухаммад ан-Насави, с. 155, 357-359.

մեծ կորուստներ կրեց եւ խորեզմշահը վերադարձավ հայրենիք, սակայն վրաց արքունիքը շտապեց նվերներ ուղարկել Մուհամեդին<sup>1</sup> ու մինչեւ 1223 թվականը, այսինքն՝ Մուհամեդի մահը եւ մոնղոլական առաջին արշավանքի ավարտը, փաստորեն որեւէ հարձակում չձեռնարկեց Ուզբեկի տիրույթների վրա<sup>2</sup>: Մուհամեդի ծրագրերի մասին առավել ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ալ-Բաղդադին՝ պատմելով իր մայրաքաղաքը Տփղիսը դարձնելու եւ «Ռումի [սուլթանության], Հայաստանի, Դիշաղաց աշխարհի, արեւելքի եւ արեւմուտքի բոլոր երկրների վրա կառավարելու»<sup>3</sup> խորեզմշահի մտադրությունների մասին:

Խորեզմցիների ներխուժման մասին ընդարձակ տեղեկություններ հաղորդող Կիրակոս Գանձակեցին հետեւյալն է գրում 1225 թ. դեպքերի մասին. «Յառաջ ասացեալ ազգն հիւսիսոյ արեւելից, որ թաթարն անուանէր, ի նեղ էարկ զսուլտանն Խորասանայ գլխալարդինն, եւ եհար զգօրս նորա, եւ տապալեաց զաշխարհս նորա: Եւ հանին զնա փախստական ընդ աշխարհն Աղուանից. եւ եկն նա ի քաղաքն Գանձակ եւ առ զնա: Եւ կուտեաց իւր զօրս անթիւս ի պարսից եւ ի տաճկաց եւ ի թուրքաց եւ եկն յաշխարհս Հայոց»<sup>4</sup>: Այսպիսով, ըստ Կիրակոս Գանձակեցու, խորեզմցիները Հայաստան են մտել Գանձակը գրավելուց հետո, Աղվանքի վրայով: Այլ աղբյուրների միահամուռ վկայությունները, սակայն, ստիպում են կասկածի տակ առնել նրա հաղորդման ճշգրտությունը եւ բոլորովին այլ կերպ պատկերել Ջալալ ադ-Դինի զորքերի երթուղին: Վրաց ժամանակագրի վկայությամբ՝ խորեզմցիները նախ «եկան հասան Ատրպատական՝ շուրջ հարյուր քառասուն հազար մարդ: [Ապա] հասան Երկաջնաբազուկների երկրին, որովհետեւ Դվինը պատկանում էր Իվանե աթաբեկին, իսկ Անին տվել էր իր եղբորորդի մանդատով Ռուխուցես Շանշեին: Այս խորեզմցիք եկան Լաշա-Գեորգիի մահվան երրորդ տարին՝ գերելու եւ ավերելու Դվինն ու նրա շրջակա երկրները»<sup>5</sup>: Վարդան պատմիչի հաղորդմամբ եւս՝ խորեզմշահի հարվածը նախ հասել էր հայոց միջնաշխարհին. «ընդ Աղլպարական երկիր ի յնստանն Հայոց, առնուն զնա եւ լնուն զղաշտն լայնատարած վրանաւք»<sup>6</sup>: Նույնն է վկայում նաեւ Ստեփանոս Օրբելյանը. «...գայ [Ջալալ ադ-Դինը - Հ. Մ.] ընդ Պարսկաստան եւ անցեալ ընդ Ատրպատական՝ մտանէ յաշխարհս Հայոց»<sup>7</sup>: Ուստի՝ հայ-վրացական զորքերը փորձեցին կասեցնել թշնամու հարձակումը ոչ թե Գանձակ - Տփղիս ուղու վրա, ինչպես

1 Նույն տեղում, էջ 61:

2 Տե՛ս Ա. Ի. Ծահնագարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 71:

3 **C. Cahen**, *Աշխ.*, էջ 151: Ուստի հավանական չէ Ի. Պետրուշենսկու ենթադրությունը, թե Վրաստանի դեմ պատերազմի մեջ խորեզմշահին ներքաշել է նրա վեզիր Ծարաֆ ալ-Մուլքը (**И. П. Петрушевский**, *Вазир Шараф ал-Мульк*, – В кн.: Ближний и Средний Восток, Москва, 1962, с. 37).

4 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 224:

5 *Ջեժեղոս Եւթոյնըծա*, II, ճջ. 168: *Վրաց ժամանակագրություն*, էջ 59:

6 **Վարդան Արեւելցի**, էջ 188: Հայ պատմիչը խոսում է խորեզմշահի երկու որդիների հարձակման մասին, քանի որ Հնդկաստանից վերադառնալուց հետո Իրաքում Ջալալ ադ-Դինին էր միացել նրա եղբայր Ղիյաս ադ-Դինը (տե՛ս **Мухаммад ан-Насави**, էջ 142): Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու Պատմությունների հիման վրա կազմված Անանուս Սեբաստացու Ժամանակագրությունում իրադարձությունները հիմնովին խաթարված են ներկայացված, իբրեւ թե խորեզմշահի երկու որդիներն իրենց երկրից հալածել են Խորասանի սուլթան Ջալալ ադ-Դինին, որն էլ արշավել է Հայաստան ու Վրաստան (տե՛ս *Մանր ժամանակագրություններ*, հտ. II, էջ 134, 137-138):

7 **Ստեփանոս Օրբելյան**, *Պատմություն*, էջ 292:

սպասելի կլինեն, եթե խորեզմշահը ներխուժեր Աղվանքից, այլ վճռական մարտի են ելել Գառնիում: Մասնագիտական գրականության մեջ այսօր էլ տարբեր, երբեմն հակասական տեսակետներ են հայտնվում այդ ճակատամարտի ժամանակի, ընթացքի, մասնակից կողմերի ուժերի հարաբերության, հայ-վրացական բանակի պարտության պատճառների, հետեւանքների եւ այլ հարցերի վերաբերյալ, ուստի այդ խնդիրների վերստին արծարծումը կարելու է:

Նորահայտ թշնամու դեմ ճակատամարտելու համար Վրաց Ռուսուդան թագուհին (1223-1245) ուղարկեց աթաբեկ եւ ամիրսպասալար Իվանե Զաքարյանին, որը, «ժողովեալ ... զամենայն զոյժ եւ զօրութիւն Հայոց եւ Վրաց»<sup>1</sup>, վճռական մարտի ելավ Կոտայք գավառում, Գառնի գյուղաքաղաքի մոտ: Հայ-վրացական բանակի հաղթանակը կնշանակեր պարտության մատնել եւ արտաքսել թշնամուն, իսկ Զալալ ադ-Դինի հաջողությունը նրան թույլ կտար շարժվել ուղղակի Տփղիսի վրա:

Սկզբնաղբյուրները բավական տվյալներ են ընձեռում՝ պարզելու հակառակորդ զորաբանակների թվաքանակը: Ըստ Իբն ալ-Ասիրի՝ հայ-վրացական զորքերի թիվը հասնում էր 70 հազարի<sup>2</sup>, սակայն ավելի ստույգ կարելի է համարել ան-Նասավիի ու Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության համահնչյուն վկայությունները<sup>3</sup> եւ այդ թիվը ճշգրտել 60 հազարով: Այսպիսով, հայ-վրացական զորքերի թվաքանակի հարցում աղբյուրները գրեթե նույնն են հաղորդում, ինչը չի կարելի ասել խորեզմշահի բանակի վերաբերյալ: Վրաց ժամանակագիրը խորեզմցիների զորքերի քանակը հաշվում է 140 հազար, իսկ Վարդան Արեւելցին այդ թիվը հասցնում է 200 հազարի<sup>4</sup>: Այս խիստ չափազանցված թվերին հակառակ՝ Ռաշիդ ադ-Դինը խորեզմցիների բանակի մեծությունը սահմանափակում է 30 հազարով<sup>5</sup> եւ բավական դժվար խնդրի առաջ է կանգնեցնում հետազոտողներին: Հարցի պարզաբանմանը, թվում է, կարող են նպաստել ալ-Բաղդադիի վկայությունները, որոնք նա քաղել է վեց տարի Տփղիսում ապրած մի բժշկից: Վերջինիս կարծիքով՝ խորեզմցիների թվաքանակը չի հասել 100 հազարի, այլ եղել է, թերեւս, 60 հազար<sup>6</sup>: Եթե նկատի առնենք ան-Նասավիի հաղորդումն այն մասին, որ մինչեւ Գառնիի ճակատամարտը Զալալ-ադ-Դինի զորքերի մեծ

1 Նույն տեղում:

2 Իբն ալ-Ասիր, էջ 321:

3 Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 39; Мухаммад ан-Насави, էջ 156:

4 Չե՛ռտլոս Ենթոջըն, II, թ. 169; Վրաց ժամանակագրություն, էջ 59; Վարդան Արեւելցի, էջ 187:

5 Рашид ад-Дин, т. I, кн. II, М.-Л., 1952, с. 242. Պարսիկ պատմիչ Ջուվեյնի (տե՛ս Ջոջջոճոճ Ենթոջըն Ենթոջըն Յեյնեյթ, թ. 29), ընդհակառակը, ավելի քան 30 հազար է հաշվում հայ-վրացական զորքերի թիվը: Այսպիսով, Ջուվեյնիի եւ Ռաշիդ ադ-Դինի տեղեկությունները հակասում են իրար, քանի որ նրանցից որեւէ մեկը, ինչպես երևում է, սխալմամբ հակառակորդ կողմին է վերագրել 30 հազար թվաքանակը: Թե՛ն Ջուվեյնի ժամանակով նախորդում է Ռաշիդ ադ-Դինին, եւ թվում է, թե սխալը պետք է թույլ տար առաջինի ասածները հաճախ կրկնող Ռաշիդ ադ-Դինը, որոշ նկատառումներ մտածել են տալիս թյուրիմացություն ակնկալել Ջուվեյնիի երկում: Երկու հեղինակն էլ չափազանցված են ներկայացնում իրենց հավաստակից Զալալ ադ-Դինի հաջողությունները, եւ դժվար է կարծել, որ նրանք իրականից երկու անգամ փոքր ճշեին խորեզմշահի հակառակորդ բանակի թվաքանակը: Ուստի պետք է կարծել, որ ավելի ճիշտ է Ռաշիդ ադ-Դինի վկայությունը, ըստ որի խորեզմշահի զորքերի թիվը, ինչպես եւ սպասելի էր, նկատելիորեն սակավացված է:

6 С. Cahen, Աշվ. աշխ., էջ 159:



մասը մեկնել էր այլեւայլ երկրամասեր, ապա հասկանալի կդառնա հայ-վրացական բանակի քանակական գերակշռության մասին խորեզմշահի կենսագրի հավաստիացումը<sup>1</sup>: Այդ գերակշռությունը, այնուամենայնիվ, այնքան էլ բացահայտ չի եղել, ինչպես փորձում են ներկայացնել ան-Նասավին եւ Ռաշիդ ադ-Դինը: Պետք է անպայման հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ Զալալ ադ-Դինի բանակին, «անհավատների» դեմ ելնելու նրա կոչերի ազդեցությամբ, հաճախ ուղեկցում էին նաեւ որոշ տեղական մահմեդական իշխանավորների ու զանազան քոչվոր թուրքմենական ցեղերից կազմված զորաջոկատներ<sup>2</sup>:

Սկզբնաղբյուրները բավական համերաշխ են ներկայացնում ճակատամարտից առաջ երկու կողմերի զորքերի նախնական դասավորությունը, կովի ընթացքն ու ելքը: Հայ-վրացական զորքերի՝ Գառնիի մոտ, բարձունքի վրա տեղակարգվելու մասին ան-Նասավիի վկայությունը<sup>3</sup> հաստատում եւ լրացնում են Կիրակոս Գանձակեցին («Խւանէ ... կայր հանդէպ նոցա ի վերոյ»)՝<sup>4</sup> եւ Միխայել Ասորու ժամանակագրության հայ շարունակողը («Իջաւ [Իվանեն - Հ. Մ.] ի լեառն Գառնոյ, որ կոչի Աղուջերմն»)՝<sup>5</sup>: Իվանէի բանակի այս գերադասելի դիրքը, որը հնարավորություն էր ընձեռում հարձակման համար, հայ-վրացական զորքերը չօգտագործեցին: Կիրակոս Գանձակեցին նույնիսկ Իվանէին մեղադրում է երկշտություն մեջ՝ «տեսեալ զնոսա [խորեզմցիներին - Հ. Մ.] զանգիտեաց, զետեղեալ ի տեղուջն»<sup>6</sup>: Նկատելով դա՝ Զալալ ադ-Դինը որոշեց նախահարձակ լինել. խորեզմշահի հետ միասին գրոհի նետվեց նրա բանակի ձախ թեւը, որտեղ դասավորվել էին նետածիգները՝ հակառակորդին հեռվից հարվածելու համար<sup>7</sup>: Իվանէ աթաբեկը խորեզմցիների հարձակմանը դիմագրավելու համար ուղարկեց առաջապահ ջոկատը՝ Շալվա եւ Իվանէ Ախալցիխեցի իշխանների գլխավորությամբ: Ինչպես պատմում է Վրաց ժամանակագիրը, «Երբ մերձեցան [վրաց] նախահարձակներն ու սուլթանը, այն ժամանակ Իվանէ աթաբեկը ոտը կախ զցեց: Ասում են, թե թշնամություն կար [նրա] եւ ախալցիխեցի Շալվայի ու Իվանէի միջեւ ... Վրաստանի հիմնովին ավերմանը դրդեց, ինչպես ստորեւ կտեսաւ, երբ Իվանէ աթաբեկը մարտի ժամին ետ կանգնեց եւ այլեւ չէր գնում դեպի մարտնչողները: Մինչեւ բոլոր նախահարձակները մարդ ուղարկեցին [Իվանէ աթաբեկի] մոտ եւ ասացին. «[ընդհուպ] մոտեցել ենք սուլթանին ու նրա բանակին, մենք խիստ սակավաթիվ ենք, եւ ծանր մարտ է մեզ սպասում: Ուղարկիր մեզ [օգնության] թագավորական քաջ զորքերն ու քաջությունը քո»: Այսպես երկու-երեք անգամ [մարդ] ուղարկվեցին, սակայն նա ոչինչ չէր պատասխանում... Իվանէ աթաբեկն ու վրացական զորքը տեսնում էին ուժգին մարտը եւ չէին խղճում ազգակիցներին ու հավատակիցներին՝ Քրիստոս խոստովանող

1 Мухаммад ан-Насави, с. 157.

2 Խորեզմցիների բանակի խալտաբդետ կազմի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ կուտեաց [խորեզմշահը - Հ. Մ.] իւր զօրս անթիւս ի պարսից եւ ի տաճկաց եւ ի թուրքաց» (Կիրակոս Գանձակեցի, էջ 224): Զալալ ադ-Դինի եւ թուրքմենական ցեղերի ու տեղի տիրողների համագործակցության մասին այլեւայլ աղբյուրով խոսում է նաեւ ան-Նասավին (Мухаммад ан-Насави, с. 149, 160-161, 279-280).

3 Мухаммад ан-Насави, с. 158.

4 Կիրակոս Գանձակեցի, էջ 224-225:

5 Միխայել Ասորի, էջ 527:

6 Կիրակոս Գանձակեցի, էջ 225:

7 Мухаммад ан-Насави, с. 157-158.

Թորեցիներին ու նրանց հետ՝ բազում անվանիների, այլ կանգնել էին հեռվում, եւ Իվանն աթաբեկը շեւ կամենում օգնել, որի արաբի պատնառը թշնամանքն էր, այլ ոչ թե վախը»<sup>1</sup>: Իվանեի եւ Շալվաչի ջանքերը նման պարագաներում զուր անցան. «Շալվան հենց տեղում գերվեց հույժ մեծ բազմութեան կողմից, իսկ Գառնիի սարերի ծերպերին ապաստանած Իվանեն վերելից գցված քարով սպանվեց»<sup>2</sup>: Ճակատամարտի վախճանը պատկերավոր է նկարագրում Կիրակոս Գանձակեցին. «Իսկ զօրն վրաց այնմ ուշ ոչ եղին, այլ փախեան ի տեղուջէ անտի, մինչեւ այր զընկեր ի փախուստ ոչ գիտէր: Եւ երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան ի վախից ի վայր մղեալք՝ ի ձոր անդր ընուին ի գլուխս քաղաքագեղն Գառնույ: Եւ իբրեւ տեսին զայն զօրքն սուլտանին, զհետ մտեալ՝ զբազումս կոտորեցին եւ զայլս գահավէժ արարին»<sup>3</sup>: Ինքը՝ Իվանն աթաբեկը, հազիվհազ կարողացավ փախչել եւ ապաստանել Գեղի (Քեղի) ամրոցում<sup>4</sup>, որտեղից էլ վերադարձավ Բշնի<sup>5</sup>: Գառնիի ճակատամարտում Զալալ ադ-Դինի հաղթանակը սովորական չէր այն առումով, որ ձեռք բերվեց ոչ միայն եւ ոչ այնքան նրա զորքերի խիզախութեան շնորհիվ (ավելին՝ խորեզմշահը դժգոհ էր մնացել իր բանակի աջ թեւի գործողություններից)<sup>6</sup>, այլ հակառակորդ բանակի զարմանալի թուլ ղեմադրության հետեւանքով<sup>7</sup>: Այս հանգամանքը հայ-վրացական զորքերի պարտության պատճառների հանգամանալից պարզաբանմանն առավել մեծ կարեւորություն է հաղորդում<sup>8</sup>:

Քննվող խնդիրը լուսաբանող սկզբնաղբջուրներից ամենաուշագրավ վկայությունները պատկանում են վրաց ժամանակագրին, որը Գառնիում հայ-վրացական զորքերի պարտության հիմնական պատճառ է համարում միջավատատիրական հակասություններն ու պայքարը: Պատմիչի այդ տեղեկությունները քննության է առել Իվ. Զավախիշվիլին եւ այլ կերպ է մեկնաբանել Գառնիի ճակատամարտում Իվանն

1 յճժժժժժժ ՅՅՅՅՅՅՅՅ, II, ՅՅ. 170; *Վրաց ժամանակագրություն*, էջ 60: Ընդգծումներն իմն են:

2 Նույն տեղերում:

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 225: Հմմ. Մխիթար Այրիվանեցի, էջ 66:

4 Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 293; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 39: Ամրոցի անունը ճեղագրողները երբեմն հիշատակում են «Գեղե» (Քեղե) ձեռով (տե՛ս Լ. Մանանդյան, *Աշխ.*, էջ 199; Լ. Լ. Բաբայան, *Աշխ.*, էջ 185, օ. ՋՅՅՅՅՅՅՅՅ, *յճժժժժժժ* յճժժժժժժ, III, էջ 54, ծնթ. 2), այսպիսով ուղղական ընկալելով հոլովածները՝ առանց նկատի ունենալու «ի»-ով վերջացող հատուկ անունների հոլովական առանձնահատկությունը (Ս. Ա. Ավագյան, *Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրություններում*, – «Մառը եւ հայագիտության հարցերը», Եր., 1968, էջ 129): Ամրոցի պատմության եւ տեղադրության մասին տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 33; Լ. Մ. Յովհաննիսեան, *Հայաստանի բերդերը*, Վեներտիկ, 1970, էջ 372-375:

5 յճժժժժժժ ՅՅՅՅՅՅՅՅ, II, ՅՅ. 171; *Վրաց ժամանակագրություն*, էջ 61: Զ. Բունիաթովին թվացել է, թե Իվանն Գառնիից անմիջապես փախել է Բշնի, քանի որ պատմիչը նշում է Իվանեի վերադարձը. «Իվանն աթաբեկը վերադարձավ Բշնի, սուլթանը՝ Ատրպատական եւ Նախիջեան» (տե՛ս *Мухаммад ан-Насави*, с. 363, прим. 6):

6 *Мухаммад ан Насави*, с. 160.

7 Աղբյուրները չեն հաստատում այն կարծիքը, թե «Գառնիի ճակատամարտը չափազանց համար բնույթ է կրել» (տե՛ս Լ. Լ. Բաբայան, *Աշխ.*, էջ 135):

8 Անընդունելի է Գ. Հովսէփյանի այն բացատրությունը, թե հայ-վրացական զորքերը «չարաչար պարտություն կրեցին իրենց անփութության շնորհիվ» (Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 45):

աթաբեկի վարքագիծը: Գիտնականն անհավանական է համարում աթաբեկի գործողությունների նպատակադիր լինելը, քանի որ պարտություն դեպքում հենց Իվանեն էր պատասխանատվություն կրելու: Պատմիչի՝ «ասում են» արտահայտության վրա հենվելով, նա կարծում է, որ ԺԴ դարում ապրած մատենագիրն օգտվել է հետագայում հորինված լուրերից: Իվ. Զավախիշվիլին առավել հավանական է համարում, որ Իվանեն չի կարողացել ճիշտ կողմնորոշվել վճռական պահին եւ այդ պատճառով էլ անհրաժեշտ ժամանակ կռվի չի նետել իր բանակի հիմնական ուժերը<sup>1</sup>:

Նախ՝ Իվանեի արարքի ոչ պատահական լինելու մասին: Վրաց պատմիչն իբրեւ փաստ է արձանագրում եւ ոչ թե ենթադրություն անում, թե Իվանեն դիտմամբ չէր ցանկանում օգնել իր առաջապահ ջոկատին: Հեղինակի՝ «ասում են» արտահայտությունը վերաբերում է սոսկ այն հարցին, թե ինչու էր այդպես վարվում աթաբեկը՝ ամենեւին իսկ կասկածի տակ չառնելով բուն իրողությունը<sup>2</sup>: Աթաբեկի ռազմական սխալի մասին կարելի կլինեք խոսել, եթե նա շուտ կամ ուշ մարտի մեջ մտնեք, սակայն Իվանեն գերադասել է ընդհանրապես կռվին չմասնակցել: Զէ՞ որ նրա համար միանգամայն պարզ պետք է լինեք, որ Ախալցխեցի եղբայրների ջոկատը, որը, ըստ ալ-Բաղդադիի արժեքավոր վկայության, բաղկացած էր ընդամենը 7 հազար մարտիկից<sup>3</sup>, ի վիճակի չի լինելու երկար ժամանակ դիմադրել բացահայտորեն գերակշիռ ուժեր ունեցող թշնամուն:

Պետք չէ մոռացության տալ եւս մեկ կարեւոր հանգամանք. Իվանեն կարող էր եւ այդ պահին դեռեւս չզգալ իր քայլի ճակատագրական լինելը, քանի որ, ինչպես ցույց է տվել Իվ. Զավախիշվիլին, վրաց արքունիքում այն մտայնությունն էր տիրում, թե իրենք են հաղթել մոնղոլներին 1220-1221 թվականներին եւ մոնղոլներից պարտություն կրած Զալալ ադ-Դինը վտանգավոր հակառակորդ չէ իրենց համար<sup>4</sup>:

Որ Իվանեի գործողությունները պատահական չեն դիտվել եւ դատապարտվել են ժամանակակիցների ու Ռուսուղան թագուհու կողմից, պարզորոշ երեւում է Վրաց ժամանակագրի այն վկայություններից, որոնք վերաբերում են Զալալ ադ-Դինի դեմ տրված երկրորդ մեծ մարտին՝ Մինդորիի ճակատամարտին: Ըստ պատմիչի՝

---

1 **Օ. ԺԱՅՆԻՍՅԱՆ**, *Վրացական ժողովրդական պատմություն*, III, էջ 52-53: Ինչպես երեւում է, այս հարցում Իվ. Զավախիշվիլու իրական կարծիքին անհաղորդ է մնացել Զ. Բուրխաթովը, որն անհիմն հպտարարում է, թե ականավոր պատմաբանն ընդունում է Գառնիի ճակատամարտի պարտության պատճառների վերաբերյալ Վրաց ժամանակագրի բացատրությունը (**Мухаммад ан-Насави**, с. 363): Վրացագիտական Արագույն գրականությունում Զուվեյնիի տեղեկությունների հիման վրա Գառնիում պարտության հնարավոր պատճառ է ենթադրվում խրեզմիների հանկարծակի գրոհը, բայց մյուս աղբյուրների ավելի մանրամասն նկարագրությունները, ինչպես տեսանք, ակնհայտորեն ցույց են տալիս, որ հալ-վրացական բանակի զորահրամանատարի համար Զալալ ադ-Դինի գործողություններն անակնկալ չեն եղել: Նշենք նաեւ, որ առաջապահ ջոկատին օգնության հասնելու խնդիրը Գառնիում այնքան ակնհայտ է եղել, որ Իվանեի տարեց լինելու պարագայում անգամ փորձառու զորավարի համար դա լիովին հասկանալի պետք է լինեք: «Վրաստանի պատմության ակնարկներում» Գառնիի պարտությունը նաեւ մասամբ Իվանեի ծեր լինելու հանգամանքով է բացատրվում (*Նախաբանական օրագրություն*, III, թ. 540):

2 Գառնիի ճակատամարտի մասին Վրաց ժամանակագրի պատմածին կարելի է հավատ ընծայել, քանի որ նա 1226 թ. մարտին Տիգրիսի գրավման դեպքերը շարադրելիս օգտվում է «ոմն մովիմեցի արեղայի» երկից, հետեւաբար, հնարավոր է՝ նախորդ իրադարձությունները ավանդելիս եւս ստուգապատում աղբյուր է ունեցել ձեռքի տակ:

3 **C. Cahen**, *Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens*, p. 159.

4 **Օ. ԺԱՅՆԻՍՅԱՆ**, *Վրացական ժողովրդական պատմություն*, III, էջ 48-49:

թագուհին այդ անգամ մարտի գնացող զորքերի հետ չի ուղարկել արքայական դրոշմը՝ «Իվանե աթաբեկի կատարածի պատճառով»<sup>1</sup>:

Քննենք նաև այն հարցը, թե աթաբեկի համար իրո՞ք այդքան ազդու հանգամանք էր թագուհու առաջ պատասխան տալու հարկադրանքը: Վերհիշենք թեկուզե՛ս ԺԲ դ. երկրորդ կեսի պատմությունը, երբ Գագի, Կարկառի ճակատամարտերի եւ 1174 թ. Անիի դեպքերի ժամանակ մեծատոհմիկ ավատատերերը եւ, առաջին հերթին, ամիրսպասալար Իվանե Օրբելին, բնավ իսկ չերկնչելով համեմատաբար ավելի մեծ փաստական իշխանություն ունեցող, վճռական ու հաստատակամ Գեորգի Գ-ից (1156-1184), չէին վախենում անգամ թշնամու հետ համագործակցելուց<sup>2</sup>: Պետք է անպայման նկատի ունենալ նաև այն անժխտելի հանգամանքը, որ Թամար թագուհու (1184-1207) գահակալության վերջին տարիներին սկսված թագավորական իշխանության թուլացումը Լաշա-Գեորգիի (1207-1223) եւ Ռուսուդանի օրոք առավել մեծ շափով էր իրեն զգացնել տալիս, որը եւ չէր կարող դուռ չբացել մեծատոհմիկ ազնվականության ներսում նոր բախումների ու պայքարի համար: Թամար թագուհու մահվանը հաջորդած ներդասակարգային խլրտումների մասին պատմում է նույնիսկ Իբն ալ-Ասիրը<sup>3</sup>, իսկ հայկական աղբյուրները հիշատակում են միջավատատիրական պայքարի մի բնորոշ դրվագ՝ մոնղոլական առաջին արշավանքի պատմությունն ավանդելիս<sup>4</sup>: Ուստի Իվանեի ու Շալվա եւ Իվանե Ախալցխեցիների միջև «թշնամություն» ամենեւին էլ անհավանական չէ, մանավանդ երբ փորձում ենք բացահայտել այդ հակառակության հիմքերը: Ն. Բերձենիշվիլու ուշագրավ կոահմամբ՝ երկպառակությունն արդյունք կարող էր լինել այն պայքարի, որ մղում էին երկու Իվանեներն աթաբեկության պաշտոնի շուրջ<sup>5</sup>, սկսած ԺԳ դ. սկզբից: Հիշենք, որ Կարսի գրավումից հետո Թամար թագուհին հենց Իվանե Ախալցխեցուն էր շնորհել Կարսի ամիրայից ամիրայի տիտղոսը եւ Լաշա-Գեորգիի խնամակալությունը՝ աթաբեկությունը<sup>6</sup>: Թեեւ այդ կարեւորագույն պաշտոնի շուրջ մղված պայքարը լուսաբանող տվյալները կցկտուր են, անկասկած է, որ աթաբեկության հանձնումը Իվանե Զաքարյանին՝ բոլորովին էլ այնպես խաղաղ ու կամավոր չի կատարվել, ինչպես կամենում է ներկայացնել Թամար թագուհու առաջին պատմիչը: Նրա պատմածն ավելի շուտ կասկածել է տալիս, որ Իվանե ինքն է թագուհուն հարկադրել իրեն հանձնել աթաբեկության պաշտոնը, այդպիսով այն խլելով, թերեւս, Իվանե Ախալցխեցուց: Իվանե Զաքարյանի եւ Ախալցխեցիների միջև պայքարը, ընդ որում՝ դարձյալ ի վնաս վերջիններիս, շարունակվում էր, գուցե, նաև հետագայում: Թվում է, թե այդ բախումների արդյունքը նկատի ունի Վրաց ժամանակագիրը, երբ պատմում է Քոսե-դաղի (Չմանկատուկի) 1243 թ. նշանավոր ճակատամարտին Իկոնիայի սուլթանի կողմից մասնակցող վրաց իշխանների մասին. «Ձորապետների

1 յերտոլոս Յեռցրեմ, II, ՅՅ. 183; Վրաց ժամանակագրություն, էջ 70:

2 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 109-121:

3 Իբն ալ-Ասիր, էջ 291:

4 Մոնղոլների դեմ կռիվի թե՛մ պահին Մանասագոմ բերդի տեր Համիդուլան կտրել էր Իվանե աթաբեկի ձիու ոտքի ջիլերը (տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 21-22, հմմ. Վարդան Արեւելցի, էջ 186):

5 Ե. Ծերմյենցով, Նախաժողովրդական ինքնիշխանության, IX, տժ., 1979, ՅՅ. 184, 202.

6 յերտոլոս Յեռցրեմ, II, ՅՅ. 59; Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Բ, էջ 20:

նշանակեց [Ղիսա ադ-Դին սուլթանը – Ն. Մ.] Շարվաշիս-ձե Ափխազին՝ Գարդին անվամբ... նրա հետ՝ Ախալցխիսելի-Թորելի Շավկայի որդի Փարադավլային, որը փախստական գնացել էր սուլթանի մոտ եւ քաջ ու մարտերում անվանի մարդ էր»<sup>1</sup>: Երկու տոհմերի միջեւ թշնամությունը կարող էր հանդարտվել ԺԳ դ. 40-ական թթ. կեսերից, երբ Զաքարյանների գերակշռությունն ակնհայտ էր, իսկ Իվանե Ախալցխիսեցու որդի Դավիթը ծառայում էր Ավագ Զաքարյանի մոտ՝ իբրեւ էջիբ (հեջուբ)<sup>2</sup>:

Հայ-վրացական զորքերի միասնությունն ու համերաշխությունը զգալի հարված էր հասցնում նաեւ դավանական հարցերում Իվանե աթաբեկի դիրքորոշումը: Գրեթե բոլոր հայկական աղբյուրները Գառնիի պարտությունը ներկայացնում են իբրեւ նախախնամության պատիժ՝ ի պատասխան Իվանեի կրոնական անհանդուրժողականության<sup>3</sup>: «Իվանեի բռնած այս դիրքը հայ եկեղեցու հանդեպ, անշուշտ, մի մեծ սխալ էր, որովհետեւ նրա կրոնական անհամբերատարությունը դժգոհություն եւ պառակտում էր առաջացնում հայերի մեջ, որոնք վրացիների հետ միացած պետք է պաշտպանեին Հայաստանն ու Վրաստանը արտաքին ահեղ թշնամիներից», – նկատում է Հակոբ Մանանդյանը<sup>4</sup>: Կարելի է ենթադրել, որ Իվանեի՝ կովի մեջ չմտնելու որոշման վրա ազդեցին նաեւ հայկական զորամասերի դժգոհ տրամադրություններն այն իմաստով, որ աթաբեկը հույս չէր դնում մարտի մեջ մտնելու նրանց պատրաստակամության վրա: Այս տեսանկյունից, թերեւս, պատահական չպետք է համարել այն փաստը, որ առանց մարտի մեջ մտնելու Այունիք վերադարձավ Լիպարիտ Օրբելյանն իր զորամասով<sup>5</sup>:

Ցավոք, աղբյուրները հնարավորություն չեն ընձեռում՝ պարզելու, թե Գառնիում Իվանեի բռնած դիրքորոշման վրա ի՞նչ չափով էին ազդել Ռուսուդանի թագուհու հետ նրա հարաբերությունները: Իբն ալ-Ասիրը, պատմելով Ռուսուդանի կողմից նորանոր ամուսնությունների հարց արծարծելիս այդ մտադրությունների հանդեպ թշնամական դիրքի մասին, առաջին հերթին հիշատակում է Իվանեին<sup>6</sup>: Այդ լարված հարաբերությունները թագուհու եւ աթաբեկի միջեւ արդյո՞ք հետք չթողեցին Իվանեի ճակատագրական որոշման վրա:

Այսպիսով, Գառնիի ճակատամարտում հայ-վրացական զորքերի կրած պարտության պատճառների շարքում վճռական դեր պետք է հատկացնել ոչ թէ զուտ ռազմական գործոններին, այլ, ամենից առաջ, ներքին անհամերաշխությանն ու միջանձնային տարաձայնություններին, որոնք էլ որոշեցին ճակատամարտի դաժան ելքը՝ ամենածանր կորուստներ պատճառելով հայ-վրացական բանակին (անՆասավին գոհվածների թիվը համարում է 4 հազար<sup>7</sup>, իսկ Իբն ալ-Ասիրն այդ թիվը հասցնում է 20 հազարի<sup>8</sup>):

1 յճրտլոս ցեօջրջծ, II, թ. 192; Վրաց ժամանակագրություն, էջ 77:

2 յճրտլոս ցեօջրջծ, II, թ. 197; Վրաց ժամանակագրություն, էջ 80-81:

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 224; Վարդան Արեւելցի, էջ 188; Միխայել Աստրի, էջ 527:

4 Ն. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198:

5 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն, էջ 293:

6 Իբն ալ-Ասիր, էջ 314:

7 Мухаммад ан-Насави, с. 158.

8 Իբն ալ-Ասիր, էջ 321:

Սկզբնաղբյուրները Գառնիի ճակատամարտը միաբերան թվագրում են 1225 թվականով, սակայն փոքր-ինչ տարբեր են նշում ամիսը: Իբն ալ-Ասիրը ճակատամարտը դնում է հիշրեի 622 թվականի շաբան ամսին<sup>1</sup> (1225 թ. օգոստոսի 8 – սեպտեմբերի 5), սակայն ան-Նասավին այն ավելի վաղ ժամանակով է թվագրում: Ըստ նրա՝ Ջալալ ադ-Դինը Դվինից Թավրիզ է մեկնել հիշրեի 622 թվականի ռաջաբ ամսին<sup>2</sup> (1225 թ. հուլիսի 9 – օգոստոսի 7), հետեւաբար՝ մինչեւ այդ իրադարձությունը տեղի ունեցած Գառնիի ճակատամարտը, համաձայն խորեզմշահի կենսագրի հաղորդումների, ընկնում է հուլիսին կամ օգոստոսի սկզբին: Այս ժամանակագրական տվյալները գայթակղեցուցիչ եզրակացություն են հուշում՝ ճակատամարտը թվագրել ռաջաբի եւ շաբանի սահմանագծային օրերով՝ օգոստոսի 7-8-ով, սակայն Իբն ալ-Ասիրի հստակ ցուցումները հարկադրում են մերժել նման վարկածը: Պատմիչի տեղեկությունների համաձայն՝ Ջալալ ադ-Դինը Մարաղան գրավել էր 1225 թ. հուլիսին, Թավրիզին տիրել էր հիշրեի 622 թվականի ռաջաբ ամսի 17-ին (1225 թ. հուլիսի 25)<sup>3</sup> եւ այնուհետեւ արշավել էր Հայաստան ու Վրաստան: Այս հյուսիսէն ժամանակագրությունը հաստատվում է Իկոնիայի սուլթան Ալա ադ-դին Քեյ-Կուբադին Ջալալ ադ-Դինի հղած ուղերձի տվյալներով, որի բնագիրը պահպանվել է Իբն Բիբիի աշխատությունում: Այդ ուղերձը գրվել է հիշրեի 622 թվականի ջումադ Բ ամսի վերջին<sup>4</sup> (1225 թ. հուլիսի սկիզբ), որից հետո միայն պետք է տեղի ունենային հետագա իրադարձությունները: Եթե 1225 թ. հուլիսի սկզբին Ջալալ ադ-Դինը դեռեւս Մարաղայում էր, ապա միանգամայն աներեւակայելի է, որ նա հասցներ, հենց ըստ ան-Նասավիի տեղեկությունների, Մարաղայից մեկնել Ուջան, այնուհետեւ 7-օրյա պաշարումից հետո գրավել Թավրիզը եւ մինչեւ հուլիսի 9-ը ներխուժել Հայաստան ու բանակել Գառնիի մոտ<sup>5</sup>: Այնուամենայնիվ, ան-Նասավիի տեղեկությունները նկատառելի են այն իմաստով, որ հուշում են ճակատամարտը թվագրել ոչ թե Իբն ալ-Ասիրի վկայած շաբան ամսվա վերջով, այսինքն՝ սեպտեմբերի առաջին օրերով, այլ օգոստոսով, ավելի հավանական է՝ վերջին օրերով:

Գառնիում հաղթանակ տանելուց հետո, սակայն, խորեզմշահը չշարունակեց առաջխաղացումը, այլ ավարտուովյան նպատակով նախ գրավեց Դվինը<sup>6</sup>, իսկ այ-

1 Իբն ալ-Ասիր, էջ 320:

2 Мухаммад ан-Насави, с. 159.

3 Իբն ալ-Ասիր, էջ 319-320:

4 Мухаммад ан Насави, с. 359.

5 Նույն տեղում, էջ 154-157: Չ. Բուհայթովը Թավրիզի գրավման մասին հաղորդումը (հիշրեի 622 թ.) կոնկրետացրել է՝ փակագծերում ավելացնելով «ռաջաբի 17» (նույն տեղում, էջ 156): Բնագրի մեջ, ըստ Իբն ալ-Ասիրի տեղեկությունների, նման հավելում մտցնելը սխալ եւ ավելորդ է, քանի որ երկու պատմիչների հաղորդումները ժամանակագրական առումով զգալիորեն տարբերվում են և դրանով արհեստական հսկասություն է ստեղծվում ան-Նասավիի աշխատությունում:

6 Հ. Մանանդյանի եւ Լ. Բաբայանի կարծիքով, Դվինը գրավվել է մինչեւ Գառնիի ճակատամարտը (Հ. Մանանդյան, Ազվ. աշխ., էջ 199; Լ. Հ. Բաբայան, Ազվ. աշխ., էջ 184, հմմ. Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 604), սակայն ըստ ան-Նասավիի՝ քաղաքի գրավումը իրականում հաջորդել է ճակատամարտին (Мухаммад ан-Насави, с. 159). Միխայել Ասորու ժամանակագրության շարունակողի վկայությամբ՝ Դվինի մահմեդականները սկսել են քրիստոնյաների կոտորածը՝ Գառնիի կովի ելքի լուրն առնելուն պես (Միխայել Ասորի, էջ 529): Ան-Նասավին ճշում է, սակայն, որ քաղաքը գրավվել է գրոհով, որոշ ժամանակ տեսած պաշարումից հետո: Ինչպես երևում է, Դվինը կամավոր չի հանձնվել թշնամուն, եւ խորեզմշահն այն նվաճել է քաղաքի բնակիչների մահմեդական մասի լուրջ աջակցության շնորհիվ:

նուհետեւ անսպասելիորեն վերադարձավ Թավրիզ՝ լսելով, որ այնտեղ խռովութիւնն է պատրաստվում իր դեմ<sup>1</sup>: Ըստ ան-Նասավիի՝ խորեզմշահը ավարառութեան նպատակով Հայաստանում եւ Վրաստանում թողեց իր բանակի աջ թեւի ամիրաներին, որոնք երեք ամիս ասպատակում էին այլեւայլ երկրամասեր<sup>2</sup>: Թավրիզից<sup>3</sup> սուլթանը ուղարկեց իր զորավարներից Ուր-խանին, որը գրավեց Գանձակը, Բայլականը եւ Շամքորը<sup>4</sup>: Ինքը՝ Ջալալ ադ-Դինը, դավադրութիւնը դաժանորեն ճնշելուց հետո մեկնեց Խոյ<sup>5</sup>, իսկ այնուհետեւ կրկին ներխուժեց Հայաստան եւ Վրաստան<sup>6</sup>: Խորեզմշահի այս երկրորդ հարձակումը նկատի ունի Վարդան Արեւելցին, որը Ջալալ ադ-Դինի Թավրիզ վերադառնալը արձանագրելուց հետո պատմում է. «Զկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրեացն Գագայ ի Տփղիս»<sup>7</sup>: Այս վկայութեան հիման վրա կարծել է, թէ Ջալալ ադ-Դինը Տփղիսի վրա է արշավել հարավ-արեւելքից, Գանձակը գրավելուց հետո<sup>8</sup>: Սակայն պատմիչի հաղորդումը ճշգրտման կարիք է գգում, ինչպէ՛ս ժամանակագրութեան, այնպէ՛ս էլ խորեզմցիների բանակի երթուղու առումով: Թվագրելով իրադարձութիւնները «զկնի ամի միոյ»-ով, այսինքն՝ 1226 թվականով՝ նա, հավանաբար, ելակետ է ունեցել Տփղիսի գրավման ժամանակը (1226 թվականի մարտի 9), թեւ խորեզմցիների առաջխաղացումը սկսվել էր 1225 թ. վերջին<sup>9</sup>: Երբ խորեզմշահը հասավ Երասխին, պարզվեց, որ Գառնիի ճակատամարտում գերի ընկած եւ նրա բանակում գտնվող Շալվա Ախալցիխեցին փորձել է նամակներով տեղեկացնել հայրենակիցներին խորեզմցիների մոտալուտ հարձակման մասին: Շալվայի նկատմամբ հաշվեհարդար տեսնելուց հետո Ջալալ ադ-Դինը շարունակեց հարձակումը հարավից՝ Արարատյան դաշտով, եւ անցնելով Փամբակի լեռնաշղթան ու շրջանցելով Լոռե, Ալիաբադ ամրոցները, շարժվեց Տփղիսի վրա<sup>10</sup>:

- 
- 1 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 321-322: Ըստ ան-Նասավիի՝ դավադիր համարվողները իրականում անմեղ եւ եղել (Мухаммад ан-Насави, с. 160-162).
  - 2 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 160-161, հմմ. *Ճրտլոս Յեռզրոյծ*, II, ՅՅ. 171; *Վրաց ժամանակագրություն*, էջ 60-61:
  - 3 Ջալալ ադ-Դինի վերադարձը Թավրիզ Աշուն է անէ Վրաց ժամանակագիրը (*Ճրտլոս Յեռզրոյծ*, II, ՅՅ. 171; *Վրաց ժամանակագրություն*, էջ 61):
  - 4 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 163. Կիրակոս Գանձակեցի՛ն՝ Գանձակի, իսկ Վրաց ժամանակագիրը՝ անէ Շամքորի գրավումը վերագրում եւ անձամբ Ջալալ ադ-Դինին (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 224; *Ճրտլոս Յեռզրոյծ*, II, ՅՅ. 171; *Վրաց ժամանակագրություն*, էջ 62), ինչը ստույգ չէ:
  - 5 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 164.
  - 6 Լ. Բարսեղյանը Ջալալ ադ-Դինի վերադարձի շարժառիթ է համարում այն, որ նրա՝ «Թավրիզում եղած ժամանակ Օրեթ-ալ-Մուլքը դավադրություն է անապատրաստում նրա դէմ» (Լ. Լ. Բարսեղյան, Աշվ. աշխ., էջ 187): Այս կարծիքն ամենեւի չի հաստատվում սկզբնաղբյուրներով. ուսումնասիրողը, առանց որեւէ հիմքի, 1225 թվական է տեղափոխել Շարաֆ ալ-Մուլքի գործունեության 1230-1231 թթ. շրջանը:
  - 7 Վարդան Արեւելցի, էջ 188:
  - 8 Տե՛ս Լ. Մանանդյան, Աշվ. աշխ., էջ 200: Իվ. Ջավախիշվիլին թեւ Աշուն է, որ Ջալալ ադ-Դինը Տփղիսի վրա է շարժվել հարավից, Ախալի ունի ոչ թէ Արարատյան դաշտ – Փամբակի լեռնաշղթա – Տփղիս իրական երթուղին, այլ հարավ-արեւելյան Աղվանքից Գագի վրայով Տփղիս տանող ուղին (Օ. Զաքեծեօջոլո, *Ճրտլոյց յոս օկտորոս*, III, էջ 57):
  - 9 Տե՛ս Իբն ալ- Ասիր, էջ 323; Мухаммад ан-Насави, с. 167.
  - 10 Տե՛ս Զաքեծեօջոլոս *Յեռզրոյց Յեռզրոյց Յեռզրոյց*, ՅՅ. 31; Рашид ад-Дин, т. I, кн. II, с. 243. Լոռեի պաշտպանները խորեզմցիների գերիներին ազատ արձակելով, խուսափեցին գրավումից

Խորեզմշահի կողմից քաղաքի գրավման պատմությունը, որը հանգամանորեն շարադրված է այլեւայլ աղբյուրներում, ընդհանուր գծերով այսպես է ներկայանում: Զալալ ադ-Դինը չի կարողացել գրոհով գրավել քաղաքը եւ, ըստ ան-Նասավիի եւ Իբն ալ-Ասիրի, դիմել է ռազմական խորամանկության: Հաջողության չհասնելով՝ նա ցույց է տվել, թե նահանջում է, սակայն փախուստ տալով ու քաղաքի պաշտպաններին հետապնդելու հնարավորություն ընձեռելով՝ խորեզմցիներն այնուհետեւ հանկարծակի հարձակում են գործել եւ, հակառակորդի շփոթությունից օգտվելով, ներխուժել են քաղաք<sup>1</sup>: Թվում է, թե այդ ռազմական հնարքի նախնական փուլի արդյունքն է ակնարկում Վրաց ժամանակագիրը, երբ խոսում է «վրացիների փայլուն հաղթանակի» մասին եւ քաղաքի գրավման գործում վճռական դեր է վերագրում Տփղիսի մահմեդական բնակիչների օգնությանը<sup>2</sup>: Իբն ալ-Ասիրի ու ան-Նավասիի կողմից շրջանցվող<sup>3</sup> եւ հայկական աղբյուրներում<sup>4</sup> շեշտվող այդ փաստը խոստովանում է նաեւ ականատեսի ցուցումները շարադրող ալ-Բաղդադին<sup>5</sup>: Նա անառարկելի է դարձնում այն կարծիքը, որ Զալալ ադ-Դինը տեր է դարձել Տփղիսին մահմեդական քաղաքացիների օժանդակության շնորհիվ միայն: Ալ-Բաղդադիի եւ Իբն ալ-Ասիրի տեղեկություններից երեւում է, որ, չնայած դրան, խորեզմցիները վայրագություններ են գործել անգամ մահմեդականների նկատմամբ, թեեւ հիմնականում տուժել են վրացիները, հայերը եւ հրեաները<sup>6</sup>:

Գրավումից հետո Տփղիսում հաստատվեց Զալալ ադ-Դինի վեզիր Շարաֆ ալ-Մուլքը՝ շարունակելով շրջակա երկրամասերի ավերումը<sup>7</sup>, իսկ խորեզմշահը, 1226 թ. մայիսի վերջին – հունիսին<sup>8</sup> ստանալով Քերմանում իր կողմից թողնված Բարախ հեջիբի ապստամբության լուրը, մեկնեց այնտեղ: Անցնելով Տփղիս-Քերման տարածությունն ընդամենը 17 օրում<sup>9</sup>, Զալալ ադ-Դինը չկարողացավ հնազանդության բերել Բարախին եւ, օգոստոսի վերջին – սեպտեմբերին<sup>10</sup> վերադառնալով Տփղիս՝ նոր ասպատակություններ ձեռնարկեց տարբեր ուղղություններով<sup>11</sup>: Այժմ, երբ Վրացական թագավորությունը պարտության էր մատնված, նրա գլխավոր

---

Ասե 1229 թ. (տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 225), ուստի ճիշտ չէ, որ «խվարեզմյան հորդաները գրավում են Գանձակը, Լոռին, Տփղիսը» (**Լ. Հ. Բաբայան**, ԱԶՎ. աշխ., էջ 186, հմմ. *Հայ ժողովրդի պատմություն*, հտ. III, էջ 604): Ըստ Իբն ալ-Ասիրի՝ Տփղիսի ճանապարհին տեղի է ունեցել եւս մի բախում վրացական զորքերի հետ, որոնք ուժեղացված են եղել ալաններից, դիչաղներից ու այլ հարեւան ժողովուրդներից հավաքված ջոկատներով (**Իբն ալ-Ասիր**, էջ 323):

- 1 **Мухаммад ан-Насави**, с. 167-168; **Իբն ալ-Ասիր**, էջ 323-324:
- 2 Տե՛ս *յնթադրված ճեղքեր*, II, թ. 175; *Վրաց ժամանակագրություն*, էջ 64:
- 3 **Мухаммад ан-Насави**, с. 167-168. Իբն ալ-Ասիրը միայն ակնարկում է այդ փաստը՝ պատմելով, որ խորեզմցիների ներխուժման ժամանակ տփղիսցի մահմեդականները գոռացել են իրենց կոչը (**Իբն ալ-Ասիր**, էջ 324):
- 4 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 226; **Միխայել Ասորի**, էջ 530:
- 5 Տե՛ս **C. Cahen**, *Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens*, p. 159.
- 6 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 226; **Միխայել Ասորի**, էջ 530; *յնթադրված ճեղքեր*, II, թ. 175-176; *Վրաց ժամանակագրություն*, էջ 64-65:
- 7 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 169; *Արաբական աղբյուրներ...*, էջ 43, 230:
- 8 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 370, прим. 4.
- 9 Տե՛ս *չաջրոցի ճեղքերը եւ յնթադրված ճեղքեր*, թ. 32.
- 10 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 326-327:
- 11 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 171.



խնդիրը դարձավ Խլաթի նվաճումը, սակայն իր մտադրությունները քողարկելու համար խորեզմշահը նախ պաշարեց Անին, իսկ նրա ուղարկած զորաշուկատը՝ Կարսը<sup>1</sup>: Արդյունքի չհասնելով՝ Ջալալ ադ-Դինը շավալ ամսվա սկզբին (1226 թ. սեպտեմբերի 25 - հոկտեմբերի 23) վերադարձավ Տփղիս, տասնօրյա ասպատակության մեկնեց Արեւմտյան Վրաստան եւ ապա անակնկալ հարձակում ձեռնարկեց Խլաթի վրա<sup>2</sup>: Նրա վրա այս առաջին հարձակումը եւ պաշարումը սկսվեց, ըստ Իբն ալ-Ասիրի, 1226 թ. նոյեմբերի 8-ին եւ շարունակվեց մինչեւ դեկտեմբերի 14-ը, բայց հաջողություն չբերեց խորեզմշահին<sup>3</sup>:

Դադարեցնելով Խլաթի պաշարումը՝ խորեզմշահը պատժողական արշավանք ձեռնարկեց Իվայի թուրքական ցեղի դեմ, որը սպառնում էր Թավրիզին<sup>4</sup>: Այս ձեռնարկումից հետո, որը, ի դեպ, բավական ժամանակ էր խլել Ջալալ ադ-Դինից, նա շարժվեց իսմայիլիտ աղանդավորների դեմ, որոնց Ֆիդայիները Գանձակում սպանել էին Ուր-խանին<sup>5</sup>: Իսմայիլիտների դեմ արշավանքից հետո, 1228 թ. օգոստոսի 25-ին Ջալալ ադ-Դինը Սպահանի մոտ ճակատամարտ տվեց մոնղոլների դեմ, միայն շատ ծանր կորուստների գնով հասնելով հաղթանակի<sup>6</sup>: Այսպիսով, ավելի քան մեկ տարի խորեզմշահը հեռացել էր Հայաստանից ու Վրաստանից՝ հնարավորություն ընձեռնելով խորեզմական կայսրորդների դեմ պայքարի ծավալման համար: Հենց այս ժամանակամիջոցում էր, որ հայ-վրացական զորամասերը գրավեցին Տփղիսը<sup>7</sup> ու Դվինը<sup>8</sup>, սակայն շուտով թողեցին այդ քաղաքները: 1227-1228 թվականներին Գանձակի շրջակայքում բազմաթիվ հարձակումներ գործեց Վահրամ Գագեցին, մեծ անհանգստություն պատճառելով խորեզմցիներին<sup>9</sup>: 1227 թ. գարնանը, երբ խորեզմշահը զբաղված էր Իվայիներին հնազանդեցնելով, վրացական զորքերը պաշարեցին Շաքին ու Կապաղակը. միայն Ջալալ ադ-Դինի Գանձակ վերադառնալը հարկադրեց նրանց շուտափույթ հեռանալ այդ շրջանից<sup>10</sup>: Այնուամենայնիվ, ինչպես երևում է, 1227-1228 թվականներին հայկական ու վրացական առանձին իշխանական տների հարձակումներն էական վտանգ չեն ներկայացրել

1 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 328-329:

2 Նույն տեղում: Ըստ պատմիչի՝ քաղաքի պաշտպանները, այնուամենայնիվ, տեղյակ էին դարձել սպասվող հարձակմանը:

3 Նույն տեղում, էջ 329-330: Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 40:

4 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 330-331; **Мухаммад ан-Насави**, с. 172.

5 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 226-227; **Мухаммад ан-Насави**, с. 178-179.

6 Տե՛ս **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-Khans*, p. 329-330.

7 Ըստ ան-Նասավիի՝ Տփղիսը գրավվել է Խլաթի պաշարման ժամանակ (**Мухаммад ан-Насави**, с. 172), իսկ Իբն ալ-Ասիրը ճշում է հիշդեհի 624 թ. 1-ին ռաբի ամիսը՝ 1227 թ. փետրվարի 19-մարտի 21 (**Իբն ալ-Ասիր**, էջ 333): Թվում է, ճիշտ է Իվ. Ջավախիշվիլու ենթադրությունը, որ քաղաքը որոշ ժամանակ մնացել է վրացիների ձեռքում եւ հետո միայն հրդեհվել է ու լքվել: Ինչպես երևում է, ան-Նասավին նկատի է ունեցել Տփղիսի գրավման սկիզբը, իսկ Իբն ալ-Ասիրը՝ վերջը (տե՛ս օ. **ჯვებდებვოლო, ქართველო ერობ ისტორიო**, III, էջ 69): Տփղիսի դեպքերի մասին վրացական ու հայկական աղբյուրները, բացառությամբ մեկի (տե՛ս **Միխայել Ասորի**, էջ 530), զարմանալիորեն լուռ են:

8 Տե՛ս Միխթար Այրիվանեցի, էջ 66; **Միխայել Ասորի**, էջ 529-530: Հմմ. **Հ. Մանանդյան**, *Աշվ. աշխ.*, էջ 202-203; **Լ. Հ. Բարսյան**, *Աշվ. աշխ.*, էջ 187:

9 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 226.

10 Նույն տեղում, էջ 193:



մնացած բանակն ի վիճակի չեղավ հաջողութեան հասնել, ուստի, այս անգամ եւս՝ «հաղթվեցին թագավորական զորքերը եւ խորեզմցիների կողմից փախուստի մատնվեցին»<sup>1</sup>: Հաղթանակից հետո Ջալալ ադ-Դինը պաշարեց Լոռեն եւ գերի ընկած խորեզմցիներին ազատելուց հետո շարժվեց Վահրամ Գագեցու տիրույթների վրա: Ճանապարհին նա նախ գրավեց Շաքան բերդը, ապա ավերեց Իվանն աթաբեկի քույր Թամթային պատկանող Ալիաբադ ամրոցը, այնուհետեւ, անելանելի դրուձյան մեջ զնելով բերդապահներին՝ մեծ գումարներ կորզեց Գագ եւ Գավազին բերդերի պաշտպաններից<sup>2</sup>: Եթե նկատի ունենանք, որ միայն վերջին երկու ամրոցների պաշարումը տեսել էր երեք ամիս, ապա պարզ կդառնա, թե ինչու միայն 1229 թ. ամռանը խորեզմշահը կարող էր ձեռնարկել իր գործունեության մեջ ամենաերկարատեւ եւ, ըստ ամենայնի, բեկումնային գործողությունը՝ Խլաթի երկրորդ պաշարումը: Քաղաքը ութ կամ տասը ամսվա հյուժիչ շրջափակումից հետո գրավվեց<sup>3</sup>, սակայն ծայրաստիճան սրվեցին հակասություններն ինչպես Խլաթի տեր ալ-Մալիք ալ Աշրաֆի, այնպես էլ Իկոնիայի սուլթան Քեյ-Կուբադի հետ: Խորեզմշահի բախումը Քեյ-Կուբադի եւ Այուբյանների միացյալ զորաբանակի հետ 1230 թ. օգոստոսի 10-ին Յասսի Չիմանում<sup>4</sup> (Երզնկայի մոտ) ավարտվեց Ջալալ ադ-Դինի պար-

1 յեճուլուս ցեոմջոն, II, թ. 182-183; Վրաց ժամանակագրություն, էջ 70: Հմմ. Мухаммад ан-Насави, с. 224-225; Рашид ад-Дин, т. II, с. 28; չճոջոնոս ցեոմջոն եսյեճուլուս Յեյեյեյե, թ. 36.

2 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 226.

3 Ըստ Ջուվեյնիի եւ Իբն ալ-Ասիրի՝ քաղաքը գրավվել է 1230 թվականի ապրիլի 15-ին (տե՛ս Мухаммад ан-Насави, с. 402-403, прим. 8; Իբն ալ-Ասիր, էջ 338): Այս թվագրումները ելակետային համարելով՝ կարելի է հետադարձ հաշվարկ կատարել: Եթե հավաստի է Ջուվեյնիի հաղորդումը՝ պաշարման տևողությունը 8 ամիս լինելու վերաբերյալ, ապա պաշարումը սկսվել է 1229 թ. օգոստոսին, իսկ եթե ավելի ստույգ է հայկական աղբյուրների վկայած 10 ամիսը (տե՛ս Սամուել Անեցի, էջ 149-150), ապա դա ավելի շուտ էր՝ հունիսին: Լ. Բաբայանը եւ Զ. Բունիաթովը Խլաթի պաշարման տևողությունը դնում են 1,5 տարի (տե՛ս Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 187; Мухаммад ан-Насави, с. 401, прим. 1), բայց, ինչպես ցույց տրվեց, խորեզմշահը մինչև 1229 թ. ամառը զբաղված էր այլ ձեռնարկումներով:

4 Այս վայրը (բառացի՝ «ընդարձակ մարգագետին») գտնվում է Քոսե-դաղ լեռան մոտ, ուր 1243 թ. տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Իկոնիայի սուլթանության եւ մոնղոլների միջև (տե՛ս С. Cahen, Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens, p. 165, ծմթ. 36): Ենթադրելի է, որ տեղանվան «Չիման» բաղադրիչն առկա է Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Չմանկատուկ»-ում, որով եւ հասկանալի է դառնում, թե ինչու է հայ պատմիչը Քոսե-դաղի ճակատամարտը տեղի ունեցած համարում Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ (Կիրակոս Գանձակեցի, էջ 282): Յասսի Չիմանի ճակատամարտը նաեւ հայկական ժամանակագրություններում է հիշատակվում (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 105; Սամուել Անեցի, էջ 149-150): Ի դեպ, հրատարակությունում եւ թարգմանություններում վերջին աղբյուրի բնագիրը մեծապես աղավաղված է. «Ալադին սուլտանն եւ Աշրաֆն մարտեան ընդ նոսա, եւ կոտորեաց զնոսա յոյժ եւ Սուլեյման ամիրայան, որ առաջնորդ էր Խորազմին՝ կալան եւ սպանին»: Բնագիրն ավելի ճիշտ է պահպանվել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի № 343 ձեռագրում, որը Սամուել Անեցու երկի շարունակություններից է. «Յալատին սուլտանն եւ Աշրաֆն կոտորեցին զնայ, Եասսի չիմանն եւ զԿարնոյ քաղաքն առին եւ զմելիքն, որ առաջնորդ էր Խորազմին, կալան եւ սպանին» (տե՛ս Գարեգին Ա կթղ. [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, էջ 525-526. զարմանալի է, որ Գարեգին Հովսէփյանն այս ձեռագիրն է համարում խաթարված): Վաղարշապատյան տպագրում ոչ միայն հաղթող է ներկայացված խորեզմշահը, այլեւ գոյություն չունեցող «Սուլեյման ամիրայ» է ստեղծված: Ծփոթությունն առաջացել է «Եասսի չիման» տեղանունը անձանուն ընկալվելու եւ Կարին տեղ Բուքն ադ-Դինի (ով իրոք օգնում էր Ջալալ ադ-Դինին, տե՛ս Мухаммад ан-Насави, с. 232-234, 254-255) «մելիք» տիտղոսը «ամիրա»-ով փոխարինելու միջոցով: Քոսե-դաղ – Չմանկատուկ – Յասսի Չիման կապը հաստատում է Մխիթար Այրիվանեցին, որը 1243 թ. ճակատամար-

տուժյամբ<sup>1</sup>, որից նա այդպես էլ չկարողացավ ուշքի գալ: Խորեզմշահն այլևս չգիմեց որեւէ լուրջ հարձակողական գործողության եւ այնուհետեւ ստիպված էր մտածել սոսկ սեփական անձի փրկության մասին: Ճակատամարտի վայրից նա նախ մեկնեց Խլաթ, ապա՝ Խոյ, եւ այդ ժամանակ էլ լսեց, որ մոնղոլները Չարմաղանի գլխավորությամբ անցել են Ամու-Դարչա գետը եւ շարժվում են իր դեմ<sup>2</sup>: Սարսափահար Ջալալ ադ-Դինը, դիմադրելու փորձ իսկ չանելով փախավ Բիշքին, ապա՝ Մուղան, իսկ այնտեղից, լսելով մոնղոլների մոտենալը, հեռացավ Կապան<sup>3</sup>: Ջալալ ադ-Դինի վերադարձը Հայաստան այս անգամ չէր հետապնդում կողոպուտի եւ թալանի նպատակ. խորագմշահը սոսկ ցանկանում էր կորցնել իր հետքերը՝ մոնղոլներին խաբելու համար, որը եւ նրան հաջողվեց: Մոնղոլական առաջապահ ջոկատը դատարկ ու ավեր գտնելով խորեզմշահի իջեւանավայրը՝ վերադարձավ Չարմաղանի մոտ, եւ Ջալալ ադ-Դինը հնարավորություն ստացավ ձմեռն անցկացնել Ուրմիայում եւ Ուշնուում<sup>4</sup>: 1231 թ. սկզբին, սակայն, մոնղոլները նոր եռանդով վերսկսեցին թշնամու հետապնդումը: Նրանց հանկարծակի հարձակմանը ենթարկված Ջալալ ադ-Դինը թեեւ կարողացավ մի կերպ կենդանի դուրս պրծնել, այնուամենայնիվ շուտով իր մահը գտավ Ամիդի մոտակայքում՝ սպանվելով տեղացի բրդերի ձեռքով<sup>5</sup>:

---

տի մասին գրում է. «Եհար Թաթարն գՀոռոնց սուլտանն յԱսուջմանն» (Մխիթար Այրիվանեցի, էջ 67):

- 1 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 256-257; **Իբն ալ-Ասիր**, էջ 339-340; **Рашид ад-Дин**, т. II, с. 29; **C. Cahen, Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens**, p. 156-157; *Ջալջոնոն ճեթրոտջջլոն Յեխեթթ*, թ. 41; *Արաբական աղբյուրներ...*, էջ 232; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 228-229: Ըստ հայ պատմիչի՝ խրեզմշահի հակառակորդ բանակում կային օգնական զորամասեր Կիլիկիայի հայկական թագավորությունից եւ խաչակիրներից: 1230 թ. հայկական հիշատակարաններից մեկում օգոստոսի 25-ով թվագրվող գրառումում խոսվում է սպառվելիք ճակատամարտի մասին՝ առանց տեղյակ լինելու, որ այն արդեն տեղի է ունեցել (տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 166):
- 2 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 268-269; **C. Cahen, Abdallatif al Baghdadi et les Khwarizmiens**, p. 156-157; *Ջալջոնոն ճեթրոտջջլոն Յեխեթթ*, թ. 41; **Рашид ад-Дин**, т. II, с. 30; **Իբն ալ-Ասիր**, էջ 343-344: Այսպիսով, մոնղոլներն Իրան են ներխուժել ոչ թե 1227 թվականին, ինչպես կարծում է Հ. Մանանդյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 204), կամ 1229-ին (հիմնվելով Խոնդեմիրի՝ ԺԵ դարով թվագրվող վկայությունների վրա, Հ. Մանանդյանի առաջարկած տարեթիվը այսպես է սրբագրում Լեոն Բաբալյանը, տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 189), այլ 1230 թվականին:
- 3 Տե՛ս *Ջալջոնոն ճեթրոտջջլոն Յեխեթթ*, թ. 42; **Рашид ад-Дин**, т. II, с. 30. Հմմ. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 230; **Վարդան Արեւելցի**, էջ 188:
- 4 Տե՛ս *Ջալջոնոն ճեթրոտջջլոն Յեխեթթ*, էջ 42; **Рашид ад-Дин**, т. II, с. 30.
- 5 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 295-296; *Ջալջոնոն ճեթրոտջջլոն Յեխեթթ*, թ. 43-44; **Рашид ад-Дин**, т. II, с. 31; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 230; **Վարդան Արեւելցի**, էջ 189; *Արաբական աղբյուրներ...*, էջ 233-234; *Վրաց ժամանակագրություն*, էջ 71-72: Ջալալ ադ-Դինի մահից հետո խրեզմշահները ծառայության մտան Մերձավոր Արեւելքի գանազան իշխողների մոտ՝ կովելով խաչակիրների, իրենց հովանավորների հակառակորդների, երբեմն էլ հենց իրենց մասկին տերերի դեմ (տե՛ս *A History of the Crusades*, General editor **K. M. Setton**, Vol. II, The University of Wisconsin Press, 1969, p. 489, 561-564, 673-674, 708-710). Այդ անցուղարձերից մի միջադեպ արձանագրված է նաեւ հայկական աղբյուրներում. «ԴՄԽԴ (1244). Հալպցին գԽորեզմ կոտորեաց» (**Սամուէլ Անեցի**, էջ 150, տողատակ): Ինչպես երեւում է, հայ հեղինակը նկատի է ունեցել խրեզմշահների ջախջախիչ պարտությունը Հալեայի տիրակալի եւ նրա դաշնակիցների միացյալ բանակից Հիմսի մոտ 1246 թ. (տե՛ս վերոհիշյալ անգլերեն աշխատությունը):

Խորեզմշահի մահով, սակայն, Մերձավոր Արեւելքում ամենեւին էլ չվերականգնվեց նախկին վիճակը: Զալալ ադ-Դինի ասպատակությունները կարճ ժամանակամիջոցում զգալի տեղաշարժեր էին առաջ բերել նաեւ Այսրկովկասի քաղաքական իրադրության մեջ՝ ստեղծելով ուժերի նոր հարաբերակցություն արտաքին ասպարեզում: ԺԳ դ. 30-ական թվականներին ստեղծված քաղաքական կացությունը, Հայաստանի եւ Վրաստանի վիճակը մոնղոլական գլխավոր արշավանքին անմիջականորեն նախորդող տարիներին, հայկական հողերի ազատագրման գրեթե դադարեցումը՝ բավարար լուսաբանության չեն արժանացել մասնագիտական գրականության մեջ, այդ պատճառով էլ առանց բացատրության են մնացել որոշ կարեւոր իրողություններ:

Թուլացնելով Վրացական թագավորության ռազմական հզորությունը՝ խորեզմցիներն Իկոնիայի սուլթանությանը հնարավորություն ընձեռեցին՝ վերսկսելու սելջուկ-թյուրքերի առաջխաղացումը Հյուսիս-արեւմտյան Հայաստան, որ դարասկզբին ընդհատվել էր Բասենի ճակատամարտում Ռուբն ադ-Դինի ջախջախումով: 1232-1233 թվականներին Քեյ-Կուբադը գրավեց Խլաթը<sup>1</sup>, իսկ Վրաստանից նվաճեց բազմաթիվ սահմանամերձ բերդեր: Թեեւ Ռուսուդան թագուհուն հաջողվեց զիջումների ճանապարհով հաշտություն կնքել եւ համաձայնություն ձեռք բերել թագաժառանգ Ղիաս ադ-Դինի եւ Ռուսուդանի դուստր Թամարի ամուսնության վերաբերյալ<sup>2</sup>, ակներեւ է, որ Իկոնիայի սելջուկների ճնշումը շարունակվում էր ընդհուպ մինչեւ մոնղոլների արշավանքը Փոքր Ասիա 1243 թ.<sup>3</sup>: Իկոնիայի սուլթանությունը կարողացավ նաեւ նեղ վիճակի մեջ դնել իր մյուս հզոր հարեւանին՝ Այուբյանների իշխանությունների միությանը: Բացի Խլաթից՝ Հարավային Հայաստանում եւ Հյուսիսային Միջագետքում սելջուկների ձեռքն անցան Խարբերդը (1232/33 թ.), Ուռհան, Խառանը, Սեւերակը (1235 թ.), Ամիրդը (1241 թ.)<sup>4</sup>:

Գիտական գրականության մեջ առայժմ լուսաբանվել են այն պատճառները, որոնք պայմանավորեցին Զալալ ադ-Դինի պարտությունը, սակայն անհամեմատ սակավ ուշադրություն է դարձվել խնդիրը հակառակ առումով պարզաբանելու վրա: Լիովին օրինաչափ է նաեւ այն հարցադրումը, թե ինչո՞ւ Վրացական թագավորությունն անզոր գտնվեց՝ սեփական ուժերով վանելու թշնամուն, չկարողացավ արժանի դիմադրություն ցույց տալ նրան: Թվում է, թե այդ հարցի բանալին պետք

---

1 Թյուրքական անանուն հեղինակի տվյալներով՝ Խլաթի (ըստ Իբն Բիբիի՝ նաեւ Վանա լճի մերձակա տարածքի), Խարբերդի, Բալուի գրավումը տեղի է ունեցել 1232 թ. (տե՛ս Ե. Յենցելոս, *Օծն ծօծո շլա՝ ադ-ճօծ յեյոյոձաճօծն Նախրօշջելօձի լաձխրօծօն ՅեՆաեյօ*, – “Յացեյ” (օՆԾ. Ե.), 1975, № 1, թ. 105): Ստեփանո Օրբելյանը Խլաթի գրավումը դնում է 1233-ին (*Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 41): Համաձայն Իբն Բիբիի՝ Այուբյանները 1233 թվականին միացյալ արշավանք են ձեռնարկել Խլաթը վերադարձնելու նպատակով, սակայն հաջողություն չեն ունեցել (հմմ. *Արաբական աղբյուրներ*..., էջ 235; Սամուել Աւնեցի, էջ 149, տողատակ): Հետեւաբար, այն կարծիքը, թե մոնղոլները Բաչուի գլխավորությամբ իրենց արշավանքի ժամանակ գրավել են Խլաթը՝ «վերջ տալով Այուբյանների տիրապետությանը Հարավային Հայաստանում» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 612), իրականությանը չի համապատասխանում:

2 Տե՛ս Ե. Յենցելոս, *Ազվ. աշխ.*, էջ 99-104:

3 Պատահական չէ, որ 1239 թվականին նրանց հաջողվեց գրավել Կարսը (տե՛ս *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 41):

4 Տե՛ս Ե. Յենցելոս, *Ազվ. աշխ.*, էջ 105; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 41; Սամուել Աւնեցի, էջ 150:

է փնտրել ներքաղաքական կացութեան մեջ: Այդ կացութեան բարդութիւնը եւ երկրի պաշտպանութեան հնարավորութիւնները պարզ են դառնում, երբ վերհիշում ենք խորեզմշահի դեմ ծավալված պայքարի հիմնական դրվագները: Գառնիի ճակատամարտից հետո, երբ խորեզմշահը վերադարձավ Թավրիզ, Հայաստանում եւ Վրաստանում մնացած նրա բանակի աջ թեւի ամիրաներին որեւէ դիմադրութիւն ցույց չտրվեց, եւ նրանք երեք ամիս անպատիժ ասպատակութիւններ էին գործում: Կասկած չի կարող լինել, որ միայն մի քանի իշխանական տների միացյալ զորամասերը կարող էին հաղթանակ տանել անշատ-անշատ գործող հրոսակախմբերի դեմ: Սակայն այդպիսի հակահարվածի փորձ չարվեց, ինչը վկայում է ոչ միայն թագավորական իշխանութեան անկարողութեան, այլեւ առանձին երկրամասերի իշխողների միջեւ անհամաձայնութեան ու անհամբերաշխութեան մասին: 1225 թ. վերջից սկսած մինչեւ 1226 թ. մարտը, մինչ Ջալալ-ադ Դինը շարժվում էր Տփղիսի վրա, թշնամուն գրեթե դիմադրութիւն ցույց չտրվեց: Իվ. Ջավախիշվիլին իրավացի է, նշելով ամիրսպասալարի գործունեութեան գրեթե աննկատելի լինելն այդ ճակատագրական պահերին<sup>1</sup>, սակայն նա այդ աչքի ընկնող երեւույթը չի փորձում կապել Գառնիում իրենց զգացնել տված ներդասակարգային պայքարի եւ միջավատատիրական անհամաձայնութիւնների հետ: 1225-1226 թվականների դեպքերի համագիր քննութիւնը, սակայն, ակնհերեւ է դարձնում, թե ինչքան խորն էր ներքաղաքական ճգնաժամը, եւ Գառնիի իրադարձութիւններն այդ հետնախորքի վրա ամենեւին էլ արտասովոր չեն թվում: Անգամ 1227-1228 թվականներին, երբ առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին խորեզմցիներին արտաքսելու համար, բնավ չէր նկատվում այն ուժը, որը պետք է միավորեր զինված պայքարը թշնամու դեմ: Ավելին՝ նույն այդ ժամանակ խորեզմշահի վեզիր Շարաֆ ալ-Մուլքը պաշարեց եւ հարկադրեց փրկագին մուծել Խաչենի իշխան Հասան-Ջալալին<sup>2</sup>, իսկ վերջինիս ազգական Ջաքարյանները օգնութեան փորձ իսկ չձեռնարկեցին: Բնորոշ է հայկական երկրամասերից Կապանի ճակատագիրն այդ տարիներին: Այստեղի բերդերին, ինչպես պատմում է ան-Նասավին, տիրացել էին առանձին ամիրաներ, որոնց հնազանդութեան բերեց Ջալալ ադ-Դինից անկախ գործող Ուզբեկի նախկին մամուլք Բուզդայը<sup>3</sup>: Սակայն տեղական հայ իշխաններն անկարող էին եղել պայքարել անգամ այդ ինքնակոչի դեմ: 1230-1231 թվականներին եւս, երբ Կապանում ապաստան գտավ Ջալալ ադ-Դինը, այստեղի բերդերին, հավանաբար, տիրում էին խորեզմցիները, այլապես խորեզմշահը դժվար թէ ցանկանար ապաստան գտնել բացարձակ թշնամական միջավայրում:

Հայ եւ վրացի իշխանների գործողութիւններում խորեզմշահի արշավանքների ամբողջ ընթացքում ի հայտ էր գալիս եւս մի ուշագրավ երեւույթ, որի կործանարար հետեւանքները լիովին երեւան էին գալու ընդամենը մեկ տասնամյակ անց: Փակվելով իրենց ամրոցներում՝ նրանք գերադասում էին համաձայնութեան գալ Ջալալ ադ-Դինի հետ եւ փրկագին վճարելով ապահովել իրենց հանգստութիւնը: Թագավորական իշխանութեան տեսանկյունից իշխանների նման քայլերը հավասար էին դավաճանութեան, սակայն Ռուսուդան թագուհին այլեւս ի վիճակի չէր՝ պատժելու «անհավատարիմ» ստորականներին: Ինչպես երեւում է, այդ «անհավա-

1 Տե՛ս օ. Ջագսոմցեօլօ, յերօտջեօլօ յրօտ օնթրօտօ, III, էջ 326:

2 Տե՛ս Мухаммад ан-Насави, с. 211.

3 Տե՛ս Աուլմ տեղում, էջ 212-213:

տարիմները» նաեւ անհնազանդութիւնն էին դրսեւորում՝ չմասնակցելով թագուհու ռազմական գործողութիւններին, ուստի Մինդորիի ճակատամարտում Գառնիի համեմատութեամբ բավականին մեծ թիվ էին կազմում վարձկանները: Օրինաչափ է թվում, որ անգամ այդ ճանապարհով Ռուսուդանին չհաջողվեց այնքան զորք հավաքել, որքան գումարվել էր Գառնիում ընդամենը շորս տարի առաջ: Մինդորիի պարտութիւնն ավելի էր թուլացրել թագավորական իշխանութեան դիրքերը, այլապէս դժվար է բացատրել թագուհու կողմից իր անշափահաս որդուն՝ ապագա Դավիթ Նարինին թագադրելը 1230 թվականին: Բնութագրական է, որ այդ իրադարձութեանը չմասնակցեցին Արեւելյան Վրաստանի եւ Հյուսիսային Հայաստանի իշխանները, ու թեեւ Վրաց ժամանակագիրը փորձում է հավատացնել, թէ նրանք բոլորն էլ հնազանդ էին մնում Ռուսուդանին<sup>1</sup>, այդ հավաստիացումն ավելի է խորացնում կասկածները<sup>2</sup>: Խորեզմցիների ասպատակութիւնների միջոցին սրված ներքաղաքական ճգնաժամն էր, որ կրկին ասպարեզ հանեց Լաշա-Գեորգիի որդի Դավիթ՝ գահի նկատմամբ ունեցած իրավունքների հարցը<sup>3</sup>:

Թագավորական իշխանութեան դիրքերի թուլացման պայմաններում անջատողական ձգտումները իրենց երկար սպասեցնել չպետք է տալին, ընդ որում՝ ամենահարմար առիթը լինելու էին արտաքին քաղաքական իրադարձութիւնները: Այն փաստը, որ հայ եւ վրացի իշխանները ԺԳ դ. 30-ական թվականներին հանձնում էին իրենց բերդերը, բնավ չմտահոգվելով թագուհուց թուլտրութիւն ստանալու մասին, իսկ որոշ դեպքերում էլ գործարքի մեջ էին մտնում մոնղոլների հետ՝ հարեւանների հաշվին իրենց տիրույթներն ընդարձակելու համար, իր բացատրութիւնն է գտնում վրացական թագավորութեան ներքին զարգացման ընթացքով: Զալալ ադ-Դինի ասպատակութիւնները, խորացնելով ներքաղաքական ճգնաժամը, նշանակալիորեն նպաստեցին տնտեսական եւ սոցիալական առումներով նախապատրաստված անջատողական միտումների հանդէս գալուն: Գառնիի ճակատամարտից ընդամենը մեկ տասնամյակ անց՝ 1236 թ., Ռուսուդան թագուհին այլեւ չէր էլ կարող երազել մոնղոլների դեմ 60 հազարանոց բանակ հանելու մասին, կենտրոնական իշխանութիւնը նույնիսկ ի վիճակի չեղավ թշնամուն կազմակերպված դիմադրութիւնն ցույց տալ:

Այսպիսով, Զալալ ադ-Դինի ասպատակութիւնները ոչ միայն թուլացրին Վրացական թագավորութիւնը տնտեսական ու ռազմական առումներով, այլեւ ազդելով սոցիալական տեղաշարժերի ընթացքի վրա՝ որոշ չափով պայմանավորեցին մոնղոլներին ցույց տրված այդքան թուլ դիմադրութիւնը Հայաստանում եւ Վրաստանում: Սա էր խորեզմշահի ասպատակութիւնների ամենակարեւոր հետեւանքը:

ԺԳ դ. 20-ական թվականներին, Այսրկովկասում նախ մոնղոլների, ապա նաեւ խորեզմցիների հայտնվելուց հետո, երբ ծանր փորձութիւնների ենթարկվեցին ոչ միայն Վրացական թագավորութիւնը, այլեւ Այուբյանները, իսկ Ելտկուզյաններն ընդհանրապէս հեռացան պատմական ասպարեզից, Զաքարյան իշխանները շուրջ մեկ տասնամյակի ընթացքում չկարողացան նշանակալի հաջողութիւնների հաս-

1 Տե՛ս Վրաց ժամանակագրություն, էջ 68:

2 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 155:

3 Նույն տեղում, էջ 155-156, Տ. Վճճաճճ, Լաშա ցուրցոյի մեջջոզոյի Նայոտեոտեոյի, – “ՅՅ-Եյ” (օկթ. Ն.), 1975, № 4, թ. 102-106.

ներ: Նրանք, հատկապես՝ Վահրամյան եւ Ավագյան տները, ի վիճակի չեղան իրենց նպատակներին ծառայեցնել Ելտկուզյան աթաբեկության վերացումը, քանի որ վերջիններին պատկանող տարածքը ընդունեց մոնղոլների գերիշխանությունը եւ սկսեց հարկ վճարել նրանց<sup>1</sup>: Միակ հաջողությունն այս ուղղությամբ՝ Վահրամ Գագեցու կողմից Շամքորի վերագրավումն էր<sup>2</sup>: ԺԳ դ. սկզբին Հարավային Հայաստանում այնքան հզոր Այուբյանների թուլացումից եւս մասամբ միայն կարողացան օգտվել Զաքարյանները: Նրանցից Շահնշահ Ա-ն վերջապես նորից անցավ Երասխը եւ տիրացավ Սուրմարին միայն 1235 թվականին<sup>3</sup>:

Այսպիսով, ԺԳ դ. 30-ական թվականներին Այսրկովկասում հաստատված նոր քաղաքական կացությամբ պետք է բացատրել այն իրողությունը, որ Հայաստանի ազատագրության գործում միայն աննշան հաջողություններ ձեռք բերվեցին: Դժբախտաբար, հենց այդ պահին էլ հասավ առավել ծանր հարվածը: Իրադարձությունների հետագա ընթացքը կանխորոշեց 1236 թվականի մոնղոլական արշավանքը, որը բացառիկ կարճ ժամանակամիջոցում արտասովոր հաջողություններ բերեց նվաճողներին: Կովկասյան քաղաքական եւ մշակութային աշխարհի համար արտաքին կացությունը կտրուկ կերպով վատթարացավ: Հայ ժողովրդի համար սկսվեց մաքառումների եւ հանուն գոյատեւման մղվող պայքարի նոր երկարատեւ ժամանակաշրջան:

---

1 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 346:

2 Տե՛ս Ա. Ի. Ծահնագարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 70-71:

3 Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 41: Հմմ. Կիրակոս Գանձակեցի, էջ 260: Հավանաբար, այդ ժամանակ են գրավվել նաեւ Կաղզվանը եւ Վաղարշակերտը (տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն, էջ 287, հմմ. Վրաց ժամանակագրություն, էջ 91):



## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

### ԻՐԱՎԻՃԱԿԸ ԺԳ ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ - ԺԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ԵՒ ՀԱՅ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

Մոնղոլների հայտնվելը Մերձավոր Արևելքում առանցքային տեղաշարժեր առաջ բերեց տարածաշրջանում: Սակայն, ելնելով իրենց ռազմա-քաղաքական նպատակներից՝ նվաճողները սկզբնական շրջանում ոչ միայն հիմնականում անփոփոխ թողեցին Հյուսիս-արևելյան Հայաստանի կառավարման համակարգը, այլև պահպանեցին հայ ավատատերերի այն ներքին կազմակերպությունը, որը ձևավորվել էր Զաքարյանների օրոք<sup>1</sup>:

Գրաված երկրների նախկին տիրակալներին հանդուրժելու եւ սեփական նպատակներին ծառայեցնելու մոնղոլական ուղեգիծը շեշտակիորեն տարբերվում էր սելջուկ-թյուրքերի որդեգրած գործելակերպից, որը բացառում էր հայ իշխողների ազդեցության նույնիսկ մասնակի պահպանում հետմանազկերտյան ժամանակաշրջանում: Ավելին, մինչև Դազան խանի (1295-1304) օրոք մահմեդականության ընդունումը մոնղոլական վերնախավը համակրական վերաբերմունք էր դրսևորում քրիստոնյա հպատակների նկատմամբ, մինչդեռ մահմեդականների հանդեպ նրա դիրքորոշումը հաճախ անհանդուրժողական էր<sup>2</sup>: Հայտնի է, որ քրիստոնյա հոգևորականները բարձր դիրք ունեին մոնղոլական տարբեր տիրակալների արքունիքներում, եւ այդ առումով աչքի էին ընկնում նաեւ հայերը: Նրանք եւ ուսուցիչները գործունեություն էին ծավալել ինչպես մոնղոլների մայրաքաղաք Կարակորումում, այնպես էլ Բաթու խանի եւ նրա որդի Սարթախի արքունիքում<sup>3</sup>:

Անշուշտ՝ դիվանագետների, իշխանների, հոգևորականների նախապատրաստական աշխատանքները խնդրի միայն մի կողմի արտացոլումն էին: Այդ բոլոր ջանքերը կարող էին ապարդյուն անցնել, եթե չտեղավորվեին մոնղոլ նվաճողների ռազմա-քաղաքական ծրագրերում: Որքան էլ չափազանցություն թվա, թերեւս, անհիմն չէ այն կարծիքը, որ մոնղոլները բոլոր հպատակ ժողովուրդների շարքում առավել բարյացակամ դիրք էին բռնել հենց հայերի նկատմամբ<sup>4</sup>: Հատկապես մոնղոլական տիրապետության սկզբնական փուլում՝ մինչիլխանական շրջանում եւ առաջին իլխանների օրոք, նվաճողների հետապնդած հեռահար նպատակներն առանձին դեպքերում հնարավորություն էին ընձեռում հայ-մոնղոլական համագործակցության, իսկ Կիլիկյան Հայաստանի պարագայում նաեւ դաշինքի հաստատման համար: Ամենեւին պատահական չէ, որ Կիլիկիայի հայերի եւ մոնղոլների միջեւ առաջին շփումների փուլում միջնորդի դեր ստանձնեցին բուն Հայաստանի իշ-

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղթականք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 7-10:

2 Տե՛ս B. Spuler, *Ազլ. աշխ.*, էջ 25-26; A. Bausani, *Religion under the Mongols*, – In: *The Cambridge History of Iran*, Vol. 5, p. 538.

3 Հմմ. Լ. Խաչիկյան, *Արտագի հայկական իշխանությունը եւ Ծործորի դպրոցը*, – «Բանբեր Մատենադարանի», 11, Եր., 1973, էջ 126-130:

4 Տե՛ս C. Cahen, *Pre-Ottoman Turkey*, p. 326. Միեւնույն ժամանակ, հարկ է զել, որ իրականության հետ ոչ մի կապ չունի հեղինակի այն պնդումը, թե հայերը «սկզբից եւեթ գիտակցաբար դարձել են մոնղոլների գործակալները»:

խանները, մասնավորապես Ներքին խաչենի տիրակալ Հասան-Ջալալը<sup>1</sup>: Իր հերթին, Կիլիկյան Հայաստանը կապող օղակ էր Արեւմուտքի եւ մոնղոլական իլխանության միջեւ ընթացող այն բանակցություններում, որոնց արդյունքում ակնկալվում էր Եգիպտոսի սուլթանության դեմ գործուն դաշինքի կնքում<sup>2</sup>:

Մոնղոլների հայտնվելը Իրանում, Փոքր Ասիայում եւ Ասորիքի սահմանների մոտ՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից խորտակում էր իսլամի դիրքերը ողջ Մերձավոր Արեւելքում, ընդ որում ի նպաստ քրիստոնեական երկրների: Հայտնի է, օրինակ, որ ջախջախիչ հարված հասցնելով Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը՝ մոնղոլները նպաստեցին Նիկիայի կայսրության արտաքին քաղաքական դրությունների բարելավմանը<sup>3</sup>:

Հայերի եւ հայկական պետական կազմավորումների համար առավել բարենպաստը ԺԳ դ. 40-ական թթ. երկրորդ կեսի – 50-ական թթ. կարճատեւ ժամանակահատվածն էր, երբ արդեն ավարտվել էին սոսկալի ավերածություններով ուղեկցվող մոնղոլական գրավումները եւ մոնղոլները ձեռնամուխ էին եղել գլխավորապես մահմեդական երկրների նվաճմանը: Այս փուլն էր, որ 1260 թվականին ընդհատվեց Եգիպտոսի սուլթանության զորքերից իլխանական բանակի պարտությունամբ Պաղեստինում՝ Այն Ջալուտի ճակատամարտում: Ընդամենը երկու տարի անց սկսվեցին երկարատեւ բախումները Ոսկե Հորդայի խաների եւ մոնղոլ իլխանների միջեւ: ԺԳ դ. 60-ական թվականներին էլ ձեւավորվեց Հյուսիս-Հարավ առանցքը երկու մահմեդական պետությունների՝ մամլուքյան Եգիպտոսի եւ Ոսկե Հորդայի միջեւ, որն առաջին հերթին ուղղված էր իլխանության դեմ: Այս մերձեցմանն ի պատասխան՝ քայլեր ձեռնարկվեցին Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ սերտ համագործակցություն հաստատելու ուղղությամբ, որն ակնհայտորեն հակամահմեդական միություն բնույթ էր կրում<sup>4</sup>: Այդ ձեռնարկումների շրջանակում որոշակի դեր էր հատկացվում նաեւ Կիլիկյան Հայաստանին եւ Լատինական Արեւելքի խաչակրաց պետություններին: Դեպքերի հետագա ընթացքը, սակայն, ցույց տվեց, որ կրոնական գործոնն ամենեւին էլ ամենակարեւորը չէր Արեւելք-Արեւմուտք հարաբերություններում, եւ իլխանների համար ավելի էական էին Ասորիքում, Միջերկրական ծովի արեւելյան ափին հաստատվելու ձգտումները: Այս հարցում նույնն էր նաեւ Արեւմուտքի մոտեցումը: Օրինակ, եթե Ֆրանսիական թագավորությունը եւ Հռոմի պապը հանդես էին գալիս որպես իլխանների դաշնակիցներ, ապա դարձյալ կաթոլիկական Սիցիլիական թագավորությունը եւ Կատալոնիան կապեր էին հաստատել Եգիպտոսի եւ Ոսկե Հորդայի տիրակալների հետ<sup>5</sup>: Քաղաքական պատճառներից բացի, Ոսկե Հորդայի եւ Եգիպտոսի միջեւ համագործակցության

---

1 Տե՛ս Ա. Գ. Գալստյան, *Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները*, – «Պատմա-բանասիրական համադրում», 1964, № 1, էջ 99-100:

2 Այդ դաշինքի մասին տե՛ս J. A. Boyle, *The Il-Khans of Persia and the Christian West*, – In: *The Mongol World Empire. 1206-1370. Collected Essays*, London, 1977 (Variorum reprints, XIII), p. 556-560; J. Richard, *The Mongols and the Franks*, – In: *Orient et Occident au Moyen Âge: contacts et relations (XII-XV s.)*, London, 1976 (Variorum reprints, XXVII), p. 45-55.

3 Տե՛ս *История Византии*, т. III, Москва, 1967, с. 62; Г. Л. Курбатов, *История Византии*, Москва, 1984, с. 174.

4 Տե՛ս К. Босворг, *Мусульманские династии*, с. 201. Հմմ. նաև G. A. Margaryan, “Christian” Ilkhans: myth and realities, – “Aramazd”: Armenian, Journal of Near Eastern Studies, Oxford, 2020, p. 228-246.

5 Տե՛ս B. Spuler, *Աշխ.* աշխ., էջ 28:

ձեւավորման խնդրում որոշիչ դեր խաղացին նաեւ տնտեսական ընդհանուր շահագրգռությունները, մասնավորապես՝ փոխադարձաբար շահավետ առեւտուրը<sup>1</sup>:

Կռիվները Եգիպտոսի մամլուքների եւ Իրանի մոնղոլների միջեւ շարունակվեցին նաեւ ժԳ դ. վերջին – ժԴ դ. սկզբին, երբ իլխանության մոնղոլական վերնախափն իրանական միջավայրի ազդեցությամբ արդեն մահմեդականություն էր ընդունել եւ սկսվել էին հալածանքները քրիստոնյաների նկատմամբ: Նախանձելի համառությամբ շարունակվող պայքարը Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ ամենաաղետալի հետեւանքներն ունեցավ ինչպես Լատինական Արեւելքի խաչակրաց պետությունների եւ Կիլիկյան Հայաստանի համար, այնպես էլ պատմական հեռանկարի տեսանկյունից: ԺԴ դ. 80-90-ական թվականներին իլխանությունում ծավալված գահակալական կռիվներին եռանդուն կերպով մասնակցում էին Իկոնիայի սուլթանության մոնղոլական կառավարիչները, որի հետեւանքով մոնղոլները թուլացրեցին վերահսկողությունը փոքրասիական շրջանների հանդեպ: Դրա արդյունքում ժԴ դ. վերջին սկսվեց Օսմանյան եւ Կարամանյան թյուրքական իշխանությունների վերելքը, որն սպառնալից չափեր ընդունեց ժԴ դարում:

Միջերկրական ծովի արեւելյան ափի, մասնավորապես Ասորիքի համար ծավալված պայքարին վերջ տրվեց միայն 1323 թվականին, երբ Աբու Սայիդ իլխանը (1317-1335) հաշտություն կնքեց մամլուքների հետ<sup>2</sup> եւ քայլեր ձեռնարկեց պետության ներսում քաղաքական կայունություն հաստատելու, տնտեսությունը կարգի բերելու ուղղությամբ<sup>3</sup>: Սակայն գահակալական կռիվների թեժացումը, մի կողմից, եւ Օսմանյան Թուրքիայի հզորացումը, մյուս կողմից, նախապատրաստեցին ավելի վատթար աշխարհաքաղաքական իրադրության հաստատումը տարածաշրջանում: Վճռական շրջադարձի սկիզբը դրվեց դեռ մինչեւ Աբու Սայիդի մահը: Մոնղոլական ազդեցիկ մեծատոհմիկներից Չոբանի որդի Թեմուրտաշը 1327 թվականին Կեսարիայից փախավ Եգիպտոս եւ շուտով սպանվեց այնտեղ: Եթե Թեմուրտաշին հաջողվեր Փոքր Ասիայում ստեղծել զորեղ պետություն, ապա այն ի վիճակի կլիներ եթե ոչ կանխել Օսմանյան Թուրքիայի վերելքը, ապա գեթ զգալիորեն խանգարել թուրք օսմանցիներին<sup>4</sup>: Սակայն Թեմուրտաշի վախճանը եւ Աբու Սայիդի մահը, Ռենե Գրուսեի դիպուկ բնութագրմամբ՝ «առանց տիրոջ թողեցին Անատոլիան եւ ազատ արձակեցին թուրք ամիրաների ձեռքերը՝ Կարամանինը՝ հարավ-արեւելքում եւ Օսմանինը՝ հյուսիս-արեւմուտքում»<sup>5</sup>: Այսպիսով, Օսմանյան Թուրքիայի վերելքը՝ 1327-1335 թվականներին իլխանական արքունիքում ծավալված դեպքերի անուղղակի հետեւանքն էր: Հետեւաբար, ժԴ դ. առաջին կեսին էր, որ դրվեցին ժՁ-ԺԸ դարերի կործանարար աշխարհաքաղաքական կացության հիմքերը: Իլխանության քայքայումը, որն առանց ընդհատվելու շարունակվեց 1336-ից մինչեւ 1353 թվականը<sup>6</sup>, ուղի հարթեց նոր կայսրությունների՝ արեւմուտքում Օսմանյան Թուրքիայի, արեւելքում՝ Սեֆյան Իրանի հզորացման համար:

1 Նույն տեղում, էջ 23, 29:

2 Տե՛ս **К. Босворт**, *Мусульманские династии*, с. 201.

3 Տե՛ս **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-khans*, p. 406-413.

4 Նույն տեղում, էջ 411-412:

5 **R. Grousset**, *Աշխ.*, էջ 464:

6 Փասնանկալից գրականության մեջ իլխանության կործանումը դրվում է 1353 թվականին (տե՛ս **К. Босворт**, *Мусульманские династии*, с. 200; **И. П. Петрушевский**, *Иран и Азербайджан под*

Երեւույթների էութեան մեջ ճիշտ կողմնորոշվելու նպատակով շահեկան կլիներ անդրադառնալ ինչպես մոնղոլական շրջանի Հայաստանի կյանքում դիտվող աղետալի երեւույթներին, որոնք արդարացիորեն խիստ բացասական գնահատականի են արժանացել պատմագիտութեան մեջ, այնպես էլ որոշ հակասական միտումների, միանշանակ արժեքավորման չենթարկվող իրողութիւններին: Այդ միտումներն ու իրողութիւններն ի հայտ են գալիս տարբեր ժամանակահատվածներում եւ առարկայական վերլուծութեան կարիք են գգում: Ստորեւ ներկայացվող ակնարկն այդպիսի քննութեան հավակնութիւն չունի եւ կոչված է պատասխան տալու մեկ հիմնահարցի՝ ինչպես են ազդել մոնղոլների հայտնվելը, նրանց տիրապետութեան հաստատումը եւ նվաճողների վարած քաղաքականութիւնը հայ ավատատերերի գործունեութեան պայմանների վրա: Այդ խնդրի լուսաբանութիւնն էլ, իր հերթին, հնարավորութիւն կընձեռի պարզաբանել տիրապետող դասակարգի եւ, իհարկե, նաեւ ավատատիրական ավագանու ներսում կատարված տեղաշարժերը, մասնավորապէս՝ տարբեր իշխանական տների ուժերի հարաբերակցութեան փոփոխութիւնները:

\* \* \*

1236 թվականին Հյուսիս-արեւելյան Հայաստանն ու Արեւելյան Վրաստանը գրավելուց հետո մոնղոլները միանգամից չէ, որ հաստատեցին իրենց հյուժիչ եւ ծանր տիրապետութիւնը այդ նորանվաճ տարածքներում: Խանգարիչ հանգամանքներից էին դեռեւս շարունակվող պատերազմները, վարչական ու հարկային պաշտոնեւորութեան եւ առհասարակ պետական ապարատի դեռեւս ձեւավորման փուլում գտնվելը: Ուստի 1236 թվականի մոնղոլական գլխավոր արշավանքի ժամանակ համատարած բնույթ ընդունած թալանին ու կողոպուտին հաջորդեցին համեմատաբար մեղմ տարիները, երբ նվաճված երկրների հարստահարումը դեռեւս այնքան համակողմանի չէր դարձել, որպէսզի անշրջելիորեն քայքայեր գրավված տարածքների տնտեսութիւնը: Այդ ամենը տակավին առջեւում էր, իսկ ԺԳ դ. 30-ական թթ. երկրորդ կեսին – 40-ական թթ. սկզբներին Հյուսիս-արեւելյան Հայաստանում շրջադարձային տեղաշարժեր տեղի չունեցան, եթէ հաշվի առնենք շինարարական աշխատանքների չընդհատվելը, տնտեսական բավականին բարձր ակտիվութիւնը եւ հենց այդ տարիներին որոշ վանքերի գլխավոր եկեղեցիների օծումը (Գանձասար, Նոր Վարագ): Հյուսիս-արեւելյան Հայաստանը գրավելու ընթացքում մոնղոլները չզլացան սիրաշահել առանձին ազդեցիկ իշխանների՝ որպէսզի նվազագույն կորուստներով հասնեն իրենց նպատակին: Օրինակ, երբ Ավագ Զաքարյանը համաձայնութեան եկավ մոնղոլների հետ, Զարմաղան նույնի «նստոյց գնա ի վերոյ յուր վից մեծամեծացն. եւ այսպէս օր ըստ օրէ յաւել ի պատիւ նմա, մինչեւ ի բուն մեծամեծացն կարգի նստուցանել զնա. եւ հրամայեաց ամենայն զօրուն ոչ մարտնչել ընդ բերդսն եւ ընդ քաղաքսն, որ ընդ իշխանութեամբ նորա էին: Եւ բազում դիւրութիւն եղեւ յաշխարհի նորա, եւ բազում գերիս ազատս արձակեցին վասն նորա եւ զամենայն աշխարհ ետ նմա, եւ այլ եւս աւելի»<sup>1</sup>: Վրաց ժամանակագիրը, արտաքուստ դրվատանքով արձանագրելով Ավագի եւ մոնղոլների միջեւ ներդաշնակ հարաբերութիւնները

*властью Хулагуидов*, – В кн.: Татары-монголы в Азии и Европе, Москва, 1977, с. 250). Հակոբ Մանանդյանը նախընտրել է 1344 թվականը (Հ. Մանանդյան, Աշվ. աշխ., էջ 333): Իլխանության հոգեվարքի մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. IV, Եր., 1972, էջ 15-20; J. Boyle, *Dynastic and Political History of Il-khans*, p. 413-416.

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 257 (ընդգծումներն իմն են):

հաստատումը<sup>1</sup>, քիչ անց անդրադառնում է նաև այդ կապերի ստվերոտ կողմի դրսևերմանը: Պատմելով ամբողջ Վրաստանը Ռուսուդանի որդի Դավթին հանձնելու մասին՝ նա Տիֆլիսից բացի մատնանշում է միայն Սամշվիլը, «որ առաջին ճակատամարտի ժամանակ գրավել էին Յոսուր նոյինն ու Անգուրնակը՝ Ավագի մասնակցությամբ»<sup>2</sup>: Ստացվում է, որ աթաբեկը՝ արքունի ամենաբարձր պաշտոնյան, անձամբ մասնակցել էր թագավորական տարածքների գրավմանը:

Իրագրության մեջ արագ կողմնորոշվեցին եւ մոնղոլների հետ փոխըմբռնման հասան նաև Սյունիքի Օրբելյանները: Եթե Չարմաղան նոյինը Ավագի օգնությամբ գրավել էր վրաց արքային պատկանող շրջանները, ապա Ասլան նոյինը՝ նույնն արեց Ավագի գերիշխանությանը ենթակա երկրամասում: Ստեփանոս Օրբելյանը չի էլ թաքցնում, որ մոնղոլ զորավարը «կալեալ զնա [էլիկում Օրբելյանին – Ն. Մ.] առաջնորդ՝ զնաց մինչև յԱնի եւ հնազանդէր զամենայնն. էառ նա զՎայոց ձոր եւ զԵղեգիս մինչև յՆերսոն գիւղ, որ է հանդէպ Գառնույ եւ ետ զամենայնն էլիկումին»<sup>3</sup>: Այսպիսով, էլիկումի անմիջական մասնակցությամբ նվաճվում էին հարեւան Պոռչյանների տիրույթները, որոնք դժվար թե անհետեւանք մնային երկու իշխանական տների հետագա փոխհարաբերությունների տեսանկյունից: Հենց այս ժամանակ էլ պետք է սկիզբ առներ Ավագյան տան եւ Օրբելյանների միջև լիովին հասկանալի բախումը, որի խիստ աշառու եւ պակասավոր նկարագրությունը տալիս է Ստեփանոս Օրբելյանը<sup>4</sup>: Պատկերը ամբողջացնում են վիմագիր արձանագրությունները: Այսպես, ստույգ հայտնի է, որ Արատեսը պատկանում էր Խաղբակյաններին, քանի որ «Եղեգեաց ձոր»-ը ազատագրել էր Վասակ Խաղբակյանը, այդ մասին հատուկ արձանագրություն թողնելով Արատեսի վանքում<sup>5</sup>: Սակայն այդ վանքի հետագա արձանագրություններից ակներե է դառնում, որ Արատեսն ու հարակից տարածքը առնվազն 1270 թվականից անցել էին Օրբելյաններին<sup>6</sup>: Բայց եւ այնպես, այդպիսի վերաբաշխումները, որոնք նպատակադրված իրականացնում էին մոնղոլները, էականորեն չեն փոխել ուժերի հարաբերակցությունը հայ ավատատիրական ավագանու շրջանում՝ գոնե 1236 թվականի արշավանքին հաջորդած առաջին երեք տասնամյակների ընթացքում: Անխտիր բոլոր խոշոր ավատատիրական ընտանիքները հնազանդվեցին նվաճողներին եւ պահպանեցին հիմնական տիրույթները:

Ելնելով իրականությունը համակողմանիորեն եւ փուլ առ փուլ լուսաբանելու շահերից՝ արժե հակիրճ կանգ առնել մոնղոլական վարչական ու հարկային պաշտոնեություն կազմավորման ընթացքի եւ նվաճողների ձեռնարկումների նկատմամբ հայկական սկզբնաղբյուրների, ասել է թե՛ մասամբ նաև հայկական ազդեցիկ շրջանների գնահատականների եւ դիրքորոշման վրա:

1239 թ. վերջին Չարմաղանի կողմից արեւմուտքում գրաված տարածքների քաղաքացիական կառավարիչ էր նշանակվել ուշուր Կորգուզը, որի նստավայրն էր

1 Տե՛ս յճրտլոս Եճոճրջճ, II, ՅՅ. 190; Վրաց ժամանակագրություն, էջ 75:

2 Նույն տեղեղում, էջ 196 եւ էջ 79:

3 Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 296:

4 Նույն տեղում, էջ 296-304:

5 Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 123:

6 Նույն տեղում, էջ 124-126:

Թուև քաղաքը<sup>1</sup>: Քանի որ Չարմաղանն այդ ժամանակ համրացած էր եւ նրա իշխանութիւնը փաստորեն անցել էր կնոջը՝ Էլթինա խաթունին, ապա եւ Կորգուզը պետք է ենթարկվեր մոնղոլ իշխանուհուն: Ինչպես պատմում է Կիրակոս Գանձակեցին, Էլթինա խաթունը սիրալիր ընդունելութիւն է ցույց տվել Աղվանից Ներսես կաթողիկոսին եւ «յանձնեաց զնա եւ զպաշտօնեայս իւր յեղբարս իւր՝ ի Սաղեղ-աղայն եւ ի Գորգոզն, որք էին քրիստոնեայք հաւատով»<sup>2</sup>: Դրութիւնը հիմնովին փոխվեց Կորգուզի հաջորդի՝ Արղունի օրոք, որը նշանակված էր Արեւմուտքի, այսինքն՝ Իրանի, Հարավային Կովկասի, Վերին Միջագետքի եւ Փոքր Ասիայի մոնղոլական մասի կառավարիչ<sup>3</sup>: Նրա գլխավորութեամբ է, որ իրականացվեցին 1247 եւ 1254 թվականներին աշխարհագրերը, կտրուկ ծանրացնելով մոնղոլների հարկային լուծը<sup>4</sup>: Հայտնի է նաեւ, որ Արղունին ուղեկցում էին մեծածիփ պարսիկ հարկային աստիճանավորներ, որոնք դիմում էին ամեն տեսակի բռնութիւնների եւ կամայականութիւնների: Ուշագրավն այն է, որ տեղական ազգաբնակչութիւնը դժգոհելու առիթ է ունեցել նաեւ յուրային իշխողներից: Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, 1254 թ. աշխարհագրի ժամանակ. «Այլ եւ իշխանքն՝ տեարք գաւառացն, նոցուն [հարկահանների - Հ. Մ.] գործակից լեալ ի նեղելն եւ պահանջելն վասն իւրեանց շահելոյ»<sup>5</sup>: Նման փորձերը, սակայն, առանձնապէս արդյունավետ չեն եղել, քանի որ ԺԳ դ. 50-ական թթ. վերջերից հայ իշխանական տների մեծ մասի տնտեսական հզորութեան թուլացումն ակնհայտ իրողութիւն պետք է համարել: Այդ երեւույթի պատճառներից պետք է համարել ոչ միայն մոնղոլական հարկային լծի վերջնական ձեւավորումը, այլեւ հսկայական ռազմավար բերող հաղթական պատերազմների ավարտը: Եթե հայկական աղբյուրները համեմատաբար սակավախոս են, ապա հանդիպում են նաեւ այնպիսի վկայութիւններ, որոնցում մանրամասն պատմվում է, օրինակ՝ Բաղդադը 1258 թվականին գրավելիս մեծարժեք ավար վերցնելու, հետագայում վաճառելու եւ Վրաստանում կալվածք գնելու մասին<sup>6</sup>:

Իրականացնելով իրենց ռազմա-քաղաքական ծրագրերը, մոնղոլ նվաճողները հատուկ քաղաքականութիւն էին վարում ռազմավարական նշանակութիւն ունեցող առանձին շրջանների նկատմամբ: Այսպէս՝ ԺԳ դ. 50-ական թթ. վերջին նրանք նպաստեցին Երզնկայի հայկական իշխանութեան ստեղծմանը, որի գլուխ էին կանգնած Տեր-Սարգիս եպիսկոպոսը եւ նրա որդի Հովհաննէս իշխանը<sup>7</sup>: Թեեւ հստակ տվյալներ չկան, բայց դժվար չէ ենթադրել, որ մինչեւ հոգեւոր ասպարեզում աչքի ընկնող դիրք գրավելը Տեր-Սարգիսը եղել է տեղական խոշոր ավատատերերից մեկը: Սոցիալական բարձր ծագումն էլ նրան թույլ է տվել իր եւ որդու ձեռքում կենտրոնացնել աշխարհիկ ու հոգեւոր իշխանութեան բոլոր լծակները: Ստվար հայկական

1 Տե՛ս **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-khans*, p. 337.

2 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 291: Իրակասում Կորգուզը բուդդայական էր (տե՛ս **R. Grousset**, *Աշխ.*, էջ 424):

3 Տե՛ս **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-khans*, p. 338-340.

4 Մանրամասն տե՛ս **Լ. Հ. Բարսեղյան**, *Աշխ.*, էջ 247-254, 441-446:

5 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 362:

6 Տե՛ս **В. Д. Дондуа**, *Писанье о вкладе Кахи Торели в Рконский монастырь*, – “Грузинское источниковедение”, II, Тбилиси, 1968, с. 54-55.

7 Տե՛ս **Է. Մ. Բաղդասարյան**, *Երզնկայի հայկական իշխանությունը XIII-XV դարերում*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 2, էջ 36-38:

բնակչությունն ունեցող Երզնկան<sup>1</sup> մոնղոլների համար հուսալի հենարան էր Իկոնիայի սուլթանության արեւելյան սահմանագծում: Հայկական իշխանության գոյությունը այդ գոտում ինքնըստինքյան ուշագրավ երեւույթ է ներկայացնում, քանի որ այն յուրօրինակ «կղզակ» էր զգալի քաղաքական իշխանության հիմնական օջախների՝ Հյուսիս-արեւելյան Հայաստանի եւ Կիլիկիայի թագավորության միջեւ<sup>2</sup>: Դիտելի է նաեւ, որ մինչեւ Տեր-Սարգսի եւ նրա որդի Հովհաննեսի եղբրական սպանությունը 1276 թվականին, Երզնկայում ծաղկման էր հասել մշակութային կյանքը<sup>3</sup>, ընդ որում քաղաքի հայ տիրակալներն աչքի են ընկել ոչ միայն որպէս ձեռագրերի պատվիրատուներ, արվեստի ու մտավոր զբաղմունքների հովանավորներ, այլեւ Հովհաննես իշխանին ինքն էլ հանդես է եկել ինքնուրույն ստեղծագործություններով<sup>4</sup>:

Տեր-Սարգսի եռանդուն գործունեությունն անպայման հարուցել է Իկոնիայի սուլթանության հակամոնղոլական տրամադրություններ ունեցող շրջանների հակազդեցությունը: Նման պնդման համար հիմք է ծառայում 1276 թվականին Մերձավոր Արեւելքում եւ մասնավորապէս Փոքր Ասիայում ծավալված իրադարձությունների վերլուծությունը: Թեեւ 1272 թվականին Եկեղյաց գավառում գրված ձեռագրի հիշատակարանում նշվում է, թե՛ «է ի ժամանակս սորա [Տեր-Սարգսի եւ Հովհաննես իշխանի – Հ. Մ.]՝ խաղաղութիւն քրիստոնէից»<sup>5</sup>, գաղտնիք չէ, որ այդ պնդումը չափազանցություն է եւ Երզնկայի հայկական իշխանության հեռանկարը կախված էր իլխանության ու Եգիպտոսի մամլուքյան սուլթանության միջեւ ծավալված պայքարի ելքից: Հակառակորդների հերթական բախումը տեղի ունեցավ 1276 թվականին: Եգիպտոսի սուլթան Ռուբն ադ-Դին Բեյբարս Ֆնդուխտարը հունիսին ծանր պարտության մատնեց մոնղոլական սահմանապահ զորամասին եւ, շարժվելով դեպի Փոքր Ասիայի խորքերը, հասավ մինչեւ Կեսարիա: Բայց Տեր-Սարգսի դրությունը Երզնկայում կտրուկ կերպով վատթարացել էր նույնիսկ մինչեւ Ֆնդուխտարի արշավանքը: Տեր-Սարգսի եւ նրա որդի Հովհաննեսի սպանությունը տեղի էր ունեցել 1276 թվականի փետրվար-մարտին<sup>6</sup>, այսինքն՝ մինչեւ մամլուքյան զորաբանակի հայտնվելը Փոքր Ասիայում: Երզնկայի հայ տիրակալների սպանությունը, հավանաբար, հրահրել էին այն ուժերը, որոնք զրոգել էին մամլուքյան սուլթանին՝ ռազմական գործողություններ սկսել մոնղոլների դեմ<sup>7</sup>: Քրիստոնյաների եւ առանձնապէս հայերի նկատմամբ հալածանքները սաստկացան մամլուքների կարճատեւ գրա-

---

1 Ընդգծելով Երզնկայի բացառիկ դերը հայոց կյանքում՝ Բ. Կահենը շեշտում է, որ «ԺՊ դարում Երզնկան դեռեւս մնում էր ընդարձակ հայկական քաղաք» (C. Cahen, նշվ. աշխ., էջ 327):

2 Երզնկայի, որպէս կապող օղակի, դերը դիպուկ է բնութագրել Գարեգին Հովսեփյանը. «Միայն թաթարական տիրապետությամբ դուրիճ էր Երզնկայի կապը կենդանացնել արեւելյան եւ արեւմտյան հայության հետ» (Գ. Հովսեփյան, Համառոտ զեկուցում հայ մանրամասն կարգադրության միջոցով մեր աշխատանքի մասին, էջ 244):

3 Տե՛ս նույն տեղում, էջ 241-244:

4 Տե՛ս Հ. Ն. Ակիմյան, Երզնկայի Յովհաննէս իշխանի Երզնի ծնունդն Բրիտանոս, – «Հանդէս ամսօրեայ», 1956, ս. 355-356:

5 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 426:

6 Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. II, էջ 168, ծմթ. 154:

7 Սկզբնաղբյուրները հակամոնղոլական խմբավորման մեջ ընդգծում են երկու անձանց դերը՝ վեզիր Մուիմ ադ-Դին Փարվանէի (տե՛ս Рашид ад-Дин, т. III, с. 88; յճժօղօժ Երզնկայ, II, թ. 271; Վրաց ժամանակագրություն, էջ 141) եւ Զայիդ ամրոցի գործերի հրամանատար Բիշարի (տե՛ս Gregory Abul Faraj, p. 455):

վումների ժամանակ: Ինչպես վկայում է Ռաշիդ ադ-Դինը, «Ֆնդուխտարը ժամանեց Կեսարիա եւ անցկացրեց այնտեղ մեկ շաբաթ: Նա խուժբա կարդալ տվեց եւ դրամ հատեց իր անունով... Ֆնդուխտարը մահապատժի ենթարկեց որոշ քրիստոնյաների ու հայերի եւ վերադարձավ»<sup>1</sup>: Այսպիսով, Տեր-Սարգսի ու Հովհաննես իշխանի գործունեությունը ողբերգական ձևով ընդհատվեց<sup>2</sup>, բայց քանի որ մոնղոլները վճռականորեն ցանկանում էին շարունակել իրենց նախկին քաղաքականությունը Փոքր Ասիայում, Երզնկայի հայություն հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդությունը ստանձնեցին Տեր-Սարգսի թոռները՝ վերականգնելով նույնատիպ հարաբերությունները Աբաղա իլխանի (1265-1282) հետ:

ԺԳ դ. երկրորդ կեսին մոնղոլների հետապնդած նպատակներով է հնարավոր բացատրել նաեւ Երզնկայի պարոնտերությունը հար եւ նման իշխանության առաջացումն Արտազում: Մոտավորապես ԺԳ դ. 70-80-ական թթ. այստեղ հաստատվել էր պարոն Մանվելը, որի որդիներ պարոնտեր Զաքարիա Ծործորեցին եւ պարոն Պետրոսն իրենց ձեռքում էին կենտրոնացրել Արտազ գավառի հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունը: Ուշագրավ է, որ այս ընտանիքը եւս սերում էր ավատատիրական տոհմից եւ հինավուրց խնամիրական կապեր ունեւր Սյունիքի Օրբելյանների հետ: Երզնկայի եւ Արտազի իշխանությունների նմանությունն ակնհայտ է նաեւ նրանց տիրակալների բեղմնավոր հոգեւոր ու մշակութային վաստակի առումով<sup>3</sup>:

ԺԳ դ. երկրորդ կեսին – ԺԴ դ. սկզբին հայոց քաղաքական իշխանության վերապրման ուշագրավ փաստեր են հանդիպում անգամ Հայաստանի հարավ-արեւմտյան եւ հարավային գավառներում: Այսպես, Ակնի եւ Չմշկածագի միջեւ ընկած շրջաններում, որտեղ գոյություն ունեւր ստվարաթիւ հայ-քաղկեդոնական բնակչություն, կառավարում էին իսլամացիների տոհմի ներկայացուցիչները<sup>4</sup>: Սեւեռուն ուշագրության է արժանի Աբու-լ Ֆարաջի այն հաղորդումը, որի համաձայն՝ մինչեւ 1290 թվականը (բայց ո՛ր թվականից սկսած՝ մնում է անհայտ) հայ տիրակալ էր իշխում Մուշ քաղաքում<sup>5</sup>:

Հայ էթնիկ տարրի քաղաքական իշխանության որոշակի ամրապնդումն ամենից առաջ բացատրվում էր մոնղոլական գերիշխանության շրջանակներում հայերի ռազմական հզորության աճով: Նվաճողների միջավայրում ամենաաաջի ընկնող դիրքը պատկանում էր ռազմա-քոչվորական ավազանուն, հետեւաբար հպատակ ժողովուրդների վերնախավի բարձրացման միակ ուղին ռազմական հաջողակ ծառայությունն էր: Հայ իշխաններն առաջին անգամ մասնակցեցին մոնղոլների ձեռնարկած

---

1 Рашид ад-Дин, т. III, с. 88: Հմմ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 472:  
2 Այս դեպքերը համառոտ արձանագրում են հայկական ժամանակագրությունները (տե՛ս, օրինակ՝ Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 44, 105, հտ. II, էջ 146), իսկ Աբու-լ Ֆարաջը պատմում է նաեւ մանրամասնությունների մասին (Gregory Abul Faraj, p. 455-456). Ինչպես նշում է Հայկ Պերպլերեանը, Տեր-Սարգսն ուր անգամ հիշատակվում է Իբն Օսդադի երկում, որի արարքերն բնագիրը մնում է անտիպ, բայց հրատարակվել է թուրքերեն թարգմանությունը (տե՛ս Հ. Պերպլերեան, Հայկականը, Բ, – «Համդէս ամսօրեայ», 1960, սճ. 385, ծճթ. 5): Տեր-Սարգսի բացատիկ դերը նշում են նաեւ ժամանակակից օտար ռեսաւոտողները, տե՛ս С. Cahen, նշվ. աշխ., էջ 231, 286, 326-327:  
3 Մանրամասն տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 126-209:  
4 Տե՛ս Р. М. Бартикян, О византийской аристократической семье Гаврас, III, – “Историко-филологический журнал”, 1988, № 1, с. 163-169.  
5 Gregory Abul Faraj, p. 484.



արշավանքներին 1242 թ., երբ Բաշու նոյինն «իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ նորա, եւ գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ սուլտանին հոռոմոց»<sup>1</sup>: Այդ արշավանքին, որն ավարտվեց Կարինի ավերումով ու կողոպուտով, մասնակցում էին Ավագ եւ Շահնշահ Զաքարյանները, Աղբուղա Վահրամյանը, Գրիգոր Դովյանը եւ ուրիշներ<sup>2</sup>: Դեպի Իկոնիայի սուլթանություն կատարված երկրորդ՝ 1243 թ. արշավանքին մասնակցում էին ավելի մեծ թվով հայ իշխաններ: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ բացի նախորդ տարվա արշավանքի մասնակիցներից այս անգամ մոնղոլների բանակում էին գտնվում նաեւ Վահրամ Վահրամյանը, Ներքին Խաչենի տիրակալ Հասան-Ջալալը, «այլ իշխանքն եւ զօրք նոցին ըստ կարի իւրեանց»<sup>3</sup>: Հայկական եւ վրացական ջոկատները հատկապէս աչքի ընկան Իկոնիայի սելջուկների եւ մոնղոլների միջեւ տեղի ունեցած Քոսե-դաղի (Չմանկատուկի) ճակատամարտում<sup>4</sup>, իսկ այնուհետեւ մասնակցեցին սուլթանության առավել նշանավոր քաղաքների՝ Երզնկայի, Կեսարիայի, Սեբաստիայի, Տերիկի գրավմանը<sup>5</sup>:

Հաջորդ տարում Բաշուն գրավեց Հայաստանի հարավային շրջանները, վերջ տվեց Այուբյանների իշխանությանը իլաթում, իսկ այնուհետեւ շարժվեց դեպի Միջագետք եւ Ասորիք: Բաշուի գլխավորութեամբ կատարված մոնղոլական արշավանքն ու իլաթի գրավումն ընդունված է թվագրել 1245 թվականով<sup>6</sup>, որը, սակայն, Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների թյուր ընկալման հետեւանքն է: Պատմիչի ժամանակագրական ցուցումը՝ «դարձեալ ի մտանել ամին երկրորդի փախուցանելոյ զՂիաթադին սուլտանն»<sup>7</sup>, ընկալվել է այն առումով, որ խոսքը վերաբերում է 1243 թվականի Չմանկատուկի (Քոսե-դաղ) ճակատամարտում Ղիաս ադ-Դին Բ սուլթանի (1237-1246) պարտությունից երկու տարի անց տեղի ունեցած դեպքերին, այնինչ Կիրակոս Գանձակեցու նախորդ վկայությունների եւ այլ սկզբնաղբյուրների համադիր քննությունը բացառում է նման եզրակացության հնարավորությունը: Հայ հեղինակը, պատմելով 1243 թվականի արշավանքի բարեհաջող ավարտի եւ ձմեռելու նպատակով մոնղոլական զորքի Հայաստան ու Աղվանք վերադառնալու մասին, այնուհետեւ հաղորդում է Կիլիկիայի հայկական պետության եւ մոնղոլների միջեւ դաշինքի մասին. «Մեծարանօք յարգեցին զդեսպանսն արքայի [Հեթում Ա-ի - Հ. Մ.] եւ կարգեցին նոցա ռոճիկս եւ երիվարաց նոցա՝ զժամանակս ձմերանն, զի ի լինել գարնանոյն ընդ նոսին երթիցեն յաշխարհն իւրեանց: Հաստատեցին եւ սէր ընդ արքայի, ետուն եւ գիր ըստ դենին իւրեանց, զոր էլ-տամղայն կոչէին: Եւ այսպէս սպասէին՝ մնալով եղանակին գարնան, յորում միւսանգամ երթիցեն ի վերայ սուլտանին

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 279:

2 Նույն տեղում, էջ 280; Վարդան Արեւելցի, էջ 193; Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 41, հտ. II, էջ 139; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ժ. Գ. դար, էջ 228:

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 284:

4 Տե՛ս Ե. Մյենցելոս, *ქონე დაღის ბრძოლა*, “*о. ჯვავბიშვილის დაბადების 100 წლისთავისადმი მიძღვნილი საოუბილეო კრებულო*”, თბ., 1976, გვ. 300-312.

5 Կիրակոս Գանձակեցի, էջ 281-284; Վարդան Արեւելցի, էջ 193-194; Գրիգոր վարդապետ, էջ 28-29; Մխիթար Այրիվանցի, էջ 67; Սամուել Անցի (շարունակող), էջ 150; Մանր ժամանակագրություններ, հտ. II, էջ 140; Հ. Պերպլերեան, *Սեբաստիոյ սոնկոյական գրատման - 1243*, - «Հանդես ամսօրեայ», 1965, էջ 255-260:

6 Տե՛ս Հ. Մանանդյան, *Աղվ.*, էջ 228; Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 612:

7 Կիրակոս Գանձակեցի, էջ 292:

եւ աշխարհի նորա»<sup>1</sup>: Բնական է, որ մոնղոլները հաջորդ իսկ՝ 1244 թվականին պետք է զարգացնեին նախորդ տարվա հաջողությունը, այլ ոչ թե Իկոնիայի սելջուկներին ուշքի գալու եւ նորից համախմբվելու հնարավորություն ընձեռեն: Հետեւաբար՝ «ի մտանելն ամին երկրորդի»՝ պետք է ըմբռնել հաջորդ տարվա իմաստով: Ստեփանոս Օրբեկյանի Ժամանակագրությունը մոնղոլների այդ նույն արշավանքը՝ «Թաթարն ի Հալապա(յ) դուռն գնաց եւ զԲաղէշ էառ», թվագրում է 1244 թվականով<sup>2</sup>, որը միանգամայն ընդունելի է: Ըստ Ռաշիդ ադ-Դինի՝ այդ արշավանքը տեղի է ունեցել հիշրեի 642 թվականին (1244 թ. հունիսի 9 – 1245 թ. ապրիլի 30)<sup>3</sup>: Մոնղոլների առաջխաղացումը, սկսվելով զարնանը՝ ամռանը տոթի պատճառով դադարեցվել էր<sup>4</sup>: Հետեւաբար, պարսիկ պատմիչի նշած հիշրեի 642 թվականը պետք է կոնկրետացնել ամռան ամիսներն ընդգրկող առաջին հատվածով եւ համապատասխան համարել Ստեփանոս Օրբեկյանի նշած 1244 թվականին:

Մոնղոլական նվաճումների հաջորդ փուլը եւս, որն սկսվեց 1256 թվականին՝ Հուլավուի Իրան եւ Այսրկովկաս գալով, իրականացվեց հայ իշխանների մասնակցությամբ: Հայ տիրակալներից Զաքարե Գ Զաքարյանը, Հասան (Պոռոշ) Խաղբակյանը, Սեւադա Դոփյանը, Թաղիադին Կյուրիկյանը եւ ուրիշներ աչքի ընկան Բաղդադի եւ Նիփրկերտի (Մալաֆարկին) գրավման ժամանակ<sup>5</sup>: Գրեթե նույն ժամանակամիջոցում Սադուն Բ Մահկանաբերդցին այնպիսի համբավ էր վաստակել Հալեպի համար մղված մարտերում, որ այդ մասին հատուկ հիշատակում է Ռաշիդ ադ-Դինը<sup>6</sup>:

Երբ իլխանությունը պաշար էր մղում միաժամանակ երկու ճակատով՝ Ոսկե Հորդայի խաների եւ Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ, այդ դժվարին մարտերի ծանրությունը կրում էին նաեւ հայ ավատատերերն ու հայոց զորքը: Այսպես, Ոսկե Հորդայի զորքերի դեմ Թերեք գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում սպանվեց Բուրթեկ Օրբեկյանը<sup>7</sup>: Համառ եւ արյունահեղ էին նաեւ Եգիպտոսի մամլուքների դեմ մարտերը, որոնց մոնղոլների կողմից հաճախ մասնակցում էին Կիլիկյան Հայաստանի զորքերը: Այդ կռիվների ուշագրավ դրվագներից էր 1281 թվականի հոկտեմբերի 30-ին Հիմս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որտեղ պարտություն կրելուց հետո մոնղոլները որոշ ժամանակով հրաժարվեցին հարձակողական քաղաքականությունից<sup>8</sup>: Այդ ճակատամարտի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում՝ նաեւ որոշակի պատկերացում կազմելու դեպի Ասորիք կատարված մոնղոլական արշավանքների ժամանակ հայոց ու վրաց ջոկատների մասնակցության աստիճանի մասին: Սկզբնաղբյուրների մի մասի վկայությամբ՝ իլխանական բանակում էին գտնվում 30 հազար օժանդակ զորականներ՝ հայեր, վրացիներ, Իկոնիայի սուլթանությունից եկած ջոկատներ եւ Ֆրանկ խաչա-

1 Նույն տեղում, էջ 285-286:

2 *Ժամանակագրություն Ստեփանոսի Օրբելեանի*, էջ 25:

3 Рашид ад-Дин, т. III, с. 125.

4 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 292-298:

5 Կիրակոս Գանձակեցի, էջ 377-387; Վարդան Արեւելցի, էջ 199; Գրիգոր վարդապետ, էջ 28; Մխիթար Այրիվանցի, էջ 67; Рашид ад-Дин, т. III, с. 38-45, 54-56.

6 Рашид ад-Дин, т. III, с. 49-50.

7 Տե՛ս Ստեփանոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 304-305:

8 Տե՛ս А. Г. Маргарян, *Об участии армян и грузин в Химской битве 1281 года*, – “Кавказ и Византия”, вып. 5, Ер., 1987, с. 14-21.

կիրներ<sup>1</sup>: Եթե հաշվի առնենք, որ Իկոնիայի սուլթանուխանից ժամանած զորքը 1281 թվականին կազմված էր 3 հազար ռազմիկներից, ապա ստացվում է, որ հայոց ու վրաց ջոկատներում համատեղ կռվել են շուրջ 27 հազար մարտիկներ<sup>2</sup>: Հիմաի մոտ մոնղոլների եւ մամլուքների հաջորդ խոշոր բախման ժամանակ՝ 1299 թվականին, Կիլիկյան Հայաստանի եւ Վրաստանի թագավորները ներկայացել էին 38 հազարանոց՝ 13 հազար հեծյալներից ու 25 հազար հետեակ զինվորներից բաղկացած բանակով<sup>3</sup>: Այսպիսով, ԺԳ դ. վերջին դեպի Ասորիք կատարվող մոնղոլական արշավանքների ժամանակ հայկական եւ վրացական ջոկատները 27-ից մինչեւ 38 հազարանոց բանակ էին կազմում:

Ավելի դժվար է որոշել, թե այդ բանակում որքա՞ն էին Կիլիկյան Հայաստանից եւ որքա՞ն Հյուսիս-արեւելյան Հայաստանից, բայց վրացական բանակի կազմում կռվող հայերը: Առայժմ հնարավոր է միայն վստահորեն պնդել, որ 1281 թվականին հայ զորահրամանատարների թվում է եղել Տարսայիճ Օրբեկյանը: Նրա պատմիչ որդու վկայությամբ, Տարսայիճը, «այդ ուժեղ եւ սրտեայ եւ պատերազմող էր եւ հասակաւ ահարկու՝ յամենայն պատերազմունս, յոր եւ երթայր՝ մեծամեծ քաջութիւնս եւ անպարտելի զօրութիւնս ցուցանէր՝ ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս, ի Համայ ընդ Մսրացւոյն եւ ի Դարբանդ»<sup>4</sup>:

Հայ իշխաններն իրենց զորքերով երկրորդ անգամ մասնակցեցին Հիմաի մոտ ծավալված մարտերին 1299-1301 թվականներին դեպի Ասորիք կատարված արշավանքի ժամանակ, որը ձեռնարկել էր Ղազան իլխանը: Ստույգ հայտնի է, որ այդ ձեռնարկման հայ ղեկավարներից էին Շահնշահ Բ Զաքարյանը<sup>5</sup> եւ Լիպարիտի որդի Սմբատ Օրբեկյանը, որը եւ գերի էր ընկնել եւ 12 տարի անցկացրել Եգիպտոսում<sup>6</sup>:

Հայ իշխանները շարունակում էին կատարել իրենց զինական պարտավորությունները նաեւ ԺԳ դ. առաջին տասնամյակներին, երբ իլխանների պետությունը խիստ թուլացած էր եւ նրա արշավանքները հաճախ պարտություններ էին ավարտվում: Այսպես, Բուրթել եւ Զեսար Օրբեկյանները 1307 թվականին մասնակցեցին Ուլջեյթու (Խուդաբանդա) իլխանի (1304-1316) դեպի Գիլան եւ Թալիշ կատարած արշավանքին՝ կրելով զինական ուժի զգալի կորուստներ՝ «զաւրացն պակաս մնացին»<sup>7</sup>: Գյուրջիստանի վիլայեթից հավաքված զորքեր կային նաեւ Ուլջեյթուի

---

1 Տե՛ս **D. Ayalon**, *Bataille de Hims*, *Encyclopédie de l’Islam*, t. III, Leyde-Paris, 1971, p. 415; **R. Röhrig**, *Les batailles de Hims (1281 et 1299)*, – “Archives de l’Orient Latin”, t. I, Paris, 1881, p. 639.

2 Տե՛ս **А. Г. Маргарян**, *Об участии армян и грузин в Химской битве 1281 года*, с. 16-17.

3 Տե՛ս **R. Röhrig**, *Ազվ. աշխ.*, էջ 644, ծնթ. 44:

4 **Ստեփաննո Օրբելեան**, *Պատմութիւն*, էջ 310: Հիմաի ճակատամարտին Տարսայիճի մասնակցությունը նշել է դեռեւս Ժ. Սեն-Մարտենը (**J. Saint-Martin**, *Ազվ. աշխ.*, էջ 294-295, ծնթ. 47):

5 Տե՛ս *Մանր ժամանակագրություններ*, հտ. II, էջ 151:

6 Տե՛ս *Դիվան հայ վիճագրության*, պր. III, էջ 55: Ինչպես ենթադրում է Սեդրակ Բարխուդարյանը, միեւնույն տարիներին խաչքար է կանգնեցվել «ի բարեխաւս Աբրահամայ որ մնաց ի Մսր» (տե՛ս նույն տեղում, էջ 68):

7 **A. Sanjian**, *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, University of California Press, 1976, p. 86. Մոնղոլները Գիլանը եւ Թալիշը հնազանդեցնելու իրենց փորձը ձեռնարկեցին 1307 թ. մայիսին եւ խալտառակ պարտություն կրեցին: Հայ հիշատակագիրը վկայում է, որ հայկական ջոկատները գտնվել են Խույթուլաի բանակի կազմում, իսկ հայտնի է, որ այդ նշանավոր մոնղոլ զորահրամանատարը գոհվեց, իսկ նրա զլխավորած ջոկատները խուճապահար նահանջեցին (տե՛ս **J. Boyle**, *Dynastic and Political History of Il-khans*, p. 400-401).

1312/13 թվականի արշավանքի մասնակիցների թվում, երբ մոնղոլները ձեռնարկեցին Ասորիքը նվաճելու հուսկ վերջին փորձը<sup>1</sup>:

Հայկական եւ վրացական ջոկատները, որպես վատահելի ուժ, ԺԳ դ. 80-90-ական թվականներին օգտագործվում էին նաեւ իլխանուխյունը ցնցող գահակալական կռիվների ժամանակ: Այսպես, 1284 թվականին իլխաններ Ահմեդի (1282-1284) եւ Արղունի (1284-1291) միջեւ ծավալված մարտերին մասնակցում էին վրացական թագավոր Դեմետրե Բ-ն (1270-1289), Իվանե Բ Զաքարյանը, Խուլթու Բուղա Մահկանաբերդցին<sup>2</sup> եւ ուրիշներ: Վրացիների եւ հայերի կշիռը Ահմեդի բանակում այնքան զգալի է եղել, որ «մոնղոլներից եւ մահմեդականներից» հետո նրանց ներկայությունը ընդգծում է Ռաշիդ ադ-Դինը<sup>3</sup>: Բնութագրական փաստ է, որ նույն հեղինակը երկիցս՝ 1284 եւ 1299-1301 թվականների իրադարձությունների առիթով շեշտում է հայկական եւ վրացական ջոկատների հակումը դեպի տեղական մահմեդական բնակչության նկատմամբ բռնությունների գործադրումը եւ կողոպուտով հրապուրվելը<sup>4</sup>: Հասկանալի է, որ հայերն ու վրացիները պետք է խոր անտարբերություն ցուցաբերեին իլխանության ճակատագրի նկատմամբ եւ ձգտեին օգտվել բարենպաստ իրադրությունից՝ իրենց դիրքն ու նյութական վիճակն ամրապնդելու նպատակով: Առավել եւս, երբ առիթ էր ներկայանում՝ վրեժխնդիր լինելու: Օրինակ՝ երբ 1297 թվականին Ղազան իլխանի դեմ ըմբոստացավ հսկայական իշխանություն նվաճած Նովուզ ամիրան, որը մի քանի տարի առաջ լայնածավալ հալածանքներ էր ձեռնարկել քրիստոնյանների դեմ, հայկական ջոկատները եւս մասնակցեցին նրա վնասագերծմանը: Լիպարիտ Օրբելյանը եւ էաչի Խաղբակյանը, որոնք գտնվում էին Նովուզին ջախջախած Խուլթուշահի բանակում, «թուք արձակեալ յերեսս Նաւրուզին մեծ անարգանօք ձաղէին զնա»<sup>5</sup>:

Հայ իշխանների ռազմական ծառայությունն իլխանների բանակում առօրյա երեսույթ էր դարձել եւ ժամանակակիցներն իրենց համակրանքը շահած հայ իշխաններին բնութագրելիս շեշտում էին նրանց զորքի բազմությունն ու ռազմական կարողությունները<sup>6</sup>: Այդ հատկանիշներն էին, որ նոր պայմաններում թույլ էին տալիս մոնղոլ նվաճողների բարեհաճությանն արժանանալու: Իլխանությունում իշխանությանը տիրացած ռազմական ավագանին, որը թշնամի էր նստակյաց կյանքին եւ, ի տարբերություն սելջուկյան ժամանակաշրջանի, լիովին խզել էր կապերն անցյալի հետ<sup>7</sup>, բնականաբար աջակցում էր սոցիալական պատկանելության ու դերի առումով իրեն հոգեհարազատ տարրերին:

Մոնղոլների գերիշխանության հաստատումը նոր ուժով բորբոքեց խոշոր ավատատիրական տների միջեւ գոյություն ունեցող հին հակասությունները, իսկ նրանց վարած «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունն արագորեն փոփո-

1 Տե՛ս **Գ. Գոթոլեյմցու**, *Օմե Կոմ-Կոմարո 1312-13 թվականի յարտջելոտա յոտ Լոթթրոմոս Յեհեթե*, «Նախարտջելոտ օստորոտ Կոմոսաշելոտ Կոմալեթո», I, տԺ., 1976, թ. 106-111.

2 Տե՛ս *Կոտոտոտ Կոտոտեթե*, II, թ. 284; *Վրաց ժամանակագրոյութուն*, էջ 152:

3 **Рашид ад-Дин**, т. III, с. 104:

4 Նույն տեղում, էջ 106, 185:

5 Տե՛ս **Ստեփաննո Օրբելյան**, *Պատմութիւն*, էջ 347-348:

6 Տե՛ս, օրինակ՝ **Ժ. Դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ**, էջ 65:

7 Տե՛ս **A. Lambton**, *Աշխ.*, էջ 25-26:

խում էր ուժերի հարաբերակցությունն ավատատիրական ավագանու ներսում: Վրաստանում թագավորական իշխանություն, Հյուսիս-արեւելյան Հայաստանում՝ Զաքարյանների դիրքերի թուլացումը քաղաքական առումով զգալի դարձավ հատկապես ԺԳ դ. երկրորդ կեսին, երբ վրաց Բագրատունիների իշխանությունն անվանական դարձավ Սամցխեի աթաբեկությունում, իսկ Հայաստանում «արքայաշուք իշխանի» եւ «արքայի» հավակնություններով հանդես եկան Զաքարյանների երբեմնի ստորակաները: Եւ դա այն պարագայում, երբ ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին իրենց շատ ավելի բարձր տիտղոսներով մեծարող Զաքարյաններն ընդմիջտ «մոռացել էին» այդ ամենի մասին: Զաքարյանների երբեմնի «ծառա»-ներից առաջինը Սմբատ Օրբելյանն էր<sup>1</sup>, որը տասնամյակների լարված ջանքերի միջոցով հասավ «արքա»-ի դիրքի: Նրա եղբայր Տարսայիճն «արքայաշուք կողմնակալ» էր<sup>2</sup> կամ «արքայաշուք իշխան»<sup>3</sup>, այն էլ՝ դարձյալ իր մահից հետո գրված արձանագրություններում: Ի դեպ, «արքա» եւ «արքայաշուք» բնութագրումների զուգահեռ գործածությունն ավելի վաղ բնորոշ է եղել նաեւ Հասան-Ջալալի համար<sup>4</sup>, որին Վարդան Արեւելցիի «իշխանաց իշխան արքայաշուք Ջալալ» է անվանում<sup>5</sup>:

ԺԳ դ. վերջին տասնամյակում «թագաւոր» կամ «արքա» տիտղոսներն ավելի էին արժեզրկվել եւ դարձել էին ժամանակի իրականության մեջ աչքի ընկնող իշխանի հոմանիշ, առավել եւս եթե այդպիսի տիրակալը, մնալով հանդերձ մոնղոլների ստորական, անկախություն էր ձեռք բերել Զաքարյաններից: Այսպես, Ավագյան տան երկարամյա սպարապետ Հասան-Պոռը «թագաշուք իշխան» է հռչակվում միայն իր մահից (1284 թվական) հետո գրված հիշատակարաններից մեկում<sup>6</sup>: Բայց նրա որդի Ամիր-Հասանը, որը «թէպէտ իշխանաց իշխան կոչիւր, սակայն ի թագաւորաց անբաժանելի էր»<sup>7</sup>, այդ տիտղոսին արժանացել էր դեռեւս իր կենդանության օրոք, նրա «արքայ»-ությունը նշվում է արդեն 1290 թվականին<sup>8</sup>: Այս դեպքում եւս խաղբակյան իշխանների բոլոր բնութագրումները հանդիպում են բացառապես նրանց տիրույթներում գրված հիշատակարաններում եւ արձանագրություններում:

Ավատատիրական ավագանու իշխանության աճին կարելի է հետեւել նաեւ ավատատիրական իմունիտետի զարգացման, խոշոր իմունիտետների կողմից ոչ միայն հարկային, այլեւ վարչական ու դատական իմունիտետի ձեռքբերման գործընթացի լուսաբանման միջոցով: Այդ առումով հատկապես բարենպաստ պայմաններ առա-

---

1 Սմբատի «արքայ»-ությունը, այն էլ՝ միայն մահից (1273 թվական) հետո, գերագանցապես նշվում է Տարսայիճ Օրբելյանի դիրքը բնութագրելու կապակցությամբ (տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 149, 207, 214, 234, 236, 246): Սմբատի գործունեության մասին տե՛ս **Գ. Մ. Գրիգորյան**, *Ազխ.*, էջ 69-80, **Ե. Շերմյենցով**, *ԵՅՈՒՆԵՍԿՕ-ի Երեւանի համալսարանի հրատարակած հիշատակարաններից մեկում*<sup>6</sup>: Բայց նրա որդի Ամիր-Հասանը, որը «թէպէտ իշխանաց իշխան կոչիւր, սակայն ի թագաւորաց անբաժանելի էր»<sup>7</sup>, այդ տիտղոսին արժանացել էր դեռեւս իր կենդանության օրոք, նրա «արքայ»-ությունը նշվում է արդեն 1290 թվականին<sup>8</sup>: Այս դեպքում եւս խաղբակյան իշխանների բոլոր բնութագրումները հանդիպում են բացառապես նրանց տիրույթներում գրված հիշատակարաններում եւ արձանագրություններում:

2 *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 236:

3 *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 129:

4 Հասան-Ջալալ «արքա» եւ «թագաւոր» է անվանվել է նաեւ միգնոնդուլական ժամանակաշրջանում (տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, *Խաչենի իշխանությունը...*, էջ 211-214; **Ա. Յակոբեան**, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը...*, էջ 333, 348-349):

5 **Վարդան Արեւելցի**, էջ 200:

6 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 682:

7 Նույն տեղում, էջ 676: Հիշատակարանը գրվել է Ամիր-Հասանի մահվան (1292 թվական) տարում, նրա վախճանվելուց քիչ անց:

8 *Դիվան հայ վիմագրության*, պր. IV, էջ 150:

չացան հենց ժԳ դարում, քանի որ մոնղոլական տիրապետության եւ կենտրոնական իշխանության ու Զաքարյանների դիրքերի անկման պայմաններում հզոր ավատատիրական ընտանիքները զգալի արտոնություններ էին ձեռք բերում: Սկզբնաղբյուրներում առանձնապես հարուստ տեղեկություններ են պահպանվել ավատատիրական ավագանու ստեղծած տնտեսական-վարչական եւ դատական ապարատի վերաբերյալ: Ընդ որում, հաճախ իշխանների վարչական ապարատում ծառայում էին հոգեւորականները, ուստի եկեղեցական ժողովներն արգելում էին եկեղեցականներին հարկային-տնտեսական եւ այլ պաշտոններ վարել<sup>1</sup>:

Անշուշտ, առավել բարդ եւ բազմաճյուղ էր Զաքարյանների վարչական պաշտոնեությունը: Շահնշահ Բ-ն ժԳ դ. սկզբին ուներ իր մծիգնոբարթուխուցեսը՝ դպիրների ավագը<sup>2</sup>, իսկ ավելի վաղ հիշատակվում է Իվանե Զաքարյանի «դիւան»-ի «աւագ ծիկնուպար»-ը<sup>3</sup>, այսինքն՝ մծիգնոբարներից (դպիրներից) ավագը: Զաքարյանների «դիւան»-ում ծառայող դպիրների վաստակի մի մասն են կազմում Սանահնի «Քէօթուկ»-ում պահպանված վավերագրերը<sup>4</sup>: Հավանաբար, Սադուն Բ-ի պաշտոնեության համակարգում դպրապետի դեր էր կատարում «Ղարասլան քարտուղար»-ը<sup>5</sup>:

Վրացական արքունիքում, որի նմանողությամբ էլ կերտվում էր Զաքարյանների «դիւան»-ը, մծիգնոբարթուխուցեսից հետո հաջորդ տեղերը զբաղեցնում էին ամիրսպասալարը եւ մանդատուրթուխուցեսը: ԺԳ դարում Իվանե աթաբեկի, ապա Ավագյան տան սպարապետի պաշտոնը պատկանում էր Խաղբակյաններին<sup>6</sup>, իսկ Օրբելյանների իշխանությունում այդ դերը կատարում էին Շահունեցիները<sup>7</sup>: Վրացական թագավորության մանդատուրթուխուցեսներ Զաքարե Բ-ն եւ նրա որդի Շահնշահը իրենց հերթին նշանակել էին սեփական մանդատուրթուխուցես՝ ի դեմս Համազասպ Համազասպյանի<sup>8</sup>: Մանդատուրթուխուցեսի պաշտոն գոյություն ուներ նաեւ Իվանե աթաբեկի «արքունիքում»<sup>9</sup>: Շահնշահ Ա-ի եւ Զաքարե Գ-ի օրոք նրանց պաշտոնեությունը գլխավորում էր Խավուս Ա-ն, որը «մեծաւ պատուով պատուեցաւ ըստ Վրացն բարբառոյ՝ մասխուրթուխուցէս, որ ըստ մերումս թարգ-

---

1 Տե՛ս Գարեգին Վրդ. [Յովսէփեան], *Ձագավանից ժողովը*, – «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 44: Ինչպէս նշում է Գ. Հովսէփյանը, Ձագավանի ժողովի որոշումների համար հիմք է ծառայել Սահակ Պարթեւի կանոնների ԻԴ-րդ հոդվածը (քննական հրատարակություն՝ ԻԲ, տե՛ս «*Կանոնագիրը Հայոց*», Աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, հտ. Ա., Եր., 1964, էջ 380): Սակայն չի կարելի չնկատել, որ իրական կյանքի թելադրանքով ժԳ դարի՝ 1243 թվականի Սսի եւ 1270 թվականի Ձագավանի եկեղեցական ժողովները հարկադրված էին ավելի հանգամանորեն կանգ առնել այս հարցի վրա եւ ավելի մեծ թվով պաշտոններ անվանել, որոնց վարումը արգելվում էր հոգեւորականներին:

2 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 64:

3 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 259:

4 *Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը)*, Աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 73-75: Հրատարակված երկու վավերագրերն էլ կազմվել են Օքրոպիլ սարկավագի «ձեռամբ»:

5 Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 404, ծնթ. 4:

6 Նույն տեղում, էջ 10:

7 Տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, *Աշխ.* աշխ., էջ 58-62:

8 Տե՛ս *Յիշատակարան Սանահնոյ վանից*, էջ 73:

9 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ժԲ դարի պատմության մի քանի հարցեր*, էջ 215-217:

մանի գլուխ իշխեցող եւ հրամա[նա]տար ամենայն իշխեցողաց եւ գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»<sup>1</sup>: Մահկանաբերողցիների իշխանական տան մասխուրթութեանցեաններից հիշատակվում է Խուժու Բուղայի հավատարիմ ստորակա, նրա հետ միասին մահապատժի ենթարկված Օթարը<sup>2</sup>:

Ավելի հարուստ են պակաս կարեւորութուն ներկայացնող պաշտոնյաների մասին վկայությունները: Այսպես, Իվանե աթաբեկի օրոք «էր նորա գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց եւ աւագ հէջպաց մեծ եւ բարեպաշտ իշխանն Բուպա կոչեցեալ»<sup>3</sup>: Այդ միեւնույն պաշտոնը «ամիրհէճիպ» տարբերակով վկայված է Սանահնի արձանագրութիւններից մեկում<sup>4</sup>: Հավանաբար, իրավասութիւնների նույն շրջանակն ուներ Իվանեի եւ Ավագի օրոք նրանց իշխանութեան հեջուբ Գրիգոր Տղան<sup>5</sup>: Առանձին դեպքերում հեջուբները նույնիսկ կարող էին տոհմի հիմնադիր դառնալ, ինչպէս որ դա ակնհայտ է մեկ այլ Գրիգոր հեջուբի պարագայում, որը գործում էր Շիրակում<sup>6</sup>: Խոսուսն են նաեւ անցի հեջուբ Վահրամի մասին հաղորդումները: Այդ նշանավոր իշխանը նորոգել էր Հառիճի վանքի ժամատունը<sup>7</sup>, իսկ նրա դուստր Խաթունն ամուսնացել էր Նոր-բերդի Կյուրիկյաններից Դավթի որդի Վասակի հետ<sup>8</sup>: Մեկ ուրիշ հեջուբ՝ Դավիթը, հիշատակվում է Հովհաննավանքում 1300 թվականին<sup>9</sup>: Հեջուբի պաշտոնն այնպիսի տարածում էր ստացել ու հարգի էր, որ դեռեւս ԺԳ դարում վերածվել էր անձնանվան<sup>10</sup>: Զաքարյանների արքունիքի բարձր պաշտոնյաներից պետք է համարել նաեւ Աթաբեկ ամիրխոսրին (ախոռապետին), որի հուղարկավորման համար նույնիսկ տեղ է հատկացվել Տիգրան Հոնենցի եկեղեցում<sup>11</sup>:

Խոշոր ավատատերերի վարչական ապարատի միջին եւ ստորին օղակները զբաղեցնում էին տնտեսական-վարչական լայն լիազորութիւններ ունեցող ձեռնավորները<sup>12</sup>, որոնց կարելի է հանդիպել ինչպէ՛ս Զաքարյանների<sup>13</sup>, այնպէ՛ս էլ Մահ-

1 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178-179:

2 Տե՛ս Թ. ՅՅԾԾԾ, մշվ. աշխ., էջ 195-196:

3 Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, էջ 258: Ավելի վաղ, Ժ դ. վերջի իրադարձությունների առիթով, Ստեփանոս Ասողիկի Պատմությունում հիշատակվում է Բաղդադի խալիֆայի «աւագ հեճպացն»-ը (Ասողիկ, էջ 193):

4 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 142:

5 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI , էջ 70: Կիրակոս Գանձակեցի, էջ 222, 359: Գրիգոր Տղա հեջուբի մասին մանրամասն տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 197-201: Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը..., էջ 336-338:

6 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 17, 21-23: Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 213:

7 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 114: Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 162:

8 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 22-23: Կ. Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության մասին, – «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի եւ պատմության», Խմբ. Պ. Մ. Մուրադյան, Եր., 2007, էջ 215-216:

9 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 83:

10 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI , էջ 15-16:

11 Տե՛ս Ս. Մ. Мурадян, Проблема конфессиональной ориентации церкви Оненца, с. 57.

12 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 163-164:

13 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 10: Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 252: Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 157-158:

կանաբերդեցիներ<sup>1</sup>, Խաղբակյանների<sup>2</sup>, Խաչենի իշխանների<sup>3</sup> տիրույթներում: Հավանաբար, նման պարտականություններ ունեին Վաչուտյանների «հրամանակատար»-ները եւ «ծառա[յ]ական»-ները<sup>4</sup>: Ավելի հստակ է ներկայանում հարկային (մուհասի<sup>5</sup>), վարչական-ոստիկանական (շուրտա<sup>6</sup>, շահնա<sup>7</sup>, եւան<sup>8</sup>) աստիճանավորների, շտեմարանների եւ ամբարների հսկիչների (մուճուր<sup>9</sup>), գյուղապետների (դեմեհթար<sup>10</sup>, մեփորել<sup>11</sup>), գինեհավաքների (մեղունա<sup>12</sup>), դպիրների (քեթորար<sup>13</sup>), գյուղական ստորին պաշտոնեություն՝ գզիրների եւ չափողների<sup>14</sup> դերը:

Հիրավի, վարչական-ոստիկանական իմունիտետի զարգացման համար պայմաններն առավել նպաստավոր էին ԺԳ դ. երկրորդ կեսին եւ հաջորդ դարի առաջին տասնամյակների ընթացքում, երբ Հայաստանում մոնղոլական տիրապետության հիմքերը դեռ ամուր էին մնում: Այդ ժամանակաշրջանում էլ հանդիպում են առանձին դեպքեր, երբ իմունիտետային արտոնություններ շնորհողի դերում հանդես են գալիս խոշոր աշխարհիկ եւ հոգեւոր ավատատերերը<sup>15</sup>:

Մոնղոլների հայտնվելուց հետո էական տեղաշարժեր տեղի ունեցան նաեւ հայ ավատատերերի զանազան խմբերի ուժերի հարաբերակցության մեջ: Մասնավորապես, առեւտրավաշխատուական հզոր գերդաստանները՝ Ումեկյանները, Սահմադինյանները եւ ուրիշներ, ընդարձակ կալվածքներ ձեռք բերեցին եւ անգամ խնամիական կապեր հաստատեցին ազդեցիկ իշխանական տների հետ, ինչն աննախադեպ երեւույթ էր: Համեմատաբար նվազ ուշադրության է արժանացել մեկ այլ առեւտրավաշխատուական ընտանիքի՝ Շադինյանների՝ շատ առումներով ուշագրավ պատմությունը: Նրա անդամները, Ումեկյանների նման, հավանաբար, իրենց հարստությունը դիզել էին Իկոնիայի սուլթանությունում եւ Տփղիս էին տե-

---

1 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Աշտարակ*, – «Էջմիածին», 1966, № Ը, էջ 58:  
2 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի ճիշատակարաններ, էջ 347:  
3 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 205:  
4 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 89:  
5 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքննություն*, էջ 217-218:  
6 Նույն տեղում, էջ 255-259:  
7 Նույն տեղում, էջ 172-173:  
8 Նույն տեղում, էջ 80-83:  
9 Տե՛ս Գարեգին Վրդ. [Թովսէփեան], *Ջագավանից ժողովը*, էջ 34-35; Հ. Աճառյան, *Հայերէն նոր բառեր հայ մատենագրութեան մէջ*, հտ. Բ, Վեներտիկ, 1926, էջ 165:  
10 Տե՛ս Ս. Բարխուդարյան, *Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ եւ դիտողություններ*, – «Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության», Եր., 1971, էջ 73-80; Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքննություն*, էջ 165-171:  
11 Տե՛ս Պ. Մուրադյան, «Մեփորել (մեփորել/միփորել)» վարչական տերմինը, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 7, էջ 50-61:  
12 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, *Քանաքեռի վիմագրի «մեղունա» վարչական տերմինը*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 145-149:  
13 Տե՛ս Պ. Մուրադյան, *Օշականի 1286 թ. արձանագրության «քեթորար» վարչական տերմինը*, – «Էջմիածին», 2000, № Բ, էջ 88-92:  
14 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքննություն*, էջ 209-215:  
15 Տե՛ս Ա. Գ. Маргарян, *Феодальный иммунитет и процесс закрепощения крестьянства в Армении и Грузии в XI-XIII веках*, – “Кавказ и Византия”, вып. 4, Ер., 1984, с. 5-20.



ղափոխվել Կարինից<sup>1</sup>: Շաղինյանների եւ Ումեկյանների<sup>2</sup> առասպելական հարստությունը կուտակվել էր, գլխավորապես, միջազգային տարանցիկ առևտրին նրանց մասնակցության շնորհիվ: Տիրիսում հաստատվելուց հետո նրանց առևտրական գործառնությունների շրջանակը պետք է նույնիսկ աճած լիներ, քանի որ մոնղոլների օրոք մեծացել էր միջազգային քարավանային առևտրի հյուսիսային՝ Վրաստանով եւ Տրապիզոնով անցնող ուղիների նշանակությունը<sup>3</sup>: Որ Շաղին-Շնորհավորը<sup>4</sup> աչքի ընկնող դեր ուներ հյուսիսային ուղիներով կատարվող առևտրում, վկայում է Վարդան Արեւելցին՝ նշելով այդ նշանավոր մեծատունի ընդունված եւ սիրված լինելը «յամենեցունց եւ աւելի յաշխարհակալացն՝ ի Բաթու կուսակալէն հիւսիսոյ»<sup>5</sup>:

Շաղինի օրինակը հատկապես ուշագրավ է խոշոր վաճառականների ձեռք բերած քաղաքական դիրքը բնութագրելու տեսանկյունից: 1259-1261 թվականների հայ-վրացական երկրորդ ապստամբության ժամանակ մոնղոլները Շաղինին էին վստահել «Տիրիսը, ինչպես եւ բուն թագավորությունը»<sup>6</sup>: Քանի որ ապստամբության ճնշումից հետո էլ՝ մինչեւ 1265 թվականը, մոնղոլները խիստ վերահսկողության տակ էին պահում նրա ղեկավար վրաց թագավոր Ուլու Դավթին, ապա ստացվում է, որ 1259-1265 թվականներին Շաղինը գլխավորում էր Գյուրջիստանի վիլայեթի՝ Արեւելյան Վրաստանի եւ Հյուսիս-արեւելյան Հայաստանի քաղաքացիական կառավարումը:

Հայաստանում տիրապետող դասակարգի եւ նրա մասը կազմող ավատատիրական ավագանու դիրքերը պայմանավորված էին ոչ միայն ռազմա-քաղաքական, այլեւ տնտեսական գործոններով: Եթե մոնղոլական տիրապետության առաջին տասնամյակների ընթացքում Հյուսիս-արեւելյան Հայաստանի ավատատերերի վիճակը կտրուկ փոփոխությունների չենթարկվեց, քանի որ, ի տարբերություն Հարավային Հայաստանի, հարկահանությունը կենտրոնացած էր տեղական իշխանների ձեռքում<sup>7</sup>, ապա ԺԳ դ. երկրորդ կեսին վիճակն անշեղորեն վատթարանում էր<sup>8</sup>: Ապրանքային արտադրության քայքայումը, քաղաքային կյանքի անկումը սպառնալից չափեր ընդունեցին ԺԴ դ. առաջին կեսին<sup>9</sup>: 1348 թվականին Հայաստանում եւս տարածում գտավ ժանտախտի այն սարսափելի համաճարակը, որն

---

1 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Աշխ.* աշխ., էջ 207:  
 2 Տե՛ս Գ. Հովսեփյան, *Վախտանգ որդի Ումեկյա եւ Աորա տոհմը*, էջ 217-233; Ս. Ա. Ավագյան, *Նորահայտ վիմական արձանագրություն Ումեկյան տոհմի մասին*, – «Վիմագրական պրատումներ», Եր., 1986, էջ 94-111:  
 3 Տե՛ս Я. А. Манандян, *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен*, – «Երկեր», հտ. Զ, Եր., 1985, էջ 198-204:  
 4 Շաղին-Շնորհավոր նույնանմանության մասին տե՛ս А. Г. Маргарян, *К вопросу о личности и деятельности “некоего Шадина”*, – “Кавказ и Византия”, вып. 3, Եր., 1982, с. 64-72.  
 5 Վարդան Արեւելցի, էջ 204:  
 6 Տե՛ս յեթօղոս Եւեջեղծ, II, ՅՅ. 255; *Վրաց ժամանակագրություն*, էջ 117:  
 7 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Աշխ.* աշխ., էջ 228:  
 8 Տե՛ս Լ. Հ. Բաբայան, *Աշխ.* աշխ., էջ 504-567:  
 9 Համանման գործընթացները բնութագրական էին նաեւ Բաբայանի Իրանի համար, տե՛ս I. P. Petrushevsky, *The Socio-economic Condition of Iran under the Il-Khans*, – In: *The Cambridge History of Iran*, Vol. 5, p. 494-515; A. Lambton, *Աշխ.* աշխ., 173-184:

այնուհետեւ անցավ եւրոպական շատ երկրներով՝ խլելով բնակչութեան մեկ երրորդից մինչեւ կեսի կյանքը: Ինչպէս հայտնի է, այդ համաճարակը՝ «սեւ մահը», էական ազդեցութիւն թողեց եւրոպական երկրների ոչ միայն տնտեսական, այլեւ սոցիալական զարգացման ընթացքի վրա՝ արագացնելով կախյալ գյուղացիութեան ազատագրումը եւ անցումը վարձու աշխատանքին: Հայաստանի պայմաններում, ինչպէս ակնհայտ դարձավ հաջորդ տասնամյակների ընթացքում, աշխատուժի կտրուկ կրճատումն ավելի խորացրած պետք է լիներ տնտեսական անմխիթար վիճակը: Ինչպէս արձանագրում է Սամուէլ Անեցու երկի շարունակողներից մեկը. «Ժ թվին ՉՂէ. եղեւ սով սաստիկ ի վերայ Հայոց աշխարհին զամս Գ. եւ գայլք յարձակեցան ի մարդիկ եւ ապա անկաւ մահ տարաժամն եւ անապատ արար զբազմամարդ երկիրս Հայոց, եւ շատոց գերեզմանք փոր գազանացն եղեւ, շատք անթաղ մնացին՝ եւ անծնունդ ժամանակի»<sup>1</sup>: ԺԴ դարում ուժգնացող տնտեսական ճգնաժամի հետեւանքով նախ դանդաղեցին, իսկ հարչուրամյակի երկրորդ կեսին առհասարակ դադարեցին շինարարական աշխատանքները<sup>2</sup>: ԺԴ դ. երկրորդ կեսին Հյուսիս-արեւելյան Հայաստանի նույնիսկ այնպիսի խոշորագույն հոգեւոր կենտրոններում, ինչպիսիք Սանահինն ու Հաղբատն էին, վիճագիր արձանագրութիւնների փորագրման դարավոր ավանդույթը մի քանի տասնամյակով ընդհատվում է<sup>3</sup>, որը վկայում է տնտեսական ակտիվութեան իսպառ մարման եւ երկրի կյանքում խոր անկման մասին: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ այդ ճգնաժամային վիճակի հիմքերը դրվել էին նախորդ հիսնամյակի ընթացքում եւ անխուսափելի հետեւանքն էին իլխանութեան հյուժիչ հարկային քաղաքականութեան եւ անվերջանալի ներքին կռիւների: Նման իրավիճակում տնտեսապէս եւ քաղաքականապէս թուլացած հայ ավատատիրական ավագանու մեծ մասը շղիմացավ փորձութիւններին ու այս կամ այն ձեւով թողեց պատմական ասպարեզը:

1 Սամուէլ Անեցի, էջ 169:

2 Տե՛ս **J. Sislian**, *L'activite architecturale en Arménie orientale au cours du XIVe siècle*, – “Revue des Études Arméniennes”, t. XVI, Paris, 1982, p. 289-299.

3 Տե՛ս Կարո Ղաֆադարյանի՝ Սանահինի եւ Հաղբատի վանքերի վիճագրութեանը նվիրված սեռագրութիւնների ժամանակագրական տախտակները:

## Բ Ա Ժ Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### ՀԱՅ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԱՎԱԳԱՆԻՆ ԺԲ ԴԱՐԻՑ - ԺԴ Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԺԲ դարի - ԺԴ դ. առաջին կեսի հայ ավատատիրական ավագանու պատմությունն անքակտելիորեն կապված է ողջ տիրապետող դասակարգի պատմության հետ: Ուստի նպատակահարմար է նախապես որոշ ընդհանուր դիտարկումներ շարադրել դարաշրջանի ավատատիրական դասակարգի սոցիալական պատմության հանգուցային խնդիրների վերաբերյալ:

Տիրապետող դասակարգի ներքին զարգացումը լուսաբանելիս ամենակարևոր խնդիրն այն սոցիալական կառուցվածքների հետազոտությունն է, որոնք գործառվել են ավատատերերի զանազան խավերի միջավայրում: Միանգամայն բացորոշ է, որ հիմնարար սոցիալական կառուցվածքներն անհամեմատ ավելի բազմակողմանի ազդեցություն ունեցող գործոններ են, քան ամենացնցող քաղաքական անցուղարձերը: Այսպես, անվիճելի է, որ 1236 թվականի մոնղոլական կործանարար արշավանքը, կտրուկ վատթարացնելով հայ ավատատերերի նյութական վիճակը, նվազեցնելով թվակազմը, նվաճողներից կախվածության մեջ գցելով ավատատերերի անխտիր բոլոր շերտերին, երբեք ի զորու չեղավ նորատիպ փոխհարաբերություններ առաջ բերել տիրապետող դասակարգի ներսում: Կարելի է պնդել, որ մինչմոնղոլական ժամանակաշրջանի սոցիալական կառուցվածքների գործառությունը շարունակվում էր: Պարզաբանելով տիրապետող դասակարգի շերտավորումը, գերակա-ստորակայական (սյուզերեն-վասալային) հարաբերությունների իրական պատկերը, հնարավոր կդառնա նաև սոցիալ-քաղաքական պատմությանը վերաբերող հավաստի եզրակացությունների հանգել:

Ավատատիրական աստիճանակարգությունը, անշուշտ, այլևս ժամանակաշրջաններում միեւնույն պատկերը չի ներկայացրել: Նույնիսկ ԺԲ-ԺԴ դարերի տարբեր ժամանակահատվածներում գերակա-ստորակայական հարաբերությունների շղթայի օղակները, այսինքն՝ ավատատիրական սանդուղքի աստիճանները միաշափ չեն եղել: Առկա աղբյուրագիտական նյութերը ցույց են տալիս, որ ներավատատիրական փոխհարաբերություններն իրապես արտացոլող «բուրգը» առավել բարդ կառուցվածք է ունեցել հատկապես ԺԴ դ. սկզբին եւ 1236 թվականի մոնղոլական արշավանքին հաջորդող տասնամյակների ընթացքում: Գերակա-ստորակայական հարաբերությունների շղթան այսպիսի պատկեր էր ներկայացնում. վրաց թագավորներ<sup>1</sup> - Ջաքարյաններ<sup>1</sup> - Ջաքարյանների անմիջական ստո-

1 Մոնղոլական շրջանում վրաց թագավորները համարվում էին միայն անմիջականորեն իրենց հետ կապված հայ ավատատերերի գերակաները: Այդ խմբի մեջ մտնում էին արքունիքում պաշտոններ վարող տոհմերը (Ջաքարյաններ, Մահկանաբերդցիներ, Օրբելյաններ) եւ Արագ, ում տիրույթների վերահսկողությունը մոնղոլները համաձայնարարում էին վրաց արքաներին: Օր.՝ 1284 թ. գահակալելիս Արղուն խանը հատուկ բարեհաճություն դրսևորեց Դեմետրե Բ-ի նկատմամբ,

րականեր<sup>2</sup> – Զաքարյանների ստորականների ստորականեր<sup>3</sup>: Ավատատիրական աստիճանակարգության ավելի ստորին սանդուղքների վերհանումը կապված է դժվարությունների հետ: Միջին հողատերերի մեծաթիվ շերտը, որի շարքերից էլ համալրվում էր տիրապետող դասակարգը, բավականաչափ լավ է ներկայացված վիճակն արձանագրություններում եւ ձեռագրերի հիշատակարաններում: Այդ վկայությունների բանաձեւային բնույթը, սակայն, տվյալներ չի տրամադրում այդ ակնհայտորեն խիստ ունեւոր նվիրատուների, պատվիրատուների սոցիալ-քաղաքական կարգավիճակը պարզաբանելու համար: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ տիրապետող դասակարգի ստորին շերտերի կազմն առավել անհաստատունն էր, այն անընդհատ փոփոխվում էր «նոր մարդկանց» հայտնվելու եւ ուրոշ ընտանիքների՝ ասպարեզից հեռանալու հետեւանքով:

Նկատի ունենալով սոցիալական կառուցվածքների ավանդականությունը, սոցիալական համակարգերի մեջ մտնող տարրերը հետազոտելիս կարելի է օգտագործել նաեւ հաջորդ ու նախորդ պատմաշրջանների համաբնույթ նյութերը, կատարել պատմա-համեմատական գուգադրումներ նաեւ այլ տարածաշրջանների համանման երեւույթների հետ: Այսպես, հայտնի է, որ գերակա-ստորակայական կապերի հաստատումը սրբագործող արարողությունները խորհրդանշական իմաստավորում են ունեցել եւ հնագույն ժամանակաշրջանների վերապրուկներ են միջնադարյան արեւմտաեւրոպական հասարակություններում: Ժամանակակից հետազոտողները նույնիսկ համեմատության եզրեր են տեսնում այդ միջնադարյան ծեսերի եւ ավանդապահ հասարակություններում այսօր էլ գոյություն ունեցող համանման սովորությունների միջեւ<sup>4</sup>: Այս կապակցությամբ ուշագրավ է մեր ժողովրդական վեպում պատկերվող որդեգրման սովորույթի կապը հոր եւ որդու փոխհարաբերությունների հաստատում հավաստող միջնադարյան արարողությունների հետ: Հայ պատմիչ-

«եւ ետ անա զամենայն աշխարհս Հայոց՝ գտունն Ասագեան եւ գտունն Ծախանշահեան եւ զԳագեցին եւ զորդիսն Սադուն աթաբէկին» (տե՛ս **Ստեփաննոս Օրբէլեան**, *Պատմութիւն*, էջ 312):

- 1 Զաքարե ամիրապասալարը, օրինակ, «բարեպաշտ եւ թագուհեաց թագուհոյն Թամարի... հաւատարիմ ծառայ» է կոչում իրեն Անի արձանագրություններից մեկում (տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 58): Նույն փոխհարաբերությունները նա այլ բառերով հավաստում է նաեւ Հառիճի 1201 թվականի արձանագրությունում. «Տեսուն ինոյ բարեպաշտ Թամար թագուհոյ» (տե՛ս *Վիմակաւ տարեգիր*, էջ 43):
- 2 Ավատատիրական ավագանու այդ խավի մեջ մտնում էին Բուբայանները, Դոփյանները, Համագասպյանները, Հոնենք, Ծոթոռիկյանները, Պոռշյանները, Վաչուտյանները, Օրբէլյանները (տե՛ս **Գ. կթղ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 7-10):
- 3 Դատելով ուղղակի վկայություններից՝ գլխավորապէս մանր ու մասամբ նաեւ միջին հզորության ավատատերերի այս խավը, սովորաբար, իր կարգավիճակը պահպանում էր մեկ սերնդի կյանքի ընթացքում: Այդպիսիք են Բուբա իշխանի ստորակա Հայրաձայնը (**Գ. կթղ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 314), Տիգրան Հոնենցի «ծառայ» Եղբայրիկը (*Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 7), Ծոթոռիկյաններին ենթակա «պարոն Բոնատր»-ը (**Հ. Ղ. Ալիշան**, *Ծիրակ*, էջ 128-129; *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 193-194): Երկու սերունդներով են ներկայացված Համագասպյանների ստորակա Սեւիկյանները (**Գ. Սարգսյան**, «*Բարձրաբաշ*» վանքը եւ նրա վիմագրությունը, – «Էջմիածին», 1952, № ժԱ-ԺԲ, էջ 46; *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 171): Միակ բացառությունը, թերեւս, կազմում են Օրբէլյանների սպարապետներ Ծախուռնեցիները, որոնք հիշատակվում են շուրջ մեկդարյա ժամանակաշրջանում (տե՛ս **Գ. Մ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 58-62):
- 4 Տե՛ս **J. Le Goff**, *Le rituel symbolique de la vassalite*, – In: Pour un autre Moyen Age, Paris, 1977, p. 349-420.

ներն առանձին ակնարկներով են անդրադարձել այդ հատուկ ծիսակատարություններին. հնարավոր է, այդ ամենը նրանց համար առօրեական ու անհետաքրքիր է եղել: Այդ պատճառով էլ առանձնահատուկ ուշադրության է արժանի խաչակրաց պատմիչներից Ալբերտ Ախենցու վկայությունը 1098 թվականին Ուռհայում տեղի ունեցած այգախի արարողության վերաբերյալ: Ընդ որում, եւրոպացի պատմիչը շեշտում է այդ ծիսակատարության տեղական, հայկական բնույթը: Այդ ծեսի կատարումից հետո էր, որ խաչակրաց առաջին արշավանքի առաջնորդներից Բալդուին Ֆլանդրիացին հռչակվեց Ուռհայի հայ իշխան Թորոսի որդեգիրը, այսինքն՝ ստորական ու որոշակի իշխանություն ձեռք բերեց քաղաքում<sup>1</sup>:

Մեկ այլ զուգահեռ. Արեւմտյան Եւրոպայի շատ երկրներում իրեն գերակայի հովանավորությանը հանձնելիս ստորական ծնկի էր իջնում եւ ձեռքերը դնում սյուզերենի ձեռքերի մեջ: Նույնատիպ ծիսակատարության գոյություն մասին է վկայում Ստեփանոս Օրբելյանը: Պատմելով Ելտկուզ աթաբեկի կողմից իր որդի Մուհամեդ Փահլավանին էլիկում Օրբելյանի խնամքին հանձնելու մասին՝ հայ պատմիչը գրում է. «Ձձեռս նորա [Մուհամեդ Փահլավանի – Հ. Մ.] դնէ ի ձեռն Ելիկումին եւ ապսպարէ նմա ասելով. դու դմա հայր լեր եւ դա՛քո որդի»<sup>2</sup>: Թվում է, գերակայի՝ ստորական համբուրելու հանրահայտ արարողությունն է պատկերում նաեւ Հովհաննես Դրասխանակերտցին, երբ պատմում է Յուսուֆի կողմից Դավիթ եւ Գուրգեն Գնունի եղբայրներին իր կողմը գրավելու մասին. «...բազում զգեստս եւ զարդս ոսկեճամուկ, եւ ծիրանիս եւ երեւելի լակոնացի եւ բեհեզս նոցա մատուցանէր, եւ կամարս եւ մանեակս ոսկեղէնս եւ նժոյզս սրավարս՝ ճոխապաճոյճս ի զէն եւ ի զարդու. եւ ապա զձեռս իւր ի նոսա կարկառեալ եւ գիրկս զպարանոցաւն արկեալ եւ հուպ ընդ հուպ ի համբոյր մերձեցուցեալ զնոսա այնպէս շոգմոգէր»<sup>3</sup>:

Խոսելով ԺԻ-ԺԴ դարերի տիրապետող դասակարգի մասին՝ չպետք է աչքաթող անել մի կարեւորագույն պարագա. բանն այն է, որ հայ ավատատիրական տների զարգացման օրինաչափությունները, քաղաքական դիրքերը, ռազմական ու տնտեսական հզորությունը Հայաստանի տարբեր գավառներում միատեսակ չեն եղել: Այսպես, Հարավային Հայաստանում՝ Սասունում, Տարոնում, Մոփքում իշ-

1 Տե՛ս **М. А. Заборов**, *История крестовых походов в документах и материалах*, Москва, 1977, с. 88. Հմմ. **Ս. Պապիկեան**, *Հայերը եւ խաչակիրները*, – «Հանդէս ամսօրեայ», 1960, սն. 511: Հայ պատմիչների եւ «Սասնա ծոերի» վկայություններով որդեգրության սովորույթի հիմնավոր պարմատների մասին ուշագրավ դիտարկումներ է արել Ռոբերտ Պետրոսյանը (**R. Bedrosian**, *Dayakut'iw'n in Ancient Armenia*, – “Armenian Review”, Vol. 37, Watertown MA, 1984, p. 23-47).

2 **Ստեփանոս Օրբելյան**, *Պատմություն*, էջ 288:

3 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց**, Թիֆլիս, 1912, էջ 252; **Յովհաննէս Դրասխանակերտցի**, *Պատմություն Հայոց*, Քննական քննադիրը՝ **Գ. Տեր-Վարդանեանի**, – «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 513-514: Կասկած չկա, որ պատմիչը հաղորդում է հատուկ արարողության, եւ ոչ թե կենցաղային դրվագի մասին: Ըստ նրա՝ մինչ այդ Սյունյաց իշխանը դավաճանել էր Սմբատ Ա-ին եւ այցելել Ափշինին: Արքան՝ գերակա «հայրը», ներել էր «որդուն» եւ՝ «գրկալիւր սիրով առ ինքն յանձանձեր ածել՝ իբրեւ զորդի սիրելի մեծապատիւ պերճութեամբ զնա շքեղացուցեալ» (տե՛ս նույն տեղերում, էջ 172 եւ 464): Գերակայի եւ ստորականի գրկախառնվելու արարողություն է պատկերում նաեւ Բուզանդ Արշակ Բ-ի եւ Ծապուր Բ-ի հարաբերությունների մի դրվագում. «Եւ իբրեւ զեղբայր որպէս զորդի զգրեալ եղել ի մնանէ [Արշակը Ծապուրից – Հ. Մ.], եւ երկրորդական զմեծ տունն տայր մնա լատրպատական աշխարհին» (**Փաւստոսի Բիզանդացույ**, *Պատմություն Հայոց*, Բնագիրը՝ **Ք. Պատկանեանի**..., Եր., 1987, գլ. Դ.ժգ, էջ 194; «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 345):

խանական տները կորցրել են քաղաքական իշխանությունը դեռևս ժԲ դարում եւ այսպիսով խստորեն զանազանվում են Հյուսիս-արեւելյան Հայաստանի ավատատիրական տոհմերից իրենց ճակատագրով: Աշխարհիկ ու հոգեւոր իշխանության զուգակցումը բնորոշ է այդ տարածաշրջանի տոհմերից միայն Աղթամարում ապաստանած Խեղենեկյանների համար: Իրենց հերթին, Երասխից հյուսիս ընկած շրջանները, ընդհանուր պատկեր ներկայացնելով հանդերձ, զգալիորեն զանազանվում են միմյանցից հայկական տոհմերի թվակազմի սովորացման եւ բարձրացման ժամանակի առումով: Լոռեն ու Կայենո գավառը ավելի շուտ են բռնում վերածնման ուղին, քան Շիրակը ու Արագածոտնը: Արցախում ժԲ-ԺԴ դարերի սոցիալական զարգացման մեջ կտրուկ շրջադարձեր չեն դիտվում, ուրույն ուղիով է ընթանում Սյունիքը: Համեմատությունները շարունակելու կարիք չկա, քանի որ պարզ է լուկա հետազոտությունների անհրաժեշտությունը: Առավել եւս, երբ առկա վիմագրական նյութը, գերազանցապես նաեւ՝ հիշատակարանները, ճշգրտորեն տեղորոշվում են եւ հնարավորություններ ընձեռում առանձին երկրամասերի սահմաններում մասնավոր հետազոտությունների համար: Ամբողջ Հայաստանում տիրապետող դասակարգի դրուժյան, սոցիալական կազմի, զարգացման միտումների եւ այլ առանցքային հարցերին կարելի է անդրադառնալ միայն բոլոր երկրամասերին վերաբերող նյութը վերլուծելուց հետո:

Այսօր շատ չեն նաեւ այն հետազոտությունները, որոնք լուսաբանում են հայ ավատատիրական ընտանիքների դավանական քաղաքականությունը, մշակութային բնութագիրը, փոխազդեցությունները այլ էթնիկական ու կրոնական խմբերի հետ: Հրապարակի վրա եղած տեսակետներն էլ ոչ միշտ են ընդունելի, այն պատճառով, որ ընդհանրացումները կատարվել են մասնակի փաստերի հիման վրա: Իսկ փաստերը ցույց են տալիս, որ միեւնույն ընտանիքի անդամներն անգամ կարող էին տրամագծորեն հակառակ վարքագիծ որդեգրել (Զաքարե ամիրսպասալար – Իվանե աթաբեկ), ենթարկվել Հայաստանի զանազան շրջաններում բավականաչափ տարբեր իրավիճակների ազդեցությանը: Ամենաուշագրավն այն է, որ հայ իշխանների համար երկաբնակության անցնելն ամենեւին էլ չէր նշանակում խզել կապերը հայրենի մշակույթի, մայրենի լեզվի եւ նույնիսկ միաբնակ հոգեւոր կենտրոնների հետ: Այսպես, երկաբնակ Զաքարյաններից շատերի համար նվիրական էր համարվում կապը տոհմական Սանահնի վանքի հետ, իսկ Մահկանաբերդցիները շարունակում էին հովանավորել իրենց ընտանեկան հանգստարան Հաղբատի միաբանությունը: Այսպիսով, տոհմական ավանդները վեր էին դասվում դավանական արժեքներից: Հայ իշխանների «վրացիացման» կամ «մահմեդականացման» մասին վերացական հայացքները, որոնց հիմքը դավանափոխության փաստն է, կարող են համոզիչ դիտվել լուկ էթնիկական դիմախեղումը փաստարկող իրողությունների վկայակոչման պարագայում: Տեսական առումով ճիշտ այս հայեցակետին պետք է հավատարիմ մնալ նաեւ հակառակ գործընթացը լուսաբանելիս: Դա վերաբերում է այլ էթնիկ պատկանելության ավատատիրական ընտանիքների՝ Հայաստանում ունեցած ճակատագրին, հայ իշխանական տների վրացուհի, մահմեդական հարսների դավանական ու լեզվական հետագա կացությունը: Ընդհանրապես, լեզվական, մշակութային, դավանական իրավիճակների պարզաբանումը բարդ խնդիրներից է: Հարցերի այդ խմբի լուսաբանումը ենթադրում է տարբեր մասնագետների (պատմաբաններ, հնագետներ, արվեստաբաններ) ջանքերի զուգակցում եւ ինտերդիսցիպլինար հետազոտական եղանակների մշակում:

Թերեւս, ԺԲ-ԺԴ դարերի հայ տիրապետող դասակարգի ուսումնասիրութեան բնագավառում հետագա առաջընթացը կապված է լինելու նաեւ հարցաթերթիկային մեթոդիկայի կիրառման հետ: Հարցաթերթիկների հիման վրա է հետազոտվել, օր.՝ Բյուզանդական կայսրութեան ԺԱ-ԺԲ դարերի տիրապետող դասակարգի սոցիալական կազմը<sup>1</sup>, այդ մեթոդիկայի հեռանկարայնութիւնն ընդգծում են արեւմտաեւրոպական միջնադարն ուսումնասիրողները<sup>2</sup>: Տվյալ հետազոտական եղանակը ենթադրում է տիրապետող դասակարգը ներկայացնող առանց բացառութեան բոլոր տոհմերի եւ դրանց անխտիր բոլոր անդամների մասին հնարավորինս ճշգրիտ տվյալների արձանագրում: Հավաքված նյութն այնուհետեւ ամփոփ ներկայացվում է ցանկերի ու աղյուսակների տեսքով եւ հնարավորութիւն ստեղծում քանակական վերլուծութեան փորձերի համար: Այդպիսի թեմատիկ, պորբլեմային աղյուսակներ ու ցանկեր անհնարին է կազմել առանց նախնական ծավալուն աշխատանքի: Հետազոտութեան այս սկզբնական փուլում է, որ ծագում են հայկական նյութով պայմանավորված բազմաթիվ դժվարութիւններ: Ի դեպ, դրանք անխուսափելիորեն առաջանում են նաեւ այլ տարածաշրջանների հասարակութիւններն ուսումնասիրելիս եւ բխում են առաջադրված հարցերին հստակ պատասխան տալու խիստ սուղ հնարավորութիւններից:

Հարցերի հարցը ծառանում է ամենակարգում. ի՞նչ բովանդակութիւն է ունեցել ԺԲ-ԺԴ դարերի Հայաստանում «տիրապետող դասակարգ» հասկացութիւնը, ինչպիսի սկզբունքներով է հնարավոր առաջնորդվել որեւէ տոհմի սոցիալական կարգավիճակը որոշելիս, կոնկրետ ո՞ւմ ընդգրկել հարցաթերթիկներում: Բարեբախտաբար, ԺԲ-ԺԴ դարերի հայկական աղբյուրները հնարավորութիւն են ընձեռում տիրողների դասի միջնադարյան հայեցակերպի հարցերում կողմնորոշվելու համար: Կարելի է հավաստել, որ ողջ միջնադարի ընթացքում ժամանակակիցները «տիրապետող» (արդի գիտական ընկալմամբ) են համարել այն հասարակական խմբերին, որոնք առանձնացել են ծագումով, կառավարման համակարգում գրաված դիրքով, սոցիալ-ֆառաֆական բարձր կարգավիճակով, նյութական կացութեամբ, յուրահատուկ էթիկայով: Այս բնորոշ հատկանիշները, ամբողջութեամբ կամ թերի, տարբեր հերթականութեամբ հանդես են գալիս անվերապահորեն տիրապետող դասակարգին պատկանող տոհմերի եւ նշանավոր անհատների բնութագրերում: Այդ դասակարգի գերիշխող հայեցակարգը պարզաբանելուց, ժամանակաշրջանի պատկերացումներում ավանդականի ու նորի փոխհարաբերութիւնները ճշտելուց հետո էլ, սակայն, «ստորջրյա խութերը» չեն վերանում: Առանձնապես բարդ է դասակարգի ստորին շերտերի (մանր հողատերեր եւ զորահրամանատարներ, հարկահավաք պաշտոնյաներ, մինիստերիալներ) իրական կարգավիճակի որոշումը: Այդպիսի սոցիալական խմբերի պատկանելիութիւնը տիրապետող դասակարգին առավել վստահութեամբ է հնարավոր պարզել, եթե համապատասխան վկայութիւնները հանդիպում են պատմիչների աշխատութիւններում: Այդ տեղեկութիւնների

1 Տե՛ս **А. П. Каждан**, *Социальный состав господствующего класса Византии XI-XII вв.*, Москва, 1974; **его же**, *Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв.*, Ер., 1975.

2 Տե՛ս **Ю. Л. Бессмертный**, Рецензия на книги: **А. П. Каждан**, *Социальный состав господствующего класса Византии XI-XII вв.*; **А. П. Каждан**, *Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв.*, – «Историко-филологический журнал», 1976, № 2, с. 236-242.

առավելութունն այն է, որ հեղինակներն իրենց բնութագրումներում գերադասել են ավանդական եզրույթները եւ առաջնորդվել են երկարատեւ ժամանակահատվածների իրականությամբ: Վիմագիր արձանագրութուններն ու հիշատակարանները գնահատելի են իրենց փաստառատությամբ եւ համեմատաբար զանգվածային նյութ են պարունակում:

Հայկական եւ օտար սկզբնաղբյուրների թվարկված երեք խմբերն էլ, անշուշտ, լիովին չեն արտացոլում ԺԲ-ԺԴ դարերի տիրապետող դասակարգի ողջ կազմը: Միանգամայն հնարավոր է, որ որոշ ընտանիքներ դուրս մնան համապատասխան հարցաթերթիկներից հետազոտողի թյուրընկալման հետեւանքով: Այսպիսով, նախապես արդեն հայտնի է, որ տիրապետող դասակարգն ավելի մեծ է եղել, քան այն ներկայանում է ըստ հարցաթերթիկների: Առկա նյութերի հիման վրա մեզ հաջողվել է կազմել շուրջ ութսուն տոհմերի վերաբերյալ տվյալներ պարունակող հարցաթերթիկներ: Ընդ որում, որպես տիրապետող դասակարգի լիարժեք անդամներ, հարցաթերթիկներում ընդգրկվել են այն ընտանիքները, որոնք հայտնի են առնվազն երկու սերնդի (հայր ու որդի) ներկայացուցիչներով: Առանձին հաշվարկման է ենթարկվել Ալեքսանդր Կաթգանի արտահայտությունը՝ «մեկ սերնդի ավագանին»<sup>1</sup>: Այն ներկայացնում են միայն կարճատեւ ժամանակահատվածի ընթացքում տիրապետող դասակարգի մեջ ընդգրկված եւ զանազան պատճառներով վերնախավից դուրս մղված անձինք: Հնարավոր է, որ նրանց մի մասը նույնիսկ պատկանում է նշանավոր տոհմի, բարձր դիրք է գրավել նաեւ հետագայում, սակայն հետազոտողները հարկադրված են գնահատել միայն առկա տվյալները: Չնայած իրենց կցկտուր լինելուն՝ այդպիսի անձանց մասին տվյալները գերազանցապես թվագրված են: Այսպիսով, «մեկ սերնդի ավագանու» մասին հարցաթերթիկային տվյալները ճշգրտորեն տեղորոշվում են ժամանակային սանդղակում եւ, զուգակցվելով տոհմերին նվիրված հարցաթերթիկների հետ, կարող են որոշակի եզրակացությունների համար հուսալի հիմք ծառայել: Մասնավորապես, հնարավոր է պատասխան տալ ԺԲ-ԺԴ դարերի սոցիալական պատմության առանցքային խնդիրներից մեկին՝ տիրապետող դասակարգի սոցիալական շարժունության (մոբիլության) հարցին:

Մեր ներկայացրած նախնական դիտարկումները հնարավոր կլինի լրացնել եւ խորացնել կազմված հարցաթերթիկների հրապարակումից հետո: Այդ պարագայում հետազոտողները հնարավորություն կստանան՝ ստուգելու հավաքված տվյալների հավաստիությունը եւ կկարողանան նաեւ ինքնուրույն հավելումներ ու եզրահանգումներ կատարել:

---

1 А. П. Каждан, Социальный состав господствующего класса Византии XI-XII вв., с. 20.



# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՉԱՔԱՐՅԱԼՆԵՐ

### ՏՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ

Հայագիտական գրականության մեջ տարածված Ջաֆարյան տոհմանունը վկայված է միայն Վարդան Արեւելցու Պատմության այն հատվածում, որտեղ խոսվում է 1161 թվականին Անին գրավելու եւ հաջորդող իրադարձությունների մասին<sup>1</sup>: Հայկական մյուս սկզբնաղբյուրները, այդ թվում՝ նաեւ Ջաֆարյանների թողած վիմագիր արձանագրությունները, տոհմի անդամներին հիշատակում են լոկ հոր, պապի, երբեմն՝ ավելի վաղ սերունդների ներկայացուցիչների անունների նշումով, որը սովորական երեսույթ է դարաշրջանի հայ իշխանական տների պատմության մեջ<sup>2</sup>:

Վրացական աղբյուրներում եւ վրացագիտական հետազոտություններում Ջաֆարյանները հայտնի են «Մխարգրձելի» (բառացի՝ «Երկարաուս») անվանումով: Ուշագրավ է, որ այս տոհմանունը հայերենում գործածելուց խուսափել են եւ՛ Ջաֆարյանները, եւ՛ նրանց հայ ժամանակակիցները<sup>3</sup>:

Ռուսերենով ու եւրոպական լեզուներով գրականության մեջ տարածված են ինչպե՛ս «Ջաֆարյան» եւ «Մխարգրձելի» անվանումները, այնպե՛ս էլ վերջինիս բառացի թարգմանությունները:

Ջաֆարյանների ծագման հարցը ուսումնասիրության բավականին հարուստ պատմություն ունի: Հետազոտողները հանգամանորեն քննել են խնդրի շուրջ աղբյուրների պարունակած տվյալները եւ ձգտել են փաստարկված եզրակացություն-

- 
- 1 Վարդան Արեւելցի, էջ 166: Ծ. Մեսխիան Վարդան Արեւելցու «Ջաֆարեան» բնութագրումն առաջարկում է հասկանալ որպես հայրամվան ցուցում՝ «Ջաֆարեի որդի» (Յ. Թյեյնոս, *Սամոնա Յոլոտոպոլո յոտարեմա զա Սամոնեղլո իջոմա XII Սաշչյոնո Սախարոջլոմո*, էջ 247-252): Այս տեսակետի անդհուրուցի լինելու մասին արդեն խոսվել է (տե՛ս Ա. Ի. Գահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 35-40; նույնի՝ *Ջաֆարյանների բուն տոհմանունը*, – Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածո, հո. 2, Եր., 2001, էջ 18-25; Խ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 179-233), ուստի մանրամասնությունների մեջ մտնելն ավելորդ եմ համարում: Միայն ավելացնեմ, որ հայ պատմիչը ոչ մի կերպ չէր կարող «Ջաֆարեան» բնորոշման մեջ «Ջաֆարեի որդի» իմաստը դնել, քանի որ նա Սարգիս Մեծին աներկբայելիորեն համարում է Վահրամի որդի՝ «Փառատր իշխանք Ջաֆարե եւ Իւանե որդիք Սարգիս՝ որդուլ Վահրամայ» (Վարդան Արեւելցի, էջ 181):
  - 2 Ջաֆարե Բ-ի վիմագրում «Մխարգրձել» բնորոշումը վերաբերում է անձամբ Սարգիս Մեծին եւ տոհմանվան բնույթ չունի (տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 58): Ամենայն հավանականությամբ (արձանագրության համապատասխան հատվածը խիստ եղծված է), Օիրակի երկրագիտական թանգարանում պահվող մի այլ վիմագրում եւս (տե՛ս Գ. Աղալյան, *Ջաֆարյանների մի նորահայտ արձանագրություն*, – Օիրակի պատմամշակութային ժառանգությունը», Հանրապետական երկրորդ գիտաժողով, Ջեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 32-33), «Աստուածատր Մխարկրձել» արտահայտության մեջ «Մխարկրձել»-ը տոհմանուն է:
  - 3 Ծ. Մեսխիան փորձել է ապացուցել, որ «Մխարգրձել» տոհմանունը ներկայացված է նաեւ հայ վիմագրության մեջ (Յ. Թյեյնոս, *Սամոնա Յոլոտոպոլո յոտարեմա զա Սամոնեղլո իջոմա XII Սաշչյոնո Սախարոջլոմո*, էջ 250-251), բայց նրա վկայակոչած արձանագրություններում խոսքն ամենուրեք Գահնազար Ա-ի որդի Մխարգրձելի մասին է:

ների հանգել: Այնուամենայնիվ, այն տպավորությունն է ստեղծվում, որ ուսումնասիրողները ոչ միշտ են լիովին հաշվի առել Զաքարյանների դարաշրջանի եւ առհասարակ՝ միջնադարյան աշխարհըմբռնման յուրատիպությունները: Ուստի՝ կոնկրետ նյութերի վերլուծությանն անցնելուց առաջ անհրաժեշտություն է զգացվում անդրադառնալ որոշ տեսական կանխադրույթների:

Անվիճելի է, որ ավատատիրական ընտանիքների տոհմային պատկանելության մասին ավանդությունները ժամանակաշրջանի հոգեւոր կյանքի ու հասարակական գիտակցության դրսեւորումներ են: Յուրաքանչյուր խոշոր ավատատիրական տուն իր ծագման տեսությունը մշակելիս ղեկավարվել է արժեքների այնպիսի համակարգով, որն առավել կամ նվազ չափով ընդունելի էր հասարակական բոլոր շերտերի համար: Ինչպես հայտնի է, միջնադարյան մշակույթի համար բնորոշ էր յուրօրինակ «հնավանդության պաշտամունքը», որը համապարփակ աշխարհայացքային բնույթ էր կրում: Միջնադարյան գիտակցության մեջ տոհմի օրինական իրավունքներն անխզելիորեն կապված էին նրա հնամենի ծագման հետ, ուղղակի բխում էին տոհմային պատկանելությունից: Ուստի՝ նոր բարձրացած տոհմերն իրենց իրական իշխանությունը կարող էին օրինականացնել, լեգիտիմացիայի հասնել սեփական ծագումը դարերի խորքում փնտրելու միջոցով: Այսպիսով՝ դյուրությամբ բացատրելի է միջնադարում լայնորեն տարածված՝ հին ու նշանավոր տոհմերից սերված համարվելու միտումը:

Սակայն Զաքարյանների դարաշրջանում հնավանդության մշուշի ստեղծման առարկայական դրսեւորումները պարզաբանելիս նորանոր հարցեր են ծնվում: Առաջին՝ ո՞ր պատմաշրջանի տոհմերն են բաղձալի դիտվել պայծառափայլություն ու ազնվագարմություն հաղորդելու առումով: Երկրորդ՝ ինչպե՞ս է իրականացվել նոր իշխանական տների իրավունքների գաղափարախոսական հիմնավորումը, ի՞նչ կերպաձեւերով (մոդելներով) է կատարվել հնավանդեցումը:

Բացորոշված խնդիրներին պատասխան տալու նպատակով հարկ է համակողմանիորեն գնահատել տոհմային պատկանելության մասին սկզբնաղբյուրների վկայությունների արժեքը: Կոնկրետ՝ Զաքարյանների կապակցությամբ հարկավոր է նախ անդրադառնալ տոհմի ծագման մասին տեսություններին գաղափարախոսական եւ պատմագրական առումներով, ապա պարզել պատմական ասպարեզ գալու ժամանակահատվածը, բացահայտել գործունեության փուլերը եւ բոլոր հանգամանքների լույսի ներքո միայն կատարել համապատասխան եզրակացություններ:

Զաքարյանների ծագման վերաբերյալ աղբյուրներում պահպանվել են չորս վարկածներ: Դրանցից երկուսը զարգացվել են անմիջապես Զաքարյան իշխանների կողմից, արտացոլված են ժԲ դ. վերջի – ժԳ դ. սկզբի հայերեն ու արաբերեն վիմագիր հուշարձաններում եւ կոնկրետ պատմական պայմանների ու քաղաքական ծրագրերի արգասիք են: Մյուս երկուսն իրենց արտահայտությունն են գտել վրացական եւ հայկական պատմագրության մեջ ու կրում են պատմագրական ավանդույթի ակներե ազդեցությունը: Անկասկած է, որ այդ վարկածներից յուրաքանչյուրը համակողմանի վերլուծություն է պահանջում: Ընդ որում՝ ակնհայտ է նաեւ, որ պատմագիտական քննությանը պետք է նախորդի աղբյուրագիտական հյուսկեն հետազոտությունը, իսկ, իր հերթին, աղբյուրների վկայությունները վերլուծելիս անհրաժեշտ է ոչ միայն նկատի առնել դրանց հավաստիության եւ նախնականության աստիճանը, այլեւ նախորդ պատմագրական դպրոցի շոշափելի ազդեցությունը:

Նախ՝ անդրադառնամ այն ավանդույթները, որը ներկայացված է ԺԳ-ԺԷ դարերի հայ պատմագրության չորս հուշարձաններում եւ, առանձին վերապահումներով հանդերձ, իբրեւ արժանահավատ է դիտվում ժամանակակից հետազոտություններում: Սկսեմ այդ չորս սկզբնաղբյուրների (Կիրակոս Գանձակեցի՝ «Պատմութիւն», Վարդան Արեւելցի՝ «Պատմութիւն տիեզերական», Զաքարիա Սարկավագ՝ «Կոնդակ», Անանուն հեղինակ /Մինաս Համթեցի՞/՝ «Պատմութիւն քաղաքին Յանույ») փոխհարաբերակցության հարցի պարզաբանումից: Ուսումնասիրողներն ավանդաբար նախնական են համարում ԺԳ դ. հեղինակներ Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու Պատմությունների՝ Զաքարյանների տոհմին նվիրված հատվածները<sup>1</sup>, թեեւ մշտապես դիմել են նաեւ ԺԷ դ. պատմիչ Զաքարիա Սարկավագի վկայություններին<sup>2</sup>՝ ընդունելով նաեւ դրանց կարեւորությունը<sup>3</sup>: Քանի որ վերջինս ուղղակի մատնանշում է իր աղբյուրը՝ Կիրակոս Գանձակեցու Պատմությունը, ապա ուշագրավ պետք է նկատել Աշ. Հովհաննիսյանի հետեւյալ դիտարկումը. «քանաքեռցի հեղինակը ձեռքի տակ է ունեցել նաեւ Զաքարիայից առաջ գրված մի ֆրագմենտ», որի հիման վրա էլ ընդարձակել է իր պատումը ու հեռացել գանձակեցի պատմիչի բնագրից<sup>4</sup>: Հետազոտողի մատնացուցած մատենագրական հատակոտորը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7584) այժմ նաեւ այլ ձեռագրերի համեմատությամբ հրատարակված «Պատմութիւն քաղաքին Յանույ» երկն է<sup>5</sup>, որը հատվածներ է պարունակում Զաքարյանների ու Վաչուտյանների վերաբերյալ եւ ընդհանրապես ամփոփում է Անիի ու անեցիների պատմությանն առնչվող այլեւայլ բնագրեր: Եթե անվանի հյագետի տեսակետը իրոք արդարանար, ապա կարելի էր համարել, որ ունենք եւս մեկ հին ու արժանահավատ աղբյուր Զաքարյանների ծագման մասին: Որքան էլ հրապուրիչ թվա առաջադրված վարկածը, անհրաժեշտ է ընդունել, որ այն շարադրվել է առանց համապատասխան բնագրական վերլուծության եւ հիմնված է պարզ ժամանակագրական հաշվարկի վրա: Եթե Զաքարիա Սարկավագը իր «Պատմագրութիւնն» ավարտել է 1699 թվականին, ապա նրա աշխատությունից, բնականաբար, չէր կարող օգտվել 1698 թվականին Կոստանդնուպոլսում ընդօրինակված «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի անանուն հեղինակը: Անհրաքելի՞ է, արդյոք, այս փաստարկը: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզաբանել առկա ելակետային տարեթվերը:

Նախ՝ 1699 թվականի մասին: Ճշտեմ, որ Զաքարիա Սարկավագի աշխատության՝ Զաքարյաններին վերաբերող հատվածը մտնում է այդ գործի երրորդ գիրքը համարվող, բայց ըստ էության ինքնակա երկի՝ «Կոնդակի» կազմի մեջ: Ընդ որում, հայագիտության մեջ վաղուց նկատված իրողություն է, որ Զաքարիա Սարկավագը նախ գրել է «Կոնդակ»-ը, ապա միայն՝ Պատմագրության առաջին երկու գրքերը<sup>6</sup>:

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 162-163, Վարդան Արեւելցի, էջ 181-182:  
 2 Զաքարիա Սարկավագ, Պատմագրություն, հտ. III, Վաղարշապատ, 1870, էջ 11-12:  
 3 Տե՛ս Աս. Ծահնագարեանց, Աշվ. աշխ., էջ 66-68: Հ. Մանանդյան, Աշվ. աշխ., էջ 132-134: Յ. Թյնեօս, *Սամոնո թուրքոյրո յօտարեմա ձա Սամոնեյլո ֆյոմա XII Նաշլեյնո Նախարոյլ-լոմօ*, էջ 217-227:  
 4 Ա. Հովհաննիսյան, Աշվ. աշխ., էջ 153:  
 5 Տե՛ս Մխիթար Անեցի, Հավելված, էջ 107-122:  
 6 Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, – «Երկեր», հտ. Դ, Եր., 1970, էջ 526-527:

«Կոնդակ»-ի գրութեան ավարտման ճշգրիտ թվականը թեև հայտնի չէ, բայց ստույգ գիտենք, որ հեղինակը 1682 թվականին անձամբ նորոգել է ներկայումս Մաշտոցի անվան Մատենադարանի № 1522 գրչագիրը եւ դրա կազմում զետեղել իր «Կոնդակ»-ը<sup>1</sup>: Հետեւաբար՝ «Կոնդակ»-ի ավանդական թվագրումը՝ 1687 թվական<sup>2</sup>, ճշգրիտ չէ, իսկ 1682 թվականը լոկ այդ հուշարձանի վերին ժամանակագրական սահմանագիծն է: Պարզ է, որ հեղինակն այն կարող էր նաեւ ավելի վաղ ավարտած լինել: Այսպիսով, պարզվում է, որ ժամանակագրական խոչընդոտ գոյություն չունի Աշ. Հովհաննիսյանի վարկածը մերժելու համար: Առավել եւս, երբ նկատի ենք ունենում, թե ո՞վ կարող էր լինել «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի հեղինակ-կազմողը: Ինչպես ցույց է տվել Գեորգ Տեր-Վարդանյանը, «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի ձեռագրական ավանդույթը սկիզբ է առնում ժէ դ. վերջին եւ կապվում է պոլսահայ շրջանակների հետ. քաղաքական եղանակը հուշում է, որ այդ ստեղծագործությունը պատկանում է, թերեւս, Մինաս Համթեցու գրչին<sup>3</sup>: Այս միանգամայն ընդունելի տեսակետը լրացուցիչ փաստարկելու համար նշեմ նաեւ հետեւյալ իրողությունները: Մինաս Համթեցին 1666-1691 թվականներին երուսաղեմում ու Վաղարշապատում պաշտոնավարելիս առիթներ է ունեցել՝ այցելելու Հովհաննավանք եւ կարող էր առաջիններից մեկը ծանոթանալ «Կոնդակ»-ին: Օր.՝ ստույգ հայտնի է, որ նա 1696 թ. ապրիլին եղել է Հովհաննավանքում<sup>4</sup>: Այսպիսով, եթե ոչ 1682-1696 թթ. միջակայքում, ապա գոնե 1696-1698 թթ. ընթացքում Մինաս Համթեցին լիովին կարող էր Անիին ու անեցիներին նվիրված իր քաղագրությունն ավարտել եւ այդ ստեղծագործության ընդօրինակությունը պատվիրել Խաչատուր Ստամբուլցի գրչին:

Ավելացնեմ եւս մի ուշագրավ փաստ: Բացի բազմաթիվ պատմական երկերի ընդօրինակություններից<sup>5</sup>, որոնցից շատերից առատ քաղումներ կան «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ում<sup>6</sup>, Մինաս Համթեցին 1691 թվականին պատվիրել է Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ը<sup>7</sup>: Այս իրողությունն առանձնակի ուշագրության է արժանի, քանի որ «Մատենան ողբերգութեան» որոշ արտահայտություններ օգտագործվել են «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ում<sup>8</sup>: Եւ վերջապես, բնագրական փաստերը եւս վկայում են, որ «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի հեղի-

---

1 Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, *Ազգաթանգեղոսի աղբյուրներից*, – «Հայագիտական ուսումնասիրություններ», հտ. Ա, Եր., 1979, էջ 316-321; Յու. Հ. Վարդանյան, *Հովհաննավանքի ճարտարապետական մասին*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 4, էջ 173-181: «Կոնդակի» ինքնագիրը ճետագոտել եւ շահեկան ընթերցումները ներկայացրել է Կարապետ Բասմաջյանը (Կ. Բասմաջեան, *Ջաքարիա Սարկաւազի «Կոնդակ»-ը*, – «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 353-363):

2 Տե՛ս Մ. Արեղյան, *Ազվ. աշխ.*, էջ 526:

3 Տե՛ս Յու. Հ. Վարդանյան, «Պատմութիւն քաղաքին Յանույ» քաղագրության հեղինակի եւ ժամանակի հարցի շուրջ, – «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 212-225:

4 Տե՛ս Հ. Ն. Ակիմեան, *Մինաս Ամթեցի, պատրիարք հայոց Երուսաղէմի*, – «Հանդես ամսօրեայ», 1960, ս. 328; Կ. Եպ. Ամատունի, *Մինաս Վրդ. Ամթեցի, պատրիարք Երուսաղէմի (1630-1704 ճոյնների 24)*, – «Հանդես ամսօրեայ», 1983, ս. 39:

5 Մինաս Համթեցին 1687 թվականին պատվիրել է Մովսէս Խորենացու, Սամուէլ Անեցու, Միխայել Ասրու պատմական երկերի ձեռագրերը (տե՛ս Ամխորդ ծանոթագրությունում հղված գրականությունը):

6 Տե՛ս Մխիթար Անեցի, էջ 123-124:

7 Տե՛ս Հ. Ն. Ակիմեան, *Ազվ. աշխ.*, էջ 325-326; Կ. Ամատունի, *Ազվ. աշխ.*, էջ 49:

8 Տե՛ս Մխիթար Անեցի, էջ 124, ծնթ. 9:

նակ-կազմողն է օգտվել *Զաքարիա Սարկավագի աշխատությունից*, եւ ոչ թե հակառակն է տեղի ունեցել: Այսպես, քաղաքորդը որոշ դեպքերում զանց է առել շարադրանքի տրամաբանության տեսանկյունից անհրաժեշտ մանրամասնություններ<sup>1</sup>, իսկ, որ հատկապես արտառոց է, թյուր ընկալելով *Զաքարիա Սարկավագի վկայությունը՝ Քուրդ Ա Վաչուտյանի* որդի է հռչակել *Զաքարյան Շահնշահ Ա-ին*<sup>2</sup>: Հստ ամենայնի՝ պարզ է, որ *Զաքարիա Սարկավագը* *Զաքարյանների պատմությունը* շարադրելիս Կիրակոս Գանձակեցու Պատմությունից զատ ձեռքի տակ մեկ այլ եւ հին աղբյուր չի ունեցել<sup>3</sup>:

Ուրվագծվում է հետեւյալ ընդհանուր պատկերը: *Զաքարյանների* ծագման խնդիրը ժամանակագրական առումով երկիցս է արժարծվել միջնադարյան հայ պատմագրության մեջ: Առաջին անգամ՝ ԺԳ դ. 60-ական թվականներին, այդ հարցին անդրադարձել են նախ՝ Կիրակոս Գանձակեցին, եւ ապա՝ Վարդան Արեւելցին, իսկ երկրորդ անգամ՝ ԺԷ դ. 80-90-ական թվականներին, այդ առեղծվածը փորձել են լուծել *Զաքարիա Սարկավագը* եւ «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի հեղինակ-կազմողը: Ստացվում է, որ գործ ունենք սկզբնաղբյուրների երկու խմբի հետ, որոնցից ամեն մեկը, իսկ խմբերի ներսում՝ յուրաքանչյուրը, ուրույն մոտեցում է պահանջում: Ընդ որում, չորս հեղինակներից ամեն ոք առաջնորդվել է պատմագրելու սեփական սկզբունքներով եւ ձգտել է ուժերի ներածին չափով վերհանել ճշմարտությունը:

Առաջադրված խնդրի տեսանկյունից կարեւորություն է ներկայացնում նաեւ «պատմական կտավի» պարագան. ինչպիսի՞ն է առաջին խմբի հեղինակների երկերում *Զաքարյանների տոհմի պատմության համապատկերը*, եւ ի՞նչ տեղ է գրավում այդ ընդհանուր կառուցվածքում տոհմի ծագման ավանդությունը:

*Զաքարյանների պատմության ավանդումը* պատմիչները սկսում են հակիրճ մուտքով: Ընդգծելով Թամար թագուհու օրոք *Զաքարե* եւ Իվանե եղբայրների աննախադեպ բարձրացումը՝ նրանք անմիջապես բերում են «ավագ» (առաջին) *Զաքարյանների տոհմածառը*: Հեղինակների այս հաղորդումներում միայն աննշան զանազանություններ են դիտվում: Ամենաէական տարբերությունը հետեւյալն է. եթե Կիրակոս Գանձակեցին բավարարվում է *Զաքարյանների երրորդ սերնդի* (հաշվարկը սկսում եմ *Զաքարե* եւ Իվանե եղբայրներից) ներկայացուցչին հիշատակելով, ապա Վարդան Արեւելցին տոհմակուները հասցնում է մինչեւ չորրորդ սերունդ:

Հաջորդը տոհմի ծագումը պատկերող առանցքային հատվածն է: Այստեղ է, որ երկու երկերի ընդհանուր առմամբ զուգահեռ ընթացող շարադրանքում ի հայտ է

- 
- 1 *Զաքարյանների կարծեցյալ գաղթը* պատկերելիս քաղաքորդը բաց է թողել «այ մեղմով եւ մտանէ ի սահման Հայոց» արտահայտությունը: Ստացվել է, որ *Զաքարյանները*, *Բաբելոնից* դուրս գալուց հետո, Պարսկաստանից ամիջապես անցել են Վրաստան:
  - 2 *Զաքարիա Սարկավագի* հստակ հաղորդումը՝ «իշխանն Վաչէ վախճանեալ դմի ի մէջ եկեղեցւոյն... գտեղի նորս կալսս որդի նորս Քուրտ՝ հրամանաւ Շահնշահի» (*Զաքարիա Սարկավագ*, էջ 13-14), քաղաքորդի գրչի տակ ստացել է հետեւյալ տեսքը. «վաղջանեալ թաղի Վաչէ ի մէջ եկեղեցւոյ... եւ որդի Քրթոյն կոչի Շահնշահ» (տե՛ս Մխիթար Անցի, էջ 12): Ի դեպ, ամբողջությամբ հետեւելով *Զաքարիա Սարկավագին*՝ քաղաքորդն հեղինակը «Բաբելոնական խել» արտահայտությունը վերցրել է Կիրակոս Գանձակեցու Պատմությունից, որի հետ նրա ծանոթությունն ակնհայտ է քաղաքորդն այլ հատվածներից (տե՛ս Մխիթար Անցի, էջ 123, ծմթ. 4, էջ 124, ծմթ. 12):
  - 3 Տեղի՞ն գշեմ, որ Արտ. Շահնազարյանը «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի քաղաքորդին համարում է ԺԳ դարի Անանուն հեղինակ ու Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու ավագ ժամանակակից (Ա. Ի. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 21, ծմթ. 4, էջ 39):

գալիս առաջին ու վերջին խոշոր անհամապատասխանությունը: Վարդան Արեւելցու պատումն անսպասելիորեն հանգամանալից է դառնում, եւ պատմիչն ինքնուրույն նշանակություն ունեցող տեսություն է զարգացնում:

Առաջին խմբի հեղինակների պատմական հայեցակերպերի զանազանությունը հստակորեն արտահայտվում է նաեւ տոհմի պատմության ամենափառահեղ՝ Զաքարե եւ Իվանե եղբայրների գործունեության հետ առնչվող էջը ներկայացնելիս: Կիրակոս Գանձակեցին ավելի ընդգրկուն եւ հարուստ տեղեկություններ է հաղորդում եղբայրների ղեկավարած ազատագրական պայքարի, շինարարական-բարենորոգչական գործունեության, եկեղեցական-դավանական քաղաքականության մասին<sup>1</sup>: Միաժամանակ, սակայն, Վարդան Արեւելցու Պատմությունը որոշ դեպքերում խիստ նկատառելի վկայություններ ու լրացուցիչ մանրամասներ է պարունակում<sup>2</sup>:

Հավաստելով առաջին խմբի պատմիչների հայեցակերպերի զանազանությունը՝ վերագառնամ տոհմի ծագումը լուսաբանող հատվածներին: Ինչպես ասվեց, Վարդան Արեւելցու երկի համապատասխան դրվագը, ի տարբերություն Կիրակոս Գանձակեցու փաստագրական պատումի, օժտված է ներքին ներդաշնակությամբ եւ ամբողջականությամբ: Այն զարգանում է դասական սյուժեի համաձայն եւ հաջորդաբար պարզաբանում է հետեւյալ հարցերը. ովքե՞ր են եղել Զաքարյանները, որտե՞ղ են նրանք նախապես ապրել, ո՞րն է եղել նրանց տեղափոխության պատճառը, ի՞նչ ուղղություն է կրել նրանց տեղաշարժը, որտե՞ղ են նրանք ապաստանել, ի՞նչ դավանական շրջագարձ են որդեգրել, ինչպե՞ս է ընթացել նորաբնակների աստիճանական բարձրացումը:

Այս խնդիրների հանգամանալից պարզաբանումը շահեկան է այն առումով, որ Վարդան Արեւելցուց բացի, բացորոշված հարցերին փաստորեն պատասխանել են նաեւ Կիրակոս Գանձակեցին ու սկզբնաղբյուրների երկրորդ խումբը կազմող երկերը: Պատմիչների այս քառյակն իր առջեւ փաստորեն հետազոտական խնդիր է դրել՝ խորամուխ լինել Զաքարյանների տոհմակունքների մեջ, եւ հայտնվել է Մովսես Խորենացու վիճակում: Նրանք եւս, Պատմահոր նման, իրենց եզրահանգումները հաճախ կառուցել են անվստահելի նյութերի վրա<sup>3</sup>: Բավական է ասել, որ պատմիչ-

1 Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ անհամեմատ ընդարձակ է Խլաթի Այուրյանների դեմ պայքարի նկարագրությունը (էջ 164-166): Վարդան Արեւելցին այդ ամենն արձանագրում է մեկ նախադասությամբ (էջ 181-182): Եթե պատմիչներից առաջինն առանձին գլխով է ներկայացնում Լոռեի եւ Անիի ժողովները (էջ 166-178), ապա երկրորդն անդրադառնում է այդ դեպքերին մեկ հատիկ արտահայտությամբ՝ ամփոփ շարադրելով Զաքարեի պահանջները (էջ 182): Կիրակոս Գանձակեցին հանգամանորեն է պատմում նաեւ Իվանեի դուստր Թամթայի ամուսնությունների եւ քրիստոնյաների նկատմամբ Խլաթի Այուրյանների որոշ հովանավորչական քաղաքականության մասին (էջ 165-166), այնպես Վարդանը բավարարվում է կես նախադասությամբ, ընդ որում՝ սխալ նշելով Թամթայի առաջին ամուսնու անունը (էջ 182):

2 Այսպես, Վարդանը ժամանակագրական հստակ եւ մեծ մասամբ ճշգրիտ ցուցումներով է օժտում Զաքարյանների գլխավորած ազատագրական պայքարի մասին իր ոչ ընդարձակ պատումը (էջ 181): Կիրակոս Գանձակեցին եւս հաղորդում է Զաքարեի եւ Իվանեի ղեկավարած մարտերի մասին, ընդ որում՝ ավելի հանգամանորեն, բայց Պատմության այդ դրվագում ժամանակագրական ցուցումներն ընդհանրապես բացակայում են: Պատմիչն առանձին գլուխ է նվիրել նաեւ Զաքարե ամիրապետարի մահվանը (էջ 185-187), սակայն այս հարցում եւս Վարդան Արեւելցին երկու կարեւոր հավելում է կատարում. նա է հաղորդում գորավարի մահվան թվականը եւ ապա նշում այդ պահին Օհանջահ Ա-ի տարիքը (էջ 183):

3 Հմմ. Ն. Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 544 եւ հետո:

ներից եւ ոչ ոք չի կարողացել պարզել Զաքարյանների ճշգրիտ տոհմածառը: Վաղուց է հայտնի, որ նրանց տոհմագրության վերականգնման տեսանկյունից հայերեն վիմագիր արձանագրությունները եւ Թամար թագուհու առաջին պատմիչի երկն ավելի վստահելի սկզբնաղբյուրներ են, քան նույնիսկ Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու Պատմությունները<sup>1</sup>: Ուրեմն՝ ժամանակն է հրաժարվել Զաքարյանների ծագման հարցում ԺԳ դարի հայ պատմիչների անսխալականության պատրանքից եւ ձեռնամուխ լինել նրանց հաղորդած ավանդությունների կառուցվածքային վերլուծությանը:

Ինչպես եւ պետք էր սպասել, Մովսես Խորենացուց դարեր հետո ստեղծագործած պատմիչներն ընթացել են Պատմահոր հարթած ուղիով եւ ուղղակի կենդանացրել են խորենացիական պատրաստի կերպածեւերը: Այդ կերպածեւերը ժամանակին Պատմահայրը կերտել է ժողովրդական մշակույթի ընդհանրացման ու տեսականացման հիման վրա, ուստի միջնադարյան իրականության մեջ դրանք ոչ թե մատենագրական չոր ու ցամաք կաղապարներ են դիտվել, այլ աշխարհընկալման ընդհանրության հետեւանքով ժողովրդական լայն շրջաններում մշտապես համարվել են հավերժ գործառնական համակարգեր: Ուստի Վարդան Արեւելցու առաջադրած հարցերին պատասխանելիս պատմիչների շրջանում, մի կողմից, եւ ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» միջեւ, մյուս կողմից, հայացքների զարմանալի միասնականություն է դիտվում:

Եւ այսպես, իրոք, ովքե՞ր են եղել Զաքարյանների նախնիները, ո՞րն է եղել նրանց «նախահայրենիքը» եւ ի՞նչն է նրանց դրդել թողնել բնակության ավանդական վայրերը: Հետազոտողները, Զաքարյանների նախնիների ինքնությունը բացահայտելիս, ուշադրությունը սեւեռել են Զաքարյանների էթնիկական ու դավանական պատկանելության խնդրին, անտեսելով ոչ պակաս կարեւոր հարց՝ ի՞նչ սոցիալական դիրք են ունեցել նրանք իրենց «նախահայրենիքում»: Նշանավոր տոհմերի ծագման մասին ավանդությունների համար սովորական եւ կարելի է ասել նույնիսկ պարտադիր պարագա է նախնիների (ժողովրդական վեպում՝ հերոսների) բարձր ծագումը: Այսպես, Մովսես Խորենացու Պատմությունում այդպիսի ծագում է վերագրվում Բագրատունիներին, Արծրունիներին, Գնունիներին, Մամիկոնյաններին եւ բազմաթիվ այլ ազգեցիկ տոհմերի<sup>2</sup>: Միանգամայն բնական է, որ «Սասնա ծռերում» արքայազուններ են համարվում Սասնասարն ու Բաղդասարը: Ուստի Զաքարիա Սարկավազը, որին հետազոտողներից առաջ արդեն զբաղեցրել է Զաքարյանների նախնու «ո՛ւստի եւ կամ ո՛րպէս» լինելու հարցը, առանց երկբայելու եզրակացրել է. «այր ոմն քրիստոնեայ՝ Զաքարիա անուն՝ կարգեալ իշխան յազգէն Մարաց»<sup>3</sup>: Այսպիսով, պատմիչն ավելի որոշակիորեն է արտահայտվում Զաքարյանների ծագման մասին, քան նրանից ավելի քան չորս դար առաջ ստեղծագործած հեղինակները: Այդուհանդերձ, թվում է, թե սկզբնաղբյուրների երկու խմբերի (Զաքարիա Սարկավազի վկայությունը կրկնում է «Պատմութիւն քաղաքին Յանուց»-ի հեղի-

---

1 Տե՛ս Աս. Ծահնագարեանց, Գշվ. աշխ., էջ 76-77; Ծ. Թյեճոս, *Նամոնոս Ժողովրդայնո Յոտանոյն* յա Նամոնոյնոյն Բյուճա XII Նաշչոյնոն Նախնոյնոյն, ՅՅ. 191-192, 225-227.  
2 Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Գնահատական բնագիրը եւ Աերածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Սարգսյանի, Եր., 1991, էջ 68, 70-71, 221-223:  
3 Զաքարիա Սարկավազ, էջ 11:

նակը<sup>1</sup>) միջեւ սկզբունքային տարաձայնություններ չկան: Խնդիրն այն է, որ պատմիչներից յուրաքանչյուրը ձգտել է պատասխան տալ միանգամայն տրամաբանական երկրորդ հարցին՝ ինչո՞ւ են «օտար երկիր» մեկնել Զաքարյանների նախնիները: Եւ այս անգամ եւս պետք է արձանագրել, որ նրանք առաջնորդվել են տարածված կերպածեով: Մովսես Խորենացու ու նրա հետեւորդների աշխատություններում, ինչպես նաեւ ժողովրդական վեպում, նշանավոր տոհմերը թողնում են հայրենիքը ներքաղաքական բախումների, առաջին հերթին ապստամբությունների պատճառով: Հայկը բռնում է Բաբելոնից Հայաստան ճանապարհը Բելին հնազանդվելուց հրաժարվելով, պարզ ասած՝ ապստամբելով, Սանասարն ու Բաղդասարը՝ Բաղդադի խալիֆային սպանելով: Ապստամբներ եւ նույնիսկ «պետական հանցագործներ» են նաեւ Արծրունիների, Գնունիների, Մամիկոնյանների նախնիները: Այս ամենի լուսի ներքո իմաստավորվում է Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու «հատուածեալ» կամ «հատուած եղեալ» արտահայտությունը, որը գործածվում է երկու պատմիչների կողմից Զաքարյանների գաղթի արձանագրելիս: «Գաղթել» եւ «անջատվել» իմաստները, որ սերնդակից հեղինակների նույնական արտահայտություններին տվել է Հ. Մանանդյանը<sup>2</sup>, այնուամենայնիվ չեն սպառում այդ բայերի ողջ բովանդակությունը ու չեն ընդգրկում ամենագլխավորը՝ չբացատրելով երեւոյթի սկզբնապատճառը: Ընդ որում, եթե Կիրակոս Գանձակեցու հակիրճ վկայությունն այս հարցի մասին որեւէ ենթադրություն անելու հնարավորություն չի ընձեռում, ապա Վարդան Արեւելցին, թվում է, թե բավականաչափ որոշակի է արտահայտվում: Նրա հաղորդմամբ, Զաքարյաններն այլադավան են եղել եւ քրիստոնեություն են ընդունել Կյուրիկյանների թագավորությունում («հատուածեալ առ թագաւորսն Զորոյ գետին, որ Բագրատունեաց ազգն է, հաւատացին ի Քրիստոս եւ պատուեցան»<sup>3</sup>), հետեւաբար Զաքարյանների գաղթի սկզբնապատճառը քաղաքական բնույթ է կրել<sup>4</sup>:

Ո՞րն է եղել Զաքարյանների նախնիների տեղաշարժի ուղղությունը: Այս հարցին ուսումնասիրողներն առայժմ միայն մեկ պատասխան են տվել: Հավաստվել է, որ Զաքարյանները հարավից են գաղթել հյուսիս: Ընդ որում, զարմանալին այն է, որ առաջին խմբի պատմիչներից եւ ոչ մեկը չի նշում Զաքարյանների գաղթի ուղղությունը: Այդ դեպքում ինչի՞ վրա է հիմնված հետազոտողների հիրավի արտասովոր միահամուռությունը: Կարող է թվալ, թե այդ համոզումն առաջացել է միայն Ասլան Շահնազարյանցի՝ Զաքարյաններին քաղղեական ծագում վերագրելու, կամ Կարա-

1 Տե՛ս Մխիթար Անեցի, էջ 119:

2 Հ. Մանանդյան, Ազվ. աշխ., էջ 133:

3 Հետազոտողներից միայն Աս. Ծահնագարյանցն է «հաւատացին ի Քրիստոս» արտահայտությունն ընկալում այն իմաստով, որ Զաքարյանները Հայաստանում ընդունել են միայն Հայոց եկեղեցու դավանությունը, քանի որ նախապես հետտորակա, հետեւաբար նաեւ քրիստոնյա են եղել (Աս. Ծահնագարեանց, Ազվ. աշխ., էջ 73-74): Այս կարծիքը, սակայն, բխեցված է Զաքարյանների «քաղղեական ծագման» վարկածից եւ լիովին հիմնազուրկ է (տե՛ս Հ. Մանանդյան, Ազվ. աշխ., էջ 132):

4 Զաքարիա Սարկավազը եւ նրա հետեւորդությամբ՝ «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի հեղինակը ենթադրել են, որ գաղթի դրդապատճառը կրոնական բախումն է եղել: Նրանց համոզմամբ՝ Զաքարիան քրիստոնյա է եղել, «մարերը» ոչ, ուստի Զաքարյանների նախահայրը ենթարկվել է միջավայրի անքրոջ ճնշմանը՝ «վշտացեալ ի ցոցանէ, ոչ կարաց կեալ աւղէն»: Այսպիսով, պատմիչն ամենեւին էլ Զաքարյանների «հայությունը» շահելու հոգս չի ստանձնել, ինչպես կարծում է Աշոտ Հովհաննիսյանը (Ա. Հովհաննիսյան, Ազվ. աշխ., էջ 152), այլ սեփական պատկերացումների համաձայն է փորձել բացատրել իրադարձությունները:



պետ Տեր-Մկրտչյանի՝ նրանց Հարավային Հայաստանի Բագրատունիների հետ կապելու հետեւանքով: Զուգահեռաբար, թերեւս, որոշակի դեր է խաղացել հայկական աշխարհընկալման կարեւոր առանձնահատկություններից մեկը: Հարցն այն է, որ ըստ հայերի եւ ընդհանրապես՝ հնդեւրոպացիների հայեցակերպի՝ հյուսիսը (մենք) եւ հարավը (նրանք) հինավուրց հակադրություն են կազմում, ու հյուսիսն է, որ համարվում է հայոց բնօրրան<sup>1</sup>: Դեպի հյուսիս տեղաշարժն է, որ բազմիցս պատկերված է Մովսես Խորենացու Պատմութեան զանազան դրվագներում<sup>2</sup> եւ «Սասնա ծռերում»:

Կարելի է չկասկածել, որ Զաքարյանների հայտնվելը Հայաստանում հարավից դեպի հյուսիս տեղաշարժի հետեւանք են պատկերացրել նաեւ Կիրակոս Գանձակեցին ու Վարդան Արեւելցին<sup>3</sup>: Ինչ վերաբերում է սկզբնաղբյուրների երկրորդ խմբին, ապա պատկերը բավականաչափ հստակ է. Զաքարյանների ճանապարհին ընկած երկրների (Բաբելոն – Պարսից երկիր – Հայաստան – Վրաստան) թվարկումից<sup>4</sup> ակնհայտ է, որ հեղինակների այս զույգը եւս հարավից է դրել տոհմի ելքը:

Անհամեմատ բարդ է Զաքարյանների որտեղից տեղաշարժվելու, այսինքն՝ «նախահայրենիքի» պարզաբանումը: ԺԳ դարի պատմիչներից Կիրակոս Գանձակեցին Զաքարյանների «հատուածեալ» լինելն արձանագրելուց հետո նշում է, որ դա տեղի է ունեցել «ի քրդաց ի Բաբիրական խելէն», իսկ Վարդան Արեւելցին բավարարվում է «ի քրդ ազգէ» բնութագրումով<sup>5</sup>: Պատմիչները, այսպիսով, Զաքարյաններին վերագրում են օտար ծագում, որը դարձյալ լիովին տեղավորվում է խորենացիական ու ընդհանրապես միջնադարյան պատկերացումների շրջանակում: Հատկանշական է հենց միայն այն փաստը, որ Պատմահայրը վճռականորեն մերժում է Բագրատունիների՝ Հայկից սերվելու վարկածը եւ շեշտում է այդ տոհմի «օտար (հրեական)» ծագումը<sup>6</sup>: Խորենացու հետեւորդները Զաքարյաններին սերված դիտելով «ի քրդաց» կամ «ի քրդաց ազգէ»՝ հետազոտողներին կանգնեցնում են «քուրդ» էթնոնիմի ճիշտ նշանակությունը պարզաբանելու անհրաժեշտությունն առջեւ: Հարցն այն է, որ այդ էթնիկական անվանումը հաճախադեպ է դառնում հենց ԺԳ - դարի հայ պատմագրության մեջ եւ մեկնաբանման առումով որոշակի դժվարություն է ներկայացնում:

Հիրավի, «քուրդ» էթնոնիմի գործածության պատմությունն ուշագրավ է եւ առանձին քննության կարիք է զգում: Բնավ չհավակնելով սպառել այդ խնդիրը, կանգ առնեմ միայն որոշ փաստերի եւ իրողությունների վրա: Այդ անվանումն անձանոթ է Ե դարի հայ պատմիչներին, է-Ը դարի հեղինակներ Սեբեոսին ու Դեւոնդին, նույ-

1 Տե՛ս **А. А. Степанян**, *Развитие исторической мысли в древней Армении*, Ер., 1991, с. 53-54.

2 **Մովսէս Խորենացի**, էջ 33-41, 70 եւ այլն:

3 Դա ակնհայտ է դառնում, եթե «Բաբելոնի երկիր» ենք ընկալում Կիրակոս Գանձակեցու «Բաբիրական (Բաբիլական) խել» արտահայտությունը (տե՛ս ստորեւ): Վարդան Արեւելցու դեպքում կարելի է բերել հետեւյալ կովանը: Պատմիչը եւս երկու անգամ, Օտարայանների ու ծանարների քորեպիսկոպոսի պարագայում, նոր տոհմերի հայտնվելը բացատրում է գաղթով եւ նրանց «նախահայրենիքը» համարում է հարավում գտնվող երկրները (Վարդան Արեւելցի, էջ 134-135): Որ երրորդ՝ Զաքարյանների դեպքում եւս նա հավատարիմ է մնացել իր պատկերացումներին, երեւում է Բաբելոն-Բաղդադ քաղաքի մասին պատմիչի հայացքներից, ինչի մասին տե՛ս ստորեւ:

4 **Զաքարիա Սարկաւագ**, էջ 11; **Մխիթար Անեցի**, էջ 119:

5 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 162; **Վարդան Արեւելցի**, էջ 181:

6 **Մովսէս Խորենացի**, էջ 68-69:

նիսակ՝ Ժ-ԺԱ դարերի մատենագիրներ Հովհաննես Դրասխանակերտցուն, Թովմա Արծրունուն, Ասողիկին եւ Արիստակես Լաստիվերցուն: Եւ այդ ամենն այն պարագայում, երբ ինքը՝ քրդական էթնոսը, գոնե արաբական շրջանում եւ հետո, անվերապահորեն ծանոթ է եղել հայ հեղինակներին: Ուստի այն կարծիքն է հայտնվել, որ քրդերին նշելու համար հայ պատմիչները, մասնավորապես՝ Մովսես Խորենացին, դիմել են «մար» էթնոնիմին<sup>1</sup>: Վիճակը, սակայն, սկսել է փոխվել ԺԲ-ԺԳ դարերում, երբ «քուրդ» էթնոնիմը սկսել է թափանցել էթնիկական տերմինաբանության առումով պահպանողականորեն տրամադրված պատմագրության մեջ, իսկ մյուս կողմից՝ դեռեւս ամուր են մնացել ավանդական «մար» անվանման դիրքերը: Հայ պատմիչներից Մատթեոս Ուռհայեցին թեեւ հիշատակում է «քուրդ» էթնոնիմը եւ համապատասխանաբար «Քրդաստան» երկրանունը<sup>2</sup>, միաժամանակ գործածում է «քուրդ» անվանումը նաեւ ընդարձակ ու ընդգրկուն առումով: Այսպես, պատմելով Ալփ-Արսլան սուլթանի սպանության մասին, պատմիչն ավելացնում է. «մեռաւ Աբասլան սուլտանն ի ձեռաց առն անփառաւորի եւ քրդու»<sup>3</sup>, այսինքն՝ էթնիկական անվանմանը հաղորդում է բարոյական վարքագծի բնութագրման երանգ<sup>4</sup>: «Քուրդ» էթնոնիմի ընդգրկունությունը երեւում է նաեւ ԺԲ դարի հեղինակ Դավիթ Ալավկաորդու «Կանոններից»: Այս իրավական հուշարձանի մի շարք հոդվածներում «Քուրդ»-ը հանդես է գալիս որպես «Քուրդ» – «Քրիստոնեայ» հակադրության անհրաժեշտ տարր<sup>5</sup>՝ ձեռք բերելով «մահմեդական», «այլազգի», «օտար» լրացուցիչ իմաստները<sup>6</sup>: Համապատասխանաբար, հայ ժողովրդական վեպի որոշ պատումներում «քուրդ» անվանումը փոխարինում է սովորաբար հանդիպող «այլազգի», «կռապաշտ», «մահմեդական», «արաբ», «տաճիկ» համարժեքներին եւ հակադրվում է «հայ», «քրիստոնեայ», «խաչապաշտ» բնութագրումներին<sup>7</sup>: Այսպիսով, ԺԲ դարում, երբ ուժեղացել էր քրդական էթնիկ տարրի ներթափանցումը Հայաստան ու որոշակի տարածքներում իշխանությունը պատկանում էր քրդական տոհմերի (Շահդադյաններ, Այուբյաններ եւ այլն), «քուրդ» էթնոնիմն արդեն ավանդվում է հայկական սկզբնաղբյուրներում:

Արդ՝ ինչպիսի՞ն է պատկերը հաջորդ դարում, երբ նոր ուժով էին բախվելու պատմագրական ավանդույթը եւ ժամանակահատվածի իրականությունը, ի՞նչ հա-

1 Տե՛ս V. Minorsky, ԳՂՎ. աշխ., էջ 127-128:

2 Մատթեոս Ուռհայեցի, էջ 60, 91, 144: ԺԱ դարի դեպքերի առիթով «Քրդաստան»-ի հիշատակությունը համարվում է ամենահինը ողջ միջնադարյան բազմալեզու մատենագրության մեջ: Տե՛ս Г. Асатрян, *Этногенез курдов и ранние армяно-курдские контакты*. – Iran & Caucasus, Vol. I, Tehran, 1997, p. 5.

3 Մատթեոս Ուռհայեցի, էջ 205:

4 Իմաստային անցումը դիպուկ է հաղորդված «Ժամանակագրության» աշխարհաբար թարգմանությունում. «մեռավ սուլթան Աբասլանը՝ անարգ ու քրդաբարո մարդու ձեռքով» (Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, Աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Եր., 1973, էջ 135):

5 Ա. Աբրահամյան, *Դավիթ Ալավկա որդու Կանոնները*, – «Էջմիածին», 1952, № ԺԱ-ԺԲ, էջ 57, 66:

6 Այսպես, Դավիթ Ալավկաորդու՝ գողերի պատժին վերաբերող հողվածը Մխիթար Գոշն իր «Դատաստանագիրք» է ներմուծել նույնությամբ՝ «եթե քուրդ իցէ, եթե հայ» արտահայտությունը վերափոխելով՝ «եթե այլազգի իցէ, թե քրիստոնեայ» ձեռով (Մխիթար Գոշ, *Գիրք Դատաստանի*, Աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Եր., 1975, էջ 128, հմմ. էջ 583, ծմթ. 134):

7 «Սասնա ծեփ», հտ. Ա, Եր., 1936, էջ 252, 415, 608, 759-760, 1049-1050, հտ. Բ, Առաջին մաս, Եր., 1944, էջ 236-237:

րաբերակցությունն էր հաստատվելու հին («մար») եւ նոր («քուրդ») անվանումների միջեւ: ԺԳ դարի պատմիչների, ու առաջին հերթին՝ Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու երկերի քննությունից պարզ է դառնում, որ հին ու նոր էթնիկական անվանակարգի (նոմենկլատուրայի) հարցերում հեղինակները որոշակի սկզբունքների են հետեւել: Մինչեւ ԺԲ դարը տեղի ունեցած դեպքերն ավանդելիս նրանք գործածել են «մար» էթնոնիմը, իսկ այնուհետեւ, իրենց դարաշրջանի իրադարձությունների առիթով, դիմել են իրենց համար ավելի ընտանի «քուրդ» անվանմանը<sup>1</sup>:

Այսպիսով, ԺԳ դարի պատմիչների համար ամենեւին էլ բնորոշ չէ եզրույթաբանական այն խառնաշփոթը, որը լայն տարածում է ստանում ուշ միջնադարյան հայ պատմագրության մեջ: Օրինակ, Առաքել Դավրիժեցու եւ Զաքարիա Սարկավազի Պատմություններում զանգվածաբար գործածվող «մար» եւ «քուրդ» էթնոնիմները հանդես են գալիս որպես հոմանիշներ եւ լիովին փոխարինում են միմյանց<sup>2</sup>:

էթնիկական եզրույթների գործածության մեջ դիտվող հատակությունն այնուամենայնիվ չի նշանակում, որ ԺԳ դարի պատմիչները ժխտել են «մար» ու «քուրդ» եզրույթների նույնությունը եւ «քրդերին» չեն վերագրել «մարերի» պատմության այն դրվագները, որոնք արտացոլված են վաղ հայկական աղբյուրներում ու հատկապես՝ անվերապահ հեղինակություն վայելող Մովսես Խորենացու Պատմությունում: Համոզվելու համար բավական է դիմել մի խիստ կարեւոր փաստի արձանագրմանը՝ Վարդան Արեւելցու եւ Կիրակոս Գանձակեցու երկերում: Հայկական եւ արաբական միմյանց վկայությունները հաստատող աղբյուրներից հայտնի է, որ ազգույթամբ քուրդ Սալահ ադ-Դինը սերում էր Դվինի մերձակայքում ապրող մի ընտանիքից<sup>3</sup>: Պատմելով այդ նշանավոր գործչի մասին՝ Վարդան Արեւելցին բավարարվում է նրա նախնիների բնակավայրի նշումով՝ «Յառաջ Ուսոյթ էր անուն նորա՝ որդի էուբի, առն տառապելոյ Դունացուց, որ եւ ի մեծանալն կոչեցաւ Սալահադին»<sup>4</sup>, եւ այդպես շրջանցում է վերջինիս էթնիկական պատկանելության խնդիրը: Այս իրողությունն ուշագրավ է, քանի որ պատմիչը, ձեռքի տակ ունենալով Կիրակոս Գանձակեցու ավելի հանգամանալից պատումը, այնուամենայնիվ հարկ է համարել չերկրորդել իր սերնդակից հեղինակին: Ավելի վաղ ստեղծագործած Կիրակոսը գրում է ոչ միայն Սալահ ադ-Դինի «ազգաւ քուրդ» լինելու մասին, այլեւ նշում է «ի Մասեսայ-յոտնէ» սերելը<sup>5</sup>: Երկու պատմիչների աշխարհագրական ցուցումների միջեւ գոյություն ունեցող տարբերությունն ակնհայտ է: Եթե Վարդան Արեւելցին հետեւողականություն դրսևորեր ու նշեր նաեւ Սալահ ադ-Դինի նախնիների բնակավայրի ո՛ր գավառում

1 Կիրակոս Գանձակեցին հիշատակում է Մարաց աշխարհն արաբական անվանումներն արձանագրելիս (Կիրակոս Գանձակեցի, էջ 59), իսկ ԺԲ-ԺԳ դարերի անցքերի առիթով գործածում է «քուրդ» էթնոնիմը (տե՛ս նույն տեղում, էջ 150, 162, 376, 378): Վարդան Արեւելցին, որի երկում ճանաչում ժամանակների պատմությանն անհամեստ մեծ տեղ է հատկացված, բազմիցս է անվանում «մար»-երին (Վարդան Արեւելցի, էջ 21-22, 40-41, 44-45), բայց միայն Զաքարիանների առնչությամբ է դիմում «քուրդ» էթնոնիմին:

2 «Լուսն ազգն Մարաց, որ է Քուրտ», – գրում է Զաքարիա Սարկավազը եւ հաջորդ տողերում, առանց տարբերություն դնելու, փոխեփոխ գործածում է երկու անվանումն էլ (Զաքարիա Սարկավազ, Պատմագրություն, հտ. I, էջ 60-61): Հմմ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 63, 487:

3 Տե՛ս V. Minorsky, անվ. աշխ., էջ 107-129:

4 Վարդան Արեւելցի, էջ 171-172:

5 Կիրակոս Գանձակեցի, էջ 251:

գտնվելը, ապա նա անպայման նշելու էր Ոստան գավառը, որտեղ տեղորոշվում էր Դվինը<sup>1</sup>: Մասյացոտն – Ոստան անհամաձայնության առաջացումն անհնար է հասկանալ, առանց վերականգնելու Կիրակոս Գանձակեցու կատարած եզրակացության հիմքերը: Ինչպես տեսանք, նա շեշտում է Սալահ ադ-Դինի «քուրդ» լինելը, հետեւաբար ձգտելու էր պարզել վերջինիս բնակության նախնական վայր-գավառը: Եթե պատմիչին հայտնի չի եղել Սալահ ադ-Դինի՝ Դվինցի լինելը, ինչն ամենեւին իսկ չի բացառվում<sup>2</sup>, ապա նրան մնում էր հետեւել «մար»-«քուրդ» նույնացմանը եւ փորձել պատմական տեղեկությունների հիման վրա պարզել Սալահ ադ-Դինի նախնիների՝ որտեղացի լինելը: Այդ դեպքում, պարզվում է, «Մասեացոտն»-ի հիշատակությունն ամենեւին պատահական չէ: Ըստ Մովսես Խորենացու՝ մարաց Աժդահակ թագավորին պարտության մատնելուց հետո, մարերին Մասյացոտնում բնակեցրեց հայոց Տիգրան արքան. «զբազումս ի սերմանէն Աժդահակայ աղջկունս, հանդերձ պատանեկաւք եւ բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարեւելեայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան»<sup>3</sup>: Մարերը՝ «գարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց»<sup>4</sup>, այստեղ էին ապրում նաեւ Արտաշէս արքայի օրոք: Այսպիսով, ԺԳ դարի հեղինակն անվերապահ հավատ է ընծայել Մովսես Խորենացու երկին եւ պատմագրական ավանդույթի ազդեցութեամբ նույնիսկ մեղանշել է ճշմարտության առջեւ՝ այլ գավառում տեղորոշելով Սալահ ադ-Դինի նախնիների բնակավայրը: Հետեւաբար, ԺԳ դարի հայ պատմագրության մեջ որեւէ տոհմին «քրդական» ծագում վերագրելը նշանակում էր այդ ընտանիքի տոհմականքների գոյությունը հավաստել հնագույն «մարական» ժամանակներում: Ընդ որում, այդպիսի վերագրումը միաժամանակ «ապացուցում էր» այդ իշխանական տան չափազանց բարձր ծագումը: Հայոց միջավայրում «մար» համարվելը ցույց էր տալիս Աժդահակի, այսինքն՝ արքայական տոհմից լինելը եւ, որ ամենակարեւորն է, Վաղարշակ արքայի օրոք «երկրորդ թագաւորութեանն» կարգվելը<sup>5</sup>:

Նկատի առնելով Զաքարյանների փաստական ազդեցությունը եւ կշիռը վրացական թագավորությունում ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, պարզ է դառնում նաեւ, որ «մարական» ծագման տեսությունն ունեցել է քաղաքական նպատակաուղղվածություն: Այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ տեսությունը կոչված էր հիմնավորելու Զաքարյանների հանրահայտ հավակնությունների «պատմական հիմքերը»: Ուստի եւ հայ պատմիչները վերացարկվել են Զաքարյանների ծագման իրական իրողություններից եւ ուղղակի «կերտել» են այդ իշխանական տան նախապատմությունը՝ ընդ որում լիովին հավատարիմ մնալով Մովսես Խորենացու Պատմության ոգուն ու նույնիսկ տառին:

---

1 Տե՛ս, օր.՝ **Ս. Տ. Երեմյան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 49, 74, 111:  
 2 Սալահ ադ-Դինի Էթնիկ պատկանելությունը, առավել եւս նրա նախնիների բնակավայրի տեղորոշումն անհայտ է եղել նրա հայ ժամանակակիցների, անգամ՝ նրանցից այնպիսի նշանավոր անձնավորության համար, ինչպիսին Ներսէս Լամբրոնացին էր: Վերջինս Սալահ ադ-Դինին կոչում է. «Յովսէփ արքայ իսնայելեան, որք Թորոքիման ազգք կոչեցան» (տե՛ս *Հայերեմ ձեռագրերի Ռիչատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 249), իսկ մեկ այլ Ռիչատակագիր՝ «Հաքարացոյ ումեմն Սալահատտիմ կոչեցեալ» (տե՛ս նույն տեղում, էջ 272):  
 3 **Մովսէս Խորենացի**, էջ 83:  
 4 Նույն տեղում, էջ 176:  
 5 Նույն տեղում, էջ 112:

Առաջին հերթին Պատմահոր ազդեցությունը պետք է բացատրել նաև Զաքարյաններին «ի Բաբիլական խելէն» Հայաստան բերելու վարկածի առկայությունը կիրակոս Գանձակեցու Պատմությունում<sup>1</sup>: Հարցը միայն այն չէ, որ հենց Բաբելոն քաղաքից են դեպի Հայաստան մեկնում Մովսես Խորենացու Պատմությունում հանդես եկող ինչ-ինչ գործիչներ: Ավելի կարևոր է այն հանգամանքը, որ ե՛լ Խորենացու, ե՛լ նրան հետևող պատմիչների երկերում Բաբելոնը համարվել է վաղնջական ժամանակների «աշխարհի» ամենահին մայրաքաղաքը: «Եւ զԲաբելոնի զառաջին շինուածն Նբերովթայ համարին Եբրայեցոց գիրք, եւ առաջին թագաւոր քան զամենեսեան զնա ասեն լինել... եւ եղև սկիզբն թագաւորութեան ի Բաբելոն», – գրում է հայոց մեջ առաջին «տիեզերական» պատմության հեղինակ Ստեփանոս Ասողիկը<sup>2</sup>: Նրա հետ լիովին համաձայն է Վարդան Արեւելցին, ով Նոյի որդիներից Քամի սերունդներին թվարկելիս որպես առաջին թագավոր հիշատակում է Նբերովթ-Բելին. «Ասասցուք եւ զկարգ թագաւորացն՝ Նբերովթ ի Բաբելոն»<sup>3</sup>: Ինչպես եւ պետք էր սպասել, միջնադարյան մատենագրության մեջ Բաբելոնը հնագույն մայրաքաղաքի խորհրդանիշ է համարվել, ուստի Բյուզանդիոն-Կոստանդնուպոլիսը ժ դարում կարող էր համարվել «Նորն Հոռոմ, յերկրորդ Բաբելոն»<sup>4</sup>:

Հաջորդ դարերում, սակայն, Բաբելոն անվանումը լրացուցիչ իմաստավորում է ձեռք բերել: Երբ այդ քաղաքի մերձակայքում առաջին Աբբասյան խալիֆաները կառուցեցին խալիֆայության նոր մայրաքաղաք Բաղդադը, Բաբելոնը սկսեց մտազուգորդվել մահմեդականության պատվար Բաղդադի հետ: Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու է առաջին (ավագ) Զաքարյանների «հաւատացին ի Քրիստոս»-ը նշում Վարդան Արեւելցին: Նրա պատկերացումների համաձայն՝ Զաքարյանների նախնիները թեեւ բարձր ու հին ծագում են ունեցել, բայց այնուամենայնիվ եղել են մահմեդականներ, ուստի եւ քրիստոնեություն ընդունելու կարիք են զգացել: Որ Վարդան Արեւելցին Բաբելոն-Բաղդադի մասին խոսելիս բնակիչներին անպայմանո-

1 Կիրակոս Գանձակեցու Պատմության ձեռագրերի մեծ մասը «Բաբիլական խել»-ի փոխարեն պարունակում է «Բաբիրական խել» ընթերցումը, որը, սակայն, մնում է անհասկանալի: Այն բացատրելու նպատակով առաջարկում են «խել» բառը ըմբռնել «ցեղ, տոհմ» իմաստով եւ «Բաբիրական»-ը նույնացնում են քրդական որեւէ ցեղի հետ: Բայց, ինչպես տեսանք, հայ պատմիչներից հետաքրքրել է Զաքարյանների «նախահայրեմիքի» խնդիրը. տոհմի նախնիների ցեղային, տոհմային պատկանելության հարցը նրանց չի զբաղեցրել: Ինչպես ցույց կտրվի հաջորդ էջերում, պատահական հարմարեցում է ներկայացնում «Բաբիրական»-ի նույնացումը քրդական այնպիսի ցեղի հետ, որի գոյությունը հեռավոր ԺԱ-ԺԲ դարերում չփաստարկված ենթադրություն է: Այսպիսով, առավել հավանական լուծում է մնում «Բաբիրական»-«Բաբիլական»-ի ընկալումը երկրամաս կամ սուկ «խել» – «կողմ»-ի տարբերակով (տե՛ս Ն. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հտ. II, Եր., 1973, էջ 362) ցուցիչի իմաստով: Այդ դեպքում ձեռագրերից երկուսում առկա «Բաբիլական» ընթերցումը որոշակի առավելություն է ձեռք բերում ավելի հաճախադեպ «Բաբիրական»-ի նկատմամբ: Առաջին տարբերակը հնությանը չի զիջում երկրորդին, քանի որ «Բաբիլական» ձեռք վկայում է նաև Զաքարիա Սարկավազը, ով, հնարավոր է, օգտվել է ԺԶ դարից ավելի վաղ գրված ձեռագրից: Ի դեպ, «Բաբիլական» ձեռք պահպանած ձեռագրերը եւս իրենց ժամանակով (ԺԷ դար) հմերից են՝ ԺԶ դարից ոչ վաղ ընդօրինակված գրչագրերի շարքում (տե՛ս հրատարակության Առաջաբանում՝ Կիրակոս Գանձակեցի, էջ ԴԹ-Շ, ՇԵ): Էական ճշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ «Բաբիլական» ընթերցումն արդարանում է Վարդան Արեւելցու Պատմության տվյալներով:

2 Ասողիկ, էջ 24:

3 Վարդան Արեւելցի, էջ 23:

4 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 58:

րեն մահմեդականներ է պատկերացնում, երեւում է նրա Պատմութեան մեկ այլ հատվածից: Փորձելով բացատրել ծանարների իշխանութեան (քրեպիսկոպոսութեան) տիրակալների ծագումը, պատմիչը նրանց նախնիներին «արք ոմանք քաղդէացի», այսինքն՝ դարձյալ բաբելոնցի է հռչակում եւ նրանց քրիստոնէութիւնը ընդունելը կատարված է համարում Գարգմանում: Նրանց դավանափոխութեան մասին լսելով, շարունակում է հեղինակը, «ամիրայն Բաղդադայ՝ սպառնայ յոյժ», ուստի եկվորները տեղափոխվում են «յոտն Կովկասու» եւ «կոչեցին զգաւառն Մանարք, զի անդ ծանեան տեղի բնակութեան իւրեանց»<sup>1</sup>: Բաղդադ-մահմեդականութիւնը՝ մատենագրութեան մեջ հանդիպող նույնացումը, որը թելադրված է եղել պատմական իրականութեամբ, բնութագրական է նաեւ հայկական ժողովրդական աշխարհընկալման համար: Բավական է վերհիշել, որ «Սասնա ծռերում» հենց «Բաղդադի խալիփան» է հանդես գալիս որպէս օտար իշխանութեան ու հավատի բեւեռացած մարմնացում:

Ի մի բերելով Զաքարյանների ծագման մասին միջնադարյան հայ պատմագրութեան մեջ արտահայտված վարկածները՝ կարելի է հավաստել, որ գործ ունենք մշակված ու հղված մատենագրական կերպածեւի հետ: ԺԳ-ԺԷ դարերի հայ պատմիչները Զաքարյանների վաղնջական պատմութիւնը շարադրել են՝ ելնելով սեփական պատկերացումներից ու ենթադրութիւններից: Զաքարյանների նախնիների իրական պատմութիւնը անհայտ է եղել Կիրակոս Գանձակեցուն, Վարդան Արեւելցուն եւ նրանց հետեւող հեղինակներին: Հայտնվելով նման պարագաներում, հայ պատմիչները որոնումների են դիմել վաղ միջնադարից հայտնի մատենագրական կերպածեւի շրջանակներում: Այս է պատճառը, որ Զաքարյանների ծագման տեսութիւնը մշակելիս ԺԳ-ԺԷ դարերի հեղինակները կրել են պատմահայր Խորենացու խոր ազդեցութիւնը:

\* \* \*

Զաքարյանների ծագման երկրորդ՝ Բագրատունիներից սերելու վարկածն արտացոլված է առավել մեծ թվով սկզբնաղբջուրներում, սակայն եռանդուն կերպով քարոզվել է համեմատաբար կարճ ժամանակահատվածում ու արձագանք չի գտել հայ եւ վրաց միջնադարյան պատմագրութեան մեջ:

Այս տեսութիւնը քննելիս նախ հարկ է հստակեցնել, թե Զաքարյաններից ովքեր են Բագրատունի հորջորջվել եւ ապա պարզել՝ Բագրատունիների ո՞ր տոհմաճյուղի հետ են ազգակցութիւն փնտրել Հայաստանի նորահայտ տիրակալները:

Ավանդաբար համարվում է, որ իրենց Բագրատունի են անվանել Իվանե աթաբեկը եւ նրա քույր Վանենին (Նանան)<sup>2</sup>: Ուստի անհրաժեշտ է վերստին անդրադառնալ սկզբնաղբջուրներին եւ ճշտել, թե Զաքարյաններից ո՞վ եւ ե՞րբ է հիշատակել իր ազգակցութիւնը նշանավոր արքայատոհմի հետ: Ժամանակագրական առումով, թերեւս, ամենավաղ ու առավել հայտնի հիշատակութիւնը պատկանում է Վանենի իշխանահուն<sup>3</sup>: Ուսումնասիրողներից Ասլան Շահնազարյանցի կարծիքով, «Նանան

1 Տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 135:

2 Տե՛ս Ա. Շահնազարեանց, մշվ. աշխ., էջ 69-70; Յ. Թյնեօս, *Սամոնա Յոլոլոճոյճորո Յոտարեյն* ճա Սամոնեյոլո ճյոլոն XII Սալոյճոն Սալոնոյճեյոլոն, ճՅ. 223-224.

3 Կ. Ղաֆաղարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները*, էջ 185-186: Պետք է խոստովանել, որ արձանագրութիւնը մասամբ վնասված է, ուստի դժվար է անվերապահորէն եզրակացնել, թե «[ա]զգիմ Բագրատունեաց» բառերը վերաբերում են ո՞նեմ Վանենիին:

իրեն համարում էր Բագրատունեաց ցեղից, երեւի այն մտքով, որ ինքն ամուսնացած էր Բագրատունի թագաւոր Աբասի հետ»<sup>1</sup>: Բայց ամուսնու տոհմակից դիտվելու համար մի՞թե բավական էր նրա հետ ամուսնացած լինելը: Կյուրիկյանների հետ խնամհական կապերը անսովոր չէին ԺԲ դարի հայկական իշխանական տների համար, բայց այդ տոհմերից որեւէ մեկը չի սկսել իրեն Կյուրիկյան կամ Բագրատունի անվանել: Եթե Վանենիի եւ Աբասի երկու տարի տեւած ամուսնութունն ընդունելի փաստարկ չէր կարող դիտվել՝ Նանային Բագրատունիների տոհմին դասելու համար, ապա առավել եւս Կյուրիկյանների հետ միակ խնամհական աղերսը<sup>2</sup> չէր կարող ելակետ ծառայել նաեւ մյուս Զաքարյաններին Բագրատունի հռչակելու համար<sup>3</sup>:

Ամենաուշագրավ փաստը, այնուամենայնիւ, հետեւյալն է. Վանենիից ու Իվանեից զատ՝ թագավորական ծագում է վերագրվել նաեւ նրանց քրոջը՝ Նրջիսին եւ, որ ամենակարեւորն է՝ Զաքարե ամիրսպասալարին:

Դիմենք համապատասխան փաստերին:

Հաղարծնի Սուրբ Գրիգոր եկեղեցու գավթի նշանավոր արձանագրութունը Զաքարյանների եւ Բագրատունիների ազգակցութունը շեշտող ամենակարեւոր վավերագիրն է: Վիմագրի առաջին մասը՝ «Այս մեր գիր յիշատակի է եւ արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսի, յազգէ Բագրատունեան՝ Իւանէի եւ Զաքարէի, յորժամ նախախնամութիւնն Աստուծոյ էհաս յարարածս եւ ետ... տիրել սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց, ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն Անբերդ»<sup>4</sup>, իրականում գրված է Զաքարիայի մահից քիչ անց, Իվանեի կողմից<sup>5</sup>: Այս իրողութունը, սակայն, դեռեւս չի նշանակում, թե արձանագրութունում հավաստված տեսակետը պատկանում է միայն Իվանեին: Հաղարծնի արձանագրութւյան մեջբերված հատվածը համադրելի է Հաղբատի կարեւոր վիմագրերից մեկի հետ, որը գրվել է «յամս աւծելոյ Աստուծոյ թագաւորաց թագաւորին Գէորգէ, որդոյ մեծ թագաւորին Թամարին, յորոյ ժամանակս ետ Աստուած ի ձեռս Բ հարազատացս՝ Զաքարէի եւ Իւանէի, զսէփական դղեակն մեր գԱնբերդ, զընեալն ի նախնեաց մերոց եւ զայլ բազում ամրոցս»<sup>6</sup>: Դժվար չէ նկատել, որ ընդգծված հատվածները բանաձեւային բնույթ ունեն եւ Բագրատունի-Զաքարյան տոհմակցութւյան տեսութւյունն առաջ է քաշվել երկու եղբայրների կողմից: Ավելին, հիմքեր կան կարծելու, որ առաջին հերթին Բագ-

1 Աս. Շահնազարեանց, Աշվ. աշխ., էջ 70: Ավելի վաղ նույն տեսակետն է հայտնել Մարի Բրոսե (M. Brosset, *Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie*, p. 270).

2 Աշոտ Հովհաննիսյանի ենթադրությունը, ըստ որի՝ «խնամհական անան կապ (նկատի ունի Իվանեի եւ ենթադրյալ Բագրատունի Խոշաքի /այս մասին՝ ստորեւ/ ամուսնությունը – Հ. Մ.) Բագրատունիների հետ կարող էին ունեցած լինել Իվանեի եւ Զաքարեի նախնիները եւս» (Ա. Հովհաննիսյան, Աշվ. աշխ., էջ 155), սնուն է չփաստարկված եւ քիչ հավանական: ԺԲ դ. երկրորդ կեսի Կյուրիկյանների եւ Զաքարյանների տոհմաձայնում ու խնամհական կապերը լավ հայտնի են, իսկ ինչ վերաբերում է դարի առաջին կեսին, ապա այդ տոհմերն իրենց դիրքով դեռեւս բավականաչափ տարբեր տեղեր էին գրավում ավատատիրական աստիճանակարգության մեջ՝ խնամհական առնչություն հաստատելու համար:

3 Այս առումով լիովին ուժի մեջ է սնուն Կարապետ Տեր-Մկրտչյանի օրինական հարցը. «Ինչո՞ւ Կորիկեանների հետ ունեցած խնամհությունը իրատուք պիտի տար Զաքարեաններին Բագրատունի կոչուելու» (Կ. Տեր-Մկրտչյան, Աշվ. աշխ., էջ 22):

4 *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 22: Ընդգծումն իմն է:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 34, գիտելիք:

6 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հաղբատ*, էջ 168-169: Ընդգծումն իմն է:

րատունի է հռչակվել Զաքարեն եւ միայն Շահնշահի մանկահասակութեան ժամանակահատվածում է առանձին շեշտվել Իվաների թագավորական ծագումը: Այսպես՝ Գեղարդի գլխավոր եկեղեցու 1215 թվականի արձանագրությունում «թագաւորազն», այսինքն՝ Բագրատունի է կոչվում միայն Զաքարե ամիրսպասալարը: «Ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարէի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդոց նոցին Շահանշահի եւ Աւագին», – ասվում է վիմագրում<sup>1</sup>, թեեւ այն փորագրվել է զորավարի մահից երեք տարի հետո: Նույն ոգով է արտահայտվում 1217 թվականին Այրիվանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի գրիչը. «...եւ յանցելում երի[ց] ամաց թագաւորազնն՝ մեծն եւ աջողակն եւ ըմբշամարտիկն քաջ Զաքարայ, որդին Սարգսի սպարապետին Վրաց արքային, աւաղական մահուամբ բարձաւ յաստեացա»<sup>2</sup>: Հետեւաբար՝ ավանդույթը շարունակելով է, որ Իվանեն իրեն «թագազն» է անվանում նույն Այրիվանքի վիմագրերից մեկում<sup>3</sup>:

Վերոհիշյալ փաստերի լույսի տակ իմաստավորվում է նաեւ Այգեհատի 1223 թվականի արձանագրությունը, որտեղ «Գրիգոր սնուցեալ»-ը՝ «Նրջիսի թագուհւոյն եւ Մամբանայ», հաղորդում է իր շինարարական գործունեության մասին<sup>4</sup>: Պարզվում է, որ «թագուհի», հետեւաբար՝ Բագրատունի, է դիտվել նաեւ Նրջիս Զաքարյանը: Բացառված չէ, որ Շահնշահ Ա-ի որդի Զաքարիայի՝ Բագրատունի համարվելն է ակնարկվում Բագնայրի Ավետարանի 1232 թ. հիշատակարանում, որտեղ նա «թագածին» է կոչվում<sup>5</sup>: Այսպիսով՝ Բագրատունիներից սերված լինելը Զաքարյաններն ընդգծել են շուրջ կես դարի ընթացքում, եւ «Բագրատունիական» ծագման տեսությունն արտացոլվել է սկզբնաղբյուրների երկու տարբեր խմբերում՝ վիմագիր արձանագրություններում եւ ձեռագիր հիշատակարաններում: Եւ այս ամենը դեռ բոլորը չէ. Զաքարյանների՝ Բագրատունիների հաջորդը դիտվելու հավակնությունները գաղափարախոսական բազմակողմանի ու ծավալուն հիմնավորում են ունեցել:

Նախ՝ Զաքարյաններն իրենց արձանագրություններում յուրացրել են Անիի Բագրատունիների տիտղոսաշարի մեջ մտնող բազմաթիվ կարեւոր բաղադրիչներ, այդ թվում նաեւ «շահնշահ» ու «տիեզերակալ» պատվանունները: Գիտական գրականության մեջ Զաքարյանների տիտղոսները, իհարկե, մշտապես արձանագրվել են, սակայն դա կատարվել է զուտ ժամանակակից չափանիշների տեսանկյունից: Պատմաբաններն այս փաստերը վկայակոչել են Զաքարյանների հզորության աստիճանը նշելու, հայոց թագավորությունը վերականգնելու՝ նրանց հավակնությունների հիմնավորվածությունը ցուցադրելու առիթով: Հետազոտողների մի մասն էլ ամենայն լրջությամբ առարկել է եւ եզրակացրել, որ Զաքարյաններն ու նրանց մերձավորներն

---

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 299:  
2 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 105:  
3 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 299: Դատելով Իվանի արձանագրած գրավումների տարեգրությունից՝ վիմագրումը կատարվել է 1219 թվականին կամ դրանից հետո:  
4 Տե՛ս Ս. վրղ. Զալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, Մասն Ա, Տփղիս, 1842, էջ 103: Որ պատեղ հիշատակված Նրջիսը Զաքարյանն է, երեւում է Աույն Գրիգորի 1235 թվականին Հատիճում թողած արձանագրությունից. «Ես՝ Գրիգոր, սնուցած մեծի Սարգսի դատերն Նրջիսին» (տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքանություն*, էջ 83-84):  
5 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 178: Հնարավոր է, որ Զաքարեն «թագածին» անվանվելու այլ հիմք էլ է ունեցել: Բանն այն է, որ հիշատակարանում թագավորական է դիտվում արդեն Շահնշահի դիրքը:



իրենց իշխանությունը բնութագրելիս ակնհայտորեն չափազանցություն մեջ են ընկել: Միջնադարյան վկայությունների ժամանակակից ընկալումը, սակայն, ոչ միայն արդարացված չէ, այլև պարզունակ է ու միակողմանի: Բագրատունի թագավորները, ապա եւ Զաքարյանները, ամենից քիչ մտածել են ժամանակակիցներին (եւ նրանց հետ միասին՝ ապագա հետազոտողներին) թյուրիմացության մեջ գցելու մասին եւ հետապնդել են միանգամայն իրական ու երկրային նպատակներ: Տիտղոսները նրանց պաշտոնական գաղափարախոսության կարեւոր տարրերից են եղել՝ հիմնավորելով, օրինականացնելով, սրբագործելով այդ տոհմերի իշխանությունը:

Անիի Բագրատունիների պատվանունների շարքում ամենահայտնին, անշուշտ, «շահնշահ» տիտղոսն էր, որը Աշոտ Բ արքայի (914-928) ժամանակներից ի վեր կրում էին բոլոր Բագրատունի գահակալները<sup>1</sup>: Ուստի Զաքարյանների՝ Բագրատունիների իրավահաջորդը ճանաչվելու ձգտումն ակնհայտորեն արտահայտվել է, առաջին հերթին, «շահնշահ» պատվանունը յուրացնելիս: Այսպես՝ Զաքարե ամիրսպասալարը «շահնշահ» է անվանվում դեռեւս 1191-1196 թվականներին, մինչեւ 1199 թվականին Բագրատունյաց մայրաքաղաք Անիին տեր դառնալը<sup>2</sup>: Այդ տիտղոսին Զաքարեն այնքան մեծ կարեւորություն է տվել, որ որդու համար նախընտրել է Շահնշահ կրկնանունը: Ընդ որում՝ այդ անունն այնքան գործածական դարձավ, որ գրեթե մոռացության մատնվեց մանկան «Սարգիս» բուն անունը<sup>3</sup>: Զաքարե ամիրսպասալարի կատարած քայլի կարեւորությունն ավելի կընդգծվի, եթե նկատի առնենք, որ «շահնշահ» տիտղոսը, թերեւս՝ ԺԲ դարի առաջին քառորդից, Դավիթ Դ Շինողի (1089-1125) ժամանակներից սկսած, Վրաստանի տիրակալների պաշտոնական տիտղոսաշարի մեջ էր մտնում<sup>4</sup> եւ, բնականաբար, պետք է մենաշնորհային բնույթ կրեր:

«Շահնշահ» տիտղոսից հետո Զաքարյանները տիրացել էին նաեւ «տիեզերակալ» պատվանվանը, որը եւս Անիի Բագրատունիների տիտղոսաշարի առանցքային բաղադրատարրերից էր: Հայ պատմագրության մեջ թեեւ ավանդաբար «տիեզերակալ» է ճանաչվում Սմբատ Բ-ն (977-990)<sup>5</sup>, առկա բոլոր տվյալներն, այնուամենայնիվ, աներկբայելիորեն վկայում են, որ Բագրատունի գահակալներից առաջինը Սմբատ Ա-ն (890-914) է կրել «տիեզերակալ» տիտղոսը<sup>6</sup>: Այն փաստը, որ վերջինս «տի-

---

1 Տե՛ս Ա. Տեր-Ղեւոնդյան, *Հաղթանի արաբերեն արձանագրությունը եւ Բագրատունի թագավորների տիտղոսները*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1979, № 1, էջ 73-78:

2 Տե՛ս Ա. Ն. Գահինյան, *Կոշի կոթողը եւ նրա արձանագրությունը*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 198-201; Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 105-106: «Գահնշահ» է կոչվում նաեւ Սարգիս Մեծը, բայց «հետին թվով» 1215 թվականին (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 2):

3 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, Եր., 1948, էջ 110:

4 Տե՛ս *საქართველოს ისტორიის ნარკვევები*, ՅՅ. 256.

5 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 548; *Հայ ժողովրդի պատմություն*, հտ. III, էջ 134:

6 Տե՛ս Ա. Տեր-Ղեւոնդյան, *Հաղթանի արաբերեն արձանագրությունը*, էջ 75; *Հայ ժողովրդի պատմություն*, հտ. III, էջ 269 (բաժնի հեղինակը Ա. Տեր-Ղեւոնդյանն է): Բացի Ա. Հովհաննիսյանի վկայակոչած Սանահնի «Քէթթուկ»-ից (տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 190) եւ Ա. Տեր-Ղեւոնդյանի մատնացուցած մի այլ սկզբնաղբյուրից (տե՛ս Գարեգին Ա կթղ. [Յովսէփեան], *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 172), Սմբատ Ա-ին հայ մատենագրության մեջ «տիեզերակալ» են անվանում պատմիչներ Սամվել Անեցի (Սամուել Անեցի, էջ 96, ճմթ. 1, էջ 98), Մխիթար Այրիվանեցի (Մխիթար Այրիվանեցի, էջ 56), ինչպես նաեւ

եզերակալ» է կոչվում «Քարթլիս ցխովրեբայի» կազմի մեջ մտնող «Քարթլիի մատյանում»<sup>1</sup>, ապացուցում է, որ Բագրատունիների նաեւ այս տիտղոսն էր միջազգային ճանաչման արժանացել<sup>2</sup>: Այն առկա էր Բագրատունիների տիտղոսաշարում նաեւ Գագիկ Ա-ի<sup>3</sup> (989/990-1018/1020) եւ Հովհաննես-Սմբատի<sup>4</sup> (1018/1020-1041) օրոք<sup>5</sup>: Բագրատունիներ-Զաքարյաններ հերթագայությունը շեշտելու ձգտման ազդեցիկությունը ցույց տալու համար անհրաժեշտ է մեջբերել նաեւ երկու վիմագիր արձանագրություն, առաջինը՝ թողնված ժամանակի հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի, երկրորդը՝ նշանավոր «մեծատուն» Տիգրան Հոնենցի կողմից:

«Ի նՁե թուականիս Հայոց եւ ի մեծափառ թագաւորութեանս հզար եւ տիեզերակալ Սմբատ, որդւո Գագկայ Հայոց եւ Վրաց շահայնշահի, կամ եղեւ ինձ, տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի...»<sup>6</sup>:

«Թվին ՈԿԻ, շնորհին եւ ողորմութեամբն Այ. յորժամ տիրեց քաղաքիս Անն հզար եւ տիեզերակալ ամիրսպասալար եւ մանդատուրթուխուցէս Զաքարիայ եւ որդի նորայ Շահնշահ, ես Տիգրան ծառայ Այ...»<sup>7</sup>:

---

Անանուն Զրուցագիրը: Տե՛ս Պատմութիւն Ծապոյոյ Բագրատունոյ, Ի լոյս ածին՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Մետրոպոլիտան Էջմիածին, 1921, էջ 66-67, § 79 («Եւ մեծամտեցաւ եւ անուանեաց զինքն Սմպատ տիեզերակալ»), 80, 83; *История Анонимного повествователя. Псевдо-Шапух Багратуни*, Пер. с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ер., 1971, с. 161; Անանուն Զրուցագիր (Վարձեցեալ Ծապոյոյ Բագրատունի), Պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Եր., 2011, էջ 119, 120:

- 1 *յերտլոս Յեռցրոյձ*, I, ՅՅ. 262.
- 2 Ալ. Աբդալաձեան «տիեզերակալ» տիտղոսի՝ վրաց մատենագրութեան մեջ գործածվելու հնարավոր հիմք է համարում հայ գրավոր կամ բանավոր աղբյուրները (Տ. ՏԵՐՄԿՐՏՉԵԱՆ, «Յերտլոս Յեռցրոյձ» ըստ ՆԱՅԵՐՏՉԵԱՆ-ՆՈՐԾԵՅՏՈՍ շրջագրութեան, օժ., 1982, ՅՅ. 208-209). Սակայն վրաց պատմիչի հաղորդած դրվագն առհասարակ հայտնի չէ հայ հեղինակներին: Քանի որ վրաց պատմիչը դուրսէն իսկ կասկածի չի ենթարկում «տիեզերակալ» տիտղոսի իրավագրութիւնը, թէեւ նրան քաջ հայտնի է Սմբատ Ա-ի ողբերգական վախճանը ու դժվար թե՛ նրա համար անհասկանալի է եղել հայերէն բառի իմաստը, ապա մնում է կատարել միայն մեկ եզրահանգում. վրաց մատենագիրն արձանագրել է միջպետական հարաբերութիւնների բնագավառին վերաբերող փաստ, որի համար հայկական սկզբնաղբյուր ունենալն ամենեւին պարտադիր չի եղել:
- 3 Տե՛ս Ա. Սաղոմյան, *Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրութիւնն Աշտարակում*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1989, № 9, էջ 91-92:
- 4 Տե՛ս *Դիվան հայ վիմագրութեան*, պր. I, էջ 48:
- 5 Պանդալեոն քահանայի 965 թվականի հիշատակարանից (*Հազերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 57-58) երեւում է, որ որոշ ժամանակ «տիեզերակալ», ինչպէս նաեւ «արքայից արքա» տիտղոսները կրել են նաեւ Վասպուրականի Արծրունց թագավորութեան գահակալները: Դրանցից երկրորդ տիտղոսը համապատասխանում էր բյուզանդական «արքունեքի արքուն» պատվանվանը, որը շնորհիվ էր առաջին երեք Բագրատունի թագավորներին, իսկ Աշոտ Բ-ի մահից հետո՝ 929 թվականին, տրվել էր Գագիկ Ա Արծրունուն՝ Վասպուրականի գահակալների մեծաշնորհը կազմելով սինչեւ Ժ դ. 70-ական թթ. կեսերը (տե՛ս Կ. Ն. Յուզբաշյան, «Բագրատունաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, – «Պատմաբանասիրական հանդես», 1975, № 1, էջ 45-47): Հավանաբար՝ հենց այս ժամանակահատվածում էլ Արծրունիներին էր անցել նաեւ «տիեզերակալ» տիտղոսը: Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *ճշ. աշխ.*, էջ 132; Վ. Վարդանյան, *ճշ. աշխ.*, էջ 176-177:
- 6 *Դիվան հայ վիմագրութեան*, պր. I, էջ 48:
- 7 Նույն տեղում, էջ 63:

Այսպիսով, շուրջ երկու դար անց Անիի հերթական տիրակալը ընդունել է բացի «շահնշահից» նաև «տիեզերակալ» տիտղոսը<sup>1</sup>: Քննությունը ցույց է տալիս, որ «տիեզերակալ»-ը կիրառման ուշագրավ առանձնահատկություն է ունեցել: Մեջբերված վիմագրերում այն հանդես է գալիս «հզար» մակդիրի լծորդումով, եւ այդ երկուսն այնքան հաճախ են միասին գործածվել, որ հասարակացվել են ու իշխանության բնութագրման երանգ ձեռք բերել: Այդ միտումն ակնհայտ է Գագիկ Ա-ի հրովարտակ-վիմագրում, որի բանաձևային մասում՝ «կամ եղեւ ինձ՝ Գագիկա, հզար եւ տիեզերակալ շահնշահի»<sup>2</sup>, կայուն զուգորդություն կազմող «հզար եւ տիեզերակալ» տիտղոսները բացահայտորեն երկրորդական կարեւորություն ունեն:

Բագրատունիների եւ Զաքարյանների տիտղոսաշարերի միջև դիտվում է եւս մի բնորոշման ընդհանրություն: Վերելում մեջբերված Անիի ՆՁԵ թվականի (1036 թ.) արձանագրությունում Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Հովհաննես-Սմբատի «թագաւորութիւն»-ը բնութագրում է «մեծափառ» մակդիրով: Պարույր Մուրադյանի դիպուկ կռահմամբ, այդ հայերեն տիտղոսն է, որ արտացոլված է Թեժառույթի վրացերեն արձանագրությունում «բարքդիդի» (բարք = փառք + մեծ) ձևով, որպես Զաքարե ամիրսպասալարի իշխանության բնորոշում<sup>3</sup>:

Ինչպես եւ պետք էր սպասել, Զաքարյանները «շահնշահ» եւ «տիեզերակալ» պատվանունները կրել են այնքան ժամանակ, քանի դեռ նրանց իրական հզորությունն ու ազդեցությունը ինչ-որ չափով համապատասխանում էին նրանց տիտղոսաշարին: Նրանցից վերջինն Ավագն էր, որ մինչեւ ԺԳ դ. 40-ական թթ. վերջերը «տիեզերակալ» էր համարվում<sup>4</sup>:

Անշուշտ, Անիի Բագրատունիների իրավահաջորդը համարվելու հանգամանքով է պայմանավորված Ավագի՝ «թագադիր Վրաց» կոչվելը Գեղարդի նշանավոր արձանագրությունում<sup>5</sup>: Ընդ որում, այստեղ եւս աւելի շատ զգացվում է վաղ միջնադարի հայ մատենագրության, մասնավորապես՝ Մովսես Խորենացու ազդեցությունը, քան իրական դեպքերի արձագանքը: Բանն այն է, որ Ավագի ինքնուրույն գործունեության տարիներին (1225-1250) վրաց արքաների երկու թագադրություն է տեղի ունեցել: Սակայն առաջին դեպքում, երբ «Ռուսուդանի որդի Դավթին թագավոր կարգեցին, Քութախում օծեցին ու թագ դրին նրա գլխին, այսկողմյան թագավորությունը շէր մասնակցում [օծմանը]՝ խորեզմցիների [պատճառով], քանի որ մանդատորթուխուցես Շանշեն Անիում էր, իսկ ամիրսպասալար Ավագը՝ Բջնիում»<sup>6</sup>:

1 Զաքարե եւ Իվանե եղբայրները երբեմն կոչվել են նաև «աշխարհակալ» (տե՛ս Ի. Ղարիբյան, Հ. Հակոբյան, *Բջնի հնավայրը*, – «Հուշարձան» տարեգիրք, Գ, Եր., 2005, էջ 116-117):

2 Տե՛ս Ս. Սաղոմյան, նշվ. աշխ., էջ 91-92:

3 Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 117-119:

4 Տե՛ս Գ. Սարգսյան, «Բարձրաքաշ» վանքը եւ նրա վիմագրությունը, էջ 50; Հ. Շեխագարյան, *Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորի եւ Քառասնից մանկանց վանքերը եւ գյուղի մյուս՝ առավել կարեւոր հուշարձաններն ու դրանց վիմագիր արձանագրությունները*, – «Էջմիածին», 1971, № Գ, էջ 45:

5 Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 305: «Թագադրին Վրաց՝ Աւագին» արտահայտությամբ է վերականգնում Պողոշ Խաղբակյանի մեկ այլ արձանագրության սկիզբը վիմագրագետ Գագիկ Սարգսյանը (Գ. Գ. Սարգսյան, *Գեղի-Բորթաշարի վանքը*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 1, էջ 129): Վիմագրումը տեղի է ունեցել ԺԳ դ. 40-ական թթ.:

6 Տե՛ս *յնթադրութեան յնթադրութեան*, II, ՅՅ. 180; *Վրաց ժամանակագրություն*, էջ 68:

Մյուս Դավթի՝ Լաշայի որդու, գահ բարձրանալիս վճռական դերը պատկանում էր Ավագի ազգական Վահրամ Գագեցուն, որի պատճառով վրաց թագավորը «Վահրամու», այսինքն՝ «Վահրամադիր» մականվանն էր արժանացել<sup>1</sup>: Հետեւաբար, «Թագադիր վրաց»-ի տիտղոսային բնույթը, պայմանավորված լինելով Հայաստանում Բագրատունիների երբեմնի դիրքով, ակներեւ իրողութունն է:

Անիի Բագրատունիների եւ Զաքարյանների տիտղոսաշարերը համեմատելիս ուշագրուցելու է գրավում մի չափազանց կարեւոր ընդհանուր բաղադրիչի առկայությունը, ընդ որում դարձյալ Զաքարյանների առավել հզորության ժամանակահատվածում՝ ԺԳ դ. վերջին – ԺԳ դ. առաջին տասնամյակներին: Աշոտ Ա Բագրատունին («իշխանաց իշխան»-ի պաշտոնը վարելու տարիներին)<sup>2</sup> եւ նրան հաջորդող գահակալները («թագաւոր» եւ «շահնշահ» տիտղոսները կրելիս)<sup>3</sup> իրենց իշխանության շրջանակները բացորոշելիս հաճախ են գործածում «Հայոց եւ Վրաց» մասնավորացում-բնութագրումը: Ինչպես ցույց է տալիս այդ արտահայտության հիշատակությունը ԺԳ դարի արաբ պատմիչ Իբն Զաֆիրի երկում, այն եւս միջազգային ճանաչում էր ստացել<sup>4</sup>: «Հայոց եւ Վրաց» տիտղոսային բնորոշման գործածության մեջ աչքի է ընկնում մի ուշագրավ առանձնահատկություն: Այն, թերեւս, միակն է Բագրատունի տիրակալների իշխանության բնութագրումների շարքում, որ կրում էին նաեւ արքայադուստրերն ու, հնարավոր է, թագուհիները: Մասնավորապես, իրեն «Հայոց եւ Վրաց թագուհի» էր անվանում Աշոտ Գ Ողորմածի դուստր Սոփին<sup>5</sup>:

Դիտելի է, որ «Հայոց եւ Վրաց» հատկացումն ամենեւին տիպական չէ Թ-ԺԵ դարերի վրաց Բագրատունիների համար: Միակ բացառությունը Մարիամ թագուհին է՝ Գեորգի Ա-ի (1014-1027) տիկինը եւ Բագրատ Դ-ի (1027-1072) մայրը, ով «Ափխազաց եւ Հայոց թագուհի» է անվանվում Մարմաշենի մի վիմագրում<sup>6</sup>: Սակայն անգամ այս դեպքում օրինաչափությունը չի խախտվել: Նա, հիրավի «Ափխազաց թագուհի» էր (այդ ժամանակաշրջանում «Ափխազաց թագավոր» տիտղոսն էին կրում Վրաստանի արքաները), բայց եւ միաժամանակ «Հայոց թագուհի»՝ մայրական գծով Գագիկ Ա-ի թուրք եւ Վասպուրականի թագավոր Սենեքերիմի (968-1021) դուստրը լինելու շնորհիվ: Դա մի հանգամանք է, որը չի մոռանում շեշտել Մարիամ թագուհին, քանի որ հենց Գագիկ Ա-ի հետ ազգակցական կապն էր նրան ու իր որդուն հնարավորություն ընձեռում հավակնել Անիին 1041-1045 թվականների ծանր օրերին<sup>7</sup>:

1 Տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 34:

2 Տե՛ս Ասողիկ, էջ 158:

3 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 35, 48:

4 Տե՛ս Ա. Տեր-Ղեւոնդյան, Հաղթատի արաբերեն արձանագրությունը, էջ 75: Ավելի վաղ շրջանի արաբական աղբյուրը Աշոտ Ողորմածին կոչում է թագավոր, որն իշխում էր «Վրաստան աս-հանգի եւ Հայաստանի այլ մասերի վրա» (տե՛ս V. Minorsky, ԳՂ. աշխ., էջ 10: Ա. Տեր-Ղեւոնդյան, Մուսաղջիմ-Բաշիի անանում աղբյուրը Դվինի եւ Գանձակի Օսղոթայանների մասին, – «Բանբեր Մատենադարանի», 6, Եր., 1962, էջ 478):

5 Տե՛ս Ի. Ա. Орбели, Надписи Мрена, – Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Խմբագիր՝ Պ. Մ. Մուրադյան, Եր., 1974, էջ 37:

6 Տե՛ս Ի. Ա. Орбели, Надписи Мармашена, – В кн.: Орбели И. А., Избранные труды, Ер., 1963, с. 444.

7 «Բարթիլի մատյանը» գնում է Մարիամի ազգակցությունը «հայերի հետ», բայց արձանագրում է միայն, որ նա Սենեքերիմի դուստրն էր (տե՛ս յճճճճճճ ՅՅՅՅՅՅՅ, I, թ. 299).

Զաքարյաններն Անիի Բագրատունյաց ժառանգորդներն են հանդիսացել նաև «Հայոց եւ Վրաց» բնութագրումը իրենց տիտղոսաշարի մեջ ընդգրկելու առումով: «Հայոց եւ Վրաց» վերագրումը «ամիրսպասալար» տիտղոսի առնչությամբ դեռևս 1191 թվականին, այսինքն՝ գլխավոր զորահրամանատարի պաշտոնում նշանակվելուց անմիջապես հետո տրվել է Զաքարե Բ-ին<sup>1</sup>: Առաջին անգամ Փարպիի Միրանավոր եկեղեցու արձանագրությունում հանդիպող «ամիրսպասալար Հայոց եւ Վրաց» արտահայտությունը հետագայում դառնում է սովորական, ընդ որում՝ դիտվում է տարբերակների զգալի զանազանություն. «գաւրապետ Հայոց եւ Վրաց»<sup>2</sup>, «գօրավար Վրաց եւ Հայոց»<sup>3</sup>, «սպարապետ Հայոց եւ Վրաց»<sup>4</sup> եւ այլն: Վկայված բոլոր ձևերից ամենաուշագրավը «Զաքարիայի ամիրսպասալարի Հայոց Մեծաց եւ Վրաց» բնութագրումն է Հովհաննավանքի 1258 թվականի արձանագրությունում<sup>5</sup>: Հարցն այն է, որ «Մեծ» հասկացությունն անբաժանելիորեն կապված է Բագրատունյաց թագավորության հետ<sup>6</sup> եւ նրա հիշատակությունը պատահական բնույթ չի կրում:

«Հայոց եւ Վրաց» բնորոշումն առայժմ հետազոտողների առանձնակի ուշադրությանը չի արժանացել Բագրատունիներ – Զաքարյաններ հաջորդայնությունը բացահայտելիս, քանի որ հետաքրքրության կիզակետում մշտապես գտնվել է «ամիրսպասալար» տիտղոսը: Գարեգին Հովսեփյանը եւ Հակոբ Մանանդյանը նկատել են, որ Սարգիս Մեծը եւ Զաքարե Բ-ն «ամիրսպասալար» են կոչվել մինչև վրաց արքաների կողմից այդ պաշտոնում նշանակվելը՝ համապատասխանաբար 1184/1185 եւ 1191 թվականներին: Հետեւաբար, մինչև այդ թվականները «ամիրսպասալար» տիտղոսով հանդես գալը բացատրվել է վրացական բանակում եղած հայ զորքերի հրամանատարներ, ողջ Վրաց թագավորության ամիրսպասալարների օգնականներ լինելու հանգամանքով<sup>7</sup>: Այսպիսի մեկնաբանությունը միանգամայն տրամաբանական ու ընդունելի է, եթե խոսքը վերաբերում է ամիրսպասալարության պաշտոնի շրջանակների պարզաբանմանը: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ «Հայոց եւ Վրաց» բնորոշումն ավելի լայն տարածում է ունեցել Զաքարյանների շրջանում, հետեւաբար այն միշտ չէ, որ կոնկրետ իրականություն է արտացոլում եւ Զաքարյանների տիտղոսաշարի կարեւոր տարրերից է: Այսպես, Ավանի 1219 թվականի արձանագրությունում Իվանեն իրեն «աթաբակ Հալցոց եւ Վրաց» է կոչում<sup>8</sup>, առեղծվածի առջեւ կանգ-

---

1 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, *Ամբերդաձորի հնությունները եւ արձանագրությունները*, – «Էջմիածին», 1961, № 6, էջ 55; Ա. Ն. Ծաֆիւլյան, *ԱԶՎ*, աշխ., էջ 200-201:

2 Տե՛ս Հ. Ն. Սարգիսեան, *Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեմետիկ*, 1864, էջ 149; Հ. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, էջ 22:

3 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 162-163:

4 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 112:

5 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98:

6 Տե՛ս Կ. Ն. Յուզբաշյան, *ԱԶՎ*, աշխ., էջ 42; Ա. Տեր-Ղեւոնդյան, *Հաղբատի արաբերեն արձանագրությունը*, էջ 79: Ուսումնասիրողները հարկադրված են եղել պատմիչների աշխատություններից քաղված օրինակներ մատնանշել, քանի որ Բագրատունիների արձանագրություններում «թագաւոր (արքա) Հայոց Մեծաց» տիտղոսը չի հանդիպում: Միակ բացառությունը Գագիկ Ա-ի մորահայտ արձանագրությունն է, որտեղ նա անվանվում է «Հայոց Մեծաց արքայից արքա» (տե՛ս Ս. Սաղոմյան, *ԱԶՎ*, աշխ., էջ 92):

7 Գ. կթղ. Յովսեփեան, *Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 2; Հ. Մանանդյան, *ԱԶՎ*, աշխ., էջ 135:

8 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Երեւան*, էջ 192:

նեցնելով ամիրսպասալարի պաշտոնի պարագայում իրեն արդարացնող բացատրությունը՝ նաեւ ավաբեկի պարտականությունների վրա տարածելու ցանկությունն ունեցող հետազոտողներին: Իվանեն իրոք Վրաց արքունիքում արքայազնի խնամակալն էր եւ կրթել էր Թամար Թագուհու որդի Լաշա-Գեորգիին<sup>1</sup>, բայց ո՞րն էր եղել նրա անելիքը Հայաստանում: «Հայոց եւ Վրաց» զույգ որոշիչները գործածվել են նաեւ մեկ այլ կապակցության մեջ: Իվանեից ետ չի մնացել նրա կին Խոշաքը, որը Բագրատունի արքայազուտորերի նման իրեն «Վրաց եւ Հայոց Թագուհի» է հռչակում<sup>2</sup>: Ամուսինները փորձել են նաեւ միաժամանակ երկուսով հորջորջվել Հայաստանի եւ Վրաստանի ազդեցիկ տիրակալներ, հորինելով հետեւյալ ուշագրավ բանաձեւը՝ «Ես ավաբակ Իւան է եւ Խոշակս վերայիշխող տանս Վրաց եւ Հայոց եւ նովին Թագուհի»<sup>3</sup>: Եւ վերջապես, Զաքարե Բ-ի եւ Իվանեի մորեղբոր որդի Խավոաս Ա-ն իր նշանավոր ազգականներին «կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց»<sup>4</sup> բնութագրումով է հիշատակում՝ ավելի ընդարձակելով ընդունված տիտղոսացանկը:

«Հայոց եւ Վրաց» բնորոշման առումով եւս անխախտ է մնում վերը նշված օրինաչափությունը. այն գործածական է միայն Զաքարյանների առավել հզորության ժամանակահատվածում: Տոհմի դիրքերի թուլացման պարագաներում, արդեն ԺԳ դ. կեսերից, վերոհիշյալ բնութագրական մասնավորեցումն այլեւս չի հանդիպում, թեեւ Զաքարյանները, ընդհուպ մինչեւ ԺԴ դ. կեսերը, շարունակում էին կրել մանդատորթուխուցեսի, ամիրսպասալարի եւ ավաբեկի տիտղոսները<sup>5</sup>:

Զաքարյաններն իրենց իրավահաջորդությունն ընդգծել են նաեւ այնպիսի տպավորիչ ձեռնարկումով, ինչպիսին Սանահինում Կյուրիկյանների տոհմական գերեզմանոցը սեփական ընտանեկան հանգստարան դարձնելն է եղել<sup>6</sup>: Բագրատունիներ – Զաքարյաններ ժառանգականությունը շեշտվել է վանքում կատարված այն վերակառուցումներով, որ իրականացրել են Զաքարյանները<sup>7</sup>:

Ամփոփելով Զաքարյանների՝ Բագրատունիներից սերելու վարկածը հիմնավորող ուղղակի եւ անուղղակի տվյալների քննությունը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ

1 Տե՛ս *յնթոլոս Ենոջրցթս*, I, ՅՅ. 371.

2 Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, *Ծիրակ*, էջ 10:

3 Նույն տեղում: Աշոտ Ողորմածի դուստր Սոփիի եւ Խոշաքի տիտղոսների անանության վրա ուշադրություն է դարձրել Աշոտ Հովհաննիսյանը, բայց առանց որեւէ հիմք ունենալու եւթադրել է հետեւեալը. «հավանական է, որ Խոշաքը ծագում էր Բագրատունիներից» (**Ա. Հովհաննիսյան**, *Ազվ. աշխ.*, էջ 155):

4 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 178:

5 Ժամանակակիցները ԺԳ դ. երկրորդ կեսի – ԺԴ դ. առաջին կեսի հայ իշխաններից միայն Բուրթել Մեծին ու Արա որդիներին բնութագրելու համար են դիմել «Հայոց եւ Վրաց» մասնավորեցմանը: «Մեծի սպարապետին Հայոց եւ Վրաց՝ թագազարմ իշխանին», «յառաջադէմ յարքունիս եւ մեծափառ» արտահայտությունները, անշուշտ, տիտղոսային բնույթ ունեն (տե՛ս *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 297): Հետեւաբար, դարձյալ գործել է պատմական ավանդույթը: Երեւույթի մասին տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, *Ազվ. աշխ.*, էջ 216-217:

6 Իրենք՝ Կյուրիկյանները, սկսած ԺԱ դ. վերջից, թաղվում էին Հաղբատում (տե՛ս **Հ. Ղ. Մովսէսեան**, *Ազվ. աշխ.*, էջ 55; **Ռ. Ի. Մաթեոսյան**, *Ազվ. աշխ.*, էջ 100): Զաքարյաններից Սանահինում են հուղարկավորվել Սարգիս Մեծը, Զաքարե Բ-ն, իսկ հետագայում Զաքարյանների տարբեր տոհմաճյուղերն այլեւայլ վանքերում են գերեզմանատներ հիմնել:

7 Տե՛ս **H. Khalpakchian**, *Le tombeau des Zakarides à Sanahin*, – In: *Études Arméniennes in memoriam H. Berberian*, Lisbon, 1986, p. 357-374.

«Բագրատունիական» ծագման տեսությունը, անշուշտ, ամենաքաղաքականացվածն է: Այն կյանքի է կոչվել ԺԲ դ. վերջին, երբ Զաքարյաններն իրապես տիրում էին Բագրատունիների արքայատոհմի տարբեր ճյուղերի ժառանգության զգալի մասին եւ շուտով ավելի էին ընդարձակելու իրենց պատկանող տարածքները: Զաքարյանների տիրոջսաշարի քննությունից ակներե է, որ այդ ժամանակահատվածում նրանք հավակնում էին դառնալու ոչ թե Կյուրիկյանների, այլ Շիրակի Բագրատունիների քաղաքական ժառանգորդը: Հետեւաբար՝ իրենց Բագրատունի հռչակելիս նրանք առաջին հերթին ելնում էին նաեւ Անիի շահնշահերի իրավահաջորդը դարձած լինելու ծանրակշիռ փաստարկից: Կյուրիկյաններ – Զաքարյաններ խնամիական աղերսը, տիրույթների ժառանգականությունը կամ տոհմային դամբարանների նույնությունն էական դեր չեն խաղացել «Բագրատունիական» տեսության առաջ քաշման համար: Թեեւ Աշոտ Հովհաննիսյանը կարծում է, որ «սկզբնապես Զաքարյաններն իրենց համարում էին անմիջականորեն Լոռիի Բագրատունիների ժառանգորդներ, քանի որ ստացել էին միայն սրանց տիրույթները»<sup>1</sup>, բայց համոզիչ փաստեր չի բերում այդ դրույթն ապացուցելու համար: Այսպես, գիտնականը վկայակոչում է Սանահնի «Քէօթուկ»-ից հայտնի մի հրովարտակ, որը, իր կարծիքով, գրվել է 1184 թվականին, այսինքն՝ այն ժամանակահատվածում, երբ Զաքարյաններին դեռ չէին անցել Անիի Բագրատունիների տիրույթները<sup>2</sup>: Հետագոտողի ուշադրությունից, ինչպես երեւում է, վրիպել են փաստաթղթի ընդօրինակման ժամանակ սպրդած այն ակնբախ ժամանակագրական սխալները, որոնք լիակատար հիմք են տվել հրովարտակի հրատարակիչ Կարո Ղաֆադարյանին սրբագրել առկա 1184 թվականը 1214-ով<sup>3</sup>: Այսպիսով, Ա. Հովհաննիսյանի գլխավոր փաստարկը կորցնում է իր ուժը: Գովար է վճռական նշանակություն տալ նաեւ այն ենթադրությանը, որ Զաքարյաններն այդ հրովարտակում Կյուրիկյան տան հիմնադիր Գուրգեն-Կորիկեին են հատկացնում «տիեզերակալ» տիրոջն ու Սանահնի վանքը հիմնելու պատիվը՝ միայն երկրորդաբար հիշելով նրա մոր՝ Խոսրովանուշ թագուհու անունը<sup>4</sup>: Չպետք է մոռանալ, որ մեզ է հասել հրովարտակի անհաջող ընդօրինակությունը, որտեղ, հակառակ Ա. Հովհաննիսյանի վստահության, «տիեզերակալ»-ի փոխարեն առկա է «տիեզերական» ընթերցումը: Ավարտելով հարցի պարզաբանումը՝ նշեմ, որ փաստաթղթի բնագրից («Սուրբ ուխտիս ի Սանահնիս եւ շինեալ էր թագաւորն մեր տիեզերական Գարգէն եւ Խոսրովանուշ թագուհին»<sup>5</sup>) առանձնապես չի երեւում, թե Զաքարյանները խիստ ընդգծել կամ բացարձակացրել են Գուրգեն-Կորիկեի դերը:

Ամբողջ շարադրանքի լույսի ներքո պարզ է դառնում, որ Բագրատունիների ու Զաքարյանների իրական ազգակցության մասին պնդելը կնշանակեր վերացարկվել միջնադարյան իրողություններից եւ բառացի ընկալել սկզբնաղբյուրների մի մասի

1 Ա. Հովհաննիսյան, *Ազվ. աշխ.*, էջ 106:

2 Նույն տեղում:

3 Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ արձանագրությունները*, էջ 55-56: Նույն կերպ է վարվել նաեւ երկրորդ հրատարակիչ Պարույր Մուրադյանը, տե՛ս *Յիշատակարան Սանահնյ վանից (Սանահնի Քէօթուկը)*, էջ 72:

4 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Ազվ. աշխ.*, էջ 156:

5 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 55: Նշեմ, որ Ա. Հովհաննիսյանն ու Կ. Ղաֆադարյանն օգտվել են Մաշտոցի անվան Մատենադարանի միեւնույն ձեռագրից (№ 3031):

հավաստիացումները: Բնութագրական փաստ է, որ մասնագետներից առայժմ միայն Կարապետ Տեր-Մկրտչյանն է փորձել հիմնավորել Ջաքարյանների՝ Բագրատունիներից սերելու վարկածը<sup>1</sup>, բայց այդ տեսակետը հաստատուն ընդունելու թյուն չի գտել գիտական գրականության մեջ:

\* \* \*

1196 թվականին, երբ ազատագրվեց Ամբերդը, ի պատիվ այդ հաղթանակի հուշարձաններ կանգնեցվեցին ինչպես հայերեն<sup>2</sup>, այնպես էլ արաբերեն լեզուներով<sup>3</sup>: Ամբերդի արաբերեն վիմագրում, Ջաքարե ամիրսպասալարի եւ Իվանեի անուններից հետո ընթերցվում է «Աս-սարունի» բառը, որին տոհմանվան դեր է հատկացվում: Այսպիսով, վկայված է Ջաքարյանների ծագման երրորդ վարկածը, այն էլ հենց տոհմի անվանի ներկայացուցիչների կողմից: Նրանց Արծրունի անվանվելը Արամ Տեր-Ղեւոնդյանը բացատրում է նշանավոր տոհմի հետ կապվելու ցանկությամբ: Ըստ հետազոտողի՝ այս հարցում վճռական դեր է կատարել այն հանգամանքը, որ Սարգիս Մեծն ամուսնացած էր Ամիր-Քուրդ Արծրունու քրոջ՝ Սահակդուխտի հետ: Այնուհետեւ, եթե Ջաքարյանները Բագրատունի են կոչվել Կյուրիկյանների հետ ունեցած խնամիության հիման վրա, ապա Ջաքարեն ու Իվանեն էլ կարող էին Արծրունի անվանվել՝ այս անգամ կապվելով Արծրունիների տոհմի հետ<sup>4</sup>: Այս լիովին տրամաբանական բացատրությունը հավանական կհամարվեր, եթե հիրավի Ջաքարյանները Բագրատունի դիտարկված լինեին սոսկ Կյուրիկյանների հետ խնամիության հիմքի վրա, ինչպես նաեւ Մահկանաբերդցիների ու Արծրունիների տոհմակցության աներկբայելիության պարագայում: Սակայն հարցն այն է, որ Մահկանաբերդի գավառի տերերը ԺԲ դ. երկրորդ կեսին իրենց դեռեւս Արծրունիների տոհմի հետ չէին առնչում: Այդ վարկածի տարածվելու նշաններն ի հայտ են գալիս միայն ԺԳ դ. երկրորդ կեսին, Սադուն Բ աթաբեկի գործունեության հետեւանքով<sup>5</sup>: Հետեւաբար, Ջաքարյանները չէին կարող Արծրունի անվանվել՝ շահարկելով Մահկանաբերդցիների հետ խնամիական կապը:

Ամբերդի արաբերեն արձանագրությունում հավաստված փաստն ավելի շուտ հնարավոր է մեկնաբանել ԺԲ դ. վերջի – ԺԳ դ. սկզբի քաղաքական իրադարձությունների հետնախորքի վրա: Ջաքարյանների՝ Արծրունի կոչվելու հավակնությունները, ըստ երեւույթին, Ջաքարեի եւ Իվանեի քաղաքական ծրագրերի յուրօրինակ արտացոլումն են: ԺԲ դ. վերջին տարիները եւ հաջորդ հարյուրամյակի սկիզբն այն ժամանակահատվածն են կազմում Հարավային Հայաստանի մեծ մասը զբաղեցնող Շահ-Արմենների պետության պատմության մեջ, երբ այդ ամիրսպասալարն տենդագին պայքար էր մղում հանուն գոյատեւման: Իրավիճակից ձգտում էին օգտվել Ջաքարյանները, որոնք մեկ անգամ չէ, որ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Մանազկերտ, Արճեշ եւ Խլաթ: Ջաքարյանների հարավային քաղաքականությունն անհաղ-

1 Կ. Տեր-Մկրտչյան, Գշվ. աշխ., էջ 18-31:

2 Տե՛ս Ա. Ն. Շահինյան, Գշվ. աշխ., էջ 198-201:

3 Տե՛ս Ա. Տեր-Ղեւոնդյան, *Ջաքարիայի եւ Իվանեի արաբատառ արձանագրությունը Ամբերդում*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 185-187; А. А. Хачатрян, *Корпус арабских надписей Армении*, с. 47.

4 Ա. Տեր-Ղեւոնդյան, *Ջաքարիայի եւ Իվանեի արաբատառ արձանագրությունը*, էջ 186-187:

5 Տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 12, 18; Մխիթար Այրիվանեցի, էջ 68:



Թահարելի խոջընդոտների հանդիպեց միայն 1207 թվականից հետո, երբ Խլաթում հաստատվեցին Այուբյանները<sup>1</sup>: Կարելի է ենթադրել, որ Արծրունի հռչակվելը Զաքարյանների ծրագրերի հաջողությունն ապահովելուն նպատակաուղղված միջոցառումներից մեկն է եղել: Արծրունի տոհմանունով կոչվելով՝ նրանք կարող էին Վասպուրականի եւ հարակից տարածքների օրինական տիրակալի կեցվածք ընդունել եւ համապատասխան ռազմական գործողություններ ձեռնարկել՝ ակնկալելով հիմնականում հայերով բնակեցված ամիրայության բնակչության աջակցությունը: Ինչպես հայտնի է, Խլաթում 1210 թվականին կրած անհաջողությունից հետո Զաքարյանների առաջնադասումը դեպի հարավ կանգ առավ, հետեւաբար Արծրունիների ժառանգորդը դառնալու ձգտումը երկար պահպանվել չէր կարող: Ինչպես ցույց տրվեց վերեւում, Զաքարյաններն ամենից ավելի հաճախ են ուղղակի Բագրատունի կոչվում ԺԺ դ. երկրորդ տասնամյակում: Հակված եմ կարծելու, որ այդ հանգամանքը նաեւ Զաքարյանների ծագման «Արծրունիական» տեսությունն ընդմիջտ մոռացության մատնելու հետեւանք է:

\* \* \*

Զաքարյանների տոհմակունքների հարցին անդրադառնում է նաեւ նրանց գործունեությանը քաջածանոթ հեղինակը՝ Թամար Թագուհու առաջին պատմիչը: Զաքարե ամիրայասպարհին բնութագրելու առիթով՝ մատենագիրը նշում է, թե նա Արտաքսերքսես Երկայնաբազուկի տոհմակիցն էր, եւ այդ հանգամանքով է բացատրում ականավոր գորավարի բարեմասնությունները<sup>2</sup>: Այս տեղեկության ոչ պատմական լինելն ակնհայտ է, եւ Աքեմենյաններ-Զաքարյաններ ազգակցությունը փաստարկելու փորձերը կանխապես անհաջողության են դատապարտված: Այնուամենայնիվ, վրացի պատմիչի հաղորդումը զուրկ չէ կարեւորությունից՝ ինչպես պատմագրական ավանդույթի ազդեցության, այնպես էլ որոշակի քաղաքական մտածողության արձագանք լինելու տեսանկյունից: Հայտնի է, որ վրացի հեղինակը քաջածանոթ է անտիկ աշխարհի իրողություններին եւ դասական հնագրարի նշանավոր դեմքերին: Աքեմենյան նշանավոր արքաներից մեկի հիշատակությունը, ընդ որում՝ անվան հունական ձեւով, այդ տեղյակության վկայություններից է<sup>3</sup>: Զաքարյաններին Աքեմենյան ծագում վերագրելը նաեւ ցույց է տալիս այն տեղը, որ վրացական թագավորության տոհմերի յուրօրինակ աստիճանակարգության մեջ Զաքարյաններին է հատկացնում պատմիչը: Վրաց Բագրատունիներին նա սերված է համարում աստվածաշնչական նշանավոր Դավիթ արքայից (Դավիթիանի), իսկ Թամար Թագուհու ամուսին Դավիթ Սոսլանին՝ սուրբգրական այդ թագավորի եղբորորդի Եփրեմից (Եփրեմիանի): Վրացի պատմիչն այդպիսով ցանկացել է ընդգծել վրաց Բագրատունիների առավելությունը օսական թագավորական տոհմի նկատմամբ: Քանի որ աստվածաշնչական ավանդույթը Դավիթի սերունդներին ակնհայտորեն բարձր է դասում Եփրեմի շառավիղներից, ապա պարզ է, որ «Դավիթիանի» եւ «Եփրեմիանի»

1 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, *Քաղաքական կացությունը Մերձավոր Արեւելքում*, էջ 36-43:

2 *յճժօղոս Յճօջօղձ*, II, ՅՅ. 110.

3 Հայկական սկզբնաղբյուրներն Արտաքսերքսես Աքեմենյանին (մ. թ. ա. 465-424) Արտաշես Երկայնաբազուկ եւ անվանում (տե՛ս Ասողիկ, էջ 23; Վարդան Արեւելցի, էջ 41; Մխիթար Այրիվանեցի, էջ 40)՝ այդպես հայացնելով նրա մականունը: Այդ պատճառով էլ հայ պատմագրության մեջ որպես վրացերեմի «Մխարդրեմելի»-ի (բառացի նշանակում է «երկարատու») հայացված թարգմանություն, տարածում է ստացել Զաքարյանների «Երկայնաբազուկ» անվանումը:





Իվանե Բ	1220-30-ական թթ.	1284-1291	54/61-64/71	4
Շահնշահ Բ	1260-ական թթ.	1320	60/65	5

Այսպիսով, հաշվումները վերաբերում են 5 սերնդի, ընդ որում նկատի են առնվել միայն անդրանիկ որդիներին առնչվող տվյալները: Միակ բացառությունն արվել է վաղամեռիկ Զաքարե Գ-ի համար, որի փոխարեն բերվել են եղբոր՝ Իվանե Բ-ի մասին եղած ցուցումները:

Աղյուսակի համար ելակետային եւ վերջնակետային սահմաններ են ծառայել 1-ին եւ 5-րդ սերունդները: Ընտրությունը պատահական չի եղել: Ամենասկզբում տեղադրվել են երկու տոհմաճյուղերի իսկական հիմնադիրների՝ Զաքարե Բ-ի եւ Իվանե Ա-ի հոր՝ Սարգիս Ա Մեծի մասին տեղեկությունները: Ամենավերջում Շահնշահ Բ-ի տվյալներն են, քանի որ երկու եղբայրների ծոռները՝ Շահնշահ Բ-ն եւ Խուանդզեն ԺԳ դ. վերջին ամուսնացել էին միմյանց հետ, եւ այդպիսով յուրօրինակ շրջանակը կրկին փակվել էր. Զաքարյանների գլխավոր տոհմաճյուղերն այդ զույգի մեջ միավորվել էին: Միջանկյալ 2-րդ եւ 3-րդ սերունդներն առկա են երկուական անդամներով՝ ավելի ներկայացուցչական դարձնելով համահավաք աղյուսակը: 4-րդ սերնդից վերցվել են միայն Իվանե Բ-ի տվյալները, քանի որ Ավագյանների տոհմաճյուղի միակ անդամ Խոշաքը, թույլ սեռը ներկայացնելով, տիպական օրինակ չի կարող ծառայել նմանօրինակ հաշվարկների համար: Արդյունքում ստացվել է, որ Զաքարյանների տոհմում կյանքի միջին տեւողությունը եղել է 61/62-ից 68/69 տարի, որն առանձին անակնկալ համարվել չի կարող:

Սակայն, ավելի հուսալի ժամանակագրական կովաններ կարելի է ստանալ՝ հաշվարկելով Զաքարյանների ռազմա-քաղաքական ակտիվության միջին տարեքանակը: Հարցն այն է, որ միջնադարյան գործիչների ծննդյան ժամանակը շատ ավելի վատ է հայտնի, քան նրանց մահվան տարեթիվը: Զաքարյանների դեպքում, օրինակ՝ ամբողջ աղյուսակից կոնկրետ հայտնի է միայն մեկի լույս աշխարհ գալու տարեթիվը, երբ որ հակառակ տվյալները միանգամայն այլ պատկեր են ներկայացնում. ճշգրիտ չէ լույս մեկի մահվան թվականը: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ Զաքարյանները, գրեթե առանց բացառության, ռազմական գործիչներ են եղել, որոնց անվան հետ կապված տվյալները համեմատաբար լավ են արտացոլված սկզբնաղբյուրներում: Բացի այդ՝ նրանց զինվորական կյանքի սկիզբը եւ ավարտը սահմանափակված են եղել որոշակի կենսաբանական հնարավորություններով: Հարկ եղած պահին ծերացած զորավարը հարկադրված պետք է թողներ ասպարեզը: Հիրավի, այդ էլ տեղի է ունեցել Իվանե Ա-ի հետ, որը 1225 թվականից հետո որդուն էր զիջել պետական ու զինվորական գործերի վարումը: Միեւնույն սկզբունքներով կազմված աղյուսակը բացահայտում է հետեւյալ պատկերը.

Անուն	Ինֆուրույն գործունեության սկիզբը	Գործունեության ավարտը	Գործունեության միջին տեւողությունը	Սերունդ
Սարգիս Ա	1161-ից ոչ ուշ	1187	26	1

Զաքարե Բ	1184/1185	1212	27/28	2
Իվանե Ա	1190/1191	1225	34/35	2
Շահնշահ Ա	1220-ից ոչ ուշ	1261/1262	41/42	3
Ավագ	1225	1250	25	3
Իվանե Բ	1259-ից ոչ ուշ	1284-1291	25/32	4
Շահնշահ Բ	1291-ից ոչ ուշ	1320	29	5

Պարզվում է, որ յուրաքանչյուր սերունդ ինքնուրույնաբար ակտիվորեն մասնակցել է ծավալված իրադարձություններին միջին հաշվով 29/30 տարվա ընթացքում: Հաշվի առնելով, որ Զաքարյանների մի մասին վերաբերող տվյալները նրանց գործունեության իրական սկզբի անցքերը չէ, որ արտացոլում են (4 դեպք), ապա որպես միջին թիվ կարելի է վերցնել 30-ը: Այս մոտավոր, բայց եւ ավելի մեծ վստահություն ներշնչող տվյալները հուշում են, որ Զաքարյանների ամեն մի սերունդ ակտիվ ինքնուրույն գործունեություն է ծավալել 31/32-38/39 տարեկան հասակից սկսած: Եթե պատկերացնենք տոհմի տեղափոխության հետ կապված հարցի ողջ պատասխանատվությունը, ապա թվում է, թե այդ տարիքն է այն սահմանը, որից ստորեւ գտնվող տղամարդը կղժվարանար ստանձնել նման քայլի հետեւանքների բեռը:

Արդ՝ պետք է կատարել հաշորդ քայլը եւ պարզել, թե Սարգիս Մեծին նախորդող երեք սերունդներից յուրաքանչյուրն ինչպիսի՞ ժամանակագրական շրջանակներում է ծավալել իր գործունեությունը: Կստացվեն հետեւյալ ժամանակագրական նշանաձողերը:

1-ին սերունդ՝ ծնվել է ԺԱ դ. 3-4-րդ տասնամյակում, գործել շուրջ 1070-1100-ական թվականներին:

2-րդ սերունդ՝ ծնվել է ԺԱ դարի 6-7-րդ տասնամյակում, գործել շուրջ 1100-1130-ական թվականներին:

3-րդ սերունդ՝ ծնվել է ԺԱ դ. վերջին – ԺԲ դ. առաջին տասնամյակում, գործել շուրջ 1130-1160-ական թվականներին:

Հաշվումներից պարզ է դառնում, որ Սարգիս Ա Մեծի հայրը՝ գիտական գրականությունից հայտնի Զաքարե Ա-ն կամ հայ պատմիչների նշած Վահրամը, թերեւս, առհասարակ որեւէ կապ չի ունեցել Կյուրիկյանների հետ: Նա գործել է այն ժամանակահատվածում, երբ Տաշիր-Չորագետին վաղուց արդեն տիրացել էին վրացիները: Սարգիս Մեծի պապը՝ արձանագրություններից հայտնի Ավագ Սարգիսը կամ հայ միջնադարյան պատմագրության մեջ հիշատակված Զաքարիան, եղել է, հավանաբար, առաջինը, ով կապ է հաստատել երկրամասի նոր տերերի՝ Օրբելի իշխանների հետ: Նրա գործունեությունը բաժանվել է երկու փուլերի (շուրջ 1100-1113 կամ 1118 – շուրջ 1130-ական թվականներ), որոնցից միայն առաջինի ժամանակ նա կարող էր ծառայել Կյուրիկյաններին: Հետեւաբար, Կյուրիկյանների եւ Զաքարյանների միջեւ հիմնական կապերը վերագրելի են ԺԱ դ. վերջին երեսնամյակին, երբ ասպարեզի վրա էր Սարգիս Մեծի պապի հայրը՝ Վարդան Արեւելցու անվանակոչած Սար-

գիսը կամ, ինչպես որ երկար ժամանակ նրան սխալմամբ անվանում էին ուսումնասիրողները՝ խոսրովը<sup>1</sup>:

Նախնական հաշվարկներից հետո պետք է պարզել հետեւյալը. ի՞նչ չափով են այդ ժամանակագրական ուղենիշներին համապատասխանում հետազոտողների՝ Զաքարյանների նախնիների գաղթի ժամանակի մասին տեսակետները:

Այս առումով, ամենակոնկրետ եւ ամենախոցելի թվականը նշում է Զաքարյանների ծագման «Արծրունիական» տեսության հետեւորդ Ս. Երեմյանը: Նրա կարծիքով՝ Զաքարյանների նախնի խոսրովը 1048 թվականին Մեծ Զավ գետի կիրճում սելջուկների դեմ բյուզանդական զորքի տարած հաղթանակից հետո իր տոհմով անցել է Գուգարք եւ ճանաչել Լոուռ թագավորի գերիշխանությունը<sup>2</sup>: Գիտնականը չի բացատրում, թե ինչո՞ւ հենց այդ ժամանակ պետք է գաղթեին Զաքարյանները, ի՞նչ կապ կա սելջուկների ու բյուզանդացիների միջեւ ճակատամարտի եւ Զաքարյանների տեղափոխության միջեւ, բայց առանց այդ էլ պարզ է, որ նրա մատնանշած տարեթիվը ճիշտ լինել չի կարող: Կարծեցյալ խոսրովն այդ ժամանակ դեռեւս երեխա կամ պատանի պետք է լիներ, առ այդ՝ հեռու քաղաքական ասպարեզից:

Զաքարյանների գաղթը դեպի Հայաստան 1044-1050, իսկ բնակության հաստատումը Տաշիր-Չորագետում՝ 1050-1063 թվականներին է դնում Ասլան Շահնազարյանցը: Հենվելով Վարդան Արեւելցու «առ թագաւորսն Չորոյ գետին» արտահայտության վրա<sup>3</sup>՝ հետազոտողը կարծում է, որ Զաքարյանների տեղափոխությունը տեղի է ունեցել այնպիսի ժամանակահատվածում, երբ Տաշիր-Չորագետում միաժամանակ թագավորել են երկու արքա, իսկ 1050-1063 թվականներին երկրամասում իբր թե հաստատապես թագավորել են Կյուրիկե եւ Սմբատ եղբայրները<sup>4</sup>: Նախ՝ այդ հաշվարկների հիմքի եւ ապա՝ հավանականության մասին: Ուսումնասիրողը անհետեւողականություն է դրսեւորում, երբ Վարդան Արեւելցու վերոբերյալ արտահայտությունը մեկնաբանելիս առաջին հերթին չի հենվում իր իսկ պատմիչի այլ տեղեկությունների վրա: Իսկ իրականում Վարդան Արեւելցին վկայում է, որ Կյուրիկեն միայնակ է թագավորել: Փոխարենը՝ մատենագիրը համարում է, որ միասին են թագավորել Կյուրիկեի Աբաս եւ Դավիթ որդիները<sup>5</sup>: Հետեւաբար, «թագաւորսն» բառի այն մեկնաբանումը, որն առաջարկում է Աս. Շահնազարյանցը, սկզբից եւեթ մերժելի է: Ակնհայտ է, որ պատմիչն այն անորոշաբար է գործածել, այլապես նա չէր վարանի անվանել Կյուրիկյանների կոնկրետ գահակալին, որոնցից բոլորի անուններն էլ, ի դեպ, նրան քաջահայտ էին: Եթե խնդրո առարկա արտահայտությունն անգամ բառացի ընկալենք, ապա այդ դեպքում, ելնելով հեղինակի իսկ վկայություններից, այն պարտավոր ենք վերագրել Աբաս եւ Դավիթ եղբայրներին, որոնք իշխել են Տաշիր-Չորագետում մոտավորապես 1090-1113 թվականներին:

Այժմ՝ ուսումնասիրողի հաշվումների հավանականություն մասին: Արդեն տեսանք, որ նա Զաքարյանների ամեն մի սերնդին 40-45 տարվա կյանք է վերագրում

---

1 Տե՛ս Ա. Ի. Շահնազարյան, *Զաքարյանների տոհմաժառոցի հարցի շուրջ*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 204-209:  
2 Տե՛ս Ս. Երեմյան, «*Զաքարյաններ*» բառափոփված, էջ 676:  
3 Վարդան Արեւելցի, էջ 181:  
4 Աս. Շահնազարեանց, *Ազվ. աշխ.*, էջ 73-74:  
5 Վարդան Արեւելցի, էջ 141-142:

եւ նրանց գաղթը դնում է ժԱ դ. առաջին կեսին: Բայց եթե, հետեւելով հետազոտողին, ելակետ ընդունենք Սարգիս Մեծի մահվան տարեթիվը (1187) եւ հաշվենք մատնանշված շորս սերնդի կյանքի տեւողությունը ( $4 \times 40-45 = 160-180$ ), ապա կստանանք 1027-1007 թվականները, որոնք բավականաչափ հեռու են դարի առաջին կեսի ավարտին հարող 1044-1050 թվականներից: Բայց ուսումնասիրողը հետագայում եւս հետեւողական չի գտնվել իր հաշվումների մեջ: Զաքարյանների գաղթի սկիզբը կամայականորեն 1044 թվականին դնելուց հետո, նա տոհմի տեղափոխության վերին սահմանագիծ է ընդունում 1063 թվականը: Սակայն 1063-ն ընդամենը այն վիճազիր արձանագրության տարեթիվն է, որտեղ միասին հիշատակվում են հետազոտողի նախընտրած թագավորական զույգը՝ Կյուրիկեն ու Սմբատը<sup>1</sup>: Իսկ չէ՞ որ ամենեւին չի բացառվում նրանց համատեղ կառավարումը նաեւ հետագայում: Հանգամանք, որ քաջ հայտնի է եղել նաեւ Աս. Շահնագարյանցին: Զարմանալին այն է, որ նա անգամ մեջբերում է Հաղբատաձորի վիճագրերից մեկը, որտեղ Կյուրիկեն ու Սմբատը միասին են հիշատակվում նույնիսկ 1089 թվականին<sup>2</sup>: Բայց դա չի խանգարել ուսումնասիրողին հաջորդ իսկ էջում Կյուրիկեի ու Սմբատի համատեղ կառավարումը հանկարծակի ընդհատել 1063 թվականով: Պատճառը, անշուշտ, այն է, որ նա երկյուղել է չափազանց հեռանալ կամայականորեն կանխանշած ժամանակագրական ուղենիշներից: Հետեւաբար, կարող ենք եզրակացնել, որ քննարկված փաստարկներն ու հաշվարկները հեռու են համոզիչ լինելուց:

Զաքարյանների տեղափոխությունը ժԱ դ. 50-60-ական թվականներով է թվագրել նաեւ Շոթա Մեսխիան, սակայն նրա համար ելակետային են եղել այլ իրողություններ: Ուսումնասիրողը վճռորոշ նշանակություն է տվել Հաղբատի արձանագրություններից մեկին<sup>3</sup>, որտեղ, գիտության մեջ լայնորեն տարածված կարծիքի համաձայն, հիշատակվում են Զաքարյանների նախնիներ Ավագ Սարգիսն ու Խոսրովը: Այդ արձանագրության մեջ վկայված Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդությունը թվագրելով ժԱ դ. 50-60-ական թվականներով՝ վրացի գիտնականը ենթադրել է, որ Զաքարյանների նախնիներն այդ դարի 60-ական թվականներից ուշ չէին կարող տեղափոխված լինել Տաշիր-Չորագետե<sup>4</sup>: Սակայն, ինչպես ցույց է տվել Արտաշես Շահնագարյանը, Հաղբատի վերոհիշյալ արձանագրությունն իրականում որեւէ կապ չունի Զաքարյանների հետ եւ փորագրվել է ժԳ դարում<sup>5</sup>: Հետեւաբար, Շ. Մեսխիայի եզրակացությունը եւս, հիմնված լինելով անհավաստի փաստերի վրա, ընդունելի համարվել չի կարող:

Զաքարյանների կարծեցյալ գաղթի ժամանակի պարզաբանումը, որը սկզբունքային նշանակություն է ձեռք բերում այդ տոհմի հետագա էթնո-մշակութային բարդ էպիսկոպոսության խնդիրն արժարծելիս, ցավալիորեն վրիպել է ընտանիքի «քրդական» ծագմանը եւ «հայանալուն» հավատացող հետազոտողների մեծ մասի ուշադրությունից: Նրանցից միայն Վ. Մինորսկին է հպանցիկ ենթադրել, որ Զաքարյանների՝ Սարգիս Ա Մեծին նախորդող սերունդը՝ Ավագ Սարգիս Ա-ն եւ Զաքարե Ա-

1 Կ. Ղաֆադարյան, *Սամահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 187:

2 Աս. Շահնագարեանց, *Ազվ. աշխ.*, էջ 73:

3 Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 161:

4 Յ. Յեյնոս, *საშინაო პოლიტიკური ვითარება და სამოხელეო წყობა XII საუკუნის საქართველოში*, 33. 231-232.

5 Ա. Ի. Շահնագարյան, *Զաքարյանների տոհմաձառի հարցի շուրջ*, էջ 208-209:

ն «մեզ 1100 թվականից հետ հեռու չի տանի»<sup>1</sup>: Մնացած հետազոտողներն ավելի զգուշավոր են գտնվել Զաքարյանների գաղթի ճշգրիտ ժամանակահատվածը մատնանշելու առումով եւ ավելի ընդգրկուն փուլ են ենթադրել<sup>2</sup>:

Այնուամենայնիվ, անգամ Զաքարյանների ծագման տարբեր վարկածների հետեւորդ գրեթե բոլոր հետազոտողները համակարծիք են եղել մի հարցում. նրանք, նույնիսկ՝ «Բագրատունիական» ու «Արծրունիական» տեսությունների պաշտպանները, համոզված են, որ Զաքարյանների նախնիները գաղթել են Ձորագետ, նախապես ունենալով օտար էթնիկական կամ դավանական ծագում՝ միայն այստեղ հայանալով կամ վերագտնելով իրենց բուն ծագումը: Այսպիսով, մերօրյա հետազոտողներն անգամ դժվարացել են շեղվել Մովսես Խորենացու կանխորոշած ուղուց եւ հավատարիմ են մնացել միջնադարյան պատմագրության ոգուն:

Օրինակ՝ Զաքարյանների «քրդական» ծագման տեսությունը մերժելով հանդերձ, Ս. Երեմյանը լիովին հետեւել է խորենացիական կերպածեւերին: Նա նույնիսկ հարկադրված է եղել Արծրունիների «քրդական ճյուղ» ենթադրել եւ ապա միայն այդ ընտանիքին գաղթեցնել Տաշիր-Ձորագետ<sup>3</sup>: Կամ՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը ջանքեր է թափել՝ ապացուցելու, որ Զաքարյանների նախնիները Բագրատունիներ են եղել, բայց չգիտես ինչու՝ անպայման Հարավային Հայաստանից եւ անվերապահորեն հարավից հյուսիս տեղափոխված<sup>4</sup>: Եւ վերջապես՝ նույնիսկ Ասլան Շահնազարյանցի պրպտումների ու Զաքարյաններին «քրդական» ծագում վերագրելու հիմքը եւս դարձյալ եղել է տոհմին անպայման «գաղթական» համարելու ձգտումը<sup>5</sup>:

Զաքարյանների էթնիկական ու սոցիալական ծագման խնդիրն արժարժեւիս, ժամանակագրական հարցերի լուսաբանումից բացի, անհրաժեշտ է անդրադառնալ իրադարձությունների ծավալման պատմաաշխարհագրական միջավայրին: Նույնիսկ հայ պատմիչների հաղորդումներին անվերապահորեն հավատալու եւ Զաքարյանների նախնիներին հիրավի Տաշիր-Ձորագետ գաղթած քրդեր համարելու պարագայում անգամ անհնար է խուսափել մի շարք հարցերի ճշտումից, որոնց մասին՝ ստորեւ:

Ինչպես տեսանք, Զաքարյանների տեղափոխության ժամանակ է դիտվում ՓԱ դ. կեսերից մինչեւ ՓԲ դ. սկիզբն ընկած, շուրջ վեց տասնամյակ ընդգրկող ժամանակաշրջանը: Ինչպես է հնարավոր գնահատել այդ փուլը Տաշիր-Ձորագետի կյուրիկյան թագավորության պատմության համատեքստում, ի՞նչ ուղղվածություն ունեին ժամանակի էթնո-դավանական ու լեզվա-մշակութային գործընթացները:

1 V. Minorsky, Աշվ. աշխ., էջ 102:

2 Այս ստումով հատկանշական է Հ. Մանանդյանի բնութագրումը. «Սրանք [Զաքարյանները – Հ. Մ.] գաղթել էին Ձորագետ, հավանորեն 11-րդ դարում... ընդունել էին այստեղ քրիստոնեությունը ստ Հայոց եկեղեցու դավանանքի: Նրանք, ազգակցություն հաստատելով ամուսնությունների միջոցով հայերի հետ՝ հետգհետե հայացել էին» (Հ. Մանանդյան, Աշվ. աշխ., էջ 132):

3 Ս. Երեմյան, «Զաքարյաններ» բառահոդված, էջ 676: Հեղինակին ստահոգություն չի պատճառել այն փաստը, որ Արծրունիները շարունակում էին լիովին հայ մնալ ՓԱ դ. երկրորդ կեսին եւ հաջորդ դարերում՝ առանց քրդանալու կամ մահմեդականանալու: Ինչ վերաբերում է Կորճալքի Կարթունիք գավառին (այլ ընթերցմամբ՝ Սարապոնիք), որտեղի Արծրունիների «քրդացած» տոհմաճյուղի մասին գրում է գիտնականը, ապա այդքան վճռականորեն արտահայտված տեսակետի փաստական հիմքերը լիովին անհայտ են:

4 Կ. Տեր-Մկրտչյան, Աշվ. աշխ.:

5 Ա. Շահնազարյան, Աշվ. աշխ.:



Առանց երկբայելու կարելի է պնդել, որ այդ տասնամյակները Կյուրիկյանների քաղաքական հզորության անկման տարիներն էին: Հայտնի է, որ ԺԱ դ. վերջին քառորդում այդ թագավորությունը ենթարկվում էր սելջուկ-թյուրքերի, Վրաստանի ու Գանձակի Շադդադյանների ուժգնացող ճնշմանը: 1118 թվականին Վրաստանը գրավեց Լոռեն, եւ Հյուսիսային Հայաստանի այս հատվածում քաղաքական գերիշխանությունը հայերից անցավ վրացիներին<sup>1</sup>: Տաշիր-Ձորագետում, էթնիկական պատկանելության փոփոխության համար, որն արտակարգ բարդ ու երկարատեւ գործընթաց է, անհրաժեշտ նախադրյալներ գոյություն չունեին նաեւ միատարր էթնիկական ու մշակութային միջավայրի առումով: Կյուրիկյանների թագավորությունում, հատկապես՝ 1065 թվականից, երբ մայրաքաղաքը Սամշվիլից տեղափոխվեց Լոռե, զգալի թիվ էին կազմում վրացիները: Այդ տարածքում նկատելի ազդեցություն ուներ վրաց եկեղեցին: Բավական է ասել, որ Դավիթ Անհողինի (989-1048) օրոք անգամ, Կյուրիկյանների առավել հզորության շրջանում, Գագ բերդի տեր Դիմիտրե մարզպանը «թողու գհաւատս հայրենի հայութեան եւ թիկունս օգնականի զՎիրս արարեալ ի նոցին կրկնամեռ լուանայ ջուր եւ զորդին իւր՝ մամփուղ Տաշրաց կացուցանէր ի Հիննէ վանս»<sup>2</sup>: Այսպիսով, Տաշիրում անգամ վրացական թեմ հիմնադրվեց, եւ վրաց եկեղեցու դիրքերը ԺԱ-ԺԳ դարերում անընդհատ ամրապնդվում էին: Այս դրույթի իրավացիության մասին են վկայում ե՛ւ պատմողական աղբյուրները, ե՛ւ թե այդ դարերի հայտնի ու գերազանցապես Հյուսիսային Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունները<sup>3</sup>: Հետեւաբար, Տաշիր-Ձորագետում էթնիկական ու դավանական միջավայրն այնպիսին չէր, որ հնարավոր լինի անվերապահ հավատ ընծայել Վարդան Արեւելցու՝ Զաքարյանների նախնիների «հայանալու» տեսությունը:

Առկա տվյալները բավարար են նաեւ Զաքարյանների դավանափոխության հավանականությունը կասկածի ենթարկելու համար: Հայտնի է, որ ԺԱ դ. 40-ական թվականներին սկսված սելջուկյան արշավանքներն էական տեղաշարժեր առաջ բերեցին Մերձավոր Արեւելքի քաղաքական, ինչպես նաեւ դավանական ու մշակութային կյանքում: Հաճախակի դարձան կրոնափոխության ու եկվոր տիրակալների հետ խնամիրանալու դեպքերը: Ընդ որում՝ այդ երեւույթներն ունեին միակողմանի ուղղվածություն: Կրոնափոխության առումով քրիստոնյաներն է, որ մահմեդականություն էին ընդունում, իսկ խնամիրական կապերի հիմքում ընկած էր մահմեդական տիրակալներին աղջիկ տալու օրենքը արմատավորվող սովորությունը<sup>4</sup>: Գաղտնիք չէ, որ երկու երեւույթներն էլ պայմանավորված էին տեղական ավատատերերի քաղաքական եւ տնտեսական շահերով: Այս առումով պերճախոս են անմիջականորեն Կյուրիկյաններին վերաբերող փաստերը: 1064 թվականին Ալի-Արսլան սուլթանի հետ ամուսնացավ Կյուրիկյան արքայազատերից մեկը<sup>5</sup>, իսկ չորս տարի անց հայ-

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 471-473; Ռ. Ի. Մաթեուսյան, Աշխ. աշխ., էջ 90-102; Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 48-50:  
 2 Ասողիկ, էջ 257:  
 3 Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 18-24, 63-64, 185-189:  
 4 Ինչպես Աշուն է Մխիթար Գոշը, հայ իշխանները «գոստերս իրեանց յայլազգիս յամուսնութիւն տային»՝ վերջիններից ռազմական օգնություն ստանալու ակնկալիքով (տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Հայաստան, հտ. Բ, էջ 387; Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983, Յաւելուած Բ, էջ 354):  
 5 Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, էջ 145; յերտառոն ցեղջրցծա, I, թ. 307.

րենի հավատն ուրացավ Կյուրիկյանների տոհմի Կախեթի ճշուղից Աղսարթանը: Երբ 1068 թվականին սելջուկները հերթական անգամ ներխուժեցին Այսրկովկաս, Աղսարթանը, որը հայրական գծով Դավիթ Անհողինի թոռն էր, իր տիրույթները պահպանելու համար միացավ նրանց եւ մահմեդականություն ընդունեց<sup>1</sup>: Հետեւաբար՝ իրական փաստերը ցույց են տալիս, որ դժվար է խոսել Զաքարյանների նախնիների կրոնափոխության եւ հայադավան դառնալու մասին հենց այն ժամանակաշրջանում, երբ հակառակ ուղղվածության գործընթացներ էին տեղի ունենում:

Էթնո-կրոնական գործընթացների մասին խոսելիս չպետք է աչքաթող անել մասնակից էթնոսների առանձնահատկությունների պարագան: Առայժմ խոսքը վերաբերում էր հայ էթնոսին, Տաշիր-Ձորագետում նրա ունեցած դիրքերին ու հարեւան ժողովուրդների հետ փոխազդեցություններին: Այժմ պիտի խոսել նաեւ Հայաստանում քրդերի առկայության եւ էթնիկական ինքնատիպության մասին: Քաջահայտ է, որ քրդական տոհմերից Թ-ժԱ դարերում Հարավային Հայաստանում ազդեցիկ դիրքեր ունեին Մրվանյանները, ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին՝ Ալուբյանները, իսկ Հյուսիսային Հայաստանում Ժ-ԺԲ դարերում՝ Շաղաղյանները: Վերջիններս իշխում էին Գանձակում, Դվինում եւ Կյուրիկյանների անմիջական հարեւանությամբ գտնվող Անիում: Ինչպես ցույց է տալիս վրացական աղբյուրներում պահպանված «Քուրդվաճառ» տեղանունը<sup>2</sup>, հնարավոր է, որ քրդական էթնիկ հատված էր բնակվում նաեւ Կյուրիկյաններին պատկանող Դեբեդ-Ձորագետի հովտում: Զգալի թվով քրդեր էին ապրում նաեւ, ընդ որում՝ Ժ դարից ոչ ուշ, նաեւ Այսրկովկասի տարբեր մասերում, մասնավորապես՝ Դվինում, Կուրի եւ Երասխի միջեւ ընկած որոշ շրջաններում, Դերբենդում<sup>3</sup>: Այսպիսով, քրդական տարրը Հայաստանի որեւէ մասում մեկուսացած լինել չէր կարող, քանի որ այն առկա էր երկրի տարբեր հատվածներում, այդ թվում՝ Տաշիր-Ձորագետում եւ նրա մատուցներում: Բացի այդ՝ քրդերը երբեմն քաղաքականապես ավելի հզոր էին ու կազմակերպված, քան բուն հայկական բնակչությունը: Հայոց միջավայրում նրանք դիտվում էին իբրեւ մահմեդականության նվիրյալ կրողներ, եւ այդպիսով ավելի էր ընդգծվում նրանց՝ «օտար» լինելը:

Զաքարյանների նախնիների հայացման հավանականության հարցը բազմակողմանիորեն քննարկելիս անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել քրդական էթնոսի ինքնատիպության վրա: Հանրահայտ է այն հսկայական դերը, որ քրդական հասարակության կյանքում դարերի ընթացքում խաղացել են ցեղային կազմակերպությունը, ինչպես նաեւ առանձնատուկ տնտեսավարությունը: Այդ էթնիկական յուրահատկություններն օտար միջավայրում հույժ կարեւոր էթնոպահպանիչ գործոնի դեր են կատարել: Թե որքան ազդեցիկ են եղել ցեղից շառանձնալու եւ ռազմական գործով զբաղվելու ավանդույթները, համոզիչ կերպով ցույց է տալիս Շաղաղյանների օրինակը, ում ողիսականը Հայաստանում՝ հիանալի պատմական զուգահեռ կարող է ծառայել, եթե քրդական ազդեցիկ ընտանիքի հետագա ճակատագիրը տեսականորեն կերպաձեւելու (մոդելավորելու) փորձ ձեռնարկենք:

Շաղաղյանները, ինչպես որ Զաքարյանների նախնիների մասին է ասվում, Հայաստան էին տեղափոխվել եւ ծառայության անցել հայ տիրակալների մոտ: Ըստ

1 Տե՛ս *ქართველთა ცხოვრება*, I, გვ. 309; Садр ад-Дин ал-Хусайни, с. 54-55.

2 *ქართველთა ცხოვრება*, II, გვ. 50-51.

3 Տե՛ս *Encyclopaedia of Islam*, Vol. V, Leiden, 1981, p. 450.

արաբական ու հայկական՝ միմյանց լիովին համաձայն ու փոխադարձաբար լրացնող տեղեկությունների, առաջին Շադդադյաններից Լաշքարին 955-965 թվականներին գտնվում էր Դիրզուրի (Վայոց Ձոր) հայ իշխանի բանակում<sup>1</sup>: Ավելի վաղ, երբ անհաջողության էր մատնվել Դվինին տիրելու նրա հոր փորձը, Լաշքարին ու եղբայրները որոշ ժամանակ ապրել էին Վասպուրականի Արծրունիների մոտ: Այսպիսով, Լաշքարին երկար տարիներ էր անցկացրել հայկական միջավայրում, բայց փաստ է, որ նա չէր փոխել ո՛չ դավանանքը, ո՛չ էթնիկական պատկանելությունը: Դեպքերին ժամանակակից արաբ հեղինակի խոսույն վկայություններն օգնում են պարզելու էթնիկական ինքնագիտակցության շխամբելու պատճառները: Հարցն այն է, որ Շադդադյանները չէին խզել իրենց կապերը ցեղակիցների հետ: Ըստ պատմիչի՝ Լաշքարիի հայրը 951 թվականին սկսեց իշխել Դվինում, «իր ընտանիքի, տոհմի եւ հետեւորդների փոքր խմբի հետ»: 954 թվականին նա «միացավ իր ընտանիքին, որդիներին ու տոհմին» Վասպուրականում, իսկ Լաշքարիի «իշխանության տեւողությունը միայն իր ցեղի վրա 24 տարի էր, իսկ իր ցեղի եւ Գանձակ քաղաքի ու նրա բոլոր գավառների վրա՝ 8 տարի»<sup>2</sup>: Եթե նկատի ունենանք, որ վերոհիշյալ 24 տարիների մեջ են մտնում նաեւ հայ իշխանի մոտ անցկացրած տարիները, ապա պարզ է դառնում, որ ցեղակիցների խումբը մշտապես ուղեկցում էր իր ղեկավարին: Շադդադյաններն անքակտելի միասնություն էին կազմում սեփական ցեղային միավորման հետ: Այն, լինելով ռազմիկների կազմակերպություն, հակադրվում էր տեղական նստակյաց հողագործ բնակչությանը: Իրավիճակը բնութագրելու տեսանկյունից հատկանշական են այն խոսքերը, որոնցով, ըստ արաբ հեղինակի, Լաշքարիին դիմեց կրտսեր եղբայրը, երբ համոզում էր թողնել հայ իշխանի մոտ ծառայությունը. «Ո՛վ իմ ամիրա եղբայրս, արդյոք ժամանակը չի՞ եկել, որ դու հրաժարվես հողագործ անհավատների ծառայությունից եւ առավոտ երեկո խոզերի հետ անցկացնելուց ու ազանի փոխարեն զանգերի ձայնը լսելուց»<sup>3</sup>: Այսպիսով, ինչպես երեւում է Ժ դ. կեսերից մինչեւ ԺԲ դ. վերջը Գանձակում, Դվինում ու Անիում իշխող Շադդադյանների օրինակից, քրդական ընտանիքը լիովին ի վիճակի էր նույնիսկ այդքան երկար ժամանակաշրջանում հաջողությամբ դիմագրավելու հայկական միջավայրի ազդեցությունը:

Վերադառնալով Զաքարյանների նախնիներին՝ վերստին անդրադառնանք «Բաբիրական խէլ» արտահայտությանը եւ այն քրդական ցեղանուն ընկալելու փորձերին: Զաքարյաններին կոնկրետ քրդական ցեղից սերելիս, թվում է, դժվարություն չպետք է ծագեր, քանի որ քրդական ցեղանունները լավ են պահպանվել, դրանք վաղուց ցուցակագրված են եւ բավականաչափ հիմնավոր ուսումնասիրված: Ուստի «Բաբիրական խէլ»-ի ու քրդական պատմական կամ ներկա ցեղի նույնացումը պետք է դուրին լիներ: Սակայն այդ խնդիրը դժվարություններ է պատճառել անգամ այնպիսի հեղինակության, ինչպիսին ականավոր արեւելագետ Վլ. Մինորսկին էր: Ի հաստատումն Զաքարյանների քրդական ծագման ավանդության՝ գիտնականը բերում է «Բաբիրան» անվան՝ քրդերի մեջ տարածված լինելու փաստը, իսկ այնուհետեւ ավելացնում է, որ «Փիրան» ցեղախումբ (կլան) գոյություն ունի Մանգուր

1 V. Minorsky, Ազ. աշխ., էջ 12; Ա. Տեր-Ղեւոնդյան, Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրը, էջ 478: Հմմ. Վարդան Արեւելցի, էջ 134:  
 2 V. Minorsky, Ազ. աշխ., էջ 8-16; Ա. Տեր-Ղեւոնդյան, Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրը, էջ 476-480:  
 3 V. Minorsky, Ազ. աշխ., էջ 14; Ա. Տեր-Ղեւոնդյան, Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրը, էջ 479:

ցեղային միութեան կազմում: Բավականաչափ համոզի՞չ են, արդյոք, մատնացուցված իրողությունները: Նախ՝ «Բափիրան»-ը ցեղանուն չէ, այլ ընդամենն անձնանուն, այն էլ ոչ նույնական «Բաբիրական»-ին: Այնուհետև, եթե Վլ. Մինորսկին «Բափիր» անվանումից հետո աննկատելիորեն շանցներ «Փիրան»-ին, ապա «Բաբիրական»-ի «Փիրան» զուգահեռը շատ ավելի անհամոզիչ կարող էր թվալ: Շարունակելով հետազոտողի տեսակետի քննությունը՝ դժվար չէ նկատել եւս մեկ անհարիրություն: Զաքարյանների նախնիներին համարելով «Միջագետքի քրդեր»՝ նա միեւնույն էջում «Բաբիրական խէլ»-ի նախահիմք է համարում Փիրան ցեղախումբը, որը, ինչպես հայտնի է, գտնվում է Իրանական Քրդստանում<sup>1</sup>:

Դժվար է ուսումնասիրողի հետ համաձայնել նաև «Բաբիրական խէլ» արտահայտության երկրորդ բաղադրիչի թարգմանության հարցում: «Խէլ» քրդերեն բառի իմաստի արտահայտումը «*tribe*» բառով, որոշակի իմաստային խառնաշփոթ կարող է առաջ բերել: Որքան էլ դժվար է քրդական հասարակությանը բնորոշ ինքնատիպ հասկացությունների հաղորդումը այլ լեզուներով, այնուամենայնիվ կասկածի ենթակա չէ հետևյալը. սովորաբար, քրդական ցեղը՝ «աշիրա»-ն կազմված է որոշակի թվով «թիրա»-ներից, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, բաժանվում են բազմաթիվ «խէլ»-երի: Վերջիններից ամեն մեկը բաղկացած է 20-30 վրանից կամ տնտեսությունից, որոնք միավորված են ինչպես տնտեսական, այնպես էլ ընտանեկան կապերով<sup>2</sup>: Ուրեմն, «խէլ»-ը քրդական հասարակության կառուցվածքում ամենափոքր միավորն է, եւ անհնար է այն ցեղ համարել: Ստացվում է, որ «Բաբիրական խէլ»-ը ցեղային ստորաբաժանման անվանում ընկալելու պարագայում բխվում ենք խիստ անհավանական իրավիճակի հետ:

Հայ պատմիչները սխալ եւ խառնաշփոթ են ներկայացնում Զաքարյանների նախնիների տոհմաձառը, հստակ չեն պատկերացնում նրանց Հայաստան տեղափոխվելու ժամանակահատվածը, սակայն առեղծվածային ճշգրտություն են ցուցաբերում տոհմի նախնիների տնտեսական-ընտանեկան ամենասկզբնական ընդհանրության մատնացուցման հարցում: Հնարավոր է, արդյոք, այդ հստակատեսությունը բացատրել Զաքարյանների ընտանեկան ավանդություններով: Այս հարցին ակնհայտորեն բացասական պատասխան է սպասում: Եթե ԺԳ դ. 60-ական թվականներին, այսինքն՝ ընդամենը մեկ դար հետո, Զաքարյանների սերունդներն անկարող էին ճիշտ հիշել իրենց ամենանշանավոր նախնու՝ Սարգիս Մեծի, հոր ու պապի անունները, ապա ինչպե՞ս էին նրանք անսխալ մատնանշելու իրենց հեռավոր նախնիների ոչ թե ցեղի կամ «թիրա-թայֆա»-ի, այլ ուղղակի «խէլ»-ի անունը: «Խէլ» բառի միակ վկայությունը բովանդակ հայ մատենագրության մեջ, թվում է, թե բավականաչափ հստակ ցույց է տալիս, որ գործ ունենք հեղինակային ինքնատիպության դրսևերման հետ: Ցանկանալով ընդգծել Զաքարյանների քրդական արմատները՝ Կիրակոս Գանձակեցին, ամենայն հավանականությամբ, գիտակցաբար է դիմել «խէլ» բառին: Փոխարենն այդ հասկացությունը դժվարացել է ըմբռնել անգամ նրա դասընկեր Վարդան Արեւելցին, որն ուղղակի բաց է թողել «Բաբիրական խէլ» արտահայտությունը: Ինչ վերաբերում է Կիրակոսի հաղորդումը լոկ վերաշարադրող

1 V. Minorsky, Գշվ. աշխ., էջ 14:

2 St'x Encyclopaedia Iranica, Vol. III, London and New-York, 1989 p. 234; A. M. Ментешавили, *Курды*, Москва, 1984, с. 82.

3 St'x The Encyclopaedia of Islam, Vol. V, p. 470-471; A. M. Ментешавили, Գշվ. աշխ., էջ 72-73:

Զաքարիա Սարկավագին, ապա նա, ելնելով ավանդույթյան կառուցվածքից ու սյու-  
ծեի տրամաբանությունից, «խել» բառն ըմբռնել է «երկիր, կողմ» առումով:

Ավարտելով քննությունը՝ կարելի է արձանագրել հետեւյալը.

Զաքարյանների ծագման շորս վարկածներից եւ ոչ մեկն իրողությունների հա-  
մաժամանակյա, հավաստի ու անաշու հավաստագրում չէ: Խիստ ակներե են այդ  
տեսությունների քաղաքական միտումներն ու գաղափարախոսական-մատենագրա-  
կան ակունքները: Ուսումնասիրողներին մնում է եզրակացությունների հանգել ան-  
երկբայորեն ստույգ փաստերի հիման վրա՝ ձերբազատվելով միջնադարյան ավան-  
դությունների ազդեցությունից:

ԺՒ դարում, երբ Զաքարյանների տոհմն առաջին անգամ ազդեցիկ դեր սկսեց  
խաղալ Հայաստանի ու Վրաստանի քաղաքական կյանքում, այն ուներ շեշտված  
հայկական դիմագիծ (անձնանուններ, միաբնակություն, խնամիրական կապեր եւ  
այլն): Բացի այդ՝ ընտանիքի անդամները ժամանակակիցների աչքում համարվում  
էին հայ պետականությունը շարունակողներ՝ իշխաններ «հալյոց ազգատոհմի»<sup>1</sup>,  
ինչպես նաեւ հայոց եկեղեցու հովանավորներ: Ժամանակակիցներից մեկի բնորոշ-  
մամբ՝ «յետ տարածամ փոխելոյն առ Քրիստոս մեծին Զաքարիայի, որ եւ խաւար  
գործեաց աշխարհիս Հալյոց, բարենշան նորին շառաւելն պալյազատն եւ մնա-  
ցորդն ազգիս... լուսաւորեալ փարատեաց զմառախղապատ խաւարն, զոր ի զրկմա-  
նէ հաւր նորա մածեալ ունէր զեկեղեցիս Հայաստանեայց»<sup>2</sup>: Հակառակ Իվանեի  
քաղկեդոնական լինելու պարագային՝ որպէս հայոց եկեղեցու պաշտպանների եր-  
կու եղբայրներին էր դիմում Մխիթար Գոշը<sup>3</sup>: Ոչ պակաս կարեւոր են այն վկայու-  
թյունները, որոնք, Զաքարյանների դավանական առումով հայությունից զատ, շեշ-  
տում են նրանց էթնիկապէս հայ լինելը: «Իշխանք երկու հայասեռք՝ եղբարք մի-  
մեանց»՝ այսպէս է բնութագրում Զաքարե Բ-ին եւ Իվանե Ա-ին 1204 թվականին  
Հռոմկլայում գրված ձեռագրի գրիչը<sup>4</sup>: Փառապանծ եղբայրների մասին խոսելիս  
նույն հանգամանքի վրա սեւեռուն ուշադրություն է հրավիրում նաեւ Միխայել Ասո-  
րու ժամանակագրության հայերեն թարգմանությանը կից տարեգրական բնույթի  
երկի հեղինակը. «որ էին ազգաւ Հայք»<sup>5</sup>: Ավելի կարեւոր են սյունեցի պատմիչ Ստե-  
փանոս Օրբելյանի վկայությունները: Նա հետեւյալն է գրում ժՒ դ. վերջի Զաքար-  
յանների մասին. «Բայց յետ վախճանին Գէորգի թագաւորին Թամարն մեծարեալ  
զորդիսն Սարգսի՝ որուոյ Զաքարէի իշխանի, հայ ազգաւ եւ ուղղափառ հաւատով, զԶա-  
քարէ եւ զԻւանէ, եւ բարձրացուցանէ ի պատիւ»<sup>6</sup>: Ինչպէս կարելի է համոզվել, ընդ-

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, սր. I, էջ 14:

2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178:

3 Մխիթար Վրդ. Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Աշխատաւի-  
րութեամբ՝ Պ. Մուրադյանի, – «Գանձասար», Զ, Եր., 1996, էջ 340; Պ. Մուրադյան, ԺԱ-ԺԳ դա-  
րերի հայ – վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը: Աղբյուրագիտական քննություն եւ բնագրեր, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2011, էջ 196:

4 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 39:

5 Միխայել Ասորի, էջ 526:

6 Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 287 (ընդգծումն իմն է): Նախադասության կառուց-  
վածքն այնպիսին է, որ դժվար է ասել, թե Զաքարյանների հիշատակված երեք սերունդներից ո-  
րի՞նք են վերաբերում ընդգծված բառերը: Ամենից հավանականն այն է, որ այդ բնութագրմամբ  
պատմիչը վերադառնում է նախադասության սկզբին եւ դարձյալ խոսում Սարգիս Ա-ի որդիների

գծված արտահայտությունները, միջնադարյան հեղինակը հստակորեն սահմանազատում է էթնիկական ու դավանական պատկանելությունը եւ շեշտում երկու առումով էլ Զաքարյանների լիարժեք հայությունը: Այսպիսով, Զաքարյանների մեզ ծանոթ առաջին սերունդների էթնո-մշակութային նկարագիրը, ինչպես նաև անմիջական ժամանակակիցների ուղղակի ցուցումները, տոհմի հայկական ծագումը եւ պատկանելությունը կասկածի ենթարկելու որեւէ հիմք չեն ընձեռում<sup>1</sup>:

Ուսումնասիրության ներկա փուլում առկա փաստերից կարելի է Զաքարյանների սոցիալական ծագման մասին անել հետեւյալ հավանական եզրակացությունը: Տոհմի տարեգրությունից երևում է, որ մինչեւ 1176-1177 թվականները, այսինքն՝ Օրբելիների գլխավորած ապստամբությունը, որից հետո միայն սկսվեց Զաքարյանների գլխապետույտ բարձրացումը, Սարգիս Մեծի տոհմաճյուղը պատկանել է ավատատերերի, ամենայն հավանականությամբ, միջին շերտի վերնախավին: Ընդ որում, եթե Սարգիս Մեծը նկատելի դեմք էր Հյուսիսային Հայաստանում եւ Վրաստանում դեռեւս ժ. դ. 60-ական թվականներին ու կարող էր «իշխան» համարվել<sup>2</sup>, ապա նրա եղբայր Վահրամի սերունդները շարունակում էին սովորական «ազնուր» – «ազատ» ճանաչվել նունիսկ այդ հարյուրամյակի 90-ական թվականների սկզբին<sup>3</sup>: Տոհմի հնագույն եւ փայլուն ծագման առաջին դրույթները կարող էին ի հայտ գալ միմիայն ժ. դ. վերջին տասնամյակում – ժ. դ. սկզբին, երբ Սարգիս Մեծի որդիներն արդեն աննախադեպ բարձր դիրք էին ձեռք բերել վրաց արքունիքում:

Ահա այդ ժամանակաշրջանում էլ պետք է սկիզբ առած լիներ տոհմի անցյալը շրջանցելու ձգտումը, որն արտացոլված է, օրինակ՝ Թամար թագուհու երկրորդ պատմիչի երկում: Վերջինս, խոսելով Զաքարե Բ-ի եւ Իվանե Ա-ի բարձրացման մասին, գրում է. «Տոհմով հավատարիմ արքաներին, այդ պատճառով էլ մեծապես սիրված հենց Թամարի պապերից եւ հայրերից»<sup>4</sup>, այսինքն՝ շեշտում է Զաքարյանների կապերն անմիջականորեն վրաց թագավորների հետ: Պատմիչի պնդման միտումնավորությունն ակնհայտ է: Ինչպե՞ս է հնարավոր խոսել Գեորգի Գ-ի՝ Թամարի հոր դեմ ուղղված խոշոր ապստամբության մասնակիցների տոհմական հավատարմության մասին, կամ՝ ինչպե՞ս կարող էր Սարգիս Ա-ն՝ «Օրբելիների եղբայրը եւ սիրելին»<sup>5</sup>, շրջանցել իր ամենազոր «պատրոն»-ին եւ, խախտելով ավատատիրական ենթակարգությունը, կապեր հաստատել Վրաստանի թագավորի հետ: Ընտանիքի դիրքերն ավելի համեստ պետք է լինեին ժ. դ. սկզբին, երբ Զաքարյանները տիրում էին գավառական խոժոռնի ամրոցին<sup>6</sup>: Հետեւաբար, իրենց սոցիալական ծագմամբ Զաքա-

---

մասին: Մյուս կողմից՝ դժվար է ենթադրել, որ դավանական հարցերում անչափ զգայուն հեղինակը կարող էր մոռացության մատնել Իվանե Ա-ի դավանափոխությունը: Ուստի, կարծում եմ, բնութագրումը վերաբերում է տոհմի երեք սերնդին էլ հավասարապես:

- 1 Հմմ. Ա. Ի. Ծահնագարյան, *Զաքարյանների ծագումնաբանությունը*, – ՀՀ ԳԱԱ «Լրագր» (հաս. գիտ.), 2001, № 1, էջ 41-60:
- 2 Վարդան Արեւելցի, էջ 166: Մյուսպց պատմիչն «իշխան» է կոչում նաև Զաքարե Ա-ին (Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 287), սակայն դժվար է պնդել, թե այդ բնութագրումը ճշգրիտ է:
- 3 Տե՛ս *ქრონოსი ცხოვრება*, II, ջջ. 51.
- 4 Նույն տեղում, էջ 123:
- 5 Նույն տեղում, էջ 19:
- 6 Տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 181:

րյաններն ուղղակի հասարակ հայ ազնվականներ էին, նախ՝ կյուրիկյանների, ապա՝ Օրբելիների ստորականները<sup>1</sup>:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատմական երկերում Զաքարյանների տոհմի մասին առաջին հավաստի փաստերը վերաբերում են ԺԲ դ. 60-ական թվականներին: Վիմագիր արձանագրություններում Սարգիս Մեծը եւ որդիները հանդես են գալիս սկսած նույն հարյուրամյակի 80-ական թվականներից, ձեռագրերի հիշատակարաններում՝ հաջորդ դարի առաջին տարիներից: Ուստի Զաքարյանների նախորդ ժամանակաշրջանների պատմության մասին կարելի է պատկերացում կազմել հիմնականում Վարդան Արեւելցու, մասամբ նաեւ՝ Կիրակոս Գանձակեցու վկայությունների հիման վրա:

Մինչեւ Սարգիս Մեծի օրոք ընտանիքի աննախընթաց բարձրացումը, Զաքարյանները համեստ դիրք էին գրավում Տաշիր-Ձորագետի թագավորության ավատատիրական տների շարքում եւ նրանց հիմնական տիրույթը Խոժոռնի ամրոցն էր: Կյուրիկյանների թագավորության անկումից հետո Զաքարյանների գերակաները պետք է դարձած լինեին վրաց արքունիքում ամիրսպասալարի եւ մանդատոր-թուխուցեսի պաշտոններին տիրող Օրբելիները: Լինելով հանդերձ Օրբելիների ստորականներից մեկը՝ Սարգիս Մեծը ԺԲ դ. 60-70-ական թվականներին ընդհուպ մոտեցել էր ավատատիրական բարձր ավագանու մեջ մտնելու սահմանագծին: Այսպես՝ նա ամուսնացել էր Մահկանաբերդի գավառի տերեր եւ Տփղիսի ամիրաներ Վասակի եւ Ամիր-Քրդի քրոջ հետ, դուստրերին կնություն էր տվել արցախցի ազդեցիկ իշխանների, իսկ Վանենի դստեր եւ Աբաս Կյուրիկյանի ամուսնության շնորհիվ անուղղակիորեն խնամիացել էր իր գերակա, ամիրսպասալար Իվանե Օրբելիի հետ (վերջինիս կինը՝ Ռուսուդանը, Աբասի քույրն էր): Այսպիսով, Թամար թագուհու առաջին պատմիչը հիմքեր ուներ Սարգիս Մեծին (ԺԲ դ. 80-ական թվականների վերաբերմամբ) բնութագրելու որպես «Նախնային» («տոհմիկ»)՝, թեեւ խուսափում է նրան կոչել «Նախնային» («մեծատոհմիկ»), առավել եւս՝ «ԸՈՒՋ-ԾՅՈՒՆ» («փառավորյալ»), այսինքն՝ արքունի պաշտոն վարող:

1176-1177 թվականներին, Օրբելիների գլխավորած խոշոր ավատատիրական ապստամբության ժամանակ, Զաքարյանները եւս գտնվում էին ապստամբական բանակում: Իրատեսորեն գնահատելով իրադրությունը՝ նրանք հետագայում միացան թագավորական զորքերին: Այդ քայլը վճռական դեր խաղաց, ապահովելով Սարգիս Մեծի դիրքերի սրընթաց ամրապնդումը վրաց արքունիքում: 1184/85 թվականին նրան հանձնվեց ամիրսպասալարի պաշտոնը, եւ այդ ժամանակից սկսած Զաքարյանների տոհմը ստանձնեց հայ ավատատիրական ավագանու անվերապահ առաջատարի դերը՝ այն շփոթելով շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում: Այսպիսով, Զաքարյանների հիմնական տոհմաճյուղը միջին ավատատերերի առավել ազդեցիկ խմբից անցավ մեծատոհմիկ ավագանու շարքերը:

Տոհմի բուռն վերելքի ու ծաղկման փուլը համընկավ ԺԲ դ. վերջին մեկուկես տասնամյակի եւ մոնղոլական նվաճմանը նախորդած ժամանակահատվածի հետ:

1 Տե՛ս նաեւ **H. Margarian**, *Autour des hypothèses de l'origine Kurde de la maison princière arménienne des Zakarides*, – “Iran & Caucasus”, Vol. I, Tehran, 1997, p. 25-46.

2 Տե՛ս *Երեւանի պատմություն*, II, 33. 33.

Այդ հիսնամյակի ընթացքում է, որ աննախընթաց դիրք ձեռք բերեցին անխտիր բոլոր Զաքարյանները: Ընտանիքը բաժանվեց չորս տոհմաճյուղի, ընդ որում գերդաստանի կրտսեր տոհմաճյուղերը՝ Թմոզվեցիները եւ Վահրամյանները, անջրպետվեցին տարածքային առումով: Զաքարյանների զանազան տոհմաճյուղերի բարձրացումն առաջին հերթին պայմանավորված էր նրանց ակնառու ռազմական վաստակով: Իրենց տիրույթների մեծագույն մասին նրանք տիրացել էին «առմամբ սրոյ»<sup>1</sup>, երբ «սոքա [Զաքարյաններ Զաքարե Բ-ն ու Իվանե աթաբեկը – Ն. Մ.] առին եւ որդիք իրեանց՝ եւ ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»<sup>2</sup>: Որպես կանոն, տոհմի անդամները նաեւ բարձրագույն պաշտոններ էին զբաղեցնում վրաց արքունիքում, որի շնորհիվ զգալի տարածքներ էին ստացել նաեւ Վրաստանում: Սկսած Սարգիս Մեծից՝ Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի սերունդները չէին զիջում ամիրսպասալարի, իսկ այնուհետեւ մանդատուրթուխուցեսի եւ աթաբեկի պաշտոնները: Նախ՝ Իվանե Ա-ն, ապա նաեւ՝ Վահրամ Բ-ն գլխավորում էին մասխուրթուխուցեսություն գործակալությունը: Հատկապես ԺԳ դ. առաջին կեսին, վերստին՝ դարավերջին եւ հաջորդ դարասկզբին, տոհմի միեւնույն ներկայացուցիչը տիրում էր երկու կարեւորագույն պաշտոնների (ամիրսպասալարություն-մանդատուրթուխուցեսություն, աթաբեկություն-ամիրսպասալարություն):

Զաքարյանների քաղաքական դիրքորոշումը բավականաչափ կայուն է եղել: Բացառությամբ 1176-1177 թվականների ավատատիրական ապստամբության հետ կապված դրվագի՝ Զաքարյանները հետեւողականորեն պաշտպանել են կենտրոնական իշխանության դիրքերը: Մոնղոլական ժամանակաշրջանում նրանք կարողացան սերտ կապեր հաստատել նվաճողների հետ, իսկ հետագայում հաճախ համագործակցում էին մոնղոլների հետ: Շահնշահ Ա-ի որդի Զաքարե ամիրսպասալարի ընդվզումը (ի դեպ, նա այդպես էլ զենքը ձեռքին հանդես չեկավ մոնղոլների դեմ) չի փոխում ընդհանուր պատկերը:

## ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Տոհմի անդամներին ու ստորակա ընտանիքներին պատկանող տիրույթները ԺԳ դ. առաջին տասնամյակներին ընդգրկում էին գրեթե ողջ Հյուսիս-արեւելյան Հայաստանը: Նույնիսկ ԺԻ դ. կեսերին նրանք շարունակում էին տիրել Անիին, վերահսկում էին Արարատյան դաշտի մի մասը, Բջնին, թերեւս՝ որոշակի իրավունքներ ունեին Արագածոտնի եւ Վայոց Ձորի առանձին մասերում:

Զաքարե Բ-ի սերունդները տիրում էին Լոռեին, Շիրակին, Արագածոտնին, Ներքին Բասենին, Երասխից հարավ ընկած տարածքներին (Սուրմարի, Վաղարշակերտ, Կաղզվան): Տարբեր ժամանակներում այս տոհմաճյուղի՝ Շահնշահյան տան, նստոցներն էին Անին, Լոռեն, Օձունը:

Իվանե Ա-ի ժառանգորդներին էին պատկանում Այրարատի նշանակալի հատվածը, Կայենո գավառը, Սեւանա լճին հարակից շրջանները (Գեղարքունիք, Սողք), Վայոց Ձորի, Սյունիքի, Խաչենի զգալի մասը: Ավատատիրական այս խոշոր իշխանության՝ Ավագյան տան, կենտրոնատեղիներն էին Դվինը եւ Բջնին:

1 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն, էջ 260:

2 Նույն տեղում, էջ 287:



Տոհմի Վահրամյան կամ Գագեցիների ճյուղն իշխում էր Գագ բերդից Շամքոր քաղաք ընկած տարածքում: Իշխանության կենտրոնն էր Գագ ամրոցը<sup>1</sup>:

ԺԲ դ. վերջին Վահրամ Ա-ի երկրորդ որդի Սարգիսը ստացավ Թմոզվի (Թմուկ) բերդը եւ դարձավ Թմոզվեցիների տոհմաճյուղի հիմնադիրը: Ընտանիքի հիմնական տիրույթները գտնվում էին Ջավախքում:

Ջաքարյանների գերդաստանում զանազան տոհմաճյուղերի բաժանումը սկիզբ է առել դեռեւս ժԲ դ. վերջին: Առավել վաղ ավարտվեց Թմոզվեցիների իշխանության կազմավորումը, քանի որ նոր տարածքային ձեռքբերումների համար նրանց ունեցած հնարավորությունները սահմանափակ էին: Թմոզվեցիների համեմատությամբ ավելի երկար տեւեց Վահրամյանների իշխանության ձեւավորումը: Վահրամյանների ընտանիքը շարունակում էր հայկական գավառների ու քաղաքների ազատագրումը նաեւ ԺԳ դ. առաջին երկու տասնամյակների ընթացքում:

ԺԳ դ. կեսերին տեղի ունեցավ Սարգիս Մեծի որդիների «ընդհանուր ժառանգություն» ներկայացվող, բայց իրականում դեռեւս ժԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին հատակորեն սահմանազատված, տարածքների վերջնական բաժանումը Ավագյան եւ Շահնշահյան տների միջեւ: Ամբողջ գերդաստանը ներկայացնելիս՝ չորս տոհմաճյուղերին նախորդում են «ավագ» (առաջին) Ջաքարյանները, ընտանիքի միասնականության ժամանակաշրջանի գործիչները՝ Սարգիս Մեծը, նրա նախնիները, եղբայրը, որդիները եւ դուստրերը:

Բացառիկ բարդ է Ջաքարյանների տարբեր տոհմաճյուղերի միջեւ ներքին փոխհարաբերությունների խնդիրը: Սկզբնաղբյուրները խուսափում են այդ մասին ուղիղ արտահայտվելուց, եւ որոշ հարցադրումներ կարելի է կատարել միայն առանձին փաստերի համադրման ճանապարհով: Այսպես, ակնհայտ է, որ Շահնշահի Ա-ն պետք է դժգոհ լիներ այն իրավիճակից, երբ նրա հոր մահից հետո, 1210-1220-ական թվականներին, Իվանե Ա-ն սեփական տիրույթներին էր միացնում նորերս ազատագրված տարածքները: Հայերեն վիմագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ Շահնշահի Ա-ն որոշ ժամանակ պայքար է մղել հայրական պաշտոնը՝ ամիրսպասալարությունը, վերադարձնելու համար: Զորահրամանատարություն Ավագյան տանից Շահնշահյան ընտանիքին անցավ միմիայն առանց արական սեռի ժառանգ թողնելու վախճանված Ավագի մահվանից հետո:

Ջաքարյանների տարբեր տոհմաճյուղերի միջեւ շահերի բախման մասին կարելի է կռահել՝ նկատի առնելով նաեւ ԺԳ դարի 40-ական թվականների իրադրությունը: Այդ տարիներին Վրացական թագավորությունում ծավալված գահակալական պայքարում Շահնշահի Ա-ն, Վահրամյանները եւ Թմոզվեցիները համախմբվել էին Լաշա-Գեորգիի որդի Դավթի գահ բարձրացնելու նպատակով, իսկ Ավագ արթաբեկը պաշտպանում էր Ռուսուղանի որդի Դավթի շահերը: ԺԳ դ. վերջին, երբ ամուսնական զույգ էին կազմել երկու եղբայրների՝ Ջաքարե Բ-ի եւ Իվանե Ա-ի ծոռները, Շահնշահյան եւ Ավագյան տների միջեւ տարածայնությունները, թերեւս, մեղմացել էին: Բոլոր դեպքերում, Շահնշահյան տան մեզ հայտնի նախավերջին սերունդն իշխում էր նաեւ Ավագյան տան երբեմնի նստոց Բջնիում:

1 Մանրամասն տե՛ս Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 62-73, էջ 160-161, ներդիր քարտեզ:

ԴԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Շուրջ երկուսուկես հարյուրամյակի ընթացքում Զաքարյանների տարբեր տոհմաճյուղերի դավանական դիմորոշումը հատկանշվել է առանձնահատուկ բարդությամբ: Այդ պատճառով տոհմի առանձին ճյուղերի դավանական քաղաքականությունը հետազոտելիս անհրաժեշտ է առավելագույնս դիմել վիմագիր ու հիշատակարանային տվյալներին եւ լիակատար հավատ չընծայել հաճախ գույները խտացնող Կիրակոս Գանձակեցուն ու Վարդան Արեւելցուն: Ցավոք, հենց այս ուղիով է ընթացել Շոթա Մեսխիան, որը ծայրաստիճան միակողմանիորեն է մեկնաբանել սկզբնաղբյուրների միտումնավոր հաղորդումները: Մեջբերելով Վիագա Հարությունովայի այն միտքը, թե ԺԲ-ԺԳ դարերում «Հայկական ազնվականության ներկայացուցիչները, ընդունելով քաղկեդոնականություն, ոչ միայն դադարում էին հովանավորել ազգային եկեղեցուն, այլեւ հաճախ խլում էին նրանից տաճարներն ու վանքերը՝ դարձնելով դրանք քաղկեդոնական»<sup>1</sup>, նա բացարձակացնում է այդ գաղափարը<sup>2</sup>: Այսպիսով՝ թույլ է տրվում անցյալի հանիրավի եւ էական աղավաղում, քանի որ հարցը վերաբերում է անհամեմատ խոշոր ու հիմնարար խնդրի՝ հայ քաղկեդոնականների մշակութային դերի եւ էթնիկական ինքնագիտակցության գնահատմանը: Բազմաթիվ՝ զանազան սերունդներին վերաբերող փաստերը ցույց են տալիս, որ Զաքարյանների մի մասը քաղկեդոնականություն ընդունելուց հետո էլ չէր դադարում սերտ կապեր պահպանել հայոց եկեղեցու հետ, էլ չենք խոսում ընտանեկան միաբնակ վանքերին հովանավորելու մասին: Զպետք է մոռացության տալ նաեւ այն հանգամանքը, որ հատկապես Հայաստանում գործող հայ քաղկեդոնականների համար ամենեւին էլ խորթ չէր ազգային զգացումը եւ նրանց՝ հայ մշակույթի հարստացմանն ուղղված գործունեությունը մասամբ ընթանում էր հենց երկաբնակներին հանձնված վանքերում, որի փայլուն օրինակը Սիմեոն Պղնձահանեցու պատկառազու մատենագրական-թարգմանչական վաստակն է<sup>3</sup>:

Զաքարյանների առնչությունները միաբնակ եւ երկաբնակ տարբեր վանքերի հետ՝ նրանց բարձրացումների եւ անկումների, քաղաքական ու դավանական կողմնորոշումների մեջ կատարված տեղաշարժերի արտացոլումն են:

Դեռեւս ԺԲ դարում Զաքարյանների հոգեւոր կենտրոնն ու ընտանեկան հանգստարանն էր դարձել Սանահնի վանքը: Շահնշահ Ա-ի քաղկեդոնական դառնալուց հետո էլ նա եւ իր ժառանգներն առանձնահատուկ հոգածություն էին ցուցաբերում այդ նշանավոր վանքի նկատմամբ: ԺԳ դարի ընթացքում – ԺԴ դ. առաջին կեսին, պահպանելով հանդերձ կապերը Սանահնի հետ, Շահնշահյանները հովանավորում էին եւ նոր շինություններով հարստացնում նաեւ Հաղբատի, Հովհաննավանքի, Անի-

1 В. А. Арутюнова, *К вопросу об армянах-халкедонитах*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ), 1971, № 3, էջ 90: Ի դեպ, ուսումնասիրողը ճետազայում թիմնովին փոխել է վաղ շրջանի իր տեսակետը եւ համոզեւ եկել Իվանե Ա-ի պատմական դերի ճշմարտացի գնահատմամբ (В. А. Арутюнова-Фиданян, *Армяно-византийская контактная зона (X-XI вв.)*, Москва, 1994, с. 91-92.

2 Յ. Յեյնոս, *Նամոնտ Յուլուժուշուրո Յոտանդեմ զա Նամոնեղլու իյուժա XII Նաշշլեոն Նախրոշլուլուժո*, 83. 253-275.

3 Տե՛ս Ս. М. Мурадян, *Культурная деятельность армян-халкедонтов в XI-XIII веках...* (Եր., 1978).

ի, Աշտարակի հոգեւոր հաստատութիւնները: ԺԳ դ. երկրորդ կեսին Շահնշահյան տան քաղկեդոնական հոգեւոր կենտրոնը եւ տոհմական գերեզմանատունն էր նախկինում միաբնակներին պատկանող Քոբայրի վանքը:

Քաղկեդոնականութեան ընդունումից հետո Իվանե Ա-ն ընտանեկան հանգստարանի եւ հոգեւոր կենտրոնի վերածեց միաբնակ Պղնձահանքի վանքը, թեեւ կապեր էր պահպանում նաեւ որոշ երկաբնակ եւ հատկապէս՝ միաբնակ կենտրոնների հետ: Հայոց դավանանքի եւ եկեղեցու նկատմամբ օտարվածութեան կամ առավել եւս հակակրանքի զգացմունքի մասին պնդելն անհեթեթութիւն կլինի նաեւ Ավագ աթաբեկի ու նրա սերունդների մասին դատողութիւններ անելիս: Ընդհակառակը, ԺԳ դ. երկրորդ կեսին եւ ԺԴ դ. առաջին կեսին Ավագյան տան անդամների մեզ հայտնի առնչութիւնները բացառապէս եղել են միաբնակ հոգեւոր կենտրոնների հետ:

Զաքարյանների կրտսեր տոհմաճյուղերից Վահրամյանների հոգեւոր կենտրոնը, ամենայն հավանականութեամբ, Նոր Վարազի վանական համալիրն էր<sup>1</sup>: Վահրամյաններին պատկանող տիրույթներում, բացառութեամբ Վրաստանում ունեցած առանձին գյուղերի, ինչպէս, օրինակ՝ Խովլեի, վրացական հոծ բնակչութիւն գոյութիւն չունէր: Մյուս կողմից՝ Վահրամյանների տիրույթներում գործում էին հայկական ուսումնագիտական-հոգեւոր բազմաթիվ կարեւոր կենտրոններ: Ուստի հիմքեր չունենք կարծելու, թե Վահրամյանները սերտ հարաբերութիւնների մեջ են գտնվել վրացական միջավայրի հետ եւ քաղկեդոնականութիւն են ընդունել, այլ կերպ ասած՝ վրացադավան են դարձել: Սակայն հենց այս անհամոզիչ տեսակետն է վերջին տարիներս զարգացրել Շ. Մեսխիան: Ըստ նրա՝ Վահրամ Ա-ի ժառանգները հայոց վանքերին նվիրատվութիւններ չեն կատարել, վիմագիր հուշարձաններում չեն հիշատակվում, հետեւաբար եւ՝ «դավանական առումով չեն պատկանել հայոց եկեղեցուն»<sup>2</sup>: Տարօրինակ է, որ ընդհանրապէս հայ վիմագրութեանը քաջատեղյակ հետազոտողը ծանոթ չէ Բլու Զաքարե Վահրամյանի տիկնոջ՝ Խաթուն Դեսումյանի արձանագրութեանը: Իշխանուհին եկեղեցի է կառուցել Հաղբատում՝ շինարարական արձանագրութեան մեջ նշելով նաեւ ամուսնու մասին, «որ էր տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց»<sup>3</sup>: Դժվար չէ ենթադրել, որ Բլու Զաքարեն եւս անմասն չի մնացել եւ օգնել է կնոջը՝ վերջինիս ձեռնարկումն իրականացնելու գործում: Մյուս կողմից՝ Վահրամյանների եւ երկաբնակ հոգեւոր հաստատութիւնների հարաբերութիւնները հավաստող փաստեր առհասարակ չկան: Եւ դա այն պարագայում, որ Վահրամյանները շուրջընկերներ են ներկայացված ԺԳ դ. երկրորդ կեսի հայկական պատմական երկերում եւ ձեռագրերի հիշատակարաններում: Ու դարձյալ, ինչպէս որ Զաքարյանների ավագ տոհմաճյուղերի դեպքում է, Վահրամյանների վերջին սերունդների մասին եւս մեզ հայտնի է բացառապէս հայկական սկզբնաղբերներից:

Հստակ տվյալներ գոյութիւն չունեն Թմոզվեցիների հոգեւոր կենտրոնը ճշտելու եւ դավանական պատկանելութիւնը պարզելու համար: Ավանդական կարծիքի համաձայն՝ ԺԳ դ. սկզբին Թմոզվեցիների ընտանեկան վանքն է դարձել վրացական

---

1 Տե՛ս Ա. Ի. Գահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 148-151:  
2 Յ. Թյեօօ, Տաճնառ Քոլլոթոյշորո Յոտարոյնա ճա Տամոնեղլոյո իյոլոնա XII Տալլոյնոն Տախարոյոյլոլոմո, ՅՅ. 239-240.  
3 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 220:

Վահանա Այրիվանքը Ջավախքում<sup>1</sup>: Սակայն այս տեսակետը հիմնված է միայն նույնանձնացումների վրա, որոնք բոլորն էլ հիմնավոր կասկածներ են հարուցում: Պահպանվել է Վահանա Այրիվանքի «Սահմանքը» («Տիպիկոնը»), որի կազմողների եւ վանքի հովանավորների անունները՝ Մխարգրձեյ եւ Սարգիս, իրոք տարածված են եղել Ջաքարյանների տոհմում, սակայն այդ փաստը դեռեւս բավարար հիմք չէ «Սահմանքի» հեղինակ-կազմողներին թմոզվեցի համարելու համար: Իրենք՝ Մխարգրձեյն ու Սարգիսն այդ մասին ակնարկ անգամ չեն անում, երբ որ Ջաքարյանների հետ ազգակցությունը սպասելի էր, որ հիշատակության արժանանար: Կասկածներն ավելի են խորանում, եթե նկատի առնենք, որ առայժմ առաջարկված բոլոր նույնանձնացումները հեռու են ընդունելի համարվելուց: Այսպես, Թեղո ժորդանիան, որն առաջինն է «Սահմանքի» կազմողներին կապել Ջաքարյանների հետ, Մխարգրձեյին նույնանձնացրել է Իվանե Ա-ի հետ: Ընդ որում, այդ կապակցությամբ ծագած ակնհայտ հակասությունները վերացնելու համար հետազոտողը հարկադրված է եղել Մխարգրձեյի կնոջը՝ Խաթուլային, հռչակելու Իվանե Ա-ի երկրորդ կին, ինչպես նաեւ անտեսել է «Մխարգրձեյ»-ի՝ անձնանուն լինելու պարագան<sup>2</sup>: Հաջորդ ուսումնասիրողի՝ Լեւոն Մելիքսեթ-Ֆեկի կարծիքով, «Սահմանքի» Մխարգրձեյը՝ ԺԳ - դարի գործիչ, հայերեն եւ վրացերեն բազմաթիվ արձանագրություններից հայտնի Մխարգրձեյն է<sup>3</sup>: Դարձյալ՝ խոցելի տեսակետ, քանի որ չեն համընկնում կենսագրական կարեւոր փաստերը՝ հայրանունները (Սարգիս - Շահնշահ), կանանց անվանումները (Խաթուլա - Վանենի) ինչպես նաեւ երկու Մխարգրձեյների գործունեության ժամանակաշրջանները. «Սահմանքը» կազմվել է ԺԳ դ. 20-30-ական թվականներին<sup>4</sup>, իսկ Մխարգրձեյ Ջաքարյանի բոլոր ձեռնարկումները թվագրվում են ԺԳ դ. երկրորդ կեսով: Նույնքան անհամոզիչ է նաեւ այն հետազոտողների ընդունած վարկածը, որոնք առաջարկում են Վահանա Այրիվանքի «Սահմանքից» հայտնի Մխարգրձեյին նույնանձնացնել Թաղիադին թմոզվեցու հետ: Ընդ որում, անունների անհամապատասխանության հարցը լուծվում է զարմանալի դյուրությամբ. «Մխարգրձեյ»-ը հայտարարվում է Թաղիադինի երկրորդ անուն, կամ ենթադրվում է, թե Թաղիադինը «Սահմանքում» իրեն կոչել է տոհմանունով<sup>5</sup>: Այսպիսով՝ թմոզվեցիների ընտանեկան հոգեւոր կենտրոնի հարցը բաց է մնում:

Ինչ վերաբերում է թմոզվեցիների դավանական պատկանելությանը, ապա վրացագիտության մեջ այդ հարցը հատուկ քննարկման առարկա չի էլ դարձել, քանի որ վրացական Վահանա Այրիվանքը՝ թմոզվեցիների հոգեւոր կենտրոն համարելու պարագայում հիրավի խնդիրն ինքնըստինքյան լուծված է դիտվել: Շ. Մեսխիան ավելի առաջ է գնացել եւ փորձել է ապացուցել, թե թմոզվեցիները շատ վաղ են փո-

1 Տե՛ս Վահանի յճածո գանգեթ, Գամոսցա Լ. Թյսեղուիձիլմա, տծ., 1939, ցց. 16-18; Բ. Զերմեյնիձիլմա, Տաճարտեղուի օստորուի Տաճարտեղու, I, տծ., 1964, ցց. 116-118; Մ. Թյսեթա, Տաճարտեղու Քոլուտիճարտեղու Զաճարտեղու Զաճարտեղու Տաճարտեղու, ցց. 245-246, 251.

2 Թ. Մորձանոս, օստորուի Տաճարտեղու Քոլուտիձիլմա մոնաստրուի Տաճարտեղու Տաճարտեղու, ԹՅ., 1896, ցց. 29-30.

3 Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, - «Գեղարվեստ», 1921, № 7, էջ 40-41:

4 Հմմ. Ա. Գ. Մարգարյան, К датировке и интерпретации "Типика" Ваханского пещерного монастыря, - "Кавказ и Византия", вып. 2, Ер., 1980, с. 84-85.

5 Մ. Թյսեթա, Տաճարտեղու Քոլուտիձիլմա Զաճարտեղու Զաճարտեղու Տաճարտեղու, ցց. 246.

խել իրենց դավանական պատկանելությունը, ուստի վրացի իշխաններ, հետեւաբար եւ քաղկեդոնական են դիտվում դեռեւս Կիրակոս Գանձակեցու Պատմութիւնում<sup>1</sup>: Իրականում հայ պատմիչը հստակորեն զանազանում է մի կողմից՝ հայ իշխաններին, որոնք պատկանում էին Զաքարյանների տոհմին («Այսպէս եւ միւս իշխանն, Զաքարէ անուն ինկատի ունի Բլու Զաքարեին – Ն. Մ.») եւ եղբայրն իւր Սարգիս, եւ միւս Սարգիս, հայրն Շալուէի եւ Իւանէի, ազգականք մեծ իշխանացն [Զաքարե եւ Իվանե եղբայրների – Ն. Մ.], ձեռնտուութեամբ նոցին՝ առին եւ նոքա բազում գաւառս ի պարսից եւ բերդս ամուրս»)<sup>2</sup>, եւ մյուս կողմից՝ վրացի մեծատոհմիկներ Շալվա եւ Իվանե Ախալցիխեցի եղբայրներին («Իշխան մի յաւագացն վրաց, Շալուէ անուն նորա, եւ եղբայր իւր Իւանէ»)՝<sup>3</sup>, որոնց հիշատակում է իր աշխատութեան մեկ այլ հատվածում: Հետեւաբար, ո՛չ Թմոզվեցիների հոգեւոր կենտրոնի հարցի անհամոզիչ լուսաբանությունը, ո՛չ Կիրակոս Գանձակեցու վկայությունները՝ Թմոզվեցիների քաղկեդոնականությունը հավաստող փաստարկներ չեն կարող դիտվել:

Հայագիտական գրականության մեջ Թմոզվեցիների դավանական կողմնորոշման հարցը հատեւյալ կերպ է լուսաբանվել: Լեւոն Մելիքսեթ-Քեկը մերժել է Սարգիս Բ Թմոզվեցու, այսինքն՝ հավաստի հայտնի Թմոզվեցիների, քաղկեդոնական լինելը եւ նրանց դավանական պատկանելության հարցը բաց է համարել<sup>4</sup>: Ակադ. Ս. Երեմյանը կարծում է, որ Թմոզվեցիները ԺԴ դարում այնուամենայնիվ քաղկեդոնականություն են ընդունել եւ վրացիացել<sup>5</sup>: Թմոզվեցիների հետագա ճակատագիրը լուսաբանելիս հետազոտողը, հավանաբար, հիմնվել է վրացագիտության մեջ լայնորեն տարածված այն տեսության վրա, որի համաձայն՝ Թմոզվեցիները ԺԴ դարում Թմոզվից տեղափոխվել են Ուշարմա եւ նրանցից են սերում Ուշարմեցիների, իսկ ԺՁ - դարից սկսած՝ Փավլենիշվիլիների տոհմերը: Բայց հարցն այն է, որ Թմոզվեցիների կապը վերոհիշյալ վրացական տոհմերի հետ առայժմ մնում է չփաստարկված եւ կրկնվում է լոկ ալմանդուլթի ուժով՝ սոսկ որպէս հնարավոր վարկած<sup>6</sup>: Հետեւաբար, Թմոզվեցիների՝ հայրենի դավանանքից հեռանալու եւ ապազգայնացման տեսակետը փաստերով չհիմնավորված կոահում է: Ստույգն առայժմ այն է, որ ԺԳ դ. 60-ական թվականներից հետո Թմոզվեցիների մասին տեղեկություններն ընդհատվում են եւ նրանց հետագա ճակատագիրը մնում է անհայտ:

Այսպիսով, Զաքարյանների դավանական քաղաքականության համակողմանի եւ անաչառ քննությունը համոզում է, որ քաղկեդոնական դառնալու պարագայում անգամ նրանք նվիրված էին մնում հայոց եկեղեցու շահերի պաշտպանությանը եւ տնտեսական դիրքերի ամրապնդմանը: Առանձին հոգեւոր կենտրոնների քաղկեդոնականացումը ԺԳ դարում (Պղնձահանք, Քոբայր), դավանական անհանդուրժողա-

1 Նույն տեղում, էջ 238-239:

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 163:

3 Նույն տեղում, էջ 225:

4 Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, էջ 40-41:

5 Ս. Երեմյան, Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ, էջ 19-20:

6 Ե. Մելիքիան, օրինակ՝ այսպէս է ներկայացնում Թմոզվեցիների մասին հայտնված տեսակետները. «Ս. Կակաբաձե «Թմոզվեցիների տոհմի պատմության շուրջ» հոդվածում փորձել է ապացուցել Փավլենիշվիլիների ծագումը Թմոզվեցիներից... Ս. Կակաբաձեի վերոհիշյալ տեսակետը կարելի է ընդունել» (Յ. Յեմեճո, *Նաճոճո Յոլոճոճոյրո Յոտարեճո ճո Նաճոճոյրո Յեյոճո XII Նաճոյրո Նաճոյրոյրոյրո*, ՅՅ. 243).

կանուխյան դրսեւորումները իվանե Ա-ի կողմից, չեն փոխում ընդհանուր պատկերը: Դավանական առումով երկաբնակուխյանը պատկանելը զուգակցվում էր ազգային եկեղեցուն զարմանալի հետեւողականուխյամբ հավատարիմ մնալու հետ:

Անշուշտ, չափազանց ինքնատիպ է եղել հատկապես՝ ԺԳ դ. երկրորդ կեսին – ԺԴ դ. սկզբին, Զաքարյանների էթնո-մշակութային դիմապատկերը: Հայկականից բացի նաեւ վրացական եւ նույնիսկ մահմեդական ընտանիքների հետ խնամիրական կապերն առօրյա երեւոյթ էին դարձել Զաքարյանների տոհմում: Օրինաչափ է, որ նրանց մեծամասնության համար բնորոշ դարձած լինելը հայ-վրացական երկլեզվությունը, մոնղոլական ժամանակաշրջանում՝ հնարավոր է եռալեզվությունը (հայերեն, վրացերեն, մոնղոլերեն կամ պարսկերեն): Էթնիկապես հայ, հայոց էթնո-մշակութային միջավայրի հետ կապված լինելով, հայոց եկեղեցուց չօտարանալով հանդերձ՝ Զաքարյանների գլխավոր տոհմաճյուղերը հարել են քաղկեդոնականությանը, շփվել են վրաց հասարակական-քաղաքական շրջանակների հետ, բարձրագույն պաշտոններ վարել վրաց արքունիքում, անշուշտ, ծանոթ լինելով նաեւ այդ ժամանակաշրջանում իր ազդեցության սահմաններն ընդլայնած արեւելյան մշակույթի հետ<sup>1</sup>: Ուստի Զաքարյանների մշակութային համապատկերի արհեստական պարզեցումը հղի է պատմական իրականության առջեւ լրջորեն մեղանշելու իրական վտանգով: Բայց հենց այդպիսի գայթակղությունից չի խուսափել Շոթա Մեսխիան, որի կարծիքով՝ Թմոզվեցիների տոհմը նույնիսկ «մինչեւ Սարգիս Բ Թմոզվեցի, այսինքն՝ ԺԳ դարից երկար ժամանակ առաջ լիորեն պատկանել է վրաց մշակութային աշխարհին»<sup>2</sup>: Ընդ որում, հեղինակի բոլոր պնդումների հիմքում ընկած է ընդամենը վրացական այն գրական ավանդույթը, որի համաձայն՝ Սարգիս Թմոզվեցին համարվում է մեզ չհասած «Իլլարիանի» պոեմի հեղինակ եւ պարսկական «Վիսրամիանի» սիրավեպի թարգմանիչ: Հետաքրքրականն այն է, որ հետազոտողը լռելյայն շրջանցում է գրական ավանդույթի առաջացման ժամանակի հարցը: Սակայն, ինչպես ցույց է տվել վրաց գրականության պատմության խնդիրներում մեծագույն հեղինակություն համարվող Կոռնելի Կեկելիձեն, այդ գրական ավանդույթն առաջին անգամ ի հայտ է եկել ԺԹ դ. սկզբին, հետեւաբար այն զուրկ է արժանահավատությունից<sup>3</sup>:

1 Տե՛ս Ս. Մ. Мурадян, *Новое в “Кавказском культурном мире” в XI-XIII веках*, с. 144-154.

2 Յ. Թեյսեո, *Տամոնո Յոլուտիշուրի շօտարեձա Եւ Տամոեղեղո Խյոձա XII Տալշուձի Տախարոշե-լոձի*, էջ 244:

3 Յ. Կեկելոձե, *ժեղեղո յարտալեղո Լուտերատուրի Օստորի*, II, տձ., 1981, թՅ. 56-57. Որ Սարգիս Թմոզվեցուն վրացերեն ստեղծագործությունների կամ թարգմանությունների հեղինակ համարելու ավանդույթը դեռեւս բավարար չէ վրաց մատենագրության մեջ նրան խոշոր ավանդ վերագրելու համար՝ ակնբախ է հետեւել պատից: Բոլոր վերագրումներն արվել են վրաց ժամանակագրությունում Սարգիս Բ-ին տրված «կրթված, իմաստասեր, բազմաշնորհ», «ճարտասան, փիլիսոփա, գիտուն մարդ» բնութագրումների հիման վրա (տե՛ս *յարտալեղո Յոլուտի*, II, թՅ. 191, 217; *Վրաց ժամանակագրություն*, էջ 76, 95) եւ այն տրամաբանությամբ, որով առաջնորդվելով՝ Կ. Կեկելիձեն ժամանակին Սարգիս Բ-ին էր հատկացնում նաեւ «Ընձեձավոր»-ի հեղինակությունը: Թվարկելով այդ նշանավոր գրական երկը ստեղծողի համար անհրաժեշտ բոլոր կարևոր հատկանիշները՝ գիտնականը եզրափակում էր իր դատողությունները այսպիսի հարցադրումով ու պատասխանով. «Կարելի՞ է, թե՞ ոչ ԺԳ դարի առաջին կեսում մատնացուցել այնպիսի անձնավորություն, որը բոլոր նշված հատկանիշների կրողը լիներ: Իմ կարծիքով՝ կարելի է. եւ այդպիսի անձնավորություն պետք է լինի Սարգիս Թմոզվեցին» (Յ. Կեկելոձե, *ՅՅտորի Յեջե-Յոլուտի յոլուտի* Եւ Ըրո ձոձի Ըախյոլի, թՅ. 73-79). Այսօրինակ փաստարկումների խոցելիու-

Հասկանալի է, որ ուշ շրջանի վերագրումները ոչնչով չեն նպաստում Զաքարյանների մշակութային իրական դիմապատկերի բացահայտմանը: Այդ հույժ կարեւոր գիտական խնդիրը կարելի է լուսաբանել միայն Զաքարյանների մշակութային ակտիվության ամբողջական հետազոտության միջոցով, իսկ այդ ուղղությամբ առայժմ կատարվել են լոկ առաջին քայլերը<sup>1</sup>:

Երբեք չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ Զաքարյաններն ավելի քան երկու դար շարունակ ունեցել են վրացական քաղաքական պատկանելություն, հոգածություն են ցուցաբերել Վրաստանի ճակատագրի հանդեպ, ավելին՝ եղել են Վրացական թագավորության խոշորագույն պետական գործիչներ: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ արեւելյան ու եւրոպական հեղինակները տոհմի որոշ անդամների «վրացի» են անվանում՝ նկատի ունենալով նրանց պետական-քաղաքական եւ ոչ թե էթնիկական պատկանելությունը: Իբն ալ-Ասիրի երկում, օրինակ, «Քուրջ են կոչվում ոչ միայն Վրաստանը, նրա ժողովուրդը եւ թագավորները, այլեւ Հյուսիսային Հայաստանը, նրա հայ ազգաբնակչությունը եւ Զաքարյան իշխանապետության բոլոր հայ գորավարներն ու ռազմիկները»<sup>2</sup>: Այսպիսով՝ ապարդյուն պետք է համարել այն հետազոտողների փորձերը, ովքեր ջանում են վկայակոչել «քուրջ» բնութագրումը՝ Զաքարյանների էթնիկական առումով վրացի լինելն ապացուցելու համար:

Քաղաքական, դավանական եւ մշակութային գործոնները, ուշագրավ նրբերանգներ հաղորդելով Զաքարյանների ընդհանուր դիմապատկերին՝ չէին փոխում տոհմի հայկական բնույթը նաեւ ԺԳ դարի ընթացքում: Անկասկած է, որ Զաքարյանները ոչ միայն գիտակցում, այլեւ, հարկ եղած դեպքում, շեշտում էին իրենց էթնիկ պատկանելությունը: Հաղարծնում նրանք «սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց» տիրել էին համարում Հայաստանի ազատագրումը<sup>3</sup>, իսկ Ամբերդը հայտարարում էին «զսէփական դղեակն մեր զԱնբերդ, զՀինեալն ի նախնեաց մերոց»<sup>4</sup>: Ուշագրավ է, որ, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Զաքարե Բ-ն հրամայում է այրել Արդեբիլի հաղթարանում ապաստանած մահմեդականներին՝ «փոխանակ իշխանացն հայոց, զոր այրեցին ի Նախճաւանի տաճիկքն»<sup>5</sup>: Որքան էլ կասկածելի լինի այս փաստի հավաստիությունը, կարեւորն այն է, որ ժամանակակիցները Զաքարյաններին վերագրում էին իրենց էթնիկական պատկանելության հստակ գիտակցում:

Տոհմի պատմության վերջին կեսդարյա ժամանակաշրջանում եւս Զաքարյանները դարձյալ հայկական դիմագիծ ունեին: Այդ փուլում նրանք գրեթե կորցրել էին իրական կապերը վրաց արքունիքի հետ եւ վերածվել էին Անիի, Բջնիի, Արագածոտնի տեղական տիրակալների: «Աթաբեկ եւ ամիրսպասալար» կամ սոսկ «աթաբեկ» կոչումները նրանց հաճախ տրվում էին ավանդույթի ուժով, որպէս տիրողոս: Վրացական սկզբնաղբյուրներից պաշտոնական պատմագրությունը ներկայացնող

---

թյունը ցույց տալու համար բավական է վերհիշել, որ հետագայում Կ. Կեկելիձե՛ն հրաժարվեց իր նախկին տեսակետից եւ «Ընձենավոր»-ի հեղինակ ճանաչեց Օրթա Ռուսթավելուն:

1 Տե՛ս **J. Rogers**, *The Mxargrdzelis between East and West*, – In: *Atti del primo simposio internazionale sull' arte georgiana*, Milano, 1977, p. 257-272; **А. М. Лидов**, *Искусство армян-халкедонитов*, – “Историко-филологический журнал”, 1990, № 1, с. 75-87.

2 **Իբն ալ-Ասիր**, Էջ 398, ծնթ. 280, հմմ. Էջ 403, ծնթ. 316:

3 *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 22:

4 **Կ. Ղաֆադարյան**, *Հաղթատ*, էջ 168-169:

5 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 186:

Վրաց ժամանակագրությունն այդ սերնդի Ջաքարյաններին հիշատակելիս՝ անգամ չի նշում նրանց արքունի պաշտոն-տիրտղոսները: Վերջին Ջաքարյաններից շատերը հայտնի են միայն հայկական սկզբնաղբյուրներից:

## ՏՈՂՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև, «ավագ» (առաջին) Ջաքարյաններից հետո շորս տոհմաճյուղերին անդրադառնալիս, նկատի է առնվել Ջաքարյան քառյակ իշխանությունների կազմավորման ժամանակագրությունը:

### ԱՎԱԳ (ԱՌԱՋԻՆ) ՉԱՔԱՐՅԱՆՆԵՐ<sup>1</sup>

1. Ավագ Սարգիս Ա (ծնվել է, հավանաբար, ժԱ դ. 60-70-ական թվականներին, գործել է ժԱ դ. վերջին, հիմնականում՝ ժԲ դ. առաջին երեք տասնամյակների ընթացքում): Հիշատակվում է միայն ժԲ դ. վերջի արձանագրություններում<sup>2</sup>:

2. Ջաքարե Ա, որդի Ավագ Սարգսի (ծնվել է, թերեւս, ժԱ դ. վերջին – ժԲ դ. առաջին տասնամյակում, մահացել մինչեւ 1161 թվականը): Վիմագիր տվյալները, որոնք, անկասկած, ավելի հուսալի են, քան պատմիչների վկայությունները, թույլ են տալիս միայն ճշտել Ջաքարեի տեղը ընտանիքի տոհմաձառում<sup>3</sup>: Հնդունված է համարել, որ նա մահացել է մինչեւ 1161 թվականը, քանի որ այդ ժամանակ տոհմն ակնհայտորեն արդեն գլխավորում էր Սարգիս Ա Մեծը:

3. Սարգիս Մեծ, որդի Ջաքարե Ա-ի (ծնվել է, հավանաբար, ժԲ դ. 2-3-րդ տասնամյակներին, մահացել 1187 թվականին): Գործունեության սկզբնական փուլում սերտորեն համագործակցում էր իր գերակայի՝ ամիրսպասալար Իվանե Օրբելու հետ: Մասնավորապես, նկատելի էր նրա դերը Անիի 1161 թ. գրավմանը հաջորդող ի-

---

1 Մասնագիտական գրականության մեջ, սկսած ժԹ դ. կեսերից, ընդունված է եղել «ավագ» (առաջին) Ջաքարյանների թվում ընդգրկել ավագ Սարգսի ենթադրյալ հայր Խոսրովի և եղբայր Քարիմի: Ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Արտ. Շահնազարյանը, այդ տեսակետը թիմնված է Հաղբատի արձանագրությունների թյուր մեկնաբանության վրա և ենթակա է վերանայման (Ա. Ի. Շահնազարյան, *Ջաքարյանների տոհմաձառի հարցի շուրջ*, էջ 203-210): Ուստի Ջաքարյանների տոհմագրությունն անհրաժեշտ է սկսել ավագ Սարգիս Ա-ից:

2 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, էջ 179; *Ույնի՝ Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, էջ 76, 112-113: Ավագ Սարգիս Ա-ին երբեմն նույնանունացնում են այն Սարգսի հետ, որը, ըստ Վարդան Արեւելցու (էջ 181)՝ Սարգիս Ա Մեծի Ասխապայն էր (Ա. Ի. Շահնազարյան, *Նշվ. աշխ.*, էջ 72; Ա. Ի. Շահնազարյան, *Ջաքարյանների տոհմաձառի հարցի շուրջ*, էջ 203): Բանն այն է, սակայն, որ Ջաքարյանների տոհմում «Սարգիս» և «Ավագ Սարգիս» անունները տարբեր էին դիտվում: Բացի այդ՝ պատմիչի և վիմագիր արձանագրությունների տվյալները զանազան տոհմագրական համակարգեր են ներկայացնում: Ըստ վիմագրության՝ Ավագ Սարգիս Ա-ն Սարգիս Մեծի պապն էր, իսկ Վարդան Արեւելցու տեղեկությունների համաձայն՝ Ասխապայն: Հետեւաբար, վիմագրության և պատմագրության տվյալները հաշտեցնելու փորձերը կարող են փակուղու առջեւ կանգնեցնել ռետազոտողների:

3 Տե՛ս Ամիրոյ ծանոթագրությունում հղված արձանագրությունները, նաե՛ւ Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, էջ 185: Վերելում շարադրված նկատառումները հարկադրում են հրաժարվել Սարգիս Մեծի հայր Ջաքարե Ա-ի և այն Ջաքարեի նույնանունացումից, որը, ըստ Վարդան Արեւելցու (էջ 181) և Կիրակոս Գանձակեցու (էջ 162)՝ ամիրսպասալարի պապն էր: Ի դեպ, Կիրակոսի Պատմության մեկ այլ հատվածում (էջ 152) Ջաքարե Ա-ի և Սարգիս Մեծի իրական ազգակցական կապը ճիշտ է ներկայացված:



րադարձությունների ժամանակ: Անիի քաղաքապետ Սադունի փախուստից հետո, Սարգիսը Իվանե Օրբելու օգնական նշանակվեց քաղաքում: Ինչպես երևում է, Իվանեն համարվում էր Անիում կենտրոնացված զորքերի գլխավոր հրամանատար, իսկ Սարգիս Ա-ն ստանձնել էր քաղաքացիական կառավարչի՝ շահապի կամ ամիրայի պաշտոնը<sup>1</sup>: 1176 թվականին, Իվանե Օրբելու գլխավորած ավատատիրական ապստամբության սկզբում, Գեորգի Գ-ի դեմ հանդես եկող բանակում էր գտնվում նաև Սարգիս Ա-ն, «որդու եւ եղբորորդու հետ, Օրբելիների եղբայրը եւ սիրելին»<sup>2</sup>: Հետագայում, համոզվելով ապստամբական շարժման անհաջողության մեջ, նա առաջիններից մեկն անցավ թագավորի կողմը եւ Օրբելիների շնորհագրկումից հետո բացառիկ դիրք գրավեց ողջ Վրացական թագավորությունում<sup>3</sup>: 1184/85 թվականին նա Թամար թագուհուց ստացավ ամիրսպասալարի պաշտոնը՝ Լոռե բերդաքաղաքով հանդերձ<sup>4</sup>՝ կայուն հիմք ստեղծելով տոհմի աննախընթաց վերելքի համար:

Սարգիս Ա-ին մանդատուրթուխուցեսի տիտղոս է վերագրվում Թեթառուչքի վրացերեն արձանագրությունում, ընդ որում զարմանալիորեն բացակայում է նրա «ամիրսպասալար» կոչումը<sup>5</sup>: Այս եզակի փաստը, թերեւս, բավական չէ՝ Սարգիս Մեծին Վրաց թագավորության մանդատուրթուխուցեսների թվին դասելու համար:

1181 եւ 1184 թվականներին Սարգիս Ա-ն օժանդակել է Սանահնի, Հաղարծնի վանքերում կատարված շինարարական աշխատանքներին<sup>6</sup>: Մահացել եւ թաղվել է Սանահնի վանքում 1187 թվականին<sup>7</sup>:

Սարգիս Մեծի կնոջ՝ Սահակդուխտի անունը հայտնի է Անիում գտնված տապանագրից<sup>8</sup>: Պատմիչների տեղեկություններից պարզ է դառնում, որ նա Մահակա-նաբերդցիների տոհմից էր<sup>9</sup>:

4. Վահրամ Ա, որդի Զաքարե Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. առաջին տասնամյակներին, մահացել մինչեւ 1176 թվականը): Կենսագրությունը լիովին անձանոթ է, անունն իսկ, որդիների մասին պատմելու առիթով, հիշատակում է միայն Թամար թագուհու առաջին պատմիչը<sup>10</sup>: Քանի որ 1176-1177 թվականներին նրա որդին է հիշատակվում Սարգիս Մեծի հետ միասին, ապա կարելի է ենթադրել, թե Վահրամ Ա-ն

---

1 Տե՛ս Վարդան Արեւելցի, Էջ 166; *յերտլոս ցեօջրցծա*, II, թց. 6. Հմմ. **Հ. Գ. Մարգարյան**, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, Էջ 104-105:

2 *յերտլոս ցեօջրցծա*, II, թց. 19.

3 Տե՛ս **Հ. Գ. Մարգարյան**, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, Էջ 187-188, 206-207:

4 Տե՛ս *յերտլոս ցեօջրցծա*, II, թց. 33.

5 Տե՛ս **Պ. Մ. Մուրադյան**, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, Էջ 119:

6 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Սամահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, Էջ 104; *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, Էջ 37:

7 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Սամահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, Էջ 178-179:

8 *Դիվան հայ վիմագրության*, պր. I, Էջ 57:

9 **Կիրակոս Գանձակեցի**, Էջ 210; **Վարդան Արեւելցի**, Էջ 184, հմմ. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, Էջ 178:

10 Տե՛ս *յերտլոս ցեօջրցծա*, II, թց. 39, 51, 54-55. Վաղուց է նկատված, որ հայ պատմիչները սխալմամբ են Վահրամ Ա-ին Սարգիս Մեծի հայր համարել: Իրականում նա եղել է ամիրսպասալարի եղբայրը (տե՛ս **Աս. Շահնագարեան**, *նշվ. աշխ.*, Էջ 76-77):

ավելի վաղ է վախճանվել: Վահրամի որդիներն են Բլու Զաքարեն եւ Սարգիս Ա Թմոզվեցին:

5. Զաքարե Բ, որդի Սարգիս Մեծի (ծնվել է ԺԲ դ. 50-ական թվականների երկրորդ կեսին, մահացել 1212 թվականին): Տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչն է: Ծննդյան մոտավոր ժամանակը որոշելու համար գոյություն ունի երկու կարեւոր վկայություն: Առաջինից (մեջբերվել է Սարգիս Մեծի գործունեությունը ներկայացնելիս) երեւում է, որ Զաքարեն 1176-1177 թվականներին բավականաչափ տարիք ուներ (առնվազն 16-20 տարեկան պետք է լիներ) հիշատակվելու համար<sup>1</sup>: Ըստ երկրորդի՝ հռչակավոր զորավարը վախճանվել է «աւաղական մահուամբ... ի տիս միջահասակի»<sup>2</sup>: Որքան էլ անորոշ լինի «միջահասակության» ըմբռնումը, պարզ է, որ Զաքարե Բ-ն խոր ծերության (70-80 տարեկան) հասակում չի մահացել: Ստացվում է, որ նա ծնվել է ամենաուշը ԺԲ դ. 50-ական թվականներին, հավանաբար՝ տասնամյակի երկրորդ կեսին, եւ մահկանացուն կնքելիս եղել է 50-60 տարեկանի միջակայքում: Այսպիսով, նա անցած պետք է լիներ կես դարի սահմանը, բայց եւ չհասած 60 տարեկանի (ծերության) ուղենիշին:

1184/85 թվականից սկսած Զաքարեն հետզհետե աճող ազդեցություն է ձեռք բերել վրաց արքունիքում: 1190/1191 թվականին կարեւոր դեր է կատարել Գեորգի Ռուսի (Յուրի Բոգոլյուբսկի) ղեկավարած ավատատիրական ապստամբության ճնշման գործում: Որպես փոխհատուցում ստացել է Ռուսթավ քաղաքը, իսկ ամիրսպալասար Գամրեկել Թորելիի մահից հետո զբաղեցրել է նաեւ ամիրսպալասարի պաշտոնը: Հետագայում միաժամանակ գլխավորում էր մանդատուրթուխուցեսուության գործակալությունը եւ ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին ամենաազդեցիկ պաշտոնյան էր վրաց արքունիքում:

ԺԲ դ. 80-ական թվականներից սկսած Զաքարեն գլխավորում էր հայկական երկրամասերի ազատագրումը: Ղեկավարում էր Վրացական թագավորության զորքերը, այդ թվում՝ նաեւ հայկական ջոկատները Շամքորի եւ Բասենի ճակատամարտերում: Գլխավորում էր ավատատիրական աստիճանակարգությունը Հյուսիս-արեւելյան Հայաստանում եւ իշխանական տների մեծ մասի «պատրոն»-ն էր համարվում: Միաբնակության ջերմ պաշտպանն ու հովանավորն էր: Միաժամանակ եռանդուն ջանքեր էր գործադրում հայոց եկեղեցու ծեսերի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու նպատակով<sup>3</sup>: Հավատարիմ մնաց հայրենի դավանությանը, դիմակայելով վրաց հոգեւորականության եւ պալատական շրջանների ճնշմանը:

Վախճանվել է 1212 թ. եւ թաղվել Սանահնի տոհմական հանգստարանում<sup>4</sup>:

6. Իվանե Ա, որդի Սարգիս Մեծի (ծնվել է ԺԲ դ. 50-60-ական թվականներին, մահացել 1233/34 թվականին): Ըստ Վրաց ժամանակագրության տեղեկության՝ 1225 թվականին նա «ծերացած էր եւ առանց հայտնելու, գաղտնի վանական էր դար-

1 Կարելի է չկասկածել, որ Սարգիս Ա-ի որդու անունը չնշելու պարագայում պատմիչը նկատի է ունեցել անդրամիկին:

2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 105:

3 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 166-178; Վարդան Արեւելցի, էջ 182-183; *ქართლის ცხოვრება*, II, 83. 81-90.

4 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 185-187; Վարդան Արեւելցի, էջ 183-184; Ստեփաննոս Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 292:

ձեռք»<sup>1</sup>, ուստի պիտի ծնված լիներ ժԲ դ. 50-ական թթ. երկրորդ կեսին, հնարավոր է նաև՝ 60-ական թթ. առաջին տարիներին: Այսպիսով, 1184/85 թ., երբ Իվանե Ա-ն առաջին անգամ հիշվում է «Քարթլիս ցխովրեբա»-ում՝ արքունիքում ծառայության անցնելու կապակցությամբ<sup>2</sup>, նա եղել է շուրջ 25-30 տարեկան երիտասարդ:

Իվանեի սրբնթաց բարձրացումը եւս սկսվեց 1190/91 թվականին, երբ Թամար թագուհուց ստացավ մսախուրթուխուցեսի պաշտոնը եւ Կայան բերդը<sup>3</sup>: Երկարատեւ պայքարի արդյունք էր նրան աթաբեկի կարեւորագույն պաշտոնի հանձնումը: Ինչպես երեւում է, նա հարկադրել էր թագուհուն իրեն հանձնել այդ պաշտոնը՝ խլելով այն Իվանե Ախալցխեցուց<sup>4</sup>: Իվանե Ա-ն զբաղեցնում էր աթաբեկի պաշտոնը առնվազն 1212 թվականից<sup>5</sup>:

Իվանեն ավագ եղբոր ռազմական բոլոր ձեռնարկումների մշտական մասնակիցն էր եւ աթաբեկության պաշտոնն ստանձնելուց հետո էլ չէր հեռացել զինվորական ասպարեզից: Երկար ժամանակ նա էր Վրաց թագավորության զորքերի փաստական ղեկավարը: Ծնշում էր կովկասյան լեռնականներից դուրձուկների ապստամբությունը<sup>6</sup>, գլխավորում հայ-վրացական բանակը Գառնիի ճակատամարտում<sup>7</sup>:

Կարողանալով վրաց արքունիքում գերազանցություն ձեռք բերել բոլոր ազդեցիկ գործակալությունների ղեկավարների՝ վազիրների նկատմամբ՝ Իվանե Ա-ն Հյուսիս-արեւելյան Հայաստանում փոխարինեց Զաքարե Բ-ին՝ դառնալով գլխավոր դեմքը հայ իշխանների շրջանում:

Բարդ է եղել Իվանե Ա-ի դավանական քաղաքականությունը: Մի կողմից՝ մինչեւ 1196-1199 թվականները հարելով քաղկեդոնականությանը՝ նա կառուցել է երկաթնակներին պատկանող Թեթառուչքի եկեղեցին<sup>8</sup>: Այնուհետեւ՝ քաղկեդոնական միաբանություն է հաստատել միաբանակների հիմնադրած Պղնձահանքի վանքում<sup>9</sup>, նվիրատվություն է կատարել Ստորին Քարթլիում գտնվող վրացական մի վանքի<sup>10</sup>: Դավանական հարցերում նրա անհանդուրժողական դիրքորոշումը զգալի վնաս էր հասցնում հայ-վրացական զորքերի միասնությանը<sup>11</sup>: Մյուս կողմից՝ հենց Իվանե Ա-ն է նորոգել Հաղարծնի<sup>12</sup> եւ Մորո Չորո<sup>13</sup> վանքերը, նվիրատվություններ կատարել Գեղարդի միաբանությանը<sup>14</sup>, այլ հայ իշխանների հետ միասին միջոցներ է տրամա-

1 յնտոլոս ցեոջրեծ, II, թց. 169; Վրաց ժամանակագրություն, էջ 60:

2 յնտոլոս ցեոջրեծ, II, թց. 33.

3 Նույն տեղում, էջ 49, 51, 54:

4 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1982, № 3, էջ 77-78:

5 Տե՛ս Գ. կթղ. Յուվալիեան, Խաղթակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 330:

6 Տե՛ս յնտոլոս ցեոջրեծ, II, թց. 111.

7 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ, էջ 73-79:

8 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 115-121:

9 Նույն տեղում, էջ 199-204:

10 Տե՛ս յնտոլոս ցեոջրեծ, III, թց. 133.

11 Տե՛ս Հ. Մանանդյան, ԳՂՎ. աշխ., էջ 198:

12 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, սր. VI, էջ 22-24.

13 Նույն տեղում, էջ 135-138:

14 Տե՛ս Գ. կթղ. Յուվալիեան, Խաղթակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 299:



է եռանդուն քաղաքական գործունեությունից: Հիրավի, սկզբնաղբյուրները 1225-1230 թվականներին արձանագրում են Ավագի ինքնուրույն ձեռնարկումները<sup>1</sup>:

7. Վանենի (Նանա), դուստր Սարգիս Մեծի (ծնվել է շուրջ 1157-1162 թվականներին, մահացել 1222 թվականին<sup>2</sup>): Իշխանուհու ծննդյան ժամանակը հնարավոր է որոշել ամուսնու՝ Աբաս Կյուրիկյանի մասին հայտնի կենսագրական տվյալների շնորհիվ: Ստույգ է, որ Աբասը մահացել է 19 տարեկան հասակում, երկու տարի ամուսնացած լինելուց հետո<sup>3</sup>: Միաժամանակ, մի հավաստի վկայություն համաձայն նա վախճանվել է 1176 թվականին<sup>3</sup>: Հետեւաբար, տասնյոթամյա Աբասի եւ Վանենիի ամուսնությունն պահին իշխանուհին պետք է ամուսնու տարեկիցը կամ, որ ավելի սպասելի է, նրանից կրտսեր լիներ 2-3, գուցե նաեւ 5 տարով: Ստացվում է, որ նա 1174 թ., երբ կազմվում էր ամուսնական զույգը, եղել է 12-17 տարեկան, միջնադարի համար սովորական տարիքի, հետեւաբար՝ ծնվել է 1157-1162 թթ. միջակայքում:

Վաղամեռիկ ամուսնու մահից հետո՝ Վանենու հիշատակին կառուցել է Սանահնի նշանավոր կամուրջը<sup>4</sup>, «կամակից եւ ազնական» եղել Իվանե Ա-ին Մորո Չորո վանքի շինարարության միջոցին (1197 թվական)<sup>5</sup>, կառուցումներ է կատարել նաեւ Հովհաննավանքում<sup>6</sup>:

Դիտելի է, որ Սանահնի կամրջի շինարարական արձանագրությունում նա իրեն կոչում է «Վանենի», Հովհաննավանքի վիմագրում՝ «Նանա». նրան «Նանա» է անվանում նաեւ Կիրակոս Գանձակեցին<sup>7</sup>: Այսպիսով՝ Զաքարյան իշխանուհու կրկնանունությունը կասկած չի հարուցում:

Հնարավոր է, որ Վանենին մահացել է 1222 թվականին, այսինքն՝ 60-65 տարեկան հասակում, եւ հուղարկավորվել է Զաքարյանների տիրույթների մեջ մտնող Շնող գյուղում<sup>8</sup>:

8. Խորիշահ, դուստր Սարգիս Մեծի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել 1216 թվականից հետո, մինչեւ 1238 թվականը): Հարս գնալով Ներքին Խաչեն, բեղմնավոր գործունեություն է ծավալել Արցախում: 1212 թվականին նորոգել է Մեծիրանից Սուրբ Հակոբա վանքի արեւմտյան եկեղեցին<sup>9</sup>, ամուսնու՝

1 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 287; *յճժժժժժժ յճժժժժժժ*, II, թ. 172-173; *Վրաց ժամանակագրություն*, էջ 62-63:

2 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 152:

3 Տե՛ս *Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի*, էջ 19:

4 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 185: Կամրջի շինարարության ավանդական թվագրումը (1192 թվականից հետո) հիմնված է Աբասի մահվան արդեն հնացած (տե՛ս **Հ. Ղ. Մովսէսեան**, *Ազվ. աշխ.*, էջ 71-74) եւ անստույգ տարեթվի վրա ու ենթակա է վերանայման (1176 թվականից հետո):

5 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 135:

6 **Կ. Ղաֆադարյան**, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 112-113:

7 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 152:

8 Տե՛ս *Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները*, Եր., 1984, էջ 41: Պահպանվել են տապանաքարը եւ 1222 թվակիր խաչքարը: Նույնանմանցումը վերջնական համարելը դժվար է, քանի որ նույնանունության հիման վրա առաջացած սխալը չի բացառվում: Բացի այդ՝ «Վանենի» նշումով տապանաքար է պահպանվել նաեւ Հաղբատում (տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Հաղբատ*, էջ 190):

9 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 12:

Վախտանգ Թանգիկի հետ միասին ավետարան է պատվիրել<sup>1</sup>: Որդու՝ Հասան-Ջալալի հետ, 1216 թվականից մասնակցել է Գանձասարի կառուցմանը: Սուրբ Հովհաննես եկեղեցու՝ «ի խփել լուսամուտին արեւելից» մեկնել է Երուսաղեմ եւ բազմամյա ճգնակեցությունից հետո մահացել է ու հուղարկավորվել Սուրբ քաղաքում<sup>2</sup>: Վախտանգն էլ մինչեւ Գանձասարի եկեղեցու շինութեան ավարտը (1238 թվական):

9. Դոփ, դուստր Սարգիս Մեծի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. 40-ական թթ. վերջին կամ 50-ական թթ. սկզբին, մահացել 1225 թվականից հետո): Ամուսնու՝ Ծարի իշխան Հասան Ա-ի մասին հայտնի կենսագրական տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Դոփը ծնվել է ԺԲ դ. 50-ական թթ. վերջին կամ դարի կեսերին, հետեւաբար, հոր ավագ զավակների թվին է պատկանել: Հանրահայտ է Հասան Ա-ի մահից հետո ինչպե՞ս ունեցած արտակարգ ազդեցութեամբ: Աչքի է ընկել նաեւ շինարարական գործունեութեամբ՝ 1225 թվականին կառուցելով Խաթրավանքի եկեղեցու մատուռը<sup>3</sup>: Թաղված է Հաղբատի վանքի գաւթում<sup>4</sup>:

10. Նրջիս, դուստր Սարգիս Մեծի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել, թերեւս, ԺԳ դ. առաջին տասնամյակներին): Հայտնի է իր «անուցած» Գրիգորի արձանագրութեան երկից<sup>5</sup>: Դամբարանը գտնվում է Սանահինում, հետեւյալ տապանագրով. «Ճգնաւորն պատրոնն Նրջիսն է, քոյր պատրոնացն Զաքարէի եւ Իւանէի»<sup>6</sup>: «Անուցած» ունենալու եւ ճգնավոր դառնալու փաստերը խոսում են վաղ հասակում ամուսնուն կորցնելու կամ ընդհանրապես ամուսնացած չլինելու մասին: Ամեն դեպքում պետք է բացառված համարել Նրջիսի՝ Համագասպան-Մամիկոնյանների տուն հարս գնալու վարկածը<sup>7</sup>:

1 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 94:

2 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38: Հմմ. Կիրակոս Գանձակեցի, էջ 268:

3 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 127:

4 Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 185: Հմմ. Ա. Յակոբեան, Արքայատոհմներն ու իշխանատոհմերը..., էջ 322:

5 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 162; Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 83-84:

6 Կ. Ղաֆաղարյան, Սանահինի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 171:

7 Մեկ անգամ թեսականորեն առաջ քաշվելուց հետո (տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ, էջ 8, ծմթ. 4), այդ վարկածը, եթէ անվերապահորեն չի ընդունվում, ապա չի էլ մերժվում եւ շարունակում է անցնել աշխատանքից աշխատանք: Հետազոտողների տեսակետի հիմքը՝ «Նրջիս» անվան եզակիությունը եւ ժամանակաշրջանի համապատասխանությունը, համոզիչ է միայն առաջին հայացքից: Այսպես՝ ճիշտ ԺԲ-ԺԳ դարերում այդ նույն անունն էին կրում. Արցախում՝ Հասանի դուստր, Աբաս թագավորի թոռ Նրջիսը ( Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 69), Հավուց Թառոմ՝ Պետրոս գրչի մայրը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 191), Եղեգիսում՝ Օրբելյանների տոհմական տապանատանը թաղված ոմն «Նրջիս» (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 113, № 330. նախորդ տապանաքարերը ԺԲ-ԺԳ դարերից են): Երկրորդ կարեւոր հանգամանքը. Զաքարյանների ու Համագասպանների խնամիրության վարկածը հայտնելիս՝ Գ. Հովսէփյանը հիմնվել է Դսեղի Բարձրաքաշ վանքի մի վիմագրի սխալաշատ վերծանության վրա եւ նույնիսկ չի փորձել պարզել Նրջիսի կարծեցյալ ամուսնու անունը: Այդ արձանագրության նոր հրատարակությունից պարզ է դառնում Նրջիսի եւ թաղյալ ամուսնու անունը՝ Սադուն (տե՛ս Գ. Սարգսյան, Նոր նյութեր Մամիկոնյան-Համագասպան իշխանական տան վերաբերյալ, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» /հաս. գիտ./, 1979, № 3, էջ 75): Մամրակրկիտ քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ Սադունը ԺԲ դ. վերջին ո՛չ համապատասխան տարիք եւ ո՛չ էլ դիրք չէր կարող ունենալ՝ Զաքարյանների փեսան դառնալու համար:

11. Թամթի (Թամթա), դուստր Սարգիս Մեծի (ծնվել է թերեւս, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել 1229 թվականից հետո): Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Իվանե Ա-ն ցանկանում էր նրան կնուխյան տալ Լիպարիտ Օրբելյանին, բայց աթաբեկին կանխեց իշխանաց իշխան Բուբան<sup>1</sup>: Իշխանուհուն էր պատկանում Ալիբաբադ ամրոցը, որը 1229 թվականին գրավեց խորեզմշահ Ջալալ ադ-դինը<sup>2</sup>: Ինչպես երեւում է, Թամթին եւս ժառանգներ չի թողել: Չի հիշատակվում նաեւ վիմագիր արձանագրություններում եւ, թերեւս, դա է պատճառը, որ հետազոտողները շտապել են նրան նույնանձնացնել քույրերից Խորիշահի հետ<sup>3</sup>:

12. Թամթա, դուստր Իվանե Ա-ի (ծնվել է, թերեւս, ԺԲ դ. 80-90-ական թվականներին, մահացել 1244 թվականից հետո): Իշխանագոստերը եւս նպատակահարմար է դասել «ավագ» (առաջին) Ջաքարյանների թվին, քանի որ նա վաղ տարիքում խզել է տոհմական կապերը եւ հետագայում չի ազդել Ավագյան տան ձեւավորման վրա:

Թամթայի կյանքի ընթացքը կտրուկ կերպով փոխվեց 1210 թվականին, երբ դեպի Խլաթ կատարած անհաջող արշավանքից հետո հաշտության պայնագիր կնքվեց ու Թամթան կնուխյան տրվեց Այուբյան Մալիք ալ-Աուհադին: 1210/11 թվականին, Մալիք ալ-Աուհադի մահվանից հետո, Խլաթի ամիրայությունը եւ Թամթան անցան նրա եղբայր Մալիք Աշրաֆին<sup>4</sup>: Խլաթը Այուբյաններին էր պատկանում նաեւ 1230 թվականին, երբ քաղաքը գրավեց խորեզմշահ Ջալալ ադ-Դինը՝ կնուխյան առնելով Թամթային<sup>5</sup>: 1231 թվականին Ջալալ ադ-Դինը սպանվեց Ամիրի մոտակայքում, իսկ խորեզմշահին հետապնդող մոնղոլական առաջապահ զորաջոկատը գերի վերցրեց Թամթային եւ ուղարկեց խանական նստավայր<sup>6</sup>: Նա վերադարձավ բազում տարիների գերությունից, երբ 1244 թվականին մոնղոլները գրավեցին Խլաթը, շրջակա տարածքները եւ Թուսուղան թագուհու խնդրանքով հանձնեցին Մալիք Աշրաֆի ժառանգորդուհի համարվող Թամթային<sup>7</sup>:

1 Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, Էջ 291: Եթե պատմիչը հաղորդում է իրականում հնարավոր ամուսնության մասին (Լիպարիտ Օրբելյանը, որը նոր էր վերադարձել տեւական պանդխտությունից, դժվար թե երագեր ամենագոր Իվանե Ա-ի քրոջ հետ ամուսնության մասին), ապա նա, հավանաբար, մոտավորապես երկու-երեք տասնամյակով դեպի իր սարած ժամանակաշրջան է տեղաշարժում իրադարձությունները: ԺԳ դ. սկզբին Թամթին, թերեւս, նորահարսի համար առաջացած տարիք պետք է ունենար (հմմ. քույրերի եւ եղբայրների մասին տվյալները):

2 Տե՛ս **Мухаммад ан-Насави**, с. 226. Խորեզմշահի կենսագիրը չի մատնացուցում նրա տեղը Ջաքարյանների տոհմաձառում՝ հիշատակելով նրան սոսկ որպես «մալիքա»: Իվանե Ա-ի համաձայն դուստրն այդ ժամանակ գտնվում էր Խլաթում (այս հանգամանքը վրիպել է «Թամթա մալիքա»-ին Իվանե Ա-ի դուստր համարող Իվ. Ջավախիշվիլու ուշադրությունից, **ო. ჯავახიშვილი, ქართველი ერის ძებნა**, III, გვ. 73). Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ պատմիչը նկատի է ունեցել Իվանե Ա-ի քույր Թամթային:

3 Տե՛ս, օր.՝ **M. Brosset, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie**, p. 273; **Հ. Ղ. Ալիշան**, *Հայագատում*, հտ. Բ, էջ 447 եւ այլն:

4 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 164-165:

5 Նույն տեղում, էջ 228:

6 Նույն տեղում, էջ 292: Մոնղոլների մոտ խորեզմշահի կանանց գերի ընկնելու մասին հաղորդում է նաեւ Ջալալ ադ-Դինի կենսագիր ան-Նասավին, ընդ որում՝ չափազանց ինքնատիպ ձեւով: Իբրեւ թե՛ խորեզմշահն այդ մասին նախապես իմացել է իր տեսած մի երազը սեկնաբանելու միջոցով (**Мухаммад ан-Насави**, с. 290):

7 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 292: Մոնղոլների հեռանալուց հետո, 1232-1233 թվականներին, Այուբյաններից Խլաթը նվաճել էր Իկոնիայի սուլթանությունը:

Այսպիսով, Զաքարյան իշխանուհին այնպիսի ողբասական է ապրել, որն իր կնիքը պետք է թողներ նրա դավանական-մշակութային կերպարի վրա: Հավանաբար, Թամթան շարունակել է քրիստոնյա մնալ, ընդ որում, առավել հավանական է, որ նա քաղկեդոնական է եղել: Հոգածություն է ցուցաբերել Տարոնի հայկական վանքերի նկատմամբ: Եթե հավատանք Կիրակոս Գանձակեցուն, ապա Թամթայի միջնորդության շնորհիվ Այուբյանները «առաւել մեծարէին զվիրս, զի անհարկ էին նոքա յամենայն քաղաքս նոցա եւ յԵրուսաղէմ եւս»<sup>1</sup>:

## ԹՄՈՂՎԵՑԻՆԵՐ

1. Սարգիս Ա Թմոզվեցի, որդի Վահրամ Ա-ի (ծնվել է շուրջ ԺԲ դ. կեսերին, մահացել 1202 թվականից հետո, հավանաբար՝ մինչեւ 1210-1211 թվականները): Եղբոր եւ հորեղբորորդիների զինակիցն էր դեպի Հյուսիս-արեւելյան Հայաստան կատարած արշավանքների միջոցին<sup>2</sup>: «Ի Պարսից» հայոց զավառներն ու բերդերը ազատագրելու գործում Սարգիս Ա Թմոզվեցու վաստակը չի վրիպել նաեւ Կիրակոս Գանձակեցու ուշադրությունից<sup>3</sup>: 1190/91 թվականին, Յուրի Բոգոլյուբսկու (Գեորգի Թուս) գլխավորած ավատատիրական ապստամբության ժամանակ, Սարգիսը հանդես եկավ թագավորական իշխանության պաշտպանությամբ<sup>4</sup> եւ ստացավ Թմոզվի բերդը Զավախքում<sup>5</sup>, ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին նա Թամար թագուհու նշանավոր զորահրամանատարներից էր, Շամքորի ճակատամարտի տարած հաղթանակի լրաբերը<sup>6</sup>, Կարսի գրավումը նախապատրաստողներից մեկը<sup>7</sup>:

Ինչպես երեւում է, սկսած ԺԲ դ. 90-ական թվականներից, Սարգիս Ա Թմոզվեցու գործունեությունը ծավալվել էր Զավախքում. Շալվա Ախալցխեցու հետ միասին նա այդ երկրամասի կողմնակալներից էր<sup>8</sup>: 1210/1211 թվականին դեպի Իրանի քաղաքները ձեռնարկված արշավանքին մասնակցում էր արդեն Թաղիադին

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 165:

2 Տե՛ս *յճրտալոս Եւրոպայի*, II, թ. 39-40.

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 163: Պատմության վերջին հրատարակությունում բնագիրը հետեւյալ տեքստ ունի. «Այսպէս եւ միւս իշխանն, Զաքարէ անուն [նկատի ունի Բլու Զաքարեհն – Հ. Մ.], եւ եղբայրն իր Սարգիս, եւ միւս Սարգիս, հայրն Ծալուէի եւ Իւանէի, ազգականք մեծ իշխանացն»: Ընդգծված դարձվածքը, որը բացակայում է Պատմության ձեռագրերի մի մասում, թվում է, թէ կյանքի է կոչվել որպէս Սարգիս Ա Թմոզվեցու անձնավորության մասին անհրաժեշտ բացատրություն: Հավանաբար, աշխատությունն ընդօրինակողները ցանկացել են բացատրել Սարգիս Մեծ Զաքարյանի եւ Սարգիս Ա Թմոզվեցու հարավոր շփոթը ու նախազաղախար որեւէ օրինակի լուսանցքում ավելացրել են «եւ միւս Սարգիս» բառերը. այստեղից էլ այդ արտահայտությունը ներմուծվել է բուն տեքստ: Եթէ նույնիսկ «եւ միւս Սարգիս» դարձվածքը համարենք հեղինակային, հնարավոր չէ շրջանցել Կիրակոս Գանձակեցու ուղղակի վկայությունն այն մասին, որ եղել են Զաքարյանների ազգակից իշխաններ՝ Սարգիս, Ծալվա եւ Իվանն անուններով: Ուստի մնում է Կիրակոսի հաղորդման ամենահավանական ընկալումը՝ Ծալվան եւ Իվանն եղել են Սարգիս Ա Թմոզվեցու որդիները:

4 Տե՛ս *յճրտալոս Եւրոպայի*, II, թ. 53. Հենց Սարգիսն էլ ավետեց ապստամբների նկատմամբ թագավորական զորքերի տարած հաղթանակը:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 55:

6 Նույն տեղում, էջ 126, 128:

7 Նույն տեղում, էջ 143:

8 Նույն տեղում, էջ 129:



Թմոգվեցին<sup>1</sup>, հետեւաբար, կարելի է ենթադրել, որ Սարգիս Թմոգվեցին մինչ այդ կնքել էր իր մահկանացուն:

2. Շալվա, որդի Սարգիս Ա Թմոգվեցու (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. վերջին քառորդում, մահվան ժամանակն անհայտ է մնում): Բացի Կիրակոս Գանձակեցու վերոհիշյալ վկայությունից՝ Շալվան, հնարավոր է, հիշատակվում է նաև ԺԳ դ. սկզբի «Թարաստը» ժողովածուում<sup>2</sup>: Այս աղբյուրում ներկայացված տիտղոսները կասկած չեն թողնում, որ Շալվան եւս ակնհայտոր զորահրամանատար է եղել: Բացառված չէ, որ հենց այս Շալվային նկատի ունի Իբն ալ-Ասիրը՝ անվանելով նրան «Դվինի իշխան (ամիր)»<sup>3</sup>:

3. Իվանե, որդի Սարգիս Ա Թմոգվեցու (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. վերջին քառորդում, մահվան ժամանակն անհայտ է մնում): Այս անձնավորությունը հայտնի է միայն Կիրակոս Գանձակեցու հաղորդումից:

4. Թաղիադին, որդի Սարգիս Ա Թմոգվեցու՝ (ծնվել է, ամենայն հավանականությամբ, ԺԲ դ. վերջին քառորդում, մահացել 1210/11 թվականից հետո): Հերթական զորավարը Թմոգվեցիների տոհմում: Թամար թագուհու առաջին պատմիչը բնորոշում է նրան որպես «խիզախ այր»<sup>4</sup>: Բասենի ճակատամարտում աչքի ընկնելուց հետո Թաղիադինը մասնակցեց 1210/11 թվականի արշավանքին դեպի Իրանի քաղաքները<sup>5</sup>:

Թմոգվեցիների մասին տեղեկությունները այդուհետև ընդհատվում են շուրջ երկու տասնամյակով:

5. Սարգիս Բ Թմոգվեցի, որդի Թաղիադինի՝ (ծնվել է ԺԲ դ. վերջին կամ ԺԳ դ. սկզբին, մահացել 1260/61 թվականից հետո): Գլխավորում էր Թմոգվեցիների իշխանական տունը մոնղոլների 1236 թ. գլխավոր արշավանքի միջոցին: Ինչպես եւ ժամանակի իշխանների մեծ մասը, նա եւս կամավոր հնազանդվեց նվաճողներին<sup>6</sup>: 1247 թվականին նա այն ավատատերերի շարքերում էր, որոնք հավաքվեցին Կոխտաս-Թավիում եւ ապստամբելու որոշում ընդունեցին<sup>7</sup>: Հետագայում եւս Սարգիս Բ-ն մշտապես գտնվում էր Վրացական թագավորությունում ծավալված քաղաքական իրադարձությունների կենտրոնում: Վահրամ Գագեցու հետ միասին նա մեկն էր Լաշա-Գեորգիի որդի Դավթին փնտրելու հարցում նախանձախնդիր իշխաններ

1 Նույն տեղում, էջ 104-105: Այս փաստն, այնուամենայնիվ, վերջնական եզրակացություն անելու հնարավորություն չի ընձեռում: Նույն ժամանակահատվածում կարող էին գործել ընտանիքի երկու սերնդի ներկայացուցիչներն էլ:

2 Տե՛ս **Ժ. ԹԱՐԱՍՏ**, նշվ. աշխ., էջ 29: Նույնամանացումն աներկբայելի համարել չի կարելի, որովհետեւ այդ ժամանակահատվածում գործում էր նաեւ նշանավոր Շալվա Ախալցիխեցին, որի հայրանունն անհայտ է: Մ'. Թոդուայի կարծիքով՝ ժողովածույում նկատի է առնված հենց Շալվա Ախալցիխեցին (տե՛ս նույն տեղում, էջ 88, ծնթ. 153):

3 **Իբն ալ-Ասիր**, էջ 313:

4 *Ջերտլոս Եւրոպացի*, II, թ. 96.

5 Նույն տեղում, էջ 104-105: Վրացի պատմիչը հաղորդում է Ջաքարյանների փոխհարաբերությունները բնութագրող մի միջադեպի մասին: Ինքնագույն գործելու համար Ջաքարեն խիստ հանդիմանել էր Թաղիադինին:

6 Տե՛ս *Ջերտլոս Եւրոպացի*, II, թ. 191; *Վրաց ժամանակագրություն*, էջ 76:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 215 եւ էջ 93:

րից<sup>1</sup>: Արքայազնին Վրաստան բերելու նպատակով Սարգիսը ոչ միայն անձամբ մեկնեց Իկոնիայի սուլթանություն, այլև ուղեկցեց ապագա Ուլու Դավթին՝ դեպի մոնղոլական Հորդա ղեկավարին ուղեւորության միջոցին<sup>2</sup>: Վրաց ժամանակագրությունն ընդգծում է այն աջակցությունը, որը մեծ խանի նստավայրում ցուցաբերեց Սարգիս Բ-ն Ուլու Դավթին, Ռուսուդանի որդի Դավթի կողմնակիցների հետ բանավեճերի պահին<sup>3</sup>: Ավելի քան մեկ տասնամյակի լուծված հետո, վրաց պատմիչը Սարգիս Բ-ին հիշատակում է 1260/61 թվականի դեպքերի, Ալա Թեմուրի գլխավորած մոնղոլական ջոկատի՝ Զավախքով անցնելու առիթով<sup>4</sup>:

## ՎԱՅՐԱՄՅԱԼՆԵՐ (ԳԱԳԵՑԻՆԵՐ)

1. Բլու Զաքարե, որդի Վահրամ Ա-ի (ծնվել է մոտավորապես ժԲ դ. կեսերին, զոհվել է 1204/1205 թվականին): Զաքարեն կրում էր Բլու մականունը<sup>5</sup>, հնարավոր է, Զաքարե Բ-ից վաղ է ծնվել, սակայն նրա եւ ընդհանրապես՝ Վահրամյանների բարձրացումն ավելի ուշ եւ դանդաղ է տեղի ունեցել:

1176-1177 թվականներին Զաքարեն ուղեկցում էր հորեղբորը եւ նրա հետ միասին, թողնելով ապստամբների ճամբարը, միացավ թագավորական զորքերին<sup>6</sup>: 1185-1187 թվականներին, Թամար թագուհու եւ Գեորգի Ռուսի ամուսնությունից հետո, վերսկսվեցին դեպի Հայաստան կատարվող արշավանքները: Դրանցից մեկը՝ դեպի Դվին, գլխավորում էին Սարգիս Ա Մեծի եւ Վահրամ Ա-ի որդիները. «ավագները՝ Զաքարիան եւ Զաքարիան՝ արքունական ծառայության անցածները, Իվանեն եւ Սարգիսը՝ արքունական ծառայության չանցածները»<sup>7</sup>: Զաքարյան շորս իշխաններն աչքի ընկան նաեւ «Գանձակից ներքեւ մինչեւ Բելական եւ հետո Նրասիսից վերեւ մինչեւ Մասիս» ձեռնարկած արշավանքի ժամանակ<sup>8</sup>: Այնուամենայնիվ, Բլու Զաքարեն ընդհուպ մինչեւ 1191 թվականը մնում է Վարդան Դադիանի տիրույթների կազմում կալվածք ունեցող «ազատորդի»-ներից մեկը, հավանաբար՝ նաեւ ստորական<sup>9</sup>: Ապացուցելով իր նվիրվածությունը կենտրոնական իշխանությանը՝ Բլու Զաքարեն այդ ապստամբության ճնշումից հետո ստացավ Գագ ամրոցը, որը մինչ այդ պատկանում էր Վարդան Դադիանի որդի Իվանեին: Բացի այդ՝ Թամար թագուհին նրան շնորհեց նաեւ «Քուրդվաճառից մինչեւ Գանձակ [ընկած տարածքը] բազում

1 Տե՛ս նույն տեղեկում, էջ 217, էջ 95:

2 Տե՛ս նույն տեղեկում, էջ 218-220, էջ 96:

3 Տե՛ս նույն տեղեկում, էջ 224-225, էջ 99:

4 Տե՛ս նույն տեղեկում, էջ 252, էջ 174: Իրադարձությունների ժամանակագրության մասին տե՛ս Օ. ԽճճՅԱՆՍԿԻ, *Ջրաշրջանի շրջանակում*, III, թ. 178-181.

5 Արտ. Շահնազարյանն առաջարկում է Պլու Զաքարեի ընկալել որպես Պլուզ (փոքրիկ) Զաքարե: Ուսումնասիրողի կարծիքով՝ այդ մականունը նրան կարող էր տրվել Զաքարե Բ-ից տարբերելու նպատակով (Ա. Ի. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 48-49): Այս կուսիումը, անշուշտ, գայթակղիչ է, սակայն մականվամբ բնագրում բերված սկզբնատառը՝ «Բլու» եւ ոչ թե «Պլու» (տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 21, 29), հուշում է մեկ այլ վարկած: Հայ պատմիչն ավանդել է վրացերենով ստուգաբանվող մականուն՝ ծլոյ Ֆաշարո – Կակազ Զաքարիա:

6 Տե՛ս *Ջրաշրջանի շրջանակում*, II, թ. 19.

7 Նույն տեղում, էջ 39:

8 Նույն տեղում, էջ 40:

9 Նույն տեղում, էջ 51:

լրիվ հարկատու եւ բազում կիսով հարկատու քաղաքներով, բերդերով ու գյուղերով»<sup>1</sup>: Վրաց արքունիքն այդպիսով ճանաչում էր Բլու Զաքարեի իրավունքները այն գավառների նկատմամբ, որոնք հետագայում աստիճանաբար նվաճվելու էին Վահրամյանների կողմից<sup>2</sup>:

Բլու Զաքարեն ականավոր զորահրամանատար էր, Շամքորի եւ Բասենի ճակատամարտերի մասնակից<sup>3</sup>, Թամարի օրոք նա գլխավորում էր Գագի կողմնակալությունը<sup>4</sup>, որի խնդիրն էր Ելտկուզյան աթաբեկության սահմանամերձ տարածքների հետախուզումը, մերձակա բերդերի գրավումը, ինչպես նաեւ հարավ-արեւելյան գավառների պաշտպանությունը:

Զաքարեն սպանվել է հիշրեի 601 թվականին (1204 թ. օգոստոսի 20 – 1205 թ. օգոստոսի 17), երբ նրա գլխավորած զորախումբը պարտություն կրեց այդ տարում դեպի «Խլաթի երկիրը» կատարած երկրորդ արշավանքի ժամանակ<sup>5</sup>:

Բլու Զաքարեի կինը՝ Խաթունը, սերում էր Կենտրոնական Արցախի Դեսուձյան իշխանատոհմից<sup>6</sup>:

2. Վահրամ Բ, որդի Բլու Զաքարեի (ծնվել է ԺԲ դ. վերջին քառորդում, մահացել 1247-1252 թվականների միջակայքում): ԺԳ դ. առաջին իսկ տասնամյակում Վահրամ Գագեցին արդեն փորձված զորավար էր եւ լիարժեք կերպով փոխարինեց հորը: Մասնավորապես 1210/11 թվականին նա ուղեկցում էր Զաքարե Բ-ին եւ Իվանե Ա-ին դեպի Իրանի խորքերն արշավելիս<sup>7</sup>: Վրաց արքունիքում նրա բարձրանալը պայմանավորող գործոններից էր սերտ համագործակցությունը Զաքարյանների մյուս տոհմաճյուղերի ներկայացուցիչների հետ: Այսպես, Իվանե Ա-ի աթաբեկ դառնալուց հետո Վահրամ Գագեցուն հանձնվեց մսախուրթուխուցեսի պաշտոնը<sup>8</sup>, հորեղբորորդու օգնությամբ էլ Վահրամյանները գրավեցին Շամքորը<sup>9</sup>: Վահրամը բարձր հեղինակություն ուներ ինչպես Հյուսիս-արեւելյան Հայաստանում եւ ողջ Վրաց թագավորության ներքին կյանքում<sup>10</sup>, այնպես էլ հարեւան մահմեդական կազմավոր-

1 Նույն տեղում, էջ 54:

2 Տե՛ս Ա. Ի. Ծահնագարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 62-64:

3 Տե՛ս *յերտլոս Եւրոպեացի*, II, թ. 70, 96, 137.

4 Նույն տեղում, էջ 129:

5 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 283-284; Gregory Abul Faraj, p. 361.

6 Տե՛ս Կ. Վաֆադարյան, *Հաղթատ*, էջ 220; Ա. Յակոբեան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը...*, էջ 298-299:

7 Տե՛ս *յերտլոս Եւրոպեացի*, II, թ. 103, 109.

8 Նույն տեղում, էջ 110: Վերջին տարիներին Թամար թագուհու մահվան ավանդական թվականը (1213) եւ աթաբեկության ինստիտուտի հաստատման ժամանակագրությունը վերանայվում են. առաջարկվում են 1207-1210 թվականները (տե՛ս *Եւրոպեացի Եւրոպեացի Եւրոպեացի Եւրոպեացի Եւրոպեացի*, էջ 239, ծմբ. 2): Ուստի հնարավոր է, որ Վահրամ Գագեցուն մսախուրթուխուցեսության շնորհիվ տարեթիվը եւս ճշգրտման կարիք է գոյում:

9 Տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 184; Ստեփանոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 287:

10 Ըստ ամենայնի՝ նրան նկատի ունի Ստեփանոս Օրբելեանը (*Պատմություն*, էջ 260), երբ պատմում է Դավիթում Իվանե Ա-ի գումարած ճշմանավոր դատական ատյանի մասին (տե՛ս Ա. Ի. Ծահնագարյան, *Վահրամյանների իշխանությունը*, էջ 86-87): Վահրամ Գագեցին այն փոքրաթիվ սեծատոհմիկներից էր, որոնք համարձակվում էին հանդիմանել Լաշա-Գեորգիին՝ թագավորին անվաղ վարք ու բարքի համար (տե՛ս *յերտլոս Եւրոպեացի*, II, թ. 155).

րումներում<sup>1</sup>: Թեև Վահրամյանների իշխանությունը ծանր փորձությունների ենթարկվեց մոնղոլների հետախուզական արշավանքների եւ խորեզմշահ Ջալալ ադ-Դինի ներխուժումների տարիներին<sup>2</sup>, այնուամենայնիվ ԺԳ դ. 30-ական թվականներին Վահրամ Գագեցին համարվում էր առավել ազդեցիկ դեմքերից մեկը վրաց արքունիքում: Բացառիկ էր նրա դերը Ուլու Դավթին գահ բարձրացնելու գործում<sup>3</sup>:

Վերջին անգամ Վահրամը հիշատակվում է 1247 թվականին, Կոխտաս-Թավրում հավաքված ապստամբ իշխանների թվարկման առիթով<sup>4</sup>: Վախճանված պետք է լինեն մինչեւ 1252 թվականը, երբ որպես Վահրամյանների իշխանության տիրակալներ հանդես են գալիս որդին եւ թոռները<sup>5</sup>:

3. Աղբուղա, որդի Վահրամ Գագեցու (ծնվել է ԺԳ դ. սկզբին, մահացել 1252 թ. հետո): Որպես զինվորական գործիչ հանդես է եկել դեռեւս ԺԳ դ. 30-ական թթ.: 1236 թվականին նա պատրաստվում էր օգնության հասնել մոնղոլների կողմից շրջապատված Շամքորին, բայց հայրն արգելեց կատարել այդ քայլը<sup>6</sup>: Հայր ու որդի, մոնղոլներին հնազանդություն հայտնելուց հետո<sup>7</sup>, մասնակցում էին դեպի Իկոնիայի սուլթանություն ձեռնարկված արշավանքներին: Վահրամյան իշխանը աչքի ընկավ հատկապես Չմանկատուկի ճակատամարտում<sup>8</sup>: Նա Կարինում գերված հայ հոգեւորականներին փրկագնողներից մեկն էր<sup>9</sup>: Հոր աջակիցներից էր Ուլու Դավթին գահ բարձրացնելու գործում<sup>10</sup>: Գլխավորում էր Վահրամյանների իշխանությունը դեռ 1252 թվականին<sup>11</sup>: Հետագայում նա այլեւ չի հիշատակվում աղբյուրներում:

4. Վահրամ Գ, որդի Աղբուղայի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել է, թերեւս, ԺԳ դ. սկզբին): Անունից է երեւում, որ Աղբուղայի ավագ որդին էր (ստացել էր պապի անունը), նաեւ՝ աղբյուրներում եղբայրների թվարկման հաջորդականությունից<sup>12</sup>: ԺԳ դ. 50-ական թվականներին, հոր հետ միասին, վաճառել էր Խովլե գյուղը<sup>13</sup>: 1284 թվականին Դեմետրե Բ-ի ստացած հայկական երկրամասերի մեջ էր մտնում նաեւ Վահրամյանների իշխանությունը<sup>14</sup>, որին, հավանաբար, մինչ այդ տիրում էին Վահրամը եւ երկու եղբայրները:

---

1 Հավանաբար, Վահրամ Գագեցուն են վերաբերում այն շուպլ տիտղոսները («գորքերի հրամանատար, խազարի արքա. Ափխազի ամիրաների պապ» եւ այլն), որ թվարկում է «Թարասաղ» պարսկերեն անամկագրական ձեռնարկի կազմողը (տե՛ս Ս. ԹԱՐԵՍՅԱՆ, ԱԶՎ. ԱԶԽ., էջ 88, ՃԱՔ. 155):

2 Տե՛ս Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 90-106:

3 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 238, 288-289; Գրիգոր վարդապետ, էջ 33-34; Երեմյան Երեմյան, II, ՅՅ. 217-219; Վրաց ժամանակագրություն, էջ 95-96:

4 Տե՛ս Երեմյան Երեմյան, II, ՅՅ. 215; Վրաց ժամանակագրություն, էջ 93:

5 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 163; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 264:

6 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 242:

7 Նույն տեղում, էջ 263:

8 Տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 28-29:

9 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 280, հմմ. էջ 284:

10 Նույն տեղում, էջ 289:

11 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 264:

12 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 163; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 264:

13 Տե՛ս Բ. Դ. Дондуа, ԱԶՎ. ԱԶԽ., էջ 55-59:

14 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն, էջ 312:

5. Զաքարե, որդի Աղբուղայի (ծնվել է, հավանաբար, ժԳ դ. երկրորդ քառորդում, մահացել, թերեւս, ժԳ դ. վերջին – ժԴ դ. սկզբին): Եղբայրների հետ միասին կառավարում էր Վահրամյանների իշխանությունը ժԳ դ. երկրորդ կեսին:

6. Իվանե, որդի Աղբուղայի (ծնվել է, հավանաբար, ժԳ դ. երկրորդ քառորդում, մահացել, թերեւս, ժԳ դ. վերջին – ժԴ դ. սկզբին): Ավագ եղբայրների մասին ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաեւ Իվանեին:

## ԱՎԱԳՅԱՆ ՏՈՒՆ

1. Ավագ (Սարգիս), որդի Իվանե Ա-ի (ծնվել է ժԲ դ. 80-90-ական թվականներին, մահացել 1250 թվականին): Պատմելով Զաքարե Բ-ի մահից հետո որք մնացած Շահնշահ Ա-ի մասին, Կիրակոս Գանձակեցիին ավելացնում է. «անոյց Իւանէ ընդ որդւոյ իւրում Սարգսի, զոր Աւագն կոչէին»<sup>1</sup>: Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ Ավագ կրկնանունը Իվանե Ա-ի որդուն տրվել էր մյուս՝ կրտսեր Սարգսից (Շահնշահ Ա-ից) տարբերելու համար: Ընդ որում, ստացվում է, որ Ավագն ավելի վաղ ծնված պետք է լիներ, առնվազն՝ մինչեւ 1197 թվականը:

Ավագն ազդեցիկ դեմք էր վրաց արքունիքում դեռեւս Զալալ ադ-Դինի արշավանքների միջոցին: Ըստ Վրաց ժամանակագրության՝ խորեզմշահը դեսպանի միջոցով այսպես է գնահատել Ավագի դիրքը. «Դու ես թագավորի վեզիրների ավագը, վերակացուն Վրաստանի»<sup>2</sup>: Պատմիչը, անշուշտ, վրիպում է թույլ տալիս Զալալ ադ-Դինի եւ Ավագի հանդիպման առիթով վերջինիս «աթաբեկ եւ ամիրսպասալար» անվանելիս<sup>3</sup>: Մյուս կողմից, սակայն, Իվանե Ա-ի գառամյալության եւ ակտիվ գործունեությունից հրաժարվելու պարագայում, հատկապես՝ 1225 թվականից հետո, հենց Ավագը պետք է առաջնային դիրք գրավեր վրաց արքունիքում: Ի դեպ, նրա անձի կարեւորությունը երեւում է նաեւ խորեզմշահի կենսագրի աշխատությունից<sup>4</sup>:

Ավագը 1227 թվականից մինչեւ իր մահը վարում էր (որոշ ընդմիջումներով) վրացական թագավորության ամիրսպասալարի պաշտոնը<sup>5</sup>, իսկ ժԳ դ. 40-ական թվականների սկզբին Ռուսուղան թագուհին նրան հանձնեց աթաբեկությունը<sup>6</sup>: Որպես աթաբեկ՝ Ավագը ժԳ դ. 40-ական թվականներին ստորագրել է վրացական երկու փաստաթուղթ<sup>7</sup>:

Մոնղոլական գլխավոր արշավանքի միջոցին վրաց արքունիքի ամենաազդեցիկ պաշտոնյա համարվող Ավագն ամրացել էր Կայեն բերդում եւ առաջինը հանձն-

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 187:

2 *Ջրտոլոս Եւոչրքեմ*, II, ՅՅ. 172; *Վրաց ժամանակագրություն*, էջ 62:

3 Տե՛ս օ. Խաչեմժեւոլո, *Ջրտոլեւո յրոս օսՅորոս*, III, էջ 56; *Վրաց ժամանակագրություն*, էջ 197, ծնթ. 24:

4 *Мухаммад ан-Насави*, с. 225, 237.

5 Տե՛ս *Ջրտոլոս Եւոչրքեմ*, II, ՅՅ. 172, 180, 182; *Վրաց ժամանակագրություն*, էջ 62, 68, 70, *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 70:

6 Տե՛ս *Ջրտոլոս Եւոչրքեմ*, II, ՅՅ. 197; *Վրաց ժամանակագրություն*, էջ 80: Նկարագրված իրադարձությունների հաջորդականության եւ ժամանակագրության մասին տե՛ս օ. Խաչեմժեւոլո, *Ջրտոլեւո յրոս օսՅորոս*, III, ՅՅ. 112-119.

7 *Ջրտոլեւո Տամարտոլոս Եւոչրքեմ*, III, ՅՅ. 157, 159.

վեց նվաճողներին<sup>1</sup>: Դրա փոխարեն Չարմազան նոյինը «եւ զամենայն աշխարհ նորա ետ նմա, եւ այլ եւս աւելի»<sup>2</sup>: Շնորհակալ աթաբեկն առաջնորդում էր մոնղոլներին եւ Անին գրավելիս<sup>3</sup>, եւ մասնակցում էր Սամշվիլդեի առմանը<sup>4</sup>: Հետագայում եւս, շնայած որոշակի դժգոհությանը եւ բախումներին<sup>5</sup>, Ավագի եւ մոնղոլների փոխհարաբերությունները բավականաչափ սերտ էին մնում: Նրա դերը նկատելի էր 1236 թվականին, երբ նրա օրինակին հետեւելով մոնղոլներին հնազանդություն հայտնեցին հայ եւ վրացի գրեթե բոլոր իշխանները, ինչպես նաեւ 1249 թվականին ձեռնարկված ապստամբության փորձը խափանելիս<sup>6</sup>: Ավագի միջնորդությունը կարեւոր գործոն էր Ռուսուդան թագուհու եւ մոնղոլների միջեւ ընթացող ու բարեհաջող ավարտված բանակցությունների պահին<sup>7</sup>: Հորդայից վերադառնալով՝ նա անարգեց եւ երկրից հալածելով դուրս արեց անթագավորության ժամանակահատվածում արքա դառնալու հավակնություն ներկայացրած Եգարսլան Բակուրցիխեցուն<sup>8</sup>:

Վերստին վրաց արքունիքի ամենաազդեցիկ պաշտոնյան էր փոթորկուն կյանքի վերջին տարիներին<sup>9</sup>:

Օրինական կնոջից՝ Ռաճայի էրիսթավներ Կախաբերիձեններից սերող Գոնցայից (նաեւ՝ Գվանցա), Ավագն ուներ դուստր, իսկ «ի պոռնկութենէ՝ որդի մի երեխայս... զոր առեալ քոյր նորա սնուցանէր»<sup>10</sup>:

Ավագը եւս, երկաբնակ լինելով հանդերձ<sup>1</sup>, կտրված չի եղել հայոց եկեղեցուց: Նա իր հեջուբ Գրիգոր Տղային որպես «տեղի գերեզմանի» հանձնեց Նոր Գետիկի

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 254-256; Վարդան Արեւելցի, էջ 189-190; Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 296; *յնթադրուած Երեւանի Գեորգի Երանցի, II, թ. 187-190*; *Վրաց ժամանակագրություն*, էջ 73-75:

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 257:

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս *յնթադրուած Երեւանի Գեորգի Երանցի, II, թ. 196*; *Վրաց ժամանակագրություն*, էջ 79: Այս փաստի մասին «Վրաց ժամանակագրություն»-ը հաղորդում է մոնղոլների եւ Ռուսուդանի Դավիթ որդու միջեւ համաձայնության ձեռք բերման առիթով, ուստի եւ առանձնակի ուշադրության չի արժանացել հետագոտողների կողմից: Էլիկում Օրբելյանի օրինակը, ինչպես նաեւ Կիրակոս Գանձակեցու ուղղակի վկայությունը «այլ եւս աւելի» «աշխարհ» ստանալու մասին, եմթադրել են տալիս, թե Սամշվիլդեի որոշ ժամանակ (մոտավորապես 1236-1242/1243 թթ.) հանձնված է եղել Ավագին:

5 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 264-265, 312-313:

6 Նույն տեղում, էջ 263, 319-320: Օրինաչափ է, որ Ավագը մոնղոլական զորքերի կազմում մասնակցում էր Իկոնիայի սուլթանության գրավմանը (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 280, 284):

7 Տե՛ս նույն տեղում, էջ 288, 316; *յնթադրուած Երեւանի Գեորգի Երանցի, II, թ. 192, 197*; *Վրաց ժամանակագրություն*, էջ 76, 80:

8 Տե՛ս *յնթադրուած Երեւանի Գեորգի Երանցի, II, թ. 225*; *Վրաց ժամանակագրություն*, էջ 100: Ավագի վերադարձը, հավանաբար, տեղի է ունեցել 1247 թվականին: Եմթադրվում է, որ նրա միջնորդությամբ էլ մոնղոլներն ազատ արձակեցին Կոխտաս-թավիի հավաքի մասնակիցներին (տե՛ս **Հ. Ստեփանյան**, *Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ*, Եր., 1990, էջ 81):

9 «Ի ժամանակս թաթարին, ի տիրութեան սե՛ծ խաղաղարար Աւագին». այսպես են բնորոշվում այդ տարիները 1249 թվականին Արցախում գրված մի արձանագրությունում, տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 93:

10 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 321; *յնթադրուած Երեւանի Գեորգի Երանցի, II, թ. 237*; *Վրաց ժամանակագրություն*, էջ 109: Ժամանակին, Բաթո խանն Ավագին իր բարեհաճությանն արժանացնելիս նաեւ մոնղոլ կին էր «շնորհել» նրան (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 263):

վանքը<sup>2</sup>, հետեւաբար համարվում էր այդ հոգեւոր կենտրոնի «տէր»-հովանավոր: Կիրակոս Գանձակեցին նրա անունն առաջինն է հիշատակում այն հայ իշխանների շարքում, որոնք համաձայնեցին ընդունել Կոստանդին Ա Հայոց կաթողիկոսի «զհրամանս կանոնականս»<sup>3</sup>: Մոնղոլների դեպի Իկոնիայի սուլթանություն կատարած արշավանքների ժամանակ Ավագի ջանքերով փրկագնվեցին բազմաթիվ հայերեն ձեռագրեր, այդ թվում՝ ԺԲ դարի մի Ավետարան, որը նա նվիրեց Մարի իշխան Գրիգոր Դոփյանին<sup>4</sup>:

Ավագը՝ «այր անագահ եւ պատերազմասէր եւ աղօթական», վախճանվել է 1250 թվականին եւ թաղվել Պղնձահանքի վանքում<sup>5</sup>:

2. Խոշաք, դուստր Ավագի (ծնվել է, մինչեւ 1236 թվականը, մահացել 1297 թվականից հետո): 1236 թվականին, երբ մոնղոլները պաշարել էին Կայենը, հայրը Խոշաքին հանձնեց նորեկ նվաճողներին, «զի թերեւս թուլասցին ի պաշարմանէն»<sup>6</sup>:

1250 թվականին, հոր մահից հետո, Խոշաքը դեռեւս «երեխայ» էր համարվում, հետեւաբար՝ չէր կարող ղեկավարել Ավագյան տունը: Ուստի Ավագի տիրույթները մոնղոլները նախ հանձնեցին Շահնշահ Ա-ի որդի Զաքարեին, ապա՝ Խոշաքի մորը՝ Գոնցային<sup>7</sup>: Քանի որ որոշ ժամանակ անց Գոնցային կնուխյան առավ Ուլու Դավիթը<sup>8</sup>, ապա Ավագյան տունը պետք է մտած լիներ վրաց արքունական դոմենի մեջ: Այսպիսով, Խոշաքը փաստորեն զրկված էր հայրական ժառանգությունից: Վրաց ժամանակագրությունն այս մասին ուղղակի չի հայտնում. «Ավագի աղջկան թողեց [Վրաստանի թագավոր Ուլու Դավիթը – Հ. Մ.] հայրական տիրույթում»: Բայց հաջորդ իսկ արտահայտությունը պատմիչը խոստովանում է, որ Ավագյան տան վերահսկողությունն այսուհետեւ պատկանում էր վրաց թագավորին. «եւ հանձնարարեց նրան [Խոշաքին խնամակալության – Հ. Մ.] Մահկանաբերոցի Սաղունին... իմաստության համար թագավորը եւս նրան պատիվ տվեց եւ Ավագի տանը [վերակացու] լինել պատվիրեց»<sup>9</sup>: Փոխարենը՝ շատ որոշակի է արտահայտվում Ստեփանոս Օրբելյանը.

---

1 Ավագն «աթաբագ» տիտղոսով հիշատակվում է քաղկեդոնական հոգեւոր կենտրոններից Գարեջայի վանքում (տե՛ս **Գ. ԵՄԵՐՅԱՆ**, *ՅՅՅ յօտննային ճարտչութեան մտայնութեան շրջաններ*, – «մրავալոգոս», XVIII, տծ., 1999, թ. 432).

2 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 222-223; *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 70:

3 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 310: Այս փաստերն ամենեւին մկատի չի առել Օ. Մեխիսիան, ով փոխարենը ամեն կերպ ուռնացրել է Ավագի՝ Պղնձահանքում հուղարկավորվելու փաստը (**Օ. ՄԵՍԻՍԻԱՆ**, *Նամոնա թուրքոլոգիայի յօտննային ճարտչութեան և ներկայիս Կայենի իշխանության մասին*, թ. 260). Առավել տարօրինակ է, որ նա կամայականորեն է մեկնաբանել Պողո խաղբախյանի արձանագրության՝ «թագադրին Վրաց Ասագին» արտահայտությունը (տե՛ս **Գ. ԿՊՊ. ՅՈՎԱԷՎԻՏՅԱՆ**, *Խաղբախյանի կամ Պողոսի հայոց պատմության մեջ*, էջ 305): Այն բառացի ճիշտ թարգմանելուց հետո, Օ. Մեխիսիան անպատշաճորեն եզրակացնում է. «Ավագը... մեծ վրացի է համարված» (տե՛ս նույն տեղում, էջ 314): Իրականում արձանագրությունում ընդամենը շեշտվում է Ավագի անուրանալի վաստակը Ռուստրանի որդի Դավիթին զան բարձրացնելու գործում:

4 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 279-280; *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 229:

5 Տե՛ս **Վարդան Արեւելցի**, էջ 194; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 321:

6 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 255:

7 Նույն տեղում, էջ 321:

8 Տե՛ս *Ճարտչական ճշմարտություն*, II, թ. 237; *Վրաց ժամանակագրություն*, էջ 109-110:

9 Տե՛ս նույն տեղերում:

«եւ զի Աւագն վախճանեալ էր ի 699 թուին եւ կին նորա Գոնցայն ունէր դուստր մի խոշաք անուն եւ իշխէր ամենայն իշխանութեան նորա»<sup>1</sup>: Ըստ ամենայնի՝ հենց Ավագյան տան հարցը պիտի լիներ մոր եւ դատեր արտաքուստ անբացատրելի թշնամության հիմքը<sup>2</sup>: Վրաց ժամանակագրությունն անգամ, թեեւ որոշ վերապահումով («ինչպես ասում են»), խոշաքին է մոր սպանության հորդորող համարում: Հավանաբար, Գոնցայի եւ խոշաքի փոխհարաբերություններն այնպիսին էին, որ առիթ էին տվել նման ծայրահեղ, հնարավոր է՝ ոչ արդարացի, ենթադրության համար: Գոնցան արքունիքում նաեւ այլ հակառակորդներ է ունեցել: Օրինակ՝ Ջիբուրը<sup>3</sup>, Սմբատ Օրբելյանը<sup>4</sup> (թեեւ վերջինս ինչ-որ ժամանակ նաեւ համագործակցել է թագուհու հետ՝ ընդդեմ Ջիբուրի<sup>5</sup>), հնարավոր է՝ նաեւ այլ ազդեցիկ քաղաքական գործիչներ:

1261/62 թվականին, հայ-վրացական երկրորդ ապստամբության ճնշումից հետո, Գոնցան սպանվեց մոնղոլների կողմից<sup>6</sup>, եւ խոշաքը դարձավ Ավագյան տան լիրավ տիրակալը: Նրա դիրքն առավել ամրապնդվեց 1269 թվականին, երբ խոշաքն ամուսնացավ իլխանության փաստական կառավարիչ Շամս ադ-Դին Սահիբ Դիվանի հետ<sup>7</sup>: խոշաքը վայելում էր այդ հաջող քաղաքական քայլի պտուղները մեկուկես տասնամյակի ընթացքում, մինչեւ Սահիբ Դիվանի մահապատիժը: 1284 թվականին վերջինիս բազմանդամ ընտանիքի նկատմամբ բռնագրավումների ու հալածանքների ալիք ծավալվեց, եւ Ջաքարյան իշխանուհու դիրքերը խիստ թուլացան: Մահապատից առաջ, 1284 թվականի հոկտեմբերին գրված Սահիբ Դիվանի կտակից երեւում է, որ խոշաքն այդ ժամանակամիջոցում գտնվել է Իրանում: Ուստի ամուսինը հրահանգում է. «Եթե որդիս՝ Աթաբեկը եւ նրա մայր խոշաք-խաթունը ցանկանան ուղևորվել հայրենիք, ապա նրանց թող թուլատրվի այդ»<sup>8</sup>:

Հետագայում հենց այդպես էլ տեղի է ունեցել, եւ ԺԳ դ. 80-ական թվականների երկրորդ կեսին Բջնիի մերձակայքում եւ Վայոց Ձորում դարձյալ հիշատակվում է խոշաքի «պարոնութիւն-իշխանութիւն»-ը<sup>9</sup>: Ավագի դստեր իրավունքները հայրական տիրույթների նկատմամբ այլեւ որեւէ կասկած չէին հարուցում: Վրաց ժամանակագրությունն այդ տարածքը 1289 թ. արդեն կոչում է «խվաշագի [խոշաքի] երկիր»<sup>10</sup>: Իշխանուհու վերջին հիշատակություններից (1291, 1297 թվականներին) երեւում է,

1 Ստեփաննո Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 302:

2 *յճրտլոօս ցեօջրցեձ*, II, թ. 250-251; *Վրաց ժամանակագրություն*, էջ 123:

3 Տե՛ս նույն տեղեւում, էջ 238, էջ 110:

4 Տե՛ս Ստեփաննո Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 302:

5 Տե՛ս *յճրտլոօս ցեօջրցեձ*, II, թ. 238; *Վրաց ժամանակագրություն*, էջ 110:

6 Տե՛ս Ստեփաննո Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 300; *յճրտլոօս ցեօջրցեձ*, II, թ. 250-251; *Վրաց ժամանակագրություն*, էջ 123: Ի տարբերություն Վրաց ժամանակագրի՝ Ստեփաննո Օրբելյանը Գոնցայի սպանության նախաձեռնող է համարում իր հորեղբայր Սմբատ Օրբելյանին:

7 Տե՛ս Ստեփաննո Օրբելեան, *Պատմութիւն*, էջ 306-307; *յճրտլոօս ցեօջրցեձ*, II, թ. 257, 272; *Վրաց ժամանակագրություն*, էջ 129, 142:

8 *Рашид ад-Дин*, т. III, с. 115. Այս ամենի մասին մանրամասն տե՛ս Մարգարյան Հ., *11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմությունից* (Սահիբ Դիվան Շամս ադ-Դին Ջուվեյնի եւ Հայաստանը), – «Արեւելագիտական ժողովածո», հտ. V, Եր., 2004, էջ 111-125:

9 Տե՛ս Գարեգին Վրդ. [Յովսէփեան], *Ջագսվանից ժողովը*, էջ 23 (Աղզիբի, 1288 թվական); *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 78 (Թւանահատ, 1284-1291 թվականների միջակայք):

10 *յճրտլոօս ցեօջրցեձ*, II, թ. 289; *Վրաց ժամանակագրություն*, էջ 156:



որ կալվածքները կառավարելիս նրան օգնում էր որդին՝ Զաքարեն<sup>1</sup>: Խոշաքը, հավանաբար, մահացել է ԺԳ դ. վերջին – հաջորդ դարի առաջին տարիներին:

Դժվար է կասկածել, որ Խոշաքը քաղկեդոնական է եղել: Այս հանգամանքն ամենեւին չի խանգարել, որ նա 1270 թվականին մասնակցի Հայոց եկեղեցու համար կենսական հարցեր արծարծող Զագավանի ժողովին<sup>2</sup>: Այսպիսով, շարունակվել է տոհմաճյուղի ավանդական հավասարակշռված դավանական քաղաքականությունը: Ուստի՝ նախապաշարման հետեւանք է, երբ Շ. Մեսխիան, հիմնվելով Սամցխեում գտնվող Բիեթի եկեղեցու արձանագրության կասկածելի վերծանության եւ ոչ հստակ թվագրման վրա, ձգտում է ապացուցել, թե այդ քաղկեդոնական հուշարձանը կառուցել է Ավագի դուստր Խոշաքը: Հեղինակի գլխավոր փաստարկն այն է, որ Բիեթի վիմագրում Խոշաքը մեկ երեխայի մայր է անվանվում (հայտնի է, որ ԺԲ-ԺԳ դարերի պատմությունից հայտնի մյուս նշանավոր Խոշաքը՝ Իվանե Ա-ի կինը, երկու ժառանգ է ունեցել), ուրեմն եւ նա Ավագի դուստրն է ու քաղկեդոնական եկեղեցի կառուցող<sup>3</sup>: Թվում է, թե Խոշաքի՝ իրականում առնվազն երեք երեխայի մասին պատկերացում ունենալու դեպքում հետազոտողը նման վարկած առաջ չէր քաշի:

3. Զաքարե, որդի Խոշաքի եւ Սահիբ Դիվանի (ծնվել է ԺԳ դ. 70-ական թվականներին, մահացել 1325 թվականից հետո): 1284 թվականին հայրը նրան էր կտակել «Անիի Շահնշահյանների դոմանի» կալվածքները, հնարավոր է՝ նաեւ Ավագյան տունը<sup>4</sup>: Բնագրի վերծանությունը եւ թարգմանությունը թեեւ կատարված է որոշակի վերապահությամբ, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ հայրը ցանկացել է Զաքարեին թողնել այն տիրույթները, որոնք գնել էր Հայաստանում (օրինակ՝ Անիի որոշակի մասը), իսկ հետո ընդարձակել՝ Խոշաքին կնության առնելու շնորհիվ: Սակայն Արղուն իլխանը դրանք հանձնեց Դեմետրե Բ-ին<sup>5</sup>: Ինքն իսկ Զաքարեն 1289 թվականին, երբ իլխանի հրամանով սպանվեցին Սահիբ Դիվանի որդիները, խուսափեց մահից՝ Ափխազքում ապաստանած լինելու շնորհիվ<sup>6</sup>: Առնուազն 1291 թվականից տիրում էր Ավագյան տանը կամ նրա մի մասին՝ մոր հետ միասին: Հետագայում (վերջին անգամ հիշատակվում է 1325 թվականին) իշխում էր Բջնիում, Գառնիի մերձակալքում<sup>7</sup>, հնարավոր է՝ նաեւ այլ տարածքներում:

Զաքարեն որոշակի ազդեցություն ուներ վրաց արքունիքում: Ըստ երեւույթին, նրան վստահում էին նաեւ մոնղոլական իշխանությունները: 1311 թ. նա Շահնշահ Բ-ի՝ ազգականի եւ քրոջ ամուսնու հետ միասին, Ուլջեյթու իլխանի հանձնարարությամբ, օժանդակում էր Դավիթ Ը-ի որդի կրտսեր Գեորգի Զ-ի իշխանության հաստատմանը ողջ Արեւելյան Վրաստանում<sup>8</sup>: Զաքարյան իշխանները, հավանաբար,

---

1 Տե՛ս Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, *Գառնի*, III, Եր., 1962, էջ 45; *Հայերեն ձեռագրերի ու շատակարաններ. ԺԳ դար*, էջ 796:  
2 Տե՛ս Գարեգին Վրդ. [Յովսէփեան], *Զագավանից ժողովը*, էջ 23-27:  
3 Յ. Յեյնոս, *Նամոնա թուրքոյշորո շոտարոյձա զա Նամոյեղլոյ Բյոմա XII Նաշչլեոն Նախրոտ-Յըլոմձո*, ՅՅ. 260-262.  
4 Տե՛ս Рашид ад-Дин, т. III, с. 116.  
5 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 312:  
6 Рашид ад-Дин, т. III, с. 123.  
7 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 273, 292; Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառարանություն*, էջ 184-185:  
8 *Ճարտուկոն Եթոյրոյձա*, II, ՅՅ. 324; *Վրաց ժամանակագրություն*, էջ 187:

Գեորգի Զ-ի հետեւողական կողմնակիցներից էին եւ չէին մասնակցում այն ռազմարշավին դեպի Փոքր Ասիա, որի ղեկավարների կազմում էր Գեորգի Ե Պայծառը<sup>1</sup>:

Առկա տվյալները չափազանց սակավ են Զաքարեի էթնիկ ինքնագիտակցությունը, մշակութային դիմորոշումը եւ նույնիսկ կրոնական-դավանական պատկանելությունը որոշելու համար: Իշխանի կենսագրությունից հայտնի փաստերը բավականաչափ հիմք են տալիս՝ պնդելու, որ նա, լինելով էթնո-մշակութային զանազան ազգեցությունների բախման միջավայրում մշտապես ապրող անձնավորություն, եղել է խիստ ինքնատիպ անհատականություն: Ուստի՝ գրականության մեջ հանդիպող, նրան միայն մեկ դավանանքի ու մշակույթի կրող հայտարարող, լիովին իրարամերժ տեսակետները դժվար է արդարացի համարել: Ընդ որում, եթե Հակոբ Մանանդյանը հավանական է համարել, որ Զաքարեն մահմեդական է եղել<sup>2</sup> եւ զգուշավոր է գտնվել, ապա Գարեգին Հովսեփյանը, Ասատուր Մնացականյանը եւ Շոթա Մեսխիան, առանց լուրջ փաստարկման, խիստ վճռականորեն են արտահայտվել: Առաջին երկուսը պնդում են, որ Զաքարեն, ըստ ամենայնի, հայ է եղել<sup>3</sup>, իսկ վերջինը համոզված է, որ նա «վրացի է եւ վրաց ուղղափառ հավատի հետեւորդ»<sup>4</sup>: Հետազոտողի բերած փաստարկը Բիեթի եկեղեցու արդեն քննված արձանագրությունն է, որի բնագրում Զաքարեի անունն ընդհանրապես բացակայում է: Ինչ վերաբերում է այն դատողությանը, թե Զաքարեն «հիշատակված է վրացի իշխանների շարքում», ապա այն առավել եւս անհիմն է, քանի որ այդ «վրացի իշխաններն» են՝ «խորասանցի ոմն Զաալ մելիք», մոնղոլ Ախրունչին եւ Զաքարյան Շահնշահ Բ-ն<sup>5</sup>:

4. Աթաբեկ, որդի Սահիբ Դիվանի եւ Խոշաքի (ծնվել է ԺԳ դ. 70-ական թվականներին, մահացել 1284-1289 թվականների միջակայքում): 1284 թվականին հայրը իր կտակում հրահանգել էր, որ որդին, ցանկության դեպքում, մոր հետ միասին մեկնի հայրենիք<sup>6</sup>: Հայտնի է, որ 1289 թվականին Աթաբեկն արդեն վախճանվել էր<sup>7</sup>:

5. Խուանդգե, դուստր Սահիբ Դիվանի եւ Խոշաքի (ծնվել է ԺԳ դ. 70-ական թվականներին, մահացել 1320 թվականից հետո): Ամուսնացած էր Շահնշահյան տնից Շահնշահ Բ-ի հետ: Վիմագիր արձանագրությունները հավաստում են, որ կարելու դեր ունեն Անիում ԺԳ դ. վերջին – հաջորդ հարյուրամյակի առաջին երկու տասնամյակներին<sup>8</sup>:

6. Ամիրբեկ, որդի Դ-ի, թոռ՝ Ավագի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ կեսին եւ մահացել ԺԳ դ. սկզբին): Հայտնի է դատեր՝ Խուանդ Խաթունի արձանա-

1 Տե՛ս Աույն տեղերում: Հմմ. Ասեւ Թ. յօՅԾԵԺ, ԱԶՎ. աշխ., էջ 202-206:

2 Տե՛ս Հ. Մանանդյան, ԱԶՎ. աշխ., էջ 338:

3 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, *Խաղթականը կամ Պոռշեանը հայոց պատմութեան մեջ*, էջ 416; Ա. Մնացականյան, *Միջնադարյան հայրենասիրական մի մորաճայտ պոեմ*, – «Բանբեր Մատենադարանի», 8, Եր., 1967, էջ 299:

4 Տե՛ս Յ. Յեյնոս, *Նամոնա թուրքոլոյրի շոտարեմա զա Նամոնեղյա ֆյոմա XII Նալչլոնի Նա-յերտջեղոմի*, ՅՅ. 262.

5 Տե՛ս *Յերտոլոս Երտջեղեմա*, II, ՅՅ. 324; *Վրաց ժամանակագրություն*, էջ 187:

6 Տե՛ս Рашид ад-Дин, т. III, с. 115-116.

7 Նույն տեղում, էջ 123:

8 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 27, 64:

գրույթուններից<sup>1</sup>: Տեղը Ավագյան տան տոհմածառում որոշակի չէ: Չի բացառվում, որ նա եղած լիներ Խոշաքի որդիներից մեկը, քանի որ Խուանդզեն Անիի 1320 թվականի արձանագրույթունում հարկային արտոնույթուններ է շնորհում նաև հանուն «եղբարց իմոց յերկար կենդանութիւն»<sup>2</sup>: Եթե նկատի առնենք, որ, ըստ մինչ այժմ հայտնի տվյալների, այդ ժամանակ իշխանուհու եղբայրներից կենդանի էր միայն Ջաքարե Գ-ն, իսկ Խուանդզեն խոսում է «եղբարց» մասին, ապա, հնարավոր է, նրանց մեջ է եղել նաև Ամիրբեկը:

7. Խուանդ (Խոյան) խաթուն, դուստր Ամիրբեկի (ծնվել է, թերեւս, ԺԳ դ. վերջում, մահացել 1350 թվականից հետո): ԺԳ դ. առաջին կեսին ամուսնու՝ Քուրդ Բ Վաչուտյանի, եւ որդու՝ Թեոդոս Չրքինի հետ միասին շինարարական աշխատանքներ է կատարել Արագածոտնում<sup>3</sup>:

## ՇԱՐՀԱՅԻՆ ՏՈՒՆ

1. Շահնշահ Ա (Սարգիս), որդի Ջաքարե Բ-ի (ծնվել է, ամենայն հավանականությամբ, 1197 թվականին, մահացել 1261/1262 թվականին): Հոր մահվան պահին Շահնշահ Սարգիսը<sup>4</sup> կամ ուղղակի Շահնշահ Ա-ն անշափահաս էր: 1212 թվականին՝ հոր մահվան տարում, նրա տարիքի վերաբերյալ աղբյուրների տվյալները հակասական են: Ըստ Վարդան Արեւելցու՝ նա այդ ժամանակ «տղայ մի հնգամեայ»<sup>5</sup> էր, եւ նույնիսկ վեց տարի հետո Շահնշահ Ա-ին դեռեւս «մանուկ» էր դիտվում<sup>6</sup>: Մյուս կողմից՝ 1217 թվականին գրված հիշատակարաններից մեկը, խոսելով Ջաքարե Բ-ի վախճանվելու մասին, Շահնշահ Ա-ին բնորոշում է որպէս «գեղեցկաբողբոջ պատանի»<sup>7</sup>: Շահնշահը «յետ տարածամ փոխելոյն... մեծին Ջաքարիայի... դեռատէգն եւ նորաբողբոջ» էր նաև նրա դաստիարակ իմպերատրիսի համար<sup>8</sup>:

Վերջին արտահայտութեան մեջ ուշագրավը «դեռատէգն» բնութագրումն է, որով նկատի է առնվում Շահնշահի արբունքի հասակում գտնվելը եւ «տէգ մորուաց»

1 Տե՛ս ՄԽ. ՏԵՐ-ՄԼԻՐՈՅԵԱՆ, *Իմ գործակալութեան ժամանակ հուարած մի քանի արձանագրութիւններ*, – «Բանասէր», 1903, էջ 30-31; Ռ. Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, *Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմակաւ արձանագրութիւնները*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1993, № 1, էջ 133; Ֆ. ԲԱՔԱՅԱՆ, Ա. ՔԱՂԱՆՔԱՐՅԱՆ, *Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմակաւ արձանագրութիւնները*, – «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 2, էջ 188: Հովհաննավանքի 1350 թվականի արձանագրութիւնում ընթերցվում է նրա անվան երկրորդ մասը (Կ. ՂԱՖԱՊԱՐՅԱՆ, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, էջ 92):

2 *Դիվան հայ վիմագրութեան*, պր. I, էջ 27:

3 Տե՛ս ՄԽ. ՏԵՐ-ՄԼԻՐՈՅԵԱՆ, *ԱՅՎ. ԱՇԽ.*, էջ 30-31; Ռ. Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, *ԱՅՎ. ԱՇԽ.*, էջ 133; Ֆ. ԲԱՔԱՅԱՆ, Ա. ՔԱՂԱՆՔԱՐՅԱՆ, *ԱՅՎ. ԱՇԽ.*, էջ 188; Կ. ՂԱՖԱՊԱՐՅԱՆ, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, էջ 92:

4 Ինչպէս եւ պետք էր սպասել, Ջաքարե Բ-ի որդին անվանակոչվել է պապի անունով, եւ «Ծահնշահ»-ը որոշ ժամանակ սուկ որպէս տիտղոս է ընկալվել: Ուստի Անիի մի քանի արձանագրութիւններում «Ծահնշահ Սարգիս»-ը «Ծահնշահ Ջաքարեի»-ի օրինաչափ համապատասխանութիւնն է դիտվում (տե՛ս, օր.՝ *Դիվան հայ վիմագրութեան*, պր. I, էջ 2, 14, 17): Ավելի հաճախ հանդիպող «Ծահնշահ» անվանումը միակն է դառնում ԺԳ դ. 20-ական թվականներից սկսած:

5 ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, էջ 183:

6 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 112:

7 Նույն տեղում, էջ 105:

8 Նույն տեղում, էջ 178:

հայտնվելը<sup>1</sup>: Այսպիսով, արդարացի է Պարույր Մուրադյանը, երբ առաջարկում է Վարդան Արեւելցու Պատմության «հնգամեայ»-ը սրբագրել «ԺԵ- [ԺԷ-]ամեայ»-ով<sup>2</sup>: Թվում է, թե ընդունելին առաջին տարբերակն է, որով հասկանալի են դառնում «տղայ», «մանուկ», «պատանի» զուգահեռ բնութագրումները: Ավելին՝ հնարավոր է դառնում որոշակի կապ տեսնել պատմական իրադարձությունների եւ Զաքարե Բ-ի ժառանգի անվանակոչության միջեւ: «ԺԷ» սրբագրումը չի արդարանում, որովհետեւ այդ դեպքում Շահնշահի ծնունդն ընկնում է 1195 թվականին (1212 – 17 = 1195), իսկ այդ տարում Զաքարե Բ-ն դեռեւս չէր ազատագրել Ամբերդը (1196 թվական), որից հետո միայն նա ստացավ «շահնշահ» տիտղոսը<sup>3</sup>: Հետեւաբար, Շահնշահը ծնվել է 1197 թվականին, Ամբերդի առումից քիչ անց, եւ նրա անվանակոչությունը տեղի է ունեցել այդ ոգեւորիչ իրադարձության անմիջական տպավորության ներքո:

Այն խուլ պայքարը, որ ընթացել է մի կողմից՝ Շահնշահ Ա-ի, մյուս կողմից՝ Իվանե Ա-ի եւ նրա որդի Ավագի միջեւ, բավականաչափ հստակորեն արտացոլվել է վիճաբար հուշարձաններում: Պատահական չէ, որ Զաքարե Բ-ի մահից հետո նախկին ճշգրտությունը՝ ընտանիքի տարբեր անդամների պաշտոնների եւ տիտղոսների առումով, խախտվում է: Տոհմի ներկայացուցիչների տիրույթներն ու իշխանությունը, մասնավորապես՝ «սպարապետութիւն»-ը ընդհանուր պատկանելություն են դիտվում<sup>4</sup>: Այս առումով բնութագրական է Գագան Լոռեցու 1220 թվականի արձանագրության նախաբանը, որը փորագրվել է «ի թագաւորութիւնն Լաշին, ի պատրոնութիւնն մեծի... [վնասված անունը, անշուշտ, Իվանե Ա-ինն է – Հ. Մ.] եւ զարգանալն Շահնշահի եւ Աւագի»<sup>5</sup>: Երկու հորեղբորդիների «զարգանալ»-ուց, այսինքն՝ չափահաս դառնալուց հետո է, որ որոշվելու էր տոհմական դարձած արքունի պաշտոնների ճակատագիրը: Ճիշտ է, այս երեսույթի ակունքները գալիս են ավելի վաղ տարիներից՝ թեկուզ 1200 թվականից, երբ գրվում էին հետեւյալ տողերը. «յամի սպասալարութեանն Զաքարէի եւ որդույ իւրոյ Շահնշահի եւ եղբար իւրոյ Յովանէի»<sup>6</sup>: Բայց եւ այնպէս, նոր իրադրության պայմաններում, երբ Իվանե Ա-ն փաստորեն ամենագոր էր դարձել, հին բանաձեւը հնարավորություն էր ընձեռում եղբոր թողած պաշտոններից յուրացնել ամիրսպասալարությունը: Հիրավի, Իվանե Ա-ն, եղբորորդուց փաստորեն խլելով ամիրսպասալարի պաշտոնը, այն ժառանգություն թողեց Ավագին: Անիի եւ Օձունի արձանագրությունները, որտեղ Շահնշահ Ա-ն որպէս գլխավոր զորահրամանատար է հանդես գալիս<sup>7</sup> թույլ են տալիս կարծելու, որ

1 Հմմ. հետեւյալ նախադասությունը. «Առաջին տեգ մորուացն արձակեալ, մօրուքն այն ինչ դեռաւ դեռ ծաղկեալք» (Նոր բառգիրք Հայկազեան շեգուի, հտ. Բ, Վեհեստիկ, 1837, էջ 872):

2 Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 104, ծմթ. 29:

3 Տե՛ս Ա. Ն. Շահինյան, Կոշի կոթողը եւ նրա արձանագրությունը, էջ 198-201; Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 105:

4 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ժ. Գ. դար, էջ 112 («ի սպարապետութեանն Հայոց եւ Վրաց Իւանէի եւ մանկանն Շահնշահի»): Իշխանության բացորոշման խնդիրը հստակորեն չի ներկայացված մատ մի շարք արձանագրություններում (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 14; Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 19, 22; Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռնեանք հայոց պատմության մէջ, էջ 199, 302):

5 Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 213:

6 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 62:

7 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 17; Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 205:

նա, նույնիսկ 1227 թվականին Ավագի ամիրսպասալար դառնալուց հետո էլ, հետեւողականորեն ձգտել է վերագարձնել հայրական պաշտոնը:

Հետագայում Շահնշահ Ա-ն հարկադրված է եղել բավարարվել մանդատորթուխուցեսուլթյամբ: Սկսած 1225 թվականից այդ պաշտոնով է նրան հիշատակում Վրաց ժամանակագրությունը<sup>1</sup>: «Մանդատորթուխուցէս մեծի թագաւորութեան» է կոչում իր պատրոնին 1232 թվականին հավուաս Ա-ն, թեև հայտնում է Շահնշահի «յաջորդեալ զաթոռ թագաւորութեանն հաւրն իւրոյ» մասին<sup>2</sup>, եւ սպասելի էր նաեւ ամիրսպասալարութեան վերաբերյալ որեւէ ակնարկ: Շահնշահ Ա-ն իրեն սոսկ մանդատորթուխուցես է անվանում նաեւ ԺԳ դ. 40-ական թթ. երկու վրացական փաստաթղթերում<sup>3</sup> եւ Հովհաննավանքի 1258 թ. վիմագրում<sup>4</sup>: Նույն պատկերն է Քոբայրում նրա որդիների թողած վրացերեն արձանագրություններում<sup>5</sup>:

Շահնշահ Ա-ի գործունեությունը սերտորեն կապված է եղել Զաքարյանների մյուս տոհմաճյուղերի ընդհանուր ռազմա-քաղաքական ընթացքի հետ: 1220-1221 թվականներին նա հորեղբոր եւ Վահրամ Գագեցու հետ միասին կարեւոր դեր էր կատարում մոնղոլների հետախուզական արշավանքին դիմագրավելիս<sup>6</sup>, մասնակցում էր Զալալ ադ-Դինի դեմ տրված Գառնիի (1225 թ.) եւ Մինդորիի (1229 թ.) ճակատամարտերին<sup>7</sup>: Շահնշահը հատկապես աչքի ընկավ նոր ազատագրած «Վաղարշակերտը, Նրասխից այնկողմ երկրները մինչեւ Սուրման» թյուրքերի հարձակումներից պաշտպանելիս<sup>8</sup>: 1236 թվականին կնոջ ազգականներին թողնելով Լոռեի պաշտպանությունը՝ նա պատսպարվեց Աճարայում, ապա հնազանդվեց մոնղոլներին եւ ետ ստացավ տիրույթները<sup>9</sup>: Շահնշահ Ա-ի դերն ակնառու էր Ռուսուդան թագուհու եւ մոնղոլների միջեւ կապեր հաստատելիս, Ուլու Դավթին գահ բարձրացնելիս, Նգարսլան Բակուրցիխեցուն քաղաքական ասպարեզից հեռացնելիս, վրաց թագավորության երկփեղկման ամբողջ ընթացում<sup>10</sup>: Նրա օրոք կազմավորվեց Շահնշահյան տան դաշինքը մոնղոլների հետ: Շահնշահը մասնակցում էր մոնղոլների ռազմական ձեռնարկումներին եւ գլխավորեց նրանց ստեղծած նոր ռազմավարական միավորներից՝ դումաններից մեկը, իսկ Ավագի բացակայության միջոցին՝ նաեւ նրան հանձնված դումանը<sup>11</sup>: Երբ մոնղոլների ճնշումից հոգնած Ավագը փախավ Ռուսուդան թագուհու մոտ՝ Ափխազք, նվաճողները «ետուն զաշխարհս նորա [Ավագի –

---

1 *Ջրտոլոս ԵՅՅՅՅՅՅ*, II, ՅՅ. 169, 180, 182-183, 187, 190, 208, 212; *Վրաց ժամանակագրություն*, էջ 59, 68, 70, 73, 75, 88, 91:  
2 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 178:  
3 Տե՛ս *Ջրտոլոս Նաճարտոլոս ժՅՅՅՅՅ*, ՅՅ. 157, 160.  
4 **Կ. Ղաֆադարյան**, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98, հմմ. էջ 96:  
5 **Պ. Մ. Մուրադյան**, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 174-178:  
6 Տե՛ս *Ջրտոլոս ԵՅՅՅՅՅՅ*, II, ՅՅ. 164; *Վրաց ժամանակագրություն*, էջ 56:  
7 Տե՛ս նույն տեղերում, էջ 169, 182-183, էջ 59, 70:  
8 Տե՛ս նույն տեղերում, էջ 212, էջ 91:  
9 Տե՛ս նույն տեղերում, էջ 187-190, էջ 73, 75; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 253-254, 258, 263:  
10 Տե՛ս *Ջրտոլոս ԵՅՅՅՅՅՅ*, II, ՅՅ. 212, 217, 219, 225, 227; *Վրաց ժամանակագրություն*, էջ 91, 95-96, 100-101; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 289:  
11 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 280, 284; *Ջրտոլոս ԵՅՅՅՅՅՅ*, II, ՅՅ. 208; *Վրաց ժամանակագրություն*, էջ 88:

Հ. Մ.] ի ձեռն Շահնշահի, իբր թէ եղբայր նոցա իցէ. եւ զայս առնէին վասն առաւել հաւատարմութեան»<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, Շահնշահ Ա-ն առաջինն էր Զաքարե Բ-ի սերունդների շարքում, որ թողեց միաբնակությունը եւ քաղկեդոնականությունը ընդունեց<sup>2</sup>: Ընդ որում, Շահնշահի կրոնափոխությունն ամենեւին էլ հինգ տարեկան հասակում չի տեղի ունեցել<sup>3</sup>, ոչ էլ, թերեւս՝ մինչեւ 1224 թվականը<sup>4</sup>, այլ, հավանաբար, կատարվել է 1232 թվականից հետո: Այդ են վկայում 1232 թվականին նրա դաստիարակ իսկուհու Ա-ի գրած հետեւյալ տողերը. «Շահնշահ, յաջորդեալ զաթոռ թագաւորութեան հաւրն իւրոյ, լուսաւորեալ փարատեաց զմառախղապատ խաւարն, զոր ի զրկմանէ հաւր նորա մածեալ ունէր զեկեղեցիս Հայաստանեաց»<sup>5</sup>: Այս վկայությունը չի հակասում Վարդան Արեւելցու այն տեղեկությունը, որի համաձայն՝ Շահնշահին «դարձ»-ի է բերել Իվանե Ա-ի կին Խոշաքը: Վերջինս կենդանի էր առնվազն մինչեւ 1249 թվականը եւ կարող էր նախաձեռնել Շահնշահի քաղկեդոնականացումը նաեւ 1232 թվականից հետո: Շահնշահ Ա-ն առաջին Զաքարյանն է, որը հիշատակվում է Երուսաղեմի Սուրբ Խաչ վրացական վանքի «աղապ»-ներում<sup>6</sup>: Շահնշահ Ա-ի դավանափոխությունը, ինչպես նաեւ նրա կնոջ կողմից Քոբայրի վանքի խլումը եւ երկաբնակներին հանձնելը<sup>7</sup>, դեռեւս չեն վկայում, որ բախտորոշ շրջադարձ է տեղի ունեցել Զաքարյանների տոհմի գլխավորներից մեկի ու հայ հոգեւոր կենտրոնների փոխհարաբերություններում: Այսպես, երբ Շահնշահ Ա-ի հորաքրոջ որդին՝ Հաղբատի առաջնորդ Հովհաննես Դոփյանը, «չինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ եւ ընդ Սանահին», ապա «վրէժխնդիր եղեւ իշխանն Շահնշահ՝ որդին Զաքարէի, Սանահին, զի հայր նորա անդ թաղեալ էր, եւ իւրեանց սեփհական համարէին»<sup>8</sup>: Շահնշահ Ա-ն հայրական հանգստարանի իրավունքների ոտնահարում է դիտել իր ազգականի կողմից ամրոցի կառուցումը վիճելի տարածքում եւ այն քանդել է տվել «հրամանաւ թաթարին»: Այս քայլի նշանակությունն ավելի է մեծանում, եթե նկատի ունենանք, որ «Հաղբատ ի Վրաց թագաւորացն հաշուի էր յայնմ ժամանակի»<sup>9</sup> եւ հաղբատցիներն օգնության խնդրանքով կարող էին դիմել անգամ Ռուսուդան թագուհուն: Ուշագրավն այն է, որ կարճ ժամանակ անց՝ արդեն 1245 թվականին, Շահնշահ Ա-ն հանդես է գալիս նաեւ որպէս Հաղբատի «տէր»-հովանավոր<sup>10</sup>: Առավել պերճախոս է Հովհաննէս վանքի 1258 թվականի արձանագրության հետեւյալ

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 265-266:

2 Տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 183-184:

3 Տե՛ս Յ. Թեյնոս, *საშინაო პოლიტიკური ვითარება და საზოგადოებრივი წყობა XII საუკუნის საქართველოში*, ვვ. 268:

4 Տե՛ս Ս. Մ. Мурадян, *Проблема конфессиональной ориентации церкви Онеца*, с. 56.

5 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178; Գարեգին Ա կթղ. [Յովսէփեան], *Յիշատակարանը ձեռագրաց*, էջ 886 (վերջինս բնագրի գերադասելի վերծանությամբ է):

6 Տե՛ս Ե. Թեթրեյեւո, *მასალები იერუსალიმის ქართული კოლონიის ისტორიისათვის*, თბ., 1962, გვ. 73.

7 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 393, հմմ. Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 163-164:

8 Կիրակոս Գանձակեցի, էջ 99:

9 Նույն տեղում:

10 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 222, հմմ. էջ 217:

հատվածը, որը լիակատար պատկերացում է տալիս Զաքարե Բ-ի եւ Շահնշահի դավանական քաղաքականության հաջորդայնության մասին. «Այս իմ հրաման եւ արձան սահմանի Շահնշահ մանդադորթախուցեսի, որդոյ Զաքարիայի ամիրսպասալարի Հայոց Մեծաց եւ Վրաց, զոր գրեցի իմ շինած ժամատանս. տվի գեղն Շավաշէն ի սուրբ Կարապետս... եւ կրկին հաստատեցի զիմ հատն հրամանն»<sup>1</sup>: Այսպիսով, Շահնշահը երկաբնակ դառնալուց հետո էլ է շինարարական գործունեություն ծավալել միաբնակ հոգեւոր կենտրոններում, հովանավորել հակաքաղկեդոնական վանքերին, տնտեսապես ապահովել միաբաններին:

Ամուսնացել էր Շահնշահ Ա-ն Խոշաքի հետ<sup>2</sup>:

Վախճանվել է ավագ որդու ողբերգական մահից քիչ անց, 1261/62 թվականին<sup>3</sup> Օձունում եւ թաղվել Քոբայրի վանքում: Քոբայրում է հուղարկավորվել նաեւ Խոշաքը: Ամուսինները պատկերված են Քոբայրի որմնանկարներում<sup>4</sup>:

2. Զաքարե Գ, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. 20-ական թվականներին, մինչեւ 1232 թվականը, մահապատժի է ենթարկվել 1261 թվականին): 1232 թվականին Խավուս Ա-ն Շահնշահ Ա-ին հիշատակում է «հանդերձ թագածին նորընծաին սքանչելատեսիլ որդւովն իւրով Զաքարիայիւ»<sup>5</sup>: 1245 թվականին կամ հաջորդ տարվա սկզբին<sup>6</sup>, Զաքարեն արդեն հասուն այր էր եւ հոր հետ միասին մասնակցում էր Դավիթ Լաշայի որդու դիմավորմանը<sup>7</sup>: Զաքարեն, անշուշտ, ավատատիրական այն խմբավորման գործուն անդամներից էր, որը հետամուտ էր Դավիթ Լաշայի որդու գահ բարձրացմանը: Այդ նպատակով նա ուղեկցում էր վերջինիս դեպի Բաթուի արքունիք կատարած ճանապարհորդության ժամանակ եւ որոշ ժամանակ անցկացրեց խանի նստավայրում<sup>8</sup>: Երկու Դավիթների վեճի կարգավորումից հետո էր, որ նա պետք է վերադարձած լիներ հայրենիք: 1250 թվականին, Ավագի մահից հետո, Զաքարեն մոնղոլներից ստացավ Ավագյան տան տիրույթները, բայց միայն որոշ ժամանակով. այնուհետեւ դրանք վերադարձվեցին Ավագի դուստր Խոշաքին<sup>9</sup>: Այդ նույն տարում էլ, թերեւս, Զաքարեին շնորհվեց ամիրսպասալարի պաշտոնը, որը նա մինչ այդ, հավանաբար, վարում էր Ավագի հնգամյա բացակայության միջոցին, եւ պահպանում էր մինչեւ իր եղբերական մահը: Շ. Մեսխիան կարծում է, որ Ավագն ամիրսպասալարությունը զիջել է դեռ իր կենդանության օրոք, քանի որ Վրաց

---

1 Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98 (ընդգծումներն իմն են):

2 Տե՛ս նույն տեղում: Հովհաննավանքի արձանագրությունը միակ վկայությունն է Ծախնշահ Ա-ի կնոջ անվան վերաբերյալ:

3 Տե՛ս *Յարտուր Յեռնոյն*, II, ՅՅ. 250; *Վրաց ժամանակագրություն*, էջ 122-123; *Կիրակոս Գանձակեցի*, էջ 392-393; *Վարդան Արեւելցի*, էջ 200-201: Միայն վերջինս է Ծախնշահ Ա-ի մահը դնում 1261 թվականին, սյուս հեղինակները փոքր-ինչ անորոշ են արտահայտվում, ուստի գերադասելի է սուսլոժ ձեռնպահ մնալ վճռական եզրակացություն անելուց:

4 Տե՛ս **И. Р. Драмбян**, *Фрески Кобайра*, Ер., 1979, с. 12-13.

5 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 178:

6 Դավիթ Լաշայի որդու փնտրման եւ Վրաստան բերելու թվագրման շուրջ տե՛ս **Օ. Ջաջեծո՞ջե-Վժ**, *Յարտուր Յեռնոյն յոսն օնՅեռնոյն*, III, ՅՅ. 127-128.

7 *Յարտուր Յեռնոյն*, II, ՅՅ. 219; *Վրաց ժամանակագրություն*, էջ 96:

8 Տե՛ս նույն տեղերում:

9 Տե՛ս *Կիրակոս Գանձակեցի*, էջ 321:

ժամանակագրությունը Ջաքարեին ամիրսպասալար է անվանում դեռևս Դավիթ Լաշայի որդու դիմավորման (1245/46 թվական) առիթով<sup>1</sup>: Այս տեսակետը դժվար է հիմնավորել ԺԳ դ. 40-ական թվականների Վրաց թագավորության ներքաղաքական կյանքի իրողություններով: Անվիճելի է, որ Ավագը բացառիկ բարձր դիրք ուներ թագավորությունում եւ ամիրսպասալարի պաշտոնը ստանալու համար երիտասարդ Ջաքարեն իրական հնարավորությունից զրկված պետք է լիներ: Բացի այդ, ինչպես որ դա նշում է նաև Շ. Մեսխիան, վրացի պատմիչն Ավագին ամիրսպասալար է հիշատակում նաև 1245/46 թվականի իրադարձություններից հետո եւս: Ջաքարեն, ամենայն հավանականությամբ, ԺԳ դ. 40-ական թվականներին եղել է «ժամանակավոր ամիրսպասալար»:

Ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցին, Շահնշահ Ա-ն կյանքի վերջին տարիներին թողել էր պատերազմական հոգսերը, «խնամէր գտուն իւր եւ Ջաքարէ ընդ թաթար զօրուն երթալը ի գործ պատերազմի»<sup>2</sup>: Հայտնի է, օրինակ, որ Ջաքարեն 1258 թվականին մասնակցում էր Բաղդադի գրավմանը<sup>3</sup>:

Ինչպես նշում է Անիում նրա հետ հանդիպած ճանապարհորդ Ռուբրուքը, իրականում Ջաքարեն ծանր էր տանում մոնղոլական լուծը<sup>4</sup>: Ուստի Ջաքարեի եւ մոնղոլների արտաքուստ ներդաշնակ փոխհարաբերությունները 1261 թվականին անսպասելի հանգուցալուծում ունեցան: Երիտասարդ իշխանը ծածուկ ինչ-որ կապեր էր հաստատել 1259 թվականին ապստամբած Ուլու Դավթի աջակից Սարգիս Ջաղելու հետ, որը Ջաքարեի աներն էր<sup>5</sup>: Ի դեպ, հայ պատմիչի հիշատակած Ուլտիքի իշխան Սարգսի եւ Վրաց ժամանակագրությանից հայտնի Սարգիս Ջաղելու նույնանձնությունը վրացագիտության մեջ վաղուց հանրահայտ իրողություն է<sup>6</sup>: Ուստի հայ-վրացական երկրորդ ապստամբության պատմությանն անծանոթ լինելու հետեւանք պետք է համարել, որ Սարգսին սխալմամբ հայ իշխան է նշում Հրաչյա Աճառյանը<sup>7</sup>: Քուժայիս փախած Ջաքարեին մոնղոլները հատուկ երզումով իրենց մոտ բերեցին եւ ուխտադրժորեն սպանեցին<sup>8</sup>:

3. Ավագ Սարգիս Բ, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, ամենայն հավանականությամբ, ԺԳ դ. 20-30-ական թվականներին, մահացել 1269 թվականին): Պահպանված կցկտուր տեղեկությունները հնարավորություն չեն ընձեռում որոշելու գործունեության ոլորտը: Շ. Մեսխիան կարծում է, որ Ավագ Սարգիս Բ-ն, հոր եւ ավագ եղբոր

---

1 Յ. Թյեյնոս, *Նաժմեհ Զոլոտոյեյ շոտարեյա զա Նաժեյլեյո Կյոժա XII Նաշչյեյո Նախրոշեյե-լոժո*, թ. 314.

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 393: Հմմ. Հաղբասի 1257 թվականի արձանագրության սկիզբը. «ի տերութիւն մեծի Շահնշահի եւ Ջաքարիայի» (տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հաղբաս*, էջ 217):

3 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 380:

4 Տե՛ս Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ*, Խո. Ա, Եր., 1932, էջ 19-20:

5 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 393:

6 Տե՛ս օ. Ջաջաձեյե, *Ջաղելու յրոս օկտորոս*, III, թ. 167. Նույն տեսակետն է կրկնում, առանց Ի. Ջալալխիշվիլու աշխատության հղման, Ասե Ծ. Մեսխիան (Յ. Թյեյնոս, *Նաժմեհ Զոլոտոյեյ շոտարեյա զա Նաժեյլեյո Կյոժա XII Նաշչյեյո Նախրոշեյե-լոժո*, թ. 269).

7 Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Խո. Գ, էջ 429, հմմ. Հ. Ստեփանյան, *Ուլ. աշխ.*, էջ 94, ծմթ. 11:

8 Տե՛ս *Ջաղելու Երզրեյա*, II, թ. 250; *Վրաց ժամանակագրություն*, էջ 122-123; Կիրակոս Գանձակեցի, էջ 392-393; Վարդան Արեւելցի, էջ 200-201:



մահից հետո, մինչև 1266-1268 թվականները վարել է մանդատուրթուխուցեսի եւ ամիրսպասալարի պաշտոնները, բայց նրա դատողությունները հիմնված են վրացական փաստաթղթերից «Ռիկոնիի գրի» յուրովի թվագրման ու ազատ մեկնաբանման վրա<sup>1</sup>: Ուղղակի վկայություններ գոյություն չունեն նաև հայկական աղբյուրներում, ուստի Ավագ Սարգսի պաշտոնավարությունը վրաց արքունիքում հնարավոր, բայց չհիմնավորված իրողություն է թվում:

Ուշի եկեղեցու ժամատան 1264 թվականի արձանագրությունը հստակորեն ցույց է տալիս, որ Ավագ Սարգիս Բ-ն ժԳ դ. 60-ական թվականներին տիրույթներ ուներ Արագածոտնում<sup>2</sup>: 1250 թվականին նա եղել է «Ռիկոնիի գիր» կոչվող կաբեուր վրացական փաստաթուղթը հաստատող մեծատոհմիկներից մեկը<sup>3</sup>: Ուստի նա բարձր դիրք է ունեցել նաև Վրաստանում: Վախճանվել է 1269 թվականին<sup>4</sup>:

4. Արտաշիր Ա, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, թերեւս, ժԳ դ. 20-30-ական թվականներին, մահացել 1261 թվականից հետո): Կիրակոս Գանձակեցին նրան երկրորդն է հիշատակում Շահնշահ Ա-ի որդիներին թվարկելիս<sup>5</sup>: Դժվար է, այնուամենայնիվ, ենթադրել, որ անպայման Արտաշիր Ա-ն պետք է գլխավորեր Շահնշահյան տունն ավագ եղբայրների մահից հետո: Նա եւս որոշակի բաժին էր ստացել հայրական տիրույթներից: Ստույգ հայտնի է, որ նրան էր պատկանում Մրենը, որը նա 1261 թվականին վաճառեց նշանավոր Սահմադինին<sup>6</sup>: Անհայտ է մնում Արտաշիր Ա-ի մահվան թվականը: Երուսաղեմի Սուրբ Խաչ վրացական վանքում «աղապ» է սահմանված նաև նրա հիշատակին<sup>7</sup>:

5. Իվանե Բ, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ժԳ դ. 20-30-ական թվականներին, մահացել 1284 թվականից հետո, մինչև 1291 թվականը): Հոր իրական ժառանգորդն էր, հետևաբար եւ Անիի վաճառքի գործարքի գլխավոր իրականացնողը<sup>8</sup> ժԳ դ. 60-ական թվականներին: Համարվում էր «սեփական տէր գաւառիս Անբերդոյ»<sup>9</sup>: Արագածոտնի տիրակալ լինելու հանգամանքով է պայմանավորված Իվանե Բ-ի վրացերեն արձանագրության վիմագրումը Կոշում: Հրատարակիչներն այս վիմագիր արձանագրությունը վերագրում են Իվանե Ա ավաբեկին<sup>10</sup>, սակայն ավելի ուշ թվագրման օգտին են խոսում հետեւյալ հանգամանքները: Արձա-

---

1 Յ. Թյեյնոս, *საშინაო პოლიტიკური ვითარება და საზოგადოებრივი ცხოვრება XII საუკუნის საქართველოში*, էջ 273, ծմթ. 1, էջ 316:  
2 Տե՛ս Ռ. Ռ. Գասպարյան, *Ազվ. աշխ.*, էջ 135; Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան, *Ազվ. աշխ.*, էջ 186:  
3 Տե՛ս Բ. Դ. Дондуа, *Ազվ. աշխ.*, էջ 68:  
4 Տե՛ս *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 44; Սամուել Անցեցի, էջ 161:  
5 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 393:  
6 Տե՛ս Ի. Ա. Орбели, *Надписи Мрена*, с. 41.  
7 Ե. Թյեթրեջվեօ, *Ազվ. աշխ.*, էջ 101:  
8 Տե՛ս Սամուել Անցեցի, էջ 161: Իվանե Բ-ի մահը սխալմամբ դնելով 1263 թվականին՝ Լեոն Բաբայանն անհիմն կերպով Անիի վաճառքը վերագրում է Ծառնշահ Բ-ին (Լ. Հ. Բաբայան, *Ազվ. աշխ.*, էջ 352):  
9 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 162; Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, – «Էջմիածին», 1961, № 9, էջ 43:  
10 Տե՛ս Ա. Գ. Шанидзе, *Грузинская надпись XIII века в селе Кош*, – “Известия” Института рукописей АН Груз. ССР, I, Тбилиси, 1959, с. 7-19; Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 100-101:

նագրությունում Իվանեն մանդատուրթուխուցես է անվանվում, իսկ այդ պաշտոնը Իվանե Ա-ն երբեք չի վարել, փոխարենը՝ Իվանե Բ-ն էր գլխավորում այդ գործակալությունը շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում: Պակաս կարելու չէ այն իրողությունը, որ Իվանե Ա-ն չէր կարող տնտեսական-ունեցվածքային կարգադրություն անել իրեն չպատկանող Արագածոտնում: Վերջապես, արձանագրությունն Իվանե Բ-ին վերագրելու պարագայում կվերանա այն ակնհայտ հակասությունը, որը նշել են եւ փորձել բացատրել հրատարակիչները: Վիմագրի բանաձեւային հատվածում ասվում է. «մենք՝ մանդատուրթուխուցես Իվանես եւ Շա[խա]նշեի եւ նրա եղբայրների մայր Խոշան մեզ եւ մեր որդոց՝ Շահանշեի ու նրա եղբայրների արեւշատության համար թողինք...» (ընդգծումներն իմն են): Այսպիսով, ակնհայտ է, որ հիշատակված Շահնշահն ունեցել է մեկից ավելի եղբայրներ, որը ստույգ է միայն Շահնշահ Բ-ի առումով: Եթե Կոշի արձանագրության հեղինակներն իրոք Իվանե Ա-ն ու նրա կին Խոշաքն են, ապա բացառված է, որ երկիցս հիշելով Շահնշահ Ա-ին նրանք մոռանային իրենց հարազատ որդի Ավագին: ԺԳ դ. սկզբին Ջաքարե Բ-ն եւ Իվանե Ա-ն իրոք հավասարապես որպես արյունակից որդիներ էին դիտում միմյանց զավակներին, բայց այդ իրողությունը հավաստող բազմաթիվ արձանագրություններից ոչ մեկում Շահնշահ Ա-ից ու Ավագից որեւէ մեկը չի մոռացված:

Իվանե Բ-ին էր պատկանում նաեւ Օձունի հայրական նստոցը<sup>1</sup>:

Նրա օրոք պահպանվում էր Ջաքարյանների բարձր դիրքը վրաց արքունիքում: Առնվազն 1269 թվականից, երբ Վրաց ժամանակագրության հեղինակն առաջին անգամ Իվանե Բ-ին հիշատակում է որպես մանդատուրթուխուցես<sup>2</sup>, Իվանե Բ-ն ղեկավարում էր Ջաքարյանների համար ավանդական արքունի գործակալությունը: Պատմիչն առանձնացնում է նրա դերը Դեմետրե Բ-ին Հորդա տանելու եւ «թագավորություն ստանալ»-ը կարգավորելու գործում<sup>3</sup>: Ի տարբերություն ավագ եղբայր Ջաքարեի՝ Իվանե Բ-ն վճռական պահերին ապացուցել է իր հավատարմությունը մոնղոլներին: 1259-1261 թվականներին նա միացավ այն ավատատիրական խմբավորմանը, որը չիսկեց կապերը նվաճողների հետ եւ նույնիսկ կոչվում էր Ուլու Դավթի ու Սարգիս Ջաղելու զորքերի ղեմ<sup>4</sup>: 1284 թվականին, Ահմեդ իլխանի եւ Արղունի գահակալական պայքարի ժամանակ, Դեմետրե Բ-ն, կատարելով Ահմեդի հրամանը, գնաց Խորասան՝ պատերազմելու Արղունի ղեմ, Իվանե Բ-ի հետ միասին<sup>5</sup>: Վճռորոշ պահին Վրաց թագավորն անցավ Արղունի կողմը եւ, որպես փոխհատուցում, վերահսկողություն ձեռք բերեց նաեւ Շահնշահյան տան նկատմամբ<sup>6</sup>: Հաշվի առնելով Դեմետրե Բ-ի վերահաս մահապատժի հանգամանքը 1289-ին, ինչպես նաեւ Իվանե Բ-ի եւ մոնղոլների փոխհարաբերությունները՝ Ջաքարյանների արձանագրության առկայությունը Անիում այդ նույն տարում<sup>7</sup>, կարելի է եզրակացնել, որ Իվանեն (եթե նա դեռ կենդանի էր) եւ տոհմակիցները վերականգնել էին նախկին իրավունքները հայրա-

1 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառարանություն*, էջ 157-158, 163-164:

2 *Ջեօղոօս Շեօջրջձա*, II, թ. 259; *Վրաց ժամանակագրություն*, էջ 130:

3 Տե՛ս Աույն տեղերում, էջ 270, էջ 140:

4 Տե՛ս Աույն տեղերում, էջ 239, էջ 111-114:

5 Տե՛ս Աույն տեղերում, էջ 284, էջ 152:

6 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 336:

7 *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 225:

կան տիրույթների եւ անգամ՝ ավելի քան երկու տասնամյակ առաջ վաճառված Անիի նկատմամբ:

Իվանե Բ-ի կինը կրում էր Զաքարյան տան հարսների համար ավանդական խոշա (խոշաք) անունը<sup>1</sup>:

6. Մխարգրձեկ, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել 1285 թ. հետո): Մխարգրձեկի «պարոնութիւն»-ը նշվում է Արուճում<sup>2</sup>, իսկ նրա եւ Իվանե Բ-ի համատեղ իշխանությունը՝ Օձունում, ենթադրելի է՝ նրանց «ծառա» Սմբատի արձանագրությունից<sup>3</sup>: Ընդ որում, արձանագրությունների բանաձևային հատվածներից երեւում է, որ այդ տարածքներում գերակայությունը պատկանել է Իվանե Բ-ին: Այսպես, առաջին արձանագրությունում անհրաժեշտ է համարվել Մխարգրձեկի ինքնությունը ճշտորոշելիս նշել, որ նա Իվանե Բ-ի եղբայրն է, իսկ երկրորդում Սմբատը նախ հիշատակում է «մեծին Իւանէ»-ին եւ ապա միայն՝ Մխարգրձեկին, առանց վերջինիս անձնավորության կարեւորման: Իվանե Բ-ին արեւատություն մաղթելը պատահական չպետք է համարել իր իսկ Մխարգրձեկի արձանագրությունում<sup>4</sup>: Հնարավոր է ենթադրել, որ եղբոր՝ Զաքարեի սպանությունից հետո Մխարգրձեկը որոշ ժամանակ զբաղեցրել է ամիրսպասալարի պաշտոնը: Նա մեկ անգամ է իրեն ամիրսպասալար անվանում<sup>5</sup>, իսկ 1279 թվականին «աթաբեկ եւ ամիրսպասալար» է կոչում աներոջը՝ Սադուն Բ Մահկանաբերդցուն<sup>6</sup>:

Դավանական դիրքորոշման առումով Մխարգրձեկը տիպիկ երեւույթ է ներկայացնում Զաքարյան իշխանների շարքում: 1279 թվականին նա զանգակատուն-տապանատուն է կառուցել Քոբայրում<sup>7</sup>, բայց եւ նվիրատվություններ է կատարել Հաղբատի Սուրբ Նշան եկեղեցուն<sup>8</sup>, «մահու շափ» տրտմել Սանահնի վանքն «անմարդ» գտնելիս<sup>9</sup>: Այս բոլոր ձեռնարկումներին մասնակցել է կինը՝ Սադուն Բ Մահկանաբերդցու դուստր Վանենին: Մխարգրձեկը վերջին անգամ հիշատակվում է 1285 թվականին<sup>10</sup>: Թաղված է Քոբայրում<sup>11</sup>:

7. Աղբուղա Ա, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել 1289 թ. հետո): Աղբուղան հայտնի է միայն իր կնոջ՝ Թամարի հետ միասին Անիում 1289 թ. թողած նվիրատվական արձանագրությունից<sup>12</sup>:

1 А. Г. Шанидзе, Грузинская надпись XIII века в селе Кови, с. 11; Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 100-101:

2 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 144-145:

3 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 163-64:

4 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 177:

5 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 125:

6 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 177:

7 Նույն տեղում:

8 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 171: Արձանագրությունը գրվել է մինչև 1280 թվականը (տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 183): «Պարոն Մխարգրձեկն» հիշված է նաև Հաղբատի մի եղծված վիմագրում (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 228):

9 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 125:

10 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 144-145:

11 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 182:

12 Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 22:

8. Գեորգի, որդի Շահնշահ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել 1282 թվականից հետո): Միակ հոգեւորականն է Զաքարյանների ողջ տոհմում: Գեորգի աբեղայի գործունեությունը գլխավորապես ծավալվել է Քոբայրի վանքում: 1276 թվականին սալարկել է գլխավոր եկեղեցին, իսկ վեց տարի անց ձեռնամուխ է եղել այդ եկեղեցու եւ հյուսիսային գավթի որմնանկարմանը: Նույն գավթում էլ պահպանվել է նրա տապանաքարը<sup>1</sup>:

9. Շահնշահ Բ, որդի Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, հավանաբար՝ 60-ական թվականներին, մահացել 1320 թվականին): Անշուշտ, Իվանե Բ-ի ավագ որդին է, ինչպես երեւում է Կոշի վրացերեն արձանագրությունում առանձնացվելու փաստից եւ եղբոր՝ Աղբուղա Բ-ի թողած վիճազրերի արտահայտություններից<sup>2</sup>: Իր ծնվելու պահին (1260-ական թթ.) Իվանե Բ-ն արդեն հասուն գործիչ էր: Բոլոր դեպքերում արդեն 1275 թվականին «արեւշատութիւն» է մողթվում Իվանե Բ-ի որդիներին<sup>3</sup>: Շահնշահն ակտիվ քաղաքական գործունեություն է ծավալել ԺԳ դ. 90-ական թվականներից<sup>4</sup>: Երկարատեւ ընդմիջումից հետո նրան հաջողվել է վերստին միաժամանակ տիրել երկու կարեւորագույն արքունի պաշտոնների: Նա «աթապակ ամիրսպասալար» է կոչվում 1291 թվականին գրված երեք վիճազրերում: Բացի Անիից<sup>5</sup>՝ «աթապակ եւ ամիրսպասալար» Շահնշահը մեկ այլ արձանագրություն է թողել Կոշում ՁԻ կամ ՁԽ թվականին<sup>6</sup>: Հնարավոր ՁԻ թվականը (1271 թ.) բացառվում է, քանի որ այդ ժամանակ նշված պաշտոնները պատկանում էին Սաղուն Բ Մահկանաբերդցուն, հետեւաբար՝ մնում է ՁԽ թվականի (1291 թ.) տարբերակը: Երրորդ վիճազրի մասին. թվում է, թե պետք է Շահնշահ Բ-ին վերագրել Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցում թողնված արձանագրությունը. «Ի թուին Չ [1251] ժամանակ աթաբագ ամիրսպասալար Շահնշահի»<sup>7</sup>: Հարցն այն է, որ Շահնշահ Ա-ն աթաբակ չի եղել, իսկ ամիրսպասալարությունը 1251 թվականին պատկանում էր նրա Զաքարե որդուն: Եթե ենթադրենք, որ վնասվել է կամ բաց է թողնվել տասնավորը նշող «Խ» տառը, ապա կվերանան բոլոր հարցական եւ հակասական տեղիները:

Հետագայում այդ տիտղոսներով (երբեմն՝ առանձին-առանձին) Շահնշահ Բ-ի հիշատակությունները դառնում են սովորական երեւույթ: Ուշագրավ է, որ Կիլիկյան Հայաստանում գրված Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրությունում Շահնշահ Բ-ն հիշատակվում է որպես «աւաքն մարաջախն վրաց»<sup>8</sup>:

Աթաբակի եւ ամիրսպասալարի պաշտոնների միավորումը Զաքարյանների տոհմի ներկայացուցչի ձեռքում, այն էլ՝ մի ժամանակահատվածում, երբ ասպարե-

1 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 173, 179:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքննություն*, էջ 157-58:

4 Զարմանալի է, որ Գարեգին Հովսեփյանը Օսմանյան Բ-ին «Զաքարեան տոհմի աւագ իշխան» է համարում 1268 թվականից եւ նույնիսկ կարծում է, թե «նորա իշխանությունը պետք է նշանակել 1261/2 թուականից» (Գ. կողմ. Յովսեփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 406):

5 Տե՛ս *Դիվան հայ վիճագրության*, պր. I, էջ 68:

6 Տե՛ս *Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները*, էջ 55-56:

7 *Դիվան հայ վիճագրության*, պր. I, էջ 64:

8 Տե՛ս Ա. Ի. Մաթեոսյան, *Հեթում Ախտուց տիրոջ եւ Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 198:

զից շէր հեռացել 1289 թվականին Վախթանգ Բ-ի կողմից այդ գործակալությունների գլուխ բարձրացված Խուժու Բուդա Մահկանաբերդցին, հնարավոր է բացատրել Վրացական թագավորությունում ծավալված սուր ներքաղաքական պայքարով: Ինչպես հայտնի է, Վախթանգ Բ-ի գահակալությունից երկու տարի անց Խուժու Բուդան «Նոյինների մոտ ջանաց, որպեսզի վերցնեն թագավորությունը Վախթանգից»<sup>1</sup>, եւ գահի համար պայքար ծավալվեց Դավիթ Նարինի որդի Վախթանգ Բ-ի եւ Դեմետրե Բ-ի որդի Դավիթ Լ-ի միջեւ<sup>2</sup>: Պարզվում է, որ այս միջակայքում էլ՝ արդեն 1291 թվականին, մրցակից արքաներից որեւէ մեկը, ի հակադրություն Խուժու Բուդայի, Շահնշահ Բ-ին է շնորհել արքունիքի երկու առանցքային պաշտոնները<sup>3</sup>:

Այս անցուդարձերի ժամանակագրությունը որոշվում է բավականաչափ հստակորեն: Ըստ Վրաց ժամանակագրության՝ Վախթանգ Բ-ի դեմ իր գործունեությունը Խուժու Բուդան սկսել է դեռեւս Արղուն խանի հիվանդության ժամանակ, որը տեւել է շուրջ չորս ամիս, եւ նոյինները նրան խեղդամահ են արել 1291 թ. մարտի 12-ին<sup>4</sup>: Այսպիսով, գահակալական պայքարը սկսվել է 1290 թ. վերջին եւ ավարտվել 1291 թվականին, երբ «երեք տարի թագավորելուց հետո» վախճանվեց Վախթանգ Բ-ն<sup>5</sup>:

Պետք է նշել, որ Զաքարյան իշխանը հետագա բազում տարիների ընթացքում պահպանել է իր դիրքը: Այս առումով խոստով է այն փաստը, որ Շահնշահ Բ-ն անփոփոխ կերպով մասնակցել է ժամանակի բոլոր վրաց արքաների գահ բարձրացմանը: Այդպես էր Դավիթ Լ-ի գահակալության սկզբում, 1292 թվականին<sup>6</sup>, ապա նաեւ 1299 թվականին՝ ապագա Գեորգի Պայծառին գահը հանձնելիս<sup>7</sup>: 1311 թվականին նա ուղեկցում էր Դավիթ Լ-ի որդի Գեորգի Զ-ին, երբ Ուլչեյթու իլխանը «փոքրիկ (կրտսեր) Գեորգիին թագավոր ուղարկեց, որպեսզի ամբողջ Վրաստանը ի մի ժողովեն Գեորգիի թագավորության ներքո»<sup>8</sup>:

1 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 294; *Վրաց ժամանակագրություն*, էջ 161:

2 Տե՛ս **Օ. Զաւաձոձու**, *Ջրտոլոս Երոս Եժոձոս*, III, էջ 376-381:

3 Ուշագրաւ է, որ արքունի պաշտոնների շնորհումը եւ մեձատոհմիկների շնորհագրկումը բարեխղձորեն արձանագրող Վրաց ժամանակագրությունը Վախտանգ Բ-ի գահակալության սկզբում Խոյլու Բուդային խնդրո աոարկա երկու պաշտոնների շնորհումը հավաստելուց հետո, այլևս չի հիշատակում Մահկանաբերդցի իշխանի պաշտոն-տիտղոսները: Մյուս կողմից՝ պատմիչը խուսափում է նաեւ Շահնշահ Բ-ին ըստ պաշտոնի ներկայացնելուց, թեւս նկարագրում է նրա գործունեությունը: Աթաբեկի եւ ամիրսպասալարի պաշտոնների վիճելի լինելը (կամ՝ միաժամանակ հակառակորդ արքաների կողմից երկու զանազան անձանց շնորհվելը) չէ՞ արդյոք վրացի ժամանակագրի վկայությունների անորոշության պատճառը: Զարմանալի է «Վրաստանի պատմության ակնարկների» այն պնդումը, թե Շահնշահ Բ-ն նախ մանդատորությունացա է եղել, իսկ հետո ստացել է նաեւ ամիրսպասալարի պաշտոնը (*Նաժրտոլոս Երոս Եժոձոս Եւոզրեձա*, էջ 643-644, ծնթ. 3, էջ 645, ծնթ. 7): Ի հաստատումն դրա՝ հղվում է «Բարթիլիս ցխովրեբան», բայց նշված էլէրում Շահնշահ Բ-ն ընդհանրապես որեւէ պաշտոնով հանդես չի գալիս:

4 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 294; *Վրաց ժամանակագրություն*, էջ 161: Լնմ. **Րաիւո ան-Ըն**, т. III, с. 126-127.

5 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 293; *Վրաց ժամանակագրություն*, էջ 162:

6 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 297; *Վրաց ժամանակագրություն*, էջ 163: Լնմ. **Օ. Զաւաձոձու**, *Ջրտոլոս Երոս Եժոձոս*, III, ՅՅ. 238.

7 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 304; *Վրաց ժամանակագրություն*, էջ 169-170: Լնմ. **Օ. Զաւաձոձու**, *Ջրտոլոս Երոս Եժոձոս*, III, ՅՅ. 244-245.

8 *Ջրտոլոս Եւոզրեձա*, II, ՅՅ. 324; *Վրաց ժամանակագրություն*, էջ 187:

Սերտ են եղել Շահնշահ Բ-ի կապերը մոնղոլական իշխանությունների հետ: Մասնավորապես, նա մասնակցում էր Դավիթ Ը-ի դեմ ուղղված մոնղոլական պատ-  
 ժիչ արշավանքին<sup>1</sup>: Նա մոնղոլական բանակի զորահրամանատարներից էր 1299-  
 1301 թվականներին Ղազան խանի՝ դեպի Ասորիք եւ Եգիպտոս ձեռնարկած արշա-  
 վանքի միջոցին<sup>2</sup>: Շահնշահ Բ-ի թողած արձանագրությունների աշխարհագրությու-  
 նը վկայում է, որ նա իշխում էր Արագածոտնում եւ Անիում<sup>3</sup>: Քանի որ Շահնշահ Բ-ն  
 ամուսնացել էր Խոշաքի դուստր Խուանդգեի հետ, ապա որոշակի բաժին էր ստացել  
 նաեւ Ավագյան տան ժառանգությունից: Այս ամուսնության շնորհիվ միայն Շահն-  
 շահյան տան ժառանգները կարող էին տեր դառնալ Բջնիին, որտեղ եւ պահպանվել  
 են Զաքարյանների մասին վերջին հիշատակությունները: Ճիշտ նույն կերպ Շահն-  
 շահ Բ-ն ի վիճակի կլիներ վարչա-տնտեսական բնույթի կարգադրություններ թողնել  
 Ավագյան տան հինավուրց մասերում՝ Երեւանի մերձակայքում<sup>4</sup> եւ Վաղարշապա-  
 տում<sup>5</sup>: Տիրույթների եւ ազդեցության ընդարձակումը Շահնշահ Բ-ին տրվել է, ինչ-  
 պես երեւում է, զգալի դժվարությունների ու փորձությունների գնով: Նրա ստորա-  
 կաններից Ազիզբեկ Ա-ն՝ «որոշեալ յամենայն ընչից», այլուամենայնիվ կարողացել էր  
 հաղթել թշնամիներին եւ նորոգել նրանց ավերած Եղվարդը: Այդ ծանր պահին նա,  
 հավանաբար, համագործակցել է Շահնշահ Բ-ի հետ, քանի որ, ըստ հիշատակագրի՝  
 «...յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց  
 մեծին Շահինշահի եւ Խոյանդգային եւ հեզաբար եւ հնազանդաբար շրջէին ընդ նո-  
 սայ մինչեւ ամ[ենայն] դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանն զՆղիվարդ»<sup>6</sup>: Գե-  
 րակայի եւ ստորակայի համատեղ մաքառումների ժամանակագրությունը աղբյուր-  
 ները չեն ճշտում, բայց ենթադրելի է, որ ԺԳ դ. 90-ական թվականներին արհավիրք-  
 ներն արդեն դիմագրավված էին: Բոլոր դեպքերում, սկսած ԺԳ դ. 90-ական թվա-  
 կաններից, աղբյուրները հավաստում են Շահնշահ Բ-ի «պարոնութիւն»-ը Անիում:

Շահնշահ Բ-ն մահացել է 1320 թվականին<sup>7</sup>, երեք տասնամյակ շարունակ ազդե-  
 ցիկ դիրք ու դեր ունենալուց հետո:

10. Աղբուղա Բ, որդի Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել  
 1326 թվականից հետո): Առաջին անգամ հիշվում է 1291-ին<sup>8</sup>: Գործել է գլխավորա-  
 պես Արագածոտնում, որտեղ եւ գտնվել են նրա անձնական կալվածքները: 1301  
 թվականին Շահնշահ Բ-ի հրամանով ձեռնամուխ է եղել Անիի կառավարմանը<sup>9</sup>: Հա-

---

1 Տե՛ս *Ժեռօղոս Եւջըրջճ*, II, ՅՅ. 306; *Վրաց ժամանակագրություն*, էջ 170-171:  
 2 Տե՛ս *Մանր ժամանակագրություններ*, հտ. II, էջ 151:  
 3 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 27, 64, 69; *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 818; **Կ. Ա. Մաթեոսյան**, *ԺԴ դարի հիշատակարանները Անի քաղաքի եւ անեցիների մասին*, – «Պատմա-բանասիրական հանդես», 1985 № 3, էջ 110:  
 4 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Երեւան*, էջ 216: Հրատարակիչը, ելնելով գրերի համեմատաբար հին ձեւերից, հակված է արձանագրությունը վերագրել Ծահնշահ Ա-ին:  
 5 **Գ. Յովսէփեան**, *Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրությունը*, – «Արարատ», 1898, էջ 441-442:  
 6 **Գ. կթղ. Յովսէփեան**, *Ազիբեկեք եւ նրանց շինարարական գործը*, էջ 423-424:  
 7 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 27: «Պատրոն»-ի մահն արձանագրել է նաեւ բաժրար Սարգիս Ծիլեցը (տե՛ս նույն տեղում, էջ 69):  
 8 Տե՛ս **Գ. կթղ. Յովսէփեան**, *Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրությունը*, էջ 441-442:  
 9 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 28:

չորդ տարիներին հիշատակվում է միայն Արագածոտնում: 1304 թվականին հարկային զիջումներ է կատարել Փարպիում<sup>1</sup>, 1307-ին՝ Թալիշում<sup>2</sup>: 1323 թվականին Աշտարակում նվիրատվական արձանագրություն է թողել նրա կինը՝ Սիթի խաթունը<sup>3</sup>: Ամուսինները վերջին անգամ համատեղ հիշատակվում են 1326 թվականին<sup>4</sup>: Հնարավոր է, որ Աղբուղա Բ-ն կենդանի էր նաև 1336 թվականին: Այդպես կարծելու հիմք է ընձեռում Վահրամ աթաբեկի 1336 թվականի հոռոմոսյան արձանագրությունը, որտեղ նա նվիրատվություններ է կատարել «վասն արեւշատութեան իմոյ հարազատ եղբարց կենդանեաց եւ հանգուցելոց պարոն Շայինշի, Աղբուղին եւ Արտաշիրին, Զազին»<sup>5</sup>: Բացորոշ է, որ Վահրամ աթաբեկը երկու խմբի է բաժանում իր շորս եղբայրներին եւ, եթե նկատի ունենանք նրանցից Շահնշահ Բ-ի եւ Զազայի՝ մինչեւ 1336 թվականը իրոք մահացած լինելու հանգամանքը, ապա ստացվում է, որ Աղբուղա Բ-ն եւ Արտաշիր Բ-ն շարունակում էին իշխել իրենց տիրույթներում:

Աղբուղա Բ-ն հայտնի է նաև վերոնշյալ Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքի «աղապ»-ներից<sup>6</sup>:

11. Արտաշիր Բ, որդի Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել է, թերեւս, 1336 թվականից հետո): Ծանոթ է միայն եղբոր՝ Վահրամ աթաբեկի վերոհիշյալ հոռոմոսյան արձանագրությունից<sup>7</sup>:

12. Զազա, որդի Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին): Վաղամեռիկ Զազան վախճանվել է մինչեւ Աղբուղա Բ-ի նշանակած «տաղմաճի»-ների արձանագրությունների փորագրումը, առավել հավանական է՝ 1301 թվականին անմիջականորեն հաջորդող տարիներին: Այդպես կարծելու հիմքն այն է, որ Աղբուղա Բ-ն 1301 թվականի իր արձանագրության մեջ Զազային չի առանձնացնում մյուս եղբայրներից, «երկարակենդանութիւն եւ արեւշատութիւն» մաղթելով ամենքին, իսկ նրա պաշտոնյաները հստակորեն կատարում են այդ բաժանումը՝ «վասն պարոնացն [պարոն Աղբուղին] արեւշատութեան... վասն պարոն Զազին հոգոյն»<sup>8</sup>:

13. Վահրամ, որդի Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել 1342 թվականից հետո): Ինչպես երեւում է, ամենաերկարակյացն է գտնվել եղբայր-

1 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 159; Ե. Տեր-Մինասյան, *Աղբուղա*, էջ 55: Ղեւոնդ Ալիշանը 209 թվականի փոխարեն (=1304 թ.) ընթերցել է 209 (=1264 թ.): Նույնատիպ մյուս սխալի մասին տե՛ս հաջորդ ծանոթագրությունը:

2 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 141: Սխալ վերծանված տարեթիվը (209 = 1267 թ.) Պարույր Մուրադյանը սրբագրում է (Սուրեն Ավագյանի տրամադրած լուսանկարի հիման վրա) 202-ի (=1307 թ.), որը լիովին համապատասխանում է Աղբուղա Բ-ի ժամանակաշրջանին (Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 105, ծնթ. 32):

3 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Աշտարակ*, – «Էջմիածին», № 1966, Ը, էջ 59:

4 Նույն տեղում, էջ 58: Նրանք արձանագրություններ են թողել Աշտարակում նաև նախորդ տարիներին (1317-1325): Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիճակագրությունների բառաքննություն*, էջ 42-43, 336:

5 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, էջ 28:

6 Տե՛ս Ե. Թեթրեյան, *Աղբուղա*, էջ 82, 104:

7 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, էջ 28:

8 Տե՛ս *Դիվան հայ վիճակագրության*, պր. I, էջ 28, 30:

ների շարքում: ԺԴ դ. 30-ական թվականներին եւ հաջորդ տասնամյակի սկզբին գլխավորում էր Զաքարյանների տոհմը:

Առաջին անգամ հիշատակվում է Արագածոտնում, որպես զինվորական գործիչ, 1333 թվականին<sup>1</sup>: Կապված է եղել նաեւ Շիրակի եւ Անիի հետ: 1336 թվականին նյութապես օժանդակել է Հոռոմոսի վանքին<sup>2</sup>: 1342 թվականին նորոգել է Անիի Սուրբ Փրկիչ եկեղեցու գմբեթը<sup>3</sup>: Հուղարկավորվել է Քոբայրում, Շահնշահյան տան տոհմական հանգստարանում<sup>4</sup> Վահրամը հիշատակվում է նաեւ Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքի «աղապ»-ներում<sup>5</sup>:

14. Գոնցա, դուստր Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել 1313 թվականից հետո, մինչեւ 1331 թվականը): Արդեն ԺԳ դ. 90-ական թվականներին ամուսնացած էր Տարսայիճ Օրբեկյանի որդի Զալալի հետ: Ամուսինները 1301 թվականին կառուցել են Զինջիուլուի Սպիտակավոր Աստվածածին եկեղեցին<sup>6</sup>: Ըստ հիշատակարանների կենդանի էր 1313 թվականին<sup>7</sup>: Կնքել է իր մահկանացուն մինչեւ 1331 թվականը<sup>8</sup>:

15. Թամար, դուստր Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել է, թերեւս, ԺԴ դ. առաջին կեսին): Քոբայրում պահպանված տապանագրից հայտնի է դառնում, որ ամուսնացած է եղել Սուլա Գուրկենելիի հետ<sup>9</sup>:

16. Խորիշահ, դուստր Իվանե Բ-ի (ծնվել է ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել ԺԴ դ. առաջին կեսին, 1313 թվականից հետո): Իվանե Բ-ի այս դստեր մասին միակ վկայությունը պահպանվել է համեմատաբար վերջերս ամբողջությամբ հրատարակված մի հիշատակարանում<sup>10</sup>, ուստի լիովին անձանոթ է մնացել հետազոտողներին: Խորիշահն ամուսնացած էր Շահնշահ Բ-ի հեջուբ Զաքարիա Պահլավունու հետ:

17. Դավիթ, որդի Արտաշիր Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երրորդ քառորդում, մահացել, թերեւս՝ ԺԴ դ. առաջին կեսին): Ծանոթ է միայն Երուսաղեմի Ս. Խաչ վանքի «Հայսմավուրքի» մի հիշատակումից, որով «աղապ» է սահմանվում «Արդաշելի [Արտաշիր – Հ. Մ.] որդի Դավիթի եւ նրա կնոջ՝ Խուարաշանի [հիշատակին]»<sup>11</sup>:

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 10, ծնթ. 3: Այստեղ սեջերված հիշատակարանի Վահրամ իշխանին առաջին անգամ Զաքարյանների տոհմի հետ է կապել Պարույր Մուրադյանը (Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 112):

2 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 28:

3 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 44:

4 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 178:

5 Տե՛ս Ե. Մեթրեջեղո, *նշվ. աշխ.*, էջ 82:

6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 442-443: Հ. Նիխագարյան, *Հովհաննես Կարապետի վանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները*, – «Էջմիածին», 1962, № Ա, էջ 61: Յ. Մելքոնեան, *Սուրբ Յովհաննու Կարապետի վանքը*, – «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2003, սն. 191-194:

7 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 100:

8 Նույն տեղում, էջ 231:

9 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 178-179:

10 Կ. Ա. Մաթեոսյան, *ԺԴ դարի հիշատակարանները Անի քաղաքի եւ անեցիների մասին*, էջ 110:

11 Տե՛ս Ե. Մեթրեջեղո, *նշվ. աշխ.*, էջ 107, 177:



18. Զաքարե Գ, որդի Շահնշահ Բ-ի (ծնվել է ԺԳ դ. վերջին քառորդում, առավել հավանական է՝ 90-ական թվականներին, մահացել է 1330 թվականից հետո): Առաջին անգամ անվանվում է, ծնողների հետ միասին, 1310 թվականին<sup>1</sup>: 1320 թվականին, հոր մահից հետո, ժառանգել է աթաբեկի տիտղոսը<sup>2</sup>: Իշխում էր Անիում 1330 թվականին, երբ եռալեզու արձանագրությամբ (հայերեն, վրացերեն, պարսկերեն) հաստատել է Աբու Սայիդ իլխանի հրովարտակ-վիմագիրը<sup>3</sup>:

Ցավալիորեն ոչինչ հայտնի չէ 1320 թվականին հիշատակված «աստուածատուր զաւակացն Զաքարիայի եւ եղբարց նորա»<sup>4</sup> հետագա ճակատագրի մասին: ԺԳ դ. 30-40-ական թվականներին Զաքարեի հորեղբայր Վահրամի հանդես գալը, իսկ 50-ական թվականներին մյուս հորեղբայր՝ Զազայի որդի Շահնշահ Գ-ի ասպարեզի վրա լինելը մի այնպիսի տպավորությունն են ստեղծում, թե Զաքարեն, նրա եղբայրներն ու ժառանգներն ինչ-որ պատճառներով կորցրել են իշխանությունը հայրենի կալվածքների նկատմամբ:

19. Շահնշահ Գ, որդի Զազայի (ծնվել է ԺԳ դ. վերջին կամ հաջորդ հարյուրամյակի սկզբին, մահացել 1358 թվականից հետո):

Ժամանակին, հրատարակելով Բջնիի 1358 թվականի արձանագրությունը, Ղեւոնդ Ալիշանն անհարկի սրբագրումներ է կատարել բնագրում<sup>5</sup>: Այդ պատճառով էլ այն թյուր տեսակետն է առաջացել, թե Շահնշահ Գ-ն ոչ թե Զազայի որդին է, այլ հայրը<sup>6</sup>: Ուստի Հակոբ Մանանդյանն արդարացիորեն անընդունելի է համարել այդ շտկումները եւ ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ Ղ. Ալիշանը հետագայում վերանայել է իր նախկին կարծիքը եւ Շահնշահ Գ-ին համարել Զազայի որդի<sup>7</sup>: Ընդ սմին, Բջնիի արձանագրությունների գիտական հրատարակությունից անտեղյակ Լեւոն Բաբայանը փորձել է վերականգնել Ղ. Ալիշանի հին սխալը եւ նոր թյուրիմացություններ է ավելացրել: Նա Զազայից բացի, Շահնշահ Գ-ի որդի է հայտարարել նաեւ Աղբուղային, ընդ որում առանց աղբյուրների վկայակոչության<sup>8</sup>:

Առկա տվյալները, ցավոք, վերաբերում են Շահնշահ Գ-ի գործունեության միայն 1357-1358 թվականների ժամանակահատվածին, երբ Անիում իշխող «աթապակ եւ մեծ սպասալար» Շահնշահը 1357 թվականին մի կերպ կարողացավ ազատվել «տաճկաց» զորքից<sup>9</sup>: Հաջորդ տարում Բջնիում Շահնշահ Գ-ի թողած արձանագրությունից պարզ է դառնում, որ Անիի հետ միաժամանակ հարձակման է ենթարկվել

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 64:

2 Նույն տեղում, էջ 27, 69: Զաքարեմ «աթաբեկ» տիտղոսով է հանդես գալիս Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքի «աղասպ»-ներում (տե՛ս Ե. ՅԵՃՐՅՅԵԼՕ, ԳՂՎ. աշխ., էջ 85):

3 Տե՛ս **В. В. Бартольд**, *Персидская надпись на анийской мечети Мануче*, – Сочинения, т. IV, Москва, 1966, с. 313-338. Թվագրության մասին մանրամասն տե՛ս **Պ. Մ. Մուրադյան**, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 54-60:

4 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 69:

5 **Հ. Ղ. Ալիշան**, *Այրարատ*, էջ 273-274:

6 **Հ. Ղ. Ալիշան**, *Շիրակ*, էջ 62; **Գարեգին Ա. Կթղ.**, *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 895:

7 Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, *Հայաստանում*, հտ. Բ, էջ 447; **Հ. Մանանդյան**, ԳՂՎ. աշխ., էջ 344:

8 **Լ. Հ. Բաբայան**, ԳՂՎ. աշխ., էջ 359:

9 Տե՛ս **Կ. Ա. Մաթեոսյան**, *ԺԴ դարի հիշատակարանները Անի քաղաքի եւ անեցիների մասին*, էջ 112: Հմմ. *Հայ ժողովրդի պատմություն*, հտ. IV, էջ 18:

նաեւ Բջնին, բայց նա ի վիճակի է եղել վերադարձնել կորցրած տիրույթները<sup>1</sup>: Հովհաննավանքի արձանագրության քննությունից (տե՛ս ստորեւ) կարելի է եզրակացնել, որ մտավորապես նույն ճակատագիրն են ունեցել Զաքարյանների՝ Արագածոտնում գտնվող կալվածքները:

20. Շիրվանշահ, որդի Զազայի (ծնվել է ԺԳ դ. վերջին կամ ԺԴ դ. սկզբին, մահացել է, թերեւս, ԺԴ դ. 50-ական թվականներին): Առաջինը Գարեգին Հովսեփյանն է ուշադրություն հրավիրել այն իրողության վրա, որ Հավուց Թառի վանքի արձանագրություններից մեկը, «...որի առաջին երկու տողերի սկզբնավորության քարերն ընկած են, գրված են Թամարի եւ Աթաբեկ Շահնշահի հիշատակությամբ: Դա Շահնշահ Գ-ն է, որի եղբայրն էր Շրվանշահը՝ հիշատակված իբրեւ Անիի եւ Բջնիի տեր 1357 եւ 1358 թվականների հիշատակարանների մեջ, բայց նաեւ Հովհաննավանքի՝ [տպագրված է՝ Հանավանքի – Ն. Մ.] բանասիրությանը դեռեւս անծանոթ՝ մի արձանագրության մեջ «դիտուփալ Թամարի» հետ, որով այլեւս կասկածի տեղիք չի մնում նորա անձի եւ ժամանակի վերաբերությամբ»<sup>2</sup>: Այսպիսով, անվանի հայագետը կատարել է այն կարեւոր եզրակացությունը, որ Շահնշահ Գ-ն ունեցել է Շիրվանշահ անունով եղբայր, որը գործել է նրա հետ գրեթե նույն տարիներին: Մինչեւ Հովհաննավանքի արձանագրությանն անդրադառնալը, անհրաժեշտ է մեջբերել եւս մի սկզբնաղբյուր, որը դարձյալ գիտական շրջանառության մեջ է դրվել Գարեգին Հովսեփյանի կողմից: Բագնայրի Ավետարանի հետագա հիշատակարաններից մեկի (ըստ հրատարակչի՝ ԺԴ դ. կեսերի) հեղինակը հայտնում է, որ ձեռագիրը «ազատ ոմն Աղպուղայ անուն... էբեր յՈւրծ բազում աշխատանաւք, զոր աստուածայգութ պարոն հրամայեաց մեզ վերստին ընծայեալ ի Սուրբ Աստուածածնին յիշատակ հոգոյ իւրոյ եւ վասն յերկար կենդանութեանն մեծ թագաւորաց թագաւորին եւ ամենա[ւր]հնեալ զաւակաց իւրոց՝ աթապակ Շահանշահի» եւ եղբար իւրոյ պարոն Շրվանշահի»<sup>3</sup>: Այսպիսով՝ Շահնշահ Գ-ի եղբայր Շիրվանշահը բավականաչափ բարձր դիրք է ունեցել Զաքարյանների իշխանությունում ԺԴ դ. երկրորդ քառորդում: Մտավորապես նույն եզրակացությանը կարելի է հանգել Հովհաննավանքի անթվական արձանագրություններից մեկի տվյալների հիման վրա: Նկատի ունենալով նրա կարեւորությունը՝ մեջբերում եմ այն գրեթե ամբողջությամբ. «Շնորհին Աստուծոյ, ի տէրութեան պար[ոն] դրուփալ Թամարին, իր թագավորայրզարն որդի մեծն Մլքիսէթեկին Գաւրգէ. ես Ամսայջան, որդի Գոգորին եւ ամուսին իմ Բեսուճնի, հենց ելաւ պար[ոնաց] ձեռնէ զերկիրս առին, ես չբաժանեցայ ի ծառ[այ]ութենէս: Աստուած պարոնացն աշողում էրես, երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին հէրէնիք: Հասարակաց տունս խլած էր ու էգեց հողի շարիատ էր դրած. մեք էլ զհասարակ ի Սուրբ Կարապետս ապսրպարեցաք, վանից էգոյ հողի շարիատն վեր կալաք՝ վասն արեւշատութեան պարոնաց մերոց եւ պարոն աթապակ Շահնշահի եւ Շրվանշահի հոգոցն հա-

1 Տե՛ս Ե. Մուշեղյան, *Բջնիի 1358 թ. արձանագրության մասին*, – ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 7, էջ 97-100; Ե. Мухега́н, *Еще раз о надписи из селения Бджни от 1358 г.*, – “Труды” Государственного исторического музея Армении, т. V, Ер., 1959, с. 271-278.

2 Գ. Հովսեփյան, *Հավուց Թառի Ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ*, – «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հտ. Բ, էջ 29-30: Եղբայրները համատեղ են հսկելու գալիս անել շուրջ 1343 թվականին գրառված հիշատակագրություններից մեկում (տե՛ս Կ. Մաթեոսյան, *Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները*, Եր., 2009, էջ 131):

3 Գարեգին Ա կթղ. [Յովսեփեան], *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 891-892:

մար եւ արձան գրեցաք յաւիտենական... սպասաւորքս սուրբ ուխտիս խոստացան ի տարոջն ժԲ պատարաք ի տաւնի Հոգոյ գալստեան՝ Գ Շահնշահի, Գ Շրվանշահի, Բ՝ Զանէ, Բ՝ Ամսայջանիս, Բ Բեսուճնէ»<sup>1</sup>: Պարզվում է, որ, հավանաբար, 1357 թվականին Զաքարյաններին պատուհասած մեծ արհամարիքի ժամանակ, Շահնշահ Գ-ի եւ նրա եղբայր Շրվանշահի ստորականերից Ամսայջանը հավատարիմ է մնում իր պարոններին եւ Զաքարյանների կալվածքների հետգրավումից հետո ստանում է Հովհաննավանքը: Ամսայջանի արձանագրությունը գրվել է այդ իրադարձություններից որոշ ժամանակ անց, երբ վախճանված են եղել Շահնշահ Գ-ն եւ Շրվանշահը<sup>2</sup>, այդ պատճառով էլ մուտք-բանաձեւային հատվածում ունենք՝ «Ի տէրութեան պարոն դոուփալ Թամարին, իր թագավորայրզարն որդի մեծն Մելքիսեթեկին Գաւրգէ» ժամանակային ցուցումը: Ինչպես երեւում է, Հովհաննավանքի արձանագրությունը գրվել է ճիշտ այն Մելքիսեթեկի օրոք, որը Վրաց թագավոր է հիշատակվում 1361 թվականին Տիգրիսում գրված մի հիշատակարանում<sup>3</sup>: Թեեւ առայժմ հայտնի տվյալները ծայրաստիճան սահմանափակ են՝ իրական պատկերը վերականգնելու համար, անվիճելի է, որ Թամարի որդի Մելքիսեթեկը ժԴ դ. 60-ական թվականների սկզբին որոշակի իշխանություն է ունեցել Վրաստանում եւ Հյուսիս-արեւելյան Հայաստանում: Հավանաբար, այս ժամանակահատվածում էլ, այսինքն՝ 1357 թվականի ճգնաժամից որոշ ժամանակ անց, գրվել է Հովհաննավանքի արձանագրությունը: Թամարի եւ Մելքիսեթեկի իշխանությունը, անշուշտ, ազդեցիկ է եղել, որպեսզի նրանք ի վիճակի լինեին վերցնել ժԴ դ. կեսերին Արագածոտնին տիրող Վաչուտյաններից այդ տոհմի հինավուրց հոգեւոր կենտրոնն ու հանգստարանը՝ Հովհաննավանքը, եւ հանձնել այն Ամսայջանին որպես «հէրէնիք»:

Կարելի է ենթադրել, որ Մելքիսեթեկը եղել է Վրաստանի պատմության մեջ հայտնի «գավառական թագավորներից» մեկը: Խոսքը վերաբերում է այն տեղական խոշոր տիրակալներին, որոնք ազգակցական կապեր ունեին արքայական ընտանիքի հետ եւ իրենց հռչակել էին ամբողջ Վրաստանի թագավոր<sup>4</sup>: Հովհաննավանքի արձանագրության ու Տիգրիսի 1361 թվականի հիշատակարանի Մելքիսեթեկին, ամենայն հավանականությամբ, պետք է նույնանունացնել Վրաց թագավոր Դավիթ Լ-ի որդի Մելքիսեթեկի հետ, որը ժԴ դ. 40-50-ական թվականներին, իր եղբայր Անդրոնիկի հետ միասին, իշխում էր Գորիի շրջակա տարածքներում<sup>5</sup>:

---


1 Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 100-101:  
 2 Աշոտ Հովհաննիսյանը սխալմամբ Ծախնշահ Ա-ի եղբայր համարելով Ծիրվանշահին՝ գրում է. «Թերեւս, այդ անունը եւս տրվում էր ի պատիվ Ծիրվանի տերության, բայց դժվար թե դրա հետ կապված լիներ քաղաքական որեւէ տիտղոս կամ կալվածատիրական որեւէ իրավունք» (Ա. Հովհաննիսյան, Աշվ. աշխ., էջ 158-159, ծնթ. 4): ԺԴ դարում Ծիրվանը, իհարկե, միայն հեռավոր հուշեր կարող էր արթնացնել Զաքարյանների հոգում: Եղբայրներին անվանակոչելիս, թերեւս, որոշակի ազդեցություն է ունեցել վրաց արքաների տիտղոսացանկում նաեւ ժԴ դարում ավանդաբար պահպանվող «Ծախնշահ եւ Ծիրվանշահ» բնութագրումը: Վրաց աշխարհի իրողությունների արձագանք է նաեւ «դրուփալ» (բառացի՝ «թագուհի») բնորոշումը, ինչպես որ ժամանակին Աշվ. էջ 1 է Հրաչյա Աճառյանը (տե՛ս նրա՝ *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Եր., 1971, էջ 643):  
 3 Տե՛ս Յ. Քիրտեան, *Իրլանդիայի Տրալիգի մատենադարանի հայերէն ձեռագիրները*, – «Սիոն», 1972, էջ 168-169:  
 4 Տե՛ս Յ. Յոյնճյոյ, *Նշխարագրութեամբ XIV Եւրոպայի մասին*, Եր., 1989, թ. 111-112.  
 5 Նույն տեղում, էջ 113:

Խիստ կարեւոր է նաեւ Թամարի, նրա որդի Մելքիսեդեկի ու Ջաքարյաններ Շահնշահ Գ-ի եւ Շիրվանշահի առնչութեան պարզաբանումը: Թվում է, թե Թամարը արյունակցական կապ է ունեցել Ջաքարյանների հետ, որպէսզի նրա իրավունքները ճանաչվէին Արագածոտնում, իսկ մյուս կողմից՝ պատահական չի թվում «թագավորայգար» բնութագրումը նրա որդու ինքնութեանը բնորոշելիս: Կարելի է ենթադրել, որ Թամարն իրոք ամուսնացած է եղել վրաց Բագրատունիներից մեկնումեկի, հավանաբար՝ Դավիթ Լ-ի հետ եւ այդ պատճառով էլ հիշատակվում է «գրուփալ» («թագուհի») տիտղոսով:


Ստորեւ ներկայացվում են քննարկված իշխանատոհմերի ճյուղագրական աղյուսակները:

## ՉԱՔԱՐՅԱԼՆԵՐԻ ՏՈՅՄԱՃԱՌԵՐԸ


### ԱՎԱԳ (ԱՌԱԶԻՆ) ՉԱՔԱՐՅԱԼՆԵՐ




### ԹՄՈԳՎԵՑԻՆԵՐ




### ՎԱՅՐԱՄՅԱՆՆԵՐ



**ԱՎԱԳՅԱՆ ՏՈՒՆ**



**ՇԱԽՆՇԱԿՅԱՆ ՏՈՒՆ**



## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՄԱՅԿԱՆԱԲԵՐԴՑԻՆԵՐ (ՍԱԴՈՒՆՅԱՆՆԵՐ)

Մահկանաբերոցիների տոհմը պատվավոր տեղերից մեկն է զբաղեցնում ԺԲ-ԺԴ դարերի Հայաստանի ավատատիրական ավագանին ներկայացնող ընտանիքների շարքում: Այս իշխանական տան առավել հզորության փուլերում նրա անդամների ազդեցության շրջանակները դուրս էին գալիս Հայաստանի սահմաններից, իսկ ԺԳ դ. 70-80-ական թվականներին Մահկանաբերոցիներն ակնառու դեր էին կատարում նաև Արեւելյան Վրաստանի ճակատագրում: Տոհմի պատմությունը, Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ-ԺԴ դարերի քաղաքական առանցքային անցուղարձերի անքակտելի մասը կազմելով, առաջին հերթին ուշագրավ է առանձին իշխանական տների բարձրացման ու անկման պատճառների եւ ուղիների պարզաբանման, թագավորական իշխանության ու խոշոր ավատատերերի փոխհարաբերությունների տրամաբանության բացահայտման տեսանկյունից: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև Մահկանաբերոցիների ինքնատիպ էթնո-մշակութային դիմապատկերի հետազոտությունը: Դժվար է մատնացուցել դարաշրջանի մեկ այլ հայկական իշխանատոհմ, որն այդչափ աչքի ընկած լինի տարբեր էթնիկական, դավանական ու մշակութային աշխարհների հետ սերտ շփումներով ու կապերով:

Թերեւս, Մահկանաբերոցիների պատմության կարեւոր առանձնահատկությունն է՝ հաճախ Հայաստանից դուրս գործելու հանգամանքը, որը պայմանավորել է հայագետների համեմատաբար համեստ հետաքրքրությունը տոհմի գործունեության նկատմամբ: Հայագիտության մեջ միայն ակադ. Սուրեն Երեմյանն է առանձին աշխատություններ անդրադարձել Մահկանաբերոցիների պատմությանը, սակայն ռուսերեն գրված այդ հետազոտությունը մնացել է անտիպ, թեև նրանից հաճախ են օգտվել ուսումնասիրողները<sup>1</sup>: Վրացագետները, իրենց հերթին, զբաղվել են գլխավորապես ԺԳ դ. երկրորդ կեսի Մահկանաբերոցիների գործունեության ուսումնասիրությամբ: Տոհմի պատմության ԺԲ դարի ժամանակահատվածը սակավ չափով է ուսումնասիրվել վրացագիտության մեջ, որովհետեւ առաջին Մահկանաբերոցիների պատմությունն արտացոլող հայկական աղբյուրները համեմատաբար ուշ են գրվել վրացագետների ուշագրությունը: Մահկանաբերոցիների պատմությունը վերջին ժամանակներս զբաղեցրել է արտերկրի կովկասագետներին, սակայն Կիրիլ Թումանովի<sup>2</sup> եւ Բեռնհարդ Լիմպերի<sup>3</sup> աշխատություններում միայն ընտանիքի տոհմաձառը վերականգնելու փորձեր են ձեռնարկված. իշխանական տան ուղին ու ճակատագիրը ներկայացնելու եւ վերլուծելու խնդիր այդ հետազոտողներն իրենց առջեւ, փաստորեն, չեն դրել:

1 Տե՛ս. օրինակ՝ Վ. Հակոբյան, *Դավիթ Քոթայրեցու Ռիշատակարանը*, – ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 120, ծնթ. 1; Ա. Հովհաննիսյան, *Աշխ.*, էջ 213-214:  
2 Տե՛ս **C. Toumanoff**, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucase Chrétienne...*, p. 94-95.  
3 Տե՛ս **B. Limper**, *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus*, p. 227-231.

## ՏՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ

Տոհմի անվանման հարցը գիտական գրականության մեջ դեռևս հատուկ քննության առակա չի դարձել: Այժմյան հայագիտական հետազոտություններում ընտանիքն առավել հայտնի է «Մահականաբերդի Արծրունիներ» անվանումով: Այն շրջանառության մեջ է մտցրել Սուրեն Երեմյանը, որին հետևել են հաջորդ ուսումնասիրողները: Ավելի վաղ հայագետները տոհմի անդամներին կոչում էին Արծրունիներ, առանց որեւէ մասնավորեցման<sup>1</sup>: Վրացագետները, ավանդաբար, «Մահականաբերդի» են կոչում միայն Սաղուն Բ-ին եւ Խուլթլու Բուղային: Միայն վերջերս են նրանք սկսել, հայագիտական գրականության ազդեցությամբ, «Արծրունի» անվանել տոհմի վաղ շրջանի ներկայացուցիչներին՝ Ամիր-Քրդին եւ Վասակին<sup>2</sup>: Ամբողջ տոհմի միասնական անվանման հարցը նրանց ընդհանրապես չի զբաղեցրել:

Ելնելով այն իրողությունից, որ տոհմի գործունեության դարաշրջանի մեծ մասում (հնարավոր է՝ բացառությամբ ԺԳ դ. վերջից սկսված եզրափակիչ փուլի, որի մասին տեղեկությունները բացակայում են) նրանց էր պատկանում Մահականաբերդ ամրոցը՝ շրջակա գավառով հանդերձ, բավարար հիմք գոյություն ունի ընտանիքը «Մահականաբերդի» կոչելու համար: Զիշտ է, այն վկայված է վրացական աղբյուրում<sup>3</sup>, սակայն լիովին հնարավոր էր նրա գործածությունը նաեւ հայկական միջավայրում: Պետք է հաշվի առնել, որ տոհմային կալվածքի, եւ հատկապես բերդի, անվանումից կազմված տոհմանուններն ամենեւին էլ խորթ չեն եղել ԺԲ-ԺԳ դարերի հայ իրականությանը: Մասնավորապես՝ պատմիչներից միայն Ստեփանոս Օրբելյանը վկայում է «Գագեցի», «Գեռաքարեցի», «Մածնաբերդեցի», «Աուփայեցի», «Տաշրացի», «Կայենեցի» անվանումների տարածված լինելը նշված ժամանակաշրջանում<sup>4</sup>: Խոստեն են նաեւ փաստաթղթերի, վիմագիր արձանագրությունների եւ ձեռագրերի հիշատակարանների հաղորդումները, որոնցում հիշատակվում են «Ալվեցի»<sup>5</sup>, «Աղեկցի»<sup>6</sup>, «Շահունեցի»<sup>7</sup> տոհմանունները:

Ստեփանոս Օրբելյանը միաժամանակ հաղորդում է Մահականաբերդիցիների տոհմի այն անվանումը, որը գործածական էր դարձել նշանավոր Սաղուն Բ-ի գոր-

- 
- 1 Տե՛ս Հ. Մ. Չամչեանց, ԳՎ. աշխ., էջ 257-258; Հ. Ղ. Ալիշան, Հայագատում, հտ. Բ, էջ 477, 528, ծմթ. 5; Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ, էջ 11, 50 եւ հետո: Ուշագրավ է, որ գիտնականն Ամիր Քրդին եւ Սաղուն Բ-ին կոչում է նաեւ «Մահականաբերդի իշխաններ», որը «Մահականաբերդի» անվանման ընդարձակ տարբերակն է: Տոհմի անդամներին մեծ մասամբ Արծրունի է անվանում նաեւ Աշոտ Հովհաննիսյանը (Ա. Հովհաննիսյան, ԳՎ. աշխ., էջ 52, 167, 213-215 եւ հետո):
  - 2 Տե՛ս Յ. Թեյսեան, Սամոնա թուրքական շրջանը և Սամոնա թուրքական XII հարյուրամյակի յիշատակը, ԳՎ. 277; Ծ. Չեյսեան, Սամոնա թուրքական շրջանը և Սամոնա թուրքական XI-XIII հարյուրամյակի յիշատակը, ԳՎ. 219-226:
  - 3 Տե՛ս յարտուրի Գեորգեան, II, ԳՎ. 237, 256, 260, 281, 312. Հաջորդ էջերում վրացի պատմիչը Սաղուն Բ-ին հիշատակում է սոսկ անունով կամ էլ՝ «Սաղուն աթաբեկ» ձևով:
  - 4 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 247, 256, 260, 281, 312:
  - 5 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննիսյանքը եւ նրա արձանագրութիւնները, էջ 84; Գույնի՝ Սահանի վանքը եւ նրա արձանագրութիւնները, էջ 127:
  - 6 Նույն տեղում, էջ 55, 141:
  - 7 Տե՛ս Դիվան հայ վիմագրութեան, պր. III, էջ 56, 80; ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 374-377:



ծունեության համընդհանուր ճանաչում ստանալու հետեւանքով՝ «տանն աթաբէկի Սադունեաց»<sup>1</sup>: Տոհմի «Սադունյաններ» անվանումը եւս նույնքան ընդունելի կարող էր դիտվել, որքան «Մահկանաբերդցիներ» ձեւը, բայց քանի որ առաջինը բացարձակապես չի գործածվում գիտական գրականության մեջ, ապա մնում է դիմել ավելի ծանոթ երկրորդ անվանաձեւին կամ զուգահեռաբար գործածել երկուսն էլ<sup>2</sup>: Ինչ վերաբերում է ընտանիքի «Արծրունի» անվանմանը, ապա, ինչպես ցույց է տրվելու ստորեւ, այս իշխանական տան արծրունիական տոհմակույնների վարկածը հնարավոր չէ ապացուցված համարել:

Միեւնույն գերդաստանի առանձին տոհմաճյուղն էին ներկայացնում Ամիր-Քրդի եղբայր Սարգսի սերունդները՝ Խավուսայանները, որոնք ԺԳ դ. առաջին կեսին, հեռանալով Մահկանաբերդից, կապվել էին Շահնշահ Ա Զաքարյանի հետ եւ կալվածքներ ձեռք բերել նրան պատկանող տարածքներում: Ուստի այդ երկու ընտանիքներին «Մահկանաբերդցիներ» կամ «Սադունյաններ» միասնական անվանման ներքո միավորելը պայմանական բնույթ է կրում:

Մահկանաբերդցիների տոհմային ծագման հարցը քննելիս առանձնահատուկ ուշադրության է արժանի այդ խնդիրն արծարծող հաղորդումների ժամանակագրության հստակեցումը: Հայկական սկզբնաղբյուրներից «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը Սադուն Բ-ին «Արծրունի» է կոչում ԺԳ դ. 60-70-ական թվականների դեպքերի առնչությամբ<sup>3</sup>, իսկ Մխիթար Այրիվանեցին՝ այդ նշանավոր գործչի մահվան հիշատակության առիթով<sup>4</sup>: Մինչդեռ գերդաստանի ԺԲ դարի եւ նույնիսկ ԺԳ դ. 60-ական թվականների առաջին կեսի պատմությանը քաջատեղյակ հայ հեղինակները՝ Մխիթար Գոշը, Վարդան Արեւելցին եւ Կիրակոս Գանձակեցին, լուրջապես են մատնում տոհմի առաջին ներկայացուցիչների տոհմային պատկանելության հարցը: Նույնը կարելի է ասել վրացական աղբյուրների եւ Մահկանաբերդցիների թողած բավականաչափ հարուստ վիճաբար ու հիշատակարանային ժառանգության մասին: Ուստի «Պատմութիւն վասն ազգին նետողաց»-ի եւ Մխիթար Այրիվանեցու հաղորդումները՝ Մահկանաբերդցիների արծրունիական ծագման վերաբերյալ, լրացուցիչ հիմնավորման կարիք են զգում: Այդ ուղղությամբ միակ փորձն առայժմ ձեռնարկել է Սուրեն Երեմյանը, որի կարծիքով՝ Արծրունիների այդ տոհմաճյուղին Հյուսիսային Հայաստան է տեղափոխել Դավիթ Շինողը՝ շնորհելով Մահկանաբերդը<sup>5</sup>: Հիրավի, մահվանից քիչ առաջ, 1124 թվականին, Դավիթ Շինողը հնարավորություն ստացավ տնօրինելու Մահկանաբերդի ճակատագիրը եւ, հավանաբար, այն հանձնել է հայ իշխանների: Սակայն ուսումնասիրողի տեսակետը լոկ կոհանում

---

1 Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 316:  
2 Ի դեպ, որոշ դեպքերում նույն իրավիճակն է տիրել նաեւ միջնադարում. միեւնույն տոհմը մերթ իր անվանումը ստացել է հիմնադրի կամ որեւէ նշանավոր ներկայացուցչի անունից, մերթ էլ՝ հիմնական կամ սկզբնական տիրույթի: Ստեփաննոս Օրբելեանը, օրինակ՝ Սյունիքի մի մասի ազատագրմանը մասնակցած Ախթամարին կոչում է «Աուփայեցի»՝ ելնելով նրա՝ Արփա գյուղի տերը լինելու փաստից, իսկ քիչ անց՝ «Ախթամարեան գարնք» է անվանում տոհմի ճաշող սերունդներին (Ստեփաննոս Օրբելեան, *Պատմություն*, էջ 256, 267):  
3 Գրիգոր վարդապետ, էջ 42, 48:  
4 Մխիթար Այրիվանեցի, էջ 68:  
5 Տե՛ս Ս. Երեմյան, *Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ*, էջ 11: Այս տեսակետն ընդունել են նաեւ վրացի հետազոտողները (տե՛ս Յ. Թեյսեոս, *Նամոնառ քոլոտիօշորո ջոտարեթա Եւ Նամոնեղոր իյոթա XII Նաշքլեոն Նախրոշեղոթո*, թ. 277; Ծ. *Նժողագ*, նվ. աշխ., էջ 223):

է մնում մի կարեւոր կետում. անհասկանալի է, թե ի՞նչ հիմք գոյություն ունի ամբողջը ստացած իշխաններին Արծրունի համարելու համար: Բոլոր դեպքերում, Արծրունիների հետ առնչակցություն չեն հիշատակում ո՛չ ժամանակակից հեղինակները, եւ ո՛չ էլ Մահկանաբերոցիների ընտանիքի անդամները: Ինչպես ուղղակի ազգակցություն հավաստող, այնպես էլ խնամիրական կապ մատնանշող փաստերի բացակայության պարագայում դժվար է նույնիսկ ենթադրել, թե ի՞նչն է ազդակ ծառայել հենց Արծրունիների հետ տոհմակցություն փնտրելու համար: Թերեւս, կարելի է անել հետեւյալ կոահումբ:

Հատուկ ծագումնաբանություն մշակելու կարիք Մահկանաբերոցիները պետք է զգային ԺԳ դ. 60-80-ական թվականներին, երբ հրապարակի վրա էին Սաղուն Բ-ն եւ նրա որդի Խուժլու Բուղան: Եւ պատահական չէ, որ այդ ժամանակահատվածով են թվագրվում տոհմի արծրունիական ծագման մասին հայ պատմիչների վկայությունները, ինչպես նաեւ Սաղուն Բ-ի դուստր Վանենիի հիշատակությունը «Թագաւորազն» մակդիրով<sup>1</sup>: Եթե հաշվի առնենք, որ հայկական ամենանշանավոր տոհմերը՝ Արշակունիներն եւ Բագրատունիները արդեն հռչակվել էին համապատասխանաբար Պահլավունիների ու Զաքարյանների նախահայրեր, ապա թագավորական հաջորդ եւ առավել հեղինակավոր տոհմը ներկայացնում էին Արծրունիները: Մահկանաբերոցիներին եւ Արծրունիներին միմյանց կապելու համար, այնուամենայնիվ, պետք էր հիմնվել որեւէ իրական փաստի վրա: Թվում է, թե Արծրունիներ-Մահկանաբերոցիներ առնչակցության հիմնավորման համար ատաղձ է ծառայել մի այսպիսի իրողություն: Հայտնի է, որ Սաղուն Բ-ն մոտավորապես 1260 թվականին միջնորդի դեր ստանձնեց մոնղոլների ու սասունցիների միջեւ եւ նշանակվեց Սասունի կառավարիչ<sup>2</sup>: Թեեւ նա երկար չի կառավարել Սասունում, այնուամենայնիվ հնարավոր է, որ այդ միջադեպի ազդեցությամբ նրա տոհմը կապվել է Արծրունիների հետ: Ինչպես երեւում է, այս անգամ եւս վճռորոշ դեր են կատարել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ից բխող պատկերացումները: Հայտնի է, որ Պատմահայրն Ասորեստանի Սենեքերիմ արքայի որդիներից է սերված համարում Հայկական Տավրոսին տիրող իշխանական տների մեծ մասին, այդ թվում՝ նաեւ Արծրունիներին<sup>3</sup>: Նման հայացքները հետագա դարերի ընթացքում եւս լայն տարածում են ունեցել: Այսպես, Գրիգոր Նարեկացու Վարքի հայսամվուրքյան խմբագրություններում Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունու անվան հիշատակությանը հետեւում է «Արծրունի՝ Սասուն է»<sup>4</sup>, «Արծրունեաց, որ է Սասունք»<sup>5</sup> բացատրությունը: Հետեւաբար, նաեւ մատենագրական հիմք է գոյություն ունեցել Սասունի նորահայտ տիրակալի տոհմակունքները Հարավային Հայաստանում փնտրելու եւ Մահկանաբերոցիներին Արծրունիների հետ առնչակցելու համար:

Բայց եւ այնպես, Մահկանաբերոցիների արծրունիական ծագման տեսակետը կենսունակ չի գտնվել ու անհետացել է տոհմի հզորության վերջնական կորստի հետ միաժամանակ: Այսպիսով, Մահկանաբերոցիների տոհմակունքների հարցն

1 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 125:

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 386:

3 Մովսէս Խորենացի, էջ 70-71, 111:

4 Գիրք որ կոչի Այսմատուք, Կ. Պոլիս, 1730, Մեհեկի ԻԱ, Փետրվարի ԻԷ:

5 Տե՛ս Յ. Տաշեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Վիեննա, 1895, էջ 77:

առայժմ բաց է մնում եւ կարող է վերջնականապէս լուսաբանվել միայն նոր սկզբնաղբյուրների ի հայտ գալու պարագայում:

Մահկանաբերոցիների ընտանիքի պատմութեանը բավարար չափով տեղյակ չլինելու հանգամանքով պետք է բացատրել Իվ. Զավախիշվիլու այն կարծիքը, որի համաձայն՝ Սաղուն Բ-ի նախնիները եղել են հայացած քրդեր<sup>1</sup>: Ինչպէս երեւում է, այդ կռահումն անելիս գիտնականն առաջին հերթին հիմնվել է տոհմում «Քուրդ» անձնանվան առկայութեան վրա: Սակայն պետք է ենթադրել, որ նման տեսակետի ձեւավորման հարցում որոշակի դեր է խաղացել նաեւ Սաղուն Բ-ի գործունեութեան ու անձնավորութեան այն խիստ բացասական բնութագիրը, որով Մահկանաբերոցի տիրոջն օժտել է հետազոտողը: Նրա գնահատմամբ՝ Սաղուն Բ-ն ներկայանում է որպէս անսկզբունքային եւ ապագայնացած անձնավորութիւն: Սակայն կովկասագիտութեան զարգացման ներկա փուլում ակնհայտ է, որ էթնիկական անվանումից սերող անձնանունների հիման վրա որեւէ տոհմի ծագման մասին ենթադրութիւններ անելն առավել քան խոցելի մոտեցում է: Պետք չէ մոռանալ, որ «Քուրդ» անձնանունը լայնորեն տարածված էր հայկական իշխանական տներում ինչպէս նախորդ ժամանակաշրջանում (առաջին վկայութիւնները Ը դարից են), այնպէս էլ՝ հատկապէս ԺԲ-ԺԳ դարերում<sup>2</sup>, ուստի այդ հիման վրա եզրակացութիւններ կատարել հնարավոր չէ:

Հատկանշական է, որ տոհմի առաջին ներկայացուցիչները կրում էին ընդգծված հայաշունչ անուններ (Վահրամ, Վասակ, Սարգիս, Սահակդուխտ), բայց դրանք սկսել են օտարահնչուն դառնալ արդեն ԺԲ դ. երկրորդ կեսին եւ տիրապետող են մնացել ամբողջ ԺԳ դարի ընթացքում: Միաժամանակ, աստիճանաբար հաճախակի են դառնում այլազգիների հետ ամուսնութիւններն ու առնչութիւնները նաեւ քաղկեդոնական հոգեւոր կենտրոնների հետ: Որ Մահկանաբերոցիների գլխավոր տոհմաճյուղի էթնիկական դիմանկարում ոչ հայկական տարրերն առաջին հերթին պայմանավորված էին օտար միջավայրում գործելու հանգամանքով՝ երեւում է միայն Հայաստանում գործունեութիւն ծավալած կրտսեր տոհմակիցների՝ Խավոսայանների օրինակից: Ահա՛ թէ ինչպէս է բնութագրում այդ տոհմաճյուղի հիմնադիր Խավոս Ա-ի հավատարմութիւնը հայոց ավանդույթներին 1232 թ. գրված Բագնայրի Ավետարանի գրիչ Իգնատիոսը. «աստուածասէր եւ բարեպաշտ, քաջահաւատ եւ գովելի ի մրցմունս արիութեան՝ հանգոյն քաջ նախնեաց իւրոց նահատակեալ ի վերայ տանս Հայոց, մեծապատիւ իշխանաց իշխանս պատրոն Խաւոսս, որդի Ամիր Սարգսի»<sup>3</sup>: Խիստ ուշագրավ է, որ Խավոս Ա-ն արդեն երկրորդ սերնդի քաղկեդոնական Զաքարիա Գ Զաքարյանի դաստիարակն էր եւ իր սանին սնուցում էր հայրենական ավանդույթների, այսինքն՝ հայկական ոգով. «դաստիարակելով եւ սնուցանելով ամենայն երկիւղիւ եւ աստուածապաշտութեամբ, զոր ի նախնեացն ուսեալ էր»<sup>4</sup>: Հետաքրքրականն այն է, որ Խավոս Ա-ն երկիցս ամուսնացել էր «պարսիկ» իշխանագուետրերի հետ, բայց վերջիններս շտապել էին քրիստոնեութիւն ընդունել<sup>5</sup>:

1 Տե՛ս օ. Ջաջեճեթցժլօ, յճրօշջլօ յրօս օնՅրօրօ, III, թց. 367.

2 Տե՛ս Հ. Աճառլան, Հայոց անձնանունների բարարան, հտ. Ե, Եր., 1962, էջ 223-226:

3 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 179:

Այսպիսով, փաստերը խոսում են Մահկանաբերոզցիների սկզբից եւեթ հայ լինելու եւ միայն հետագայում, այն էլ՝ ոչ անվերադարձ, էթնո-մշակութային դիմապատկերում որոշ խաթարում կրելու մասին:

Ուշագրավ է Մահկանաբերոզցիների սոցիալական բարձր կարգավիճակ ունենալը դեռեւս ժԲ դ. երկրորդ քառորդում եւ, հնարավոր է՝ նույնիսկ ավելի վաղ ժամանակներում: Նրանք «իշխան» են անվանվում առաջին հիշատակութունից՝ ի վեր, եւ, անշուշտ, ավելի վաղ են անմիջական հարաբերութուններ հաստատել Տփղիսի եւ վրաց արքունիքի հետ, քան Զաքարյանները:

Հետեւաբար, Մահկանաբերոզցիների (Սադունյանների) տոհմի հայկական եւ բարձր ծագումը պետք է հավաստի իրողութուն համարել:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մահկանաբերոզցիների տոհմի պատմության մեջ ակնհայտորեն առանձնանում են բարձրացման երկու փուլեր:

Առաջինի պայմանական սկիզբ կարելի է համարել 1124 թվականը, երբ վրացական բանակը հաստատվեց Անիում եւ Հյուսիսային Հայաստանի մի շարք ամրոցներում, այդ թվում նաեւ Մահկանաբերոզում<sup>2</sup>: Այդ կամ հաջորդ մի քանի տարիների ընթացքում էլ, պետք է ենթադրել, սկիզբ են առել վրացական արքունիքի եւ Մահկանաբերոզցիների տոհմի առաջին (մեզ հայտնի) ներկայացուցիչ Վահրամ իշխանի փոխհարաբերութունները: Եթե նկատառենք, որ Մահկանաբերոզը կարող էր Վրաց թագավորության սահմանների մեջ մտցվել 1124 թ. մայիս-օգոստոսին, իսկ Դավիթ Շինողը մահացավ 1125 թ. հունվարին<sup>3</sup>, ապա Մահկանաբերոզի տերերը ազդեցութուն եւ դիրք են ձեռք բերել վրաց արքունիքում Դեմետրե Ա-ի (1125-1155/1156) օրոք: Արդեն ժԲ դ. կեսերին նրանք հասցրել էին գրավել Տփղիսի քաղաքապետի պաշտոնը, այսինքն՝ նրանց բարձրացումը բավականաչափ արագ է տեղի ունեցել: Վրաց արքունիքում ձեռք բերած դիրքով Մահկանաբերոզցիները ժԲ դ. առաջին կեսին իրենց հավասարը շունեին հայկական տոհմերի շարքում եւ այդ առումով կարող են Զաքարյանների նախորդները համարվել: Ուստի Մահկանաբերոզցիների եւ Զաքարյանների միջեւ խնամիական կապի հաստատումը շուրջ 1150 թվականին կամ մի փոքր ավելի վաղ՝ միանգամայն օրինաչափ իրողութուն է ներկայանում:

Առայժմ գիտական գրականության մեջ առաջին փորձերն են կատարվել՝ պարզաբանելու այն լծակները, որոնց շնորհիվ իրականացել է Մահկանաբերոզցիների առաջին բարձրացումը: Մասնավորապես, Սուրեն Երեմյանը շեշտել է Ամիր-Քրդի կապերը առետրա-վաշխառուական շրջանակների հետ<sup>4</sup>: Հետազոտողներից Իլիա Անթեյլյանը կարծիք է հայտնել, որ Մահկանաբերոզցիների խոշոր ավատատիրական տոհմի ներկայացուցիչների նշանակումը Տփղիսի քաղաքապետի պաշտոնում պայմանավորված է եղել թագավորական իշխանության հետապնդած քաղաքական ու

1 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Բ, էջ 389:

2 Տե՛ս Սամուել Անեցի, էջ 125; Վարդան Արեւելցի, էջ 156; *საბოლოო ცხოვრება*, II, 33, 344.

3 Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ վրաստանի ժԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 54-55, 90-92:

4 Ս. Ե. Еремян, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках, с. 399.

տնտեսական նպատակներով. նա այն միտքն է զարգացրել, որ Վասակի եւ Ամիր-Քրդի նշանակման հարցում կարելու դեր են խաղացել նրանց սերտ կապերը առևտրա-տնտեսական խոշոր նշանակություն ունեցող Կարին քաղաքի հետ<sup>1</sup>: Ի լրացումն այս կապակցությամբ հիշատակված փաստերի՝ արժե նշել, որ Մահկանաբերդցիներին պատկանող տարածքներով էին անցնում Տփղիսը Կուրի հովտի, Հասատանի ու Իրանի հետ կապող բանուկ առևտրական ուղիները<sup>2</sup>:

Մահկանաբերդցիների առաջին բարձրացումն ապահովող գործոնների շարքում, թվում է, թե որոշակի դեր են կատարել տոհմի անդամների գորական կարողությունները: Այսպես, ստույգ հայտնի է, որ Վասակն ու Ամիր-Քուրդը, վարչական բարձր դիրք զբաղեցնելով հանդերձ, ռազմական աչքի ընկնող գործիչներ էին:

Այն իրողությունը, որ Տփղիսի կառավարչի պաշտոնը կորցնելուց հետո Մահկանաբերդցիները ԺԲ դ. 90-ական թվականներին հզորության անկում ապրեցին, համոզիչ կերպով վկայում է, որ համեմատաբար փոքր հողային տիրույթներ ունեցող Մահկանաբերդցիների համար կառավարման համակարգում բարձր դիրք գրավելը կենսականորեն կարելու էր: Վարչական գործառույթը բնութագրական էր մնում Մահկանաբերդցիների համար նաև ԺԳ դ. առաջին կեսին, սակայն այն անհամեմատ համեստ դիրք էր ապահովում: Այսպես, Խավուսյանները վարում էին Շահնշահյան տան մասխուրթուխուցեսի պաշտոնը, իսկ ընտանիքի ավագ տոհմաճյուղի անդամները վարչական ծառայությամբ կապված էին Ավագյան տան հետ: Այսպիսով, Մահկանաբերդցիների առաջին բարձրացմանը (1124-1180-ական թվականների կեսեր) հաջորդեց վայրէջքը, որը տեւեց շուրջ չորս տասնամյակ:

Եթե Խավուսյանները ԺԳ դ. 60-ական թվականներից դադարեցին որեւէ նշանակալից դեր կատարել, ապա հենց այդ տասնամյակում սկսվեց ավագ տոհմաճյուղի սրընթաց բարձրացումը: Եւ դարձյալ Մահկանաբերդցիների վերելքը պայմանավորված էր ոչ թե նրանց քաղաքական, ռազմական կամ տնտեսական հզորությամբ, այլ հաջողակ վարչական ծառայությամբ ու իլխանության վարչա-բյուրոկրատական վերնախավի հետ կապերով, ինչպես նաև՝ անձնական հատկանիշներով: Սադուն Բ-ի շեշտակի բարձրացման գործում որոշակի դեր խաղաց նաև տարածաշրջանում առաջացած ռազմա-քաղաքական յուրօրինակ կացությունը, մոնղոլական տիրապետության առանձնահատուկ մթնոլորտը: ԺԳ դ. երկրորդ կեսին ինչպե՛ս իլխանության կենտրոնում, այնպե՛ս էլ ծայրամասերում որոշ անձնավորությունների եւ տոհմերի՝ առաջին պլանում հայտնվելն ու ապա գահավեժ կործանումն առօրեական երեւոյթ էր եւ բացատրվում էր մոնղոլական քոչվորական ավագանու նպատակաուղղված քաղաքականությամբ: Ստեղծելով ուժերի հավասարակշռություն, որը չափազանց անկայուն էր եւ ցանկացած պահին կարող էր խախտվել որեւէ կողմի նախահարձակ գործողություններով՝ մոնղոլական իշխանավորները մշտական լարվածության մեջ էին պահում նվաճած երկրները: Վրացական թագավորությունում եւս մոնղոլները նույնատիպ իրադրություն էին ստեղծել եւ խրախուսում էին կենտրոնական իշխանությանն ընդդիմադիր ուժերի հանդես գալը: ԺԳ դ. 70-80-ական թվականներին Սադուն Բ-ն եւ Խուժլու Բուղան էին մոնղոլական քաղաքականության գործուն իրականացնողները եւ սատարվում էին ոչ միայն մոնղոլական ամե-

1 Ծ. ՁԵՄԵՆՅԱՆ, ԱԶԿ. աշխ., էջ 223-224:

2 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 199:

նաբարձր վերնախավի, այլև իլխանության փաստական կառավարիչ Սահիբ Դիվան Զուվեյնու ու անձամբ իլխանների կողմից: Սակայն թագավորական իշխանությանը հակադիր նոր եւ հզոր քաղաքական ուժի երկարատեւ գոյությունը եւս չէր մտնում մոնղոլների քաղաքական ծրագրերի մեջ, նրանք ակնհայտորեն գերադասում էին ասպարեզը տրամադրել ժամիշխանների մրցակիցներին ու այդպիսով դյուրութեամբ վերահսկել իրադրությունը: Նման պայմաններում Մահկանաբերդցիների ճակատագիրը կանխորոշված էր, եւ նույն արագությունը նրանք կարող էին անհայտության գիրկն անցնել իլխանության կենտրոնում անընդհատ տեղի ունեցող քաղաքական ցնցումներից որեւէ մեկի հետեւանքով: Հենց դա էլ, ի վերջո, կատարվեց ԺԳ դ. եզրափակիչ տասնամյակում, 1293 թվականին Խուվլու Բուղայի մահապատժից հետո: Այսպիսով, Մահկանաբերդցիների երկրորդ վերելքը տեւեց շուրջ երեք տասնամյակ եւ անակնկալ կերպով ընդհատվեց: Այս անգամ, սակայն, տոհմի դիրքերը խորիւրվեցին վերջնականապես: Հողային տարածքների կորուստը, առավել եւս՝ նրանց պատկանող քաղաքների հարքունիս գրավումը, անվերադարձորեն զրկեցին Մահկանաբերդցիներին անգամ Հայաստանում նախկին դիրքը պահպանելու հնարավորությունից: Աղբյուրներում վերջին անգամ հիշվելու պահին (1367 թվական) նրանք արդեն վերածվել էին շարքային հողատերերի:

## ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ԿԱՊԵՐԸ

Մահկանաբերդցիների բուն տիրույթները գտնվում էին Աղստեւ գետի հովտում, Մահկանաբերդի գավառակում<sup>1</sup>: ԺԲ դ. 50-70-ական թվականներին Վասակն ու Ամիր-Քուրդը կալվածքներ ունեին Կարնո երկրում: Այդ տարածքների հետագա ճակատագիրը չի լուսաբանվում աղբյուրներում, սակայն Խավոաս Ա-ի ամուսնական կապերը մահմեդական իշխանուհիների հետ եւ արեւելյան անունների տարածվածությունը տոհմում մտածել են տալիս, որ Մահկանաբերդցիները վերջնականապես չէին խզել աղբյուրները իրենց հեռավոր տիրույթների հետ: Տոհմի անդամների տարածքային կապերը չափազանց ընդգրկուն էին ԺԳ դ. երկրորդ կեսին: Խավոասյանները գործում էին Արագածոտնում եւ Շիրակում: Նրանք գանձագին գյուղ ունեին Արագածոտնում (Աշնակ), հասութաբեր ձեռնարկություն՝ Անիի մերձակայքում (Տիգնիս), հնարավոր է՝ նաեւ այլ տիրույթներ Շահնշահյան տան սահմաններում: Ինչ վերաբերում է Սաղուն Բ-ին եւ Խուվլու Բուղային, ապա նրանք ընդարձակեցին իրենց տիրույթները նախ եւ առաջ՝ ի հաշիվ Զաքարյանների: ԺԴ դ. 60-ական թվականների վերջին Սաղուն Բ-ին էր պատկանում մինչ այդ Շահնշահ Ա-ի սեփականությունը կազմող Աշտարակը<sup>2</sup>: Այստեղ Մահկանաբերդցիները պահպանել էին իրենց իշխանությունը նաեւ Խուվլու Բուղայի օրոք, գոնե մինչեւ 1285 թվականը<sup>3</sup>: Սակայն Աղբուղա Բ Զաքարյանի արձանագրությունների առկայությունն Աշտարակում<sup>4</sup> ԺԴ դ. առաջին տասնամյակներին՝ ցույց է տալիս, որ Զաքարյանները վերականգնել էին դիրքերն Արագածոտնի այդ հատվածում: Սաղուն Բ-ն եւ Խուվլու Բու-

1 Նույն տեղում, էջ 5, 108-110, 132-135:

2 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Աշտարակ*, – «Էջմիածին», 1966, № Թ-Ժ, էջ 97:

3 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, սր. VI, էջ 204, գիտելիք:

4 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Աշտարակ*, – «Էջմիածին», 1966, № Ը, էջ 58-59; Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառարանություն*, էջ 42-43, 336:

դան վրաց արքաներից ժամանակավորապես խլել էին Կարսը, Դմանիսը, Թելավը, Բելաքանը<sup>1</sup>: Սաղուն Բ-ն մոնղոլների կողմից որոշ ժամանակ կառավարիչ էր նշանակված Սասունում: Աթաբեկի եւ ամիրսպասալարի զույգ պաշտոնները կորցնելուց եւ առհասարակ՝ վրաց արքունիքի հետ կապերը խզելուց հետո Մահկանաբերդցիները ԺԳ դ. վերջին զրկվեցին խոշոր տիրույթներից: Ինչպես երեւում է, նրանք անգամ Հայաստանում լոկ համեստ տարածքներ էին պահպանել:

## ԴԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Մինչև իրենց երկրորդ բարձրացումը Մահկանաբերդցիներն անվերապահորեն հետեւողական միաբնակներ էին: Այսպես, Ամիր-Քրդի հովանավորութունն էր վայելում Մորո Ձորո վանքը<sup>2</sup>, որդիները եւ դուստրը կապված էին Նոր Գետիկի<sup>3</sup>, Մակարավանքի<sup>4</sup>, Շիմուրատի<sup>5</sup> վանքերի հետ: Սաղուն Բ-ի եւ Խուխլու Բուղայի օրոք, նրանց հովանավորութամբ վերելք էին ապրում միաբնակ հոգեւոր եւ ուսումնագիտական կենտրոններ՝ Առաքելոց, Կիրանց, Դեղձուտի վանքերը<sup>6</sup>: Եւ այնուամենայնիվ, սկսած Ամիր-Քրդից, Մահկանաբերդցիներն ամենասերտ ու երկարատեւ փոխհարաբերություններն ունեին Հաղբատի վանքի հետ: Բավական է ասել, որ այստեղ են թաղվել Ամիր-Քուրդը, նրա որդիները, Սաղուն Բ-ն<sup>7</sup>: Հաղբատում է գտնվում Խուխլու Բուղայի որմնանկարը<sup>8</sup>:

Իրենց հերթին, Խավուսյանները ԺԳ դ. առաջին կեսին հոգեւոր կենտրոն եւ տոհմական հանգստարանի վայր էին ընտրել Բագնայրի վանքը Շիրակում<sup>9</sup>:

Մահկանաբերդցիների՝ ԺԳ դ. երկրորդ կեսին երկաբնակութանը հարելու վերաբերյալ որեւէ տեղեկություն աղբյուրներում չի պահպանվել: Սաղուն Բ-ի կողմից Գարեջայի վանքերին հովանավորություն ցույց տալը<sup>10</sup>, Խուխլու Բուղայի՝ Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքի «աղապ»-ներում հիշատակվելը<sup>11</sup>, Վանենիի հնարավոր հուղարկավորությունը Քոբայրի երկաբնակ վանքում<sup>12</sup>, այնուամենայնիվ, փաստեր են, որոնք մտածել են տալիս, թե այդպիսի դավանական անցումը տոհմի որոշ անդամների համար լիովին բացառված համարել չի կարելի: Թե՛ միաբնակ, եւ թե՛ երկաբնակ վանքերին նյութապես սատարելու փաստերը վկայում են, որ Մահկանաբերդ-

1 Տե՛ս Թ. Յոյնձեյ, նշվ. աշխ., էջ 171-174:

2 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 139:

3 Նույն տեղում, էջ 64-65; Կիրակոս Գանձակեցի, էջ 215:

4 Տե՛ս նույն տեղերում, էջ 158-159; 215-216:

5 Տե՛ս Գ. Սարգսյան, Ծիմուրատի վանքը, – «Էջմիածին», 1956, № Գ, էջ 20-28:

6 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 134, գիտելիք: Համապատասխան արձանագրությունները հրատարակված են նույն հատրում:

7 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 188-189:

8 Նույն տեղում, էջ 152:

9 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178-179; Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 116:

10 Տե՛ս Երեւանի Եպիսկոպոս, II, ՅՅ. 272; Վրաց ժամանակագրություն, էջ 147:

11 Տե՛ս Ե. Մեթրեջյան, նշվ. աշխ., էջ 103:

12 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 182:

ցիների գործունեությունը Զաքարյանների լայնախոհ դավանական քաղաքականության մի զուգահեռն է եղել:

Բազմազան են եղել Մահկանաբերոցիների միջէթնիկական առնչությունները: Հայկական տոհմերից գատ, նրանք խնամիական կապեր էին հաստատել ժամանակի նշանավոր վրացական եւ տարաէթնիկ մահմեդական (պարսկականից բացի հնարավոր է՝ նաեւ թյուրքական) ընտանիքների հետ: Առաջին բարձրացման ժամանակ նրանք բարեկամացել էին Զաքարյանների եւ արցախյան ազդեցիկ տոհմերից Հաթերբջինների, երկրորդ վերելքի փուլում՝ Օրբեյանների, կրկին անգամ՝ Զաքարյանների, վրացի Զաղեղիների եւ անգամ՝ արքայական տան հետ: Մահմեդական ընտանիքների հետ ամուսնական առնչություններ են հաստատել թե՛ հավաքականները, եւ թե՛ ավագ տոհմաճյուղը: Մահկանաբերոցիների համար, ելնելով նրանց գործունեության ծավալման տարածաշրջանի թելադրանքից, անշուշտ, բնորոշ է եղել լեզուների (հայերենից ու վրացերենից բացի՝ նաեւ արեւելյան) լավ իմացությունը, թեեւ ուղղակի վկայություններ ունենք միայն Սադուն Բ-ի վերաբերյալ:

Տոհմի մշակութային ակտիվությունը (եկեղեցաշինություն, ձեռագրերի պատվիրատվություն) զգալի է եղել միայն ԺԲ դ. վերջին քառորդում – ԺԳ դ. սկզբին: Մահկանաբերոցիների համար, ելնելով նրանց գործունեության պարբերացումից, ծավալվելու աշխարհագրական շրջանակներից, մշակութային միջավայրից եւ այլ հանգամանքներից, հատկանշական է եղել «աշխարհաքաղաքացիության ոգին»: Տոհմի անդամներն առավել հզորության երկու փուլում էլ աչքի են ընկել փոխադարձ շփումների մեջ մտնելու կարողությամբ, որն անհետեւանք չէր մնալու՝ մշակութային նախնական նկարագրի վրա ազդելու եւ Մահկանաբերոցիների հայկական էթնիկ դիմապատկերը զգալիորեն բարդացնելու հայեցակետից: Յավոք, այդ խիստ ուշագրավ գործընթացների մասին առայժմ կարելի է լուկ կուսումներ անել:

## ՏՈՅՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորեւ, լիակատարության նկատառումով, ներկայացվում են զույգ տոհմաճյուղերը: Թեեւ պարզ է, որ հավաքականներին ավատատիրական ավագանու կազմի մեջ հնարավոր չէ դասել առանց վերապահումների:

## ՄԱՅՎԱՆԱԲԵՐՈՑԻ-ՍԱԴՈՒՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՃՅՈՒՂԻ ՏՈՅՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Վահրամ (ծնվել է, հավանաբար, ԺԱ դ. վերջին, գործել է ԺԲ դ. առաջին կեսին): «Իշխան» տիտղոսով նրան հիշատակում է Մխիթար Գոշը<sup>1</sup>: Պետք է ենթադրել, որ նա եւս իշխում էր Մահկանաբերոցի գավառում: ԺԲ դ. կեսերին Վահրամն արդեն կենդանի չէր, եւ ասպարեզում էին նրա որդիները:

2. Վասակ, որդի Վահրամի (ծնվել է ԺԲ դ. առաջին քառորդում, մահացել 1160 թվականից հետո): «Շահապ քաղաքին Տփխեաց»՝ քաղաքապետ էր դեռեւս Դեմետրե Ա-ի օրոք: 1154 թվականին, երբ Կարինի ամիրա Սալդուխը (մոտավորապես՝ 1153-1164) գերի ընկավ Անիի մոտ եւ բերվեց Տփղիս, Վասակը մեծապես օգտակար եղավ Սալդուխին: Հայտնի են Վասակի ու նրա եղբայրների սերտ կապերը Դեմետրե

1 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Բ, էջ 389: Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղտանից աշխարհի, ... Յաւելուած Բ, էջ 356:



րե Ա-ի որդի Դավիթ Ե-ի հետ: Վերջինիս կարճատեւ գահակալությունից հետո, երբ Վրաց թագավորութեան գլուխ կանգնեցին վանքից պալատ վերադարձած Դեմետրե Ա-ն ու նրա կրտսեր որդի Գեորգի Գ-ն, Վասակն ու եղբայրները փախան Կարին: Այստեղ նրանց «խնդութեամբ եւ մեծարանօք» ընդունեց Սալդուխ ամիրան<sup>1</sup>: Վասակը, անշուշտ, շարունակում էր պայքարը Գեորգի Գ-ի դեմ՝ դաշնակցելով Հայաստանում հաստատված մահմեդական կազմավորումների հետ: Ամենայն հավանականութեամբ, նա մասնակցում էր Շահ-Արմենի աներ Ատրատինի եւ վրացական բանակի միջեւ 1160 թ. հոկտեմբերին Օլթիի գավառում տեղի ունեցած ճակատամարտին<sup>2</sup>: Վախճանվել է Կարինում եւ թաղվել քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում<sup>3</sup>:

3. Քուրդ (Ամիր-Քուրդ), որդի Վահրամի (ծնվել է ԺԲ դ. առաջին քառորդի վերջին կամ հաջորդ քառորդի սկզբին, մահացել ԺԲ դ. 90-ական թվականներին): Համագործակցում էր եղբոր հետ եւ որոշակի դեր էր կատարում Տփղիսի կառավարման գործում դեռեւս ԺԲ դ. կեսերին: Ավագ եղբոր մահից հետո, երբ Վասակն ու եղբայրները գործում էին Կարինում, նրան անցավ տոհմի ավագութունը<sup>4</sup>: Որոշ ժամանակ անց Ամիր-Քուրդը հաշտվել է Գեորգի Գ-ի հետ ու վերադարձել Վրացական թագավորութուն՝ կրկին ստանձնելով Տփղիսի քաղաքապետի պաշտոնը: Ապացուցել է իր հավատարմութունը կենտրոնական իշխանութեանը եւ կարեւոր դեր է կատարել մեծատոհմիկ ավատատերերի գլխավորած 1176-1177 թթ. խոշոր ապստամբության ճնշման գործում: Նա էր, որ Մահկանաբերդի գավառում ջախջախեց Լիպարիտ Օրբելու գլխավորած ապստամբական զորաշուկատը եւ հարկադրեց ապստամբների մեծ մասին պաշտպանութեան անցնել Լոռե բերդում<sup>5</sup>: Տփղիսի ամիրան էր հաջորդ տարիների ընթացքում, թեեւ անհայտ է մնում նրա պաշտոնավարության ավարտատարին: Նրա պաշտոնանկությունը, հավանաբար, տեղի է ունեցել 1184-1185 թվականներին, երբ փոփոխությունների ենթարկվեց ողջ արքունական պաշտոնեությունը<sup>6</sup>:

ԺԲ դ. 70-ական թվականների վերջին – 80-ականների սկզբին Ամիր-Քուրդը եռանդուն եկեղեցաշինական գործունեություն է ծավալել Հյուսիսային Հայաստանում կամ էլ նյութապես օգնել հին հոգեւոր կենտրոններին: Մասնավորապես, 1181 թվականին օժանդակել է Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու ժամատան կառուցմանը<sup>7</sup>, Գեորգի Գ-ի շնորհած հրովարտակով հարկերից ազատել է Մորո Ջորո

1 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Հայապատմ*, հտ. Բ, էջ 390; Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Արղուանից աշխարհի*, ... Յաւելլուած Բ, էջ 356; Կիրակոս Գանձակեցի, էջ 208:

2 Տե՛ս Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 425: Հմմ. Հ. Գ. Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, էջ 145-147:

3 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Հայապատմ*, հտ. Բ, էջ 390; Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Արղուանից աշխարհի*, ... Յաւելլուած Բ, էջ 356:

4 Տե՛ս նույն տեղեւորում:

5 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, էջ 225: Սուրեն Երեմյանի կարծիքով՝ Ամիր-Քուրդն այս դեպքերից հետո նորից հեռացել է Կարին (С. Т. Еремян, *Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках*, с. 399), բայց այդ տեսակետը չի հաստատվում սկզբնաղբյուրների վկայություններով:

6 Տե՛ս Մ. Թյեյնոս, *ժամանակի շրջանում օստրոնոսոս յրտո ճնոծոս զազբոսատոս*, – “ქართული წყაროთმცოდნეობა”, III, տծ., 1971, გვ. 130-147.

7 Կ. Ղաֆաղարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 104:

վանքը<sup>1</sup>, իր մասնակցությունն է բերել Հաղարծնի վանքի նորոգմանը<sup>2</sup>: Վախճան-վել է ԺԲ դ. 90-ական թվականներին եւ հուղարկավորվել Հաղբատում<sup>3</sup>:

4. Սարգիս (Ամիր-Սարգիս), որդի Վահրամի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երկրորդ քառորդում, մահացել, թերեւս, նույն դարի վերջին քառորդում): Անկասկած, եղբայրների օգնականն է եղել Տփղիսի կառավարման գործում: Այստեղից էլ «ամիր» տիտղոսով հիշատակությունը աղբյուրներում<sup>4</sup>: Ամիր-Սարգսից են սերում հավոնասյանները:

5. Սահակդուխտ, դուստր Վահրամի (ծնվել է ԺԲ դ. առաջին տասնամյակներին, մահացել, հավանաբար, ԺԳ դ. սկզբին): Կիրակոս Գանձակեցին բացահայտում է այն սերտ կապը, որ գոյություն ունեն ԺԲ դ. երկրորդ կեսին Մահանաբերդցիների եւ Զաքարյանների տոհմերի միջեւ: Ըստ պատմիչի՝ Զաքարեն եւ Իվանեն որդիներն էին «քեռ բարեպաշտին իշխանին Քրդին»<sup>5</sup>, ուստի Իվանեն սիրով ընդառաջեց Ամիր-Քրդի մտերիմ Մխիթար Գոշի՝ Գետիկի վանքի համար նոր տեղ հատկացնելու խնդրանքին<sup>6</sup>: Զաքարյանների հետ ազգակցությունն ընդգծում էին նաեւ Ամիր-Սարգսի սերունդները, հպարտությամբ նշելով, որ նա «էր եղբայր մար կեսառոսաց Հայուց եւ Վրաց եւ ամենայն Ափսազաց, բարեպաշտիցն եւ Աստուծով զարացելոցն մեծին Զաքարիայի եւ Իվանէի»<sup>7</sup>: Ինչպես երեւում է, Սահակդուխտն ամուսնուց զգալիորեն ուշ է վախճանվել եւ ականատես է եղել որդիների գլխավոր հաջողություններին: Հուղարկավորման տեղը (Անի) եւ տապանաքարի բովանդակությունը («սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն, որ սմա կատարի, Սահակդխտոյ է՝ ծնաւոր Զաքարեա եւ Իւանէի թագաւորաց Հաոց»)՝ վկայում են, որ իշխանուհին կնքել է իր մահկանացուն Անիի ազատագրումից (1199 թվական) հետո, երբ արդեն ավարտվել էր Զաքարյանների թագավորական ծագման տեսության մշակումը: Առավել հավանական է, որ նա վախճանվել է ԺԳ դ. առաջին տարիներին, ամուսնուց շուրջ մեկուկես տասնամյակ հետո:

6. Սադուն Ա<sup>9</sup>, որդի Ամիր-Քրդի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել 1205 թվականից հետո, թերեւս՝ առաջին երեք տասնամյակների

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 139:

2 Նույն տեղում, էջ 37: Լճմ. Ս. Գ. Երեմյան, *Ազարյանական надпись 1184 г.*, с. 80.

3 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 188:

4 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178:

5 Կիրակոս Գանձակեցի, էջ 210:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178:

8 Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 57:

9 Նկատի ունենալով նույն բնութագրական անունը՝ հետազոտողները հաճախ Մահկանաբերդի եւ համարում անտ 1260-ական թվականներին Գետրդի Գ-ի կողմից Անիի քաղաքապետ Աշանակված Սադունին (տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Օիրակ*, էջ 100; Գ. Կթղ. Յովսեփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 2; Բ. Առաքելյան, *Աշվ. աշխ.*, էջ 166): Այս վարկածը, սակայն, կարող է անտ առարկություններ հարուցել. դժվար է ենթադրել, որ 1160 թվականին հարեւան մահմեդական ամիրությունների բանակը դեպի Վրաստան առաջնորդած Վասակ Մահկանաբերդցու ազգականին մեկ-երկու տարի անց հնարավոր էր պղքան կարեւոր պաշտոն վստահել: Բացի այդ՝ դժվար է պատկերացնել Սադուն քաղաքապետի տեղը Մահկանաբերդցիների տոհմաձառում: Ուստի Սադունյանների շարքը նրանով սկսելը եւ Մահկանաբերդցիների թվին նրան դասելը (տե՛ս Յ. Քիրտեան, *Իրլանտայի Տրպլինի մատենադարանի հայե-*

ընթացքում): Որոշակի իշխանություն ունեւր դեռեւս հոր կենդանութեան օրոք: Այսպէս, նա «մեծ իշխան» է անվանվում 1181 թվականին, Շիմուրատի վանքի արձանագրութեանում<sup>1</sup>: Հիշատակվում է որպէս «մեծ եւ հզար իշխան Կայենոյ» նաեւ Մակարավանքի 1205 թվականի վիմագրերից մեկում<sup>2</sup>: Ավելի վաղ, ԺԲ դ. 90-ական թվականներին, եղբոր եւ քրոջ հետ գործուն մասնակցութեան է ունեցել Նոր Գետիկի կառուցմանը<sup>3</sup>: Այսպիսով, հոր մահվանից հետո Սադունը շարունակում էր պահպանել տոհմական կալվածքները հայրենի գավառում:

Սադուն Ա-ն հանդես է եկել նաեւ որպէս մեկենաս, նրա ծախսով մի ձեռագիր է ընդօրինակվել Նոր Գետիկի վանքում<sup>4</sup>:

7. Դավիթ, որդի Ամիր-Քրդի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել, թերեւս, ԺԳ դ. առաջին երեք տասնամյակների ընթացքում): ԺԲ դ. 90-ական թվականներին օժանդակում էր Մխիթար Գոշին՝ Նոր Գետիկի վանքի շինարարական աշխատանքների ընթացքում<sup>5</sup>: Հայտնի է որպէս ներկայումս Նոր Զուղայում պահվող նշանավոր Ավետարանի ստացող<sup>6</sup>: Հուղարկավորվել է Հաղբատում, տոհմական հանգստարանում<sup>7</sup>:

8. Արզու Խաթուն, դուստր Ամիր-Քրդի (ծնվել է, մոտավորապէս, ԺԲ դ. երրորդ քառորդում, մահացել 1214 թ. հետո): Հաթերքի իշխան Վախտանգի կինն էր: Աչքի է ընկել մշակութային արդյունավետ գործունեութեամբ: Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է խոսում նրա եւ դուստրերի գործած «զարմանալի տեսողաց» եկեղեցական վարագույրների ու խորանի ծածկոցների մասին<sup>8</sup>: Հայտնի է դարձել նաեւ եկեղեցաշինական գործունեութեամբ: «Զեռնտու» է եղել Նոր Գետիկի կառուցմանը<sup>9</sup>: Ամուսնու եւ երկու որդիների մահից հետո, նրան է վիճակվել 1214 թվականին ավարտել Դադիվանքի գմբեթավոր մեծ եկեղեցու շինարարութեանը<sup>10</sup>:

---

րէն ձեռագիրները, էջ 166; **C. Toumanoff**, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic Chrétienne...*, p. 94-95; **B. Limper**, *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus*, p. 228) վաղաժամ է թվում:

- 1 Տե՛ս **Գ. Սարգսյան**, *Շիմուրատի վանքը*, էջ 26: Վիմագիրը գրված է «Յամի Կ-երորդի, Ե-ե(ր)որդի Աորս շրջագախս», այսինքն՝ Հայոց փոքր թվականի 65-րդ տարում: Բացառիկ հազվադէպ իրողութեան է, որ Հայոց փոքր թվականի սկիզբ է դիտված 1116 թվականը, ճետեաբար՝ վիմագիրը թվագրվում է 1181-ով (տե՛ս *Դիվան հայ վիմագրութեան*, պր. VI, էջ 159, գիտելիք):
- 2 Տե՛ս *Դիվան հայ վիմագրութեան*, պր. VI, էջ 158-159:
- 3 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 215:
- 4 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 183: Զեռագիրն այժմ պահվում է Դուբլինում: Հարություն Քյուրտյանի կարծիքով՝ Ավետարանն ընթրիմակվել է ԺԲ դ. 90-ական թվականներին՝ Նոր Գետիկի Աորաշեն վանքի համար (**Յ. Քիրտեան**, Ազլ. աշխ., էջ 165-169):
- 5 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 215:
- 6 Տե՛ս *Յուցակ ձեռագրաց Նոր-Զուղայի Ս. Ասենափրկչեան վանաց թանգարանի*, հտ. Բ, Կազմեց **Լ. Գ. Միգասեան**, Վիեննա, 1972, էջ 18:
- 7 **Կ. Ղաֆադարյան**, *Հաղբատ*, էջ 188:
- 8 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 215-216:
- 9 Նույն տեղում; *Դիվան հայ վիմագրութեան*, պր. VI, էջ 65:
- 10 Տե՛ս *Դիվան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 198-199; **Բ. Ուլուբաբյան**, *Դադի կամ Խուրթայ վանք*, – «Էջմիածին», 1971, № 2, էջ 66-70; **Ա. Յակոբեան**, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը...*, էջ 202, 308-309:

9. Շերբարոք, որդի Սաղուն Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. վերջին քառորդում, մահացել ԺԳ դ. առաջին կեսին): Գլխավորում էր Մահկանաբերոզցիների տոհմը ընտանիքի ժամանակավոր անկման փուլում: Սաղուն Բ-ի նախնիներին թվարկելու առիթով նրան երկիցս հիշում է Կիրակոս Գանձակեցին<sup>1</sup>:

10. Սաղուն Բ, որդի Շերբարոքի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. առաջին քառորդում, մահացել 1283 թ.): Սաղուն Բ-ի շեշտակի բարձրացման սկզբնական փուլում որոշակի դեր են կատարել նրա ֆիզիկական կարողությունները: Նա հայտնի էր որպես «այր անձնեայ եւ քաջամարտիկ»<sup>2</sup>, «բարեսես, ուժով հույժ զորեղ, նշանավոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ»<sup>3</sup>: Հենց այդ հատկանիշների շնորհիվ Սաղուն Բ-ն գրավեց Հուլավու իլխանի (1256-1265) ուշադրությունը, քանի որ մոնղոլներն առանձնահատուկ հիացմունքով էին վերաբերվում նշանավոր ըմբիշներին<sup>4</sup>: Այնուամենայնիվ, մինչև ԺԳ դ. 50-ական թվականների վերջը Սաղունը գործում էր սահմանափակ շրջանակներում, քանի որ նա ընդամենը Ավագ Զաքարյանի դուստր խոշաքի խնամակալն էր եւ սենեկապետը<sup>5</sup>: Այսպես, 1258 թվականին, հավանաբար, դեռեւս խոշաքին ենթակա պաշտոնյա էր<sup>6</sup>, համեստ ազդեցությամբ: Սաղուն Բ-ի սրընթաց վերելքը սկսվեց հաջորդ տարում, երբ Հուլավու իլխանը արշավանք ձեռնարկեց դեպի Ասորիք, իսկ վրաց թագավոր Ուլու Դավիթը հրաժարվեց մասնակցել այդ ձեռնարկմանը եւ ապստամբություն բարձրացրեց: Ռաշիդ ադ-Դինն առանձնացնում է Սաղուն Բ-ի վաստակը Հալեպի ամրոցի առման գործում<sup>7</sup>, որը տեղի է ունեցել 1259 թ. վերջին – 1260 թ. սկզբին: Հավանաբար՝ նույն 1260 թվականին էլ Հուլավու իլխանի սիրելին դարձած Սաղունը միջնորդի դեր ստանձնեց մոնղոլների եւ սասունցիների միջև, որոնք պատրաստակամություն էին հայտնել, հավանաբար՝ որոշակի պայմաններով, կամովին ենթարկվել նվաճողներին: Ինչպես երևում է, Սաղունը կարողացել էր գլուխ բերել այդ գործը, եւ նրան էր հանձնվել Սասունի կառավարումը<sup>8</sup>:

Սաղունը կրկին ցուցադրեց իր դիվանագիտական տաղանդը 1261 թվականին, որպես թարգման, բայց իրականում՝ իբրեւ բանակցությունների անուղղակի մասնակից հանդես գալով Հուլավուի նստավայրում: Երբ 1259-1261 թթ. հայ-վրացական երկրորդ ապստամբությունն անհաջողությամբ ավարտվեց, մոնղոլները հարցաքննություն կազմակերպեցին՝ հաշիվ պահանջելով Ուլու Դավիթից եւ նրա մերձավոր զինակից Սարգիս Զաղելուց: Իլխանական նստոցում կայացած այդ հավաքի ժամանակ «Սաղունը բարոք թարգմանում էր, ձեւակերպում թագավորի ասածները, որովհետեւ

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 209, 386:

2 Նույն տեղում, էջ 386:

3 *Ջերտլոս Երեւոնցի*, II, ց. 237; *Վրաց ժամանակագրություն*, էջ 110:

4 Տե՛ս *Рашид ад-Дин*, т. II, с. 60.

5 Տե՛ս *Ջերտլոս Երեւոնցի*, II, ց. 237; *Վրաց ժամանակագրություն*, էջ 110:

6 *Դիվան հայ վիմագրության*, պր. IV, էջ 13: Սովորաբար կարծում են, որ գրիչը բաց է թողել թվագրման (2Է) տասնավորը (տե՛ս նույն տեղում; Ս. Ա. Ավագյան, *ԳԶՎ. աշխ.*, էջ 279), բայց Սաղունի հիշատակությունը խոշաքից հետո մտածել է տալիս, որ արձանագրության տարեթվի վերանայումը կարող է եւ պարտադիր չլինել:

7 Տե՛ս *Рашид ад-Дин*, т. III, с. 49-50.

8 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 386: Ըստ պատմիչի՝ մոնղոլների եւ սասունցիների միջև ձեռք բերված պայմանավորվածությունը հետագայում խախտվել է, հետեւաբար՝ Սաղունը երկար չի կառավարել Սասունում:

թագավորը փոքր ինչ կարկամում էր. Սադուն Մահկանաբերդցին լավ էր ճարտասանում»<sup>1</sup>: Վերջիվերջո, բանակցություններն ընդհատվեցին Ոսկե Հորդայի խան Բերքայի անակնկալ հարձակման լուրն ստացվելուց հետո: Ուլու Դավիթը եւ Սարգիս Զաղեւին Բերքայի դեմ կռիվների ընթացքում աչքի ընկան իրենց քաջությամբ, եւ սկիզբ դրվեց նրանց ու մոնղոլների միջեւ հարաբերությունների կարգավորմանը:

Վրաստանում եւ Հայաստանում Սադունի դիրքերն ավելի ամրապնդվեցին Աբաղա իլխանի (1265-1282) գահ բարձրանալուց հետո: Հստ Ռաշիդ ադ-Դինի՝ իլխանը «հանձնեց Վրաստանը Դավթին եւ նրա որդի Սադունին»<sup>2</sup>: Այսպիսով, վրաց արքա Ուլու Դավթի հետ միասին, որին մոնղոլները չէին վստահում, Սադունին էր հանձնվել Վրաստանի կառավարումը: Պատմիչը, անտեղյակ լինելով իրական կացությանը՝ Սադունին նույնիսկ համարել է Ուլու Դավթի որդի եւ լիովին բնականոն է համարել իշխանության աննախադեպ կենտրոնացումը հզոր մեծատոհմիկի ձեռքում: Հասկանալի է, որ նման սխալը բացատրվում է վրաց արքունիքում Սադունի ձեռք բերած բացառիկ դիրքով եւ ազդեցությամբ<sup>3</sup>: Սադունի հետագա բարձրացումը Աբաղա իլխանի օրոք նշում է նաեւ Վրաց ժամանակագրությունը<sup>4</sup>: Սադունը, դառնալով «սիրած մեծ Ապաղ դանի»<sup>5</sup>, անշուշտ, առաջինն էր համարվում հայ իշխանների շարքում, ինչպես դա հավաստվում է սկզբնաղբյուրներում<sup>6</sup>:

Սադուն Բ-ի գործունեության այս փուլում ուշադրություն է գրավում նրա սերտ կապը իլխանության բարձրաստիճան բյուրոկրատիայի հետ: Այդ ջերմ փոխհարաբերությունները Մահկանաբերդի տիրակալի վերելքի կարեւորագույն լծակն էին: Վրաց ժամանակագրությունը նրա գորեղացումը ուղղակիորեն առնչում է Մեծ Սահիբ Դիվանի՝ Շամս ադ-Դին Մուհամեդ Զուվեյնիի հովանավորության հետ: Առավել եւս, երբ Սադունը Սահիբ Դիվանի կնոջ՝ Խոջաբ Զաքարյանի սենեկապետն էր՝ հեջիրը<sup>7</sup>: Ինքը՝ Սադունը, չէր հապաղել խնամիական կապ հաստատել իրանական բյուրոկրատական վերնախավի հետ: Գյուրջիստանի վիլայեթի վալիներից Խոջա-Ազիզի դուստրը դարձել էր Սադունի կինը<sup>8</sup>: Հենց այն Խոջա-Ազիզի, որին վրաց թագավոր Ուլու Դավիթը համարում էր իրեն հասած բոլոր արհավիրքների սկզբնապատճառ եւ ժամանակին՝ հայ-վրացական երկրորդ ապստամբության միջոցին, պահանջում էր իրեն հանձնել այդ պաշտոնյային<sup>9</sup>:

---

1 Տե՛ս *Ջրտոլոս Յեռզրեթ*, II, ՅՅ. 248; *Վրաց ժամանակագրություն*, էջ 119-120:  
2 Տե՛ս *Рашид ад-Дин*, т. III, с. 67.  
3 Տե՛ս **Գ. Յեռեթեթ**, *Րամզենոմե Յեռեթ* “*Ջամո սո-տազարոնոն*” *Նադոն մեռեթերդեղոս Յեռեթեթ*, – “ՆաՋարոնոն օնՅեռոնոն անոնառեղոն մեռեթեթ”, II, տծ., 1979, ՅՅ. 67-74.  
4 *Ջրտոլոս Յեռզրեթ*, II, ՅՅ. 248; *Վրաց ժամանակագրություն*, էջ 119-120:  
5 Տե՛ս **Մ. Ավդալբեգյան**, *Խաչատուր Կեռտեթի*, Եր., 1958, էջ 131:  
6 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 366; **Գարեգին Վրդ.** [Յոլաւիեան], *Զագավանից ժողովը*, էջ 41: Այստեղ Սադունի անունը նշվում է Պոռ Սաղբակյանից հետո, որովհետեւ Զագավանի ժողովը տեղի է ունեցել վերջինիս տիրույթների սահմաններում:  
7 Տե՛ս *Ջրտոլոս Յեռզրեթ*, II, ՅՅ. 257; *Վրաց ժամանակագրություն*, էջ 129:  
8 Տե՛ս **Ր. Յեռեթեթ**, նշվ. աշխ., էջ 188:  
9 Տե՛ս *Ջրտոլոս Յեռզրեթ*, II, ՅՅ. 238-239; *Վրաց ժամանակագրություն*, էջ 111, 115-120: Խոջա-Ազիզը հիշվում է նաեւ Ռաշիդ ադ-Դինի Պատմությունում (*Рашид ад-Дин*, т. III, с. 59) եւ Մխիթար Այրիվանեցու երկում (*Մխիթար Այրիվանեցի*, էջ 67):

Նախկին հեջիբի, իսկ այժմ՝ արքունիքի ամենահզոր պաշտոնյայի գլխավոր հոգսը դարձավ տիրույթների ընդարձակումը, ընդ որում՝ նա ձգտում էր տիրանալ դրամական խոշոր եկամուտ բերող քաղաքների, քանի որ «հայրենիքն աժան էր եւ ոսկին թանգ»<sup>1</sup>: Նրան «բազում երկրներ պարգեւեց» դեռեւս Ուլու Դավիթը<sup>2</sup>, բայց նոր կալվածքների ձեռք բերման համար առանձնահատուկ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ԺԳ դ. 70-ական թվականների սկզբին, երբ Դեմետրե Բ թագավորը (1271-1289) անչափահաս էր, եւ իր խնամակալ (աթաբեկ) նշանակված Սադունի փաստական վերահսկողութանը ենթարկված լինելով՝ զուրկ էր ինքնուրույն քաղաքականութուն վարելու հնարավորությունից: 1272 թվականին Սադունը վրաց արքայից ստացավ երկու քաղաք թագավորութան արեւելքում՝ Թելավը եւ Բելաքանը, իսկ հաջորդ տարում տիրացավ Դմանխին եւ Կարսին<sup>3</sup>: Այսպիսով, 1272 թվականին ողջ Վրաց թագավորության աթաբեկ եւ միաժամանակ ամիրսպասալար ճանաչված Սադունի<sup>4</sup> տիրույթներն արդեն հսկայական տարածք էին ընդգրկում, ընդ որում՝ կարելու էր ինչպե՛ս ուղղա-քաղաքական, այնպե՛ս էլ տնտեսական առումով:

Հայաստանում Սադունը ԺԳ դ. 60-80-ական թթ. սկզբին հանդես է գալիս ոչ միայն իր տոհմական տիրույթների վիմագիր հուշարձաններում<sup>5</sup>, այլեւ Ավագյան տան տարածքում<sup>6</sup>, Շահնշահյանների պատկանող Արագածոտնում<sup>7</sup> եւ անգամ Զաքարյանների հին «ոստան» խոռակերտում<sup>8</sup>: 1270-ական թվականներին նրա «աթաբեկ» ու «աթաբեկ եւ ամիրսպասալար» տիտղոսներով հանդես գալը դառնում է սովորական երեւույթ<sup>9</sup>: Մինչեւ իր մահը 1283-ին<sup>10</sup>, Սադուն Բ-ն, անշուշտ, առավել հզոր եւ ազդեցիկ անձնավորությունն էր Հայաստանում եւ Արեւելյան Վրաստանում:

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 71:

2 Տե՛ս յերօջոօս Եւրօջոյծ, II, ՅՅ. 257; Վրաց ժամանակագրություն, էջ 129:

3 Տե՛ս Թ. ՅՅՅճճճ, ԱԶՎ. աշխ., էջ 171-173: Սադունը սեփականեց Դմանխը՝ հաղթելով վտանգավոր մրցակցին՝ Յագամի որդի Իվանե Աբուլթեթիսիանին (տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 235-236):

4 Տե՛ս Թ. ՅՅՅճճճ, ԱԶՎ. աշխ., էջ 171-173:

5 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 165, 213:

6 Գ. կթղ. Յոսեփեան, Խաղբակեանք կամ Պողոտեանք հայոց պատմութեան մէջ, էջ 303, 333-334:

7 Տե՛ս Հ. Եղիազարյան, Աշտարակ, – «Էջմիածին», 1966, № Թ-Ժ, էջ 97:

8 Տե՛ս Գ. Հոսեփեան, Վախտանգ որդի Ունեկայ եւ նորա տոհմը, – «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հտ. Ա, էջ 229-230:

9 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 209-210; Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 193; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 496:

10 Սադունի մահվան տարբեր տարեթվերից, որոնք հանդիպում են հայկական սկզբնաղբյուրներում, մինչև վերջերս առավել արժանահավատ էր դիտվում Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրության 1282 թվականը (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հտ. I, էջ 45), որը տեղ է գտել նաև տողերիս հեղինակի աշխատությունում (Հ. Մարգարեան, Մահկանաբերդիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, – Հայկազեան հայագիտական հանդես», հտ. ԺԸ, Պէրյուք, 1998, էջ 22): Մահավանդ որ, ինչպես ցույց է տվել Ռ. Կիկնաձեան, այդ թվականին է դնում Սադունի մահը նաև Վրաց ժամանակագրությունը (Թ. ՅՅՅճճճ, ԱԶՎ. աշխ., էջ 178): Սակայն վերջերս լույս տեսած Ա. Քալանթարի մինչ այդ անտիպ ուսումնասիրությունում հրատարակված է Վանատանից մի արձանագրություն, որտեղ «տանս Հայոց եւ Վրաց աթապակ եւ ամիրսպասալար Սադուն»-ը 1283 թվականին դեռևս կենդանի է հիշատակվում (A. Kalantar, *The Medieval Inscriptions of Vanstan, Armenia*, Neuuchâtel-Paris, 1999, p. 21), ուստի Սադունի մահվան ճիշտ տարեթիվը 1283-ը պետք է համարել:

Սադուն Բ-ն իրավամբ կարող է համարվել հայոց վանքերի աչքի ընկնող հովանավոր: Նա Հաղբատի «տէրն» էր<sup>1</sup>, կապեր ուներ Մահկանաբերդի գավառի հոգեւոր կենտրոններից Առաքելոց վանքի հետ<sup>2</sup>, նվիրատվութիւն է կատարել Աղջոց վանքին<sup>3</sup>: Սադուն Բ-ի դավանական կողմնորոշման մասին պատկերացում տվող փաստերից է նաեւ նրա մասնակցութիւնը հայոց եկեղեցու Զագավանից ժողովին<sup>4</sup>: Միաժամանակ, նա հարաբերութիւններ էր պահպանում նաեւ երկաբնակ հոգեւոր կենտրոնների հետ: Այսպես, «կենդանութեան օրոք ինքը վճարեց Գարեջայի տասներկու անապատների մալն ու դալանը»<sup>5</sup>:

Մահկանաբերդի տիրոջ դիմապատկերը լրացնում են նրա ընտանեկան կյանքի մասին տվյալները: Ստույգ հայտնի է, որ նա ամուսնացել էր առնվազն երեք անգամ: Խոջա-Ազիզի ընտանիքի հետ խնամփանալուց հետո, Սադունը նմանապես կապվել էր Ախալցխիսեցիների տոհմի հետ<sup>6</sup>: Ի վերջո, ԺԳ դ. 70-ական թվականներին նա հարկադրեց Դեմետրե Բ-ին՝ կնութեան տալ իրեն թագավորի քրոջը՝ Թամարին<sup>7</sup>: Ի դեպ, բացառված չէ, որ մինչեւ Հուլիանի բարեհաճութեանն արժանանալը նա փեսայացած լիներ որեւէ հայկական կամ վրացական տոհմի: Սադունի ընտանեկան վարքագիծը այն հանգամանքներից է, որ նպաստել է իշխանի ընդգծված բացասական գնահատականին<sup>8</sup>:

Սադուն Բ-ն հուղարկավորվել է Հաղբատում<sup>9</sup>:

11. Խուլիու Բուղա Ա, որդի Սադուն Բ-ի (ծնվել է ԺԳ դարի կեսերին - 60-ական թվականներին - մահապատժի է ենթարկվել 1293 թվականին): Անշուշտ, առաջին հերթին նրան պետք է նկատի ունենալ 1268 թվականի Աշտարակի արձանագրութիւնում հիշատակված Սադունի որդիների շարքում<sup>10</sup>: Հոր մահից հետո Խուլիու Բուղան բավականաչափ ազդեցիկ էր՝ Սադուն Բ-ի պաշտոններին հավակնելու համար: Մոնղոլների հետ սերտորեն համագործակցող Խուլիու Բուղան թագավորական իշխանութեան համար ոչ պակաս վտանգ էր ներկայացնում, քան Սադուն Բ-ն, եթէ նաեւ նկատի ունենանք, որ նրա քեռին, Խոջա-Ազիզի որդի Իլ-Խուլիուն, Դեմետրե Բ-ի ռիսերիմ թշնամին էր: Հասկանալի է, որ ազգականները համատեղ էին գործում վրաց արքայի դեմ<sup>11</sup>: Բախումները Դեմետրե Բ-ի (հետագայում՝ նրա հաջորդների) եւ Խուլիու Բուղայի միջեւ անընդմեջ մաքառման բնույթ էին կրում եւ ողբերգական վախճանի հանգեցրեցին երկու կողմերին էլ:

1 Տե՛ս Գրիգոր վարդապետ, էջ 42, 48, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 193, 197:

2 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 205, գիտելիք:

3 Մանրամասն տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 303:

4 Գարեգին Վրդ. [Յովսէփեան], Զագավանից ժողովը, էջ 26-27, 41:

5 Տե՛ս յնթադրութեան Երկ, II, թ. 272: Վրաց ժամանակագրություն, էջ 142:

6 Տե՛ս Անուշտինյան, էջ 273, էջ 142:

7 Նույն տեղեւորում, էջ 278, էջ 147: Հմմ. Մանր ժամանակագրություններ, հտ. I, էջ 45:

8 Տե՛ս, օրինակ՝ օ. Խոջա-Ազիզ, յնթադրութեան Երկ, III, թ. 366-369: Ա. Հովհաննիսյան, մշվ. աշխ., էջ 213-214:

9 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 188:

10 Տե՛ս Հ. Տիգրանյան, Աշտարակ, - «Էջմիածին», 1966, № Թ-Ժ, էջ 97:

11 Տե՛ս Թ. Յովսէփեան, մշվ. աշխ., էջ 188:

Սաղուն Բ-ի մահից հետո Դեմետրե Բ-ն հայրական պաշտոններից խուժու Բուղային շնորհեց միայն ամիրսպասալարուելունը: Նա, թերեւս, ոչ առանց հիմքի, երկյուղ էր կրում, որ երկու պաշտոնները համատեղելու դեպքում խուժու Բուղան չափազանց մեծ վտանգ կներկայացնի<sup>1</sup>: Դեմետրե Բուղան ապաստան գտավ Ահմեդ իլխանի (1282-1284) արքունիքում եւ ծառայելով նրան՝ այլեւ չէր ենթարկվում վրաց արքային<sup>2</sup>: Ավելին, նա գործուն մասնակցություն բերեց այն իրադարձություններին, որոնց հետեւանքով էապես փոխվեց կացութունն ամբողջ իլխանությունում: 1284 թվականի հունվարին Ահմեդի հրամանով մահապատժի ենթարկվեց իլխանի եղբայր Ղոնղուրթայը (Ղոնղրաթայ)<sup>3</sup>: Այնուհետեւ նրա ճակատագրին արժանացան Աբուլեթիսաձե երկու եղբայրները, Յագանի որդիները: Ընդ որում, ինչպես պնդում է Վրաց ժամանակագրությունը, դա տեղի ունեցավ խուժու Բուղայի խարդավանքների հետեւանքով<sup>4</sup>: Երկու տոհմերի մրցակցությունը, որը պայմանավորված էր ինչպե՛ս ամիրսպասալարուելյան ու աթաբեկուելյան պաշտոնների համար ծավալված պայքարով, այնպե՛ս էլ Դեմետրե քաղաքի պատկանելության հարցի շուրջ վեճով<sup>5</sup>, առժամանակ ավարտվեց Մահկանաբերդցիների հաղթանակով:

1284 թ. գարնանը, երբ մահու կենաց գոտեմարտ ծավալվեց Ահմեդ իլխանի եւ գահի օրինական ժառանգորդ Արղունի միջեւ, Դեմետրե Բ-ն հանդես եկավ Ահմեդի կողմում եւ Իվանե Բ Զաքարյանի ու խուժու Բուղայի ուղեկցությամբ մասնակցեց դեպի խորասան ձեռնարկված արշավանքին<sup>6</sup>: Սկզբում հաջողություն ուղեկցում էր Ահմեդին, որը գերի վերցրեց Արղունին եւ ի նշան շնորհակալության՝ ցուցաբերած օժանդակության համար, վրաց արքային ենթարկեց բոլոր վրացական իլխաններին<sup>7</sup>: Նրանցից խուժու Բուղան բանտարկվեց եւ ազատ արձակվեց միայն հավատարմության երդում տալուց հետո: Նրան վերադարձվեցին Սաղունի կալվածքները, որոնք, ինչպես երեւում է, մինչ այդ բռնագրավել էր վրաց թագավորը<sup>8</sup>: Հնարավոր է, որ հենց այդ դեպքն է նշել Սամուէլ Անեցու երկի շարունակողներից մեկը՝ «Դեմետրե թագաւորն զՍալատունին երկիրն խլեաց» արտահայտությամբ<sup>9</sup>:

Իրադարձությունները, սակայն, լիովին անսպասելի շրջադարձ ունեցան: Նույնների մի մասն անցավ Արղունի կողմը, բանտարկությունից ազատեց նրան եւ, Ահմեդին մահապատժի ենթարկելուց հետո, իլխան հռչակեց գահի օրինական ժառանգորդին: Նման պայմաններում վրաց արքան ճշգրիտ քաղաքական հաշվարկ կատարեց: Ժամանակին անցավ Արղունի կողմը եւ համապատասխան շնորհների արժանացավ: «Սիրեաց Արղունն եւ ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն

1 Տե՛ս *յերտօլոս Եւրոպացիք*, II, ՅՅ. 281; *Վրաց ժամանակագրություն*, էջ 150:

2 Տե՛ս **Թ. ՅՅԵՅԵՅ**, ԳՁՎ. աշխ., էջ 184:

3 Տե՛ս **Рашид ад-Дин**, с. 103.

4 *յերտօլոս Եւրոպացիք*, II, ՅՅ. 282. Բնագիրը վերականգնել եւ հայերեն է թարգմանել Պարույր Մուրադյանը (տե՛ս *Վրաց ժամանակագրություն*, էջ 150):

5 Տե՛ս **Պ. Մ. Մուրադյան**, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, էջ 228-235:

6 Տե՛ս *յերտօլոս Եւրոպացիք*, II, ՅՅ. 284; *Վրաց ժամանակագրություն*, էջ 152; **Թ. ՅՅԵՅԵՅ**, ԳՁՎ. աշխ., էջ 184: Հմմ. **Рашид ад-Дин**, с. 104.

7 Տե՛ս **Թ. ՅՅԵՅԵՅ**, ԳՁՎ. աշխ., էջ 184:

8 Նույն տեղում:

9 **Սամուէլ Անեցի**, էջ 164: Հեղինակն այս իրադարձությունը դնում է 1302-ին, սինչդեո Դեմետրե Խուժու Բուղայի հայրական կալվածքները պիտի գրաված լիներ սինչե 1284 թվականը:



Աւագեան եւ զտունն Շահնշահեան եւ զԳագեցին եւ զորդիսն Սադուն աթաբեկին»<sup>1</sup>: Հաջորդ հինգ տարիներին ակնհայտ առավելությունը վրաց արքայի կողմն էր, եւ հունթու Բուղան, ինչպես երեւում է, լիովին հաշվի էր առել ուժերի հարաբերակցության մեջ կատարված փոփոխությունը: Նրա դրությունը պետք է առանձնապես ծանրացած լիներ 1284 թ. հոկտեմբերից հետո, երբ մահապատժի ենթարկվեց Սադուն Բ-ի հին բարեկամը՝ Սահիբ Դիվան Զուվեյնին<sup>2</sup>: Խուժու Բուղան հարկադրված էր հաշտվել իրական կացության հետ եւ Ավագյան տանը, Դավիթ արքայազնի մոտ, կատարել այն պատվավոր ծառայությունը, որը ժամանակին Սադուն Բ-ի առանձնաշնորհն էր: Նա դարձել էր Դավիթ Լ-ի խնամակալը՝ աթաբեկը, բայց այդ պաշտոնը ժԳ դ. 80-ական թվականների կեսերից այլեւս չուներ նախկին փալը, քանի որ այն միաժամանակ շնորհվում էր նաեւ այլ իշխանների: Այսպես, 1285 եւ 1287 թվականներին, երբ ավանցիներին որոշ հարկերից ազատել են նախ՝ Դավիթ արքայազնը, ապա «աթաբեկ եւ ամիրսպասալար Խուժու Բուղայ»-ն<sup>3</sup>, «զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց» վարում էր Տարսայիճ Օրբելյանը<sup>4</sup>: Ստացվում է, որ Դեմետրե Բ-ն թուլացրել էր իր ահեղ հակառակորդ Խուժու Բուղային՝ մասնատելով մինչ այդ միասնական աթաբեկության գործակալությունը<sup>5</sup>: Սակայն Խուժու Բուղան հեշտությամբ տեղի տվողներից չէր: Այս առումով ուշագրավ փաստ է, որ միեւնույն 1287 թվականին գրված մեկ այլ արձանագրությունում, ընդ որում՝ Ավագյան տան ստորակա խաղբակյաններին պատկանող Աղշոց վանքից, Դավիթը որպես թագավոր է հանդես գալիս<sup>6</sup>: Պետք է կարծել, որ Խուժու Բուղայի սանի թագավոր ճանաչվելը, թեկուզ՝ սահմանափակ տարածքում, ամրապնդում էր Խուժու Բուղայի դիրքերը: Այնուամենայնիվ, փաստ է, որ երկու անդադրում ախոջանները՝ Դեմետրե Բ-ն եւ Խուժու Բուղան ինչ-որ համաձայնության էին եկել:

Այդ փխրուն համաձայնությունն էլ արագորեն խախտվեց 1288 թվականին: Դեմետրե Բ-ն գործի դրեց իր բարեկամական կապը Արղունի ամենահզոր պաշտոնյայի՝ Բուղայի հետ, վերջինիս օգնությամբ երկրորդ անգամ բանտարկեց Խուժու Բուղային եւ հարկադրեց նրան հարքունիս հանձնել Դմանխը<sup>7</sup>: Բայց գոտեմարտի եզրափակիչ փուլը, որը հիրավի շեքսպիրյան ողբերգություն է հիշեցնում, այնուամենայնիվ դեռ առջեւում էր:

1 Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, *Պատմություն*, էջ 312:

2 Рашид ад-Дин, т. III, с. 114-116.

3 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Երեսն*, էջ 195:

4 Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, *Պատմություն*, էջ 312:

5 Ի տարբերություն Ասխրոյ մի շարք հետազոտողների, որոնց կարծիքով Սադունի մահից հետո նրա փոխարեն աթաբեկ է Աշանակվել Տարսայիճ Օրբելյանը՝ Ռ. Կիկնաձեւ եմթադրում է, որ Տարսայիճը դարձել է ոչ թե՛ Վրաց թագավորության, այլ միայն Հայաստանի աթաբեկ, այն էլ՝ ավելի ուշ՝ Սահիբ Դիվանի մահապատժից հետո (Ռ. ՅՅՅՏՃԾ, Աշվ. աշխ., էջ 178-180): Բայց Տարսայիճ Օրբելյանի իրավասությունների շրջանակը Աշելիս պատմիչը ոչ միայն Աշուն է իր հոր՝ Հայաստանի աթաբեկ լինելը, այլեւ ընդգծում է, որ Դեմետրե Բ-ն «եղ աթաբէկ [Տարսայիճին – Հ. Մ.] ի վերայ ամենայն տէրութեան իրոյ միջէն ի Տիղիս եւ լԱնի եւ ի Կարս. եւ եղ ի ձեռս նորս գողայսն իր՝ զԴավիթ եւ զՄանուէլն, սնուցանել զնոսս եւ պահել» (Ստեփաննոս Օրբելյան, *Պատմություն*, էջ 312): Ավելի հավանական է թվում, որ աթաբեկության Աշանակությունը թուլացնելու համար Դեմետրե փաստորեն բաժանել է գործակալությունը երկու մասի:

6 Տե՛ս Գ. Կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 303:

7 Տե՛ս Ռ. ՅՅՅՏՃԾ, Աշվ. աշխ., էջ 186:

1288 թ. վերջին – 1289 թ. սկզբին, օգտվելով այն հանգամանքից, որ Բուղան արագորեն կորցնում էր իր ազդեցությունն իլխանական արքունիքում, խուժուր Բուղան եռանդուն գործունեություն ծավալեց: Նա եղբոր հետ միասին ուղեւորվեց Սամցխե եւ, ամուսնանալով այդ երկրամասի տիրակալ Բեքա Ջաղելու դստեր հետ, հզոր աջակից ձեռք բերեց: Բուղայի շնորհագրկումից անմիջապես հետո, Բեքան պատվիրակներ ուղարկեց իլխանի մոտ, եւ Սամցխեի տիրոջ ջանքերով խուժուր Բուղային վերադարձվեցին Սադուն Բ-ի տիրույթները, այդ թվում՝ Դմանիսն ու Թելավը: Դեմետրե Բ-ից խլվեց նաեւ Ավագյան տունը, որը եւս հանձնվեց խուժուր Բուղային<sup>1</sup>: 1289 թ. հունվարի 16-ին մահապատժի ենթարկվեց Բուղան, իսկ քիչ անց՝ մարտի 12-ին՝ Դեմետրե Բ-ն<sup>2</sup>, եւ խուժուր Բուղան գործունեության լիակատար ազատություն ստացավ: Իր խոստման համաձայն՝ նա ձեռնամուխ եղավ Արեւելյան Վրաստանի նոր թագավորի ընտրության եւ գահ բարձրացնելու գործին: խուժուր Բուղան բանակցություններ վարեց Արեւմտյան Վրաստանի թագավոր Դավիթ Նարինի հետ եւ անձամբ ուղեկցեց նրա որդի Վախտանգին Արեւելյան Վրաստան, իսկ հետո նաեւ Արղուն իլխանի նստավայր: Դեմետրե Բ-ի որդի Դավթի փոխարեն, խուժուր Բուղայի օգնությամբ գահին տիրացած Վախտանգն իր բարերարին շնորհեց աթաբեկի ու ամիրսպասալարի զույգ պաշտոնները<sup>3</sup>: Դառնալով Արեւելյան Վրաստանի փաստական կառավարիչ՝ խուժուր Բուղան չհանգստացավ: Այնուհետեւ նա ցանկացավ գահ բարձրացնել գահի օրինական հավակնորդին՝ Դեմետրե Բ-ի որդի Դավթին, ապագա Դավիթ Լ-ին, որը հոր մահապատժից հետո գտնվում էր իլխանի արքունիքում: խուժուր Բուղայի այս նոր ձեռնարկման ժամանակը բավականաչափ ճշգրիտ որոշվում է Վրաց ժամանակագրության տվյալներով: Պատմիչն այն դնում է «Արղունի հիվանդության ժամանակ», որը «շարունակվեց չորս ամիս»<sup>4</sup>: Արղուն իլխանը մահացել է 1291 թվականի մարտի 10-ին<sup>5</sup>, ուստի պետք է ենթադրել, որ խուժուր Բուղան իր ծրագիրն իրականացնելու համար որոշակի քայլեր է ձեռնարկել արդեն 1290 թ. վերջին – 1291 թ. սկզբին: Դավթի եւ Վախտանգի միջեւ գահակալության հարցի շուրջ հակամարտությունը ռազմական բախումների չվերածվեց, քանի որ 1291 թ. վերջին – 1292 թ. սկզբին անսպասելիորեն մահացավ Վախտանգ թագավորը: Քեյղաթու իլխանն Արեւելյան Վրաստանի թագավոր ճանաչեց Դավիթ Լ-ին՝ նրան ենթարկելով վրաց բոլոր իշխաններին<sup>6</sup>:

1291 թվականին տեղի ունեցավ մոնղոլական իշխանությունների եւ խուժուր Բուղայի փոխհարաբերությունները բնութագրող մի կարեւոր իրադարձություն: Երբ Քեյղաթու իլխանի գահ բարձրանալուց (1291 թ. հուլիսի 28) հետո, իլխանական զորքը մեկնեց Փոքր Ասիա՝ Տոնդուզլու քաղաքում ծագած ապստամբությունը ճնշելու<sup>7</sup>, խուժուր Բուղան պատասխանատու հանձնարարություն ստացավ: Նա

1 Նույն տեղում:

2 Տե՛ս *Ջրտառն Երեւոյն*, II, ՅՅ. 291; *Վրաց ժամանակագրություն*, էջ 158; **Рашид ад-Дин**, т. III, с. 121.

3 Տե՛ս *Ջրտառն Երեւոյն*, II, ՅՅ. 289-290; *Վրաց ժամանակագրություն*, էջ 157, 159-160; Սամուել Անեցի, էջ 164 (տարեթիվը խիստ աղավաղված է):

4 Տե՛ս *Ջրտառն Երեւոյն*, II, ՅՅ. 294; *Վրաց ժամանակագրություն*, էջ 161:

5 **Рашид ад-Дин**, т. III, с. 127.

6 Տե՛ս *Ջրտառն Երեւոյն*, II, ՅՅ. 297; *Վրաց ժամանակագրություն*, էջ 163:

7 Տե՛ս **Ռ. Յոյնսթր**, նշվ. աշխ., էջ 190-192; *Մանր ժամանակագրություններ*, հտ. I, էջ 149:

բանակ դրեց Մուղանում՝ պաշտպանելու համար իլխանության սահմանները Ոսկե Հորդայի խաների հնարավոր հարձակումներից<sup>1</sup>: Ուստի միայն վրացական աղբյուրներին անտեղյակ լինելու հանգամանքով է հնարավոր բացատրել այն անհամոզիչ պնդումը, որը ժամանակին արել է Աշոտ Հովհաննիսյանը: Նրա կարծիքով՝ «Ակներեւ է, որ արդեն 1291 թվականից Վրաստանում եւ Հայաստանում առկա էր ապստամբական շարժում: 1293 թվականին Քեյղաթու խանի կողմից կառավարված խուժուրու Բուղա Արծրունին այդ ապստամբության ղեկավարն էր»<sup>2</sup>: խուժուրու Բուղայի մահապատժի իրական պատճառը ոչ թե հակամոնղոլական պայքարի ղեկավարումն էր, այլ նրա եւ Դավիթ Լ-ի հակամարտությունները: Թեեւ թե՛ Սադուն Բ-ի, եւ թե՛ խուժուրու Բուղայի փոխհարաբերությունները մոնղոլների հետ սերտ էին եղել, իսկ 1291 թվականին Մահկանաբերդի տերը շարունակում էր հավատարմորեն ծառայել մոնղոլներին, նվաճողները նաեւ անպասելի շրջադարձ էին կատարում, թույլ չտալու համար կողմերից որեւէ մեկի չափազանց հզորացումը: Հենց այդ էլ, վերջո, տեղի ունեցավ, այս անգամ՝ ի վնաս խուժուրու Բուղայի:

1293 թվականին Դավիթ Լ-ի եւ խուժուրու Բուղայի միջեւ հակամարտությունը հասավ իր բարձրակետին: Արեւելյան Վրաստանի թագավորը դիմեց Քեյղաթու իլխանին եւ, չնայած մոնղոլական ավագանու մի մասի ցուցաբերած օժանդակությանը հօգուտ խուժուրու Բուղայի, շահեց անհնազանդ ստորակայի դեմ հարուցած դատավեճը: խուժուրու Բուղան փախավ Հորդայից, բայց մոնղոլները նրան ճանապարհին ձերբակալելով ետ բերեցին եւ ստիպեցին Դավիթ թագավորին՝ անձամբ մահապատժի ենթարկել իր երբեմնի խնամակալին: Դավիթ Լ-ն լուծեց հոր վրեժը, իսկ իլխանը նրան շնորհեց Դմանիսն ու խուժուրու Բուղայի ողջ ունեցվածքը<sup>3</sup>: Որքան էլ տարօրինակ է, խուժուրու Բուղայի մահվան ճիշտ տարեթիվը հաղորդում է լոկ պարսիկ պատմիչ Ռաշիդ ադ-Դինը: Ըստ նրա՝ խուժուրու Բուղայի մահապատիժն ի կատար է ածվել «հիշրեի 620 թվականի շաբան ամսվա վերջում», այսինքն՝ 1293 թ. օգոստոսի սկզբներին<sup>4</sup>:

Խուժուրու Բուղայի համար եւս տիպական էր ավանդական կապերի պահպանումը միաբանակ հոգեւոր կենտրոնների հետ: Նա հիշատակվում է բազմաթիվ հայերեն արձանագրություններում, իսկ ինչպես տուր Կեչառեցին ողբում է նրա մահը իր «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» երկում<sup>5</sup>: Ինչպես երեւում է, խուժուրու Բուղան, իր բոլոր նախնիների նման, առանձնակի կապվածություն է ունեցել Հաղբատի հետ, որտեղ եւ գտնվում է նրա որմնանկարային պատկերը<sup>6</sup>: Կարելի է չկասկածել, որ խուժուրու Բուղան փոխհարաբերություններ է ունեցել նաեւ քաղկեդոնական հաստատությունների հետ: Մասնավորապես, հայտնի է, որ նրա հիշատակին «աղապ» է սահմանված Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքում<sup>7</sup>:

---

1 յճժժժժժժ ՅՅՅՅՅՅՅՅ, II, ՅՅ. 296; Վրաց ժամանակագրություն, էջ 162; Թ. ՅՅՅՅՅՅՅ, ԱՅՎ. աՅԽ., էջ 190-191:  
2 Ա. Հովհաննիսյան, ԱՅՎ. աՅԽ., էջ 254-255: Հմմ. Լ. Հ. Բաբայան, ԱՅՎ. աՅԽ., էջ 332; Հ. Ստեփանյան, ԱՅՎ. աՅԽ., էջ 102-103:  
3 Տե՛ս Թ. ՅՅՅՅՅՅՅ, ԱՅՎ. աՅԽ., էջ 194-196:  
4 Рашид ад-Дин, т. III, с. 134.  
5 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 204-205; Մ. Ավդալբեգյան, ԱՅՎ. աՅԽ., էջ 131:  
6 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հատրատ, էջ 152:  
7 Ե. ՅՅՅՅՅՅՅՅ, ԱՅՎ. աՅԽ., էջ 103:

Խուժու Բուղան կնքեց իր մահկանացուն առանց ժառանգի:

12. Մանկասար, որդի Սաղուն Բ-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. կեսերին – 60-ական թվականներին՝ մահացել 1293 թվականից հետո): Լինելով հզոր գերդաստանի ներկայացուցիչ՝ Մանկասարն ազդեցիկ դիրք ուներ: Բավական է ասել, որ նա ամուսնացած էր Դավիթ Լ արքայի քրոջ հետ<sup>1</sup>: Քանի որ 1295 թվականին վրաց թագավորն իր քրոջն ամուսնացրեց մոնղոլ նոյիններից Թուքալի հետ<sup>2</sup>, այն տպավորություն է ստեղծվում, որ Մանկասարը մինչ այդ արդեն մահացել էր:

13-14. ՚, ՚, որդիներ Սաղուն Բ-ի (ծնվել են, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել ԺԳ դ. վերջին կամ ԺԴ դ. սկզբին): Նրանց մասին տեղեկանում ենք ներկայիս «Քարթլիս ցխովրեբա»-ի մեջ չպահպանված մի սկզբնաղբյուրից, որից ժամանակին օգտվել է Ժէ դարի հայագրի հեղինակ Փարսադան Գորգիշանի-ձեն: Եղբայրները գործում էին նաև Խուժու Բուղայի մահապատժից հետո<sup>3</sup>:

15. Վանենի, դուստր Սաղուն Բ-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. 50-60-ական թվականներին, մահացել 1285 թվականից հետո): Փոքրաթիվ հայերեն ու վրացերեն արձանագրությունները բավականաչափ պատկերացում են տալիս իշխանուհու մշակութային-դավանական դիմապատկերի մասին: 1279 թվականին ամուսնու՝ Մխարգրձել Զաքարյանի հետ միասին կառուցել են Քոբայրի քաղկեդոնացած վանքի զանգակատուն-տապանատունը<sup>4</sup>: Մոտավորապես նույն ժամանակ ամուսինները հարկերից ազատել են միաբնակ Սանահնի վանքը<sup>5</sup>, նվիրատվություններ կատարել Հաղբատին<sup>6</sup>: Սանահնի արձանագրությունը, որտեղ ամուսինները նշում են իրենց «մահու շափ» տրտմելու մասին, քանի որ վանքը «հարկ է աւերած էր եւ էկեղեցիքս փակած... յաւագ զատկին զվ[ար]դ[ապետն]երն ի քաշ ին արարել եւ այլ շատ նախատինք»՝ խոստում վկայություն է նաև Վանենիի ազգային զգամունքների մասին:

Հավանաբար, ամուսնու հետ միասին, թաղվել է Քոբայրում<sup>7</sup>:

16. ՚, դուստր ՚-ի (ծնվել է ԺԳ դ. երկրորդ կեսին, մահացել մինչև 1317 թվականը): Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ նրա ազգական Լիպարիտ Բ-ի որդի Սմբատը «փեսայացել էր տանն աթբէկի Սաղունեաց»<sup>8</sup>: Պատմիչը չի հիշատակում իշխանուհու կոնկրետ ազգակցական կապը Սաղուն Բ-ի հետ, բայց նրա ամուսին Սմբատի կյանքի տարեգրությունը հուշում է, որ Սաղունյան իշխանուհին Խուժու Բուղայի եղբայրներից որեւէ մեկի դուստրը կարող էր լինել:

1 Տե՛ս Թ. ՅՅԾԾԹ, ԳՂՎ. աշխ., էջ 197:

2 Նույն տեղում, էջ 196-197:

3 Նույն տեղում: Սուրեն Ավագյանի կարծիքով՝ Սաղուն Բ-ի որդիներից է Ասել Պապացը, որը հիշատակվում է Խնձորուտի «Բեմ» խաչքարի արձանագրությունում (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 219-221): Վիմագիրը, սակայն, այնքան է եղծված (չի ընթերցվում «Սաղուն» անունը, «Պապաց» անձնանվանը հաջորդող տառաշարքը քայքայված է), որ դժվար է սիսլն Գրա հիմամբ հաստատ եզրահանգում կատարել:

4 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 177:

5 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը եւ Գրա արձանագրությունները, էջ 125:

6 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 171:

7 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 182:

8 Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 316:

Մահվան ժամանակը հայտնի է ամուսնու թողած արձանագրությունից<sup>1</sup>:

17. Խուժու Բուղա Բ (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին, մահացել 1367 թվականից հետո): Այս անձնավորությունը՝ «զՄանկասարենց Խուժու Բուղայն, զորդի եւ զԹոռն իւր զամենայն, որ են խնամիք եւ բարեկամ», 1367 թվականին հիշատակում է Բշնիի արքեպիսկոպոս Մանուել Ազիզբեկյանը<sup>2</sup>: Չափազանց հազվադեպ անունների (ինչպես, օրինակ՝ Մանկասար, Խուժու Բուղա) զուգակցությունը եւ խնամիական կապը Ազիզբեկյանների հետ՝ հիմք են տալիս ենթադրելու, որ Մահանաբերդցիները որոշակի դիրք էին պահպանում Հայաստանում նաեւ ԺԴ դ. կեսերին: Խուժու Բուղա Բ-ն Մանկասարի որդին էր կամ, որ ավելի հավանական է՝ նրա թոռը:

## ԽԱՎՈՒԱՍՅԱՆ ԻՇԽԱՆԱՃՅՈՒԴԻ ՏՈՅՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Խավուաս Ա, որդի Ամիր-Սարգսի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. երրորդ քառորդում՝ մահացել 1232 թվականից հետո): «Իշխանաց իշխան» Խավուասը իր զբաղեցրած դիրքի համար պարտական էր Ջաքարե Բ-ին եւ Իվանե Ա-ին, «յորոց առաջի սնեալ եւ զարդա[րե]ալ, ի նոցին ողորմութեամբն մեծացեալ եւ փառաւորեալ»<sup>3</sup>: Այսպիսով, նա Ջաքարյան եղբայրների կրտսեր ժամանակակիցն էր եւ Ջաքարե Բ-ի մահից հետո լիովին կապվել էր Շահնշահյան տան հետ: Եղել էր Ջաքարե Բ-ի որդի Շահնշահ Ա-ի դաստիարակը եւ Շահնշահյան տան մասխուրթուխուցեսը<sup>4</sup>: Ինչպես երեւում է իր թոռան՝ Խավուաս Բ-ի արձանագրություններից, զգալիորեն ընդարձակել էր սեփական կալվածքները՝ Շահնշահ Ա-ից գնումներ կատարելով<sup>5</sup>:

Խավուաս Ա-ի առաջին կինը՝ «Խուժու Խաթունն յագգէ գոլով պարսիկ, իսկ ի կոշմանէ եւ ի շնորհացն Աստուծոյ ճշմարիտ աղախին գոլով Քրիստոսի», վախճանվել է անդրանիկ որդու մահից (շուրջ 1229 թվականին, տե՛ս ստորեւ) երկու տարի հետո, մոտավորապես՝ 1231 թվականին: Թաղվել է Բագնայրի տոհմական հանգստարանում: Նրանց հիշատակին էլ Խավուաս Ա-ն Հոռոմոսի վանքում ընդօրինակել է տվել նշանավոր Բագնայրի Ավետարանը<sup>6</sup>:

Երկրորդ կինը՝ Ջմրուխտ Խաթունը, դարձյալ մահմեդական էր՝ նշանավոր տոհմից, եւ ամուսնանալուց հետո քրիստոնեություն էր ընդունել: Ամուսինները,

---

1 Տե՛ս *Դիվան հալ վիմագրության*, պր. III, էջ 55: Ղ. Ալիշանը եւ Գր. Գրիգորյանը Մահկանաբերդցի իշխանուհուն համարում են Սադուն Բ-ի դուստր եւ ճշում են անունը՝ «Ոխթոզ» (Հ. Ղ. Ալիշան, *Միսակաւ*, Վեճեսիկ, 1893, էջ 114; Գ. Մ. Գրիգորյան, ճշվ. աշխ., էջ 108-109): Այս տեսակետը հիմնված է իշխանուհու ամուսնու վերոհիշյալ արձանագրության ալիշանյան հրատարակության վրա (տե՛ս նրա՝ *Միսակաւ*, էջ 114-115), բայց անգամ այստեղ էլ անձնանունը բերված է որպէս ենթադրական ընթերցում: Արձանագրությունը խիստ հողմնահարված է, ուստի Սեդրակ Բարխուդարյանը հրաժարվել է անձնանվան վերծանման փորձից, իսկ Հ. Աճառյանը խուսափել է «Ոխթոզ» անձնանունը ստուգաբանելուց՝ ճշելով լոկ մէկ անգամ, այն էլ՝ անստույգ ընթերցմամբ վկայված լինելու խանգարիչ պարագաները (Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 185):

2 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 426:

3 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 178:

4 Նույն տեղում, էջ 178-179:

5 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, էջ 116:

6 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 178-179:

բացի Բագնայրի Ավետարանից, նշանավոր Իգնատիոս գրչին պատվիրել են եւս մի Ավետարան, ընդ որում՝ նրա ծաղկման համար անհրաժեշտ ոսկին շնորհել է Զմբուխտ Խաթունը<sup>1</sup>:

Հաղբատի վանքում, Ամիր-Քուրդ եւ Դավիթ Մահկանաբերդցիների գերեզմանների կողքին, կա եւս մի տապանաքար՝ «Խաւռաս», եւ անմիջապէս կից՝ «Հասան» մակագրութուններով<sup>2</sup>: Եթէ տապանաքարը Խավուաս Ա-ինն է, ապա ստացվում է, որ նա կրել է «Հասան» կրկնանունը եւ գերադասել է հուղարկավորվել հին տոհմական հանգստարանում, այլ ոչ թէ ընտանեկան տապանատանը՝ Բագնայրում:

2. Սասնա Ա, որդի Խավուաս Ա-ի (ծնվել է, ըստ ամենայնի, ԺԳ դ. սկզբին, մահացել շուրջ 1229-ին): Նրա «կիսարեա» հասակում մահանալն արձանագրված է Բագնայրի Ավետարանի հիշատակարանում եւ Բագնայրի վիմագրերից մեկում, որը թողել է մայրը<sup>3</sup>: Բագնայրի վիմագիրը կազմվել է ՈՂԲ (=1223) կամ ՈՂԸ (=1229) թվականին: Հաշվի առնելով այն հյուսկեն ժամանակագրութունը, որն ուրվագծվում է Բագնայրի Ավետարանի հիշատակարանի հիման վրա (1229 թվականին վախճանվել է Սասնան, երկու տարի հետո՝ մայրը, հաջորդ տարում նրանց հիշատակին ձեռագիր է ընդօրինակվել) գրեթէ անվերապահորեն ընդունելի է թվում երկրորդ տարեթիվը<sup>4</sup>:

Սասնայի կիսն էր Թայիկ «թագոհի»-ն, «որ է զարմ եւ շառաւեղ թագաւորացն Հայոց»<sup>5</sup>: Դժվար է ասել, թէ Կյուրիկյանների կամ Բաղքի արքայազուկների հետ խնամիական կապ ունեցող տոհմերից որից էր սերում Թայիկը:

3. Վասակ, որդի Խավուաս Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. սկզբին, մահվան ժամանակը պարզ չէ): Թեեւ հայրը նրան «սիրելի որդի» է կոչում 1232-ին<sup>6</sup>, այնուամենայնիվ նա բոլորովին էլ Խավուաս Ա-ի տիրույթների միակ ժառանգորդը չի դարձել: Ինչպէս երեւում է Բագնայրի 1260-ական թվականների արձանագրութուններից, տոհմական կալվածքների զգալի մասն անցել էր Սասնա Ա-ի որդի Խավուաս Բ-ին<sup>7</sup>:

4. Խավուաս Բ (ծնվել է մինչեւ 1229 թվականը, մահացել 1266 թվականից հետո): Հայտնի է հօգուտ Բագնայրի վանքին կատարած իր շուսյլ նվիրատվութուններով: Մասնավորապէս, ուշագրավ է այդ խոշոր վանական կենտրոնին 1266 թվականին «զգանձագին զՋրտրիկ վանքն սահմանաւքն, ջաղացովն եւ պահիզաւն» ընծայելու փաստը<sup>8</sup>: Բագնայրին տրված Աշնակ գյուղը Խավուաս Բ-ն հար-

1 Նույն տեղում, էջ 179-180:

2 Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 188:

3 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 179; Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 116:

4 1229 թվականին գերադասություն են տալիս Աստի Գ. Հովսեփյանը (Գ. Հովսեփյան, Իզմատիոս մանրանկարիչ եւ Ծոթոկյանց տոհմը, – «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հտ. Ա, էջ 237) եւ Հր. Բարթիկյանը (Գ. Մ. Բարդիկյան, О византийской аристократической семье Гаврас. IV: Гаврасы Северо-восточной Армении в XII-XIII веках, – “Историко-филологический журнал”, 1988, № 1, с. 172):

5 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 179:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 116:


8 Նույն տեղում:

կադրված է եղել վերստին գնել Շահնշահ Ա-ից: Հարցն այն է, որ թեև այդ գյուղը իսպառա Ա-ն «գնել էր ու սրկելով» տվել թոռանը, այնուամենայնիվ պապի մահից հետո, ինչպես երևում է, պատրոնը ներկայացրել է իր իրավունքները: Իսպառա Բ-ն կրկին գնել էր Աշնակը՝ կնոջ «զբաժինքն ակն ու մարգարիտ»-ը վճարելով<sup>1</sup>:

Իսպառա Բ-ի անդրանիկ որդի Սասնա Բ-ն մահացել է մանուկ հասակում, 1261/62 թվականին<sup>2</sup>:

Գլխի ավարտին ներկայանում ենք նախ՝ Իսպառայանների տոհմածառը (ըստ Բագնայրի Ավետարանի հիշատակարանների ու Բագնայրի վիմական արձանագրությունների), ապա նաև՝ ավագ Մահկանաբերդցիների ճյուղագրությունը: Առայժմ դրանք ունեն համապատասխանաբար հետեւյալ տեսքերը.


### ԽԱՎՈՎՍՅԱՆՆԵՐ



1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

## ՄԱՅԿԱՆԱԲԵՐԴՑԻՆԵՐ (ՍԱԴՈՒՆՅԱՆՆԵՐ)





## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՎԱՉՈՒՏՅԱԼՆԵՐ

Թեև վաղուց ի վեր ընդունված է համարել, որ Վաչուտյանների իշխանությունն առավել ընդարձակն ու ազդեցիկն էր Զաքարե Բ-ին ու նրա ժառանգներին ենթակա իշխանական տների շարքում<sup>1</sup>, սակայն այդ տոհմի առանձին ուսումնասիրությունը համեմատաբար ուշ է սկսվել<sup>2</sup>: Հետազոտողների ուշադրությունն առայժմ գրավել են ընտանիքի պատմության առանցքային հարցերը՝ տոհմագրությունը, նշանավոր անդամների գործունեությունը, մշակութային վաստակի գնահատությունը: Կարծում եմ, որ արդեն հասել է տոհմի պատմության համակողմանի ու համակարգված ուսումնասիրության ժամանակը:

### ՏՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ

«Վաչուտյանց» տոհմանունը, որի կատարյալ համապատասխանությունն է գիտական գրականության մեջ լայնորեն տարածված «Վաչուտյաններ» անվանումը, վկայված է ԺԳ դ. սկզբին, ընդ որում՝ տոհմի հիմնադիր Վաչե Ա-ի արձանագրություններից մեկում<sup>3</sup>: Ընտանիքի հաջորդ սերունդներն իրենց տոհմաբանությունը ներկայացնելիս նախընտրել են նշել իրենց ծագումը «յազգէ Վաչէի»<sup>4</sup>, «արի եւ քաջին Վաչէի»-ից<sup>5</sup> կամ Քուրդ Ա-ից<sup>6</sup>: Այսպիսով, տոհմի «Վաչուտյաններ» անվանումը հիմնավորված է սկզբնաղբյուրներով եւ որեւէ առարկություն չի հարուցում:

Տոհմի ծագումնաբանության խնդիրը երբեւիցե հատուկ քննության առարկա չի դարձել, թեև երբեմն-երբեմն արվել են հպանցիկ դիտարկումներ: Առաջինը Մարի-Ֆելիսիտե Բրոսեն է անդրադարձել Վաչուտյանների ծագման հարցին եւ տոհմին վերագրել է վաղնջական արմատներ: Ըստ նրա՝ Վաչուտյանները սերում էին Մամիկոնյաններից կամ Ամատունիներից<sup>7</sup>: Եթե հետազոտողի առաջին վարկածը սոսկ հայտարարություն է եւ վաղուց արդեն մոռացված, ապա նրա երկրորդ ենթադրությունն աղբյուրագիտական հիմք ունի ու տիրապետող է նաեւ արդի պատմագիտության մեջ: Մ.Ֆ. Բրոսեից տասնամյակներ անց Վաչուտյաններին, որոշակի վերապահությամբ հանդերձ, Ամատունիների տոհմակիցներ է համարել Հ. Ղեւոնդ Ալիշանը: Վաչուտյանների տոհմածառը ներկայացնելուց եւ տոհմի վերջին ներկայացուցիչների թողած արձանագրությունները վկայակոչելուց հետո, մեծավաստակ գիտնականն ավելացնում է. «Յայս վայր, որ է իբրեւ միջոց 150 ամաց, գտանեմ յազգս

- 
- 1 Տե՛ս Հ. Մանանդյան, Աշվ. աշխ., էջ 157-159; Լ. Հ. Բաբայան, Աշվ. աշխ., էջ 52-53; Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 547:
  - 2 Տե՛ս **C. Toumanoff**, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucase Chrétienne...*, p. 55-56; **B. Limper**, *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus*, p. 232; **Վ. Պետրոսյան**, *Վաչուտյանների իշխանական տան տոհմածառը*, էջ 139-147:
  - 3 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 82:
  - 4 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 270-271:
  - 5 Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 92:
  - 6 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 65:
  - 7 **M.-F. Brosset**, *Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie*, p. 100.

եօթն՝ գլխատակ մարացի տոհմիս Վաչուտանց, որոյ բաղդադէպ իմն է իշխանանալ կողմանցս՝ ուր գրեթէ համատոմսիմ նոցա Ամատունիք՝ տիրէին ի նախնունն, վասն որոյ թուի յետնոյ պայազատին զհայր իւր կոչել այր Ամատունի, եւ կամ զի արմատն ըստ խորենացոյ եկ լսի ի Մարաց լեզու»<sup>1</sup>: Այսպիսով, Ղեւոնդ Ալիշանը երկու փաստարկ ունի, որոնք հաստատում են Ամատունիների եւ Վաչուտյանների ազգակցութիւնը: Առաջինը՝ երկու տոհմերի տիրույթների գտնվելը միեւնույն գավառում, երկրորդը՝ վիճաբիր արձանագրութիւնից մեկի ուղղակի ցուցումը: Այս փաստարկների վրա նորութիւն չեն ավելացնում նաեւ Վաչուտյաններ-Ամատունիներ կապն ու ժառանգորդութիւնը հավաստող հետագա հետազոտողները՝ Համազասպ Ոսկյանը<sup>2</sup>, Կիրիլ Թումանովը<sup>3</sup> եւ Ռոբերտ Հյուսընը<sup>4</sup>:

Ամատունիներ-Վաչուտյաններ ժառանգորդութեան տեսութիւնն առաջին հայացքից թվում է հստակ ու համոզիչ: Հիրավի, եւ՛ Ամատունիները<sup>5</sup>, եւ՛ Վաչուտյանները<sup>6</sup> սերված են համարվել մարերից (այս մասին հանգամանորեն խոսք կլինի ստորեւ): Բացի այդ՝ երկու տոհմերն էլ իշխել են միեւնույն երկրամասում: Հանրահայտ է, որ Վաչուտյանների գլխավոր կենտրոնը երկար ժամանակ Ամբերդն էր, իսկ Ստեփանոս Օրբելյանը նույնիսկ ԺԳ դ. վերջերին այդ ամրոցը շարունակում էր համարել Ամատունիների տոհմային տիրույթը («...Հաղբատ, Բջնի՛ն [ե]ւ Ամատունի՛ն, / Որ յԱրագած ես՝ յԱբերդիին»)՝: Հետեւաբար, առաջին տպավորութեամբ, Ամատունիների եւ Վաչուտյանների տոհմակցութիւնը գրեթէ կասկած չի հարուցում: Քննութիւնը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ բացարձակապէս ոչ մի հավաստի փաստ գոյութիւն չունի նրանց ազգակցութիւնը հաստատելու համար: Ավելին՝ Վաչուտյանները որեւէ փորձ չեն ձեռնարկել իրենց Ամատունիների հետ կապելու համար: Վաչուտյաններին Ամատունի հռչակելու տեսութիւնն ակնհայտորեն ուշ միջնադարյան ժամանակաշրջանի ծնունդ է եւ պատկանում է Զաքարիա Մարկավագին: Հովհաննավանքի «Կոնդակ»-ը կազմելիս նա, ի թիվս այլոց, մեջբերել է նաեւ այդ վանքի վիճաբիր արձանագրութիւններից մեկը՝ գրված 1350 թվականին: Այս վիճաբրի՝ «պարոն հայրն իմ՝ Այրարատին տէրն» արտահայտութիւնը<sup>8</sup>, պատմիչը սխալմամբ ընթերցել է «պարոն հայրն իմ, այր Ամատունի» ձեւով<sup>9</sup>: Զաքարիայի թյուր վերծանութիւնը միանգամայն բավարար է եղել՝ Վաչուտյաններին Ամատունի

1 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 254: Ընդգծումն իմն է – Հ. Մ.:

2 Հ. Ղ. Ոսկյան, *Ռուսմասիրութիւններ հայ նախարարութիւններու մասին*. Ա. Խորխոռունիք, Դիմաքսեանք, Ակէացիք, Անձեւացիք ու Ամատունիք, Վիեննա, 1955, էջ 117-118:

3 C. Toumanoff, *Studies in Christian Caucasian History*, p. 197-198; *Idem*: *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic Chrétienne...*, p. 55-56.

4 R. Hewsen, *Աշխ.*, (I), էջ 286:

5 Հակասակ Մովսէս Խորենացու ուղղակի ցուցման, թե Ամատունիները հրեական ծագում ունեն (Մովսէս Խորենացի, էջ 187), արդի պատմագիտության մէջ Ամատունիներին բավական հաճախ են մարական (մեդական) ծագում վերագրում (տե՛ս C. Toumanoff, *Studies in Christian Caucasian History*, p. 197-198): Ինչպէս տեսանք վերելում, Ամատունիներին, հեռվելով Մովսէս Խորենացու այլ վկայությունների վրա, մարական ծագում է հատկացրել նաեւ Հ. Ղ. Ալիշանը:

6 Տե՛ս Զաքարիա Մարկավագ, *հտ.* III, էջ 12:

7 Ստեփաննոս Օրպելեան, *Ողբ ի Ա. Կաթողիկէն*, Հրատարակեց՝ Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 46:

8 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 92:

9 Զաքարիա Մարկավագ, էջ 24:

հայտարարելու համար: Ամատունիներ-Վաչուտյաններ տոհմակցությունը հաստատող երկրորդ փաստարկը, թե Վաչուտյանները Ամատունիների «հողերէն մասի մը տիրացած էին»<sup>1</sup>, եւս բավականաչափ խոցելի է: Քաջահայտ է, որ Զաքարյաններն իրենց ստորակա իշխաններին կալվածքներ շնորհելիս հաշվի էին առնում նրանց ծառայություններն այս կամ այն երկրամասն ազատագրելիս եւ վճռական նշանակություն չէին տալիս նրանց տոհմական պատկանելությանը: Ուստի, Ամբերդն ու շրջակա տարածքները Վաչուտյաններին ի կառավարումն հանձնելիս Զաքարե Բ ամիրսպասալարն ամենեւին իսկ նկատի չի առել Վաչուտյանների ազգակցությունն Ամատունիների՝ Արագածոտնի մի մասի երբեմնի տերերի հետ: Այդ երկու տոհմերի տիրույթների՝ միեւնույն երկրամասում գտնվելը պատահական զուգադիպության հետեւանք է. եւ դա որեւէ դեր չի կարող խաղալ Ամատունիներ-Վաչուտյաններ ազգակցության հարցը լուսաբանելիս: Ինչպես հայտնի է, Ամատունիները հայոց պատմության ասպարեզից հեռացել են Թ դարում<sup>2</sup>, եւ նրանց մասին հիշատակություններ աղբյուրներում այլեւս չեն հանդիպում: Երեք դար տեւած լուսնից հետո Ամատունիների կրկին հայտնվելու տեսությունը հիմնված է ոչ թե ստույգ ու հավաստի փաստերի, այլ հինավուրց տոհմերի հարատեւության մասին այն հավատի վրա, որը բնորոշ է հատկապես Կիրիլ Թումանովի համար<sup>3</sup>:

Վերեւում արդեն խոսք եղավ այն մասին, որ Զաքարիա Սարկավագը, Վաչուտյանների պատմության առաջին հետազոտողն ու ոչ ժամանակակից տոհմական պատմիչը, սխալմամբ է «այդ Ամատունի» արտահայտությունն ընթերցել Հովհաննավանքի այսօր էլ պահպանված եւ գիտական ստույգ հրատարակված հայտնի արձանագրությունում: Այդ վրիպումը, սակայն, պայմանավորված է ոչ միայն վիճագրի վերծանման դժվարություններով, այլեւ պատմիչի ուրույն հայացքներով: Պատմիչի այդ ըմբռնումները ձեւավորվել են Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» խոր ազդեցությամբ եւ այդ պատճառով էլ խորթ չեն անգամ մերօրյա հետազոտողներին: Ուստի Վաչուտյանների ծագման վերաբերյալ Զաքարիա Սարկավագի եզրահանգումները, որոնք նախնական պրպտումների արդյունք են, մանրազնին վերլուծության կարիք են զգում: Վաչուտյանների նախնիների հարցը լուսաբանելիս, սա-

1 Տե՛ս Հ. Հ. Ոսկյան, ԱԶՎ. աշխ., էջ 117:

2 Տե՛ս Աույն տեղում, էջ 114-116:

3 Կ. Թումանովը դույզն իսկ կասկած չի հայտնում, թե արդյո՞ք Ամատունիների տոհմից էր այն ընտանիքը, որը 1784 թվականին ազնվական է ճանաչվել Վրաստանում, երբ կեղծ փաստաթղթերի հիման վրա ազնվականական կարգավիճակ ձեռք բերելու երեւույթն ամենեւին էլ հազվադեպ չէ ուշ միջնադարում: Հանրահայտ է, որ Արեւելյան Հայաստանում ռուսական իրավունքի տարածումից հետո այդ երեւույթն ավելի սե՛ծ ծավալ ձեռք բերեց: Տեղական կալվածատերերն ամեն ինչ անում էին իրենց կալվածատիրական իրավունքներն ապացուցելու եւ «բարձր դասին» պատկանելությունը ցույց տալու համար: Հազվադեպ չէին նաեւ հորիված փաստաթղթերը, կեղծ վկայությունները եւ այլն: Ուստի ռուսական ազնվականության պաշտոնական ցուցակներում որպէս Ամատունի հիշատակվելը դեռեւս ապացույց չէ այդ ընտանիքի իրական ծագման վերաբերյալ: Ինչպէս իրավագիտորէն Աշում է Հ. Ոսկյանը, որոշ ընտանիքներ իրենց Ամատունիների հետ են կապել օտար ազգանունները հայերէն թարգմանելու միջոցով (Հ. Հ. Ոսկյան, ԱԶՎ. աշխ., էջ 119): Ամատունի ազգանունը հանդիպում է նաեւ մեր օրերում, իհարկե՛ որեւէ առնչություն չունենալով հիմնավոր տոհմի հետ: Ուշագրավ է, որ հենց Ամատունի տոհմանունն է նախընտրել անցյալի Աշանավոր հայագետներից Սահակ Ամատունին (Բաղդասար Բաղդասարյան): Ծնված լինելով Օշականում, Ամատունիների ամենանշանավոր տիրույթում՝ նա եւս ձգտել է իրեն կապված տեսնել հուշակալոր նախարարական տոհմի հետ:

կայն, Ղեւոնդ Ալիշանը բավարարվել է պատմիչի հայացքները վերաշարադրելով, ուստի որոշ կետեր այդպես էլ մոլթ են մնացել: Մեծանուն գիտնականը խիստ հակիրճ է արտահայտվել. «Ըստ պատմութեան Զաքարիայ Սարկաւագի եւ այլոց, ծագումն տոհմի սոցա՝ ի Մարաց ազգէ է, բնակելոց եւ խառնելոց խնամութեամբ ի Հայս, վասն որոյ յազգէ Աժդահակայ կոչէ»<sup>1</sup>: Այսպիսով, գիտնականը որեւէ հակասություն չի նկատել Վաչուտյանների՝ Ամատունիներից սերելու եւ միեւնույն ժամանակ «յազգէ Աժդահակայ» կոչվելու միջեւ: Այդ անհամապատասխանությունն ակնառու կլիներ, եթե ե՛ւ Զաքարիա Սարկավագը, ե՛ւ Ղեւոնդ Ալիշանը հետեւողական լինեին ու բառացիորեն ընկալեին Մովսես Խորենացու այն հաղորդումները, որոնց համաձայն՝ «ի գաւակէ Աժդահակայ», «ի ծննդոցն Աժդահակայ» են ճանաչվում Մուրացան (Մարացեան) իշխանական տան շառավիղները<sup>2</sup>: Պատմիչը եւ ապա հետագոտողը դիտվող հակասությունը մեղմել են հետեւյալ եղանակով: Նախ՝ ավելի ընդարձակ մեկնաբանություն տալով Աժդահակի հետ առնչությանը («ի գաւակէ Աժդահակայ», «ի ծննդոցն Աժդահակայ»-ի փոխարեն՝ «յազգէ Աժդահակայ») եւ կոնկրետ Աժդահակ թագավորից սերելու դիմաց՝ նախընտրել են ընդհանրապես մարերից ծագած լինելու տեսակետը: Առավել եւս, որ այդ ձեւով հնարավոր է դարձել Վաչուտյաններին դարձնել Ամատունիների ազգակիցը: Վերջիններս, Մովսես Խորենացու բառացի վկայությունների համաձայն, մարական ծագում չեն ունեցել, բայց այնուամենայնիվ նրանց տոհմական մեջ եւս Պատմահայրը կարծես թե հակված է ինչ-որ մարական տարրեր տեսնել: Այսպես, Արտաշես թագավորի եւ Երվանդ Վերջինի միջեւ պատերազմի եզրափակիչ դրվագն ավանդելիս, Մովսես Խորենացին գրում է. «Եւ ինքն [Արտաշեսը – Ն. Մ.] չուեաց ի քաղաքն Երուանդայ. յառաջ քան զմիջաւրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ, եւ միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զաւրացն՝ «Մար ամատ»՝ որ թարգմանի Մարս եկն»<sup>3</sup>: Պատահական չէ, որ թեեւ «Հայոց պատմության» մեջբերված հատվածն ուղղակի առնչություն չունի Ամատունիների հետ, բայց այդ տոհմի ծագումը լուսաբանելիս այս դրվագին են դիմում հետագոտողները<sup>4</sup>: Բնական է ենթադրել, որ Մար – Ամատունի աղբյուրի Զաքարիա Սարկավագը հատուկ ուշադրություն է դարձրել եւ ավելի է ամրապնդվել նրա այն համոզումը, թե Վաչուտյանները ոչ միայն Ամատունիների շառավիղներից են, այլեւ իրոք սերում են մարերից:

Սակայն ժէ դարում ապրող պատմիչին ինչպե՞ս է հայտնի դարձել հինգ դար առաջ պատմական ասպարեզ մտած Վաչուտյանների էթնիկական պատկանելությունը, եւ ի՞նչ է նշանակում «Մար» էթնիկական անվանումը: Ղեւոնդ Ալիշանն այս հարցերը չի առաջադրել, քանի որ Զաքարիա Սարկավագի հայտնի տեսակետները նա լիովին բացատրելի է համարել Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» տվյալներով: Բայց այդ հարցերից չեն կարող խոսափել ժամանակակից ուսումնասիրողները, մանավանդ որ նրանք քաջածանոթ են թե՛ Զաքարիա Սարկավագի աղբյուրներին, թե՛ պատմիչի ստեղծագործական սկզբունքներին ու եղանակներին: Արդ՝ եթե Հովհաննավանքի եւ Հայաստանի այլ հուշարձանների վիմագիր արձանագրություններում հիշատակություն չկա Վաչուտյանների ծագման վերաբերյալ, ա-

1 Ն. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 253:

2 Մովսես Խորենացի, էջ 112, 169:

3 Նույն տեղում, էջ 172-173:

4 Տե՛ս Ն. Աղոնց, Հայաստանը Հուստիանիանոսի դարաշրջանում, էջ 466, ծնթ. 2:

պա Վաչուտյաններին մարական արմատներ վերագրելը Զաքարիա Սարկավագի ուրույն հետազոտութեան ամփոփումն է: Ուստի անհրաժեշտ է մտովի ներթափանցել պատմիչի ստեղծագործական աշխատանոց եւ հետեւել նրա մտքերի ընթացքին ու եզրակացութիւններին տրամաբանութեամբ: Այս դեպքում անմիջապէս ուշադրութիւն է գրավում այն հանգամանքը, որ պատմիչը Վաչուտյանների նախնիների պատմութիւնը պատկերում է նրանց գերականների եւ հովանավորների՝ Զաքարյանների վաղնշական անցյալի հետ սերտորեն միահյուսված: Իսկ Վաչուտյանների պատմութեան շարադրմանը նախորդող գլխում հեղինակն արդեն արձանագրում է, որ Զաքարյանների նախահայր Զաքարիան Մարաց աշխարհից էր. «կարգեալ իշխան յազգէն Մարաց, եւ վշտացեալ ի նոցանէ, ոչ կարաց կեալ անդէն: Եւ գտեալ ժամանակ, առնու ամենայն ընդոծինս, ծառայս եւ աղախինս ... մտնէ ի սահմանս Հայոց, եւ գնայ յերկիրն Վրաց»<sup>1</sup>: Հետեւաբար, միանգամայն բնական է հնչում, որ Զաքարիայի ծառաների մեջ է եղել նաեւ Վաչուտյանների նախնին, եւ Հայաստանում կապը երկու իշխանական տների միջեւ ընդամենը նորոգվել է. «Բայց զի՝ որպէս ասացաք գալուստ առաջնոյն Զաքարիայի ամենայն ծառայիւք, ունէր եւ ծառայ մի եւս Սարգիս անուն՝ յազգէ Աժդահակայ՝ որ Վաչուտանց կոչէին: Այս Սարգիս տեւեաց մինչեւ ցվերջին Զաքարիա [նկատի ունի Զաքարիա Բ ամիրսպասալարին – Հ. Մ.], եւ ծնաւ նա որդի մի, եւ անուանեցաւ Վաչէ, որ սիրեցաւ ի Զաքարէէ, եւ եղեւ հաւատարիմ տան նորա: Եւ վասն միամիտ ծառայութեան իւրոյ՝ կարգեաց զնա իշխանաց իշխան, եւ ետ նմա մեծութիւն եւ իշխանութիւն»<sup>2</sup>: Այսպիսով, Վաչուտյաններին մարական ծագում վերագրելու գլխավոր հիմքն այն է եղել, որ իբր մարերից են սերել Վաչուտյանների գերականները<sup>3</sup>:

Բայց խնդիրն այսքանով չի սպառվել: Պատմիչը ոչ պակաս կարեւորութիւն է տվել այն փաստին, որ Վաչուտյանների տոհմում սիրված եւ ընդունված անձնանուններից մեկն է եղել «Քուրդ» անունը: Այս փաստի հիման վրա նա արել է իր ժամանակի համար տիպական եզրակացութիւն: Քանի որ ուշ միջնադարում հայ պատմիչները «մար» եւ «քուրդ» էթնոնիմները գործածում էին որպէս հոմանիշներ, ապա Զաքարիա Սարկավագի համար եւս «մար»-ը «քուրդ» էր նշանակում: Այստեղից կարելի է ենթադրել, որ «Քուրդ» անվան հաճախադեպութիւնը Վաչուտյանների տոհմում ավելի է ամրապնդել պատմիչի այն համոզումը, թէ Վաչուտյանների նախնիները մարեր, ասել է թե՛ քրդեր են եղել:

Ի հաստատումն Վաչուտյանների ծագման այս տեսութեան՝ ուշագրավ հավելումներ է կատարել Զաքարիային գրեթէ բառացի կրկնող «Պատմութիւն քաղաքին Յանուոյ» երկը, ըստ որի. «Առաջին Զաքարիայ, որ եկն աշխարհս Հայոց, ունէր ծառայ մի Սարգիս անուն, ազգէն Աժդահակայ, որ է Քուրդ, որ Վաչքատանց կոչէին»<sup>4</sup>:

1 Զաքարիա Սարկավագ, էջ 11:

2 Նույն տեղում, էջ 12:

3 Զաքարյանների ծագման մարական կամ քրդական տեսությունը, ինչպէս տեսանք վերեւում, մշակվել է Մովսէս Խորենացու հայացքների ազդեցությամբ եւ հետո է իրականությունաց: Տե՛ս Հ. Գ. Մարգարյան, *Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ*, – «Պատմա-բանասիրական հանդէս», 1992, № 2-3, էջ 139-151:

4 Տե՛ս Մխիթար Անգեի, էջ 119: Այս երկը հրատարակելիս տողերիս հեղինակը «Վաչքատանց» ընթերցումը տեղադրել է տողատակում, իսկ հիմնական տեքստում գերադասությունը տվել է «Վաչուտանց» տարբերակին: Խնդրո առարկա հարցը լուսաբանելիս ավելի էակամ է այն փաս-

Հեղինակը ոչ միայն արդեն ավելորդ է դիտել «մար» էթնոնիմը պահպանելը, թողնելով միայն «Քուրդ» բնորոշումը, այլև «Վաչուտանց» տոհմանունը կապել է «Վաչքատանց» հետ: Ի դեպ, նրան եւս քաջածանոթ է եղել Վաչուտյանների ամատունիական ծագման վարկածը, եւ նա, դարձյալ Զաքարիա Սարկավագի տվյալների հիման վրա, որպես Ամատունի է բնորոշել Վաչե Ա-ին<sup>1</sup>: Ինչպես երեւում է, «Վաչե» անվան հաճախադեպությունը Վաչուտյանների տոհմում դարձյալ որոշակի եզրահանգումների հիմք է դարձել: Անկարելի է նաեւ, որ «վաչ» կամ «վաչիկ» («սալլ, մանավանդ վրան մորթով ծածկուած») արմատը, որից էլ կազմված է «վաչկատուն» բառը («վրանաբնակ, թափառաշրջիկ, սալլերի մէջ բնակվող քոչւոր»), հայերենում հանդիպում է նաեւ «վաչէ» ձեւով<sup>2</sup>: Քրդերի մի մասի համար բնորոշ վրանաբնակությունը ուշ միջնադարում հայ հեղինակներն այնքան հատկանշական հանգամանք են դիտել, որ շտապել են Վաչե Ա Վաչուտյանին ու նրա նախնիներին սերված ենթադրել հենց քրդերից: Առավել եւս, որ նրանք նաեւ ուրիշ հիմքեր են ունեցել այդպես կարծելու համար: Ի դեպ, ուշ միջնադարյան հայ պատմիչների տեսակետի դեմ առարկություն չի ունեցել նաեւ Ղեւոնդ Ալիշանը, որի աշխատության հիման վրա Վաչուտյաններին քրդական ծագում են վերագրել նաեւ այլ հեղինակներ<sup>3</sup>:

Անձնանունների հիման վրա տոհմի արմատների մասին եզրակացություններ անելը, սակայն, հղի է սխալվելու իրական վտանգով: Փաստ է, օրինակ, որ «Վաչէ» անունը հայոց մեջ վկայված է վաղ միջնադարից եւ սիրված է եղել Արծրունիների եւ Մամիկոնյանների տոհմերում, հանդիպում է նաեւ Ամատունիների շրջանում<sup>4</sup>: Նույն վիճակն է նաեւ «Քուրդ» անձնանվան առումով: Այն վկայված է սկսած Ը դարից եւ դարձյալ՝ իշխանական տոհմերում (Մամիկոնյաններ, Սյունիներ, Ամատունիներ): Ինչ վերաբերում է ԺԲ-ԺԳ դարերին, ապա այդ ժամանակաշրջանում անձնանունը սովորական է դառնում բազմաթիվ հայկական տոհմերում<sup>5</sup>:

Այսպիսով, Վաչուտյաններին քրդական ծագում վերագրելու տեսությունը ծագել է ԺԵ դարում եւ հիմնված է սխալ կանխադրույթների եւ անստույգ կոահումների վրա: Ժամանակակից պատմիչներից Կիրակոս Գանձակեցին, Քուրդ Ա Վաչուտյանին «հայ ազգաւ եւ կրօնիւք քրիստոնեայ» բնութագրելով<sup>6</sup> պարզորոշ վկայում է, որ

տը, որ «Վաչուտանց»-ը իրոք որ կարող էր իմաստավորվել որպես «Վաչքատանց»: «Վաչուտանց» – «Վաչքատանց» առնչությամբ, հնարավոր է, կարեւորություն է տվել նույնիսկ Զաքարիա Սարկավագը:

- 1 Նույն տեղում, էջ 120:
- 2 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հտ. Դ, Եր., 1979, էջ 306:
- 3 Տե՛ս Յ. Շահպազեան, *Քիրդո-հայ պատմություն*, Կ. Պոլիս, 1911, էջ 51-52: Գիտական գրականության մեջ հանդիպում է նաեւ հակառակ տեսակետը: Վաչուտյանների մարական կամ քրդական ծագումը կասկածելի են համարել Կարապետ Տեր-Մկրտչյանը (Կ. եպ. Տեր-Մկրտչեան, նշվ. աշխ., էջ 27) եւ Հակոբ Մանանդյանը (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 159):
- 4 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ե, էջ 39-40:
- 5 Տե՛ս նույն տեղում, էջ 223-226: Հմմ. Հ. Գ. Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի եւ վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*, էջ 208-215: Անձնանունների դերի գերազանցատունը շարունակվում է նաեւ արդի պատմագիտության մեջ: Օր.՝ Աշ. Հովհաննիսյանը, Վաչուտյանների քրդական ծագումը հավանական համարելիս, հիմնվել է ոչ միայն Զաքարիա Սարկավագի հաղորդած ավանդության վրա, այլև բերել է հետեւյալ փաստարկը. «Ուշագրավ չէ՞, որ Վաչուտյանների մոտ սիրված էր «Քուրդ» անձնանունը (Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 153):
- 6 Կիրակոս Գանձակեցի, էջ 365:

Վաշուտյանների հայկական ծագումը, տոհմի հայ լինելը դուզն իսկ չափով կասկած չեն հարուցել: Ինչ վերաբերում է Վաշուտյանների՝ հայկական ո՛ր ընտանիքից սերելուն կամ որտեղացի լինելուն, ապա ձեռքի տակ եղած տվյալներն առայժմ անբավարար են այդ հարցերը լուսաբանելու համար<sup>1</sup>:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ակնհայտ է, որ Վաշուտյանները հասարակական դիրքի եւ գործունեության ասպարեզի տեսանկյունից ռազմական գործիչներ են եղել: Արագածոտնի մի մասի վերակացուցությունը ստանձնելը պայմանավորված է եղել այդ տարածքներն ազատագրելիս Վաշուտյանների ցուցաբերած քաջությամբ եւ ռազմական վաստակով: Պատկերը չի փոխվել նաեւ ԺԳ դ. առաջին տասնամյակների ընթացքում եւ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում: Տոհմի պատմությունը պարբերացնելու համար կարելի է ուղենիշ կարող են ծառայել Վաշուտյանների տիտղոսները, տիրակալական իրավունքները եւ գերականների՝ Զաքարյանների հետ փոխհարաբերությունները, ուստի նախ անհրաժեշտ է անդրադառնալ այդ խնդիրներին:

Վաշուտյանների իշխանական տան ղեկավարը, որպես կանոն, կրել է «իշխանաց իշխան» տիտղոսը: Առաջինն «իշխանաց իշխան» է հիշատակվում Վաչե Ա-ն<sup>2</sup>, իսկ այնուհետեւ Քուրդ Ա-ն<sup>3</sup>: Սակայն հետագայում, վերջինիս որդիների օրոք, այդ տիտղոսը դադարում է գործածական լինելուց: Վերստին «իշխանաց իշխան» է կոչվում Թեոդոս Զրքինը՝ այդ տիտղոսով հիշելով նաեւ հորը՝ Քուրդ Բ-ին<sup>4</sup>:

Մասնագիտական շրջաններում վերջերս տարածում է ստանում այն տեսակետը, թե Քուրդ Ա-ն կրել է նաեւ «շահնշահ» պատվանունը, սակայն այդ կարծիքը հիմնված է մի ակնհայտ թյուրիմացության վրա: Այդ մասին առաջինը նշել է Աշոտ Հովհաննիսյանը՝ հղելով Մաշտոցի անվան Մատենադարանի № 7584 ձեռագիրը<sup>5</sup>: Ընդ որում, տարօրինակն այն է, որ գիտնականը գրում է կիլիկյան մի հիշատակարանի մասին, երբ որ վերոհիշյալ ձեռագիրն ընդօրինակված է Կոստանդնուպոլսում 1698 թվականին, իսկ մատնացուցված թերթում հիշատակարան ընդհանրապես գոյություն չունի<sup>6</sup>: Ինչպես երեւում է, շփոթմունքի տեղիք են տվել այդ ձեռագրում

1 Վաշուտյանների նախնիների բնակության վայրի մասին կարելի կլինեք որոշակի տեսակետ հայտնել, եթե հաստատվեք Վաչուտ Ա-ի եւ Երանյակ գավառի Ապարանք գյուղում թաղված Վաչուտի նույնանձնությունը, բայց այդ հարցը հնարավոր չէ վերջնականապես պարզաբանված համարել: Հմմ. Վաչուտ Ա-ի մասին հատվածը ներկա աշխատությունում:

2 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 82; Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, – «Էջմիածին», 1961, № 2, էջ 42-43; Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան, *Ազվ. աշխ.*, էջ 171: Ավելի վաղ Վաչե Ա-ն կոչվում է նաեւ «մեծ իշխան» (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 82):

3 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, *Վիմական արձանագրությունների բառաքնություն*, էջ 251-252; Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 90-91: Վաչե Ա-ի նման, Քուրդ Ա-ն միաժամանակ անվանվել է նաեւ «մեծ իշխան» (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 352):

4 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 92; Մխ. Տեր-Մկրտչեան, *Ազվ. աշխ.*, էջ 30-31:

5 Ա. Հովհաննիսյան, *Ազվ. աշխ.*, էջ 159-160:

6 Տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զելթունյան, Փ. Անթարյան, հտ. Բ, Եր., 1970, էջ 564:

ընդօրինակված «Պատմութիւն քաղաքին Յանույ» երկի՝ «որդի Քրթոյն կոչի Շահնշահ» բառերը<sup>1</sup>, թեև անբացատրելի է մնում այդ հատվածի՝ կիրիկյան հիշատակարան ընկալվելու առեղծվածը: Իր հերթին, ավելի հեռուն է գնացել Լեւոն Բաբայանը, ով առաջարկել է թվացյալ հիշատակարանի վկայությունը բացատրել Վաչուտյանների՝ «Շիրակի տեր լինելու» հանգամանքով<sup>2</sup>:

Վաչուտյանների տիտղոսները եւս, Զաքարյանների պատվանուններից համեմատաբար համեստ լինելով, դարձյալ վկայում են Զաքարյանների եւ Վաչուտյանների միջեւ գերակա-ստորակայական կապի մասին: Այդ փոխհարաբերությունները լիարժեք արտացոլում են գտել Վաչուտյանների թողած բազմաթիվ արձանագրություններում: Առաջին Վաչուտյաններից Վաչե Ա-ն, Քուրդ Ա-ն, ինչպես նաեւ իրենց հաջորդները, մշտապես ընդգծել են իրենց «ծառա Զաքարիայի» լինելը<sup>3</sup> եւ «ողորմութեամբ պարոնին» նվիրատվություններ կատարելը<sup>4</sup>: Իրողություն է նաեւ, որ Վաչուտյաններն ընդամենը «վերակացու գաւառիս»<sup>5</sup> կարգված վարչական պաշտոնյաներ էին, իսկ «սեփական տէր գաւառիս Ամբերդոյ» էին ճանաչվում Զաքարյանները<sup>6</sup>: Այսպիսով, առնվազն մինչեւ ԺԳ դ. 60-ական թվականները, Վաչուտյանների իսկ արձանագրությունները վկայում են, որ նրանց տիրակալական իրավունքները սահմանափակ են եղել: Ժառանգաբար տիրելով իրենց հանձնված հողերին, ինչպես որ գրականության մեջ մեկնաբանվում է Վաչուտյանների կարգավիճակը<sup>7</sup>, այդ իշխանական տան անդամները, այնուամենայնիվ, չէին համարվում այդ տարածքների լիիրավ սեփականատերեր: Նրանց տիրակալական իրավունքները դժվար թե ամրապնդված լինեին նաեւ հաջորդ երեք տասնամյակների ընթացքում, երբ Քուրդ Ա-ի որդիները պակաս հզորություն ունեին: Այդ իրավիճակը հստակ է ինչպես նրանց տիտղոսներից, այնպես էլ նրանց մասին հիշատակությունների կտրուկ սակավացումից եւ գործունեության շրջանակների անձկացումից: Ավելին, հնարավոր է, որ Վաչուտյանները ԺԳ դ. 80-ական թվականներին – 90-ական թվականների սկզբին կարճ ժամանակով կորցրել են իշխանությունն Արագածոտնում: Փաստ է, որ 1281 թվականին Հովհաննավանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում իշխան է անվանվում ոմն Սմբատ<sup>8</sup>, որին Վաչուտյան համարելու համար հիմքեր չկան:

Հյուսիս-արեւելյան Հայաստանի քաղաքական կյանքում եւ իշխանական տների աստիճանակարգության մեջ Վաչուտյանների զբաղեցրած տեղի մասին կարելի

---

1 Տե՛ս Մխիթար Անեցի, *Հավելված*, էջ 120:  
2 Լ. Հ. Բաբայան, *Ազվ. աշխ.*, էջ 49: Եթե Լ. Բաբայանը հենվել է Աշոտ Հովհաննիսյանի աշխատության վրա եւ չի դիմել ձեռագրին, ապա Վ. Պետրոսյանը զարմանալիորեն հղում է հենց № 7584 ձեռագիրը եւ ճիշտ Ա. Հովհաննիսյանի Աշոտ թերթը (Վ. Պետրոսյանց, *Վաչուտյանների իշխանական տան տոհմաձայն*, էջ 141, ծմթ. 23):  
3 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 135:  
4 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, էջ 42-43:  
5 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, *Ազվ. աշխ.*, էջ 50, հմմ. էջ 51; Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 82:  
6 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, էջ 43:  
7 Տե՛ս Հ. Մանանդյան, *Ազվ. աշխ.*, էջ 159; Լ. Հ. Բաբայան, *Ազվ. աշխ.*, էջ 50 (հեղինակն անհետեւողականություն է դրսևտրում, երբ էջ 52-ում գրում է «որպես սեփականություն» ստացած տիրույթների մասին); Վ. Պետրոսյանց, *Վաչուտյանների իշխանական տան տոհմաձայն*, էջ 139:  
8 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 527:



է դատողութիւններ անել նաեւ այդ տոհմի խնամիական կապերի հիման վրա: ԺԳ դ. առաջին կեսի վերջին եւ հաջորդ երկու կամ երեք տասնամյակների ընթացքում Վաչուտյան իշխաններն ամուսնական զուգեր էին կազմել Համազասպանների եւ Ուքանյանների տոհմերի իշխանուհիների հետ, իսկ այդ տները, անշուշտ, չէին մտնում իշխանական առավել ազդեցիկ գերդաստանների խմբի մեջ:

ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին իրավիճակը որոշակիորեն փոխվում է: Վաչուտյան իշխանուհիները երկիցս ամուսնանում են Արցախի նշանավոր տոհմերից Դոփյանների հետ, իսկ Քուրդ Բ-ն կնության է առնում Զաքարյան Խուանդ Խաթունին: Ինչպես երեւում է, հենց այդ ժամանակ էլ Վաչուտյաններն ինքնուրույն քաղաքական կապեր են հաստատել մոնղոլական իշխանության բարձրաստիճան վերնախավի հետ: Հավանաբար, գերակա-ստորակայական փոխհարաբերութիւնները Զաքարյանների եւ Վաչուտյանների միջեւ հարատեւել են մինչեւ ԺԳ դ. վերջի – ԺԴ դ. սկզբի ժամանակահատվածը: ԺԴ դ. առաջին կեսի արձանագրութիւններում Վաչուտյաններն այլեւս չեն հիշատակում իրենց գերակա Զաքարյաններին, ինչպես նաեւ ընդգծում են իրենց սերտ կապերն անմիջականորեն մոնղոլական իշխանների հետ<sup>1</sup>: Նույն այդ ժամանակահատվածում որպէս «Այրարատին տէր» եւ «տէր Անբերդոյ գաւառի»՝ հանդես են գալիս Քուրդ Բ-ն եւ նրա որդի Թեոդոս Զրքինը<sup>2</sup>: Այս ամենը մտածել է տալիս, որ Զաքարյանների եւ Վաչուտյանների նախկին առնչութիւնների բնույթը փոխվել էր, եւ Վաչուտյաններն առաջ էին քաշում երկրամասի սեփականատեր համարվելու իրենց հավակնութիւնները:

Այսպիսով, Վաչուտյանների տոհմի պատմութիւնը հնարավոր է բաժանել երեք փուլի: Առաջին՝ ԺԲ դ. վերջին տասնամյակի – ԺԳ դ. 60-ական թվականների ժամանակահատվածում Վաչուտյանները սերտորեն համագործակցում էին Զաքարյանների հետ եւ հետեւում նրանց քաղաքական ուղեգծին: Այս փուլն ամենաերկարատեւն ու կայունն է (քաղաքական ու տնտեսական դիրքերի առումով) տոհմի պատմութիւնի մեջ: Վաչուտյաններն իրենց պատմութիւնի երկրորդ փուլում եւս կիսում են Զաքարյանների ճակատագիրը: ԺԳ դ. 60-ական թվականների վերջից սկսած նրանք անընդհատ զիջում են դիրքերը, անորոշ է անգամ տոհմի գլխավորների ժամանակագրութիւնը: Եւ վերջապէս, Վաչուտյաններն իրենց պատմութիւնի եզրափակիչ՝ երրորդ փուլում (ԺԳ դ. 90-ական թվականներ – ԺԴ դ. կեսեր) անկախանում են իրենց պատրոններից, բայց զգալիորեն ավելի ուշ, քան դա հաջողվել էր Օրբելյաններին, Մահկանաբերդցիներին (Սաղունյաններին) եւ Խաղբակյաններին (Պոռչյաններին): Վաչուտյանները միակն են հայ ավատատիրական ավագանին ներկայացնող տոհմերի շարքում, որոնք չեն բացահայտել իրենց հավակնութիւնները «արքա», «արքայաշուք» տիտղոսներով կամ իրենց ծագումը հին թագավորական տոհմերից բխեցնելով: ԺԴ դ. 50-ական թվականներին ասպարեզից հեռանալը վերջնական է եղել տոհմի անդամների համար: Ինչպէս ասվել է Զաքարյանների վերջին ներկայացուցիչների կապակցութեամբ, ԺԴ դ. 60-ական թվականներին Վաչուտյանների տոհմական հանգստարանը եւ, թերեւս, տիրույթների մեծ մասն արդեն հանձնվել էին այլ ազնվականական ընտանիքի:

1 Տե՛ս ԺԴ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 270-271:

2 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, էջ 92; Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրութիւնների բառաքննություն, էջ 195; Մխ. Տեր-Մկրտչեան, Ազգ. աշխ., էջ 30-31:

## ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Այս խնդիրները եւս անցյալի ու մասամբ նաեւ ներկայիս հայագիտության մեջ զարմանալիորեն մեկնաբանվել են ոչ թե ԺԳ-ԺԴ դարերի հավաստի սկզբնաղբյուրների, այլ Զաքարիա Սարկավագի ենթադրությունների եւ աշառու պնդումների հիման վրա: Ըստ պատմիչի՝ Զաքարյանները Վաչուտյանների իշխանական տան իրական հիմնադիր Վաչե Ա-ին են շնորհել «մեծութիւն եւ իշխանութիւն ամենայն Արագածոտանն, Շիրակայ, Նգայ, Անբերդու՝ եւ ամենայն եզերաց նորա՝ մինչեւ ցերասխաձոր»<sup>1</sup>: Զաքարիա Սարկավագի այս հաղորդումներին գիտական գրականության մեջ գերազանցապէս լիակատար հավատ է ընծայվել, եւ ուսումնասիրողներից միայն Վիկտոր Պետրոսյանցն է փորձել ճշտել իշխանական տան կալվածքների տեղորոշումը: Նրա կարծիքով՝ Վաչե Ա-ն ստացել էր միայն Արագածոտն գավառի արեւելյան մասը եւ Նիգ գավառը<sup>2</sup>: Այսպիսի մոտեցումն իրատեսական եւ հեռանկարային է, քանի որ առաջին քայլն է կատարվում՝ ձերբազատվելու Զաքարիա Սարկավագի անստույգ վկայություններից:

Ինչ վերաբերում է Վաչուտյաններին, ապա ԺԳ դ. սկզբին եւ հաջորդ տասնամյակների ընթացքում նրանք նշում են իրենց «վերակացութիւն»-ը «գաւառիս Արարատու» նկատմամբ<sup>3</sup>, իսկ հաջորդ դարի առաջին կեսին շեշտում են արդեն «Այրարատին տէր» լինելը<sup>4</sup>: Ուշագրավն այն է, որ «Այրարատ» կամ «Այրարատ գաւառ» աշխարհագրական հասկացությունները Վաչուտյանները գործածում են ոչ ավանդական, նեղ իմաստով: Ընդ որում՝ ԺԳ-ԺԴ դարերի վիմագիր արձանագրությունների «Այրարատ գաւառ»-ը, որ Վաչուտյանները երբեմն փոխարինում են «նահանգ»-ով<sup>5</sup>, նույնական է այդ ժամանակաշրջանի այլաբնույթ սկզբնաղբյուրներից հայտնի Այրարատին: Հովսեփ Դվինացու Վկայաբանության համաձայն, օրինակ՝ Հովսեփն իր դեգերումների ընթացքում գալիս է «Այրարատ գաւառս, ի Սաղմոսավանս, որ է յոտն Արագածու՝ ի խորածորն՝ ընդ որ Քասաղ գետ հոսի», «Ապա իջանէ ի մենաստանն մեծ՝ Յոհաննու կոչեցեալ վանս, որ է նոյն Ոտն Արագածու՝ ի վերայ Քասաղ գետոյ»<sup>6</sup>:

Բացի «Այրարատ գաւառ» բնորոշումից՝ Վաչուտյաններն իրենց տիրույթները տեղորոշելիս դիմում են նաեւ «Ամբերդոյ գաւառ» արտահայտությանը: Վերջինս, թերեւս, ավելի ընտանի եւ տարածված է եղել, ուստի «Անբերդեցի» են կոչվել, սկսած Վաչե Ա-ից, Վաչուտյաններից շատերը<sup>7</sup>: Ինչպէս երեւում է, «Այրարատ»-ի

1 Զաքարիա Սարկավագ, էջ 12:

2 Վ. Պետրոսյանց, «Վաչե Ա» եւ «Վաչուտյաններ» բառաճոռվածներ, – «Հայկական Սովետական Հանրագիտարան», հտ. 11, Եր., 1985, էջ 283-284: Հատկանշական է, որ հեղինակն ավելի վաղ նաեւ կրկնել է Զաքարիա Սարկավագի տեղեկությունները (Վ. Պետրոսյանց, Վաչուտյան իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը, – «Էջմիածին», 1977, № Թ-Ժ, էջ 84):

3 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 82:

4 Նույն տեղում, էջ 92:

5 Նույն տեղում, էջ 94, 95:

6 Տե՛ս Հայրոց նոր վկաները, Աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 51-52:

7 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 186; Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 92; Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 195; Մխ. Տեր-Մկրտչեան, նշվ. աշխ., էջ 30-31:

նեղ ընկալումով կիրառումը եւ Ամբերդի հետ զուգակցումն այնքան տարածված ու կայուն է եղել, որ 1310 թվականին Հովհաննավանքում գրված հիշատակարանի գրիչը Այրարատի եւ Ամբերդի գավառները միմյանցից չի բաժանում. «ի գաւառս Այրարադու Անբերդ կոչեցելոյ»<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, Այրարատ գավառը, անշուշտ, ավելի ընդարձակ հասկացութեան էր մնում, քան Ամբերդ գավառը: Մասնավորապես, ԺԳ-ԺԴ դարերում Այրարատ գավառի մասեր համարվող Բջնին<sup>2</sup>, Թեղենիսը<sup>3</sup>, Կոշը<sup>4</sup> չեն հիշատակվում Ամբերդ գավառի կազմում, բացի այդ՝ հաստատապես պատկանում էին ոչ թե Վաչուտյաններին, այլ ուրիշ տոհմերի: Բջնիում եւ Կոշում մինչեւ ԺԴ դ. կեսերն իշխում էին Զաքարյանները, իսկ Թեղենիսը ԺԳ դ. սկզբին Զաքարյանները հանձնել էին Վահրամ Զավուշին<sup>5</sup>: Դատելով Վաչուտյանների շինարարական գործունեութեան հետքերից, մասնավորապես՝ այժմյան Ապարանի շրջանի Մուսվյան գյուղի մոտ Եղիպատրուշի վանքի, Երնշատափ գյուղի մերձակայքում՝ Աստվածընկալի վանքի տեղորոշումից, կարելի է կարծել, թե Վաչուտյանների տիրույթները հյուսիս-արեւելքում հասնում էին մինչեւ Ծաղկունյաց լեռներ<sup>6</sup>, իսկ հարավ-արեւելքում՝ Արայի լեռան հյուսիսային լանջերը: Այդ լեռան հարավային ստորոտում ընկած Եղվարդը ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին պատկանում էր Ազիզբեկյաններին<sup>7</sup>: Հարավում Վաչուտյանների տիրույթների սահմանագիծն էին կազմում Սաղմոսավանքը, Հովհաննավանքը եւ Կարբին: Այդ բոլոր վայրերում էլ առատորեն պահպանվել են նրանց մշակութային գործունեութեան հիշատակները: Հնարավոր է, որ ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին Վաչուտյաններին էր անցել նաեւ Ուշին, թեեւ մինչեւ ԺԳ դ. 60-ական թվականներն այն դեռեւս կազմում էր Զաքարյանների սեփականութեանը: Հարավ-արեւմուտքում Վաչուտյանների եկեղեցաշինական գործունեութեան վերջին վկան Տեղերի վանքն<sup>8</sup> է, որը, ըստ Վարդան Արեւելցու, հիրավի մտնում էր «Ամբերդոյ երկրի» մեջ<sup>9</sup>: Արեւմուտքում Ամբերդ գավառի բնական սահմաններն էին կազմում Արագած լեռան արեւելյան փեշերը, իսկ հյուսիսում՝ Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերը: Այսպիսով՝ Վաչուտյանները տիրում էին

1 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 65:

2 Նույն տեղում, էջ 5, 187:

3 Նույն տեղում, էջ 6; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 823:

4 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 285:

5 Տե՛ս Գ. Սարգսյան, Արձանագրություն Թեղենյաց վանքից, – Հ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 8, էջ 102-103:

6 Հայտնի է, որ Վաչե Ա-ի կին Մամախաթունը 1211 թվականին արձանագրություն է թողել Նիգի արեւելյան հատվածում կամ Բջնիի գավառում (տե՛ս Լ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 256), իսկ երկուսով միասին արանք միաբանվել են Կեչառիսի վանքին (տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբալեանք կամ Պոռոշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 314), բայց դրանք դեռեւս Վաչուտյանների տիրակալական իրավունքներն աներկբայելիորեն հավաստող փաստեր չեն:

7 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, Ազիզբեկեանք եւ արանք շինարարական գործը, էջ 405-422:

8 Տե՛ս Լ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 146-147:

9 Նույն տեղում, էջ 147: Հովհաննավանքի 1243 թ. արձանագրությունում հայոց Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսը Հովհաննավանքի վիճակ է հաստատել «յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչեւ յԱշնակ» (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ արանագրությունները, էջ 95): Բայց այդ բնագրում խոսքը եկեղեցական բաժանման մասին է եւ չի վկայում Վաչուտյանների իրավունքների մասին մինչեւ Աշնակ ընկած տարածքների վրա:

Ամբերդ գետի հովտում եւ Քասաղի վերին հոսանքի շրջանում ընկած տարածքներին, այսինքն՝ Նիգ գավառին (առանց արեւելյան հատվածի) ու Արագածոտն գավառի հյուսիս-արեւելյան հատվածին:

Վերադառնալով Զաքարիա Սարկավագի՝ Վաչե Ա-ին շնորհված տիրույթների սահմանների բնորոշմանը, կարելի է նկատել, որ պատմիչը միտում է ունեցել հին եւ օրինական ներկայացնել հայրենի Հովհաննավանքի եկեղեցական վիճակի հավակնութունները: Այսպես, հատուկ՝ «Յաղագս թէմի եւ վիճակի վանացս» գլխում արծարծելով Հովհաննավանքի իրավունքների հարցը, Զաքարիան վկայակոչում է պատմիչ Առաքել Դավրիժեցու բանավոր հաղորդումը. «ասէր, թէ յետ շինելոյ Սուրբ Կարապետին, գրեաց կոնդակ սուրբ Լուսաւորիչն, եւ հաստատեաց կանոնաւ, զի Երասխաձորոյ մինչեւ ցՆուրաստան գետ՝ լինել թէմ բաժնի վանացս»<sup>1</sup>: Զբավարարվելով այդքանով՝ նա մեջ է բերում նաեւ զանազան անձանց հետ իր զրույցները՝ ցույց տալու համար Հովհաննավանքի վիճակի սահմանները «ի Քասաղ գետոյ մինչեւ ցԱխուրեան գետ», եւ վկայակոչում է ոմն ականատեսի հուշերը, թե «ի Շիրակայ բերեալ եմք զպտղին»<sup>2</sup>: Դժվար չէ նշմարել, որ «ամենայն Արագածոտանն, Շիրակայ, Նգայ, Անբերդու՝ եւ ամենայն եզերաց նորա՝ մինչեւ ցԵրասխաձոր» բնորոշման մեջ ընդգծված արտահայտութունները լիովին բխում են Հովհաննավանքի վիճակի սահմանների մասին պատմիչի համոզումներից եւ, ինչպես տեսանք, չեն հաստատվում ԺԳ-ԺԴ դարերի աղբյուրներով: Ուշագրավ է, որ եթե Զաքարիա Սարկավագի պնդումները չեն հարուցել հետազոտողների ճշող մասի կասկածը, ապա Հովհաննավանքի հավակնութուններն անուշադիր չի թողել թեմերի-վիճակների խնդրում խիստ զգուշավոր, հայոց կաթողիկոս Սիմեոն Երեւանցին: «Յօհաննավանից որպիսութիւն»-ը նկարագրելիս՝ նա թեեւ Զաքարիա Սարկավագի աշխատութեան հիման վրա վերապատմում է Վաչե Ա-ի 1217 թվականի արձանագրութեան բովանդակութունը<sup>3</sup>, բայց բոլորովին էլ հակված չէ պատմիչի ոգով շարադրել Հովհաննավանքի վիճակի սահմանները: «Գիտեա՝ զի Շիրակվան, եւ Ապարան, եւ կամ Շարապխանայ, Յօհաննավանք, Սաղմոսավանք, եւ Մարմարաշէն ի միասին են կերեալ խառն եւ անորոշ», - այսպես է եզրափակում նշված երեք վանքերի վեճերի խնդիրը հայոց կաթողիկոսը<sup>4</sup>:

Առաջին Վաչուտյանները, «վերակացու» լինելուց զատ, նաեւ «կողմնակալ» էին նշանակված Զաքարիա Բ-ի եւ Շահնշահ Ա-ի կողմից<sup>5</sup>, այսինքն՝ զբաղվում էին նաեւ սահմանների պաշտպանութեամբ: Հայտնի է, որ հայ իշխաններից Խաղբակյանների եւ Օրբելյանների գլխավորած կողմնակալութունները հսկում էին սահմանի այն հատվածը, որը ձգվելով Երասխով՝ հասնում էր մինչեւ Գառնի, Դվին եւ Բջնի<sup>6</sup>: Ուս-

1 Զաքարիա Սարկավագ, էջ 7:

2 Նույն տեղում, էջ 8:

3 Վիմագրի վերաշարադրանքն ավելորդ անգամ վկայում է, թե որքան աղավաղված են արտացոլում պատմական իրողությունները դեպքերից շատ ուշ կազմված սկզբնաղբյուրները: Բնագրի՝ «գաւառիս Այրարատու» ճշումը «խմբագրվել է» ԺԼ դարի իրականությանը լիովին համապատասխան՝ «Երկրիս Երեւանու» (տե՛ս Սիմեոն Երեւանցի, *Զամբռ*, Վաղարշապատ, 1873, էջ 291):

4 Նույն տեղում:

5 Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 94:

6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 18, 26; Գ. Մ. Գրիգորյան, *Աշխ.*, էջ 91-92:

տի այն տպավորությունն է ստացվում, թե Վաչուտյաններին էր հանձնարարված սահմանի հաջորդ հատվածը: Հնարավոր է, որ Վաչուտյանների կողմնակալության վրա էր դրված Հրազդանի հովտից սկսվող եւ Երասխի ու Ախուրյանի միախառնման վայրով ավարտվող սահմանագծի պաշտպանությունը: Այդ դեպքում Վաչուտյանները կարող էին վարչական, բայց ոչ տիրակալական իրավունքներ ունենալ Արագածոտնի նաեւ հարավային, հարթավայրային մասի նկատմամբ:

Վաչուտյաններն ունեին նաեւ «գանձագին» տիրույթներ, որոնցից էր Շենգավիթը ԺԳ դ. սկզբին:

Վաչուտյանների իշխանական տան նստոցը սկզբում եղել է Ամբերդ դղյակը, իսկ մոնղոլական նվաճումից հետո, հավանաբար՝ Վարդենիս գյուղը, որտեղ Քուրդ Ա-ն երկիցս ընդունեց Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ին (1226-1270): Չի բացառվում, որ իշխանատոհմի նստոցը հետագայում փոխադրված լիներ նաեւ այլ վայր, օրինակ՝ Կարբի, որտեղ ԺԴ դ. առաջին կեսին հիշատակներ են թողել Թեոդոս Չրքինը եւ նրա մայր Խուանդ Խաթունը:

## ԴԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԷԹՆՈՎՈՐԱԿԱՆ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Վաչուտյանների իշխանական տան անդամները, լինելով համոզված միաբնակներ, աչքի են ընկել հայոց եկեղեցու նկատմամբ իրենց հավատարմությանը եւ եկեղեցանպաստ գործունեությունը: ԺԳ դ. սկզբին Վաչե Ա-ն բավականաչափ ընդարձակ կապեր ուներ բազմաթիվ միաբնակ հոգեւոր կենտրոնների հետ: Նա եւ իր հարազատները նվիրատվություններ էին կատարում նաեւ հայրենի երկրամասից հեռու գտնվող հոգեւոր հաստատությունների: Այսպես՝ նրանք հարաբերություններ էին հաստատել Ձորագետի եւ Շիրակի ճանաչված հոգեւոր կենտրոններին՝ Սանահնի<sup>1</sup>, Հաղբատի<sup>2</sup>, Հոռոմոսի<sup>3</sup>, Հառիճի<sup>4</sup>, Կայենո գավառում՝ Մակարավանքի<sup>5</sup>, Այրարատի Վարաժնունիքում՝ Կեչառիսի հետ<sup>6</sup>: Երբ Վաչե Ա-ի եւ նրա հաջորդների եռանդուն եկեղեցաշինական գործունեության շնորհիվ զարթոնք ապրեցին Արագածոտնի վանական կենտրոնները՝ Հովհաննավանքը, Սաղմոսավանքը, Աստվածընկալի, Ուշիի, Եղիպատուշի, Տեղերի, Կարբիի վանքերը, ապա Վաչուտյանների հովանավորությունն այսուհետեւ վայելում էին գլխավորապես հենց այդ հոգեւոր օջախները:

Հովհաննավանքում՝ Վաչուտյանների իշխանական տան հոգեւոր կենտրոնում էլ գտնվում էր նրանց տոհմական հանգստարանը:

Նշանակալից է Վաչուտյանների մշակութային վաստակը, որն արտահայտվել է վանքերի խնամակալությամբ, գրատների կառուցմամբ, ականավոր գիտնականների (օրինակ՝ Վարդան Արեւելցու) հովանավորությամբ:

1 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98, 133-135:

2 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 172-174:

3 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, էջ 24:

4 Նույն տեղում, էջ 161:

5 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, սր. VI, էջ 186:

6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 314:

## ՏՈՂՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վաչուտյանների տոհմագրության հետազոտությունը, սկիզբ առնելով Մ.-Ֆ. Բրոսեից<sup>1</sup>, շուրջ մեկուկես հարյուրամյակի պատմություն ունի: Նրանից մոտ կես դար հետո Վաչուտյանների տոհմածառին անդրադարձել է Ղեռնդ Ալիշանը<sup>2</sup>, իսկ այնուհետև երկարատև անդորր է հաստատվել: Վաչուտյանների տոհմագրության նկատմամբ հետաքրքրության բռնկում տեղի ունեցավ վերջին երկու տասնամյակների ընթացքում, երբ հրատարակվեցին Կիրիլ Թումանովի<sup>3</sup>, Բեռնհարդ Լիմպերի<sup>4</sup> եւ Վիկտոր Պետրոսյանցի<sup>5</sup> կազմած տոհմածառերը: Ասպարեզի վրա եղած տոհմագրություններից համեմատաբար լիարժեքը վերջինն է: Այստեղ առավել մեծ չափով են նկատի առնված վիմագիր արձանագրությունները եւ հիշատակարանները: Բացի այդ՝ հեղինակը վկայակոչում է այն սկզբնաղբյուրները, որոնք ընկած են տոհմածառի հիմքում, ուստի կարելի է հետեւել նրա եզրակացությունների ընթացքին եւ ճշգրտությունը: Բ. Լիմպերի եւ հատկապես՝ Կ. Թումանովի տոհմագրական պրատունները հաճախ խոցելի են, քանի որ հեղինակները երբեմն հենվել են հնացած հրատարակությունների վրա: Այնուամենայնիվ, առավել մեծ տարածում է ստացել Հ. Ղեռնդ Ալիշանի կազմած տոհմածառը, քանի որ այն արտացոլված է Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» եւ այսօր էլ ելակետային տվյալներ է մատակարարում հետազոտողների մեծ մասին:

Վաչուտյանների տոհմագրությունը, ներառյալ Քուրդ Ա եւ Վաչուտ Բ, այսինքն՝ իշխանական տան չորրորդ սերնդի ներկայացուցիչները, առանձնակի տարակարծություններ չի հարուցել ուսումնասիրողների շրջանում: Վեճերը վերաբերում են հիմնականում Քուրդ Ա-ի որդիների ժամանակաշրջանին, որն անհամեմատ աղքատ է ներկայացված սկզբնաղբյուրներում, քան նախորդ եւ հաջորդ ժամանակահատվածները: Վաչուտյանների տոհմագրությունը լուսաբանելու համար անհրաժեշտ վիմագիր արձանագրություններ եւ ձեռագրերի հիշատակարաններ, անշուշտ, կարող են ի հայտ գալ նաեւ այսուհետեւ, սակայն դրանց զգալի աճը քիչ է հավանական: Ուստի հարկ է ավելի մեծ ուշադրություն դարձնել արդեն հայտնի արձանագրությունների հնարավորինս ստույգ թվագրմանը, ինչպես նաեւ օգտվել Զաքարյանների տոհմի պատմության հարաբերականորեն լավ հայտնի եւ հավաստի տվյալներից, որոնք կարող են իբրեւ պատմական ու ժամանակագրական զուգահեռներ ծառայել: Այս դրույթը լիովին կիրառելի է, օրինակ՝ Սարգիս Ա-ի եւ Վաչուտ Ա-ի կապակցությամբ, որոնց գործունեության ժամանակաշրջանը հնարավոր է պարզաբանել Զաքարյանների պատմությունից ծանոթ դրվագները հետազոտության ոլորտ ներգրավելով:

1. Վաչուտ Ա (ծնվել է ԺԱ դ. վերջին – ԺԲ դ. սկզբին, մահացել, թերեւս, ԺԲ դ. երկրորդ կեսին): Տոհմի առաջին նշանավոր ներկայացուցիչն է: Համենայն դեպս, ԺԳ-ԺԴ դարերում իշխանական տունը հայտնի էր նրա անունով: Հիշատակվում է իր

1 M.-F. Brosset, *Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie*, p. 100.

2 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 254:

3 C. Toumanoff, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasia Chrétienne...*, p. 55-56.

4 B. Limper, *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus*, p. 232.

5 Վ. Պետրոսյանց, *Վաչուտյան իշխանական տան տոհմածառը*:

Թոռների թողած վիճաբերում<sup>1</sup>: Կյանքի եւ գործունեության մոտավոր ժամանակը կարելի է պարզել հետեւյալ ժամանակագրական հաշվարկների օգնությամբ: Նրա թոռ Վաչե Ա-ն գործել է իր հովանավորներ Զաքարե Բ-ի (ծնվել է, հավանաբար, 1150-ական թթ. երկրորդ կեսին, մահացել 1212 թվականին) եւ Իվանե Ա-ի (ծնվել է, թերեւս, 1150-ական թթ. երկրորդ կեսին կամ 60-ական թթ. սկզբին եւ մահացել 1233/1234 թվականին) հետ գրեթե միաժամանակ: Ավելին, Իվանե Ա-ի նման, նա ԺԳ դ. 20-ական թվականներից դադարել էր գործուն մասնակցություն բերել ռազմական ու վարչական կարեւոր հարցերի լուծմանը: Միեւնույն օրինաչափությունն է դիտվում նաեւ Վաչուտյան Քուրդ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. վերջին, մահացել 1263 թվականից հետո) եւ Զաքարյան Շահնշահ Ա-ի (ծնվել է 1197 թվականին, մահացել 1261/1262 թվականին) կյանքի եւ գործունեության տարեգրությունները համեմատելիս: Ուստի կարելի է կարծել, որ Վաչուտ Ա-ն գործում էր Զաքարե Բ-ի եւ Իվանե Ա-ի պապի՝ Զաքարե Ա-ի հետ գրեթե միաժամանակ՝ 1130-1160-ական թվականներին, իսկ ծնվել է ԺԱ դ. վերջին – ԺԲ դ. սկզբին:

Ղեւնդ Ալիշանը ենթադրում է, որ Վաչուտ Ա-ն միեւնույն անձը կարող է լինել Երնջակ գավառի Ապարաններ գյուղում թաղված այն Վաչուտի հետ, որը վախճանվել է 1174 թվականին<sup>2</sup>: Ժամանակագրության տեսանկյունից այս կոահումը բոլորովին էլ անհավանական չէ, բայց եւ դժվար է ապացուցված համարել, քանի որ անունների համընկնումը կարող է եւ պատահական լինել:

2. Սարգիս, որդի Վաչուտ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. 20-30-ական թվականներին, մահացել ԺԲ դ. երկրորդ կեսին): Հայտնի է դարձյալ ժառանգների միեւնույն հիշատակություններից: Հաղբատի արձանագրությունում Վաչե Ա-ն անվանում է նաեւ իր մորը՝ Կատային: Կարելի է ենթադրել, որ Սարգիս Վաչուտյանը մասնակցել է Սարգիս Մեծ Զաքարյանի այն ռազմական ձեռնարկումներին, որոնք ծավալվել էին ԺԲ դ. 60-80-ական թվականներին: Հետեւաբար, Սարգիս Վաչուտյանը ծնված կարող էր լինել ԺԲ դ. 20-30-ական թվականներին<sup>3</sup>:

3. Վաչե Ա, որդի Սարգսի (ծնվել է, ըստ երեւոյթին, ԺԲ դ. շուրջ 50-60-ական թվականներին, մահացել մինչեւ 1229 թվականը): Վաչուտյանների իշխանական տան փաստական հիմնադիրն է: Արագածոտնում հաստատվել է 1196 թվականին տեղի ունեցած Ամբերդի ազատագրումից ոչ շատ ուշ, հավանաբար՝ դարավերջի եզրափակիչ տարիներին – ԺԳ դ. առաջին տարիներին<sup>4</sup>: Հարցն այն է, որ Վաչե Ա-ն արդեն ԺԳ դ. երկրորդ տասնամյակի սկզբից ի վեր պատկառելի ծավալի շինարարական աշխատանքներ է կատարել, իսկ դրանք ավարտելուց անմիջապես հետո

1 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98, հմմ. էջ 133; նույնի՝ *Հաղբատ*, էջ 173:

2 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Միսակյան*, էջ 370:

3 Հենվելով, ինչպես երևում է, «Պատմություն քաղաքին Յանույ-ի» «Սարգիս անուն, ազգէն Աժ-դահակայ, որ է Քուրդ» տողերի վրա, Ղեւնդ Ալիշանը Սարգսին կոչում է «Սարգիս Քուրդ»: Պարզ է, որ «Քուրդ» բացատրությունը վերաբերում է «ազգէն Աժդահակայ»-ին եւ կապ չունի Սարգսի հետ: Ուստի՝ Սարգիս Վաչուտյանի երկանունությունը Ղ. Ալիշանի թյուրընկալման հետեւանքն է եւ սկզբնաղբյուրներով չի հաստատվում:

4 Վիկտոր Պետրոսյանը նշում է մոտավորապես 1208-1210 թվականները (Վ. Պետրոսյան, *Վաչուտյան իշխանական տան տոհմաճառը*, էջ 139), բայց նրա հղած սկզբնաղբյուրում (Զաքարիա Սարկաւազ, էջ 12) որեւէ թվագրում գոյություն չունի:

ձեռնարկել է նորերը: Այդ ձեռնարկումները հնարավոր էր իրականացնել միայն նախորդ տարիներին, Արագածոտնում «վերակացու» լինելու ընթացքում նյութական միջոցներ կուտակելու պարագայում: Առաջին անգամ իր պաշտոնավարության մասին Վաչե Ա-ն նշում է Հովհաննավանքի 1217 թվականի արձանագրությունում<sup>1</sup>, բայց նրա թողած մեկ այլ վիմագրից ակնհայտ է, որ այդ պաշտոնում նա կարգվել է ավելի վաղ, դեռևս Զաքարե Բ-ի օրոք<sup>2</sup>:

Վաչե Ա-ի շինարարական ձեռնարկումներն ու նվիրատվությունները, որոնց մշտապես մասնակցում էր կիրճ Մամախաթունը, ընդգրկում էին Հյուսիս-արեւելյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը<sup>3</sup>: Ուշագրավ է, որ 1229-1232 թվականներին կատարված կառուցումների եւ ընծայատվությունների մասին պատմող վիմագրերում Մամախաթունը, ամուսնուն հիշատակելով հանդերձ, խոսում է միայն իր անունից<sup>4</sup>: Այդ արձանագրությունները համադրելով Հովհաննավանքի 1221 թվականի վիմագրի հետ, որտեղ «կողմնակալ» է նշվում Քուրդ Ա-ն<sup>5</sup>, կարելի է եզրակացնել, որ Վաչե Ա-ն ԺԳ դ. 20-ական թթ. սկզբին արդեն հեռացել էր ակտիվ ռազմավարական գործունեությունից: Նրա մահը, հավանաբար, տեղի է ունեցել 20-ական թվականների վերջին: Հատ Զաքարիա Սարկավագի՝ թաղվել է Հովհաննավանքում<sup>6</sup>:

4. Վանենի, դուստր Սարգսի (ծնվել է ԺԲ դ. երկրորդ կեսին, մահացել ԺԳ դ. սկզբին): Սանահնում թողած անթվակիր արձանագրությունից հայտնի է դառնում, որ նրա միջոցներով պատարագ է պատվիրվել հոր հիշատակին<sup>7</sup>:

5. Քուրդ Ա, որդի Վաչե Ա-ի (հավանաբար, ծնվել է ԺԲ դ. վերջին, մահացել 1268 թվականից հետո): Ծնողների եւ եղբոր հետ միասին առաջին անգամ հանդես է գալիս դեռևս 1211 կամ 1213 թվականին<sup>8</sup>: Առնվազն 1221 թվականից «կողմնակալ» էր Վաչուտյանների «նահանգ»-ում<sup>9</sup>: 1235 թվականին խաչքար է կանգնեցրել Կարբիում, հաղորդելով «շարետ» հարկի վերացման մասին<sup>10</sup>: Մոնղոլների հետ փոխհարաբերություններն ամենից ավելի դիպուկ բնութագրել է հենց ինքը, Հովհաննավանքի

1 Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 82:

2 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, *ԱԶՎ. աշխ.*, էջ 51: Ուշիի վանքի մեծ տաճարի նորասկստ արձանագրությունում Վաչե Ա-ն ԱԶՎ-ում է, որ եկեղեցին զարդարել է «հրամանաւ Իւանէի եւ Զաքարէի» (տե՛ս Ծ. Բաբայան, Ա. Քալանթարյան, *ԱԶՎ. աշխ.*, էջ 171): Այնուամենայնիվ, ղժվար է պնդել, թե Իվանե Ա-ն փաստական իշխանություն է ունեցել Արագածոտնում եւ դեր է կատարել Վաչե Ա-ին պաշտոնի ԱԶՎ-ակելու հարցում:

3 Տե՛ս Վ. Պետրոսյան, *Վաչուտյան իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը*:

4 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Օիրակ*, էջ 24; *Այրարատ*, էջ 147:

5 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 94:

6 Զաքարիա Սարկաւագ, էջ 13:

7 Կ. Ղաֆաղարյան, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 98: Այս վիմագիրը Վաչուտյանների ամենահին հիշատակն է: Այն սկզբում փորագրվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու պատին, իսկ երբ 1211 թվականին ավարտվել է եկեղեցուն կից ժամատան կառուցումը, նրա բովանդակությունը վերստին վիմագրվել է ժամատան կամարներից մեկի վրա (տե՛ս Աույն տեղում, էջ 133):

8 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոտեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 314; Հ. Եղիազարյան, *Կեչառիսի վանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները*, – «Էջմիածին», 1955, № ԺԲ, էջ 40:

9 Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 94:

10 Տե՛ս Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, էջ 55:



1250 թվականի արձանագրությունում. «հաճո եղե[ա]լ այլազգի զարացն նետողաց»<sup>1</sup>: Այսպիսով, հետեւելով «պատրոն»-ին՝ Շահնշահ Ա Զաքարյանին, Քուրդ Ա-ն եւս հնազանդվել է մոնղոլներին եւ պահպանել իր տիրույթները: 1244-1255 թվականներին նրա կատարած բազմատեսակ կառուցումները Հովհաննավանքում, Սաղմոսավանքում եւ Աստվածընկալի վանքերում<sup>2</sup> ցույց են տալիս, որ Վաչուտյանների տնտեսական բարգավաճ վիճակը մոնղոլական արշավանքներից հետո էլ երկար ժամանակ անսասան էր մնացել: Քուրդ Ա-ի բարձր հեղինակության մասին են խոսում երկու փաստ: Նրան հաջողվեց, հավանաբար՝ 1236 թվականին, մոնղոլական գերությունից ազատել «Սուրբ Մարիի գավառի» եպիսկոպոս Մարկոսին<sup>3</sup>: Այնուհետեւ՝ մոնղոլական մայրաքաղաք այցելելու ճանապարհին Քուրդ Ա-ի մոտ հյուրընկալվեց Կիրիկիայի հայոց թագավոր Հեթում Ա-ն<sup>4</sup>: 1267 թ., նրա հովանավորությունից օգտվելով, Սաղմոսավանքում Տոնապատճառի առաջին հատորի ընդօրինակությունն ավարտեց Գեորգ Լամբրոնացի գրիչը: Ընդ որում, վերջինս ուղեկցում էր այդտեղ ուսուցչական գործունեություն ծավալած Վարդան Արեւելցուն<sup>5</sup>: Իր իսկ՝ Վարդան Արեւելցու 1268 թ. հիշատակարանը վերջին սկզբնաղբյուրն է, որտեղ, ի շարս ժամանակի ամենանշանավոր հայ իշխանների, հիշատակվում է նաեւ Քուրդ Ա-ն<sup>6</sup>:

Քուրդ Ա-ի կին Խորիշահը դուստրն էր Դսեղի Մարգարյան Համազասպյան-Մամիկոնյանի<sup>7</sup>: Զաքարիա Սարկավագի վկայությամբ՝ իշխանն իր կյանքի վերջին օրերն ապրել է Սեւանում<sup>8</sup>: Հավանաբար՝ հենց նրան է պատկանում «Այս է հանգիստ պարոն Քուրդա» արձանագրությամբ տապանաքարը, որը գտնվել է Սեւանա կղզու Սուրբ Առաքելոց եկեղեցու արեւմտյան կողմում<sup>9</sup>:

6. Վաչուտ Բ, որդի Վաչե Ա-ի (ծնվել է, թերեւս, ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1213 թվականից հետո): 1211 կամ 1213 թվականին ծնողների եւ եղբոր հետ միասին այգի է նվիրել Կեշառիսի վանքին<sup>10</sup>: Վաչուտ Բ-ի մասին այլ տեղեկություններ հայտնի չեն:

7. Վաչե Բ, որդի Քուրդ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. 20-30-ական թվականներին, մահացել է 60-ական թթ. սկզբին): 1254 թվականի դեպքերի առիթով

1 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 103:

2 Նույն տեղում: Ս. Ա. Ավագյան, *Վիմակաւ արձանագրությունների բառաքննություն*, էջ 251-252; Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, էջ 44-45:

3 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 206:

4 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 364-372:

5 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 352:

6 Նույն տեղում, էջ 366:

7 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 90-91, 103; Ս. Ա. Ավագյան, *Վիմակաւ արձանագրությունների բառաքննություն*, էջ 251-252; Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, էջ 43-45; Դիվյան հայ վիմագրության, պր. V, էջ 214:

8 Զաքարիա Սարկավագ, էջ 12:

9 Տե՛ս Ս. Ծտիկյան, *Կիճտաքրքրի՞, արդյոք, հնագետներին եւ պատմաբաններին*, – «Երեկոյան Երեւան» օրաթերթ, 1967, օգոստոսի 9 (№ 185), էջ 3: Հեղինակը հակված է՝ այստեղ հիշատակված Քրդին նույնանձնացնելու Ամիր-Քուրդ Մահկանաբերդցու հետ, բայց ստույգ հայտնի է, որ վերջինս հուղարկավորված է Հաղբասում (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբաս, էջ 188):

10 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, *Խաղրակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 314; Հ. Եղիազարյան, *Կեշառիսի վանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները*, էջ 40:

Կիրակոս Գանձակեցին նրան առաջինն է անվանում Քուրդ Ա-ի որդիների շարքում<sup>1</sup>: Սաղմոսավանքում թողած միակ արձանագրությունից հայտնի է դառնում, որ Վաչե Բ-ն Շահնշահ Ա Զաքարյանից (ուրեմն՝ մինչև 1261/1262 թվականը՝ Շահնշահ Ա-ի մահվան տարին) գնել է Երեբունյք գյուղը. «եւ ետու ի վանս Սաղմոսի եւ զկէսն իմ եղբարն Հասանա, որ շէն պահի վանիցս համար»<sup>2</sup>: Վիմագրի երկրորդ մասից, որն ավելացրել են ծնողները, պարզվում է, որ Վաչե Բ-ն մահացել է «տարածամ եւ կէս աուրց», եւ Քուրդ Ա-ն եւ Խորիշահն իրենց որդու թողած միջոցներով Զաքարյաններից կրկին գնել են նաեւ Աղկունծ գյուղն ու նվիրել Սաղմոսավանքին<sup>3</sup>: Քանի որ Վաչե Բ-ի ծնողներն Աղկունծը ձեռք են բերել Իվանե Բ Զաքարյանից, ով իշխել է 1261/62 թվականից սկսած, ապա Վաչե Բ-ի մահն ընկնում է մոտավորապես նույն տարիներին: Վաչե Բ-ի «քնարան»-ը (գերեզմանը) գտնվել է Սաղմոսավանքում:

8. Հասան, որդի Քուրդ Ա-ի (ծնվել է ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել 1283 թվականին): Անկասկած, Քուրդ Ա-ի երկրորդ որդին էր, որը երեւում է ինչպես Կիրակոս Գանձակեցու վերոհիշյալ թվարկումից, այնպես էլ Վաչե Բ-ի կտակարձանագրությունից: Հոր մահից հետո ստանձնել է իշխանական տան ղեկավարությունը: «Ի տէրութեան Հասանա»՝ 1279 թվականին գրված արձանագրություն է պահպանվել Հովհաննավանքում<sup>4</sup>: Նրա եւ կնոջ՝ Արուս Խաթուն Ուքանյանի մահվան տարում (1283 թվական) գրված կտակարձանագրությունը բառացի զուգադիպումներ ունի Վաչե Բ-ի համաբնույթ վիմագրի հետ եւ վկայում է իշխանական տան ղեկավարությունը Դավիթ անցնելու մասին: Պարզվում է նաեւ, որ ամուսինները երիտասարդ հասակում են վախճանվել: Դավիթ իշխանի խնամքին հանձնված նրանց զավակների մասին տեղեկություններ չեն հասել<sup>5</sup>:

9. Դավիթ, որդի Քուրդ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԳ դ. երկրորդ քառորդում, մահացել 1283 թ. հետո): Հասանի կտակարձանագրությունից հայտնի տվյալները եզակի են: Հաջորդելով եղբորը՝ Դավիթը երկար չի կառավարել: Եթե Ղազան իլխանի (1295-1304) օրոք հանդես էր գալիս Քուրդ Բ-ն, իսկ որոշ տարեքանակ էլ պետք է ենթադրել նրա հայր Տայիրի համար, ապա պարզ է, որ Դավիթը մեկ տասնամյակից ավելի, թերեւս, չի իշխել<sup>6</sup>:

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 365:

2 Տե՛ս Հ. Եղիազարյան, *Սաղմոսավանք*, էջ 43:

3 Նույն տեղում:

4 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 106: 1281 թվականին Հովհաննավանքում գրված հիշատակարանը իշխան է անվանում ոմն Սմբատի, ով, թվում է, թե իշխում էր Վաչուտյանների տիրություն (տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 527): Կարելի է, օրինակ՝ ենթադրել, որ Վաչուտյանները կարճ ժամանակով կորցրել են իրենց իշխանությունը հայրենի երկրամասի նկատմամբ:

5 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 90-91: Արձանագրության վկայությունը ամուսինների «տարածամ եւ կէս աուրց» վախճանվելու մասին պետք է որոշ վերապահությամբ ընդունել: Հասանը հիշատակվում է 1254 թվականից եւ 1283-ին կլիներ առնվազն 30-35 տարեկան, ուստի՝ նրա ծնունդը ԺԳ դ. 40-ական թվականներից ուշ դնել հնարավոր չէ:

6 Վ. Պետրոսյանը կարծում է, որ Քուրդ Ա-ն երկու որդի է ունեցել Դավիթ անունով, որոնցից առաջինը մահացել է 1245 թվականից առաջ, իսկ երկրորդը ծնվել է 1245 թվականից հետո (Վ. Պետրոսյան, *Վաչուտյան իշխանական տան տոհմաձայնը*, էջ 142): Նույնանուն երկու եղբայր-

10. Տայիր, որդի Քուրդ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ժԳ դ. 40-50-ական թվականներին, մահացել մինչև 1310 թվականը): Ուշագրավ է, որ Քուրդ Ա-ի չորրորդ որդին չի հիշատակվում իրեն համաժամանակյա աղբյուրներում: Առաջին անգամ նրա անունը հանդիպում է 1310 թվականի հիշատակարանում<sup>1</sup>: Փոխարենը՝ նրան ժԳ դ. առաջին կեսին հաճախ են հիշատակում որդին եւ թոռը: Նրա տեղը Վաչուտյանների տոհմածառում որոշվում է միանգամայն հստակորեն<sup>2</sup>:

11. Մամախաթուն, դուստր Քուրդ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ժԳ դ. երկրորդ քառորդում, «տարածամ» մահացել է 1255 թվականին): Նրա հիշատակին է կառուցվել Սաղմոսավանքի գրատունը<sup>3</sup>:

12. Մամքան, դուստր Քուրդ Ա-ի (ծնվել է, ըստ երեւույթին, ժԳ դ. երկրորդ քառորդում, մահացել է, թերեւս, 1315 թվականին): Ամուսնացել էր Խաչենի Դուխյան իշխաններից Հասան Բ Արիականի հետ: Հաճախ է հանդես գալիս Դուխյանների իշխանութունում թողած վիճաբերում: Առաջին հիշատակութունից հետո

---

ների մասին այս կարծիքը հիմնված է երկու թյուր թվագրված վիճաբերի վրա: Առաջինն անմիջապես հաջորդում է Սաղմոսավանքի 1215 թ. շինարարական արձանագրությանը եւ պատարագներ է նախատեսում Վաչե Ա-ի, նրա կին Մամախաթունի եւ, հավանաբար, դարձյալ Վաչուտյան Դավթի համար (տե՛ս **Հ. Եղիազարյան, Սաղմոսավանք**, էջ 42-43): Այնհայտ է, որ այն ժամանակամերձ է Սաղմոսավանքի կառուցմանը եւ անշուշտ սխալմամբ է դրվել 1244 թվականի ներքո (տե՛ս *Վիմական տարեգիր*, էջ 147): Վ. Պետրոսյանը հիմնվել է «Վիմական տարեգիր» անստույգ թվագրման վրա: Նրա վկայակոչած երկրորդ արձանագրությունն արտագրված է Սաղմոսավանքի մատենադարանի գրացուցակին կից, ընդ որում՝ ցուցակից տարբեր գրով եւ թվագրված է ՈԿԴ (=1215) թվականով (տե՛ս **Խ. Տ. Վրդ. [Գաղեան], Նորագիտ մագաղաթեայ ցտրգիր ցուցակ Սաղմոսավանքի մատենադարանի**, – «Ծողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 169): Այս բնագրի, իսկ մյուս կողմից՝ Սաղմոսավանքի 1215 թվականի շինարարական, նրան հաջորդող ժամանակամերձ վիճաբերի, ինչպես նաեւ Վաչե Բ-ի նվիրատվական արձանագրությունների բնագրագիտական քննությունը բերում է այն համոզման, որ առաջինը հաջորդ երեքի անհաջող ամփոփումն է, հիշատակված երկու Վաչեների (Ա եւ Բ) միաձուլումով, ուշ ժամանակաշրջանի եզրույթների (մուլք, վախս) անհարկի ներմուծումով եւ այլ անհարիրություններով: Ուստի ՈԿԴ-ն, որ Սաղմոսավանքի շինարարական արձանագրության թվականն է, առանց բնագրագիտական փաստարկման ՈՂԴ-ով (1245) սրբագրելուց հետո էլ Սաղմոսավանքի գրացուցակին կից բնագիրը վստահելի աղբյուրի չի վերածվել: Իսկ միեւնույն անունը կրող եղբայրների մասին վարկածը, որը խիստ արտաոց է թվում, կարելի է փաստարկել միայն բացարձակ հավաստի տվյալների հիման վրա: Հետեւաբար, Քուրդ Ա-ի որդի Դավթի մասին մնում է դատողություններ անել լոկ Հովհաննավանքի 1283 թվականի արձանագրության հիման վրա:

- 1 Տե՛ս *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 65:
- 2 Վ. Պետրոսյանը միանգամայն իրավացիորեն է ստարկում Հասանի եւ Տայիրի նույնանձնացման դեմ (Վ. Պետրոսյան, *Վաչուտյան իշխանական տան տոհմածառը*, էջ 142): Այդ սխալ տեսակետը, որը սկիզբ է առնում Ղ. Ալիշանի «Այրարատ»-ից (էջ 254), կրկնվում է նաեւ ժամանակակից հետազոտություններում (տե՛ս **B. Limper, Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus**, p. 232). Սկզբնաղբյուրները չեն հաստատում նաեւ երկու Տայիրների՝ պապի եւ թոռան, գոյության մասին վարկածը, որի հեղինակը Կիրիլ Թումանովն է (**C. Toumanoff, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasia Chrétienne...**, p. 55-56).
- 3 Տե՛ս **Հ. Եղիազարյան, Սաղմոսավանք**, էջ 44-45: Առաջին հրատարակիչ Հովհ. Ծախաթունյանը արձանագրության տարեթիվը (ՉԴ) ակնհայտորեն սխալ է վերծանել՝ ԶԴ (տե՛ս **Յ. Էպ. Ծախաթունյան, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնայ եւ հինգ գաւառացն Այրարատայ**, հտ. Բ, Վաղարշապատ, 1842, էջ 123): Ուստի Ղ. Ալիշանը վերականգնել է պակասող հարյուրավորը եւ ստացել է ՈՁԴ թվականը (=1235 թ.), որն էլ տարածում է ստացել գրականության մեջ: Հ. Եղիազարյանի վերծանությունը հնարավորություն է տալիս՝ եզրակացնելու, որ Հովհ. Ծախաթունյանը ժամանակին թյուրիմացաբար Զ (=80) է ընկալել է Զ (=700) տառը:

(1275-1282 թվականների միջակայք)<sup>1</sup>, վիմագիր կարգադրություններ է թողել որդու՝ Գրիգոր Գ Զինվորի հետ միասին:

Ընդունված է եղել կարծել, թե Մամբանը վախճանվել է 1298 թվականին<sup>2</sup>, կամ էլ՝ անգամ 1315-ին (իբրև թե նա որդու հետ միասին նվիրատվություն է կատարել նաև 1307 թվականին)<sup>3</sup>: Բայց Դոփյանների հոգեւոր կենտրոն Դադիվանքի արձանագրությունների նորագույն հրատարակություններից երեւում է, որ նրա 9-տողանոց տապանագրի իրական տարեթիվը «ՉԾԵ» է (=1306 թ.)<sup>4</sup>:

13. Վաչե, որդի Վաչուտի (Ա-ի<sup>5</sup>): Հանդես է գալիս Սանահնի Սուրբ Աստվածածին ժամատան շքվագրված արձանագրություններից մեկում<sup>5</sup>: Ելնելով այն փաստից, որ Վաչուտյաններին պատկանող բոլոր վիմագրերը Սանահնում փորագրվել են Վաչե Ա-ի կողմից ժամատան շինարարության ավարտմանը (1211 թվական) հաջորդող տարիներին եւ նույնիսկ ավելի վաղ, ինչպիսին Վանենի Վաչուտյանի վիմագիրն է, կարելի է ենթադրել, որ Վաչե Վաչուտի որդու արձանագրությունը եւս գրվել է ԺԳ դ. առաջին քառորդում: Այդ դեպքում Վաչեին կարելի է համարել ոչ թե Վաչուտ Բ-ի, այլ Վաչուտ Ա-ի որդի: Ուսումնասիրողներից միայն Վիկտոր Պետրոսյանցն է ուշադրություն դարձրել Վաչուտի որդիներ Վաչեի եւ Դավթի գոյության վրա, բայց Սանահնի վերոհիշյալ անթվակիր արձանագրությունը, ինչպես երեւում է, նա թվագրում է 1241 թվականով, ուստի Վաչե եւ Դավիթ եղբայրներին նշել է որպես Վաչուտ Բ-ի որդիներ<sup>6</sup>:

14. Դավիթ, որդի Վաչուտի (Ա-ի<sup>6</sup>): Իր Վաչե եղբայրը պատարագ է սահմանել նրա հիշատակին Սանահնի ժամատան այն արձանագրության մեջ, որի մասին խոսք եղավ վերեւում:

15. Դավիթ, որդի Բ-ի: Վաչե Ա-ն Սաղմոսավանքի շինարարական արձանագրությանը (1215 թվական) ժամանակամերձ վիմագրում պատարագ է նախատեսել նաև Դավթի հիշատակին<sup>7</sup>: Հնարավոր է, որ այս Դավիթը ոչ միայն Վաչուտյանների տոհմից է, այլև միեւնույն անձն է նախորդ Դավթի հետ:

16. Քուրդ Բ, որդի Տայիրի (ծնվել է ԺԳ դ. երկրորդ կեսին, մահացել 1338 թվականից հետո): Սկզբնաղբյուրներում պատկերվում է որպես հզոր զորական, որին բարձր էին գնահատում իլխանները՝ Ղազանը (1295-1304), Խուրբանդան

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 317:

2 Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 242; Վ. Պետրոսյանց, Վաչուտյան իշխանական տան տոհմաճատը, էջ 146:

3 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 206-207, 214-215; Գ. Ե. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.), Եր., 1997, էջ 187-188:

4 Տե՛ս Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999, էջ 117, № 64 («Այս է հանգիստ Մամբանին, ամուսնո Հասանա, դուտեր Քրդին և Խորիշանի, մարմ Գրիգոր: ... Թվ. ՉԾԵ»): Հմմ. Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը..., էջ 329-330: Մամբանը Մարում թողել է նաև մեկ չթվագրված արձանագրություն (տե՛ս Մ. Էպ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 405; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 222, № 788):

5 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 136:

6 Վ. Պետրոսյանց, Վաչուտյան իշխանական տան տոհմաճատը, էջ 146:

7 Տե՛ս Հ. Եղիազարյան, Սաղմոսավանք, էջ 43:

(1304-1317) եւ Աբու Սալիդը (1317-1335)<sup>1</sup>: «Այրարատին տէր» բնորոշումը<sup>2</sup> խոսում է Քուրդ Բ-ի՝ նախնիներից ժառանգած իշխանության ամրապնդման մասին: Անհայտ է մնում իշխանության գլուխ անցնելու ժամանակահատվածը: Քուրդ Բ-ն շինարարական աշխատանքներ եւ նվիրատվություններ է կատարել Ուշիում<sup>3</sup> եւ Կարբիում<sup>4</sup>: Կինը՝ Խուանդ Խաթունը սերում էր Զաքարյանների տոհմից:

Քուրդ Բ-ն հուղարկավորվել է Հովհաննավանքում<sup>5</sup>:

17. Թեոդոս Զրքին, որդի Քուրդ Բ-ի (ծնվել է ԺԳ դ. վերջին, մահացել 1350 թվականից հետո): Հոր կառավարչակիցն էր առնվազն 1338 թվականից<sup>6</sup>: 1343 թվականին ազատել է Կարբի գյուղը պաշտոնատար անձանց գրաստով ու պարենով ապահովելու պարտավորությունից<sup>7</sup>: Վերջին անգամ Թեոդոսը հիշատակվում է 1350 թվականին<sup>8</sup>:


Կարելի է ենթադրել, որ Վաչուտյանները՝ ճիշտ այնպես, ինչպես որ Անիի եւ Բջնիի Զաքարյանները ԺԴ դ. 50-ական թվականներին, զոհ են գնացել Չոբանյան Մելիք Աշրաֆի (1344-1357) հարձակումներին եւ ավերածություններին<sup>9</sup>:

18. Թաթուն (Խաթուն<sup>10</sup>, Լուն<sup>11</sup>), դուստր Քուրդ Բ-ի (ծնվել է ԺԳ դ. վերջին կամ ԺԴ դ. սկզբին, իսկ մահվան ժամանակի մասին տեղեկություն չի պահպանվել): Հիշատակված է Դադիվանքի մի արձանագրությունում՝ իր ամուսնու՝ Հասան Գ Դուփյանի հետ<sup>10</sup>: Կենդանի կարող էր լինել նաեւ ԺԴ դ. կեսերին եւ, գուցե, հաջորդ տասնամյակներին<sup>11</sup>:

Այսպիսով, Վաչուտյանների տոհմի ճյուղագրությունը կարող է ներկայացվել հետևյալ աղյուսակով.

- 
- 1 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 270-271: Հատորի աշխատասիրող Լեոն Խաչիկյանն այս հիշատակարանը դրել է 1335 թվականի գրառումների շարքում, սակայն Ղեոնդ Ալիշանն ավելի զգուշավոր էր արտահայտվել եւ հիշատակարանը վերագրել էր 1317-1320 թվականներին (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 258):
  - 2 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 92:
  - 3 Տե՛ս Ռ. Ռ. Գասպարյան, ԳՂ. աշխ., էջ 133; Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան, ԳՂ. աշխ., էջ 188:
  - 4 Տե՛ս Մխ. Տեր-Մկրտչեան, ԳՂ. աշխ., էջ 30-31:
  - 5 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 92:
  - 6 Տե՛ս Մխ. Տեր-Մկրտչեան, ԳՂ. աշխ., էջ 30-31:
  - 7 Տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 194-197:
  - 8 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 92:
  - 9 Տե՛ս Հ. Մանանդյան, ԳՂ. աշխ., էջ 342-345:
  - 10 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 203, № 716 («...վասն սիրական հարսինն մեր Թաթունին՝ դստերն Բրդին Անբերդեցի, ամուսնո Հասանա...»):
  - 11 Վերջում Գեւմ, որ, ինչպես երևում է Հովհաննավանքի երկու՝ քիչ ուշադրություն գրաված ավիրատվական արձանագրությունների բնագրերից, ԺԳ դ. առաջին կեսում Խաչեանի հզոր իշխան Վախտանգ Թագիկի երկրորդ որդի Զաքարե Սակոը (Գանձասարի կառուցող Հասան Զալալ Դուլայի եղբայրը) խնամախոսության առիթով հասել է Արագածոտն եւ ամուսնացել (երկրորդ անգամ) տեղի իշխաններից ոմն Վասակի դուստր Խորիշաֆի հետ (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 96, № 37; էջ 105, № 55, հմմ. Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը..., էջ 335): Սակայն ԳՂ-ված Վասակ իշխանի եւ Վաչուտեանների միջեւ ազգակցության մասին եմթադրություններ անելու համար որեւէ հիմք չի ԳՂ-վարվում:

# ՎԱՀՈՒՏՅԱՆՆԵՐԻ ՏՈՅՄԱԾԱՌԸ



## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

### ԽԱՂԲԱԿՅԱԼՆԵՐ (ՊՈՌՇՅԱԼՆԵՐ)

Տոհմի պատմությունը նախանձեղի լիակատարությունամբ լուսաբանված է Գարեգին Հովսեփյանի հանրահայտ աշխատությունում: Վերջին տասնամյակների ընթացքում աննշան նոր նյութեր են միայն գիտական շրջանառության մեջ դրվել, որոնք քիչ են փոխում հաղբակյանների կամ Պոռչյանների պատմության ընդհանուր պատկերը: Առայժմ համեմատաբար մութ են տոհմի ծագման, ԺԳ դ. սկզբի բարձրացմանը նախորդող ժամանակաշրջանի, ԺԳ դ. վերջի – ԺԴ դ. սկզբի պատմության հարցերը:

#### ՏՈՐՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ

«Ազգ հաղբակա/Հաղբակա», «հաղբակեանք/Հաղբակեանք» տոհմանունները վկայված են ԺԳ դարի աղբյուրներում<sup>1</sup>: ԺԴ դ. առաջին կեսին, տոհմի նախնական անվանմանը զուգահեռ, տարածում է ստանում «Պոռչեանք» անվանաձևը<sup>2</sup>, որը հետագայում գրեթե լիովին գործածությունից դուրս է մղում «հաղբակեանք» տոհմանունը: Այսպիսով, նկատի առնելով երկու անվանումների ժամանակագրությունը, նախընտրելին «հաղբակյաններ» անվանաձևն է, թեև ամենեւին հնարավոր չէ կասկածի ենթարկել նաև «Պոռչյաններ» տոհմանվան հիմնավորվածությունը:

հաղբակյանների ծագման ժամանակի հարցի պարզաբանումը կապված է նրանց եւ այլ տոհմերի ազգակցության խնդրի լուսաբանման հետ: Գարեգին Հովսեփյանն այս հանգույցը քննելիս վճռական նշանակություն է ընծայել Ստեփանոս Օրբելյանի Պատմությունից հայտնի Դլենյանների<sup>3</sup> եւ հաղբակյանների առնչություններին: Նրա կարծիքով՝ «երկու տոհմերի ծագումն էլ հաղբակ անունը կրող իշխաններից է, եւ բնագաւառն էլ՝ Խաչենում, Զալալ-Դաւալյի իշխանութեան մէջ, ուստի եւ պարզ է նրանց ցեղակցութիւնը: Եթէ իրական է այս հաւանական ենթադրութիւնը, ապա հաղբակեանց ծագումը կարող ենք տանել մինչեւ Ժ դարու վերջերը: Դլենն ապրում էր 1046 թուին. նորա հայրը հաղբակ պէտք է ծնուած լինի Ժ դարու վերջին»<sup>4</sup>: Այսպիսով, երկու տոհմերի ազգակցության դրույթի հիմքում առաջին հերթին դրված է անունների համընկնելու փաստը, որը խիստ դժվար է հուսալի կռվան համարել նման վարկած զարգացնելու համար<sup>5</sup>:

1 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 682; Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 305, 308-309:

2 Նույն տեղում, էջ 350, 352:

3 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 231-236, 354-356:

4 Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 15:

5 Այսպէս, հետետեղով ճիշտ այդ սկզբունքին, կարելի է պնդել, որ Խաղբակյանների մախնիներն են եղել Ծարում 1051 թվականին իրենց ծնողների հիշատակին խաչքար կանգնեցրած Գրիգորը եւ Զաջուրը (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 223): Որ համանունությունն ազգակցության լիարժեք վկայությունն է, երեսուր է նաև Սակապոյանների օրինակից: 1026 թվականին Տաթևի վավերագրերից մեկում հիշատակվող «Սակոի որդեաց» (տե՛ս Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 225) կապն Արցախի Սակապոյանների հետ ոչնչով չի հավաստվում:

Խաղբակյանների ու Դլենյանների ազգակցությունը հիմնավորելիս հետազոտողի երկրորդ փաստարկն այն է, որ թեև Խաղբակի որդի Դլենը կալվածքներ է ունեցել Սյունիքում, այնուամենայնիվ, նրա եւ ժառանգների բուն տիրույթները («բնագաւառ»-ը) գտնվել են Արցախում<sup>1</sup>: Որքանով է ստույգ այս դրույթը: Ստեփանոս Օրբելյանը, որի Պատմությունը միակ սկզբնաղբյուրն է Դլենյանների վերաբերյալ, պատմում է այդ ընտանիքի պատմության երկու փուլերի մասին: Նրա մեջբերած վավերագրերից հետևում է, որ ԺԱ դ. 40-50-ական թվականներին Դլեն Ա-ի տիրույթները, օրինակ՝ Խոտ եւ Վժանիս գյուղերը, գտնվում էին Գորիսի եւ Կապանի սահմաններում<sup>2</sup>: Երկրորդ անգամ անդրադառնալով Դլենյաններին՝ պատմիչը մի միջադեպ է ավանդում Աստվածընկալ Սուրբ Խաչի՝ Դլենյանների ընտանեկան մասունքի մասին: Պատմության այդ հատվածից այն տպավորությունն է ստացվում, որ Դլենյանների կալվածքները ԺԳ դ. վերջին ընկած էին Արցախի հարավ-արեւմտյան մասում, Աղավնո (Հակարի) գետի մերձակայքում<sup>3</sup>: Այսպիսով, տոհմի պատմության ալլեալլ ժամանակահատվածներում Դլենյանները գործում էին Հայաստանի թեև սահմանակից, բայց զանազան գավառներում: Ընդ որում, Ստեփանոս Օրբելյանի տեղեկություններից դժվար է անվերապահ եզրակացության հանգել իշխանատոհմի «բնագաւառ»-ի մասին: Ի դեպ, պատմիչն ամենեւին էլ հստակորեն չի տեղորոշում Դլենյանների արցախյան տիրույթները՝ հենց «Ջալալ-Դաւլայի իշխանութեան մէջ»: Նա ընդամենը, Խաչի՝ Դլենյանների սեփականությունը դառնալու պատմության վերջում ավելացնում է. «յետոյ աստուածասէր եւ բարեպաշտ մեծ իշխանաց իշխան՝ Ջալալ, շինէ եկեղեցի մի Գիշերաձոր անուն եւ կազմէ պահարան յարծաթոյ եւ անդ բնակեցուցանէ»<sup>4</sup>:

Խաղբակյանների եւ Դլենյանների ընտանեկան կապն անհավանական է նաեւ Ստեփանոս Օրբելյանի Պատմության ներքին տրամաբանության տեսանկյունից: Հարցն այն է, որ պատմիչը, քաջատեղյակ լինելով Խաղբակյանների «խաչենցի» ծագման իրողությանը<sup>5</sup>, Դլենյանների շուրջ մեկուկես հարյուրամյակի պատմության զանազան դրվագները ներկայացնելիս ակնարկ անգամ չի անում այդ երկու տոհմերի ազգակցական առնչության մասին: Այնուհետեւ՝ եթե նման տոհմակցությունն իրական լիներ, ապա Դլենյանները ԺԳ դ. վերջին օգնության խնդրանքով պիտի դիմեին առաջին հերթին այդ ժամանակ դեռեւս հզոր Խաղբակյաններին, այլ ոչ թե ապաստանեին Օրբելյանների իշխանությունում, ինչպես որ այդ մասին վկայում է սյունեցի պատմիչը<sup>6</sup>:

Համեմատաբար վերջերս Ռաֆայել Մաթեոսյանն այն կարծիքը հայտնեց, որ Խաղբակյաններն առանձին տոհմ չեն եղել, այլ սերել են Տաշիրի Մամիկոնյաններից<sup>7</sup>: Այս տեսակետը զարգացնելիս հետազոտողը հատուկ ուշադրություն է դարձ-

---

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 15:  
 2 Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, էջ 231, 236:  
 3 Նույն տեղում, էջ 354- 356:  
 4 Նույն տեղում, էջ 356:  
 5 Նույն տեղում, էջ 256:  
 6 Նույն տեղում, էջ 356:  
 7 Տե՛ս Բ. Մաթեոսյան, *Պոռշյան ֆեոդալական տոհմի ծագումնաբանությունը*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1986, № 11, էջ 65-70:



րել խաղբակյանների զինանշանի վերլուծությունը<sup>1</sup>: Նրա այդ հարցադրումները որքան էլ ուշագրավ, այնուամենայնիվ, թեական են երկու պատճառով: Նախ՝ գրավոր աղբյուրները, որոնց վրա հենվում է ուսումնասիրողը, բոլորն էլ ժամանակին հայտնի են եղել Գարեգին Հովսեփյանին: Ականավոր հայագետը նշել է խաղբակյանների ծագման «Մամիկոնյանական» տեսության գրավոր ակունքները (Նդիշեի Պատմություն), անունների կապակցման ատաղձը (Բակ եւ խաղբակ անունների նմանություն) եւ եզրակացրել. «Տոհմը կոչում է եւ Վարդանանք, թերեւս, Բակի՝ Վարդանանց իշխաններից մէկը լինելու պատճառով. իսկ եթէ Վարդանանք կոչումը հին է եւ իրական, նշանակում է հետագայում որպէս լուսաբանութիւն տոհմի այդպիսի անուանակոչութեան, կապուել է Բակի պատմութեան հետ»<sup>2</sup>: Ինչ վերաբերում է զինանշանի վերլուծությանը, ապա փոխառությունների խիստ տարածման պատճառով այն խախտտ հիմք է ազգակցության հարցեր լուսաբանելիս<sup>3</sup>:

Գարեգին Հովսեփյանը, առաջարկելով նույնանձնացնել խաղբակի որդի Հասանին եւ 1170 թվականին Բաղքի թագավորության վերացումից հետո Սյունիքից հեռացած Հասան Գեռաքարեցուն<sup>4</sup>, փաստորեն դնում է նաեւ խաղբակյաններ-Գեռաքարեցիներ ազգակցության հարցը: Այս տոհմերի հնարավոր կապը, սակայն, ամենեւին չի վկայվում աղբյուրներում: Այն փաստը, որ գիտնականը հետագայում չի անդրադառնում Գեռաքարեցիների ընտանիքի անդամների գործունեությանը եւ չի արտացոլում Հասան Գեռաքարեցու սերունդներին խաղբակյանների տոհմածառում, ցույց է տալիս հետազոտողի հրաժարվելն իր նախնական վարկածից<sup>5</sup>:

Այսպիսով, փաստերը վկայում են, որ խաղբակյանները դուրս են եկել իրենց «բնագաւառ» ինչպէսից ու պատմական լայն ասպարեզ իջել միայն ԺԲ դարի վերջին:

Խաղբակյանների նախնիթաց շրջանի պատմության մասին հնարավոր է միայն ուրվագծային պատկերացում կազմել: Այսպէս, Հավապտուկի վանքի մի շինարարական արձանագրության բանաձեւային հատվածից («Թիւն ՈժԲ [=1163] էր. յիշխանութեան Հասանա, որդո Վախտանգա եւ ամուսնո նորա Մամբանա [=Մամայի – Հ. Մ.]»)<sup>6</sup> պարզ է դառնում, որ խաղբակյանների տոհմական հանգստարանը<sup>7</sup> եղել է

1 Տե՛ս Ռ. Ի. Մարտոսյան, Պոռշյանների զինանշանը եւ նրա պատմաձագումնաբանական վերլուծությունը. – «Պատմա-քանասիրական հանդես», 1989, № 2, էջ 116-122:

2 Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 14:

3 Գ. Հովսեփյանն այս առիթով գրում է. «Ժամանակակից գեղարուեստական հոսանքը մատնանշողը վիմափոր գաւթի շղթայուած արծիւներն են, բերանիս օղ եզան գլխով եւ մագիւների մէջ խոյ բռնած արծուով, որ մենք ենթադրութեամբ Պոռշյանների զինանշան համարեցինք: Այս ենթադրութիւնը հիմնաւոր համարելով հանդերձ, որովհետեւ քանդակը զինանշանական բնոյթ ունի, պէտք է յայտնենք, սակայն, որ յատուկ չէր այն միայն Պոռշյաններին, այլ որոշ մասերով Հայաստանի ուրիշ տեղերի եւ սելջուկեան-մահմեդական արուեստի» (տե՛ս նույն տեղում, էջ 85):

4 Նույն տեղում, էջ 16-17:

5 Այս վարկածը զարգացնելով՝ Բ. Ուրութբեանը երկու ընտանիքի անդամներին էլ համարում է «Առանշահիկ տոհմի շտապիդներ» (Բ. Ա. Ուրութբեան, Խաչեցի իշխանությունը..., էջ 85, 123):

6 Դիվան հայ վիմագրություն, պր. V, էջ 33, № 70: Թվականը երբեմն յանդարտի վերծանվել է ՈԶԲ (=1233 թ.), տե՛ս նույն «Դիվան»-ում խմբագրի ծանոթագրումը: Հմմ. Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը..., էջ 316:

7 Գարեգին Հովսեփյանի պնդմամբ՝ «Հասապտուկը նրանց [Խաղբակյանների – Հ. Մ.] հոգեւոր կենդրոնն էր եւ տոհմական գերեզմանատունը» (Գ. կթղ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 17): Ուստի՝ զարմանալի է, որ հիշելով վերջինիս հետազո-

Հասան կրոնավորյալ խաչենցու կենտրոնական տիրույթներում: Հայտնի իրողությունն է նաեւ, որ Հավապտուկի հետ կապված են եղել նաեւ բազմաթիւ այլ տոհմեր<sup>1</sup>: Հետեւաբար, խաղբակյանների տոհմում տարածված անունների եւ Հավապտուկի արձանագրութուններում վկայված անձանունների զուգադիպութունների հիման վրա Գարեգին Հովսեփյանի կատարած եզրակացութունները, որոնք եւ ընկած են խաղբակյանների տոհմածառի վերականգնման հիմքում, հնարավոր է՝ ոչ միշտ են ճիշտ:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Խաղբակյանների գործունեությունը ծավալվել է գլխավորապես ռազմական բնագավառում: Տոհմի ճյուղավորումը տեղի է ունեցել ԺԳ դ. սկզբին: Վայոց Ձորում Վասակ գորավարի հաստատվելուց հետո կրտսեր տոհմաճյուղը մնացել է խաչենում եւ գտնվել Հասան-Ջալալյանների քաղաքական ազդեցության ոլորտում: Այսպես, Ջաշուռի որդի Գրիգորը Վաճառի Սուրբ Ստեփանոս եկեղեցուն (կառուցել է Հասան-Ջալալ Դոլան 1229 թ.) նվիրել է «Աւանախոռոին երկիրն», «հրամանաւ աստուածասէր իշխանին Հասանա, տեառն խաչինո»<sup>2</sup>: Նույն Հավապտուկում 1247 թվականին խաչբարի կանգնեցման արձանագրութունում հայտարարվում է, որ դա տեղի է ունեցել «յիշխանութեան Հասանայ»<sup>3</sup>, այսինքն՝ Ջալալ-Դոլայի:

Խաղբակյանների գլխավոր տոհմաճյուղը ԺԳ դ. առաջին տասնամյակում կայուն կապեր հաստատեց Իվանե Զաքարյանի հետ եւ վարում էր Վայոց Ձորի կողմնակալի ու Ավագյան տան սպարապետի պաշտոնները<sup>4</sup>: Խաղբակյանները Իվանե աթաբեկի ու նրա ժառանգների ստորականներն էին ընդհուպ մինչեւ ԺԳ դ. 90-ական թվականները: Ավանդական փոխհարաբերութունները խաղբակյանների եւ Ավագյան տան գլխավորների միջեւ խախտվեցին, հավանաբար, ԺԳ դ. վերջին: 1292 թվականին խաղբակյանների իշխանությունում դեռեւս ընդգծվում էր Ամիր Հասան Ա-ի՝ «մեծ սպարապետ տանն Աւագին» լինելու հանգամանքը<sup>5</sup>: Միաժամանակ, Վայոց Ձորի վիմագրերում խոշոր Զաքարյանը հիշատակվում է նաեւ 1284-1291 թթ. միջակայքում<sup>6</sup>: Բայց արդեն այդ տարիներին առկա են վերահաս անջրպետման որոշ

---

տույությունը՝ Հակոբ Մանանդյանը համարում է Հավապտուկը Խաղբակյանների «աթոռամիստ կենտրոն» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 164): Թյուրիմացություն է նաեւ Հ. Մանանդյանի այն պնդումը (տե՛ս նույն տեղում, էջ 167-168), թե Գարեգին Հովսեփյանը ցույց է տվել Վախտանգ Թաճակի տոհմի «ցեղակից» լինելը Խաղբակյաններին: Իրականում Գ. Հովսեփյանը նշում էր Դլեճյանների եւ Խաղբակյանների «ցեղակցութիւն»-ը, որի մասին խոսք եղավ վերեւում:

- 1 Օրինակ՝ ԺԲ դարում Հավապտուկի վանքում նվիրատվական արձանագրություններ են թողել ուն Աթանաս (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 33. Ժամանակը որոշվում է Գեորգ առաջնորդի հիշատակությամբ), 1164 թվականին Քուրդիկի հիշատակին խաչքար է կանգնեցրել Խորիշահը (նույն տեղում, էջ 34), 1181 թվականին նույնն է արել Վահրամ ամուռով մեկը (նույն տեղում): Համանման պատկեր է նաեւ ԺԳ դարի առաջին կեսի առումով:
- 2 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 79: Ուրեմն արձանագրությունը գրվել է մինչեւ 1261 թ.:
- 3 Նույն տեղում, էջ 36:
- 4 Ըստ Գարեգին Հովսեփյանի՝ Խաղբակյանները հաստատվել են իրենց նոր իշխանությունում 1201-1203 թվականներին, իսկ Վասակ գորավարը կողմնակալ է կարգվել 1203-1210 թթ. (Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պողոթեանք հայոց պատմութեան մէջ, էջ 18, 27-38):
- 5 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 682:
- 6 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 78:

նախանշաններ: Պատահական չէ, որ 1292 թվականին Պոռշ Ա-ն «Թագաշուք» իշխան է անվանվում (այդ ձեւով նա երբեւիցէ չի մեծարվում նախորդ տասնամյակների ընթացքում) եւ ամեն կերպ շեշտվում են Ամիր Հասան Ա-ի կապերը ոչ թէ նրա անմիջական գերականների, այլ ուղղակի մոնղոլական իլխանների հետ<sup>1</sup>: Ամիր Հասան Ա-ի բնութագիրը համանման է նաեւ նույն թվականին գրված մեկ այլ հիշատակարանում. «Թէպէտ որ իշխանաց իշխան կոչիր, սակայն ի Թագաւորաց անբաժանելի էր»<sup>2</sup>: Ամիր Հասան Ա-ի որդի էաչին, խնամիական կապ հաստատելով այդ ժամանակաշրջանում առավել հզորացած Օրբեյանների հետ, հավանաբար, վերջնականապէս խզեց գերակա-ստորակայական հարաբերութիւնները Զաքարյանների հետ:

ԺԳ դ. կեսերին իսղբակյանները եւ կորցնում են նախկին հզորութիւնը եւ նրանց մասին տեղեկութիւնները սկզբնաղբյուրներում կտրուկ կերպով նվազում են: ԺԵ-ԺԷ դարերում տոհմի մեզ հայտնի ներկայացուցիչները գլխավորապէս տեղական «պարոն»-ներ են եւ բարձրաստիճան հոգեւոր գործիչներ:

### ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Իսղբակյանների խաչենյան նստոցի հարցը բաց է մնում: Գարեգին Հովսեփյանի տեսակետը, համաձայն որի, «Գեռաքարը իսղբակեանների նստոցն» էր կամ «բնակավայրը»<sup>3</sup>, հայտնված է առանց որեւէ աղբյուրի վկայակոչման: Այդ վարկածը հակասում է նաեւ պարզ տրամաբանութեանը: Միայն Գեռաքարին տիրելու հանգամանքով է հնարավոր բացատրել Գեռաքարեցի տոհմանվան գոյութիւնը: Այդ ընտանիքը գործում էր դեռեւս ԺԲ դ. 60-70-ական թվականներին<sup>4</sup>, այսինքն՝ այն ժամանակ, երբ իսղբակյանները գտնվում էին իրենց «բնագաւառ»-ում եւ պետք է ունենային իրենց առանձին նստոցը: Վայոց Ձորում իսղբակյանների գլխավոր նստոցը Սրկղունք ավանն էր, որի մերձակայքում գտնվում էր Բոլորաբերդը: Իշխանութեան երկրորդ կենտրոնը Մարտիրոս գյուղն էր: Բացի Վայոց Ձորից՝ իսղբակյաններին էին պատկանում նաեւ Շահապունիքը, Վարաժնունիքում՝ Կեչառիսը, Կոտայքում՝ Քեղվա ձորը եւ Այրի կամ Գեղարդի վանքը<sup>5</sup>:

### ԴԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Իսղբակյան իշխանների դավանական կողմնորոշումը միանգամայն հստակ է: Տոհմի հոգեւոր կենտրոններն էին բացառապէս միաբնակ վանքերը: Կեչառիսից ու Գեղարդից բացի՝ դրանք էին Աղջոց, Թանատի, Կուբո եւ Օծոպա վանքերը<sup>6</sup>: Գեղարդի եւ Կեչառիսի վանքերում գտնվում էին իսղբակյանների տոհմական հանգստարանները:

1 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 682:

2 Նույն տեղում, էջ 676:

3 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 16-17:

4 Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն*, էջ 247: Այս խնդրի ճշգրտումը տե՛ս Ա. Յակոբեան, *Արքայատոհմներն ու իշխանատոհմերը...*, էջ 287:

5 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 19-34:

6 Նույն տեղում, էջ 157-250:

Ուշագրավ է, որ գերազանցապես ռազմական ասպարեզի հետ կապված այս իշխանական տունը կարելուր դեր է խաղացել նաև մշակութային բնագավառում: Տոհմի կրտսեր ուսերից մեկի ներկայացուցիչը պետք է լիներ նշանավոր մատենագիր խաչատուր Կեչառեցին: Հսկայական էր խաղբակյանների ավանդը միջնադարյան հայ արվեստի պատմության մեջ: Նրանց հովանավորությանն էին պարտական իրենց ծաղկման համար բազմաթիվ հոգեւոր եւ ուսումնա-գիտական կենտրոններ, այդ թվում՝ նաև Գլաձորի համալսարանը<sup>1</sup>:

## ՏՈՂՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. **Խաղբակ Ա** (ծնվել է ԺԲ դ. առաջին կեսին, մահացել 1194 թվականին): Գործել է Խաչենում: Մինչև վերջերս հայտնի էր Կիրակոս Գանձակեցու Պատմությունից<sup>2</sup>, ինչպես նաև որդիների ու թոռների հիշատակումներից<sup>3</sup>: Նրա նորահայտ տապանաքարի բարձրաքանդակներն ամրապնդում են որդիների կենսագրությունից մակաբերելի այն կարծիքը, որ տոհմի հիմնադիրը ռազմական գործիչ է եղել<sup>4</sup>:

2. **Վասակ Ա**, որդի Խաղբակի (ծնվել է ԺԲ դ. երկրորդ կեսին, մահացել 1223/24-ին): Խաղբակյանների նոր վայոցձորյան իշխանության հիմնադիրն է: ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին Վասակը մասնակցել է Զաքարե Բ-ի եւ Իվանե Ա-ի ղեկավարած ազատագրական մարտերին: Մասնավորապես, սկզբնաղբյուրներում արձանագրված է նրա վաստակը «Եղեգեաց ձորոյ»<sup>5</sup> եւ Հրասեկա բերդի<sup>6</sup> ազատաման գործում: Հայ պատմիչները, խոսելով Վասակի պատերազմական սխրագործությունների մասին, շեշտում են նաև նրա շինարարական-բարենորոգչական գործունեությունը<sup>7</sup>: Նա 1214-ին կառուցել է Կեչառիսի կաթողիկես եւ կնոջ՝ Մամայի (Մամաք) հետ միասին նվիրատվություններ կատարել հօգուտ այդ նորաշեն եկեղեցու<sup>8</sup>: Հաջորդ տարում նրա հրամանով նորոգվել է Թանահատի վանքի եկեղեցին<sup>9</sup>:

Ինչպես պարզել է Գարեգին Հովսեփյանը, Վասակ Ա-ն, հավանաբար, մահացել է 1223/24 թվականին<sup>10</sup>:

---

1 Նույն տեղում, էջ 82-95, 251-296; **A. Sanjian**, *The Orbelians and Proshians of Siwnik: Patrons of Religious Institutions*, p. 911-924.

2 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 205, 384:

3 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 34; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 182; **Գ. կթղ. Յովսեփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 299, 302-303:

4 Տե՛ս **Ս. Ա. Սարգսյան**, *Խոխանաբերդ. Աորահայտ վիմագրեր Խաղբակյանների մասին*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1996, № 3, էջ 102:

5 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 123 :

6 Տե՛ս **Ստեփաննոս Օրբելեան**, *Պատմութիւն*, էջ 256:

7 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 205, 384; **Մխիթար Այրիվանցի**, էջ 65; **Ստեփաննոս Օրբելեան**, *Պատմութիւն*, էջ 291:

8 Տե՛ս **Գ. կթղ. Յովսեփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 38-40, 299-300, 302: Իր մոր անունը «Մամաք» ձեռով հիշատակում է Հասան-Պոռշը (տե՛ս նույն տեղում, էջ 303-304; **Կ. Ղաֆադարյան**, *Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները*, էջ 91):

9 Տե՛ս **Ս. Սաղունյան**, *Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին*, – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 9, էջ 93:

10 **Գ. կթղ. Յովսեփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 45:

3. Հասան Ա, որդի Խաղբակի (ծնվել է ԺԲ դ. երկրորդ կեսին, անհայտ է մնում մահվան թվականը): 1184 թվականին խաչքար է կանգնեցրել Հավապտուկի վանքում<sup>1</sup>: Ուշագրավ է, որ 1214 թվականի Կեչառիսի արձանագրությունում Վասակ Ա-ն նրան չի հիշատակում իր եղբայրների շարքում<sup>2</sup>: Արդյո՞ք այս փաստը նշանակում է, որ Հասանը մինչ այդ մահացել էր:

4. Զաջուռ, որդի Խաղբակի (ծնվել է ԺԲ դ. երկրորդ կեսին, մահացել 1224-1232 թթ. միջակայքում): Կեչառիսի վերոհիշյալ վիմագրում Վասակ Ա-ն հետեւյալն է գրում իր եղբայրների մասին. «յամենայն սրբոց յիշեսցին եւ աստուածատուրք եղբարքն իմ եւ զինակիցք Զաջուռն եւ Գրիգոր»<sup>3</sup>: Այսպիսով, Զաջուռն ավագ եղբոր հետ միասին մասնակցել է Զաքարյանների գլխավորած ազատագրական մարտերին: Զաջուռի՝ զինվորական դասին պատկանելու մասին է վկայում նաեւ իր որդի Գրիգորի կողմից հորը տրված «քաջ զարական» բնորոշումը<sup>4</sup>: Դեռեւս կենդանի էր 1224 թվականին, երբ Հավապտուկի վանքում խաչքարեր է կանգնեցրել որդիների հիշատակին<sup>5</sup>: 1232 թվականին Զաջուռի դուստր Վանենին նշում է հոր վախճանված եւ հուղարկավորված լինելը Հավապտուկի վանքում<sup>6</sup>: Իշխանը, թերեւս, Խաղբակյանների հին տիրույթներն էր վերադարձել Վայոց Ձորի եւ Սյունիքի ազատագրման ավարտից հետո:

5. Գրիգոր Ա, որդի Խաղբակի (ծնվել է ԺԲ դ. երկրորդ կեսին, զոհվել է 1222 թվականին): Գրիգոր Ա-ի մարտական վաստակը գնահատվել է Քելվա ձորի շնորհումով, որտեղ եւ գտնվում էր նորահաստատ իշխանության հոգեւոր կենտրոն Աղջոց Ս. Ստեփանոս վանքը<sup>7</sup>: Սպանվել է 1222 թվականին Գանձակի մոտ ղվչաղների դեմ տրված ճակատամարտում գերի ընկնելուց եւ հավատափոխության առաջարկը մերժելուց հետո<sup>8</sup>: 1233 թվականին կինը՝ Զագը, եւ որդին՝ Վասակը, խաչքար են կանգնեցրել նրա հիշատակին<sup>9</sup>:

6. Պապաք Ա, որդի Վասակ Ա-ի (ծնվել է, հավանաբար, ԺԲ դ. վերջին քառորդում, զոհվել 1222 թվականին): Պատմիչները<sup>10</sup> եւ հայրը՝ Վասակ Ա-ն<sup>11</sup> կատարելապես համերաշխ են Խաղբակյանների նոր իշխանության ժառանգորդների թվի եւ հաջորդականության հարցում: Երեք եղբայրներն անվանվում են՝ Պապաք, Մկրեմ,

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 34:

2 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 300; Լ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները, էջ 46:

3 Տե՛ս նույն տեղերում:

4 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 79:

5 Նույն տեղում, էջ 35:

6 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 182:

7 Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 32-33, 226-227:

8 Կիրակոս Գանձակեցի, էջ 205-206; Վարդան Արեւելցի, էջ 187; Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին, էջ 93-96:

9 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 32-33, 41-42; Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին, էջ 93-96:

10 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 205; Մխիթար Այրիվանեցի, էջ 65:

11 Տե՛ս Գ. կթղ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 300; Լ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները, էջ 46:

Հասան-Պոռշ հերթականությունը: Պապաքը, անշուշտ, մասնակցել է հոր մղած մարտերին եւ, որպես ավագ որդի, համարվել իշխանության ժառանգորդը: Գեղարքունիքի Կզնուտ գյուղում (Մարտունի ավանի մոտ) կանգնեցված խաչքարի արձանագրությունում նա հոր իշխանակից է հիշվում 1220 թվականին<sup>1</sup>: Զոհվել է 1222 թվականին, Գանձակի մոտ ղիչաղների դեմ տրված ճակատամարտում<sup>2</sup>:

7. Մկրեմ Ա, որդի Վասակ Ա-ի (ծնված պետք է լիներ ժԲ դ. վերջին քառորդում, մահացել է 1214 թվականից հետո, մինչեւ 1223/24 թվականը, ավելի հավանական է՝ 1222-ին): Նրա պատերազմական վաստակը նշում են ժԳ դարի հայ պատմիչները<sup>3</sup>: Կենդանի էր 1214 թվականին, Կելառիսի արձանագրության փորագրման պահին, բայց պետք է մահացած լիներ մինչեւ 1223-1224 թվականները, որպեսզի իշխանությունը կարողանար ժառանգել կրտսեր եղբայրը: Կարելի է ենթադրել, որ նրա մահը տեղի է ունեցել Պապաք Ա-ի զոհվելուց ավելի վաղ (տե՛ս ստորեւ):

8. Հասան-Պոռշ, որդի Վասակ Ա-ի (ծնվել է ժԲ դ. վերջին կամ ժԳ դ. առաջին տարիներին, մահացել 1284 թվականին): Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ նա իր հոր եւ ավագ եղբայրների հետ 1201 թվականին եկել է Խաչենից եւ մասնակցել «այլասեռ»-ների դեմ կռիվներին<sup>4</sup>: Սակայն պատմիչը, ամենայն հավանականությամբ, նկատի չի ունեցել իշխանի անմիջականորեն դարասկզբին կատարած քաջագործությունները: ԺԳ դ. առաջին տարիներին 16-20 տարեկան լինելու եւ մարտերին մասնակցելու համար, նա պետք է ծնված լիներ ժԲ դարի 80-ական թվականներին, այսինքն՝ վախճանվելիս հասած լիներ 100 տարեկանի սահմանագծին: Այդպիսի երկարակեցությունը թեեւ ոչ բացառված, բայց եւ քիչ հավանական է թվում: Դժվար է ակնկալել, թե 1258 թվականին, Բաղդադի առման ժամանակ, շուրջ 70 տարեկան Հասան-Պոռշը կարող էր այդչափ եռանդուն գործունեություն ծավալել: Մյուս կողմից, նա պետք է առնվազն 16 տարեկան լիներ հոր իշխանությունը 1223/24 թվականին ժառանգելիս եւ շուրջ 20 տարեկան՝ 1227-1228 թվականներին Դվինը կարճ ժամանակով խորեզմցիներից ազատագրելու համար: Ուստի Հասան-Պոռշի ծննդյան առավել հավանական ժամանակ է թվում ժԲ դ. վերջը կամ ժԳ դ. սկիզբը:

Որպես «հազարապետ հայոց»<sup>5</sup>, այսինքն՝ իր պատրոնների բանակի հրամանատար, Հասան-Պոռշը, թերեւս, մասնակցել է 1225 թ. Գառնիի ճակատամարտին<sup>6</sup>: Այնուհետեւ, որոշ ժամանակ անց, «մտան է Պոռշն ի Դուին եւ կոտորէ զՆորազմն եւ զՏաճիկն»<sup>7</sup>: Մոնղոլների գլխավոր արշավանքի պահին նա, Ավագ Զաքարյանի մյուս ստորականների նման, հնազանդվեց նվաճողներին եւ հետագայում եռանդուն մասնակցություն բերեց մոնղոլների ռազմական ձեռնարկումներին՝ մասնավորապես, կարեւոր դեր խաղալով 1258 թ. Բաղդադի գրավման ժամանակ<sup>8</sup>: Հաջորդ երկու տա-

1 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 213-214:

2 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 205-206; Վարդան Արեւելցի, էջ 187:

3 Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 65; Կիրակոս Գանձակեցի, էջ 205-206:

4 Մխիթար Այրիվանեցի, էջ 65:

5 Տե՛ս Գ. արք. Յովսէփեան, Մխիթար Այրիվանեցի. նորագիտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 18:

6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 48:

7 Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 66: Հմմ. Միխայել Ասորի, էջ 529-530:

8 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 380-384:

րիններին, Նփրկերտ քաղաքը պաշարելիս հենց Հասան-Պոռն էր ղեկավարում քրիստոնյաներից բաղկացած ջոկատները<sup>1</sup>:

Ընդարձակ է այն վանքերի ցանկը (Կոշիկ անապատ Արցախում, Դսեղի Բարձրաբաշ Ս. Գրիգոր Լոռուում, Կարբի եւ Հովհաննավանք Արագածոտնում, Գհուկ-Բոլորահարի, Գեղարդի վանքեր Կոտայքում), որոնց նվիրատուություններ են կատարել Հասան-Պոռն եւ կինը՝ Խուժու Խաթունը<sup>2</sup>: Նաեւ նրա «կամաւք եւ հրամանաւ» է 1270 թվականին գումարվել Ջազավանի ժողովը<sup>3</sup>: Եկեղեցական հարցերում իր եռանդուն դիրքորոշման մասին է վկայում հետեւյալ հանրահայտ փաստը: Հասան-Պոռն փորձեց Սյունյաց հոգեւոր տեսչությունից դուրս բերել Խաղբակյանների իշխանության մէջ մտնող տարածքները, սակայն վերջիվերջո հարկադրված էր զիջել, եւ վերականգնվեց նախկին դրուժյունը<sup>4</sup>: Իշխանի բարենորոգչական-շինարարական գործունեությունն ամբողջացնում են Գեղարդի տաճարների կերտումը եւ Թանահատի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցումը<sup>5</sup>:

Հասան-Պոռն վախճանվել է 1284 թվականին եւ թաղվել Կեչառիսում<sup>6</sup>:

9. Հասան Բ, որդի Զաջուռի (ծնվել է ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1224 թվականին): Հայրը 1224 թվականին Հավապտուկի վանքում խաչքար է կանգնեցրել նրա հիշատակին<sup>7</sup>:

10. Սմբատ, որդի Զաջուռի (ծնվել է ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1224-ին): Միեւնույն տարում Զաջուռը նշել է նաեւ իր Սմբատ որդու հիշատակը<sup>8</sup>:

11. Գրիգոր Բ, որդի Զաջուռի (ծնվել է ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1229 թվականից հետո): 1229 թվականին՝ Վաճառում եկեղեցու կառուցումից հետո, Գրիգորը «հրամանաւ աստուածասէր իշխանին Հասանա, տեառն Խաչինո» նորակառույց վանքին է նվիրել «Աւանախոռին երկիրն»<sup>9</sup>:

12. Վանենի, դուստր Զաջուռի (ծնվել է ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1232 թվականից հետո): Հայտնի է իր պատվիրած երկու ձեռագրերի արժեքավոր հիշատակարաններից: Կապված է եղել Խաղբակյանների հին իշխանության հետ: Ամուսնացել է Սեւադյանց իշխանագն Կուկի հետ<sup>10</sup>:

1 Նույն տեղում, էջ 384-386: Հավելենք, որ Հասան-Պոռնի փաստվոր ռազմական գործունեության համար Արամ «զարդ հեծելի» է կոչում Խաչատուր Կեչառեցին (տե՛ս Մ. Ավդալբեգյան, Աշխատք, էջ 131):

2 Տե՛ս Գ. Կթո. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռնեանք հայոց պատմութեան մէջ, էջ 51; Գ. Գ. Սարգսյան, Գհուկ-Բոլորահարի վանքը, էջ 129:

3 Տե՛ս Գարեգին Վրդ. [Յովսէփեան], Ջազավանի ժողովը, էջ 25-26, 41:

4 Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, էջ 268-269:

5 Տե՛ս Գ. Կթո. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռնեանք հայոց պատմութեան մէջ, էջ 51-54, 199-203, 235-243:

6 Նույն տեղում, էջ 70-71: Հասան-Պոռնի մահվան տարեթիվը պարզաբանելիս գիտնականի օգտագործած աղբյուրների անույժմ հնարավոր է ավելացնել միայն մեկը՝ Երեւանի Կաթողիկէ եկեղեցու 1284 թվականի արձանագրությունը (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Երեւան, էջ 143):

7 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 35:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, էջ 79:

10 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 140, 181-183:

13. Վասակ Բ, որդի Գրիգոր Ա-ի (ծնվել է ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին, մահացել 1270 թվականից հետո): Ինչպես երևում է, նա էր ժառանգել հոր հիմնադրած փոքրիկ իշխանությունը: Երկիրս հիշատակվում է Աղջոց վանքի արձանագրություններում<sup>1</sup>, ընդ որում վերջին անգամ՝ 1270 թվականին:

14. Մկրեմ Բ, որդի Հասան-Պոռշի (ծնվել է ԺԳ դ. առաջին քառորդում, մահացել մինչև 1268 թվականը): Առաջինը Մկրեմին, ապա Պապաքին եւ մյուսներին է հիշատակում Կիրակոս Գանձակեցին՝ Հասան-Պոռշի որդիներին թվարկելիս<sup>2</sup>: Նույն կարգով է զավակներին հանվանե թվարկում նաեւ Հասան-Պոռշ 1268 թվականին Սուրբ Գեղարդի պահարանի արձանագրությունում<sup>3</sup>, այն տարբերությամբ միայն, որ նա առանձին է հիշում վաղամեռիկ Մկրեմին եւ դատերը՝ Գոհար Խաթունին: Անկասկած է, որ Հասան-Պոռշի առաջին երկու որդիներն անվանվել են ի պատիվ հորեղբայրների: Այդ դեպքում էլ, հավանաբար, տեղի է ունեցել հետեւյալը: Անդրանիկն անվանակոչվել է ի հարգանս ավելի վաղ մահացած Մկրեմի, իսկ երկրորդ որդի Պապաքը ծնվել է 1222 թ. քիչ անց եւ անվանադրվել հորեղբոր եղբրական մահվան ազդեցությամբ: Խաչատուր Կեչառեցու «կորինն առիծի»<sup>4</sup> բնորոշումը ցուցանում է, որ Մկրեմը եւս զինվորական է եղել: Մահացել է մինչև 1268 թվականը:

15. Պապաք Բ, որդի Հասան-Պոռշի (ծնվել է 1222 թվականից քիչ անց, մահացել 1313 թվականից հետո): «Մեծ սպարապետ»<sup>5</sup> Պապաքը, որպես ավագ որդի, հոր իշխանակիրն էր ԺԳ դ. 70-ական թվականներից<sup>6</sup>, հնարավոր է՝ եւ ավելի վաղ տարիներից սկսած: Ուշագրավ է, որ Պապաքի անվանը զուգահեռ սկզբնաղբյուրներում գրեթե միշտ հիշատակվում է նաեւ նրա կրտսեր եղբայր Ամիր Հասանը: Հնարավոր է, որ այստեղ որոշակի դեր է խաղացել հետեւյալ հանգամանքը: Պապաքն ու կինը՝ Ռուզուբանը, անժառանգ էին եւ Ամիր Հասանը, իսկ նրա մահից հետո՝ որդին՝ Էաչին, իսկապես կյանքի իշխանության օրինական տիրակալներ են դիտվել դեռեւս Պապաքի կենդանության տարիներին:

Պապաք Բ-ն եւս աչքի է ընկել շինարարական գործունեությամբ, որը ծավալվել է Շահապունիքում՝ Կուբո վանքում, եւ հատկապես՝ Կոտայքի Գեղարդի վանքում<sup>7</sup>: Պաշտպանելով հայոց եկեղեցու դիրքերը՝ Էաչիի հետ միասին ստորագրել է Գրիգոր Անավարզեցու գործունեության դեմ ուղղված ժողովի «ձեռնարկը»<sup>8</sup>: Էաչիի հետ միասին Վայոց Ձորի իշխան է հիշվում նաեւ 1313 թվականին (թեեւ Գարեգին Հովսեփյանը նրա մահը դնում է 1298/1299 թվականին)<sup>9</sup>:

---

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 43-44, 229:  
2 Կիրակոս Գանձակեցի, էջ 384:  
3 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 304:  
4 Տե՛ս Մ. Ավդալբեգյան, *Ազվ. աշխ.*, էջ 132:  
5 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 682:  
6 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 74:  
7 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 30, 75:  
8 Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն*, էջ 338:  
9 Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 76: Ինչպես երևում է, գիտնականը 1313 թվականի հիշատակարանին (տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 92) ավելի ուշ է ծանոթացել:



16. Ամիր Հասան Ա, որդի Հասան-Պոռշի (ծնվել է ժԳ դ. 30-ական թվականներին, մահացել 1292 թվականին): Առաջին անգամ նրան հիշատակում է իր երկը 1266 թվականին ավարտած Կիրակոս Գանձակեցին<sup>1</sup>: Բազմիցս անվանվում է նաև ժԳ դ. 70-80-ական թթ. արձանագրություններում ու հիշատակարաններում: Նրա իշխանությունն առանձնապես հաճախ է մատնանշվում Վայոց Ձորի Մարտիրոս եւ հարեան գյուղերում, որը եւ հիմք է տվել Գարեգին Հովսեփյանին՝ խոսելու այդ տարածքի՝ Ամիր Հասանի իշխանության կենտրոնը լինելու մասին<sup>2</sup>:

Աղբյուրներն առանձնակի շեշտադրումով են խոսում նրա պատերազմական վաստակի եւ իլխանական արքունիքում ունեցած բարձր դիրքի մասին: Ընդ որում, դեռեւս երիտասարդ հասակում նա պատիվների է արժանացել Հուլավուի եւ ապա նաև Աբաղայի կողմից<sup>3</sup>:

Վկայված է Ամիր Հասանի հովանավորությունը եւ օգնությունը, որ նա ցուցաբերել է Մարտիրոս գյուղի վիմափոր եկեղեցիների կառուցման ժամանակ<sup>4</sup>:

Կնքել է իր մահկանացուն 1292 թվականին, «մինչ չեւ էր հասեալ հասակ ծերութեան»<sup>5</sup>: Կինը՝ Թաճերը, ով հայտնի է որպես ձեռագրերի պատվիրատու եւ վանքերի նվիրատու, մահացել է 1307 թվականից հետո<sup>6</sup>:

17. Վասակ Գ, որդի Հասան-Պոռշի (ծնվել է ժԳ դ. երկրորդ քառորդում, հավանաբար՝ 30-ական թթ. վերջին – 40-ականների սկզբին, մահացել 1268-1273 թվականների միջև): Խաչատուր Կեչառեցու արդեն մեջբերված բնութագրումը ցույց է տալիս Վասակի պատկանելությունը զինվորական դասին:

Գարեգին Հովսեփյանն է պարզել, որ Վասակը պետք է մահացած լիներ 1268-1273 թվականների միջակայքում<sup>7</sup>:

18. Գոհար Խաթուն, դուստր Հասան-Պոռշի (ծնված պիտի լիներ ժԳ դ. 20-40-ական թթ., մահացել մինչև 1268 թվականը): Միակ տեղեկությունը դատեր մասին հաղորդում է հայրը, Սուրբ Գեղարդի պահարանի արձանագրությունում<sup>8</sup>:

19. Էաչի, որդի Ամիր Հասանի (ծնվել է 1268-1271 թվականների միջև, մահացել 1317 թվականին): Թեև Գարեգին Հովսեփյանը ժամանակին եզրակացրել է, թե «Էաչիի ծնունդը կարող ենք նշանակել 1268-1273 թուականների մէջ»<sup>9</sup>, իշխանի ծննդյան տարեթիվը որոշ ճշգրտման կարիք է զգում: Անվանի հայագետի ուշադրությունից

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 384:  
2 Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 76:  
3 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ժԳ դար, էջ 682:  
4 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 77:  
5 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ժԳ դար, էջ 682: Հիշատակարանի այս տողերը Գարեգին Հովսեփյանը ճետեղյալ կերպ է ընկալել. «յամենայն դէպս ոչ անց յիսունից» (Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 81): Թվում է, թե Ամիր Հասանը մի փոքր ավելի տարեց է եղել, եթե մա 1256-1265 թվականներին եղել է առնվազն 20-25 տարեկան, որպեսզի արժանանար Հուլավու իլխանի ուշադրությանը:  
6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 77-81:  
7 Նույն տեղում, էջ 55:  
8 Նույն տեղում, էջ 54, 304:  
9 Նույն տեղում, էջ 96: Քիչ անց, գիտնականը Էաչիի ծնունդը դնում է «ժԳ դարու եօթանասնական թուականների սկզբին» (տե՛ս նույն տեղում, էջ 107):

վրիպել է Դադիվանքի արձանագրություններից մեկը, որի համաձայն՝ էաչին, մոր հետ միասին, նվիրատվություն է կատարել այդ հոգեւոր կենտրոնին դեռեւս 1271 թվականին<sup>1</sup>: ԺԳ դ. 70-80-ական թթ. նա բազմիցս է հիշատակվում սկզբնաղբյուրներում<sup>2</sup>: 1297 թվականին էաչին մասնակցեց Նովոուզի ջախջախմանը եւ մահապատժին, այսինքն՝ նա եւս շարունակում էր տոհմի զինվորական ավանդույթները<sup>3</sup>:

էաչիի մասին ջերմ համակրանքով են խոսում Օրբելյանների տոհմից եպիսկոպոսներ Ստեփանոս Օրբելյանը<sup>4</sup> եւ Հովհան Օրբելը<sup>5</sup>: Մասամբ, դա բացատրվում է այն հանգամանքով, որ էաչին ամուսնացել էր էլիկում Օրբելյանի դստեր՝ Մամախաթունի հետ<sup>6</sup>:

Իշխանը մահացել է 1317 թվականին<sup>7</sup>:

20. Ամիր Հասան Բ, որդի էաչիի (ծնվել է ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին, մահացել 1351 թվականից հետո): Հաջորդել է հորը դեռեւս երիտասարդ հասակում<sup>8</sup>: 1321 թվականին ավարտել է հոր օրոք սկսված Սպիտակավոր վանքի Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը, հովանավորել է Գլաձորի համալսարանի գործունեությունը<sup>9</sup>: Կնոջ՝ Բոբայի (Բոբէ) հետ միասին տնտեսապես հզորացրել է Սպիտակավոր Աստվածածին վանքը, որտեղ եւ գտնվում է նրա վերջին թվագրված արձանագրությունը (1351 թ.)<sup>10</sup>:

21. Վասակ Դ, որդի էաչիի (ծնվել է ԺԳ դ. վերջին կամ ԺԴ դ. սկզբին, մահացել 1332 թվականից հետո): 1328 թվականին, ավագ եղբորից հետո, հիշատակվում է

---

1 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. V, էջ 214, № 755: Ի դեպ, այստեղ էաչիի մոր անվան վերականգնումը «Մամքան» ձեռով ակնհայտ սխալ է, քանի որ բազմիցս վկայված է իշխանուհու «Թաներ» անունը:

2 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 597-598, 676; *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 74, 180:

3 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, *Պատմություն*, էջ 347-348: Այս իրադարձությունների՝ Գարեգին Հովսեփյանի առաջարկած թվագրումը (1295/1296 թվական) հիմնված է միայն հայ պատմիչների վկայությունների վրա եւ մոտավոր է: Դեպքերը տեղի են ունեցել 1297 թվականի օգոստոսին (տե՛ս **Рашид ад-Дин**, т. III, с. 175-177):

4 **Ստեփանոս Օրբելյան**, *Պատմություն*, էջ 316:

5 Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*. ԺԳ դար, էջ 859:

6 Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունները (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, *Պատմություն*, էջ 316) լրացնում են վիմագիր արձանագրությունների տվյալները, որոնցից էլ հայտնի է դառնում Բուրթել եւ Բուղտա Օրբելյանների քրոջ անունը (տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 76, 79, 143):

7 Տե՛ս *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 128:

8 Նույն տեղում, էջ 136, 166: «1371 թուին շինուած Սպիտակատր Աստուածածնի պատի վերայ գտնուած է Ամիր Հասան Բ-ի քանդակուած պատկերը բոլորովին երիտասարդական հասակում», – գրում է Գարեգին Հովսեփյանը (**Գ. կթղ. Յովսեփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 107):

9 Նույն տեղում, էջ 108-109:

10 Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 97, 100: Այս վերջին արձանագրության տարեթիվը նշում է Գարեգին Հովսեփյանը (**Գ. կթղ. Յովսեփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 110): Սեդրակ Բարխուդարյանը վիմագիրը տեղում ստուգելու հնարավորություն չի ունեցել եւ քաղել է նախորդ հրատարակիչներից: Գ. Հովսեփյանի կարծիքով՝ Ամիր Հասան Բ-ն մահացել է նույն 1351 թվականին:

«գքաջն եւ զարին հոլովն Վասակ»<sup>1</sup>: Կուրք վանքում 1332 թվականին գրված ձեռագրի հիշատակարանից հայտնի է դառնում, որ Վասակը տիրում էր Շահապունիք գավառին<sup>2</sup>:

22. Ասաթ (Ամիր Ասաթ), որդի էաչիի (ծնվել է ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին, մահացել 1318 թվականից հետո): 1328 թվականին հիշատակվող «կորովամիտ Ամիր Ասաթ»-ին<sup>3</sup> չերմ մաղթանքներով է հիշում Գլաձորի համալսարանի հետ կապված գործիչներից մեկը<sup>4</sup>: Կարելի է ենթադրել, որ Ասաթը որոշ կապվածություն է ունեցել այդ նշանավոր ուսումնագիտական կենտրոնի հետ: Ասաթից ավելի ուշ մահացած Զուման Թանահատի վանքում պատարագ է սահմանել եղբոր եւ էլիսովուի (հավանաբար՝ վերջինիս կնոջ) հիշատակին<sup>5</sup>:

23. Զումա (Զում), որդի էաչիի (ծնվել է, հավանաբար, ԺԴ դ. սկզբին, մահացել 1346 թվականից հետո): 1328 թվականի հիշատակարանի վկայությունը «տիօվք մանուկ» Զումայի մասին<sup>6</sup>, կարելի է նրա ծննդյան մոտավոր ժամանակի վերաբերյալ ցուցում ընդունել: Ամիր Հասանի հետ միասին Վայոց Ձորի տիրույթների տիրակալ էր դիտվում 1334 թվականին<sup>7</sup>: Վերջին անգամ հիշատակվում է 1346 թվականին<sup>8</sup>: Վիմագիր արձանագրություններից հայտնի է դառնում կնոջ անունը՝ Խուանդգե<sup>9</sup>:

24. Խաչատուր Կեչառեցի (ծնվել է, մոտավորապես, ԺԳ դ. 60-ական թվականներին, մահացել շուրջ 1331 թվականին): ԺԳ-ԺԴ դարերի հայ մատենագրության ականավոր գործիչներից մեկի պատկանելությունը Խաղբակյանների տոհմին հնարավոր է մակաբերել ԺԶ դարի գործիչ Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսի վկայություններից<sup>10</sup>: Խաչատուրի տեղը Խաղբակյանների տոհմածառում մուծ է մնում<sup>11</sup>:

Այսպիսով, Խաղբակյան իշխանատոհմի ճյուղագրությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

---

1 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 350:

2 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 247:

3 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 350:

4 Նույն տեղում, էջ 352:

5 Տե՛ս *Ղիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 80:

6 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 350:

7 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 261:


8 Նույն տեղում, էջ 347:

9 Տե՛ս *Ղիվան հայ վիմագրության*, պր. III, էջ 80:

10 Տե՛ս Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 128-129, 172-178:

11 Լրացուցիչ փաստարկման է կարոտ Գաե Գարեգին Հովսէփյանի այն ենթադրությունը, որի համաձայն՝ գանձարաններից մեկի խորագրում Խաչատուր Կեչառեցու որդի համարվող Մկրտիչ վարդապետը նույնանունացվում է Սպիտակավոր Աստվածածնի վանահայր Մկրտիչի հետ (Գ. կթղ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 110-111):

## ԽԱՂԲԱԿՅԱՆՆԵՐԻ ՏՈՐՄԱԾԱՌԸ



## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Ամփոփելով ներկա հետազոտությունը՝ կարելի է առաջարկել հայ տիրապետող դասակարգի ու նրա կազմում վճռական դեր խաղացող խոշոր իշխանական տների ժԲ դարից – ԺԴ դ. առաջին կեսի պատմության հետեւյալ պարբերացումը: Նկատի առնելով հայ ավատատիրական տոհմերի գործունեության արտաքին քաղաքական միջավայրը եւ տիրապետող դասակարգի ներքին զարգացման օրինաչափությունները՝ հնարավոր է ուսումնասիրվող հարյուրամյակների շրջանակներում առանձնացնել չորս ժամանակաշրջան:

Առաջին՝ ժԲ դ. սկզբից – 1180-ական թթ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածը հնարավոր է բնութագրել որպես «Մեծ սելջուկների» սուլթանության փլուզումից հետո Հայաստանում առաջացած մահմեդական քաղաքական կազմավորումների հզորացման եւ հայկական տարրի քաղաքական դիրքերի սահմանափակման ժամանակաշրջան: Բավական է նշել, որ այդ տասնամյակների ընթացքում են անհետանում հայկական իշխանական տների գրեթե բոլոր մնացորդները Հարավային Հայաստանում, ասպարեզից հեռանում են Տաշիր-Չորագետի եւ Սյունյաց թագավորությունները, ծանր փորձությունների են ենթարկվում Արցախի ավատատիրական տոհմերը: Ժամանակաշրջանի ավարտին նշմարվում են նաեւ ապագա քաղաքական վերածննդի սաղմերը: Վրաց թագավորության մեջ ներգրավված շրջաններում ուժ են կուտակում տեղական հայկական ընտանիքները, որոնք կարելուր դեր են սկսում խաղալ նաեւ արքունիքում: Մահմեդական ամիրայությունները մեծագույն ջանքեր թափելով են կարողանում ճնշել անեցիների ազատագրական պայքարը, որը ղեկավարում էր քաղաքային պատրիկությունը («գլխաւորք քաղաքին»): Հայաստանի տարածքի մեծ մասի մահմեդական քաղաքական կազմավորումները թեւակոխում են ներքին դժվարությունների եւ անկայունության փուլ, որը հայկական տարածքների ազատագրման բարենպաստ նախադրյալներ է ստեղծում:

Երկրորդ՝ 1186-1235 թվականների ժամանակաշրջանը լիովին հստակորեն է առանձնանում. այն սկիզբ է առնում 1186 թվականին անեցիների կողմից Մառաքար ամրոցի գրավումով եւ ընդհատվում է մոնղոլական գլխավոր արշավանքի անմիջական նախօրյակին, երբ ազատագրվեցին Երասխից հարավ ընկած Սուրմարին եւ Կաղզվանը: Կարելուր է ընդգծել, որ հայկական երկրամասերի գրավումն արդյունք չէր որեւէ բախտորոշ ճակատամարտի: Այն իրականացվում էր հիմնականում հայկական զորաշղկատների ջանքերով, սահմանամերձ ռազմավարչական միավորների՝ կողմնակալությունների նախաձեռնությամբ, թեեւ, անշուշտ, վրաց թագավորների օժանդակությամբ: Հետեւաբար եւ ակնհայտ է այդ կեսդարյա պայքարի ազդեցությունը՝ հայկական տիրապետող դասակարգի կազմում ռազմական ավագանուն բացահայտ գերիշխանություն հաղորդելու առումով:

Երրորդ փուլը սկսվում է մոնղոլների կողմից Հյուսիս-արեւելյան Հայաստանի գրավմամբ (1236 թվական) եւ ավարտվում է Ղազան խանի գահակալության տարիներով՝ 1295-1304 թվականներով: Այս ժամանակաշրջանը ներքուստ բավականաչափ հակասական է: Անշուշտ, աչքի են զարնում արհամարիքները: Մոնղոլական նվաճման ընթացքում եւ ապա օտար երկրներում հանուն մոնղոլների մղվող պատերազմներում բնաջնջվում է հայոց զորքի զգալի մասը: Բոլոր իշխանական տները ծանր կախվածության մեջ են ընկնում նվաճողներից, արդեն ժԳ դ. 60-70-ական

Թվականներին մեծատոհմիկ ավատատերերից շատերը հարկադրված են լինում վաճառահանել հայրենական կալվածքները. խորանում է Հայաստանի տնտեսական ճգնաժամը: Այնուամենայնիվ, մոնղոլական լծի ողջ ծանրությունը չի բացառել տիրապետող դասակարգի գործառույթյունը Հայաստանում, անհերքելի է հայ ավատատերերի իշխանության ամրապնդումը կախյալ գյուղացիության նկատմամբ, հայ իշխաններն ու ազատները ռազմա-քաղաքական ուժ էին ներկայացնում մոնղոլական տիրապետության ողջ պատմաշրջանում: Նշված տասնամյակները միանշանակ չի կարելի գնահատել նաեւ մոնղոլների ռազմա-քաղաքական պատմության տեսանկյունից: Ժամանակաշրջանի հաղթական սկիզբը ԺԳ դ. 80-90-ական թվականներին փոխարինվեց ակնբախ պատերազմական անհաջողություններով, ի հայտ եկան վերահաս անկման ախտանշանները: ԺԳ-ԺԴ դարերի սահմանագիծը ճակատագրական պահ էր Իրանի մոնղոլական պետության պատմության մեջ. Ղազան խանի կառավարման կարճատեւ շրջանում արտաքին ու ներքին դրույթյան կայունացման փորձերի ձախողումից հետո սկսվեց իլխանության գահավեժ անկումը:

Հայ տիրապետող դասակարգի ԺԲ-ԺԴ դարերի պատմության մեջ առանձին, շորորոդ փուլ է կազմում ԺԴ դ. սկզբի – նույն հարյուրամյակի 50-ական թվականների ժամանակահատվածը: Հետզհետե խորացող համակողմանի ճգնաժամի պայմաններում կտրուկ ընկնում է հայ իշխանական տների տնտեսական հզորությունը, նվազում են նրանց եկամտի աղբյուրները: Իլխանության փլուզումը, անվերջ կռիվները գահի տարբեր հավակնորդների միջեւ եւ իլխանության անհեռանկարային պատերազմները Ոսկե Հորդայի ու Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ՝ ծայրաստիճան ծանր են անդրադառնում նաեւ հայ ավատատերերի քաղաքական ու ռազմական հզորության վրա: Հայ իշխանական տների մեծ մասը հոգեվարք է ապրում եւ հարկադրված է լինում անվերադարձ հեռանալ պատմական ասպարեզից:

Ընդհանրացնելով՝ կարելի է հավաստել, որ հայ տիրապետող դասակարգի կենսագործունեության արտաքին միջավայրի հայեցակետից որոշակի տիպաբանական ընդհանրություն է դիտվում ԺԲ դ. վերջի – ԺԳ դ. սկզբի եւ այդ հարյուրամյակի եզրափակիչ տարիների – ԺԴ դ. առաջին տարիների միջեւ: Զափազանց նման են արտաքին հանգամանքները. Հայաստանն առաջինն է Այսրկովկասում ենթարկվում օտարների հարվածներին, քոչվորական աշխարհակալությունները փլուզվում եւ անկում են ապրում, իսկ հայ էթնոսի ռազմունակ հատվածը դեռ բավականաչափ տոկոսն է գեթ կիսանկախ վիճակում երկիրը պահելու համար: Հայաստանի հյուսիսային հարեւանը՝ Վրաստանը, երկու դեպքում էլ առաջինն է ուշքի գալիս եկվորների հասցրած հարվածից եւ ի զորու է՝ օգնության ձեռք մեկնելու: Իրականում ամեն ինչ այլ կերպ ընթացավ: ԺԳ-ԺԴ դարերի սահմանագծում հայ տիրապետող դասակարգը չհաղթահարեց պատնեշը, չկարողացավ իր շահերին ծառայեցնել ԺԴ դ. առաջին կեսին իլխանությունում բորբոքված ներքին արյունահեղ պայքարը:

Հայոց պետականության պատմության մեջ այդ հիրավի շրջադարձային պահը պայմանավորված էր նաեւ այլ գործոններով, ուստի կարիք է զգացվում կանգ առնել դրանցից առավել կարեւորների վրա:

Գրեթե բոլոր խոշոր ավատատիրական իշխանությունները ԺԳ դ. երկրորդ կեսից սկսած (Զաքարյանները՝ ավելի վաղ) թեակոխեցին տիրույթների տրոհման եւ մասնատվածության փուլ: Առաջանում էին նորանոր իշխանական նստոցներ, ուռճանում էր ավատատերերի վարչական ապարատը: Ապակենտրոնացման միտում-

ների բացահայտ առավելությունը կենտրոնացման ձգտումների նկատմամբ՝ բացատրվում էր զարգացած ավատատիրությունների դարաշրջանի ներքին տրամաբանությունները: Երկրի վերամիավորումը, թեկուզ՝ Զաքարյաններին ու նրանց ստորականներին պատկանող տարածքների շրջանակներում, հրամայական պահանջ չէր դիտվում ժամանակակիցների կողմից: Հավանաբար, տնտեսական զարգացման շահերն էին վճռականորեն թելադրում գերադասությունը տալ իշխանությունների հետագա մասնատմանը, որքան էլ գիտակցվեին այդօրինակ երեւոյթների սպառնալից հեռանկարները: Խիստ բացասական դեր խաղաց նաեւ այն հանգամանքը, որ հայ ավատատիրական ավագանին ԺԳ դ. երկրորդ կեսին – ԺԴ դ. առաջին կեսին չունեին ճանաչված առաջատար: Զաքարյանների իրական ազդեցությունն անկումից հետո չհայտնվեցին այդ դերը լիարժեքորեն ստանձնելու պատրաստ նոր ընտանիքներ: Այս առումով հիշարժան են միայն Օրբելյանների ձեռնարկած փորձերը, որոնք տարաբախտաբար ակնկալելի արդյունքի չհասցրեցին:

Հայոց պետականության հետագա վերականգնումն արգելակող կարեւոր գործոն պետք է համարել նաեւ սելջուկ-թյուրքերի, ապա մոնղոլների առաջնորդած քոչվորական ցեղերի կողմից անասնապահական տնտեսության լիարժեք համակարգի ստեղծումը Այսրկովկասում: Քոչվորական անասնապահությանը զբաղվելու համար անհրաժեշտ ձմեռային արոտավայրեր էին ծառայում Կուրի եւ Երասխի ստորին հոսանքների գոտին, հատկապես՝ Մուղանի դաշտը, ինչպես նաեւ Ստորին Քարթլիի հարթավայրային շրջանները: Սակայն անասնապահական այդ համակարգը կարող էր արդյունավետ կերպով գործառվել միայն Հայաստանի լեռնային արոտավայրերն ամռանը օգտագործելու պարագայում: Ուստի Գեղարքունիքում, Արցախում եւ Սյունիքում, Հարավային Հայաստանի բազմաթիվ շրջաններում քոչվորական ցեղերի հաստատվելն ուներ տնտեսական այնպիսի խոր պատճառներ, որ այդ հարցը ձեռք էր բերում նաեւ քաղաքական նշանակություն: Եթե հաշվի առնենք նաեւ վերջին Սասանյանների եւ Արաբական խալիֆայության ժամանակաշրջաններից ի վեր այլ-էթնիկ տարրերի նպատակադիր բնակեցումը Հայաստանի քաղաքներում, ապա պարզ կդառնա կացություն ողջ սպառնալիությունը:

